Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.99
E-66

891.99
Ա-66
- 6 NOV 2011

ԹԻՐԱՆԶԱԴԵ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԿԵՐ

ՀԱՅՈՐ ԱՌԱՋԻՆ

3114
Z.U.խ.Z. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1928

ԹԻՖԼԻՍ
Тип. «Веревчевъ и Каменмахеръ». | Տպ. «Վերեւչեվ և Կամենմախեր»
Мих. пр., № 81
1903

47986
15 . . 2013

Дозволено цензурою, Тифлисъ, 24-го Марта 1903 года.

ՆԵՐԿԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Աչքի անցկացնելով իմ գրականական գործունէութեան առաջին շրջանի արդիւնքները, ես նրանց մէջ գտայ էական թերութիւններ թէ քովանդակութեան եւ թէ ժանրաւանդ լեզուի կողմից: Այս պատճառով սկզբում մտածեցի ընդհանուր Փողովածուիս հրատարակութիւնը մի կամ երկու տարով յետաձգել, ուղղել այդ թերութիւնները, մշակել սկզբնական երկերիս ոճն ու լեզուն, ապա լոյս ընծայել: Բայց յետոյ որոշեցի, թէ իրաւունք չունիմ այս անելու:

Այն, ինչ-որ գրուած է պատանի հասակումս եւ երիտասարդութեանս առաջին շրջանում, մի սկզնակ գրչի արտադրութիւն է, եւ ես մեղանչած կըլինէի հեղինակների կողմից ընդունված եւ գրեթէ սրբագործված աւանդութեան դէմ, եթէ անփորձ գրչիս սխալները ուղղէի եւ չիտկէի ներկայիս հասեւտատական փորձառութեամբ: Գոնէ ես այսպէս եմ կարծում:

Ահա ինչու իմ սկզբնական երկերն եւս, ինչպէս եւ յաջորդները, յանձնում եմ տպագրութեան գրեթէ անփոփոխ, այնպէս, ինչպէս նրանք տպագրուել են առաջին անգամ: Ասում եմ գրեթէ, որովհետեւ, այնու ամենայնիւ, ես ինձ թոյլ եմ տուել լեզուի մի թեթեւ սրբագրութիւն իմ ամենաառաջին գրուածների—«Գոր-

ծակատարի Ցիշատակարանից» պատմուածքի, «Ծնունդ» վէպիկի եւ «Հրդեհ» ու «Ընտրեցից մէկը» պատկերների—մէջ, իսկ առաջինից ես դուրս եմ ձգել մի քանի կտորներ:

Ծանձնելով տպագրութեան ներկայ ժողովածուն, ես կամեցայ երկերիս դասաւորութեան մէջ պահպանել ժամանակագրական կարգ: Բայց մի քանի երկերի վերաբերմամբ այս անկարելի եղաւ: Այսպէս, օրինակ, «Ընտուսը», որ վերոյիշեալ գրուածների նման «Օր. Լիզայի» հետ, պատկանում է իմ գրականական գործունէութեան առաջին եօթնամեայ շրջանին, պէտք է մտնէր I հատորի մէջ: Բայց այդ վէպը նոր է լոյս տեսել երկրորդ տպագրութեամբ եւ դնում սպառուած չէ: Իսկ «Օր. Լիզան» եւ «Ընտրեցից մէկը» յետաձգեցի II հատորի համար՝ հրատարակութեանս հատորների մէջ դիրքի որոշ համահաւասարութիւն պահպանելու մտքով: Նոյն շեղումները կարգապահութիւնից կըլինեն եւ յաջորդ հատորներում: Սակայն այս հանգամանքը չի խանգարիլ հետաքրքրուող ընթերցողին իմանալ ո՛ր գրուածքս է որին յաջորդել, որովհետեւ իւրաքանչիւրի տակ դրուած է գրուելու տարեթիւը:

Բարոյական պարտք եմ համարում յայտնել անկեղծ շնորհակալութիւնս այն յարգելի անձանց, որոնք նիւթապէս նպաստեցին ներկայ հրատարակութեանը եւ որոնց անունները չեմ յիշում այստեղ, չը կամենալով վիրաւորել նրանց համեստութեան զգացումը:

17 Մարտի 1903 թ.
Թիֆլիս

Ե Ր Ո Վ Ա Ն Դ Ե

ՀՐԴԵՀ ՆԱԻԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Մի պատկեր Բագուի մշակների կեանքից)

—Աղա, գաւոդն այրվում է:

Իվան Գրիգորիչ Մարուխեանցը մի միջահասակ, չալ և բաւական ջահել մարդ էր եւրոպական սև հագուստով: Նրա լիք, կլորակ և մաքուր սափրած երեսի կարմիր դոյնը մի վայրկեանում թռաւ դժբաղդ լուրը լսելու ժամանակ:

—Ե՞րբ, որ ժամին, գաւոդի որ կողմից է սկսուել հրդեհը,—վերին աստիճանի անհամբերութեամբ և հրամայական հարցնում էր նա, երկու փոքրիկ և խոշոր աչքերի բիբերը արագութեամբ շուռ տալով և ձեռները տարածելով դէպի առաջ: Կարծես, նա ուզում էր կատաղաբար յարձակուել չարաբաստիկ լուրերի վրայ և տեղն ու տեղը խեղդել նրան:

—Կրակը երեւացել է մօտ երկու քառորդ ժամ սրանից առաջ,—դողդողուն ձայնով պատասխանեց լուրերը, երկիւղածութեամբ յետ ու յետ քաշվելով: Ես նոր գործս վերջացրել և պատրաստվում էի քնելու, երբ ականջիս հասաւ մի տրաքոցի ձայն: Ձայնը սաստիկ էր, կարծես թէ ամբողջ գաւոդը քարու-

քանդ էր լինում... Ես մի քանի րոպե միացի չուա-
րած... չդիտեի ինչ անեմ, ուր վազեմ։ Մի կերպ
խելքս գլուխս հաւաքեցի և դուրս թռայ. հէնց այն
է ուզում էի առաջ վազել, մէկել տեսնեմ աչ կող-
մից, կաթսաների բաժնից բոցախառն ծուխը դուրս
է փչում... Հասկացայ, որ մնձ նաւթակաթսանե-
րից մէկը պատռվել է։ Կրակը դիմում էր դէպի իւղ
մաքրելու բաժինը։ Մշակները զարհնել էին, և որը
ակլոր, որը հագաստով, ամենքը դիմում էին կրակ
երևացող տեղը՝ հրդեհի առաջն առնելու։ Ես խելոյ
վազեցի քաղաք, որ ձեզ յայտնեմ։

Իվան Գրիգորիչի կուրծքը անհամբեր շնչառու-
թենից արագութեամբ բարձրանում և ցածանում էր։
Մի քանի վայրկեան լուռ մտածելով, նա դիմեց ծա-
ռաներից մէկին, որոնք բնբռանները բաց արած ու-
շադրութեամբ լսում էին լրաբերի խօսքերը։

—Այս վայրկեանիս լծվի իմ կառքը, ես առանց
րոպե ուշանալու պիտի գործարան հասնեմ։

Ծառաները վազեցին ազայի հրամանը կատա-
րելու։

—Վերջը տունս կը քանդեն, ինձ կը սպան-
կացնեն, յետին աղքատութեան մէջ կը ձգեն, օրուայ
հացին կարօտ կը դարձնեն այդ անիծվածները...
այդ անպիտանները... մարդու կերպարանք ունեցող
անխիղճ գազանները... այդ... այդ, այդ...

—Թող Աստուած պատժի այն չար մարդուն, որը
համարձակվել է այս ձևսը ձեզ հասցնել... Աստու-
ծոյ կամքն է, ազա, մենք ինչ անենք, մենք խօ չենք
կրակ դցում ու այրում ձեր գործարանը։

Լրաբերը, այս ասելով, դադակը ձեռքին հեռացաւ

պատի տակ։ Ընդարձակ նախասենեակի պատից քարշ
տուած կանթեղի ճառագայթները, մի րոպէ տարա-
ծվելով նրա նաւթախառն մուրի մէջ կորած բարձր
հասակի վրայ, լուռաւորեցին նրա սև և կեղտոտ
դէմքը։

Խիտաբոյս յօնքերի տակից փայլեցին անսովոր
վիշտ արտայայտող սև աչքերը։ Բայց դէմքի ալեխառն
մազերի բնական գոյնը կորել էր թանձր կեղտի և
նաւթային մուրի տակ։

—Մշակն ով է, որ նրա Աստուածը ով լինի,—
գոչում էր Իվան Գրիգորիչը կատաղի տեսիլի նման։
Մշակն Աստուած չունի, նրա Աստուածը փայտն է։
Եթէ դուք Աստուած ունենայիք, մի տարուայ մէջ իմ
գործարանը երկու անգամ չէր այրվի։ Եթէ դուք
խիղճ և հոգի ունենայիք, ձեր կեանքը կը զոհէիք և
չէիք թողնի, որ ձեր ազին, ձեզ կերակրողին ջնաս հասնէր։

Լրաբերը լուռ էր. նա գիտէր, որ Իվան Գրիգո-
րիչի ինքնահաւան բնաւորութիւնը սաստիկ թշնամի է
ուրիշների հակախօսութեան, նամանաւանդ այսպիսի
դժբաղդութեան րոպէներում։

—Ազա, ջահօռնը պատրաստ է,—ներս վազեց
ծառան։

—Ես գնում եմ, դու էլ վազիր այս րոպէիս գոր-
ծարան,—գարձաւ աղան դէպի լրաբերը։

Մի քանի րոպէից յետոյ սևագոյն նժոյգներով
լծուած վառաւոր կառքը թանդագին, տաք մուշտակի
մէջ փաթաթված Իվան Գրիգորիչին տանում էր գոր-
ծարան։

Հիւսիսային քամին փչում էր, անձրևի կաթիլ-
ները, բռնի զօրութենով զարկվելով կառքի պատու-

հաննելին, կրկնապատկում էին Իվան Գրիգորիչի յու-
զումը։ Կարծես, բաւական չէր մարդկանց չարամտու-
թիւնը, մշակների անխղճութիւնը, բնութիւնն էլ մի
կողմից էր գործ դնում իւր խաստութիւնը, հակառակի
նման հէնց այս դիշեր բարձրացնելով ներհակ քամի
հրդեհին աւելի այժ տալու համար։

Այս բոլորի մասին Իվան Գրիգորիչը կառքի մէջ
մտածելով այնչափ կատաղած էր, որ, կարծես, ահա
ահա բարկութենից պիտի տրաքվի իւր դորձարանի
նաւթակաթսայի պէս։ Ժամանակ—ժամանակ, կառքի
պատուհանից գլուխը դուրս բերելով, մոիկ էր անում
հեռւում կրակի լուսաւորութեան և անհամբերու-
թեամբ հրամայում կառապանին քառորդ ժամում դործ
դնել երկու կշտակերը և առոյգ ձիերի մի ամբողջ շա-
բաթուայ հանգստութենից առացած ոյժն ու զօրու-
թիւնը։

Հասնելով քաղաքի ծայրը, կառապանը մի անդամ
ևս մտրակեց ձիերին, և կառքն անհետացաւ դիշերա-
յին խաւարի մէջ։ Իսկ Լրաբերը, դուրս վազելով վո-
ղոց առանց վայրկեան յապաղելու, ճանապարհվեց
դէպի գործարան։ Նա չը պիտի ուշադրութիւն դար-
ձնի ոչ քամու, ոչ անձրևի վրայ. նրան հրամայված է
ինչպէս և իցէ շուտ տեղ հասնել։ Նա չի կարող ուշա-
նալ. այսպիսի րոպէներում ամենաչնչին թուլութիւնը
մշակի կողմից ապայի աչքում մեծ յանցանքի է վախ-
ճում։

Այրվող գործարանը քաղաքից երեք վերսթ հե-
ռու էր դտնվում։ Լրաբերը ճանապարհը կարճելու
համար ծովի ափով էր գնում։ Լայնատարած ծովի ա-
լեքների շիշափոցը դիշերուայ խաւար մթնոլորտի մէջ

տարածվելով, անախորժ, երկիւղալի ապատորութիւն
էր անում մարդու վրայ։ Ո՛չ մի շնչաւոր արարած, ոչ
մի կենդանի առարկայ չէր երևում ծովափում, բացի
այդ սև և վիթխարի մարդուց, որ դիշերուայ ուրուա-
կանի նման հսկայական քայլերով չտապում էր դէպի
առաջ, խորը աւազի մէջ թաղելով իւր ոտները։ Ցան-
կարծ նա կանդնեց, կարծես, մի բան մտաբերելով և,
երկու ձեռները մէքենաբար խփելով ճակատին, մի րո-
պէ անշարժ մնաց։

—Տէր Աստուած, եղբայրս և փոքր որդիս
հրդեհից քիչ առաջ պատկել էին քնելու... բայց ո՞ր
տեղ... այո՛, այո՛... յիշում եմ, հէնց այն կողմում...
ուր որ կաթսան տրաքվել էր... Նրանք, չը դիմանա-
լով մեր ընդհանուր աներեակի ցրտին, այս դիշեր տե-
ղափոխվել էին կաթսաների բաժինը՝ վառարանի մօտ
քնելու։ Տէր Աստուած, ինչ կը պատահի նրանց եթէ
ժամանակին չեն զարթնել... այրվող նաւթը ուղղակի
նրանց կողմն էր դիմում... նրանք աչքովս չընկան։

Երկնակամարը կրակի լուսից չատագունել էր,
քամու զօրութենից բոցը կատաղաբար այս ու այն
կողմ էր տարածվում... ամբողջ Սև քաղաքը ծխի մէջ
թաղվել էր։ Լրաբերը սկսեց իւր յոգնած ոտներին այժ
տալ։

Տեղ հասնելով, Իվան Գրիգորիչի առաջին հա-
յեացքը հազիւ կարողացաւ ճանաչել կրակի և ծխի
մէջ կորած գործարանը։ Սև քաղաքի հասարակու-
թիւնը պատել էր հրդեհը, շուրջը կազմելով մի օղաձև
շրջան, որի մէջտեղը այրվում էր մի ընդարձակ խա-
րույկ։ Այս ու այն կողմերից վազում էին մարդիկ, ո-
րոնց մրոտ դէմքերի վրայ ոչինչ դարմացման նշաններ

չէին նկատում։ Այդպիսի և սրանից աւելի զօրեղ հրդեհներ նրանց համար սովորական դէպքեր էին։

—Աստուած սիրէք... մօտեցէք... օգնեցէք... մի վախենաք... ես փող կբաժամ, կվարձատրեմ օգնողնե-րին,—եղաւ Իվան Գրիգորիչի առաջին բացականչութիւնը, որ դժուարութեամբ վազելով ամբոխի միջից ձգտում էր դէպի կրակը։

—Մի մօտենաք, ապա... առաջ մի վազեք, վտանգաւոր է,—գոչեցին այս ու այն կողմից ամբոխի միջից, յետ մղելով նրան։

Բոցը երկու զօրեղ մասերի էր բաժանվել։ Մէկը դուրս էր գալիս մէյարկանի տան փլատակված կտուրից, դռներից ու պատուհաններից։—Այրվում էր իւղ մաքրելու բաժինը։ Միւսը—տան ու հինգ քայլ հեռաւորութեան մի գեռնպատը շինութեան միջից դուրս ձգվելով, արեւից բարձրանում էր ամբողջ շինութեան տարածութեան չափով։—Բոցավառվել էր նաւթային ճեպորդի պահեստը։ Իսկ այս երկու բոցաշտարակների միջտեղը ներկայացնում էր կատարեալ իրական դժոխք։ Այս—կաթսաների բաժինն էր, որտեղից առաջին անգամ կրակը սկսվելով տարածվել էր. ոչ մի առարկայ կրակի ճանկերից չէր ազատվել։ Բացի մի քանի երկաթէ կաթսաներից, որոնք իրանց միջի դիւրաբորբոք, կիսապատրաստ-ֆօտոգէնի յանկարծակի բոցավառութեան ճայթումից պատուվելով այս ու այն կողմ էին գլորվել—ամէն ինչ մոխիր դառնալու վրայ էր։

Խորտակված պատերի ճեղքերից թանձր ու սև ծուխը դուրս գալով, ոլոր մոլոր պտոյտներով միանում էր բոցի լայնաշրջան աշտարակի հետ, ինչպես փոքրիկ գետակները հոսում են ընդարձակ

դետի մէջ, զօրացնելով նրա կատաղի ընթացքը։

Գործարանի բակը ծածկված էր խառնիճաղանճ ամբոխով... ոտ դնելու տեղ չը կար։ Իվան Գրիգորիչը բազմութեան առաջ կանգնած կարգադրութիւններ էր անում։ Ամբոխի միջից մի քանիսը զանազան խորհուրդներ էին տալիս նրան։

—Այդ միջոցներով անհնարին է բան առաջացնել, հարկաւոր է Նօբէլի գործարանից հրաշէջ նաւօսներ բերել տալ,—ասում էր մէկը։

—Այո, այո, միայն Նօբէլի գործիքները կարող են այդ կրակին յաղթել,—աւելացնում էր մի ուրիշը։

Սրանք հարեւան գործարանատէրերը էին, որոնք ոչ այնքան Իվան Գրիգորիչի մասին էին հոգում, որքան վախենում էին որ մի ուժգեղ հրդեհը միւսն. իրանց գործարաններն հասնի։

Իվան Գրիգորիչը չէր լսում նրանց։

—Օգնեցէք... շտապեցէք... ես փող կբաժամ... լաւ հասցրէք, ինչ էք սառել... անպիտաններ... քանդեցիք դուք իմ տունը, սրիկաներ... գողեր... աւազակներ,—անդադար հայհոյում էր նա մշակներին, շտապելով այս ու այն կողմ վազվզելով։

Հրդեհի հանգցնելուն բացի Իվան Գրիգորիչի գործարանի մշակներից օգնում էին և՛ ուրիշ գործարանների մշակներ ու կողմնակի մարդիկ։ Միայն աւազիններն էին գործում ուղղակի կրակի դէմ ու դէմ, ամենավտանգաւոր տեղում, իսկ միւսները աշխատում էին որքան կարելի է հեռուից գործել, խոյս տալով կատաղի բոցի ալիքներից։ Աւազիններն հրաշէջ նաւօսների խողովակների ծայրերից բռնած շիտում էին ջուրը կրակի դէպի զօրեղ կէտերը, որտեղից բոցը

Ջրի ամեն մի զարկին խուլ արձագանքներ էր տալիս, —իսկ միւանների մի մասը հեռուից նաւօտների կռնաձիները էր պատճռում, ձնագետները ջուր էին աւելացնում նաւօտներին։ Մշակների մի ուրիշ խումբ թիերով հող էր սփռում երկու կողմերից նաւթային ձնագործների բոցավառված պահեստի վրայ։

Մի քանիսը Իվան Գրիգորիչի մշակներից անդիմակցաբար այն աստիճան մօտեցել էին կրակին, որ ամբոխը նրանց փոխարէն սարոսափում էր։ Տօթը խեղդում էր նրանց, կրակի տաքութիւնը կիզում էր նրանց կիսամերկ մարմինները, խոշոր կայծերը անձրևի նման հեղեղվում էին նրանց գլխին, բայց խոթաուզված իրանց գործի մէջ, կարծես, նրանք ոչինչ չէին զգում։ Ամեն վայրկեան նրանց նաւթաթաթախ ցնցոտիները սպառնում էին բոցավառվել թափվող կայծերից։ Մի քանի ուրիշ բանւորներ այդ թշուառներին վերջին վտանգից ազատելու համար բաւական հեռուից մի փոքրիկ նաւօսով ջուր էին սրսկում նրանց վրայ։

Թէթեւամիտ ամբոխը շատ ժամանակ իւր աչքի առաջ կատարվող ամենասպրանքի տեսարաններին մէջ անդամ բնազդաբար ձգտում է գտնել որև իցէ նիւթ իւր վայրենի զուարճութեան համար։

—Մենք էլ գնանք ու այս վերջիններին վրայ ջուր ածենք,—ասում էին մի քանիսը, անամօթաբար ծիծաղելով։

—Գնացէ՛ք... իսկ մենք էլ այստեղից ձեզ վրայ հող կածենք,—աւելացնում էին ուրիշները, նոյնպէս ծիծաղելով։

—Ինչ լաւ չար կրակ է, ազերք, խորովածի

համար,—ասում էր մէկը, բեղերը շփելով։

Բոցը զօրանում էր... ամբոխը, չը դիմանալով շոքին, սկսեց աստիճանաբար հեռու ու հեռու խոյանալ։

—Փախէ՛ք... փախէ՛ք... հեռացէ՛ք... պատը քանդվում է,—գոռաց յանկարծ միաբերան ամբոխը, սեղմելով միմեանց և աւելի յետ մղվելով։

Բարձրացաւ մի խուլ օրոտաձայն, մի ձայն, որ նմանվում էր հարիւրաւոր թնդանօթների պայթիւնին։ Մի վայրկեանում մթնեց բոլորը, և ամբոխի առաջ ամեն ինչ կորաւ թանձր խաւարի մէջ։ Բոցը, ծուխը, կրակը, մուրը և խորտակված պատի հողափոշին, խառնվելով իրարու, աներևութացրին հրաշէջ մշակներին։

—Վայ գլուխս... վայ մէջքս կոտրվեց... Աստուած սիրէք... օգնեցէ՛ք... մեռայ...—լսվում էր խառնար գեհենի միջից։

—Ոտներս փշրվեցին... վայ... վայ... ահ, խեղդուեցի, Աստուած... օգնեցէ՛ք, դուրս բերէ՛ք ինձ այստեղից, ոչինչ չեմ տեսնում,—գոռում էին մի ուրիշ կողմից։

—Ձեռքս... ձեռքս ...այ... այ... այ... այ... մի մօտենաք, այրվում է ձեռքս... ուֆ... ուֆ։

Ամբոխը մոռացաւ ծիծաղն ու կատակը. ամենքի երեսների վրայ երևացին յուսահատութեան նշանները... ուր աներևութացան առաջին կարգի հրաշէջ մշակները։ Լսվում էին միայն աղերսանքի, ցաւի հառաչանքներ, օգնութիւն խնդրող ձայներ, բայց յայտնի չէր որ կողմից էին գալիս նրանք, ինչպէս էին աղերսողները։

Յովհաննու երեսակայութեան տարտարոսն անդամ

չէր կարող մրցել այս իրական դժոխքի հետ։ Իվան Գրիգորիչի բարկութիւնն ու չիմաստութիւնը փոխվել էին անորոշ սարսափի, մի վայրկեան առաջ նրա կատաղի դէմքն այժմ արտայայտում էր նեղքին ահ ու դող։ Անշարժ արձանի նման նա մի տեղում սառել էր և չէ դիտէր ինչ անի. նա կամեցաւ առաջ վազել, բայց չէ կարողացաւ, որովհետև անհնարին էր։ Ծուխն ու փոշին խառնվելով մութի, մռնչի և բոցի հետ, կազմել էին նրա առաջ մի անթափանցելի խաւար տարածութիւն։

Ճանկարծ ամեն ինչ պարզվեց, և նրա առաջ բացվեցաւ մի սոսկալի տեսարան։ Այս ու այն կողմ թաւալվել էին թուով մինչև վեց մշակների դիակները։ Եբևում էին նոյնպէս և ոտքի վրայ մի քանի ուրուականանման պատկերներ, որոնցից մէկը, բոցավառված, խելագարի պէս այս ու այն կողմ էր վազվզում, բացականչելով.

—Օգնեցէք... հայ քրիստոնեաներ... օգնեցէք... խղճացէք... մարմինս այրվում է... չուտ... չուտ հող ածեցէք վրաս... ջուր... ջուր... ջուր... ուֆ... ուֆ Աստուած, այրվում եմ...

Սա—սարիքը անցկացրած մի ծերունի էր, որի դիւրաբորբոք ցնցոտիները բոցավառվել էին և խաշում էին նրա մարմինը կենդանի-կենդանի, ինչպէս միջնադարեան ինկվիզիցիայի թշուառ զոհերից մէկին։

Իվան Գրիգորիչը երեսը շուռ տուեց. նրա նեբքբացած նեարդերը անզօր էին դիմանալ մի այդպիսի սոսկալի պատկերի։ Ամբոխի միջից չարերը սիրա առնելով վազեցին առաջ։ Ուժեղներից մէկը ոտի մի զօրեղ հարուածով բոցավառված ծերունուն գլորեց

գետինը, ճնշագետները սկսեցին այս ու այն կողմից հոդով ծածկել նրա մարմինը, կիսակենդան թաղելով ոգորմելի զառամեալին։ Այս միակ միջոցն էր, որով միայն հնարաւոր էր հանգցնել նրա այրվող ցնցոտիները։

—Խաչվեցի... ուֆ... ուֆ... այրվեցի... խոսել ձայնով հառաչում էր ծերունին հողի տակից։ Նրա դէմքն այնչափ այլանդակվել էր, որ ներկայ եղողները շատերը կէս սարսափով և կէս զզուանքով ծածկում էին իրանց աչքերը նրան չէ տեսնելու համար։

—Ուֆ... ախ Աստուած, չուտ առ հոգիս... ազատիր տանջվելուց... մի չարչարիր,—շարունակում էր ծերունին, թաւալվելով հողի տակ։ Բայց որդիս... ո՞ւր է որդիս... կինս... որդիքս, աղջիկներս... ջուր... ուֆ սիրտս...

Վերջին խօսքերն արտասանելիս ծերունու ձայնն աստիճանաբար փոխվում էր, հետզհետէ թուլանալով։

—Այստեղ եմ, այստեղ... դուռաց մի տանեւուէթ քան տարեկան երիտասարդ, ձախ ձեռի վրայ կնած իւր աջ թևը, որի այրված կաշին պլոկվելով մերկացրել էր կարմիր միսը։ — Ա՛խ... կծկծում է սիրտս...ուֆ, Աստուած սիրէք, մի մօտենաք թևիս... նա այրվում է... կծկծում է։

—Հեռացիր, թշուառ, մի մօտենար հօրդ. քեզ տեսնելով խեղճ ծերունին կսկծից կըմեռնի,—բացականչեցին ամբոխի միջից։

—Բէյբութ... Բէյբութ... ևկ, այստեղ եմ... մօտեցիր, մեռնումեմ...ա՛հ... ա՛հ...պապակվեցի,—բացականչեց ծերունին, կամենալով ոտի կանգնել։

Մի քանի վայրկեան հայր ու որդի չկարողացան

ճանապհել իրարու։ Ծերունու ալեւոր միրուքը խանձվել էր և երեսում կուչկուչվել։

—Ամեն... այդ ինչ օրի ես ընկել, ախի,—ասաց որդին, խելագարի պես արձակվելով ծունկերի վրայ թառալվող ծերունու վրայ։

Մի վայրկեան ծերունին մոռացաւ իր այրված մարմնի կսկիծը և երկու ձեռներով մեքենաբար փաթաթվեց որդու վզին։

Միևնոյն ատեն հայր ու որդի հեծեծելով, դրկած իրարու, խառնում էին ցաւի և կսկծանքի լեզին, մի քանի քայլ նրանցից հեռու կատարվում էր ուրիշ տեսարան։

Իբրև դժոխային անդունդի յատակից, վեց դիա-թառալ մշակների միջից լսվում էին սիրտ պատռտող մորմոքաձայներ, և այս չէին նմանվում մարդկային ձայների, այլ մորթվող անասունների վերջին բառանչումների և յուսահատ թառանչքին։ Թառալվածներից երկուսն արդէն անշնչացած էին. նրանց այրված ու պլանդակված դէմքերն այլևս չէին կրում իրանց վրայ մարդկային դէմքի ոչ մի նշան, նրանց աչքերի բիբերը դուրս էին ցցվել ինչպես խորոված չագանակներ մոխրի մէջ։ Գլխի ու երեսի մազերի ու յոնքերի հետքեր անգամ չը կային. նրանց գլուխները նմանվում էին թէժ կրակի միջից դուրս բերած մսի կտորների։ Չորս մարդիկ աշխատում էին նրանց դիակները մի կողմ քաշել։

Մի քանի քայլ հեռու այդ դիակներից մի երիտասարդ մշակ, նստած գետնի վրայ, ձեռները հոգի մէջ սրտրելով, բացականչում էր.

—Ձեռներս... ուֆ... ուֆ... խաշվեցին... պա-

պակվեցին... Տէր Աստուած... բայց իզուր... նա այրվեց... մեռաւ... Չը կարողացայ ազատել հօրեղբօրս...

Նրա թէժացած աչքերից դլորվեցին արտասուքի միքանի կաթիլներ, և նա ձեռները տանելով դէպի աչքերը, թրջեց իր պոկված մատների ծայրերը։ Կարծես, այդ աղի կաթիլները կարող էին զովացնել նրա սիրտը։

Սրանից մի փոքր հեռու լսվում էին խուլ աղօթքի ձայներ։

—Ով միակ Աստուած և դու, Մուհամմէդ, նրա մեծ մարգարէն, տեսնում էք ձեր սուրբ աչքերով, որ մենք ինչ սարսափելի կերպով ենք տանջվում մեր հոդին, Լայ... լայ, Իլլալահ, Մուհամմէդ Բասուլ Ալլահ... Ուսկի չեաննաթ...

Այդ—պարսիկ մշակներն էին, որոնցից մէկի դէմքը լսելը չարդելով, դրեթէ երկու կոտր էր եղել. նա փսում էր իր վերջին շունչը, իսկ երկուսի ոտներն ու կռնակներ էին չարդվել։

Ամբոխը խառնվել էր այնպէս, որ ոչ ոք այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում հրդեհի վրայ, որն այդ ժամանակ սկսել էր փոքր առ փոքր մեղմանալ։

Իման Գրիգորիչը գոռում էր.

—Աստուած սիրէք... հրդեհը... հրդեհը, մի մոռանաք նրան... այդ վիրաւորվածներին յետոյ էլ կարելի է ժողովել, բայց գործարանս, գործարանս, նա ձեռքից գնում է. նա այրվեց, վերջացաւ, ոտնա քանդվում է, ի սէր Աստուծոյ, խղճացէք։

Բայց Իման Գրիգորիչի գոռոցների վրայ ուշադրութիւն դարձնողներ քիչ եղան. աշխատում էին

L.U.N.Z. ЦГАЛИ СССР. А. Шуомянц 7/7

նրա հարևան գործարանատերերի մշակները, որոնց սերերը սոխալում էին չը հեռանալ գործից, մինչև որ բոլը չի պատարիլ իրանց գործարաններին վառնգ սպառնալ։

—Մենք չենք կարող այդ թշուառներին անտէր, անօգնական թողնել ու հրդեհի մասին աշխատել,— դառում էին ամբոխի միջից դէպի Իվան Գրիգորիչը,— այդքան մարդ է կորչում մի րոպէում, թող կորչի գործարանդ, դու էլ...

—Այո, այո, դու ես դրանց այրվելու պատճառը. եթէ ժամանակին քո անիծեալ նաւթակաթսաները և վառարանը չինել տայիր, այդ դժբաղդութիւնը չէր պատահիլ ոչ քեզ, ոչ այդ խեղճերին։

Գործակատարը, որ Իվան Գրիգորիչին չուաքի նման հետևում էր ուր նա վազում էր, մօտեցաւ նրան և ասաց.

—Իվան Գրիգորիչ, խորհուրդ եմ տալիս հեռու կանգնել այդ չարամիտներից, մի դիպէ, ձեզ ինչ վրա կը հասցնեն, նրանք մեր մշակների ընկերներն են, նրանք այժմ գազանացած են և Աստուած դիտէ ինչեր են մտածում...

Բայց Իվան Գրիգորիչը բանի տեղ չէր դնում ոչ ամբոխի սպառնալիքը և ոչ էլ իր գործակատարի խորհուրդը։ Նրա ուշքն ու միտքը կենտրոնացած էին մէկի և միայն հրդեհի վրայ, և նա ամբողջ մարմնով դողում էր, թէ ահա կրակը հասնելու է ֆօտոգէնով լի տակառների պահեստին, ուր մօտ հազար լի տակառներ կային։ Սակայն այս երկիւղն աւելորդ էր, հրդեհն այլ ևս այնպէս սաստիկ չէր, ինչպէս սկզբում էր։ Կարծես, նա իր վրէժն արդէն հանելով, կամենում էր հանգստանալ։

Քամին դադարել էր, բոցն այլ ևս կատաղաբար այս ու այն կողմ չէր տարածվում, այլ հանդարտ ու ուղիղ գծով բարձրանալով վեր, լուսաւորում էր նեղ կայ եղող ամբոխը, որը, այրվածների շուրջը հաւաքված, դանդաղ օդնութիւն էր հասցնում այդ խեղճերին։

Այդ ժամանակ վազելով ամբոխին մօտեցաւ յանկարծ մի բարձրահասակ մարդ, որի դէմքի վրայ նըկատելի էին խորին յուսահատութեան և անորոշ երկիւղի նշանները։ Նրա ծունկերը ծալվում էին և դժուարութեամբ հետագնդվում նրա դնացքին։

Սա արդէն մեզ յայտնի լրաբերն էր։

—Թողէք... թողէք, տեսնեմ ուր են... ուր են որդիս., եղբայրս... Աստուած իմ... նրանք ուր են...

Ամբոխը ճանապարհ տուեց նրան, և նա չտապով մտաւ մէջտեղ։

—Ո՞ւր էք, որտեղ էք, խօսացէք... Սարգիս... Գասպար...Ա՛խ, Բէյլրովն է, եղբօրս որդին...

—Ե՛ս... Այո... բայց իմը ոչինչ, խեղճ հայրս, ծերունին... նա մեռաւ... ահա նա... մեռաւ նա մինչև վերջը, իր ընտանիքի անունը յիշելով... նա վերջին շունչը փչեց, քո անունը տալով..., «գնանք մինչև եղբօրս գալը ապրեմ», ասում էր նա հոգին փչելով։

—Ո՞րտեղ է, ցոյց տուր ինձ նրա դիակը, բայց որդիս, որտե՞ղ է, Սարգիսը...

—Մի մօտենար, ազատում եմ, ձեռս, նա այրվում է... կծկծում է... մի կաչիր ձեռներիս... ուֆ.

Մի րոպե Մէհրաբը մնաց քարացած, նրա՝ որ

առաւօտից չոր ու ցամաքած՝ աչքերը մեքենաբար դառնում էին մերթ իւր ձեռնի եղէօր, մերթ որդու, Թասպարի այրուած ու կուչ եկած ձեռներին. մերթ իւր եղբօրորդի Բէյլուէթի կաշուից մերկացած ոչ թևի վրայ։ Իսկ ամբոխի պայրացած աղաղակութիւնը նրա վրայ էր։

Այս առաւօտեան դիւրքում նրա ամխաթոյն դէմքն ու բարձր ու բարակ հասակը պատկերացնում էր մի մեծայլ մարմարեայ արձան, որի միայն բոցավառ աչքերն էին խանդարում ընդհանուր անշարժութիւնը։ Երեք սուր գաշոյններ միաժամանակ ցցվել էին նրա կրծքի մէջ, որոնցից մէկը — եղբօր ձեռնը թափանցել էր մինչև սրտի խորքը, խփելով արիւնը դուրս։

Ցանկարծ նա սկսեց երկու ձեռներով ուժգին հարուածներ տալ իւր բաց, պլեխաւոն մազերով ծածկված գլխին։ Ամբոխի մէջ չատների աչքերից արտասուքի կաթիլներ էին թափվում։

—Վայ... բա ես ինչ պատահան տանեմ քո ընտանեքին... ես ինչ պիտի ասեմ կնոջդ։

Իման Գրիգորիչը, լսելով այդ դառնը, մօտեցաւ մի բոպէ ամբոխին։

—Ինչ ես այստեղ դառդառդ բարձրացրել, խելագար... ինչ բզաւելու ժամանակ է... գործարանից դուրս է, գո՛ այստեղ դռեմ ես. վազիր, ասում եմ, օդնիր այնտեղ։

Մէհրաբը ոչինչ չէր լսում. նա երևակայում էր կած իւր եղբօր գիակի վրայ բառաչում էր։ Ամբոխը ճնշեց պայրացած Իման Գրիգորիչի անտակի հրամանի վրայ։

—Նրա եղբայրն այրվել, մոխիր է դարձել, նրա

որդու ձեռները այրվել են և վուչ եկել, իսկ դու այժմ այդ դժբաղդից օգնութիւն ես պահանջում։ Անխիղճ, անասունաց. նա այդ թշուառութեանում ինչպես կարող է օգնել քո անիծված գործարաններին,—դառացին ամբոխի միջից մի քանի տաք գլուխներ։

—Մի և նոյն է, էլ այսուհետև նրա դառալը օգուտ չի տայ։

Մէհրաբը մեքենաբար գլուխը բարձրացրեց. դառնի տանջանքի կնիքը դրոշմվել էր նրա ճակատի վրայ, աչքերը փայլում էին հոգեկան կսկիծից։ Դէմքին արտայայտում էր խելագար կատաղութիւն։ Նա նմանվում էր այդ դրութեան մէջ մի կատաղի և յուսահատուած առիւծի, որ պատրաստվում էր յարձակվել իւր թշնամու վրայ։

Մի վայրկեան նա այդ անշարժութեան մէջ մնաց։ Իման Գրիգորիչը կէս բարկացած և կէս երկիւղալի դէմքով շարադած նայում էր նրա վրայ։

Ցանկարծ Մէհրաբը կայծակի արագութեամբ վեր թռաւ տեղից...

—Հա՛... ճշմարիտ է ասում ապան, պէտք է նրա հրամանը կատարել, պէտք է օգնել, ես պարտաւոր եմ աշխատել։

Նա կամեցաւ առաջ շարժվել, բայց ծունկերը չհնազանդվեցին, գլուխը ծանրութիւն արաւ, և նրա վիթխարի մարմինը կայծակահարի նման՝ անշնչացած թաւալվեց Իման Գրիգորիչի ոտների առաջ, իւր եղբօր սևացած դիակի վրայ։

—Գործարանս, գործարանս... Ասուած ախէր, ասես քանդուեց։

Բագու, 1883 թ. Մարտ

ԴՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Պ Ա Տ Մ Ո Ւ Ի Ճ Ք

(Նուէր Բաֆֆիի գրականական գործունէութեան 25-ամեակին)

I

Հազար ութ հարիւր վաթսուն և ութ թուականի գարնան պարզ և գեղեցիկ օրերից մէկին էր, երբ ես Շ. քաղաքում աւարտեցի իմ ուսման ընթացքը հռչակաւոր Տէր-Վահակի ուսումնարանում։ Այդ օրն ինձ համար այնքան նշանաւոր էր, ես ինձ այնքան ուրախ և բաղդաւոր էի զգում, որ անշուշտ նրա նման մի ժամը պիտի տպաւորված մնայ յիշողութեանս մէջ մինչև կեանքիս վերջը։ Ջոլա տարի շարունակ Տէր-Վահակի ձեռքում տանջվելուց յետոյ, չոլա տարի նրա բարբարոսական ֆալախկայի տակ չարչարվելուց յետոյ, բնական է, որ ինձ անսահման բաղդաւոր պիտի համարէի այդ օրն, երբ, վերջապէս, ազատվել էի անխիղճ տէրտէրի ձեռքից։ Էլ ինչ երկարացնեմ, ես թևերը չունէի, որ ուրախութիւնիցս թռչէի, երբ հօրս գնած մի ֆունտ թէյը յանձնելով աչեր հօրն իբր չնորհակալութեան նշան ինձ տուած

կրթութեան համար, վերջին անգամ համբուրելի նրա կոշտ ու զարհուրելի ձեռը և դուրս թռայ ուսումնարանից։

Ես մեր տան հերոսն էի այդ օրը, ոչ ոք իմ եղբայրներից կամ քոյրերից իրաւունք չունէր որ և է կերպով դիպչել իմ քէֆին։ Ամենքը դէպի ինձ սիրով և յարգանքով էին վերաբերվում։ Եւ ինչպէս կարող էին չը յարգել, քանի որ նրանց մէջ ամենակրթվածը և ամենագիտունն ես էի։ Քանի որ ամբողջ ճարտասանութիւնն ես էի։ Քանի որ ամբողջ Նարեկը գլխից մինչև վերջն անցել էի։ Բոլորը, հաւաքված իմ շուրջը, վայելում էին ինձ։ Մայրս իսկոյն ինձ համար սկսեց պատրաստել իմ սիրած կերակուրը, հայրս խոստացաւ հէնց այն օրը գնել ինձ համար մի նոր արխալուղ։ Մի խօսքով, մեր ընտանիքի մէջ այդ օրն անխառն ամենքի սիրոյ և փայփայանքի առարկան ես էի։ Ամենքը ինձնով էին զբաղված, ամենքը աշխատում էին ինձ հաճոյանալ ամեն կերպ։ Իսկ ես, ինչպէս վայելում է հերոսին, աշխատում էի պահել ինձ խիստ լուրջ և վեհանձն, սեպհական արժանաւորութեան զգացմունքով լեցված։

Հայրս, չը նայելով իւր աղքատութեանը, այդ օրը խիստ առատաձեռն էր դառել։ Նա հրամայեց մօրս բացի իմ սիրելեալ կերակրից պատրաստել և՛ մի ուրիշ առանձին կերակուր։ Նա մտադիր էր այդ օրը հրաւիրել մեր բարեկամներից մի քանիսին՝ իւր անդրանիկ որդու ուսման առիթով կատարվող ուրախութեան մասնակից լինելու, մի և նոյն ժամանակ, խորհրդակցելու նրա ապագայի վերաբերմամբ։

—Հարկաւոր է, այ կնիկ, հէնց այսօր որոշել,

թէ այսուհետև ինչով պիտի պարապի Խաչիկ։ «Ծնունդը երկաթը, քանի որ նա տաք է», ասում է առածը։ Պէտք չէ թոյլ տալ, որ նա մի օր անգամ անգործ մնայ, կարող է ծուլանալ ու այնուհետև դժուար կը լինի նրա համար մի գործի կպչելը։

Մայրս համաձայն չէր հօրս մտքի հետ։ Նա ուզում էր, որ ես գնամ մի ամիս առաջ Հանդիստ ապրելու, և փորձից հակառակել նրա կամքին, բայց ինչպէս կարող էր իմ հօր նման մարդու առաջին կինը հակառակել։ Նա այնպէս գոռաց խեղճ կնոջ վրայ, որ սա տեղն ու տեղը լռեց առիւծի համար, ինչպէս ամէն ժամանակ։ Իսկ ինչ վերաբերում էր ինձ, ես այդ օրն ուրախութիւնից այնքան շուարած էի, որ չզիտէի թէ ինչ մտածեմ։ Ես բաւական էի միայն նրանով, որ, վերջապէս, ազատվել էի Տէր-Վահակի փալախայից։

Այսպէս թէ այնպէս, մօտեցաւ կէսօրուայ ժամանակը։ Ձաշն արդէն պատրաստ էր։ Այն ժամանակ մեր քաղաքում մեծ հարուստների աներուն էին դանվում ամիրաներ, սերդարներ և ուրիշ եւրոպական կամ կարասիք, իսկ մեզ նման չունեւորները դեռ ապրում էին հին, ասիական եղանակով։ Մայրս մեր բաւական ընդարձակ սենեակի յատակի վրայ տարածելով կապոտագոյն սփռոցը, ծածկից նրան պնդապան տեսակ համեստ, էժանագին, բայց համեղ ուտելիքներով և մրգեղէններով։ Հայրս ապրում էր հիւրերին, իսկ ես անհամբերութիւնից քիչ էր մնում, որ սրտաքէի։ Այդ օրն ուրախութիւնից շատ դէս ու դէն վազվզելով, յոգնել էի և սոսկ քաղցել։ Ես դալլի ախորժակով ապրում էի այն բոլորին, որ

պիտի ձեռքս հասցնէի իմ սիրած կերակրին։

Վերջապէս, հիւրերն եկան և ամէնքը, առանց երկարացնելու, ծալապատառակ շարվեցին փափուկ մէնդոմների վրայ, սեղանի շուրջը։ Հայրս ինձ հրամայեց տաքի վրայ ծառայութիւններ անել։

Նշանաւոր էր այդ օրը։ Ես այն ժամանակից մինչև այսօր էլ չեմ մոռացել իմ կեանքում մի այնպիսի զուարճալի օր, չը նայելով որ այժմ բազմապատիկ բաղդատաբար հանդամանքներում եմ ապրում։ Հիւրերը մի մի բաժակ օղիով չնորհաւորեցին հօրս, իսկ ինձ օրհնեցին հազար տեսակ օրհնանքներով։ Մի քանիսը նրանցից ինձ շատ խրատներ տուեցին իմ ապագայ կեանքը խելօքութեամբ և խոհեմութեամբ վարելու մասին։ Ես այդ խրատներից միայն մէկին եմ յիշում. նա ինձ վրայ խիստ խորը տպաւորութիւն արաւ, և ես երբէք չեմ մոռանայ այդ խրատը։ Նա մինչև այսօր եկել է իմ կեանքի պահապանը, նայնը պիտի մնայ և մինչև իմ մահը։ Խրատողը մեր հարևան մանրավաճառ Թորոսն էր, ով, ինչպէս պատմում էին, խելօք մարդ։

— Որ որ լինես, ինչ գործի որ կպչես,— ասաց նա,— աշխատիր քեզանից մեծերի հաւատարմութիւնը գրաւել դէպի քեզ խոնարհութեամբ, լռութեամբ։ Առաջին քո հոգսը լինի մեծերիդ աչքում սիրելի դառնալ, փոպաշնելով, կեղծաւորելով, շողոքորթելով։ Չը թոյլ տաս, որ քեզ խաբեն, բայց աշխատիր, որ ամէն ժամանակ ինքդ ուրիշներին խաբես քո խելքով։ Այնուհետև, ուր տեսնես թէ մի կոպեկի անպատճառ շահ անելիս, ամէն մէջքդ գործ դիր այդ շահը չը կորցնելու։ Վնաս չունի, հարկաւոր եղած ժամանակ

սուտ էլ ասա, միայն թէ մէջտեղ չահ ունենաս։ Վերջապէս, միշտ մտաբերիր Քրիստոսի պատուէրը. «եղէք խորամանկ ինչպէս օձ, իսկ պիտակիտ ինչպէս աղաւնի»։

Այս խրատը խիստ երկար ու բարակ էր, զարդարված զանազան առակներով։ Բայց ասելիքդ եմ հասկանում նրան ամբողջովին բերել այստեղ, որովհետև ես գործնական մարդ եմ և ժամանակ չունիմ յիշատակարանս լեցնելու զանազան մանրամասնութիւններով։

Ճաշը վերջանալուց յետոյ հայրս իսկոյն եւեթ առանց երկարացնելու խօսք բաց արաւ հիւրերի հետ իմ ապագայի մասին։ Սկսվեց երկար ու բարակ խորհրդակցութիւն։ Որովհետև հիւրերի գլուխները մի փոքր տաքացել էին, այս պատճառով իմ ապագայի հարցը գառաւ նրանց համար խիստ վիճաբանութեան առարկայ։ Ես, մի կողմ քաշված, լուռ ու մունջ, խորին ուշադրութեամբ ականջ էի դնում նրանց խօսակցութեանը։ Հայրս յայտնեց այն միտքը, թէ մտադիր է ինձ որ և իցէ արհեստի տալ, բայց չըգիտէ ո՛րն է արհեստներից աւելի յարմարը և, մի և նոյն ժամանակ, արդիւնաւէտը։ Մեր հիւրերի թւում կար մի դարբին, որի որդին ինձանից մի տարի առաջ աւարտելով ուսումը նոյն Տէր-Վահակի մօտ, պարապում էր իւր հօր արհեստով։ Այդ մարդը խորհուրդ էր տալիս հօրս, որ ինձ նոյնպէս տայ երկաթագործութեան որ և իցէ ճիւղը սովորելու։ Բայց մանրավաճառ Թորոսը, որի տաւած խրատը վերը բերեցի, խիստ ընդդիմացաւ դարբնի այդ մտքին։ Նա ասաց, թէ արհեստը դառարկ բան է, թէ նա փոր չի կշտա-

ցնում, բայց միայն մարդու կեանքը մաշում է և օրինակ բերեց նոյն իսկ իւր արհեստի նշանակութիւնը պաշտպանող դարբնին։

—Դու ինքդ, պ. Մալաթի,—դարձաւ նա դարբնին,—մեր քաղաքի մէջ ամենահարուստներն ես համարվում, բայց ինչ ես առաջացրել մինչև այսօր, երբ կեանքիդ մեծ մասն արդէն անցել է։ Ինչ ես առաջացրել, սուտ տեսնեմ, որ ուրիշներին էլ խորհուրդ ես տալիս արհեստ սովորելու,—չարունակեց նա տաքացած։ Ձը նայելով որ անդադար ծանր մուրճը ձեռքումդ, կրակի առաջ, արիւն քրտինքի մէջ, տաք երկաթ ծեծելով դիշեր ցերեկ չարչարվում ես—ընտանեկդ շահաթիական մի անգամ տաք կերակրի երես չի տեսնում։ Ձէ, ես հակառակ եմ ամեն տեսակ արհեստներին և եթէ ես որդի ունենայի, թէկուզ ինձ սպանէին, նրան չէի թողնի, որ արհեստաւոր դառնայ։ Արհեստը բացի նրանից, որ նիւթապէս չի ապահովում մարդուս, մինչև անգամ բթացնում էլ է նրան։ Ինչի է նմանում արհեստաւորը մի հասարակութեան կամ հանդիսի մէջ, տե՛ր... դարմանով լցրած տոպրակի։ Նա ոչ կանոնաւոր կերպով խօսել գիտէ, ոչ էլ իւր անձը մաքուր պահել։ Արհեստը մարդուս չի կրթում, այլ մի տեսակ կենդանի է դարձնում։

Այդ կծու նկատողութիւնն արհեստի վերաբերութեամբ մանրավաճառ Թորոսը, կարծես, հէնց դիտմամբ էր անում, որ խեղճ դարբնին վիրաւորի։ Դարբինը խիստ ամօթխած մարդ էր։ Լսելով այդ կշտամբանքը, կարմրեց և ոչինչ չը կարողացաւ պատասխանել։

Երեւում էր, որ ինքն էլ զգում էր իւր աշխատութիւնը հպարտ հակառակորդի առաջ։

Հայրս երկար վիճաբանութեանը վերջ դնելու և հարցը միանգամից վճռելու համար հարցրեց.

—Այժմ, պարոններ, ասացէք, ինչ խորհուրդ էք տալիս Թոչիի համար, ինչ պարապմունքի տամ նրան, որ մարդ դառնայ։

—Վաճառականութեան,—պատասխանեց ամենից առաջ մանրավաճառ Թորոսը։

—Բայց վաճառականութեան համար ախար վող է հարկաւոր, իսկ էս, ինչպէս դիտէք, ազքատ մարդ եմ։

—Ծուր նրան մի հարուստ վաճառականի խանութի գործակատարի պաշտօնով, նա այնտեղ առևտուրը քիչ թէ շատ սովորելուց յետոյ, ինքը կարող է վերջ ի վերջոյ սովորել վող ձեռք բերելու հնարը և ժամանակով վաճառական դառնալ։ Միայն հարկաւոր է երկար համբերութիւն ունենալ,—ուրիշ մէկը...

—Այդ ինչպէս կարելի է, էլի էս չեմ հասկանում, թէ գատարկ ձեռքով մարդ ինչ կարող է անել,—հետաքրքրվեց հայրս, իսկ որ չը կարողանալով Թորոսի խօսքերից մի բան հասկանալ։

—Աչխարհում անկարելի բան չը կայ,—հակառակեց մանրավաճառը։ Ես ինքս տասը տարի մի մանրավաճառի մօտ գործակատար եմ եղել գատարկ ձեռքով. ինչպէս տեսնում էք, ինքս այսօր մանրավաճառ եմ և, փառք Աստուծոյ, մօտ տասը հազարի կարողութիւն ունիմ։ Բայց ես դեռ ոչինչ, համեմատելով ուրիշների հետ։ Մարիկ տանէք մեր քաղաքի ամենահարուստ վաճառականներին, նրանցից որ մէկին էլ չը պրպտեք եղել առաջ։—Ամենքն էլ իրանց ժա-

մանակին գործակատարներ կամ խանութի ծառաներ են եղել. իսկ այժմ ամեն մէկը հարիւր հազարների տէրտէր է անում։ Վաճառականութիւնը մի այնպիսի գործ է, որ ինքն է սովորեցնում. պէտքին փող աշխատելու հնարը. հարկաւոր է միայն գտնել նրա գաղտնիքը, այնուհետև ամեն ինչ ինքն իրան կհշտանում է։

—Ի՞նչ գաղտնիք է այդ, պարոն Թորոս,—հարցրին բոլորը միաբերան։

—Ձեզ համար արդէն ուշ է հասկանալ այդ գաղտնիքը, ձեր ժամանակն արդէն անցել է, իսկ Թոչին կարող է շատով հասկանալ։ Փող միայն աբրոյ գիտէլն գործին և Թող սրանից առաջ իսուսած խրատներն իւր ականջում միշտ պահի, երբէք չը մոռանայ, այնուհետև գաղտնիքը հեշտութեամբ կը պարզվի։

Մինչդեռ նրանք այս վիճաբանութեան մէջ էին, ես ևս սկսել էի արդէն մոքսում խորհել իմ ապագայի մասին։ Մանրավաճառ Թորոսի խօսքերն ինձ համար խիստ խորհրդաւոր էին. ես չէի հասկանում այդ խօսքերի նշանակութիւնը։ «Այն ինչ գաղտնիք է, որը կարող եմ գտնել վաճառականութեան մէջ», մտածում էի ինքս ինձ։ Այդ գաղտնիքը սկսեց ինձ խիստ հետաքրքրել, այնպէս որ փաքր էր մնում, որ ես համարձակվէի բերան բանալ և խնդրել հօրս, որ նա հետևի Թորոսի խորհրդին և Թոյլ տայ ինձ վերնել գործակատար մի վաճառականի մօտ, որպէս զի իմանամ թէ ինչումն է կայանում փող ձեռք բերելու գաղտնիքը։ Բայց ես ինչպէս կարող էի բերան բանալ իմ մեծերի մօտ։ Այդ կը լինէր իմ կողմից մի ան-

բեմի յանդգնութիւն, և ես հնչա չէի պրծնիլ հօրս ձեռքից։ Բարեբաղդաբար, առանց իմ միջամտութեան, բանը փոխվից իմ ցանկացածի համաձայն։ Երկար վիճաբանութիւններից յետոյ ամենքը, ի հարկէ, բացի դարբին Մարութից—որը մինչև վերջը լռութիւն էր պահում—համաձայնվեցին, որ ինձ համար լաւ կը լինի մանել վաճառականական ասպարէզ, քան թէ որ և իցէ արհեստ սովորել։ Հայրս վճռեց, յանձնել ինձ մի քաղաքի այդ ժամանակուայ ամենայայտնի վաճառականներ Ագա Գուլամեանցների մանուֆակտուրայի մագազինը դարձակատարի պաշտօնով։

Թէև ես չը գիտէի այն ժամանակ թէ ինչ ասել է վաճառականի դարձակատար և ինչումն է կայանում նրա պարապմունքը, բայց խիստ ուրախացայ հօրս այդ վճռով։ Առաջները, ինձ հետաքրքրում էր մանրավաճառ Թորոսի առած գազանիքը և երկրորդ, ճշմարիտը խոստովանած, երբէք ես հակումն չունէի դէպի որ և իցէ արհեստ։ Ձշմարիտ է, ես այն ժամանակ խիստ տհաս էի, որ կարողանայի ճիշտ գաղափար ունենալ արհեստների նշանակութեան մասին, որովհետև իմ տասնեւօթի տարին դեռ չէր լրացել, սակայն ուղիղ այնքան էլ անպարզացած չէր, որ չը կարողանար դէթ հասարակ համեմատութիւններ անել։ Ես նոյն րոպէին սկսեցի մտքումս համեմատել դարբին Մարութին մանրավաճառ Թորոսի հետ, առանց երևակայելով իմ ապագան իրականացած այդ երկու մարդկանց մէջ։ Մէկը պռանգից իմ աչքի առաջ կանգնած էր առողջ, չալ, ինքը մաքուր, հագուստը նոյնպէս մաքուր և նոր, փողը կուշտ, գրպանը միշտ լիք, յարդանքը և պատիւը հասարակութեան մէջ հա-

ւասարապէս ունէին, որին ամենքը ուշադրութեամբ սկսանչ էին դնում, թէև խոստէր յիմարութիւն, որը հանդիսանում իւր ընկերների մէջ առաջին տեղն էր նստում, ինչպէս և նոյն օրը մեր տանը։ Մինաը—նրա մօտ կոչտ ու կոպիտ, միշտ տխուր, գլխքը նիհար և ժամանակից առաջ պչկած, վիզն և երեսը սևացած, ձեռները քարի նման կոպացած, միշտ կեղտոտ և անվայելուչ հագած մէջ, որը հասարակութեան մէջ, ինչպէս և նոյն օրը մեր տանը, ոչ մի յարգանք կամ համակրութիւն չէր վայելում։ Երբին խոսելու ժամանակ ոչ ոք չէր կամենում լսել, որը շատ անգամ ծիծաղի առարկայ էր դառնում։ Նա գիշեր ու ցերեկ ֆիզիքապէս աշխատում էր տնտեսին կենդանուց առնի, բայց և այնպէս, հազիւ հազ կարողանում իւր ընտանիքը կերակրել—որքան գանգատութիւն սրա և առաջինի մէջ։

Հասկանալի է, որ այդ երկուսից առաջինի կեանքը նախանձելի էր, և եթէ մէկը նոյն րոպէին ինձ հարցնէր. «Խաչի, որը կը կամենաս լինել. մանրավաճառ Թորոս թէ դարբին Մարութ», պարզ է, որ առանց երկար մտածելու կը ցանկանայի լինել Թորոս։ Այս պատճառով ես խիստ ուրախացայ երբ հայրս ինձ գիմեց.

—Խաչի, վաղը ես քեզ կըտանեմ վաճառական Ագա Գուլամեանցների մագազինը։ Այնտեղ դու գործակատար պիտի լինես։ Արի, Թորոս ապայի և միանալի ձեռը համբուրիր, նրանց բարի և անկեղծ խորհրդի փսխարէն։

Ես խանարհութեամբ կատարեցի հօրս կամքը, բոլորի ձեռքը մի առ մի հերթով համբուրելով։ Ես-

ստիանում եմ, երբ հերթը հասաւ դարբին Մա-
ռութին, հպիւ հազ կարողացայ դողալ դղուան-
ջրա, տեսնելով նրա կեղտի ծալքերով ծածկված
ձեռը։ Ես դժուարութեամբ իմ շրթունքների ծայրե-
րը հասցրի նրա կոպիտ մատներին։ Մանրամասն
Թորոսը ճակատս համբուրելով և օրհնելով, ին ան-
դամ ևս կրկնեց իւր խրատը։

—Խնարհ և հլու հպատակ կը լինես Ագա Գու-
լամեանցներին, կը կատարես բոլորը, ինչ-որ կը հրամա-
յեն։ Թեքվիր և ծռվիր ինչպես օձ, բայց պահիր
քեզ խեղճ ինչպես մի ոչխար և դու շուտով կը մտնես
Ագա Գալամեանցների դրպանը։ Ապրես, որդիս ու
զօրանաս։

II.

Աւերակութենից դրեթէ ամբողջ գիշեր շարունակ
անկողնիս մէջ տրտմում էի այս ու այն կողմ, տես-
ծելով երեսակայութեանս մէջ հազար տեսակ պատ-
կերներ իմ ապագայ կեանքից և յօրինելով զանազան
տեսակ ծրագիրներ... Լուսադէմին քունը յաղթեց
ինձ, և ես մի երկու ժամ քնեցի։

Արեգակը բաւական բարձրացել էր, երբ
զարթնեցի։ Շտապով վեր թռայ անկողնից, երեսս
լուացի և սկսեցի շորերս հագնել, որպէս զի պատ-
րաստ լինիմ հօրս առաջին հրաւէրին, որի հետ ես-
այն օրը պիտի գնայի Ագա Գուլամեանցների մատա-
դիները։ Հայրս հէնց առաջին երեկոյ, մեր հիւրերի
ցրուելուց յետոյ, արդէն գնացել էր մատադին և այն-
տեղ իմ մասին խօսել։

Թէ ինչ պայմաններով պիտի ես ծառայէի Ագա
Գուլամեանցների մօտ, որքան ռոճիկ պիտի ստանայի—
այս ինձ չը յայտնեց հայրս։ Միայն, երբ մենք հա-
սանք մատադին, և նա ձեռս բռնելով յանձնեց Մա-
կար ազային, այսքանը լսեցի նրա բերանից իմ մասին.

—Այսուհետև, Մակար ազա, էլ սա իմ որդին
չէ, այլ քոնը, յանձնում եմ նրան ոտով գլխով քեզ։
Վարվիր նրա հետ, ինչպէս դու գիտես, միայն թէ
ժամանակով մարդ դառնայ քո ձեռքում։

—Մարդ դառնալը կախված է իրանից։ Եթէ խո-
նարհ, ղոչաղ, խօսք լսող կը լինի, ի հարկէ, ժամա-
նակով մի կտոր հացի տէր կը դարձնեմ, իսկ եթէ
չէ-մեղքն իւր վզին։ Իմ ձեռքում շատերն են մարդ
դառել և շատերն էլ մարդ դառնալու մտիկ են,
եթէ քո որդին էլ լաւ կը ծառայի ինձ, իմ հրաման-
ները խոնարհութեամբ կը կատարի, կարող է ժամա-
նակով նրանց նման լինել։

Ագա Գուլամեանցը այս խօսքերն արտասանեց
մի այնպիսի անդորր ինքնավստահութեամբ և աներկ-
բայ եղանակով, որ ես ակամայ զգացի, թէ կանգնած
եմ մի գերբնական ուժի առջև, որը, յիրաւի, եթէ
ուզենայ, կարող է ամեն ինչ անել ինձ համար։

Հայրս գլուխ տուեց ու հեռացաւ. ես մնացի
մատադինում։

Մատադին սոված բանը մի լայն և ընդարձակ
խանութ էր չորս մեծ դռներով և մի քանի պատու-
հաններով։ Նա լիքն էր զանազան տեսակի թանգագին
և էժանագին ապրանքներով, սկսած ամենաընտիր ար-
տասահմանեան նուրբ գործուածներից մինչև Ռուսաս-
տանի ամենահասարակ կտորները։ Դեռ մինչև այն օրը

կեանքում տեսած չըլինելով այդչափ հարստութիւն միասեղ, ես բերանս բաց չտարվածի նման, նայում էի այս ու այն կողմ, ինչպէս մի գիւղական մանուկ, որ առաջին անգամ մտնելով քաղաք, աչքերը ճըլղած չըգիտէ բարձրաշէն տներից ո՛ր մէկի վրայ դադարեցնէ իւր ուշադրութիւնը։ Բայց ամենից աւելի դըրաւեցին իմ ուշադրութիւնը գաւազիկայի վրայ շարած ապակեայ պահարաններուն մէջ կանոնաւոր կերպով դասաւորած զանազան տեսակի ոսկեղէնները և թանգագին քարեղէնները, որոնց դրաւիչ փայլը, կարծես, մի տեսակ կախարդական զօրութեամբ կաշկանդում էր իմ ուշքն ու միտքը։ Առաջին անգամ այստեղ դրդըռվեցին իմ մէջ չահասիրական զգացումներ, և ես սկսեցի հոգով նախանձել ազա Գուլամեանցներին, որոնց բաղդը պարգևել էր այդչափ հարստութիւն։ «Ախ, եթէ իմը լինէր այդ հարստութիւնը,— սկսեցի մտածել ինքս ինձ, նայելով ազահ աչքերով թանգագին քրեղէններով լի պահարանների վրայ,— որքա՜ն բաղդաւոր կարող էի լինել ես։ Գոնէ միայն այդքան ոսկեղէնների կէսն ունենայի, ինչեր չէի կարող անել նրանցով։ Ամենից առաջ ձեռք կըբերէի մի քանի ձեռք լաւ հագուստներ թէ ինձ համար և թէ մեր անպիտանների համար։ Կարող էի մինչև անգամ խանութ բաց անել և ինքս էլ վաճառական դառնալ, տարեկան մի անգամ ուրիշների պէս Ռուսաստան գնալ, լաւ-լաւ քաղաքներ տեսնել։

Մինչդեռ այս մտածմունքների մէջ իմ պատանեկական երևակայութեան մէջ կառուցանում էի շքեղ օդային ամրոցներ, յանկարծ մէկը չնչին ապտակ տուեց։ Ցետ նայեցի, տեսնեմ Մակար ազան է։

—Ինչ ես հայվանի պէս ոտիդ ծռել ու նայում, արի այստեղ։

Այս ասելով, նա կոպտութեամբ բռնեց թեւիցս և քաշեց գաւազիկայի ներսի կողմը, ուր շարված էին մի քանի դործածական իրեր մանրուք հագնված։

—Գրիգոր, այս տղան այսօրուանից մեզ է ինձ մօտ ծառայելու։ Լաւ մտիկ արա սրան, տես, մտգաղթնում ինչ նրա անելու գործ կայ, յանձնիր, որ կատարի։ Կարգալ-գրել գիտէ, կարող է հաշիւներ արտագրել, բայց առ այժմ հարկաւոր չէ նրան այսպիսի գործեր յանձնել, թող մի քանի ժամանակ ուրիշ բաներով պարապի, մինչև որ տեսնենք ինչ պատուղ է։

Ազա Գուլամեանցն այս ասում էր գործակատարներից մէկին, մի կարճահասակ 22—24 տարեկան երիտասարդի։

Մագաղինի առջև, մայթի վրայ գործակատարներից մի քանիսը զբաղված էին Ռուսաստանից նոր ստացված ապրանքների հակերը բանալով։ Գրիգորն ինձ պատուիրեց մի ուրիշ փոքրիկ ազային հետ—որն, ինչպէս երևում էր, մագաղինում մանր գործեր էր կատարում—բացված կտորները ներս բերել և հատաքել մագաղինի մի անկիւնում։ Ես մի կողմ ձգեցի դդակս և սկսեցի կատարել այս առաջին պատուէրը։ Որպէս զի իմ ջոչաղութիւնը ցոյց տամ Մակար ազային, որն այդ ժամանակ մտիկ էր անում ապրանքներին, սկսեցի որքան կարող էի եռանդով գործել։ Մինչդեռ ինձ հետ կրող միւս ազան ամեն անգամ վերցնում էր երկու կամ երեք կտոր ապրանք, ես աշխատում էի երկու անգամ նրանից աւելի բարձրացնել և երկու անգամ արագ վազել։ Ես կարծում էի, թէ

չուտով Մակար աղայի բերանից կըլսեմ մի դովա-
ռանական խօսք իմ աշխատասիրութեան մասին, բայց
սխալվեցի։ Մակար-աղան ոչ միայն ինձ չըդովեց,
այլ մինչև անգամ ուշադրութիւն էլ չէր դարձնում
ինձ վրայ։ Ես, մտաբերելով մանրավաճառ Թորոսի
խրատը, թէ «համբերիր», չը վհատվեցի և շարունակեցի
աւելի ու աւելի եռանդով գործել։

Կէսօրուայ ժամանակ էր։ Չը նայելով որ եղանակը
գարնանային էր, շոգն ուղղակի անտանելի էր։ Բլը-
տինքը, շատ վազվզելուց, սկսեց երեսովս ապիւրի
նման թափվել։ Ձեռներս, որ մինչև այն օրը սովո-
րած չէին երկար աշխատութեան, շատ ապրանք կրե-
լուց բոլորովին թուլացան, ոտներս շատ գնալ ու գա-
լուց յոգնեցին և ծալծլվում էին։ Բայց ես ուշադրու-
թիւն չէի դարձնում և որքան կարելի էր աշխա-
տում էի մինչև վերջը քաջութեամբ կատարել ինձ
յանձնված գործը։ Առաջին օրն էր, հարկաւոր էր աշ-
խատասիրութիւն ցոյց տալ։

Վերջապէս, ապրանքները վերջացան։ Ես Գրի-
գորի պատուէրով կանացի զգուշութեամբ հաւաքե-
լով հակերից մնացած թոկերի կտորտանքը, փսխաթ-
ները մի կողմ դնելով և աւելով մագազինի առաջը,
ձեռներս ու երեսս լուացի ու իմ տեղը կանդնեցի։

Մագազինում գործակատարներից իւրաքանչիւրն
ունէր իւր որոշ տեղը։ Գրիգորը, ինչպէս աւագ
գործակատար, բռնած ունէր ամենատաքին տե-
ղը, այն է՝ դրամարկղի մօտ։ Նա ազա Գուլա-
մեանցների խանութի գանձապահն էր։ Նա էր ստա-
նում փողը մուշտարիներից և նշանակում հաշուէմա-
տեաններում, նոյնպէս նրա ձեռքին էր մագազինի

բոլոր ծախքը։ Գրիգորից հետու աստիճանաբար կանգ-
նած էին մնացեալ գործակատարները թուով չորս հոգի.
մէկը ոսկեղէնների մօտ, միւսը մի քանի քայլ հետու
արանից, մանուֆակտուրայի ապրանքների թանգագին
կտորների մօտ, երրորդն ու չորրորդը համեմատաբար
էժանագին ապրանքների կողմ։ Ազա Մակարն ինձ
հրամայեց տեղ բռնել արանց բոլորի վերջում և պա-
տուէրեց ամենաավերջին գործակատարին, որ ինձ սո-
վորեցնէ առուտուրի եղանակը, այսինքն մուշտարինե-
րի հետ խօսելու և վարվելու ձևը, չիթ կամ ուրիշ
կտորներ չափելու արուեստը և այլն։

Ինչ վերաբերվում է այն պատանուն, որն ինձ
հետ միասին դրսից ներս ապրանք էր կրում, կանգնած էր
դաստօյկայից դուրս դէպի դրան կողմը։ «Ուրեմն մի
բան տեսել է իմ մէջ Մակար-աղան, որ հէնց առա-
ջին օրն ինձ իրաւունք է տալիս մտնել դաստօկայի
ներսը»,—մտածեցի ես։ Ես նկատեցի դրան մօտ կանգ-
նող պատանու դէմքի վրայ դժգոհութեան ժպիտ և
իսկոյն հասկացայ, որ նա ինձ նախանձում է։

Իրիկնադէմին ազա Գուլամեանցը, վերադառնա-
լով շուկայից, հրամայեց մագազինը կղպել։ Գործա-
կատարները կատուի արագութեամբ կատարեցին նրա
հրամանը, և մի րոպէում բոլորս դրսում շարվեցինք
նրա շուրջը։ Ես ամեն կերպ աշխատում էի ազա
Գուլամեանցի աչքին երևալ, նրա ուշադրութիւնն ինձ
վրայ դարձնել։ Մի քանի պատուէրներ տալով, նա ար-
ձակեց բոլորին, իսկ ինձ հրամայեց իւր հետ տուն գնալ։

Օրը դեռ այնքան չէր մթնել։ Յերեկուայ շոգից
յետոյ երեկոյեան զովարար օդը թափանցելով իմ թո-
քերի մէջ, կարծես, մի տեսակ դուրեկան և թմրե-

ցուցիչ հեղուկ էր տարածում յոդնածուխիւնից թունաւորած նեարդերիս մէջ։ Ես դնում էի ապա Գուլամեանցի եանից, ի նշան խնամարհութեան, մի քանի քայլ հեռու պահելով ինձ նրանից։ Ոտներս հազիւ հազ էի առաջ շարժում ամբողջ օրն ոտքի վրայ անցկացնելուց յետոյ։ Ժամանակ առ ժամանակ ապա Գուլամեանցը իւր դլուխը բարձրացնելով և երեսը շուռ տալով, յետ էր մոխ տալիս։ Մեր անցած փողոցը քաղաքի գլխաւոր շուկան էր, որին տեղացիները անուանում էին Գուրչի-բաղար։ Այստեղ սիրում էր տասախկ ազմուկ և դղրդոց։ Մրգավաճառ Թուրք խանութպաններըը, որ անկանոն կերպով պաշարել էին խանութների առաջը զանազան տեսակ մրգեղէններով, իրանց երկարաձիգ արխալուղների փէշերը դէպի յետ ծալած, թևերը հաւաքած մինչև արմունկները, կիսաձայնով դոռում ու բղաւում էին, հրաւիրելով անցորդներին էժան դներով դնել թարմ մրգեղէնները։

—Եկէք, ով անցնող ազաներ, էժան եմ ծախում Ախտուի թարմ սալորը, գրվանքան երկու կոպէկ, գրվանքան երկու կոպէկ,—լսում էր մի կողմից։

—Այստեղ եկէք, ինձ մօտ վաղէք, ով էժանագին ապրանք սիրող ազքատներ, հասած թուզ, հասած թուզ, հինգ գրվանքան երկու կոպէկով եմ ծախում, եկէք, թառաչ արէք, ով խելք ունեցող ազքատներ,—գոռում էր մեւսը։

Թուզ ծախողի գոռոցն անհեռանալի չմնաց։ Ես նկատեցի, որ փայտի վրայ յենվելով մօտենում էր նրան մի միջահասակ մարդ, որի բոլորովին ճերմակած մազերն և դանդաղ քայլափոխութիւնը հասատատում էին, որ ահա այսօր-վաղը նա կը-

րեղանա։ Ծերունու երկայն և դէպի ցած բուսած բեղերը, խառնվելով բամբակագոյն մորուքի հետ, բոլորովին ծածկել էին նրա առաջնագուրկ բերանը։ Նրա դէմքը գունատ էր ինչպէս անշունչ դիակի կերպարանք, աչքերը պչկած էին և խորը փոսերի մէջ թաղված։ Ես նկատեցի այդ մարդու կերպարանքի վրայ մի տեսակ մռայլ ժպիտ. մի ժպիտ, որ բացի ծերունական դառն կեանքի ծանրութենից արտայայտում էր և մի ուրիշ անբացատրելի վիշտ։ Ես վերջերում շատ անգամ եմ առիթ ունեցել այդ տեսակ ժպիտներ նկատել միայն այն մարդկանց դէմքերի վրայ, որոնք իրանց կրծքի տակ թագցրած ունեին անդօր օխ կեանքի դէմ։ Որոնք տարիների ընթացքում տանջվում, հալվում են այդ ցաւերի ճնշման ներքոյ, չունենալով հնար դէթ երբեմն թեթևացնել իրանց կուրծքը, դուրս թափելով նրանց՝ լեզուի արտայայտութեամբ։

Ծերունին գալիս էր մեր աջ կողմից և, որպէս զի մրգավաճառ թուրքին մօտենար, հարկադրված էր անցնել ուղիղ ապա Գուլամեանցի առջևով, որը գնում էր, ինչպէս ասացի, ինձանից մի քանի քայլ առաջ։ Ծերունին մօտեցաւ։ Ապա Գուլամեանցը, նկատելով նրան, երեսը շուռ տուեց հակառակ կողմ և ճանապարհից քիչ շեղվեց, կարծես, կամենալով որ ծերունին իրան չը նկատէ։ Ես նրա դէմքի վրայ, երեսը շուռ տալու ժամանակ, նկատեցի մի անախորժ ժպիտ։ Պարզ էր, որ նա խոյս էր տալիս ծերունուց, որն այդ ժամանակ մի խորը, թափանցող հայեացք ձգեց նրա վրայ։

Մենք մի քանի վայրկեանում առաջ անցանք, իսկ ծերունին յետ մնալով շարունակում էր մրգավա-

ճառի առջև կանգնած նայել մեր եռևից, երբեմն շարժելով իր դողդոջուն գլուխն անբաւական ձևով։ Մենք հեռացանք. Ծերունին իր հնամաշ արխալուղի գրպանից հանեց մի մեծ թաշկինակ և սիրեց դեռ նի վրայ։ Մրգավաճառը, կշռի թևը լեցնելով թուղթով, կշռեց և շուռ տուեց թաշկինակի մէջ։

Ինձ սկսեց ամաչայ հետաքրքրել Ծերունու ապա Գուլամեանցի վրայ ձգած խորհրդաւոր հայեացքը։ Ես մոտածեցի, որ նրանց մէջ անշուշտ մի որ և իցէ գաղտնիք կայ։

Փողոցի ծայրում գտնւում էր հայոց եկեղեցին։ Ես առաջուց գիտէի, որ ապա Գուլամեանցը խիստ աստուածապաշտ և եկեղեցասէր քրիստոնեայ է համարւում մեր քաղաքում և, լսելով զանգահարութեան ձայնը, գիտէի, որ անշուշտ կը մտնի եկեղեցի։

Եկեղեցու դրանը մենք հանդիպեցինք Տէր-Վահակին, որը, շրջապատված մի քանի տիրացուներով ու բարեպաշտ Ծերունիներով, ինչ-որ բանի մասին տագնապած խօսում էր։

—Օրհնեա տէր,—ասաց Գուլամեանցը, ձեռները պարկական ձևով դնելով կրծքին։

—Աստուած օրհնի, ապա Մակար,—պատասխանեց քահանան, խաղացնելով իր դէմքի վրայ մի կեղծ ժպիտ և մօտենալով մեզ։

—Հըմ, չուտ կօրհնես ժամը, թէ չէ։

—Հէնց ձեր հրամանոցն էի սպասում, ապա Մակար, այս րոպէիս կըսկսեմ։ Ա՛յ տղայ, Խաչի, այդ ինչ է, չըլինի թէ Մակար ապայի մօտ ես մտել ծառայելու,—հարցրեց ինձ Տէր-Վահակը։

—Այո՛,—պատասխանեցի ես։

—Շատ լաւ ես արել, խոնարհ և հնազանդ եղիր, լաւ ծառայիր։ Մակար ապան շատ ազնիւ ապա է, նա կարող է քեզ ժամանակով մարդ դարձնել։ Վատ տղայ չէ Խաչին,—դարձաւ տէրտէրը Մակար ապային,—զօրաղ ու խելօք է, միայն երբեմն ականջները հարկաւորէ քաշել, որ մեծերի խրատը չմոռանայ։

—Այդ թողնենք, Տէր-Հայր, ես քեզ հետ հարկաւոր գործ ունիմ, նրա մասին խօսենք,—դարձաւ յանկարծ ապան Տէր-Վահակին ու, թևից բռնելով, տարեց նրան մի կողմ։

Ես քաշվեցի մի կողմ. նրանք սկսեցին խօսել։

Երբեմն նրանց խօսակցութենից իմ ականջին հասնում էին հատուկտուր դարձուածներ կամ ընդմիջեալ խօսքեր, օրինակ, «աղջիկը չի ուզում, թարսվել է» կամ «քսան հատ կանաչ կարմիրանոց» և այլն։

Վերջապէս, նրանք աւարտեցին խօսակցութիւնը, և մի քանի րոպէից յետոյ ժամասացութիւնն արդէն սկսված էր։ Ապա Գուլամեանցն ամենից առաջ սեղանի հանդէպ կանգնած ջերմեռանդութեամբ ծունր էր դնում ու աղօթում։ Ես ևս սկսեցի աղօթել, նախ և առաջ կրկնելով մի անգամ աէրունական աղօթքը, «Հայր մերը», նոյն եղանակով, ինչպէս ուսումնարանում սովորեցրել էր ինձ Տէր-Վահակը։

Ճշմարիտն ասած, ես չը բաւականացայ միայն այդ պաշտօնական «Հայր մերով». ինձ թուում էր, որ նրանով Աստուածուց շատ քիչ բան է խնդրվում առհասարակ։ Ես կարծում էի, եթէ բոլորն, ինչ-որ ասված է այս աղօթքի մէջ, Աստուած կատարի—ես մի շատ էլ մեծ մարդ չեմ դառնալ, իսկ ես ուզում էի, ինչպէս և այժմ էլ ուզում եմ, մեծ մարդ դառնալ։ Օրինակ, նրա մէջ աս-

ված է. «մեր ամեն օրուայ հացը տուր մեզ այսօր»։ Մթթէ այս մի մեծ բան է, մտածում էի ես, եթէ Աստուած ամեն օր կերակրէ ինձ այնպէս, ինչպէս մինչև այսօր է կերակրել։ Չէ, հարկաւոր է ուրիշ բաներ էլ խնդրել Աստծուց. մի և նոյնն է, խնդրում եմ, ասելի լաւն է շատ բաներ կըխնդրեմ, կը կատարվի խնդիրս—լաւ, չի կատարվի—խօմ ինձանից մի բան չի պակսիլ։» Եւ ես սկսեցի հազար տեսակ բաներ մուրալ Աստուծուց, ձեռներս պարզելով և աչքերս համեստութեամբ բարձրացնելով դէպի վեր։

Առաջին իմ բաղձանքն էր, որ Աստուած ինձ այնքան չնորհ տայ, որ ես ազա Մակարի աչքում սիրելի դառնամ, օրէցօր նրա մօտ առաջանամ, հասնեմ Գրիգորի աստիճանին, այսինքն մինչև մադադինի դրամարկղը։ Այնուհետև, աւելի ու աւելի առաջանալով, վերջապէս, ինքս էլ մի օր ազա Գուլամեանց դառնամ, նրա նման հարստութիւն դիզեմ, փառաւոր տներ շինել տամ, կառքեր, ծառաներ, դոլծակատարներ պահեմ և, վերջապէս, մեր քաղաքի մէջ ազա Գուլամեանցի պէս ամենքի համար նախանձի առարկայ լինեմ։ Այս տեսակ և հազար ու մի ուրիշ բաներ էի խնդրում Աստուծուց, վերջումն էլ խոստանում էի, որ եկեղեցի չինել կըտամ, եթէ նա իմ աղօթքը կատարի, երբ պատահմամբ, երեսս դէպի աջ շուռ տալով, տեսնեմ մի ծերուկի եկեղեցու սանդխատով դժուարութեամբ ցած է իջնում։ Ես իսկոյն ճանաչեցի—դա այն ծերուկին էր, որին պատահել էինք մի փոքր առաջ շուպայում։ Իջնելով եկեղեցու յատակը, ծերուկին երեք անգամ համբուրեց դրան մօտի առաջին սիւնը և, զգուշութեամբ վերյետ դնելով պա-

տի ժօտ, բուխարայի մօրթուց կարած երկայն ու սրածայր դդակը ձեռքին, գնաց եկեղեցու մէջտեղը։ Ես մոտացայ իմ աղօթքն ևնայում էի ծերուկուն։ Մի բան, կարծես, քաշում էր իմ հայեացքը դէպի նա։

Վաղեմի տաճարի հնամաշ և մրոտած սիւները, վերևից դրկելով իրարու, տարածել էին եկեղեցու պատուռոտված վսխաթներով ծածկված խոնաւ յատակի վրայ իրանց մութ շուքը։ Իսկ պատուհաններից դուրկ, մաշված պատերը մեայլ և տխուր կերպարանք էին ստացել։ Նայելով ծերուկու թառամած ու գունատ երեսին և կնճռոտված ճակատին, ինձ թուում էր, որ նրա հոգևկան տրամադրութիւնը բոլորովին համապատասխանում էր եկեղեցու մեայլ տեսքին։ Մօտենալով մէջտեղի սիւներից մէկին, նա դադրեց, կարծես անզգայաբար, ձգեց յատակի վրայ և երկու դողդոջուն ձեռները բարձրացնելով դէպի վեր, սկսեց աղօթել։ Նա կանգնած էր ազա Գուլամեանցից ոչ այնքան հեռու, եսևի կողմում, այնպէս որ, եթէ ազան երեսը յետ դարձնէր, հայեացքը պիտի ընկնէր ուղղակի ծերուկու դէմքին։ Մի քանի րոպէ ծերուկին, երեսը դէպի վեր բարձրացրած, աղօթում էր անշարժ արձանի նման, ժամանակ—ժամանակ իւր ցամաքած շրթունքները դողդողացնելով։ Ես ապուշի նման նայում էի նրա երեսին, երբեմն երեսս անգիտակցաբար դարձնելով և՛ դէպի ազա Գուլամեանցը։ Անցան առաջին րոպէները. ծերուկին, խոնարհեցնելով գլուխը, մի քանի անգամ խաչակնքեց երեսը և սկսեց ծունր դնել։ Այդ ժամանակ ես մի բան նկատեցի։ Ամեն անգամ երբ ծերուկին եկեղեցու յատակը համբուրելուց յետոյ բարձրանում էր, մի տեսակ

սուր և սպառնալի հայեացք էր ձգում սպա Գուլամեանցի կողմը և երկու ձեռներով իւր նիհար կրծքին խփում։ Թէ ինչ էր արտայայտում Ծերունու այդ շարժմունքը—ինձ համար անհասկանալի էր, միայն պարզ էր, որ նրա սրտի մէջ խառն էր և՛ սպա Գուլամեանցի անունը։

Ժամասացութիւնը վերջացաւ։ Տէր-Վահակը, սաւարտելով վերջին «երթայք խաղաղութեամբ և Տէր հղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեան ամէնը», սուրբ աւետարանը պահեց, որ բարեպաշտ ժողովուրդը համբուրէ։ Ես վերցրի գդակս ու բանալիները և եկեղեցուց դուրս գալով, դրանը սպասում էի սպա Գուլամեանցին։

Մի քանի րոպէից յետոյ մենք «խաղաղութեամբ և Տէրը մեզ հետ» ճանապարհեցինք տուն։ Ծերունին ինձ խիստ հետաքրքրում էր, իմ միտքն այնքան զբաղված էր նրանով, որ բոլորովին չիմացայ թէ ինչպէս հասանք տուն։

III

Փառաւոր և չքեղ էր այն տունը, ուր բնակվում էին Գուլամեանցները։ Բարձր, երեքյարկանի, սպիտակ քարից կառուցած շինութեան առջև բացվում էր մի ընդարձակ այգի բազմատեսակ մրգատու ծառերով և գեղեցիկ ծառուղիներով, որոնք աւարտվում էին մի մաքուր և լայն հրապարակի շուրջը։ Այս հրապարակի վրայ շինված էր մի մեծ աւազան, որի մէջտեղում դանուող բարձր շատրուանից անդադար բարձրանում էին մաքուր ջրի պարզ և փայլուն շերտեր։ Ես առա-

ջին անգամ էի տեսնում մի այդպիսի զմայլեցուցիչ տեսարան և այս պատճառով մինչև տուն հասնելը մի վոքը կանգ առայ և հիացած նայում էի։

Նախանձի ոգին դարձեալ դրդուվեց իմ մէջ։ «Երանի քեզ, սպա Գուլամեանց,—ասացի մտքումս,—որ կեանքդ անց ես կացնում այդ չքեղ և զուարճալի տեսարաններով շրջապատված տան մէջ։ Մարդիկ ասում են թէ դժոխք և արքայութիւն կան միւս կեանքում, բայց պղծմնելիները կոյր են, նոյն դժոխքն ու արքայութիւնը չեն կարողանում տեսնել հէնց այս աշխարհում։ Ահա դրախտը, ուր ապրում են սպա Գուլամեանցները։ Մի տեղ խոնաւ բնակարան, տկլոր ընտանիք, մերկ զաւակներ, վիշտ, տանջանք, դառնութիւն, մի կոտր հացի համար գիշեր ցերեկ պատերազմ հազար տեսակ խոչնդոտների հետ, քաղցածութիւն, սով, հիւանդութիւն և կեղտոտութիւն։ Միւս տեղ չքեղ տներ, հարուստ այգի, կուշտ և առողջ ընտանիք, ուրախութիւն, հարստութիւն, զուարճութիւն, անհոգ կեանք և շատ ապրուստ—ահա ինչտեղ է դժոխն ու արքայութիւնը։ Այս աշխարհում ով որ փող ունէ, նա արքայութեան մէջն է, ով որ փող չունէ, նա դժոխքի մէջ է։ Փողը գերբնական ոյժ է, նա ամեն բան տալիս է մարդուն, ուրեմն հարկաւոր է ամեն կերպ աշխատել այս ոյժը ձեռք բերելու համար»...

Մինչդեռ ես դարձեալ իմ պատանեկական երեւակայութեան մէջ թաղված զուարճանում էի դրսի տեսարաններով, յանկարծ ականջիս հասաւ սպա Գուլամեանցի հրամայողական ձայնը.

—Խաչի, բարձրացիր վերև։

Ես բարձրացայ վերև։ Սպա Գուլամեանցը ծառա-

ին հրամայեց ինձ թէյ խմեցնել։

Թէյ խմելուց յետոյ ինձ ապա Գուլամեանցը կանչեց իւր առանձնասենեակը։ Ձիչդ չեմ կարողանում մտաբերել, թէ ինչ էի ղգում այն րոպէին, երբ ապա Գուլամեանցի առանձնասենեակը հասնելու հաւար անցնում էի նրա ընդարձակ և զարդարուն դահլիճով։ Բայց շատ լաւ յիշում եմ, որ այդ ժամանակ նախանձը քանի գնում աւելի ու աւելի զարդանում էր իմ մէջ, ամէն մի քայլափոխում հանդիպելով այնպիսի առարկաների, որոնք վկայում էին ապա Գուլամեանցների հարստութիւնը և պատկերացնում ինձ նրա ապրուստի չքեղութիւնը։

—Խալի,—դարձաւ ինձ Մակար ապան, դժուարութեամբ բարձրացնելով իւր ծանր ու հաստլիկ մարմինը կարմիր մետաքսով ծածկված բազկաթոռից և սկսելով մանգալ սենեակում,—հայրդ այսօրուանից քեզ յանձնել է ինձ դործակատար։ Ես, մանկութիւնից ճանաչելով քո հօրը, չըմերժեցի նրա ապաչանքը և համաձայնեցի քեզ ընդունել ինձ մօտ, չընայելով որ ես դործակատարներ ունիմ և աւելորդ մարդ ինձ հարկաւոր չէր։ Հայրդ ինձ հետ պայմանաւորվեց և ես ընդունեցի, որ դու ինձ մօտ մնաս ոչ թէ մի կամ մի քանի տարի ժամանակով, այլ մշտական, որքան որ մենք իրարու հարկաւոր կըլինինք։ Ուրեմն, այսօրուանից սսով—դլխով ինձ ես պատկանում և իմացիր, որ պարտաւոր ես այսօրուանից մոռանալ քո ծնողներին և րոլորովին հպատակվել ինձ և իմ կամքին։ Ներքինիները մի անգամ իրաւունք եմ տալիս քեզ տեսնել ծնողներիդ, այն էլ կիրակի օրերը, երբ դործ չես ունենալ. կը գնաս կարճ ժամանակով և էլի չուտով

կը վերադառնաս։ Մի խօսքով, այսօրուանից դու կատարելապէս ինձ ես պատկանում հոգով և մարմնով։ Ես դատնում եմ քո տէրը, ծնողը, դլխաւորը, ապան և ամէն ինչ։ Դու պիտի կատարես այն, ինչ-որ ես կը հրամայեմ և ինչպէս ես կըկարդադրեմ։ Եթէ տեմ մտածողը սև է—չը համարձակվես հակառակել թէ նա պիտակ է։ Եթէ տեսնես—պիտի նատես, տեմ վեր կաց—վեր կենաս, կեր—ուտես, ծիծաղիր—ծիծաղես, լացիր—լաց լինես։ Ինչ երկարացնեմ, եթէ կրակի մէջ էլ ուղարկեմ, պիտի գնաս։—Լսում ես

—Լսում եմ, ապա։

—Զդուշացնում եմ քեզ, եթէ այդ բոլորը կը կատարես, նոնարհ, խօսք լսող, աշխոյժ, գործ կատարող և հաւատարիմ կը լինես—ես շուտով քեզ կաուղարկեմ, և ժամանակով մի կտոր հացի տէր կը լինես, իսկ եթէ ոչ—այն ժամանակ մեղքը քո վրին, քեզ կարձակեմ դադարկ ձեռքով։ Գլխաւոր պարտքդ պիտի լինի ամէն ժամ ու րոպէ իմ չահերն աչքի առջև ունենալ և աշխատել նրանց միշտ պաշտպանել։ Ես առևտրական մարդ եմ, դատնի գործեր ունիմ, դու պարտաւոր ես նրանց մասին ոչ ոքի նոյն իսկ քո ծնողների մօտ չը խօսել։ Լեզուդ թող համր լինի ուրիշների մօտ իմ գործերի վերաբերութեամբ, իսկ ուրիշների գործերի մասին ինձ մօտ ապատ և արձակ։ Եթէ մի տեղ կամ մի մարդուց իմ մասին լաւ կամ վատ խօսք լսես, պարտաւոր ես իսկոյն գալ և ինձ յայտնել։

—Ես կաշխատեմ բոլոր ձեր պատուէրները կատարել ամենայն զգուշութեամբ,—ասացի ես, խոնարհութեամբ գլուխ տալով։

—Եթէ կը կատարես—քեզ համար լաւ կըլինի, եթէ ոչ—ինձ շատ էլ վնաս տալ չես կարող։ Դէհ, գնա և խօսքերս ականջումդ լաւ պահիր։ Իմացիր, որ ես բարկացող մարդ եմ և սովորութիւն չունիմ սաստներս երկրորդ անգամ կրկնել։ Եթէ մի անգամ սըխալվեցիր կամ իմ տուած պատուէրները մոռացար—այն ժամանակ վայ քեզ։

Կրկին անգամ դլուխ տուեցի և հեռացայ։

Այդ երեկոյ ես անցկացրի Ծառանների հետ, որոնցից, շնորհիւ իմ հետաքրքիր բնաւորութեան, տեղեկացայ ազա Գուլամեանցների ընտանեկան և առևտրական մի քանի գործերին։

Ազա Գուլամեանցները երեք եղբայրներ էին։ Ամենամեծը նրանցից ազա Սաեփանն էր, որ տարուայ երեթէ մեծ մասը անց էր կացնում Շ... գաւառի գանազան գիւղերում։ Ազա Գուլամեանցների վաճառականութեան գլխաւոր տարրը կազմում էր գինու առուտուրը։ Ամեն տարի նրանք ուղարկում էին Ռուսաստանի գանազան կենտրոնական քաղաքները մեծ քանակութեամբ գինի։ Երկակայ գլխաւոր գիւղերի այգեգործութիւնը մեծ կապ ունէր նրանց հետ։ Զրկուր խաղողի այդի ունեցող մի գիւղացի, որն այսպէս թէ այնպէս կապված չըլինէր Գուլամեանց առևտրական տան հետ։ Ամբողջ Շ... գաւառի գինու արտահանութիւնը չնչին բացառութեամբ գտնվում էր նրանց ձեռքում և, ինչպէս պատմում էին, նրանց հարստութեան մեծ մասը դոյացել էր գինու առուտրից։ Օգտվելով այն հանգամանքով, որ գիւղացիները առ հասարակ գարնան ժամանակը փոքի մեծ պակասութիւն են զգում և ունենալով միշտ պատրաստի

դրամագլուխ,—ազա Գուլամեանցները ամեն տարուայ այդ ժամանակին գիւղացիներին կանխիկ վճարում էին ահագին տոկոսներով փոխը և պարտաւորեցնում նրանց դրաւոր կապակցութիւններով, որ նրանք աշնանն այդիներից դոյացած խաղողը կամ պատրաստի գինիները ծախեն իրանց վրայ։ Որովհետև չը կար մի ուրիշ դրամատէր, որ կարողանար մրցել ազա Գուլամեանցների հետ, այս պատճառով վերջիններս գիւղացիների հետ վարվում էին այնպէս, ինչպէս կամենում էին։

Նրանք նաև փոխ տալու ժամանակ դրամագլխի վրայ բարդում էին պատկառելի տոկոս, օրինակ, 40—50, շատ անգամ 60—70, ազա գինու կամ խաղողի գինը նշանակում էին իրանց ցանկացածին համեմատ։ Գիւղացին չէր կարող չընդառաջելով ազա Գուլամեանցների առաջարկած պայմաններին հետ, որքան էլ նրանք գժուար իրագործելի և ծանր լինէին։ Գիւղացին ուրիշ ելք չունէր։ Նա կամ պիտի իւր այգու բերքը ծախէր ազա Գուլամեանցներին կամ թէ չէ՝ ինքը պիտի վաճառահանէր Ռուսաստան։ Վերջինն էլի գժուար իրագործելի էր քան թէ ազա Գուլամեանցների ճնշող պայմաններին ենթարկվելը։ Գինին Ռուսաստան վաճառահանելու համար հարկաւոր էր նախ ունենալ տակառներ գնելու, ճանապարհածախք վճարելու և ուրիշ գանազան պատրաստութիւնների համար ազատ դրամ և երկրորդ, գէթ մի երկու ամիս ազատ ժամանակ Ռուսաստան գնալ գալու համար։ Այս երկուսից ոչ մէկը չունէր գիւղացին. ճարահատեալ ստիպված էր ազա Գուլամեանցների հարստահարող ճանկերում ճնշված մնալ տարին տասներկու ամիս։ Կար մի ուրիշ ճանապարհ գիւղացիների համար, որը կարող

էր նրանց ազատ պահել այդ ճանկերից։ Բայց նրանք այնքան ապէս էին, որ այդ երբէ մասին մտածել անգամ չը պիտէին։ Գիւղացիները կարող էին, հաւաքվելով միասին, ընդհանուր ուժով իրարու օգնել և իրանց դիմիները վաճառականել առանց ազա Գուլամեանցների միջնորդութեան։ Սակայն եթէ գիւղացիներն այդ հասկանային էլ, դարձեալ ընդունակ չէին կատարելու, այն փոխադարձ անհատատարմութեան շնորհով, որով յայտնի են առհասարակ գիւղացիները։

Ազա Գուլամեանցների երկրորդ եղբայրն—ազա Աբրահամը մշտապէս իւր ընտանիքով ապրում էր Ռուսաստանում և շատ հազիւ էր պատահում, որ վերադառնար իւր հայրենիքը, այն էլ շատ կարճ ժամանակով։ Ես դեռևէ մանկութենից սկսած երբէք չէի տեսել նրան։ Ինչպէս պատմում էին, ազա Գուլամեանցների մէջ նա ամենախելօքն և ամենաճարպիկն էր առուտրի մէջ և իբր թէ նրա շնորհով էր դիզվել նրանց հարստութիւնը։

Իսկ ամենից կրտսերն էր ազա Մակարը։ Մանան ինձ պատմեց, թէ ազա Մակարը մի ինչ-որ հարստանիքում տեսել է մի խիստ գեղեցիկ օրիորդ և շատ հաւանել։ Այն օրուանից նա աշխատում է այդ օրիորդի հետ նշանվել։ Օրիորդի ծնողները թէև շատ ազգատ են, բայց Մակար ազան հաւանել է նրան այնչափ, որ այդ պակասութիւնը նրա աչքին բոլորովին չի երևում։ Սակայն, չնայելով իւր դիրքին, ազա Մակարը չի կարողանում նպատակին հասնել, որովհետև օրիորդը, սիրահարված լինելով քաղաքում մի ազգի վրայ, չի ուզում ուրիշ մարդու հետ պսակվել։ Ծնողները առաջին անգամ յայտնակվելով ազա Մակարի առաջարկութեան

նով, շատ են աշխատում համոզել աղջկան, բայց չենյաջողում։ Ամեն անգամ, երբ օրիորդի մօտ Մակար ազգի մասին խօսում են, նա երեսը ծածկում է ու լաց լինում, ասելով, թէ շուտով կըցանկանայ մեռնել, քան թէ, թողնելով իւր սիրած ազգին, պսակվել Մակար ազգի հետ։ Հայրը հայհոյում է, ծեծում է, քաշցած է պահում օրերով խեղճ աղջկան, բայց ոչինչ չի օգնում։ Նա յամառում է իւր ասածի վրայ և մինչև անգամ մի օր փորձ է արել իրան թունաւորելու։ Այդ օրից մայրը, տեսնելով որ հնար չըկայ աղջկան համոզելու, անցել է նրա կողմ և, խնայելով իւր միակ զաւակին, նոյնպէս չի համաձայնվում տալ նրան ազա Մակարին։ Այս հանգամանքն, իրրև արտաքոյ կարգի երևոյթ, շ... քաղաքի մէջ մեծ ազմուկ է բարձրացրել և շատերն սկսել են ծիծաղել ազա Մակարի վրայ, որ նա, իւր հարստութեամբ լինելով քաղաքի առաջին մարդկանցից մէկը, չի կարողանում մի ապրատ ընտանիքից մի աղջիկ ուզել։ Մակար ազան իւր անասնական ինքնասիրութիւնը վիրաւորված զգալով, երդվել է անպատճառ պսակվել այդ աղջկայ հետ, որ այսպիսով դարձրի քաղաքի մէջ ծիծաղի առարկայ լինելուց։ Նա նպատակին հասնելու համար գործ է դնում ամեն տեսակի ներելի և անները լի միջոցներ։ Մեծ դեր է կատարում այդ գործում Տէր-Վահակը, որի ձեռքից շատ էին անցել մեր քաղաքում այդպիսի գործեր։ Տէր-Վահակն ամեն մի անհնարին բան իւր խորամանկութեամբ հնարաւոր է դարձնում, չնայելով, որ իւր բռնած գործերի համար տարեներկու անգամ տեղային առաջնորդը նրան փիլոնից զրկում է։ Սակայն այս անգամ նա եր-

կիսով չափ է և գործում է շատ համարձակ։

Ես այս բոլոր մանրամասնութիւնները, իմ չափազանց հետաքրքիր բնաւորութեան շնորհիվ, անցկացայ նոյն իսկ հէնց առաջին դիշերը Գալուստ անունով ծառայից, որը, չդիտեմ ինչ էր տեսել ինձանում, հէնց առաջին օրից սկսց խիստ հետաոտութեամբ վերաբերվել դէպի ինձ։ Օգտվելով այդ հետաոտութիւնից, հետաքրքրութեան բաւականութիւն տալու համար, ես փորձեցի հարց ու փորձ անել շուգայում և յետոյ եկեղեցում մեզ պատահած ծերունու մասին։ Բայց հէնց իմ առաջին հարցը ծառային զարմացրեց։ Նա ինձ վրայ ձգեց մի կասկածաւոր հայեացք։ Իսկոյն հասկացայ, թէ այստեղ անշուշտ մի նշանաւոր գաղանիք կայ, որ շատախօս Գալուստն անգամ լռութիւն է ուզում պահել։ Ես առ այժմ բարւոք համարեցի լռել...

IV

Առաւօտը դէռ ամենքը քնած էին, երբ ես զարթեցի, որ պատրաստվում մագազին գնալու։ Գլխաւոր դործակատար Գրիգորը, սովորականին համեմատ, եկել էր մագազինի բանալիները տալ Մակարից վերցնելու։ Ինչպէս գործնական մարդ, տալ Մակարը շատ վաղ էր զարթնում առաւօտները։ Նա բանալիները տուեց Գրիգորին, իսկ ինձ հրամայեց թէյ խմել և պատրաստել իր հրամանին։

Որովհետև տալ Գալստեանցների ընտանիքը, բացի մի քանի արտաքին աննշան փոփոխութիւններից, դէռ պարում էր հին, ասիական եղանակով, այս պատճառով կանայք միշտ զբաղված էին տղամարդկանցից։ Պատճառը Մակար ագան էր, որ այս կողմից շատ խիստ էր վարվում և հրամայել էր կանանց օտար տղամարդկանց չերևալ։ Նոյն իսկ իրանից, տալ Մակարից, զբաղված էին կանայք։ Ծառան պատմում էր, որ մինչև այն օրն տալ Մակարը մի անգամ կարդին չի տեսել իւր եղբօր—տալ Տաեփանի—կնոջ կերպարանքը, չը նայելով որ մի քանի տասնեակ տարիներ է, որ մի տան մէջ են ապրում։

Տալ Տաեփանն ունէր երկու աղջիկ—մէկը մօտաւորապէս 12, միւսը 14 տարեկան։ Միայն սրանք չէին զբաղված ոչ դրից, հետևաբար և՛ ինձանից։ Թամարը—մեծ քոյրը—թէև այնքան դեղեցիկ չէր, որ տեսնողին հէնց առաջին անգամից գրաւէր, բայց և այնքան էլ տգեղ չէր, որի վրայ անտարբեր աչքով մարիկ տալ լինէր։ Միւս քոյրը—Թագուհին—թէև իւր դէմքի գծագրութեամբ շատ չէր զանազանվում Թամարից, բայց նրանից աւելի գրաւիչ էր, ծառայ Գալստեան կարծիքով։ Սակայն այս—ծառայի կարծիքն էր, իսկ եթէ ինձ հարցնէք, Թամարն անհամեմատ աւելի դուրեկան էր, քան Թագուհին։ Նրա երկայն և մի կապ հիւսած շագանակագոյն մազերը, փայլուն և կրակոտ աչքերը, աւ յօնքերը, ինչ Թագուհուն, ինձ աւելի էին հիացնում, քան Թագուհու աւելի բարձր և աւելի հպարտ ուսերը։ Նոյնը կազմուածքը։ Թամարն ու Թագուհին այն ժամանակ ուսանում էին Շ... քաղաքի նոր բացված հայոց օրիորդաց ուսումնարանում։ Այս պատճառով նրանք ևս շատ էին զարթնել, որ պատրաստվեն ուսումնական դնալու։

Մակար-ագան ինձ հրամայեց ուշկռել նրանց

մինչև ուսումնարան և յետոյ այնտեղից ուղղակի գնալ մագաղին։ Ճանապարհին, կարծես, սառանան հէնց խթում էր ինձ, որ ես անպատճառ խօսեմ իմ ապագի սիրուն աղջկերանց հետ։ Բայց ինչպէս խօսք բանալ— ինքս էլ չէի իմանում։

—Թամար խանում, ձեր ուսումնարանում ինչ են սովորեցնում,—վերջապէս, հանրածանօթ արտասանել ամօթխածութեամբ։

—Հայոց լեզու, ռուսաց լեզու, վայելչագրութիւն, թուաբանութիւն,—չարեց կրակոտ Թամարն իրարու հետևից արագ։

—Թանաբանութիւն, ինչ ասել է թանաբանութիւն, Թամար խանում,—հարցրի ես, դիտմամբ ինձ չը հասկացող ձևացնելով, թէև գոնէ անունն էլ գիտէի։

—Ախչի, Թադուհի, լսիմ ես, թուաբանութիւնը թանաբանութիւն ա ասում, հա հա, հա,—կկկաց Թամարն, իր քրոջ ուսին խփելով։

—Ինչի ես ծիծաղում, Թամար խանում, չեմ խմանում հարցնում եմ էլի,—խօսեցի ես, նեղացած ձևանալով։

—Թանաբանութիւն չան ասիլ, թուաբանութիւն կասան, այ էրվես, էլ քո սէրսէրից հէնչ էս սորվալ, որ թուաբանութիւնը չես իմանում,— պատասխանեց Թամարը կատարեալ տեղային բարբառով, ալ ձեռքի հինգ մատները բաց անելով և ինձ ճանկ անելով։

—Ի՞նչ սէրսէր, Թամար խանում,—կրկին հարցրի ես, կամենալով խօսակցութիւնը շարունակել։

—Ա՛յ, էն սէրսէրը, որ ամուխս համար ուզումա զօռով աղջիկ ուզի։

—Մազմա, աւետարան, նարեկ, ճարտասանու-

թիւն,—չարեցի ես էլ իմ սուացած գիտութիւնները։

—Բաս չէ՞լիմանութիւն չի սովորացուրա՞լ,—հարցրեց ուրախ Թամարը, գարձեալ կկկալով։

—Ի՞նչ չէ՞լիմանութիւն։

—Ա՛յ, ուրիշների առերում գիշեր ցերեկ հատայի հագ ուտել, բազարներում պապիրոս ծխել, էլ չեմ իմանում ինչ։

Ես վարժապետս—ասէր-վահակի—թուաբանութիւնները վաղուց գիտէի, այս պատճառով բոլորովին չը զարմացայ Թամարի խօսքերի վրայ։

Մենք հասանք ուսումնարան։ Ես, դրքերը յանձնելով Թամարին, գնացի մագաղին։ Բոլոր գործակատարներն եկել էին, առուտուրն արդէն սկսվել էր։ Ես իսկոյն բռնեցի ինձ համար նշանակված տեղը։ Օրը շաբաթ էր։ Շ... քաղաքի վաճառականական խանութներում այդ օրն առուտուրը համեմատաբար շատ կենդանանում է, որովհետև մօտակայ գիւղերի բնակիչները քաղաք բերում են պահպան կենսական պիտոյքները—իւղ, պանիր, կաթ, հաւ, ձու և այլն, վաճառում են և դոյացած փողերով առնում այն, ինչ-որ իրանց հարկաւոր է։ Ազգ Գուլամեանցների մագաղինը, ուներով գիւղացիներից բազմաթիւ ծանօթներ, այդ օրը մի առանձին կերպարանք էր սուանում։ Ոչ մի մագաղին, ոչ մի խանութ շաբաթ օրերն այնպէս չէր լեցվում մուշտարիներով։ Գործակատարները շատ կորներ չափերից յոգնում էին։

Քիչ ժամանակից յետոյ Մակար-ապան ֆաթըտաղի եկաւ։ Գործակատարներն, ինչպէս սովոր էին, վեր թռան իրանց տեղերից և ամեն մէկը, խորը գլուխ տալով, բևեռվեց իր տեղում արձանի պէս։ Փոքր առ

փոքր մուշտարիներն եկան, առուտուրը տաքացաւ։ Ես ամեն կերպ աշխատում էի անդործ չը մնալ, թէև, գործերին անտեղեակ լինելով, ոչինչ չըգիտէի կատարել։ Այն գործակատարն, որի մօտ ես կանգնած էի, պատուիրեց ինձ ծախած ու չափած կտորները ծալել և, թղթերի մէջ փաթաթելով, յանձնել մուշտարիներին։ Այդ գործը մի առանձին հմտութիւն չէր պահանջում. ես մի երիւ կտորներ փաթաթելուց յետոյ իսկոյն ընտելացայ նրանս։ Ես բթամիտ տղայ չէի, ունէի քիչ թէ շատ ընդունակութիւն շուտ բան սովորելու, բայց այդ զանրաւոր «արշին բանացնելը», այսինքն կտորներ չափելը մի փոքր դժուար էր, և ես առաջին օրը շատ աշխատեցի, չը կարողացայ սովորել։ Մօտս կանգնած գործակատարի ձեռների ճարպիկութիւնը նախանձս չարժում էր։ Նա այնպիսի արագութեամբ էր ձեռքում պտտեցնում արշինն, որ ես բոլորովին զարմացած էի։ «Ախ, երբ կըլինի, որ ես էլ այդպէս չափել կարողանամ»,—մտածում էի, աչքիս տակով մտիկ տալով նրա ձեռներին։

Մակար աղան նոյնպէս զբաղված էր։ Նա մօտենում էր այս ու այն գործակատարին, մտիկ էր անում, սովորեցնում էր այս այսպէս անել, այն այնպէս չափել կամ ծալել և այլն։ Երբեմն մօտենում էր մուշտարիներին և նրանց հետ զանազան հանաքներ անելով զբաղեցնում էր, «որ չըվախչեն»։ Մի խօսքով, այն օրն ես նրան շատ ուրախ, չարժուն և զուարթ տեսայ։ Պէտք է ասած, որ աղա Մակարը մի քանի ինքնուրոյն չարժողութիւններ ունէր, որոնցով կարելի էր իմանալ նրա հոգեկան տրամադրութիւնը։ Ուրախ և գոհ ժամանակը նա սովորութիւն ունէր իւր մատի և կլորիկ

երեսի վրայ խաղացնել մի տեսակ ինքնուրոյն ժպիտ։ Այդ ժամանակ նրա աչքերը կուշտ և ուրախ կատուի աչքերի նման փայլում էին, յօնքերը բարձրանում, մլիկ չրթունքները ստէպ ստէպ բաժանվում իրարուց, և նրանց տակից երևում էին սպիտակ առամները։ Նա քայլում էր շուտ շուտ, ըմբշամարտութեան հրապարակի վրայ խաղացող փահլևանի նման, թևերը օդի մէջ շարժելով և լրևլեացնելով իւր չաղ մարմինը։ Նրա մարմինն այնքան հատ էր, որ քիչ էր ձեռմ երկայնութիւնն ու լայնութիւնը հաւասարվէին։ Նա խօսում էր գործակատարների հետ ուրախ և մեղմ, պարգևելով նրանցից իւրաքանչիւրին մի մի պայծառ ժպիտ։ Իսկ երբ տխուր էր լինում, խիտ յօնքերը գոյում էր դած, նեղ ճակատը կնճռոտում, աչքերը փոքրացնում, ձեռները մէջքին դնում և գլուխը քաշ գցելով սկսում էր արագ քայլերով մանդալ։ Մարդ ևս ասում, որ կարողանար այդ մէջոցներին կանգնել նրա առջև, եթէ որ և է սխալ էր գործել այդ ժամանակ։ Մակար աղան բայց կանէր իւր բերանն և տեղային բոլոր վոգոյին յիշոցները կըթափէր նրա գլխին թէ հայերէն և թէ թուրքերէն լեզուով։

Այդ օրը Մակար աղան շատ զուարթ տրամադրութեան մէջ էր։ Նա խօսում էր ամենքի հետ քաղցրութեամբ, մինչև անգամ ես ևս այդ օրն արժանացայ նրա առանձին ուշադրութեան։ Շուտ շուտ նա մօտենում էր ինձ և, տեսնելով որ ես լաւ չեմ ծալում կտորները կամ կարգին չեմ փաթաթում թղթերի մէջ, առնում էր ձեռիցս կտորն և ինքը կապում, քաղցրութեամբ սովորեցնելով ինձ։ Մակար աղայի ուրախութեան պատճառը յայտնի էր. առուտուրն այնքան յա-

Լոզ էր այդ օրն, որ մենք գիւղացի մուշտարիներուն ձեռքէն հանգստութիւն չունէինք։

Բայց մի դէպք, որ ինձ համար ծիծաղելի էր և այդ ժամանակ անհասկանալի, փոխեց Մակար ապայի հոգեկան ուրախ տրամադրութիւնը։ Մի, ինչպէս մեզ պահում ասում էին, «աշխարհ տեսած» գիւղացի,—որը մի քանի տարի գիւղում տանուտէրի պաշտօն կատարելով և շրջելով չինովնիկների հետ մի փոքր ինքն էլ մտաւորապէս աշխուել էր և ուսանելն էլ կոտրատում էր,—հինգ արշին մահուդ էր առնում։ Մահուդը չափելուց յետոյ գործակատարը կարճց և ուզում էր ծալել։ Ծանկարծ գիւղացին բռնեց նրա ձեռը։

—Պօժօլստա,—ասաց նա,—մի անգամ էլ չափիր մահուդը։

Գործակատարը տրտնջալով երկրորդ անգամ չափեց—ուղիղ դուրս եկաւ, և սկսեց գիւղացուն պակասել նրա կտակած համար։ Սակայն գիւղացին չբաւականացաւ։

—Պօժօլստա, գօսպօդին վրդջալիկ, տուր ես չափեմ,—ասաց չարաճճի գիւղացին կէս ուռւսերէն և կէս հայերէն լեզուով, կարծես, կամենալով ցոյց տալ, թէ շատ էլ բան չինականներից չէ ինքը։

Գործակատարը տուեց նրան արշինն ու մահուդը։ Գիւղացին չափեց։ Դուրս եկաւ ուղիղ չորս ու կէս արշին։

—Տեսնում ես, հէնց ասում էս, «ստուր ես ասում»։ Աղբէր, էսպէս ժուլիկութիւն կըլինի, որ դուք էք անում,—ասաց գիւղացին, ձայնը բարձրացնելով։

Մակար ապան, հեռուից տեսնելով, իմացաւ բանն ինչումն է և մօտեցաւ գիւղացուն։

—Հը՛մ, ինչ է, ապէր, ինչի ես գալմագալ բարձրացրել։

—Ինչ անեմ, որ գալմագալ չանեմ, ապա, գործակատարդ մահուդս պակաս է կտրել, հինգ արշինի տեղ չորս ու կէս է տալիս։

—Իմ գործակատարն այդպիսի գալաթներ չի անիլ, մտածիր ինչ ես ասում։

—Ապա, չես հաւատում, ահա, ինքդ չափիր։

—Տուր տեսնեմ։

Մակար ապան առաւ մահուդն ու արշինը և գործակատարի երեսին մի տեսակ խորհրդաւոր հայեացք ձգեց։ Վերջինը նոյն տեսակ հայեացքով պատասխանեց նրան։

—Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, սա էլ քեզ փէշքէշ,—ասաց Մակար-ապան, չափելով մահուդը և մի քառորդ արշինի չափ էլ հինգ արշինից աւելի ցոյց տալով գիւղացուն, մտաբերեց վինչև նրա քիթը։—Չես ամաչում, որ ստուր ես ասում, ապէր։

Բայց «ապէրն» այն ապէրներից չէր, որ հեշտութեամբ ձեռք քաշէր Մակար ապայից։ Նա կրկին վերցրեց արշինն և սկսեց չափել մահուդը։

—Մէկ, երկու, երեք, չորս, էս էլ քեզ աւելի, ապա, մեկ տուր, չես ամաչում, որ ստուր ես ասում։

Մակար ապան բարկացաւ։ Գիւղացու յանդգնութիւնը նրան խիստ վիրաւորեց։ Բայց այս անգամ զսպեց իրան։

—Ուրեմն, դու քո էդ արեխներով ուզում ես ինձ խաբեբայ շինել էլի,—ասաց նա, աչքերը չռելով։

—Տրեխներով եմ, թէ չաքմէքով—էդ քո բանը չէ, ես հախս եմ ուզում։

—Հախիյդ էլ աւելի են տալիս քեզ, էլ ինչ ես բզաւում։

—Աւելը քեզ լինի, խմբ տուր։

—Ա՛յ տղայ, մէկ էլ չափիր,—գոռձաւ Մակար աղան մահուդ կարող գործակատարին։

Գործակատարը չափեց։

—Մէկ, երկու, երեք, չորս, այս էլ ուղիղ հինգ, էլ ինչ ես ուզում, ապէր։

—Ինձ մնաց,—ասաց պիւղացին և մի անգամ էլ չափեց մահուդը։ — Մէկ, երկու, երեք, չորս, էս էլ դրուստ կէս—էլ ինչ ես ուզում, աղա,—ծոպրից նայ։

Մի անգամ էլ Մակար-աղան չափեց և գոռձալ դուրս բերից հինգ արշին ու մի չարեք։

—Ա՛յ մարդ, այսքանն էլ աւելի է, էլ ինչ ես գահլէս առնում։

Ծիծաղս եկաւ։ Զաթաթապէտ մահուդի երեք մասը դու ձեռքում երեք դանապան երկայնութիւն առանալն ինձ կախարդութիւն թուաց։ Վերջապէս, երկար վիճաբանելուց յետոյ, Մակար աղան մի կերպ ճանապարհ դրեց դէպացաւ պիւղացուն, մահուդը յետ վերցնելով։ Հէնց որ վերջինս ոտը մագազինի դռներից դուրս դրեց, Մակար աղայի կատագութիւնը սաստկացաւ։ Նա բաց արաւ իր յիշողների տոպրակն և սկսեց թափել միմեանց ետևից մահուդ չափող գործակատարի դէմքին։

—Տասն անգամ քեզ ասել եմ, խնացիր ինչ մարդու հետ գործ ունես։ Ամեն մուշտարու հետ չի կարելի այդպէս անել։ Աշխարհում միամիտները քիչ չեն, որ դու յետ նկածներին ես ուզում խաբել։ Մի անգամ էլ քո անզգուշութենով ինձ խաթարալի մէջ կը գցես,

այն ժամանակ Աստուած ազատի,խայտառակ կըլինիմ ամբողջ քաղաքում։

Լաւ էր, որ չուտ չուտ մուշտարիները էին ներս մտնում, եթէ ոչ դուցէ Մակար աղան մինչև երեկոյ իր դուռնան փչէր խնդճ գործակատարի ականջներին, որն երկիւղից սառել էր ու պատի տակ բևեռվել։ Իրիկնադէմին մագազինը կողպելու ժամանակ Մակար աղայի դէմքը կրկին փոխվեց, երբ գործակատար Գրիգորը բաց անելով դրամարկղը և նոյն օրուայ ծախսից առաջացած փողերը համարելով դարսեց նրա առջև։ Նրա աչքերը կրկին սկսեցին փայլել, մի վայրկեանում անհետացաւ նրա դէմքից մռայլութիւնը, ինչպէս քամու չարժումից ցրվում են թեթև ամպերն երկնքի երեսից։ Նա միաեղամ ևս ինքը համարելով փողերը, ապահովեցաւ և չտապով դրեց դրպանը, կարծես, վախենալով, որ մի գուցէ մէկը խլի նրա ձեռքից։

Կիրակի երեկոները Մակար աղան սովորութիւն ունէր եկեղեցու չհնչից մէկն իր հաշուով վառել տալ, դանձանակի թասերը, փոխանակ սովորական հինգ կոպէկանոցի, ձգել մի մի արծաթ և, վերջապէս, եկեղեցու դուռը կանգնած բոլոր աչքառուների ձեռքին մի մի սև փող դնել։ Այս բոլորը կատարելուց յետոյ, դռներից դուրս գալով, նա միշտ մի տեսակ խորը հոգոց էր հանում, երեսը խաչակնքելով։ Կարծես, նրա ներսից ընկնում էր մի ահագին ծանրութիւն։ Ինձ թուում էր, որ նա այդ ժամանակ զգում էր թեթևութիւն։ Եկեղեցուց մինչև տուն հասնելը նրա դէմքը փայլում էր մի տեսակ պայծառ, ուրախ ժպտով։ Ես ինձ համար շատ անգամ հաճելի էր այդ րոպէներում նայել նրա երեսին։ Նրա մշտական թթուած դէմքի վրայ ժա-

ժամանակ առ ժամանակ երևացող ուրախ ժպիտը, ճշմարիտ ասած, ինձ շատ քաղցր էր թուում։ Իսկապես շատ էլ մելամաղձոտ մարդ չէր Մակար աղան։ Ընդհակառակը, կարելի էր ասել, ուրախ բնաւորութիւն ունէր։ Բայց այդ յայտնի էր միայն նրա մօտիկ ընկերակիցների շրջանում, որոնց հետ սովորութիւն ուներ շատ յաճախ պանապան տեսակ զուարճութիւններ սարքելու։ Իսկ մարդկանում և տանը շատ հազիւ էր պատահում տեսնել նրան հոգևկան ուրախ տրամադրութեան մէջ և այն էլ այն ժամանակ միայն, երբ առաւտուրը յաջող էր անցել կամ մի որ և իցէ նիւթական շահ էր ստացել մի տեղից։ Տանը սիրում ոչ պէի հետ, և ոչ ոք էլ չէր կարող նրան խօսեցնել, հաւատացած լինելով, որ արանով աւելի կըզբղանէն նրա բարկութիւնը։ Տնեցիները այնքան հպատակվել էին Մակար աղայի կամակոր բնաւորութեանը, որ նրա սիրում եղած ժամանակ իրանք էլ սիրում էին, իսկ ուրախ ժամանակ իրանք էլ ուրախանում էին, այնպէս որ կարծում էիր ամբողջ ընտանիքի հոգևկան տրամադրութիւնը կախված լինէր միակ այդ մարդու հոգևկան տրամադրութիւնից։ Ամենքը Մակար աղայի տուն դալու ժամանակ նայում էին նրա երեսին և նրա դէմքի այս կամ այն արտայայտութեան համապատասխան սկսում շարժվել, խօսել և այլն։ Մի և նոյնն անում էին և մաղպինի գործակատարները։ Օրինակ, երբ այն օրը դիւղացու մահուդի մասին նա բարկացած գոռում էր գործակատարներից մէկի վրայ, ամենքը սկսեցին նոյնպէս իրանց դէմքերը թթուեցնել։ Ինչու՞։ Որովհետև Մակար աղան չէր սիրում ուրախ

ժամանակը տեսնել իւր հպատակներից որ և է մէկի դէմքը թթված կամ, սրա հակառակ, սիրուր ժամանակը տեսնել նրանց ուրախ դէմքով։ Սկզբում գործակատարների այս կապկութիւնն ինձ շատ խորթ էր թուում, բայց յետոյ փոքր առ փոքր սովորեցի և այնուհետև ինձ համար սովորական բան դարձաւ, և ես ամեն անգամ Մակար աղայի երեսին նայելիս անգիտակցաբար դէմքս իսկոյն փոխում էի նրա դէմքի արտայայտութեան համապատասխան։

V

Անցել էր մի քանի ամիս։ Ես շարունակում էի ամեն առաւօտ վաղ գնալ մաղպին և երեկոյին վերադառնալ Մակար աղայի հետ տուն։ Բաւական ընտելացել էի իմ պաշտօնին. արդինով չափելը, մուշտարիների հետ քաղաքավարութեամբ խօսելու կաւ, ինչպէս Մակար աղան ասում էր, «նրանց պոչից բռնելու և բաց չը թողնելու» հնարը և ուրիշ իմ պաշտօնին վերաբերեալ հարկաւոր բաներն ես բոլորովին սովորել էի։ Գրիգորն ինձ վրայ մինչև անգամ զարմացել էր։ Նա գովում էր իմ աշխատասիրութիւնն և ընդունակութիւնն ու ասում, թէ շատ բաներ, որ ինքը սովորել է տարիների ընթացքում, ես սովորում եմ մի քանի ամիսների։ Միւս գործակատարները նայնպէս հաւանում էին ինձ, նա մանաւանդ գովում էին իմ արագաշարժութիւնը, որի պատճառով անունս դրել էին «հօրդա խաչի», այսինքն արագընթաց խաչի։ Այս մականունը մինչև այսօր էլ վրէս է մնացել, և ես իս-

կի էլ չեմ վշտանում, որովհետև այդ նշանակում է, որ ես ծույլ մարդ չեմ։

Բայց ամենից առելի ես աշխատում էի Մակար աղային ուշադրութիւնը դրաւել ինձ վրայ, ձեռք բերել նրա կողմից քիչ թէ շատ համակրութիւն։ Այս նպատակով ես ամեն ջանք գործ էի դնում, որ ոչ մի սխալ չը գրգռեմ նրա բարկութիւնը դէպի ինձ, այլ ընդհակառակը, որքան կարելի է սիրելի դառնամ նրա աչքում։ Ես ուսումնասիրում էի նրա բոլոր յատկութիւնները, որպէս զի նրանց համեմատ վարվեմ նրա հետ։ Ինչ տեսակ խօսակցութիւն, ինչ տեսակ չարժորութիւն, մինչև անգամ ինչպէս ուտել, խմել, նստել, վերկենալ որ նրան հաւանելի էին, նոյն տեսակ էլ ես էի աշխատում խօսել, շարժվել, նստել վերկենալ և այլն. ես այս ամենն աչքի առջև ունէի, որովհետև ամեն օր տեսնում էի, թէ ինչպէս Մակար աղան բարկանում էր գործակատարների վրայ ամենաչնչին սխալների համար և շատ անգամ սպառնում արձակել պաշտօնից այն գործակատարին, որը գործել էր այս կամ այն չնչին սխալը։ Օրինակ, մի օր նա մէկին մի քանի ապտակներ տալուց յետոյ քիչ միայց որ գուրս անէր մագազինից միայն նրա համար, որ խնդրը սխալմամբ մահուդի մի կտորը գրել էր չիթերի շարքում։ Մի խօսքով, չափազանց մանրակրկիտ և բարկացոտ մարդ էր Մակար աղան։ Հարկաւոր էր շատ մեծ զգուշութիւն նրան գուր գալու համար։ Եւ ես ամեն կերպ աշխատում էի զգոյշ վարվել։

Այսպիսով փոքր առ փոքր ինձ յաջողվեց Մակար աղայի ուշադրութիւնը դրաւել ինձ վրայ, և օրեցօր հաւանելի դառնալ նրա աչքում։ Նա հետզհետէ սկսեց

ինձ յանձնել այնպիսի գործեր կատարել, որոնք գործակատարի կողմից պահանջում էին քիչ թէ շատ հաւատարմութիւն։ Օրինակ, փող էր տալիս այս կամ այն վաճառականի մօտ տանելու կամ փոստ ձգելու, ուղարկում էր գանազան տեղերից ապառիկներ առնելու և այլն։

Մակար աղան ինձ համար մի ձեռք նոր հագուստ էր առել, որովհետև իմ չափազանց պատռոտված էր։ Նա իւր անուանը լայեաղ չէր համարում այդ ցնցոտիների մէջ տեսնել ինձ։ Բաւական փոխվել էի ես այդ նոր հագստի մէջ. էլ առաջուայ Խաչին չէի, ամեն անգամ մագազինում գրած ահագին հայելուն մտիկ տալիս ինքս ինձնով հիանում էի և զարմանում։ «Ահա ինչ ասել է փող, մտածում էի, մարդուս բոլորովին փոխում է, ինչպէս էի առաջ և ինչպէս եմ այժմ։ Հիմայ ով կարող է ասել, որ ես կօշկակար Սարգսի աղան եմ։ Չէ, ով ինչ ուզում է թող ասէ, իսկ ես կասեմ, փողը շատ լաւ բան է և նրան ձեռք բերելու համար ամեն տեսակի միջոցներ գործ դնել արժէ։ Բայց ինչպէս ձեռք բերել փող աշխատելու հնարը, ինչպէս։ Մակար աղան իւր խելքով չի աշխատում փող, այլ հենց փողի միջոցով։ Ուղիղ էր ասում հայրս, թէ «փողը փող է աշխատում, իսկ դօշաղ աղան գլուխն է քորում»։ Բայց, ինչ և իցէ, չտապել հարկաւոր չէ, ես դեռ փոքր եմ, ժամանակ շատ կայ, կարող եմ մի օր ես էլ մարդ դառնալ։

Մակար աղան սովորութիւն ունէր մագազինում բացված հակերից ճնացած թոկերի կտորտանքը, փչոսիաթենները կամ կտրտված արկղերը էժան գներով տալ գործակատարներին, որպէս զի սրանք, աշխատանքով ծախելով, շահվեն։ Սովորաբար այս շահը Մակար ա-

զան յանձնում էր այն գործակատարներին, որոնք էր-
կար տարիներ հաւատարմաբար ծառայել էին։ Այդ
բանը շատ շահաւէտ էր։ Պատժում էին, որ շատ գոր-
ծակատարներ այսպիսով զանազան մեծ մագաղինեե-
րում բաւական գումար են վատնակում։ Մակար ա-
զայի մագազինում այդ արտօնութիւնն ունէին Գրի-
գորն և մի ուրիշ գործակատար, որն ամենից հինն էր։
Ցոյս գնել եկամուտ այդ աղբիւրի վրայ—իմ կողմից ա-
պարդիւն կը լինէր։ Բայց և այնպէս, պակաս չէի մտա-
ծում նրա մասին և նախանձում էի Գրիգորին ու այն
միւս գործակատարին։ Պէտք է ասած, որ այն օրից,
երբ ես մտել էի աղա Գուլամեանցների մագազինը, մի
անգամ իմ մէջ կենդանութիւն առանալով շահասիրու-
թեան ոգին, օրէցօր քանի գնում այնքան զօրեղանում
էր, այնպէս որ մի քանի ամիսներում ինձ այնտեղը
հասցրեց, որ ես պատրաստ էի դիմել ամեն տեսակ
միջոցների, միայն թէ այդ միջոցներն ինձ համար ար-
դիւնաւէտ հետևանք ունենային։ Շատ անգամ ես պատ-
րաստ էի մինչև անգամ մատնել գործակատարներին
Մակար աղայի մօտ, եթէ հաւատացած լինէի, որ մատ-
նութիւնը կարող էր ինձ օգուտ բերել դէթ նրանով,
որ իմ վարկը քիչ թէ շատ բարձրացներ Մակար ա-
զայի աչքում և պրաւէր նրա վստահութիւնը դէպի ինձ։
Ես ամեն օր մտածում էի այս կամ այն գործակա-
տարի մէջ գտնել որ և է անհաւատարմութեան նը-
շոյլ դէպի աղա Գուլամեանցների շահերը, հետևում
էի նրանց, որպէս զի մի որ և իցէ պակասութիւն տես-
նեմ և իսկոյն յայտնեմ Մակար աղային։ Մի անգամ
պատահեց մի այնպիսի դէպք, որն առիթ տուեց
ինձ այնուհետև պրաւել Մակար աղայի վստահութի-

նը։ Մի առաւօտ, չըգիտեմ ինչու, Մակար աղան մա-
գազին չեկաւ։ Մուշտարիները էլ չկային։ Այդպիսի ժա-
մանակներում գործակատարները, թողնելով իրանց սո-
վորական տեղերը, խմբվում էին միասին և խօսում,
ծիծաղում ու զուարճանում։ Խօսակցութեան առար-
կան գլխաւորապէս լինում էր Մակար աղան, որի մա-
սին գործակատարները հազար տեսակ դատողութիւն-
ներ էին անում, քննելով նրա բնաւորութիւնը,
կեանքը, վարվողութիւնն և այլն։ Մէկը գովում էր
Մակար աղայի մի յատկութիւնը, միւսը, պախարակե-
լով այդ յատկութիւնը, ցոյց էր տալիս նրա մի ուրիշ
լաւ կամ վատ յատկութիւնը, բայց վերջ ի վերջոյ ա-
մենքն էլ միշտ գալիս էին այն եզրակացութեան, թէ
նա շատ էլ համակրելի մարդ չէ։

Ես գործակատարների խօսակցութեանը չէի մաս-
նակցում, այլ մի կողմ քաշված ականջ էի դնում։ Զը-
նայելով, որ մագազինում ոչ ոք չկար, նրանք խօսում
էին շատ ցածր ձայնով, գրեթէ չշնչինով։

—Գրիգոր, Մակար աղան ինչպէս վերջացրեց իւր
հաշիւները այն ծերունու հետ,—հարցնում էր գործա-
կատարներից մէկը։

—Ի՞նչ ծերունու։

—Այ այն Թոմոյեանցի, որի հետ քանի ժամա-
նակ է գաշնչվում են երեք եղբայր աղա Գուլամեանց-
ները մուրհակների մասին։

—Ինչպէս պիտի վերջացնէին, մուրհակները Մա-
կար աղան յետ առաւ և մի կոպեկ էլ նրան չտուեց։
Այժմ խեղճ ծերունին ընկել է աղքատութեան մէջ և,
ինչպէս ասում են, մինչև անգամ օրուայ մի կտոր չոր
հացին էլ կարօտ է մնացել։ Խեղճը կաշառակ է գա-

ռել և դիշեր—ցերեկ, այստեղ այնտեղ նստած, խոսում է ու խոսում, ոչ ոք նրա խոսքին չի հասատում։ Ասում են, կարելի է շատ հոդսից ծերութեան օրերում խելքից էլ գրկվի։

—Հասկանում է, ինչու էր կեանքի այդ ժամանակը, մի ոսոխ գերեզմանի մէջ, այնպիսի կեղտոտ բաների մէջ խառնվում։

—Ինչպէս կարող էր չբխառնվել, քանի-որ ամբողջ կեանքն այդպիսի խարեբայութիւններով է անցկացրել։ Առակն ասում է. «կուժը ջրի ճանապարհին կըկոտրվի»։ Աթոյեանցի տունը քանդեցին քանի կենդանի էր, փողերը ձեռքից խլեցին և վոխարէնը կեղծ մուրհակներ տուեցին մեռնելու ժամանակ, այն էլ բարձի տակից դողացան և ոգորմելու ընտանիքը ձգեցին մուրացկանութեան մէջ։

—Ասում են, մեծ գումարի են հասնում Աթոյեանցի փողերը—մօտ մինչև 75 հազարի։

—Այո, 75 հազար։ Մուրհակներ դրողն էլ Ռուսաստանի գործակատար Համբարձումն է եղել,—ասաց Գրիգորը։—Նա ինձ պատմել է, թէ ինչպէս են ստորագրել այդ մուրհակներն ազա Գուլամեանցները և պառաւ Թոթովեանցը։

—Հետաքրքրական է,—ասացին բոլորը։

—Մակար ազան վերցրել է գրիչն և, իր ձեռագիրը փոխելով, ամենքի փոխարէն ինքը ստորագրել է ջոկ ջոկ ձեռագրով այնպիսի խորամանկութեամբ, որ իր իսկական ձեռքի հետքն անգամ չի կարելի եղել նշմարել։ Աթոյեանցն, ինչպէս հին վաճառական և չափազանց միամիտ մարդ, տեղեկութիւն էլ չի ունեցել մուրհակները գրելու կարգ ու կանոններից։

Համբարձումը հաւատացնում էր, որ երբ ինքը մուրհակները մի առ մի տանում էր և տալիս, Աթոյեանցը մինչև անգամ նրանց ստորագրութեանն էլ մտիկ չէր անում, միշտ կրկնելով, թէ ազա Գուլամեանցներն ազնիւ մարդիկ են, նրանք ուրիշի փողին թամահ չեն անիլ, կարելի է նրանց հաւատալ առանց մուրհակների էլ։

—Իսկ պառաւ Թոթովեանցի՞ մուրհակները ինչ մուրհակներ են, որ նա ստացած է եղել ազա Գուլամեանցներից,—հարցրեց գործակատարներից մէկը։

—Ազա Գուլամեանցները միշտ Աթոյեանցից փողերը վերցնելիս են եղել ծերունի Թոթովեանցի միջոցով։ Նա է իրեն միջնորդ գնացել Աթոյեանցի մօտ և փողերը ստացել և նրա չնորհով է իսկապէս Աթոյեանցը հաւատացել ազա Գուլամեանցներին այդչափ մեծ գումար։ Մի անգամ արդէն մոլորվելով թէ Գուլամեանցներն ազնիւ վաճառականներ են և երբէք իրանց թոյլ չեն տալ ուրիշի փողերն ուտել, Թոթովեանցն ազա Գուլամեանցների հետ առաջուց մտածած է եղել Աթոյեանցից դուրս կորզել բոլոր սրա փողերը և փոխարէնը մուրհակներ տալ, պայմանով, որ գումարի մի մասը Գուլամեանցները տան Թոթովեանցին։ Թոթովեանցն իրան հասանելի մասը նաև իր սեփական փողերը—ընդամէնն երեսուն հազար մանէթ—յանձնել է ազա Գուլամեանցներին տարեկան 20 տոկոսքով և փոխարէնը նրանցից մուրհակներ վերցրել։ Երբ ամեն ինչ վերջացել է, այսինքն Աթոյեանցը մեռել է, և ծերունին նրա բարձի տակից ազա Գուլամեանցների և իր անունով 75 հազար մանէթի մուրհակները գողացել է ու տուել ազա Գուլամեանց-

նելին, այն ժամանակ սրանց ապր ու ձեռքը բո-
լորովին բացվել են։ Այս անգամ ապա Գուլամեանց-
ները սկսել են մտածել Թոթովեանցի պարտքից մի
կերպ ազատվելու մասին։ Բայց Թոթովեանցն այնպի-
սի պատուղ չի եղել, որից հեշտութեամբ ազատվել կա-
րողանային։ Ապա Գուլամեանցները շատ են աշխատել պա-
տաւի ձեռքից մի կերպ դուրս բերել իրանց 30 հա-
զար մանէթի մուրհակը, բայց չի յաջողվել. Ծերունին
նրանց հետ զգուշութեամբ է վարվել։ Վերջապէս, Մա-
կար ապայի համբերութիւնը հատել է, և նա մի օր խօսք
է տուել իր եղբայրներին չուտով, ինչպէս և իցէ, Թո-
թովեանցից վերցնել մուրհակները։

Այդ վճռից յետոյ Մակար ապան մի օր չուզայում
պատահել է Թոթովեանցին, ասել է, թէ մտադիր է
այն օրն իր պարտքը վճարել և խնդրել է նրան, որ
երեկոյեան տանը ապասի, ինքը կը բերի փողը և մուր-
հակները կըստանայ։ Երեկոյեն Մակար ապան վերա-
նում է իսկապէս 30 հազար մանէթ փող և գնում Թո-
թովեանցի տունը։ Նա թաղիճեակի մէջ կապած փո-
ղերը գրպանից հանում է և գնում սեղանի վրայ, խընդ-
րելով պատասխանին, որ մուրհակները յետ տայ, փողերն
առանայ։ Թոթովեանցի աչքերը փողի կապոցից չյա-
նում են, և նա շտապած, դողդողալով հանում է սրն-
դուկից մուրհակն ու գնում Մակար ապայի առջև։ Օգ-
տուելով Ծերունու չփոթութենից և յարմար վայր-
կեանից, Մակար ապան խլում է մուրհակն ու փողի
կապոցն և հայդա... Թոթովեանցը սկսում է գոռալ,
թէ իրան կողոպտեցին և ուշաթափվելով ընկնում է
յատակի վրայ։

—Բրավօ, բրավօ, Մակար ապա, լաւ խորամանկ

կութիւն է բանեցրել, ես իմ Աստուածը, — բղաւեց
դործակատարներից մէկը, յափշտակված Գրիգորի
պատմութենով։

—Ահա ինչպէս է վերջացրել բանը Մակար ապան
Ծերունի Թոթովեանցի հետ,—աւարտեց Գրիգորն իր
պատմութիւնը։ Այժմ խեղճը մնացել է չոր տափի վը-
րայ, չդիտէ ինչ անէ. դատարան գնալ չի կարող, ո-
րովհետև ոչինչ փաստ չունի, որ Գուլամեանցների վրայ
հատատած իր պարտքը, իսկ առանց փաստերի ոչ ոք
չի հաւատում նրա խօսքերին։ Հասարակութեան մէջ
դանդատվելու ժամանակ ամենքը ծիծաղում են նրա
վրայ և չեն հաւատում, որ ապա Գուլամեանցները նը-
րան այդքան փող պարտ լինեն և չվճարեն։ Եւ ինչ-
պէս հաւատան, քանի որ շատ լաւ ճանաչում են նը-
րան և գիտեն, որ նա իր կեանքում այդքան փող
երբէք չի ունեցել։ Իսկ ճշմարիտը խոստովանվել—Ծե-
րունի Թոթովեանցը նոյնպէս չի կարող, որովհետև գի-
տէ, որ եթէ ճշմարիտը պատմի, թէ որտեղից և ինչ-
պէս է այդ պարտքը գոյացել ապա Գուլամեանցների
վրայ—կարող է կեանքի վերջին օրերում խայտառակ-
վել, յայտնելով իր մանկակութիւնը Աթոյեանցին կո-
ղոպտելու մէջ։ Այժմ մարդը մնացել է տանջվելով և
գիշեր ու ցերեկ մաշվում է իր գաղտնի ցաւերից և
ոչ ոքին չի կարողանում յայտնել։ Ճարահատեալ ամեն
օր գնում է եկեղեցի և Աստծուն աղաչում, պաղա-
տում, որ գոնէ Նա պատժի ապա Գուլամեանցներին։

—Գիտէք ըհնչ,—մէջ մտաւ մի ուրիշ գործակա-
տար,—ինչ-որ վաճառականն է անում, նոյնը սովորում
ենք անել և՛ մենք։ Ո՞ր մէկը մեզանից կարող է պար-
ծենալ, թէ ինքն իսկապէս ճշմարիտ մարդ է։—Ոչ մէկը։

Ամենքս էլ ոտքից մինչև գլուխ թաթախված ենք կեղտի մեջ։ Օրը հարիւր անգամ սուտ ենք ասում, մուշտարիներին խաբում ենք, կողմները պակաս ենք չափում, արժողութենից աւելի գնորով ենք ծախում, մի խօսքով, հազար տեսակ սատանայութիւններ ենք անում, թէ ինչ է մեր աշխատի օգուտը։ Բայց աշխատանքս փոխարէն ինչ է տալիս մեզ։ Նա մեզ աւելի ու աւելի է սովորեցնում խաբել ու կեղծաւորել։ Մինչև այսօր մեղանից ոչ մէկն է մաքուր սրտից խօսել Մակար աղայի հետ։ Ամենքս խօսում ենք մի տեսակ, մտածում ենք ուրիշ տեսակ, ամենքս չողոքորթում ենք նրան, վէշերը լիզում դիւ դալու համար։ Մեր սորքորթութիւնն այն տեղն է հասել, որ եթէ Մակար աղան ասի, թէ այսօր ուրբաթ չէ, այլ կիրակի է, մենք կը համաձայնվենք, թէ նա սուտ չի ասում։ Եթէ ասէ, որ արեգակը լոյս չունէ, մենք կասենք, թէ ճշմարիտ է։ Ինչու՞ համար ենք այս բոլորն անում։ Զեզ եմ հարցնում։—Նրա համար, որ մենք նրա քէֆին չդիմպչենք, որ դրանով մենք ցոյց տանք նրան մեր հնազանդութիւնը, խոնարհութիւնը, որպէս զի դրաւենք նրա հաւատարմութիւնը։ Մինչ այս բոլորը խաբեբայութիւն չէ, մինչ պակաս յանցանք է, քան թէ աղա Գուլամեանցների և Ձերմակի Թոթովեանցի ատելութիւնը։

Այս սուտ էր մի գործակատար, որ ընդամենը մի տարի էր ծառայել աղա Գուլամեանցների մօտ։ Մակար աղան նրան չէր սիրում և շատ վատ էր վարվում հետը։ Ես կարծեցի, որ հէնց այս էր պատճառը նրա անբաւականութեան։ Սակայն ես զգում էի նրա բոլոր խօսքերի ճշմարտութիւնը։ Ես դիտէի, որ

իսկապէս այն ամենը, ինչ-որ նա ասում էր գործակատարների մասին, իրաւացի է և արդար։

—Ուրիշ կերպ անկարելի է,—պատասխանեց Գրիգորն իւր դրութենից դժգոհ գործակատարին։ Եթէ չվճռարկվենք, չընդդիմանանք աղա Գուլամեանցներին, եթէ նրանց սրտի ուզածը չկատարենք—այս աշխարհում իսկի ապրել չենք կարող։ Նրանք սիրում են կեղծաւորութիւն—մենք էլ պիտի կեղծաւորենք, սիրում են չողոքորթութիւն—մենք էլ պիտի չողոքորթենք, սիրում են սուտ ասել—մենք էլ պիտի սուտ ասենք։—Մի խօսքով, ինչպէս նրանք են ուզում—պիտի այնպէս էլ պահենք մեզ, եթէ ոչ՝ քաղցած կմնանք։ Տեսնում ես, այնօրուանից, երբ դու մի փոքր հակառակութիւն ցոյց տուեցիր Մակար աղային—աչքից ընկար, չընայելով որ դու ճշմարիտն էիր խօսում։ Չէ, եղբայր, հարկաւոր է անել այն, ինչ-որ քեզանից պահանջում են աղա Գուլամեանցները և ոչ թէ այն, ինչ-որ դու ես ցանկանում։ Ուրիշ ճար չկայ, եթէ ուզում ես նրանց աչքում հաւանելի լինել։ Ես էլ առաջ շատ էի նեղանում իմ պաշտօնից և շատ անգամ ինքս ինձ ասում էի, ինչ հարկաւոր է սուտ խօսել, կեղծաւորել, երբոր առանց այն կարելի է վարվել, բայց յետոյ տեսայ, որ չէ, անկարելի է։ Այժմ ինձ համար միևնոյնն է, իսկի չեմ էլ մտածում, թէ օրական քանի անգամ եմ սուտ ասում և քանի անգամ խաբում մարդկանց, որովհետև հէնց իմ ամբողջ օրուայ խօսակցութիւնը սուտ է։ Եւ ինչու՞ չըսեմ։ Ինձանից խօսք սրտով մի բան չի պահասում։ Այսպէս չեմ խօսիլ, այնպէս կըխօսեմ, այս չեմ ասիլ, այն կասեմ, այս բոլորն, իմ կարծիքով, միևնոյնն է, միայն հարկաւոր է աչքի առ-

չև ունենալ, թէ որն է շահաւէտ գրպանի համար։ Ապա Գուլամեանցները եթէ իրանց ամբողջ կեանքը սուտ ասելով, կեղծաւորելով, խաբելով և սրա ու նրա ոտնե-րը լզելով չանցկացնէին, հաւատացնում եմ ձեզ, այ-սօր այնքան հարստութեան աղբերը չէին կարող լինել։ Փողը, եղբայր, ամեն բան ուժով սոխպում է մար-դուս անել։ Այսպէս չէ։

Բոլոր գործակատարները դրական պատասխան տուեցին Գրիգորին, հաւանելով նրա ասածները, բա-ցի այն մէկից, որն իւր պաշտօնից անբաւական էր։ Ինչ վերաբերվում էր ինձ, համաձայն էի, որ մենք, գոր-ծակատարներս թաղված ենք այդ բոլոր կեղտոտութիւն-ների մէջ։ Բայց ինչպէս անել։ Չհամաձայնվել Գրիգորի հետ, որ մի կտոր հացի աղբ լինելու համար անհրաժեշտ է լինել Մակար աղայի առջև կեղծաւոր և շողոքորթ— չէի կարող, քանի որ արդէն ճանաչում էի վերջինին և գիտէի, որ առանց սրանց անհնար է նրա մօտ երկար ձնալ։ Իսկ ես ուզում էի նրա մօտ ծառայել, աչքի առ-չև ունենալով իմ ապագան։ Ես չէի ուզում հօրս պէս աղքատութեան մէջ ապրել։ Ես ցանկանում էի իմ ա-պագան նրանցպէս ապահոված տեսնել։ Ո՞վ է աղա Գուլամեանցներին այսօր մեղադրում, ո՞վ է նրանց պա-տասխանատու Աթոյեանցի փողերն ուտելու մասին։—Ոչ ոք. ընդհակառակը, ամենքն էլ նրան պատուում են, յարգում են, փողոցով անցնելիս գլուխ են տալիս հեռուից։ Իսկ իրանք՝ հպարտ ու գոռոզ՝ ոչ ոքի հետ չեն ուզում խո-սել։ Եւ ինչ կարիք ունին ուշադրութիւն դարձնելու, քանի-որ առանց ուրիշների էլ կարողանում են ապրել։

—Այդքան տարի ծառայելով,—շարունակեց Գրի-գորը,—ես, վերջապէս, հասկացել եմ, որ վաճառակա-

նութեան մէջ մարդ չի կարող ճնալ աղնիւ, մաքուր, ճշմարտասէր։ Չի կարող, որովհետև վաճառականու-թիւնն այդպիսի մարդկանց չի սիրում։ Եթէ կամենում էք, ես իսկի չեմ էլ մեղադրում վաճառականին, երբ նա խորամանկութիւն է անում, ստախօսում է, խա-բում է, որովհետև գիտեմ, որ նա կամայ ակամայ ստի-պված է այդպէս անել։ Անիրաւ ոսկին ամեն բան մարդուս մոռացնել է տալիս, ամեն բան—խիղճ, հո-գի, հաւատ։ Բայց արէք աչքներդ և լաւ մտիկ ա-րէք ձեր շուրջը։ Տեսէք ո՞վ է կարող պարծենալ, թէ աղնիւ, առաքինի և ճշմարտասէր մարդ է։ Ոչ ոք, ամենքն իրարու խաբում են, կողոպտում են։ Աթո-յեանցին խաբում է ու կողոպտում Թոթովեանցը, ա-ղա Գուլամեանցները խաբում են ու կողոպտում Թոթո-վեանցներին, վաղը մի ուրիշը դուրս կը գայ—նոյնը կա-նէ ազա Գուլամեանցների հետ, և այսպէս կը շարու-նակվի անվերջ։ Ես ինքս, եթէ դէպք պատահի, եթէ ձեռքս ուրիշի փողեր ընկնեն, առանց խղճալու կը կլա-նեմ, և այս բոլորովին խղճիս դէմ չեմ համարիլ, որով-հետև հաւատացած եմ, որ այդ ուրիշն էլ անշուշտ մէկ մարդուց գողացած է այդ փողերը։

Գրիգորը չկարողացաւ շարունակել իւր խօսքը, որովհետև այդ ժամանակ ներս մտաւ մի մուշտարի։ Մենք ցրվեցինք մեր տեղերը։

Այս խօսակցութիւնն ինձ համար խիստ հետաքրքրական էր։ Շատ ախտսեցի, որ նա ընդհատվեց։ Նա ինձ համար հետաքրքրական էր նախ, որ ես իմա-ցայ այն ծերունու գաղտնիքը, երկրորդ, որ առիթ էր տալիս ինձ ծանօթանալու գործակատարների հետ։

Երեկոյին, սովորականին համեմատ, ես աղա Գու-

լամեանցների տանն էի։ Մակար աղան իւր առանձնասենեակումն էր։ Սառանան հէնց բոթում էր ինձ, որ անպատճառ գնամ նրա մօտ և պատմեմ գործակատարների այնօրուայ խօսակցութիւնն և ցոյց տամ իմ հաւատարմութիւնը։ Մի քանի րոպէ ես տատանման մէջ էի. «գնալ, թէ չգնալ»։ Մի կողմից չէի ուզում գնալ, որովհետև վախենում էի, որ Մակար աղան իմ խօսքերին չհաւատայ, և մի փոքր էլ խիղճս թոյլ չէր տալիս, միւս կողմից, ցանկանում էի գնալ, մտածելով, որ ինձ վարձելու օրը Մակար-աղան ինքը պատուիրել էր յայտնել իրան այն ամենը, ինչ-որ կլսեմ ուրիշներից իւր վերաբերմամբ։

Մինչ ես տատանվում էի, Մակար աղան ծառայի միջոցով կանչեց ինձ իւր մօտ։ Վերջին ժամանակները նա սովորութիւն էր արել երբեմն ինձ կանչել իւր մօտ և պանապան բաների մասին հարց ու փորձ անել։ Լինելով կապածառար բնաւորութեան տէր, նա ուզում էր, որ ամեն բան իրան յայտնի լինի և այս պատճառով ինձանից շատ անգամ այնպիսի չնչին բաների մասին էր տեղեկութիւններ պահանջում, որ ես զարմանում էի։ Օրինակ, նա հարցնում էր, թէ դիշերները այս կամ այն ծառան ինչ է անում իւր սենեակում, վաղ է պառկում քնելու թէ ուշ, քանի բաժակ թէյ է խմում, ինչքան անգամ է օրը հաց ուտում և այլ այսպիսի մանր-մունր բաներ։

Մակար աղան թէյ էր խմում։ Ես գլուխս տուեցի նրան և կանգնեցի դռնների մօտ, ձեռներս դարսելով կրծքիս։

—Հըմ, ինչ կայ, ինչ չկայ, պարոն Խաչիկ։

Վերջին ժամանակները Մակար աղան սովորութիւն էր արել ուրախ ժամանակին ինձ հետ խօսելիս «պարոնը» կպցնել իմ անուանը մի տեսակ մեղմ հեգնութեամբ։

—Ձեր հրամանոց առողջութիւնը, Մակար աղա,—պատասխանեցի ես, գլուխս համեստութեամբ խոնարհեցնելով։

—Այսօր ես մինչև երեկոյ մագազինում չեմ եղել, ինչ են արել գործակատարները։

—Ինչ պէտք է անէին, մէթէ չգիտէք, թէ ձեր հրամանքը մագազինում չեղած ժամանակը ինչ են անում նրանք։

—Հըմ, խօսիր, տեսնենք...

—Մի այնպիսի բան չկայ։ Ուզում եմ միայն ասել, որ երբ դուք մագազինում չէք լինում, առհասարակ գործակատարները շատ էլ խելօք չեն պահում իրանց,—պատասխանեցի ես, գլուխս աւելի քաշ դնելով, իբրև թէ խիստ ամաչում եմ Մակար աղայից։

—Գիտեմ ինչպէս են պահում իրանց։ Երբ ես այնտեղ չեմ լինում, հաւաքվում են միասին և ռէխաները ծուած սովթաթ անում, իսկ մուշտարիները գալիս են ու պատարիկ չեն գնում։

—Դատողութիւններ են անում, աղա, խելքներին զօր են տալիս։

—Հմա, հապա ասա տեսնենք, ինչի մասին են դատողութիւններ անում,—ասաց Մակար աղան, տեղից բարձրանալով։

Ես մի փոքր չեշտ քաշվեցի, ցոյց տալու համար, թէ իբր վախենում եմ նրանից։

—Ձեր գործերի մասին էին խօսում, աղա...

Մակար աղայի հետաքրքրութիւնը գոգովեց։ Ես

միամիտ ձևացայ. իբրև թէ իմ ասածին ինքս այնքան էլ նշանակութիւն չեմ տալիս։

—Ի՞նչ են խօսում իմ վերաբերմամբ, պատմիր շուտով,—կրկնեց նա։

—Ասում են, դուք լաւ մարդ էք, խաբող, սուտ ասող չէք, է՜հ, ինչ գիտեմ, ուրիշ այսպիսի շատ բաներ են ասում։

—Հանաք մի արա, այ տղայ,—գոռաց Մակար աղան տաքացած։

—Ասում են, թէ դուք ձեզանից մեծերին և ուժեղներին կեղծաւորում էք ու շողոքորթում, իսկ փոքրերի առջև հպարտ ու գոռոզ էք պահում ձեզ։ Թէ դուք դողութիւնով և խաբեբայութիւնով էք այդքան հարստութիւն գիզել։ Գրիգորը պատմում էր, թէ դուք իբրև թէ խաբել էք ինչ-որ Ամոյեանց աղջանունով վաճառականին, նրա 75 հազար մանէթը կուլ էք տուել, յետոյ խաբել էք Ծերունի Թոմոյեանցին և նրա 30 հազար մանէթը կերել։ Այսպիսի և սրա նման շատ բաներ էին ասում, Մակար աղա։ Ես չէի ուզում լսել նրանց, որովհետև ինձ շատ վատ էր թուում, որ իմ աղային մարդիկ սաստ են հնարում և այն էլ այնպիսի մարդիկ, որոնք նրա հացով են ապրում։ Բայց ինչ պիտի անէի. մարդկից դուրս գալ չէի կարող, նրանք խօսում էին, ես էլ ականջ լսում էի։

Մակար աղան բարկութիւնից գունատուեց։ Ես խոսքս սկսեցի նրանից վախենալ։ Բայց շուտով էլի ուղեցի ինձ։

—Ցեռո՛յ, էլ ինչ էին խօսում շան զաւմերը։

—Է՜հ, Մակար աղա, շատ բաներ կասեն, բայց ոչ է հաւատում նրանց ասածներին։

—Հաւատում են թէ չեն հաւատում, քո բանը չէ։ Դու պատասխանիր այն, ինչ-որ ես եմ քեզանից հարցնում։ Ասա տեսնեմ, էլ ինչեր էին խօսում,—շարունակեց Մակար աղան կատաղած, այնպէս որ ես սկսեցի փոշմանել իմ ասածների վրայ։

—Միայն ձեր մասին չէին խօսում, այլ բոլոր վաճառականների մասին։ Ասում էին, թէ նրանք ամենքն էլ սուտ ասողներ, խաբողներ, գողեր են, թէ նրանց մօտ ծառայողներն էլ պէտք է այդպէս լինեն, որովհետև ուրիշ կերպ չեն կարող լինել։

—Այդ ո՞ր գործակատարն էր ասում։

Ես յիշեցի Գրիգորի և մէկ էլ իւր պաշտօնից անբաւական գործակատարի անունները։

—Այդ էլ իմ լաւութեան պատուղը... փողոցներում ոտաբոբիկ լակոտներ էին, հաւաքել եմ, բերել, մի կտոր հացի տէր չինել, այժմ ինձ էլ չեն հաւանում։ Աբի այժմ աղքատներին ողորմութիւն արա, խղճա նրանց վրայ, Մակար։

—Գրիգորն ասում էր, թէ մինչև անգամ ինքն էլ պատրաստ է ուրիշի փողերն ուտել, եթէ ձեռքն ընկնի։ Նա այսպիսի մի բան էլ ասաց. «Գողից գողութիւն անելը մեղք չէ»։

Այս անգամ Մակար աղայի կատաղութիւնը սահմանից դուրս եկաւ։ Նա սկսեց արագ-արագ քայլել։ Իմ խօսքերն առիւծների նման ցցուում էին նրա սրտի մէջ։

—Լա՛ւ, գնա,—գոռաց նա, վերջապէս, ինձ։

—Բայց, աղա, մի բան եմ խնդրում ձեզանից։

—Ի՞նչ։

—Որ դուք գործակատարներին չասէք, թէ ես եմ այս ամենը ձեզ պատմել, առանց այն էլ նրանք ինձ

հետ լաւ չեն վարվում։ Ինձ, ծեծելով, կըսպանեն։ Խեղճ մարդու տղայ եմ, մտել եմ ձեզ մօտ մի կտոր հաց ուտելու, պարտաւոր եմ կերածիս փոխարէն ձեզ հաւատարմութեամբ ծառայելու։ Ես պարտքս եմ կատարում։

—Լաւ է, դուրս եկ, կորիր։

Ես, ՛ի հարկէ, դուրս եկայ խոյրն, բայց չկորայ, մնայ սենեակս։

Հետեւեալ առաւօտ Մակար աղան վռնդեց Գրիգորին և այն գործակատարին, որ իւր դրութենից անբաւական էր։

Վերջինի պաշտօնը Մակար աղան յանձնեց ինձ։

VI

Արդէն երեք տարի էր, որ ես ծառայում էի աղա Գուլամեանցների մագազինում։ Գործերս վատ չէին դնում։ Ես արդէն գրաւել էի Մակար աղայի հաւատարմութիւնն և օրէցօր աւելի ու աւելի բարձրանում էի նրա աչքում։ Մանրավաճառ Թորոսի խօսքերի նըշանակութիւնը փաքր առ փաքր սկսում էի հասկանալ, նրա տուած խրատն ինձ օգնում էր։ Այնտեղ, ուր հարկաւոր էր խորամանկութիւն—ես խորամանկ էի, ուր հարկաւոր էր միամտութիւն—ես միամիտ էի։—Ուր հարկաւոր էր կեղծաւորութիւն և շողոքորթութիւն—ես կեղծաւոր և շողոքորթող էի, ինչպէս պարսիկ, ուր հարկաւոր առաքինութիւն—ես սուտ էի ասում, ինչպէս մի հմայող։ Մի խօսքով, ես հնազանդւում էի ամեն մի դէպքում հանգամանքներին և իմ ամեն մի քայլն անում էի վերջիններիս համեմատ, միայն թէ

կարողանայի առաջանալ Մակար աղայի մօտ, միայն թէ ձեռք բերէի նրա վստահութիւնը։

Հասել էին այն ուրախ օրերն, երբ Մակար աղան պիտի ամուսնանար։ Մի քանի ամիս առաջ արդէն սկսել էինք պատրաստութիւններ տեսնել այդ նշանաւոր օրուայ համար։ Այդ օրերն ես այնքան զբաղված էի, որ, ինչպէս ասում են, քիթ սրբելու ժամանակ չունէի։ Իմ գործերը չատացել էին թէ տանն և թէ մագազինում։ Ամենքն ինձ էին յանձնարարութիւններ անում, և ես կատարելապէս թևեր էի առել ու թռչում էի ամեն կողմ, ուր ուղարկում էին ինձ։ «Խաչի, գնա բաղար, այս ինչ բանը գնիր»։—«Այս րոպէիս աղա», և Խաչին մի վայրկեանում անհետանում էր աղայի հրամանն անյապաղ կատարելու։ «Խաչի, վաղ տուր, մադաղինից այս ինչ կտորը բեր»։—Մակար աղան դեռ խօսքը չատարած, Խաչին արդէն ճանապարհ է ընկել։

Այդ միջոցներին Մակար աղան գանվում էր ուրախ տրամադրութեան մէջ։ Նա ամենքի հետ քաղցրութեամբ էր վարվում, ամենքի հետ խօսում էր կակղութեամբ, նամանաւանդ ինձ հետ։ Միւս գործակատարների դէմ ինձ ունեցած նախանձին չափ չկար։ Ես դառել էի մի փուշ և ծակում էի նրանց աչքերը։ Ամենքը նախանձում էին մանաւանդ նրա համար, որ ես աղա Գուլամեանցների ընտանիքում ընդունվում էի ինչպէս նրա անդամներից մէկը, իսկ իրանք ամենը մի անգամ հազիւ ոտք էին դնում այնտեղ։

Մակար աղան պիտի պսակվէր Շ... քաղաքի մի հարուստ դրամատիրոջ աղջկայ հետ։ Այն աղքատ աղջիկը, որի հետ նա առաջ ուզում էր նշանվել և որի մասին միջնորդութիւն էր անում առ վահակը, մեռել էր։

Թէ ինչ էր Մակար աղայի հարսանիքը, որքան չքեղ էր և ինչքան ծախս եղաւ—այս մասին ես աւելորդ եմ համարում գրել իմ յիշատակարանում։ Բաւական է միայն ասել, որ երեսնամեայ շարունակվեց ուղիղ հինգ օր, և քաղաքում մարդ չմնաց, որ չընդունվեր հարսանիքս։ Մի օր Մակար աղան ճաշկերոյթ տուեց առանձնապէս հասարակութեան բարձր դասակարգին, երկրորդ օրը—միջին և սաղ դասակարգերին, երրորդ օրը—ռուսներին, չորրորդ օրը—իւր ընկերակիցներին։ Եւ այդ հինգ օրուայ ընթացքում ես այնքան աշխատել էի, այնքան այս ու այն կողմն էի վազվզել, որ յետոյ երկու օր յոգնածութենից սենեակից դուրս դալ չկարողացայ։

Այսպէս թէ այնպէս, ինձ համար երեսուն անցան հարսանիքի օրերը։ Ես մինչև անգամ զգում էի ինձ հարսանիքի հերոսներից մէկը։ Մի անձն, որով իմ ուշքն ու միտքն այդ օրերը չափազանց զբաղված էին—Թամարն էր, որի հետ ամեն օր և ամեն ժամ առիթ ունէի խօսելու։ Թամարը, հասակ առնելով, կրկնապատիկ գեղեցկացել էր։ Մարդ եմ ասում, այն էլ ինձ նման 20—21 տարեկան թարմ երիտասարդ, որ անտարբեր լիներ։ Նայելով նրա առոյգ և կարմրախայտ թշերին, սև ու կրակոտ աչքերին, նայելով շագանակագոյն խիտ մազերին, որոնք, թափվելով նրա բարձր ուսերի վրայ, հասնում էին մինչև մանիշակագոյն աթլասեայ հագուստի վրայ կապած ոսկէ գօտին, նայելով նրա գեղեցիկ ոսկէ մեդալիօնով զարդարված բարձր կրծքին—խոստովանվում եմ, ամեն անգամ սիրտս ժամացոյցի նման չրխկչրխկում էր։ Ես հազիւ հազ կարողանում էի զսպել ինձ, որ-

պէս զի չդյարձակվեմ նրա վրէն և չդրկեմ։

Հարսանիքի օրերը կանանց դասակարգը, ինչպէս ընդունված էր տեղական հասարակութեան մէջ, չէր խառնվում տղամարդկանց հետ։ Նա, բոլորովին անջատված, շարունակում էր զուարճութիւնը առանձին սենեակներում, ուր ոչ մի տղամարդ չէր համարձակվիլ ոտք դնել։ Սակայն տղա Գուլամեանցների ընտանիքի վստահութիւնն ես այնքան գրաւել էի, որ առանց որ և է արգելքի, համարձակօրէն, իբրև մէկն ընտանիքի անդամներից, մտնում էի կանանց դասի մէջ։ Օգտվելով այս արտօնութենից, որը կրկնապատկում էր միւս դոյծակատարների նախանձն, ես ամեն րոպէ կարողանում էի հանդիպել Թամարին։ Պէտք է ասած, որ Թամարը, չընայելով մեր դիրքերի տարբերութեանը, բոլորովին դուռդ չէր նայում ինձ վրայ։ Իսկ ես, ի հարկէ, օգուտ քաղելով նրա պարզ բնաւորութենից, սակս սակս մտնում էի նրան և խօսեցնում, ամենաչնչին առիթներ գտնելով։

Երբ մտիկ էի անում նրա գրաւիչ դէմքին, իմ գլխում հազար տեսակ մտքեր էին ծագում, իմ ֆանտազիան դադրում էր, և ես դարձեալ իմ երևակայութեան մէջ սկսում էի կառուցանել օդային ամրոցներ։ «Երանի այն բաղդաւոր մարդուն, մտածում էի, որը պիտի դառնայ քո տէրը, Թամար։ Բայց ով պէտք է լինի այդ մարդը։ Ի հարկէ, քաղաքի հարուստներից մէկը կամ ծերացած և մազերը սպիտակած մի տգեղ դրամատէր, որը կըտանի քեզ նման դեղեցիկ և թարմ օրիորդին, օրպէսզի մի քանի տարում քեզ էլ իրան պէս պառաւեցնի։ Ախ ոսկի, ոսկի, ինչեր չես անում դու, քո ձեռքովդ ինչ հնարներ չեն անցնում։ Ինչ կըլինէր,

որ ես էլ ունենայի քեզ, որ այսօր կարողանայի հա-
մարձակօրէն ժառանգել Թամարի նման օրիորդի մասին։
Բայց մի՛թէ առանց հարստութեան չի կարելի յոյս
դնել, մի՛թէ աղա Գուլամեանցները, եթէ ուզենան,
չե՞ն կարող ինձ բաղդաւորեցնել։ Մի՛թէ, եթէ ուզե-
նան, չե՞ն կարող ինձ մի օրում հարստացնել։ Ի՞նչ կը-
պակասի նրանց, եթէ իրանց ահագին հարստութեան
մի մասը տան ինձ և Թամարին էլ պահեն ինձ հետ,
ասելով. «տար, խաչի, ապրիր և ղուարճացիր»։ Այո,
եթէ ուզենան, կարող են անել, իսկ ես Թամարի համար
ուրիշներից վատ ամուսին չէի լինիլ։ Փառք Աստուծոյ,
ի՞նչ բան է պակաս ինձ, բացի հարստութենից։ Ինքս
ջահել, խելօք տղայ, գէմքով գեղեցիկ, մարմնով ա-
ռողջ, դործ կատարելում աշխոյժ և ժիր։ Թող ինձ մի
գումար տան և կըտեսնեն, թէ ես ինչպէս կըշահեց-
նեմ նրան և ինչպիսի վաճառական կըդառնամ։ Մի
տարում կըկրկնապատկեմ, կեռապատկեմ այդ գումա-
րը, կըդրաւեմ Ռուսաստանի բոլոր վաճառականների
հաւատարմութիւնն և, մեծ քանակութեամբ նրանցից
ապառիկ ապրանքներ բերելով այստեղ, օրէցօր կընդ-
արձակեմ իմ առուտուրի շրջանն և այնուհետև թող
մի հատ վաճառական դուրս գայ և ինձ հետ հա-
մարձակվի մրցել։ Կըփախցնեմ մի քանի տարում վա-
ճառականական ասպարիզից նրանց ամենքին և ինքս
միայն կըմնամ այնտեղ։ Իսկ Թամարը կապրի ինչպէս
թագուհի...

Այս երևակայութենից յետոյ, սթափվելով, սկը-
սում էի մտածել, թէ յիրաւի չի կարելի, արդեօք, մի
կերպ Թամարին տիրանալ։ Զըկա՞ն, արդեօք, այնպիսի
խորամանկութիւններ, որոնց միջոցով հնար լինէր այդ

թէև դժուար, բայց ոչ անիրագործելի նպատակին
հասնել։

Իմ գլուխն ողորմելի գլուխներից չէր։ Ես հաւա-
տացած էի, որ նա ընդունակ է ստեղծել հազար տե-
սակի ծրագրներ իմ յանդուգն ցանկութեանը կատա-
րումն տալու համար։ Բայց ժամանակը շատ կարճ էր։
Թամարի 17 տարին լրացած էր. նրա մարդու գնա-
լու ժամանակը հասել էր, այսօր կամ վաղը կարող
էր մեկը նշանվել նրա հետ։ Արդէն քաղաքում խո-
սում էին նրա մասին։ Այս միտքը սկսեց ինձ խիստ
ըղաղեցնել, և ես դիշեր ցերեկ տանջվում էի։ Աչխա-
տում էի հնարել զանազան մեքենայութիւններ, ո-
րոնց միջոցով կարողանայի կողմնակի կերպով արգե-
լել Թամարի մարդու գնալը, մինչև որ տեսնէի թէ իմ
վերջն աղա Գուլամեանցների մօտ ինչպէս է լինում։
Հարսանիքից յետոյ, երբ Թամարը բոլորովին դրաւել էր
իմ սիրտը, ես րոպէ անգամ չէի դադարում նրա մա-
սին մտածելուց։ Վերջապէս, դլխումս յղացաւ մի միտք,
որն և սկսեց ընդդիմադրել իմ յուսահատութեան։

Ցանկութիւն և յանցաւոր էր այդ միտքը. իմ կող-
մից հարկաւոր էր մեծ զգուշութիւն և համարձակու-
թիւն նրան իրագործելու համար, սակայն ինձ հա-
մար այդ միևնոյնն էր։ Ես երբէք ինձ նեղութիւն չը-
տուեցի մտածելու, թէ որքան չար և սատանայական
էր այդ միտքը, ըստ որում ես արդէն հասել էի այն
աստիճանին, որ իմ նպատակն արդարացնում էր ա-
մեն տեսակի միջոցներ, թէկուզ այդ միջոցները լինէին
սոսկ և անազնիւ։ Ես տեսնում էի, որ ուղիղ ճանապար-
հով դժուար է հասնել այն նպատակին, որի իրագոր-
ծումը մի անգամ ընդմիշտ պիտի ապահովէր իմ կեան-

քը։ Ուրեմն, ինչու չըդնալ ծուռ ճանապարհով, քանի որ կարող եմ հասնել բազդաւոր և նախանձելի ապագայի։ Դործիր, Խաչի...

VII

Անցան մի քանի ամիսներ յիշեալ միտքն իմ մէջ յղանալու օրից։ Մի օր Մակար աղան ինձ կանչեց դարձեալ իւր առանձնասենեակը։

—Խաչի,—դարձաւ նա ինձ,—դու պիտի վաղը ճանապարհ ընկնես Բագու և այսուհետև կըծառայես այնտեղ, ի հարկէ, էլի մեր դործերում։ Կըդնաս։

—Ի՞նչպէս կարող եմ համարձակվել ձեր հրամանը չկատարելու. թէկուզ դժոխք էլ ուղարկէք, դարձեալ պատրաստ եմ դնալու, միայն թէ ձեր հրամանը կատարվի։

—Շատ ապրես, որդի, վատ տղայ չես, Խաչի, և հէնց դրա համար էլ ուզում եմ քեզ և ոչ ուրիշին ուղարկել։ Դու այնտեղ կըլինես իմ եղբօր—Աբրահամ աղայի—ձեռքի տակ և պիտի կատարես այնտեղի բոլոր մեր դործերը. միւս դործակատարները քո ձեռքի տակ կըլինեն։ Լսում ես։

—Շատ չնորհակալ եմ, Աստուած ձեր հարստութիւնը հազար անդամ աւելացնի։

—Այդ պաշտօնը մեծ պաշտօն է հա, դու պէտք է շատ զդոյշ լինես նրանում։ Բագուի դործերն այսօրինի դործերի նման չեն։ Դու պէտք է կառավարես նաւթային հանքերը, ֆօտոդէնի դործարանը, դրասենեակին և, բացի դրանից, մերնոր չինուժիւններին էլ հսկես։

—Կաշխատեմ ամօթալի չըմնալ։

—Մտիկ արա, լաւ ծառայիր. եղբայրս էլ ինձ նման բարկացող և խստաբարոյ մարդ է, նա էլ, ինչպէս ես, չի սիրում իւր ասածը կրկնել։ Դու պիտի այնպէս վարվես նրա հետ, որ նրան չըբարկացնես, եթէ ոչ քեզ մի օր անդամ չի պահիլ։ Դու չըպիտի մտքի չափ անդամ նրա հրամաններից չեղվես։ Լսում ես։

—Ես կըլինիմ Աբրահամ աղայի սորուկը, ինչպէս նա կըհրամայի, այնպէս էլ կըվարվեմ։ Ես ձեր ծառան եմ, ձեր հացն եմ ուտում. սորուկն ինչ իրաւունք ունէ իւր տիրոջ հրամաններից չեղվելու։

Մակար աղան մի քանի րոպէ լռեց, մտածողութեան մէջ ընկնելով։

—Խաչի,—շարունակեց նա յանկարծ, կարծես, ծանրը քնից սթափվելով։

—Հրամայեցէք, աղա։

—Դու ինձ չմտա ես սիրում։

—Աւելի քան թէ ծնողներիս, ես վերև Աստծուն եմ պաշտում, ներքև ձեզ։

—Ինչ որ հրամայեմ, կըկատարի՞ս։

—Հրամայեցէք խեղդվել—նոյն րոպէին կըխեղդվեմ, հրամայեցէք ջուրն ընկնել—նոյն րոպէին ջուրը կընդնեմ, միայն թէ ձեր հրամանը կատարվի։

—Մի բան հարցնեմ, ճշմարիտը կըպատասխանես։

—Աղա, այդ ինչ խօսք է, որ դուք հրամայում էք։ Մինչէ երբևիցէ ես ձեր ասածներին սուտ պատասխաններ տուել եմ, որ դուք այժմ կասկածում էք։

—Շատ լաւ, բայց վախենում եմ, որ այս անդամ սուտ ասես։

—Էլ ինչ ասեմ, աղա, հարցրէք ու փորձեցէք։

—Խաչի, դու մեր Թամարի հետ խօսում ես։

—Ինչո՞ւ չէ, չորս տարի է ձեր տանը ծառայում եմ, ինչպէս կարելի էր, որ այդքան ժամանակ նրա հետ չըխօսէի։

—Իշնչ ես խօսում նրա հետ։

—Իշնչ պէտք է խօսի ծառան խանութի հետ. նա ինձ հրամաններ և պատուէրներ է տալիս, իսկ ես կատարում եմ։

—Բացի դրանից, ձեր մէջ ուրիշ խօսակցութիւն չի՞ եղել։

—Ծառայի և նրա խանութի մէջ չըգիտեմ էլ ուրիշ ինչ խօսակցութիւն կարող է լինել։

—Ե՞ւս-չո՞ւս ես տեսնվել Թամարի հետ։

—Տեսնվել ենք երբ որ նրան հարկաւոր է եղել ինձ մի հրաման տալու։

—Այդ ժամանակները նա քեզ հետ երկա՞ր է խօսել, թէ միայն հրամաններ է տուել։

—Բացի հրամաններից, ուրիշ ոչինչ բանի մասին ինձ հետ չի խօսել։

—Ճշմարի՞տ ես ասում։

—Թող Աստուծոյ կրակն իմ գլխին թափվի, եթէ ես ձեր առջև սուտ եմ խօսում։ Բայց, ազա, ես չեմ հասկանում, թէ ինչո՞ւ համար էք այդպիսի հարցեր տալիս ինձ։

—Ոչինչ, այդ քո գործը չէ։

Մակար ազան լռեց և կրկին մտածողութեան մէջ ընկաւ։ Նա ձեռները դարսեց մէջքին, ճակատը դարձալ կնճռոտեց, յօնքերը քաշ արաւ։ Պարզ էր, որ մի միտք էլի նրան յուզում էր։ Նա բարկացած էր։

—Գնա, չորերդ կապիր և պատրաստվիր, որ առաւօտը վաղ ճանապարհ ընկնենք։

Ես գլուխ տուեցի և հեռացայ իմ սենեակը։ Թէ ինչ պատճառով էր Մակար ազան ինձ Բագու ուղարկում և ինչու համար էր այդ հարց ու փորձն անում —այս մասին երկար չըմտածեցի։ Հէնց նրա առաջին խօսքերից ես իսկոյն հասկացայ, թէ բանն ինչումն է։ Իմ սատանայական միտքն արդէն իւր հետևանքները ցոյց էր տալիս։

Շորերս կապկպելու համար բաւական եղաւ միայն մի ժամ, յետոյ ես ընկայ անկողին քնելու, որ առաւօտը վաղ զարթնեմ, բայց քունը փախաւ աչքերիցս։ Ես երկար ժամանակ անկողնիս մէջ տրտմվում էի այս ու այն կողմ, չկարողանալով աչքերս անդամ փակել։ Ինձ չարչարում էր այն միտքը, որ, Շ... քաղաքից հեռանալով, այլևս չըպիտի տեսնէի Թամարին։

Այն սենեակը, ուր դիշերում էի, ծառաների սենեակից բաժանված էր մի բարակ տախտակեայ միջնապատով։ Իմ մահճակալը դրած էր այդ միջնապատի տակ։ Ծառաները սովորութիւն ունէին առհասարակ դիշերները ուշ քնել։ Նրանք իրանց գործերը վերջացնելուց յետոյ հաւաքվում էին միասին և սկսում պրոյց անել գրեթէ մինչև դիշերուայ կէսը։ Սովորաբար նրանց խօսակցութեան նիւթը լինում էին աղա Գուլամեանցների ընտանեկան և առևտրական գործերը։ Ձրադը հանգցրել էի, որ գոնէ մութ տեղ կարողանամ քնել, բայց ի զուր—քունը ինձանից փախչում էր։ Ձարահատեալ, ժամանակս անցկացնելու համար, ականջս դէմ տուեցի տախտակի միջնապատի ճեղքերից մէկին և սկսեցի լսել ծառաների խօսակցութիւնը։ Անօգուտ բան չէր։

—Ինչ ուզում ես, ասա, Գալուստ, խաչին չաստ

խորամանկ ազգ է։

Լսելով անուշս, շատ հետաքրքրվեցի և, ականջս աւելի մօտ սեղմելով ճեղքին, չունչս հատաքած, սպասում էի, թէ ինչ են խօսելու իմ մասին։

—Բայց Թամար խանումը այնպիսի ազդիկ չէ, որ շուտ խաբվի,—ասաց ծառաներից մէկը։

—Ինչքան էլ խելօք լինի, Խաչիկ ձեռքից չէր կարող պրծնել։

—Ես էլի չեմ հաւատում, որ դրուստ է ասածդ։

—Չես ուզում, մի հաւատար, բայց ամբողջ քաղաքն է խօսում այժմ։ Մի քանի ամիս սրանից առաջ դու ինքդ տեսնում էիր, թէ քանի տեղերից էին առաջարկութիւններ անում. այժմ ոչ ոք չի ուզում մոտենալ։ Հէնց սրանից կարող ես իմանալ, որ ամէնը, ինչ-որ խօսում են, ճշմարիտ է։ Չէ, անկրաւը խեղճ աղջկայ անունը լաւ խայտառակեց քաղաքում։

—Թէկուզ ամբողջ աշխարհը խօսի, ես էլի չեմ կարող հաւատալ։ Թամարին ես լաւ եմ ճանաչում. նա այնքան զգոյշ աղջիկ է, որ հազար Խաչիներ, միասին հաւաքվելով, չեն կարող նրան խելքից հանել։ Ես կարծում եմ, որ այդ սուտ լուրն ինքը Խաչին է տարածել։

—Ի՞նչ օգուտ ունի Խաչին այդպիսի սուտ լուրեր տարածելուց։

—Ինչ օգուտ։ Այ, լսիր. Խաչին Թամարի համար հոգի է տալիս, բայց շատ լաւ գիտէ, որ ուրիշը բան չի ընկնիլ։ Ահա նա լուր է տարածել, թէ իբր Թամարը սիրահարված է իբր վրայ, իբր վաղուց արդէն պաշտպանում են և այլն, հասկանում ես։ Էհ, քաղաքը կիմանայ այս բանը, էլ ով կրմօտենայ խեղճ աղջկան։ Ալա Գուլամեանցները կըտեսնեն, որ իրանց աղջկայ

անունը կոտրվել է, ճարահատված կըվերցնեն ու կըտան Խաչիկին։

—Օհո, օհո, տես որտեղից է բռնել անիրաւը,—դոչեցին միաբերան մեր ծառաները։

—Այ թէ ինչու համար է Մակար աղան նրանց այստեղից հեռացնում։

—Ուշ է, բանը վերջացած է։ Թամարի քարն արդէն հորի մէջ է ընկել և միայն Խաչին կարող է հանել նրան։

Ծառաները լռեցին։

«Կեցցես, հօրդա Խաչի, կեցցես,—դոչեցի ես մրթմրթում,—անկած ծառդ սկսում է պտուղ տալ։ Վնաս չունի, որ Թամարից հեռացնում եմ քեզ։ Ուշ է։ Այժմ այլևս ոչոք չի կամենալ Թամարին մօտենալ և իւր անունը խայտառակել։ Ո՞վ կըհամաձայնվի թքած պատառը կուլ տալ»։

Վերմակը քաշեցի գլխիս և հանգիստ քնեցի մինչև առաւօտ։

VIII

Բազուն, ծովեզրեայ այդ նոտածափակ արդիւնաբերական քաղաքը, նաւթային արդիւնաբերութեան շնորհով, այն ժամանակ արդէն Անդրկովկասեան երկրի առևտրական կենտրոններից մէկն էր։ Ի հարկէ, պարմանալի կըլինէր եթէ աղա Գուլամեանցների նման ճարպիկ վաճառականները դուրս չըսկսէին այնտեղ։

Աբրահամ աղան այն Թիֆլիսի հայ վաճառականներից չէր, որոնք իրանց քթի տակ եղած հարստութիւնները չեն նկատում։ Նա մի քիչ աւելի բարձր էր

իւր հեռատեսութեամբ քան ասիացի, թէև ոչ այնքան զարգացած, որչափ նոյն իսկ մի միջակ եւրոպացի վաճառական։

Այս պատճառով բնաւ չզարմացայ, երբ, հասնելով Բադու, հանդիպեցի աղա Գուլամեանցների այնպիսի գործերին, որոնց համեմատ Ե. քաղաքի առևտուրը խաղալիք էր։

Այստեղ նրանք ունէին բաւական մեծ քանակութեամբ նաֆթահողեր, երկու հանք, մի ահագին նաֆթադործարան, մի տակառագործարան և մի քանի նոր շինութիւններ, որոնք Բադուի մէջ առաջնակարգ տեղ պիտի բռնէին։ Ճշմարիտը խոստովանած, առաջին անգամ մանելով այդպիսի մեծ գործերի մէջ, մի տեսակ երկիւղ զգացի, որ մի գուցէ չկարողանամ կառավարել և Աբրահամ աղան, տեսնելով իմ անընդունակութիւնը, արտաքսի, թողնելով ինձ, ինչպէս ասում են, չոր տափի վրայ։ Բայց մտաբերելով իմ մինչև այդ ժամանակ ունեցած յաջողութիւնները, չվհատեցայ և, Աստուծոյ անունը տալով (նեղ տեղ ընկած ժամանակ ես դիմում էի նրան), սկսեցի գործել։

Սկզբում Աբրահամ աղան ինձ հետ վարվում էր մի փոքր մեղմ, այնպէս որ ես կարծեցի, թէ նա աւելի հաւքերող մարդ պիտի լինի քան թէ մակար աղան։ Բայց յետոյ, մի բանում նկատելով մի ընչին սխալ, նա այնպէս փոխվեց և կատաղեց ինձ վրայ, որ ես իմ կոյն հասկացայ, թէ ինչ տեսակ մարդու հետ գործ ունիմ։

Քանի որ Աբրահամ աղան Բադու էր գանվում, ես գործերի կառավարութեան մէջ կատարում էի երկրորդական դեր, իսկ երբ նա ճանապարհվում էր Ռուսաստան, իմ գործերը բազմապատկվում էին, ես

դառնում էի լիակատար կառավարիչ։ Հարկաւոր էր մեծ հաւատարմութիւն գործակատարի կողմից, որ աղա Գուլամեանցների նման զգոյշ և խորատես մարդիկ յանձնէին նրան այդ գործերի կառավարութիւնը, ուր գործակատարը, եթէ ուզենար, կարող էր նրանց գլխին լաւ օյիններ բերել։

Ես ընդունում էի Ռուսաստանից եկած փողերն և յանձնում բանկը, կառավարում էի ֆօտօգէնի գործարանը, հանքերը, տներն և այլն։ Բաժանում էի գործակատարների, մշակների և արհեստաւորների ռոճիկներն ու վարձերը։ Մի խօսքով, ամեն ինչ իմ ձեռքումն էր։

Նաֆթային առուտուրի յաջող տարիներն էին։ Աղա Գուլամեանցները ճանապարհում էին Ռուսաստան մեծ քանակութեամբ ֆօտօգէն։ Իմ շահասիրական ծառայութիւնը յագեցնելու համար պաշտօնս մի շատ յարմար առարկայ էր։

«Ճաշ յիմար մարդ կըլինիս, Խաչի, եթէ քաց թողնես այսպիսի յաջող հանգամանքները։ Մի պատրաստի, քանդված ասկէ հոր է աղա Գուլամեանցների գործը քեզ համար, օգտվիր դէպքով և քանի որ այս հորի մէջ ես, աշխատիր որքան կարելի է դրպանդ ածուր լեցնել»։ Բայց ինչպէս լեցնէի դրպանս, որ աղա Գուլամեանցները չիմանային։ Մեծ անհեռատեսութիւն կըլինէր իմ կողմից, եթէ ես, յափշտակվելով յարմար առիթից, բանս դրատէի միանգամից, որովհետև աչքի առջև ունէի մի ուրիշ նպատակ ևս. ես ցանկանում էի Թամարին ձեռքից բաց չըթողնել։ Աղա Գուլամեանցներին փեսայ լինելը խիստ գոգդուում էր իմ ինքնասիրութիւնը։ «Լաւն այն է ոչխարին այնպէս կռտել,

որ նրան զգալի չըլինի, հարկաւոր է միւսսը զգուշութեամբ բանեցնել և թոյլ չըտալ, որ նա հասնի մինչև կաշին, եթէ ոչ, Խաչի, անզգուշութիւնը կըհասցնէ քեզ վատ հետևանքների»,—ասացի ինքս ինձ։

Միջոցները շատ կային. ես նրանցից ընտրեցի այն պիսինները, որոնք հեշտ և ձեռնտու էին։ Ամեսկան մի անգամ ես բաժանում էի տակառագործների վարձն և մշակների ռոճիկները։ Ոչինչ այնքան հեշտ չէր, որքան սրանց հաշիւների մէջ խառնակութիւն մտցնելը։ Ես աղա Գուլամեանցներին տուած իմ ամսական հաշիւների մէջ ցոյց էի տալիս մի մշակի փոխարէն երկուսը, աւելացնում էի տակառների գինը։ Գործակատարական բարբառով հաշիւների մէջ այդ կոչվում է «վերադիր», և ես, ամեն անգամ «վերադիր» անելով, երկուսատուց յետոյ հաշուեցի և տեսայ, որ ինձ մօտ գոյացել է մի նշանաւոր գրամագլուխ, որով կարող էի բոլորովին հեռանալ աղա Գուլամեանցներից և ինքնորոյն վաճառական դառնալ։ Սակայն ես չըշտապեցի։ Հարկաւոր էր առաջ գնալ, մի անգամ արդէն սկսել էի, այլևս յետ կանգնելն ինձ համար անհնարին էր։ Մանրավաճառ Թորոսի տասած դասընկերն այլևս ինձ համար պարզվել էր։

Բայց յանկարծ իմ վիճակը փոխվեց. մի օր Աբրահամ աղան ինձ հրաւիրեց իր մօտ և յայտնեց, թէ ես պիտի գնամ նրա հետ Ռուսաստան։ Այս տեղափոխութեան պատճառը գիտէի ինչն էր։ Աղա Գուլամեանցների ընտանիքն եկել էր Բագու։ Ինձ հեռացնում էին Թամարից, որի մասին իմ տարածած լուրը քանի գնում այնքան զօրութիւն էր առնում, չընայելով, որ երկու տարի էր նրան չէի տեսնում։

Այս անգամ ես ես հնազանդվեցի Աբրահամ աղայի հրամանին և մի գեղեցիկ օր ճանապարհվեցի նրա հետ Ռուսաստան։ Փոյթ չէ—ասացի ինքս ինձ—ես Թամարի վարկն այնպէս չեմ գցել, նրա անունն այնպես չեմ խայտառակել, որ մեկը վատահանայ նրան մօտենալ։ Ինչ կուզեն, թող անեն Գուլամեանցները, վերջ ի վերջոյ Թամարն իմն է։

IX

—Խաչի,—ասաց մի օր ինձ Մօսկվայում Աբրահամ աղան ուրախ ժամանակը,—քանի տարի է, որ մեզ մօտ ծառայում ես։

—Արդէն հօթերորդ տարին է։

—Այդ հօթ տարում դու քանի անգամ ես մեզանից փող առացել։

—Չորս անգամ Մակար աղայից եմ առացել՝ երկու երկու հարիւրական րուբլի, երկու անգամ էլ ձեզանից՝ հինգ հարիւր րուբլի, ընդամենը հազար երեք հարիւր րուբլի։

—Ի՞նչ ես արել այդ փողերը։

—Ուղարկել եմ հօրս։

—Այդ հօթ տարում ուրեմն այդքան ռոճիկ ես առացել մեզանից։

—Այո։

—Ձո ծնողներն աղքատ են։

—Իմ ռոճիկն է միայն նրանց եկամուտը։

—Ուրեմն շատ աղքատ են ապրում։

—Շատ աղքատ։ Մերուքեան հասակում շատ օրեր քաղցած են անցկացնում։ Բայց ինչ պէտք է ա-

րած, ազա, Աստուծոյ կամքն է, երևի, նրանց ճակատին լաւ ապրուստ չի գրված։

Աբրահամ ազան ձեռը տարեց գրպանն և ահագին պօրտմօնէն հանեց։

—Առ այս հազար մանէթը,—ասաց նա, հանելով 10 հատ կանաչ կարմիրանոցներ և դնելով իմ առջև սեղանի վրայ։

—Նախ և առաջ քեզ համար մի երկու ձեռք լաւ հագուստ դնիր։ Քո այժմեան հագուստը շատ հին է և կեղտոտ. մեր անուան համար լաւ չէ, որ դու այդպէս գաս և հագնուս։ Իսկ մնացեալն ուղարկիր հօրդ։

—Աստուած ձեր կարողութիւնը տասն անգամ աւելացնի, Թող նա ձեզ միշտ իմ դլխին տէր պահի, որ ես էլ ձեր շուաքում ապրել կարողանամ։

—Բայց լաւ ծառայիր, խարդախութիւն չանես իմ գործերում։

—Թող ձեր հացն իմ աչքերը կուրացնի, եթէ ես մինչև օրս մտածել եմ կամ այսուհետև պիտի մտածեմ ձեր կամ ձեր շահերի դէմ։ Երկնքում Աստուած, ներքև դուք էք ինձ համար. իմ խիղճն ինչպէս Թոյլ կտայ ձեր դէմ խարդախութիւն անել։

—Լաւ, դնա։

Որպէս պի իմ հնորհակալութիւնն աւելի զգալի կերպով արտայայտեմ Աբրահամ ազային, ես չոքեցի նրա առջև և մի քանի անգամ համբուրեցի նրա աւրտուկի փէշերն և կօշիկների ծայրը։ Աբրահամ ազան չընդդիմացաւ այս բանին։

—Ձեր ոտը գրած տեղը Թող իմ գլուխը լինի,—ասացի ես ճիշտ արևելեան կեղծաւորութեամբ, ձայնս դողացնելով, որպէս Թէ զգացմունքից յուզված եմ։

—Շատ ապրես, լաւ է, վերկաց, միշտ այդպէս երախտագէտ եղիր ազաներիդ։ Իսկի չմոռանաս այն մարդկանց լաւութիւնը, որանք քեզ պահպանում են և պաշտպանում։

—Թող Աստուած ինձ մոռանայ և իմ գլխին կըրակ Թափի, եթէ ես երբևիցէ մոռանամ ձեր լաւութիւնները։

—Բաւական է, դնա այժմ գործիդ։

Ես կրկին անգամ չոքեցի Աբրահամ ազայի առջև և կօշիկները համբուրեցի, յետոյ, վերկենալով ու յետուշտա դնալով, դուրս եկայ նրա սենեակից։

«Խաչի,—ասացի ինքս ինձ, պատկերով անկողնում այդ երևկոյ,—բաղդն երևսիդ ծիծաղում է։ Ազա Գուլամհանցներին կուրացրել ես, մանրավաճառ Թորոսի խօսքերը կատարվում են, դու արդէն մտել ես նրանց դէպանը։ Այժմ քեզ պակաս է միայն Թամարը. եթէ նրան էլ ճանկես, այն ժամանակ քո մի քանի տարի առաջ երևակայած փառաւոր ապագան այլևս իրականացած է։ Ուրեմն, շարունակիր։ Խորամանկութիւնն և չողոքորթութիւնը գործեղ միջոցներ են, նրանք օգնել են քեզ մինչև այսօր, կօգնեն այսուհետև էլ, մի բաց Թողնիր ձեռքիցդ այդ միջոցները»։

X

Արդէն երեք տարի էր, որ ես Ռուսաստան էի գանվում։ Թէ ինչպէս անցկացրի իմ ժամանակն այդ երեք տարուայ ընթացքում—այս կըլինէր մի երկար պատմութիւն, եթէ ես գրէի իմ յիշատակարանում։ Այսքանը միայն կասեմ, որ իմ կեանքը շատ ուրախ և

զուարճալի էր անցնում Յուսասատանում, երբ Աբրահամ ազան այնտեղ չէր լինում։ Այդ ժամանակ նա իր քաղաք որ գնում էլի, ամենասառաջին հիւրանոցումն էլի իջնում, ամենաթանգագին և ամենալինուխ կերակուրներն էլի ուտում, ամենանուրբ եւրոպական խմիչքներն էլի խմում։ Գիշերները մինչև լոյս անց էլի կացնում զանազան զուարճասեղերում—թատրոնում, օպերայում, ցիրկերում, իսկ մեծ մասամբ կօֆէշանտաններում։ Քիչ վազ չեմ ծախսել այդ միջոցներին կանանց վրայ։ Պատահել է, որ այս կամ այն ինձ նման գործակատարի ձեռքից նրա սիրեցեալ տարփածուհին ջրդրուշ խլելու համար չեմ խնայել հազարներ։ Մի խօսքով, այդ երեք տարին ես անց եմ կացրել իմ կեանքում շատ չքեղ և շատ ուրախ, իմ օրերը սահում էին աննկատելի կերպով, ես ինձ զգում էի դրախտի մէջ։ Գողի մասին մտածել չէիքար. ազա Գուլամեանցների դրպանն ինձ համար բաց էր։

Իսկ երբ Աբրահամ ազան գալիս էր, ես իսկոյն հագուստս էլ, բնակարանս էլ, ուտելի խմելիս էլ փոխում էի և սկսում էի չափաւոր կեանք վարել, որպէս զի համեստութիւնս ցոյց տամ նրան։

Այսպէս անցան առաջին երեք տարիները մինչև որ պատահեց մի անսպասելի դէպք, որը դարձեալ փոփոխութեան ենթարկեց իմ վիճակը։ Առաւտուրի խառն ժամանակն էր. ես գտնվում էի Նիժնի-Նովգորոդեան ծովամաճառում, իսկ Աբրահամ ազան Մոսկվայում։ Մի օր յանկարծ տատայ Մոսկվայից մի հեռագիր, թէ Աբրահամ ազան մահամերձ հիւանդ է և պահանջում է ինձ։ Ես նոյն օրն և եթ ճանապարհվեցի, թողնելով բոլոր գործերը տակն ու վրայ։

Աբրահամ ազային ես խնամքս տայ մահամերձ դրութեան մէջ։

—Այդ ինչ է պատահել ձեզ, ազա, ինչ քամբախտութիւն հասցրեց ինձ Աստուած,—գոռացի ես լայլ ձայնով, ընկնելով նրա մահճակալի վրայ և համբուրելով նրա ճակատը։

—Խաչի, մեռնում եմ,—պատասխանեց նա թոյլ ձայնով։

«Չհաննամը որ մեռնում ես, մի քիչ էլ վազ պիտի մեռնէիր»,—ասացի ես մտքումս։

—Աստուած ոչ անի, ինչ ես ասում, ազա։

—Չէ, մեռնում եմ, Խաչի, այն անխղճմտանքը տունս քանդեց,—շարունակեց Աբրահամ ազան, արնքանքալով դրութը բարձրացնելով բարձի վրայից։

—Ո՞վ է ձեր տունը քանդել, ազա, ինչ էք հրամայում,—հարցրի ես զարմացած։

—Հրէայ Շաբաթը տունս քանդեց, նա... քառասուն հազար... քառասուն հազար... ախ...

Աբրահամ ազան չկարողացաւ աւարտել իւր խօսքը, նրա թուլացած դրութն ընկաւ կրկին բարձի վրայ։ Ես նկատեցի նրա աչքերում արտասուք։

—Ի՞նչ քառասուն հազար, ազա, ասացէք, տեսնեմ ինչ է արել անիրաւ Շաբաթը։

—Փողերս կուլ է տալիս... հաշա է անում... ասում է պարտական չեմ։

—Ի՞նչ փողեր։

—Այս տարուայ փետրվէնի փողերը, ասում է տըւել եմ Խաչին. կերաւ այն անխղճմտանքը... էն, էն...

Մի փոքր միջոցից յետոյ եկաւ բժիշկը. ես նրանից հարցրի ինչ է Աբրահամ ազայի յանկարծակի հի-

անդուրեկան պատճառը։

—Կաթուած,—պատասխանեց բժիշկը կարճ ու կտրական։

—Ցոյս կայ, որ առողջանայ։

—Հազիւ թէ մինչև երեկոյ ապրի։

«Աստուած ոյժ որ չապրի»,—ասացի մաքուռս, խօսքը հառաչելով։ Բժիշկին, ի հարկէ, այնպէս իմացաւ, որ ես ցաւալուց եմ հառաչում։

—Խաչի,—դարձաւ ինձ Աբրահամ ապան բժշկի հեռանալուց յետոյ։

—Հրամայեցէք, ապա։

—Ես մեռնում եմ, ներսիր ինձ, ես քեզ շատ եմ նեղացրել, շատ եմ չարչարել, զուր տեղը շատ եմ հայհոյել, յիշողները տուել, ես մեղաւոր եմ, ներսիր...

—Ի՞նչ էք հրամայում, ապա, ես ինչ մարդ եմ, որ դուք ինձանից ներողութիւն էք խնդրում։

—Չէ, ներսիր...ներսիր. ես քեզ կենդանու նման չարչարել եմ, ես քեզ երբէք մարդու տեղ չեմ դրել, միշտ քեզ իմ կօշկինների ստոր եմ համարել, ներսիր, ես մեղաւոր եմ։ Բայց արա այն անդուլը, նրա մէջ հինգ հազար մանէթ փող կայ, վերցրու, քեզ եմ բաշխում մեղքերիս փոխարէն։

—Ինձ փող հարկաւոր չէ, ինձ ձեր կեանքն է հարկաւոր, ապա,—ասացի ես և իսկապէս արտասուեցի։

—Հեռացրէք Մակար ապային, որ չուտով ճանապարհվի. գոնէ դայ դիակիս հասնի։

—Այս րոպէիս կրկատարեմ ձեր հրամանը։

Իրիկնադէմին Աբրահամ ապայի լեզուն կապվեց, իսկ դիշերուայ կիսին նա հոգին աւանդեց։ Առաւօտն ես հեռացրեցի Մակար ապային նրա մահուան մասին։ Եւ

քրքրեցի Աբրահամ ապայի անդուլն և, բացի հինգ հազարից, ոչինչ չգտայ։

«Այս էլ մի բան է»,—ասացի և դրեցի հինգ հազարը դրպանս։

XI

Աբրահամ ապայի թաղումից անցել էր մի տարի։ Ես դանվում էի Բագվում։

Թամարը դեռ տանը նստած էր. նա սպասում էր փեսացուի, բայց փեսացու չկար ու չկար, աչքաները չորացել էր, իսկ ժամանակը վաղուց էր անցել։ Աղա Գուլամեանցների համար Թամարը մի ծանր բեռն էր դարձել, հարկաւոր էր այդ բեռնից մի կերպ ազատվել։

Մի օր Մակար ապան հրաւիրեց ինձ իր առանձնասենեակը։ Հրաւիրեց եմ ասում, որովհետև այլևս ինձ ոչ ոք հրամայել չէր կարող, իմ լեզուն երկարել էր, և ապա Գուլամեանցները այլևս չէին կարող առաջուայ նման ինձ հետ վարվել ինչպէս մի ստրուկի, մի սնապին կենդանու հետ։

—Խրիստոֆոր Սերգեիչ, համեցէք,նստէք,—դարձաւ ինձ Մակար ապան, առաջարկելով ինձ աթոռ։

Տեսնում էք. կօշկակար Սարգսի ապայ «եօրդա խաչին» այժմ Խրիստոֆոր Սերգեիչ է դառել, և գոռոզ ապա Մակար Գուլամեանցը նրան աթոռ է առաջարկում։ Դէհ, լվվիր, խաչի, ինչպէս ձուկը ջրի մէջ։

—Ի՞նչ էք կամենում ասել, Մակար Պետրովիչ,—ասացի ես համարձակօրէն, «ապայի» փոխարէն Մակարի պոչին կպցնելով «Պետրովիչը»։

—Ոչինչ, մի փոքր ուշում եմ քեզ հետ ժամանակ անցկացնել։ Ա՜յ ապա, Գալուստ, չուտ արա, սուրճ բեր,—դարձաւ նա ծառային։

Ես չըհասատացի Մակար ապային, թէ նա ինձ հրաւիրել է լոկ ժամանակ անցկացնելու համար։ Նայելով նրա դէմքին, իսկոյն հասկացայ, որ անշուշտ մի կարեւոր գործ ունի հետս։

Ծառան երկու բաժակ սուրճ բերեց։

—Համեցէք, Խրիստաֆոր Սերգէյիչ, վերցրէք ձեր բաժակը,—դարձաւ Մակար ապան հրամանոցս վերին աստիճանի քաղաքավարութեամբ։

Որովհետեւ մինչեւ այն օրը սովոր չէի Մակար ապայի այդ տեսակ յարարերութեան, ուստի խիստ խորթ թւաց ինձ նրա վարմունքը։ Ես չփոթմունքի։ Թէեւ այլեւս ոչինչ կախում չունէի ոչ ոքից, որովհետեւ արդէն ազատ էի, բայց, ինձը տարի ծառայելով ապա Գուլամհանցներին, ինձը տարի ուրիշների հրամանները կատարելով, ինձը տարի նրանց ձեռքում հասարակ մեքենայի դեր կատարելով, ես կամայ ակամայ կորցրել էի իմ ինքնուրոյնութիւնը, մեռցրել էի իմ սեպհական զգացմունքները։

Ընտանեկան եւ առեւտրական զանազան գործերի վրայ խօսելուց յետոյ Մակար ապան կամաց-կամաց խօսակցութեան նիւթը փոխեց։

—Խրիստաֆոր Սերգէյիչ, քանի՞ տարի է, որ դուք մեր գործերում ծառայում ես,—հարցրեց նա յանկարծ։

—Անցեալ գարնան ինձը տարին լրացաւ, այժմ տասներորդն է,—պատասխանեցի ես։

—Քանի՞ տարեկան կրլինէիր մեզ մօտ մտնելու ժամանակ։

—Տասն եւ եօթ տարեկան։

—Ուրեմն այժմ քսան ու վեց տարեկան ես։

—Տասն եւ եօթ, այն էլ ինձը, այո, ուղիղ 26 տարեկան եմ։

—Բաւական մեծացել ես,—ասաց Մակար ապան, ժպտալով։

—Այո՛, սկսում եմ ծերանալ։

—Այժմեան ջահիլները մեզանից շուտ են ծերանում,—ասաց Մակար Պետրովիչը կատակով։—Բայց դեռեւս ինչիցն է այդ։

—Ինչիցն է, Մակար Պետրովիչ,—հարցրի ես հետաքրքրութեամբ։

—Նրանից, որ այժմեան ջահիլները չեն պահպում եւ իրանց կեանքն անց են կացնում շռայլութեամբ։

—Պահպողները մի՞թէ չեն ծերանում։

—Ծերանում են, բայց ժամանակին եւ ոչ թէ չըպահպողների նման ժամանակից քսան տարի առաջ։ Ես պահպելիս 37 տարեկան էի, բայց այս վեց տարում ես բաւական զանազանութիւն եմ դնում իմ առաջուայ ու այժմեան առողջութեան մէջ եւ շատ ափսոսում եմ, որ տասը տարի առաջ չեմ պահպել։ Ես այժմ եմ հասկանում, թէ ամուսնութիւնն ինչքան օգտաւէտ է մարդուս։ Սխալված եմ համարում այն մարդուն, որը ժամանակին չի պահպում։

—Լաւ կլինէր, եթէ ամեն մարդ կարողութիւն ունենար ամուսնանալու, բայց չէ որ շատերն իրանց չոր գլուխը չեն կարողանում պահել, ինչպէս կարող են ընտանիք պահել։

—Ով որ ուզենայ պահպել, կարողութիւն էլ կըպտնի։

—Ո՞րտեղից կարող է գանել Օրինակ, ինձ նըման մարդ ինչպէս կարող է ծառայելով ընտանիք պահել,—ասաց ես, հասկանալով մտածմբ Մակար ապային միտքը։

—Քանի որ մարդ մենակ է, Աստուած էլ նրան մէկի ապրուստն է տալիս, բայց երբ ամուսնանում է, Աստուած ինքը նրա ընտանիքի հոգսն էլ է տեսնում։ Օրինակ դու այժմ մենակ ես, նա քեզ քո ապրուստը տալիս է, բայց երբ պսակվես, քո ընտանիքի հոգսն էլ կանէ։

—Եթէ իմանամ որ Աստուած կարողութիւն կըտայ ապրելու հէնց վաղը կըպսակվեմ։

—Փորձիր և տես կըտայ թէ չէ։ Արի, ճշմարիտ, խրիստոսիօր Պետրովիչ, քեզ պսակենք։ Վաղուց եմ մըտածում, որ հարկաւոր է քեզ պսակել և շատ ժամանակ է, որ մի լաւ, սիրուն աղջիկ աչքի առջև ունիմ քեզ համար,—ասաց Մակար ապան, դարձեալ ժպտալով։

—Ո՞վ է այդ աղջիկը, Մակար Պետրովիչ, ես պիտեմ, որ ձեր հաւանածն անպատճառ լաւը կըլինի,—հարցրի ես, միամիտ ձևանալով։

—Մի երևելի, հարուստ և ազնիւ ընտանիքի աղջիկ, որի վրայ շատերն աչք ունին։

—Ո՞վ է այդ ընտանիքը։

—Մեր ընտանիքի նման մէկը։

—Ես այս քաղաքում ձեր ընտանիքի նման ուրիշը չեմ ճանաչում։

Մակար ապան դրանը դարկեց, և նոյն րոպէին իմ առջև ներկայացաւ ապա Գուլամհանցնների ամբողջ ընտանիքը։

Ես նկատեցի նրանց մէջ դլուխը քաշ ձգած և

ամօթից կարմրած Թամարին, որի ձեռից բռնած ներս քերեց Մակար ապայի ամուսինը։

—Այ քեզ այն ընտանիքը, սա էլ իմ ասած աղջիկը։ Հը՛մ, այժմ ճանաչում ես թէ ոչ, լաւ մտիկ արա,—ասաց Մակար ապան, բռնելով Թամարի ձեռից և առաջ քաշելով։

Ես ամօթից կարմրեցի և չկարողացայ ոչինչ խօսել։

—Ձեռ ձեռի տուէք, ես ձեզ վաղուց եմ մտքումը նշանել։

—Ես անդադարաբար ձեռս մեկնեցի Թամարին։ Գործողութիւնն այնքան յանկարծակի եղաւ, որ ես, ճշմարիտն ասած, միացել էի չուտրած։

—Ի՞նչ ես սառել, այ կնիկ, Գալուստին հրամայիր շամպանակից բերի։

Անցան առաջին վայրկեանները, և ես, փոքր առ փոքր ուշքի գալով, սկսեցի ուշադրութեամբ քննել իմ դերութիւնը։

—Աստուած հնարհատու անի, բարով շուտով պըսակենք,—ասաց Մակար ապան, դառարկելով շամպանիայով լի բաժակը։

—Ամէն, ամէն, Աստուած հնարհատու անի,—կըրկնեց ամբողջ ընտանիքը միաբերան։

—Ես իմ կողմից նշանեցի, վաղը քահանայ կըկանչենք, որ «պահպանիչն» ասի, բանը վերջանայ,—ասաց Մակար ապան, մի մեծ ադամանդեայ մատանի անցկացնելով իմ մատին, միւսը Թամարի մատին։

«Եօրղա Խաչի, բանդ չինվեց, բայց մի յափըշտակվիր, ոտդ ամուր դիր»,—մտածեցի ես իմքոյին։

—Մակար Պետրովիչ, ես արժանի չեմ այս փառքին։

—Ամենից արժանաւորը դու ես, ես հէնց վինչև

այսօր Թամարին քեզ հետ տանել։

—Չէ, Մակար Պետրովիչ, ինձ համար ազգատ մարդը անարժան է ձեր նման հարուստ ընտանիքի փեսայ դառնալուն։

—Սուս արա, դատարկ, դատարկ մի դուրս տուր, ազգատին հարստացնելը Գուլամեանցների ձեռքում մի դժուար բան չէ։ Քանի ու հինգ հազար մանեթ օժիտը Թամարի դլխին է։

«Փառք Աստուծոյ, ես էլ հէնց այդ էի ուզում լսել քո բերանից»,—ասացի մտքումս և մտածեցի քաշելի մասին։

Պէտք է ասած, որ այն օրուանից երբ Թամարը գրաւել էր ուշադրութիւնս, երբէք մի անգամ էլ ինձ չեմ տուել այն հարցը, թէ արդեօք ինքը Թամարը կը համաձայնվի իմ ամուսինը դառնալ։ Ես այս հարցով գլուխ ցաւացնելն աւելորդ էի համարում, որովհետև գիտէի, որ Թամարի կամքը ոչինչ նշանակութիւն չէր կարող ունենալ։ Այդ Գուլամեանցների ընտանիքում, ինչպէս վերը յիշել եմ, դեռ տիրում էր ասիական բռնակալութեան ոգին։ Այնտեղ Թամարի համակրութիւնը դեպի իր նշանածն ոչինչ նշանակութիւն չէր կարող ունենալ։ Այնտեղ ամեն ինչ կախված էր ընտանիքի գլխաւորներից։ Ահա ինչու սկզբից մինչև վերջը աշխատում էի միայն Մակար պապի վրայ ազդել։

XII

Եօթ տարի է, որ ես, Խրիստաֆոր Սերգէյիչ պապ Աբուչանովս, պապ Գուլամեանցների փեսան եմ։ Նրա տած երեքյարկանի սեպհական տանս մէջ, իմ առանձնասենեակում, գործերից ազատ ժամանակ, ես երբեմն երբեմն մտաբերում եմ իմ անցեալն և համեմատում նրան ներկայի հետ։ Յիշում եմ այն ազգատ ընտանիքը, այն պատառոտված ցնցոտիները, ծակ կօշիկները, որ ես հագնում էի այդ ժամանակ, յիշում եմ, համեմատում իմ այժմեան դրութեան հետ և ինքս ինձ վրայ զարմանում։ Յիշում եմ այն օրն, երբ հայրս հրաւիրեց իւր բարեկամներին մեր տուն, Տէր-Վահակի մօտ ուսումս աւարտելուց յետոյ իմ ապագայի մասին խորհրդակցելու։ Յիշում եմ դարբին Մարութի տուած յիմար խորհուրդը, որ ես արհեստաւոր դառնամ. յիշում եմ և իմ այժմեան դրութիւնը համեմատում Մարութի որդու դրութեան հետ, որն իւր հօր պէս պարապում է դարբնութեամբ և կեզտի ու մուրի մէջ հազիւ հազ քաշքշում է իւր կեանքը։ Յիշում եմ այս բոլորն և փառք տալիս Աստծուն, որ չբթողեց հօրս հետևել դարբնի խորհրդին։ Իսկ ինչ վերաբերվում է մանրավաճառ Թորոսին, որն այսօր մեր գաղաքում առաջին դրամատէրն է, նրա խրատներն երբէք չեմ մոռացել և չըպիտի մոռանամ։ Մտաբերում եմ նրա հօրս տած խօսքերը. «տուր Խաչին մի վաճառականի մօտ գործակատար, և նա չուտով կըզտնէ փող աշխատելու գաղտնիքը»։

Ես գաղտնիքը գտայ, գրաւելով պապ Գուլամեանցների հաւատարմութիւնը ներելի և աննեղելի միջոցներով։

Շատ բաներ եմ արել և արել եմ առանց ինքս ինձ հաշիւ տալու, առանց գիմելու իմ խղճին և նրանից թոյլտուութիւն խնդրելու։ Կեզծաւորել եմ, չորթոլել և ստորացել այն մարդկանց առջև, որոնք ին-

ձանից զօրեղ են եղել և որոնցից ամենակարեւորն եմ ուղեցել խաբել մոլորեցրել եմ ինձանից թոյլերին և պակաս խորամանկներին։ Եւ այժմ ոչ ոք չի կարող երես առ երես ինձ յանդիմանել, որովհետև ես փող ունիմ, հարուստ եմ։ Իսկ եաևիցս ով ուզում է և ինչ ուզում է թող խօսէ, փոյթ չէ։ Առերես ես այժմ ամենից յարգվում եմ, և այսքանը բաւական է։

Երեկ Տէր-Վահանից նամակ առացայ, որով նախկին ուսուցիչս խնդրում է Շ...քաղաքի կիսախարխուլ եկեղեցու համար մի զանգ բերել տալ Ռուսաստանից։ Ես պատասխանեցի, թէ ուրախութեամբ կըկատարեմ նրա խնդիրը։ Այժմ կարող եմ և միջոց ունիմ բարեգործութիւններ անելու, ես, Խրիստոֆոր Սերգէյիչ տաղ Առուշանովս...

1883 թ., նոյեմբեր. Թիֆլիս։

ԽՆԱՄԱԾԱՐ

վէպիկ

I

Ցունիսի սկիզբն էր։ Բաղուի նաւահանգստի առաջնակարգ կայարաններից մէկի վրայ եռուզեռ էր ծավալվել այդ իւնաբերական քաղաքին յատուկ աշխատասէր կեանքը։ Եղանակը սաստիկ շոգ էր։ Միջօրէի արեգակը պայծառ հորիզոնից իր այրող ճառագայթները սփռել էր խաղաղ ծովի հայելանման մակերևոյթի վրայ։ Քամու նշոյլ չկար։ Օդը պղպջում էր այնպէս, ինչպէս պղպջում է թոնրի երեսին կրակի զօրութենից։ Երբեմն երբեմն այս կամ այն տեղում ծովի հարթ մակերևոյթը սոսափվում էր դէս ու դէն լողացող փոքրիկ մակոյկների թիերի հարուածներից։ Այդ ժամանակ պարզ, ջրի մեղմ ալիքները մի առանձին հրճուանքով խաղում էին արեգակի հետ, փշրելով նրա ոյժը բիւրաւոր գոհարափայլ ճառագայթների։ Մակոյկներն անցնում էին, անջաւաժ ջուրը վիանում էր և ծովի մակերևոյթը կրկին հարթվում։

Կայարանն երեք կողմից շրջապատված էր բազմաթիւ փոքր ու մեծ շոգենաւերով և առագաստանաւերով։ Մի քանիսը շոգենաւերից լիքն էին զանազան

սեսակի ապրանքներով և սպասում էին դասակարկվելու կամ ճանապարհ ընկնելու։ Իսկ շատերն արդէն դասակարկվել էին և պատրաստվում էին նորից բարձվելու։ Դրանք այն նաւերն էին, որոնք դէպի սպասում են Բագուի և Հաշտարխանի միջև, առաջինից տանելով դանազան նաֆթային մթերքներ, իսկ վերջինից դէպի Բագու բերելով Ռուսաստանի ապրանքներ։ Առագաստաւոր նաւերն իրանց խառնիճափնճ առագաստներով, անթիւ, դէպի այս ու այն կողմերը ճիւղաւորված պարաններով, իրանց կեղտոտ տախտակամածներով և փայտապատ կեղևներով վիթխարի, ամբաշէն և երկաթապատ հզօր շոգենաւերի մօտ նմանվում էին գիւղական խրճիթների քաղաքի բարձրաշէն տների դիմաց։ Այդ հսկայական նաւերը ճանապարհորդում են Պարսկաստանի և Բագուի միջ տեղ։ Պարսկաստանի գլխէն տարբեր արդիւնաբերութիւնները, որ մեծ մասամբ մրգեղէններից է բաղկացած, տեղափոխվում է այդ նաւերով։

Աշխատանքը կայարանի շուրջը, ծովի երեսում, եղերքի մօտ բորբոքման մէջ էր։ Ահա մի կողմում նաւերից մինը բեռան ծանրութիւնից մինչև տաններկու տաներնք կանգնաչափ խոված ջրի մէջ, հանդարտութեամբ օրօրվում է այս կողմ այն կողմ։ Ամրակազմ և առոյգագէմ թուրք նաւաստիները դուրս են կրում ապրանքների ահագին հակերը։ Արեգակի տաքութենից և աշխատանքի ծանրութենից քրտինքը նրանց ծովային քամիներից այրված ու սևացած դէմքերից թափվում է այն առատութեամբ, ինչպէս բազնիկի ներսի պատերից թափվում են շոգու գոլորշինները։ Ամեն անգամ, երկար պարանների միջոցով նաւի

նեղբնայարկից հակերը դուրս քաշելու ժամանակ նրանց հատա երեսայ շալով գօտեւորված մէջքերը թեքվում են, սրնաչարերը դուրս ցցվում, բայց նրանց հասմալ, կարծես այդ անզգալի էր։ Ոչ կիզիչ արեգակը, ոչ ծանր աշխատանքը նրանց դէմքերից չի հեռացնում այն սովորական ուրախ ու զուարթ ժպիտը, որ յատուկ է միայն նաւաստիներին, երբ սրանք գտնվում են չորութենում։ Նրանք երգում են, ծիծաղում, կատակներ անում իրարու հետ, և ամեն անգամ հակը մշակի մէջքին դնելիս մի-մի աքացի էլ աւելացնում են նաւից, որ մշակը շուտ տեղ հասցնի։ Սակայն մշակը, որ ապրանքի հակերը նաւի տախտակամածից տեղափոխում է դէպի կայարան, դանդաղ է շարժվում տեղից։ Տասը-տասներկու փութանոց բեռան ծանրութեան տակ նրա ծնկները ծալվում են, կոկորդը դուրս է ցցվում, շնչն երկարանում է, բերանը ակամայ բացվում է, և ամեն անգամ իւր բոբիկ ոտերը փոխելու ժամանակ մի անգոյ է արձակում կրծքից։ Երեսին դժուարութեամբ և երկիւղով, որ մի գուցէ հակը մէջքից թաւալվի, նա իւր ոսկրացած ձեռքը տանում է ճակատին և դուրս սրծում քրտինքի խոշոր կաթիլները։ Նաւի մի անկիւնում կանգնած է ապրանքի տէրը։ Սա մի պարթիկ առևտրական է բարձր և կոլոթակ մահուդեայ գլխարկով, երկայն փեշաւոր արխալուղով, որի վրայ մէջքին կապած է մեծաքաշեայ կապտագոյն գօտին։ Նրա թեթև, սպիտակ մետաքսեայ կապայի փեշերը հետևում են մինչև կանաչագոյն պարսկական քոշերի կրունկները։ Մի ձեռում պահած հովանու կոթը և մի փոքրիկ ձեռատետր, իսկ միւս ձեռում մատիտը բռնած, իւր երկայն ու բա-

բակ մատերով զգուշութեամբ նշանակում է ապրանքի հակերի թիւը, կշիռն և համարը, դէմքի վրայ անդադար խաղացնելով մի խորհրդաւոր ժպիտ։ Մեկ առ մեկ նա գլուխը թեքում է դէպի ձէջքը, հինայով ներկած միրուքը փսփսանքի պոչի նման ցցում է օդի մէջ և դառնում մշակների կամ նաւատաների վրայ, հրամայելով, որ նրանք զգուշութեամբ և չտապով կատարեն իրանց գործը։ Այդ ժամանակ բարեպաշտ միսուլմանի բերանից առատութեամբ դուրս են հոսում յիշացնելն այն արագութեամբ, ինչպէս երևի պատահանում են նրա շրթունքները նամազի ժամանակ Մեծ մարգարէի սրբազան աղօթքը։

Մի փոքր հեռու այստեղից կանգնած է մի ուրիշ նաւ։ Սրա նաւատաները բոլորը ռուսներ են։ Խմբովին հաւաքված նաւի ծայրը, նրանք նաւապետի կառավարութեամբ, բռնած մի հատ պարանի ծայրից, որը մեա ծայրով կապված է կայարանի սիւներից մէկին, միահամուռ այժով քաշում են պարանը որպէս զի նաւը մօտեցնեն կայարանին։ Ամենից առաջ կանգնած է կարմիր շապկով մի յաղթանդամ և երգում է ռուս մուժիկի սովորական «դուբինուշկան»։ Մեկ, մեկ նրան ձայնակցում են և միացեալ նաւատաները, կրկնելով երեք անգամ մեծաբերան ухнёмъ, ухнёмъ, ухнёмъ, և պարանը քաշում։ Եւ այդ ծովային որդիների բերանից դուրս թռչող բացականչութիւնները տարածվելով խաղաղ ծովի մակերևոյթի վրայ, թաղվում են աղի ջրի անդունդի մէջ, տանելով իրանց հետ մարդկային աշխատաւորների կրծքից արձակված դառն հառաչանքները։

Մի ուրիշ կողմում մշակների մի խումբ թաւա-

լում է ֆօտօգէնով լի տակառները կայարանից դէպի շոգենաւն և դարսում այնտեղ։ Ահա ֆօտօգէնի տէրը, կարմրերես և չաղ մարմնով հայը, ժամացոյցի երկու մատնաչափ լայնութեամբ ոսկէ շղթայի հետ ձեռնեռով խաղալով, ինքնաբաւական նայում է ֆօտօգէնի տակառներին։ Նա գանազան հրամաններ է տալիս իւր մօտ կանգնած դործակատարին, որ որտորդական չան պէս պտտում է իւր ալայի չորս կողմը և ամեն անգամ, երբ ալան խօսում է, համնատութեամբ բարձրացնում է գլուխն և ուշադրութեամբ լսում նրա հրամանները, կարծես, կամենալով նրա ամեն մի խօսքը ներս կլանել ոչ միայն ականջներով, այլև աչքերով, քնքի պնչերով, բերանով։

Վերջապէս, այդտեղ տիրում էր մի յափշտակիչ կենդանութիւն, որին միայն արդիւնաբերական ծովեզրեայ քաղաքում կարելի է հանդիպել։

Կայարանի ծայրում խառնվում է ամբոխի մի մեծ բազմութիւն։ Ամենքն, իրարու հրելով այս ու այն կողմ, աշխատում են առաջ շարժվել և, որքան հնարաւոր է, աւելի մօտենալ կայարանի ծայրին։ Բոլորի հայեացքները ուղղված են ծովի հեռաւոր հորիզոնին, ուր հաղիւ հազ նշմարվում է ծխի մի փոքրիկ խոպոպակ, որը հանդարտութեամբ բարձրանում է վեր, կարծես, ջրի խորքից դուրս գալով։ Այս—Հաշտարխանից եկող շոգենաւն է։ Ամենքն անհամբերութեամբ սպասում են նրան կայարանի վրայ։ Մէկն եկել է դիմաւորելու իւր բարեկամին, միւսը—նամակներ առանալու, երրորդը—լոկ իւր հետաքրքրութեանը բաւականութիւն տալու։

Ամենից առաջ կայարանի ծայրում հաւաքված են մի խումբ հայ վաճառականներ թուով վեց հոգի։ Զբ-

նայելով տեղի սովթեանը, որանք կայսրանի վրայ բա-
ւական ընդարձակ տեղ են բռնում։ Ամբոխը, կար-
ծես, ճանաչելով այդ արտօնութիւնը, չի համարձակ-
ւում մեզմելու նրանց, այլ, ընդհակառակը, մի քանի
քայլ հեռու է պահում իրան, թողնելով մէջտեղ մի
բաւական ընդարձակ տարածութիւն։ Սրանք քաղաքի
ամենահարուստ հայ նաֆթային արդիւնաբերներն են,
որանք նոյնպէս սպասում են շոգենաւին։ Իրարու դէմ
շրջանաձև կանգնած, նրանք մէջտեղ դոյացնում են
մի օդաձև տարածութիւն, ուր, կարծես, դրած լի-
նեը մի բան, որն արգելում էր նրանց առաջ շարժ-
վելու։ Եւ, յիրաւի, կար մի արգելք, որ չէր թոյլ տա-
լիս նրանց ծածկել այդ տարածութիւնը։ Այդ—նրանց
տակառաձև փորերն էին, որոնք բոլորն էլ, կարծես,
մի կաղապարով ձուլված լինէին։ Մի քանիսն, երկու
ձեռներով յետևից իրանց ձեռատեղաների վրայ յեն-
ւած և ոտներն իրարու հետ դրած, այնպիսի դիրք
էին առացել, որ նրանց մարմինները, մի արշին
դուրս ցցված փորերի և կարճլիկ ոտների շնորհով,
կանոնաւորած տիկերի ձև էին ընդունել։ Բոլորը հագ-
նուած էին հարուստ և եւրոպական տարազով, բայց
ոչ այնքան մաքուր։ Մէկի շապկի կրծքի վրայ երե-
ւում էին գինու կաթիլներից ծնացած մանիշակագոյն
կլորակ բիծեր։ Նրանց ամենքի փորերի վրայ արե-
գակի ճառագայթների տակ պսպղում էին ժամացոյցի
ոսկէ շղթաներ։

Բացառութիւն էր կազմում իւր մարմնի կազմուած-
քով միայն մի երիտասարդ։ Սա բարձրահասակ, նի-
հար և գեղեցիկ մի մարդ էր սև ու նօսր միրուքով և սա-
կաւ կրճքով։ Նայելով երիտասարդի դէմքին, կա-

րելի էր ասել, որ նա գոնէ քառասուն տարեկան է,
բայց իսկապէս նրա տարիքը քսան ու հօթից չէին անց-
նում։ Անցեալի գեղից և շուայլ կենցաղն այդ դէմքի
վրայ դրոշմել էր արդէն ծերութեան կնիքը։ Նրա
թուխ ու լղար երեսի կաշին, եփած խնձորի կճեպի պէս,
մի քանի ծալը կուչկուչվել էր և հատաքվել քնքոյ եր-
կու կողմերում։ Թերթերուքներից զուրկ աչքերի տակ
նոյնպէս դոյացել էին մի քանի կապտագոյն կնճիռ-
ներ։ Աչքերից վեր երկու դժուար նշմարելի գծեր,
հնարքով դեռ պահպանվող մի քանի մազերի, հազիւ-
հազ համոզում էին, թէ մի ժամանակ այդ մարդը
զուրկ չի եղել յօնքերից—մարդկային կերպարանքի այդ
դեղեցիկ զարդից, առանց որի մարդ կատարելապէս
կապկի է նմանվում։ Իսկ նրա ամբողջ դէմքն արտա-
յայտում էր խորին վախկոտութիւն, նրա փոքրիկ
սևագոյն աչքերի մէջ փայլում էր անասնական կիւրք։
Նա հագած էր սպիտակ մետաքսեայ կտորից կարած
ամարային հագուստ, որ ուրեմն մաքուր էր և ուրեմն նուրբ
ձևով կարված քան նրա ընկերակիցներինը։ Դեղնա-
գոյն յարդեայ գլխարկի լայն ծայրը պօղել էր նրա
ճակատը, որ ծածկված էր բազմաթիւ մանր երունդ-
ներով։—Մի նշան, որ հետևանք էր նրա անբարոյական
կենցաղավարութեան։ Երիտասարդի ժիլետի վրայ նոյն-
պէս փայլում էր մի ահագին ոսկէ շղթայ։ Իսկ շղ-
թայից քաշ էր ընկած հինգ կոպէկանոցի չափ ո-
սկէ մեդալիոնը՝ զարդարված մանրիկ ադամանդնե-
րով։ Նրա բարակ դեղնագոյն ձեռնոցներից մէկի տա-
կից, ալ ձեռի մէջքատեի վրայ ցցված էր մատանու
մեծ փիրուզէն։ Ձերմակ սթլատեայ փողպատի վրայ
մեխված էր մի մեծ ոսկէ դնդասեղ՝ նոյնպէս ադա-

ժանդնելով զարդարված։ «Պետր Սաեփանիչ Դօլմա-զօվ»—այսպէս էր վորագրված երիտասարդի անունը նրա ձեռափայտի չորս մասնաչափ ոսկեպատ կոթի վրայ։

II

Խումբը տաքացած խօսում էր ու վիճաբանում հանքերի, գործարաններէի, նաֆթի և ուրիշ այսպիսի հեռաբերքբական նիւթերի մասին։ Մի քանիսը խօսողներից այնքան ոգևորվել էին, որ քիչ էր մնում փոխէին իրանց կանգնած դիրքն և քանդէին մէջտեղի օդաձև տարածութիւնը։ Մէկը կամենալով համոզել ինչ-որ բանում իւր դէմ ու դէմ կանգնողին, մի փոքր առաջ շարժվեց, և երկուսի փորերը մի քիչ ընդհարվեցին։

Խօսակցութեանը չէր մասնակցում միայն երիտասարդը։ Նա երեսը դարձրել էր դէպի ծովը և հեռադիտակով անդադար նայում էր հեղոյ չոգենաւին, որն այդ ժամանակ այնչափ մօտեցել էր կայարանին, որ պարզ նշմարվում էին տախտակամածի վրայ խմբված ճանապարհորդները։

—Պետր Սաեփանիչ, ինչո՞ւ ես այդպէս անհամբեր մոկ անում, երևի, մարդի հետ ես պատում,—դիմեց երիտասարդին հասատափորներից մէկը, աչ ձեռը պրնելով նրա ուսին, երբ խօսակցութիւնը մի քանի վայրկեան ընդհատվեց։

Պետր Սաեփանիչը չըպատասխանեց։ Նա խորասուզված չարունակ նայում էր դէպի չոգենաւը։

—Պետր Սաեփանիչ, ախար քեզ հետ էն խօսում,—կրկնեց հեռաբերքբեր հասատափորը, կանգնելով

նրա դէմ ու դէմ և ձեռով ծածկելով հեռադիտակի բերանը, որպէս զի Պետր Սաեփանիչի ուշադրութիւնը իւր վրայ դարձնի։

—Հը՛մ,—ասաց միայն Պետր Սաեփանիչն և, հեռադիտակն ազատելով նրա ձեռից, կրկին սկսեց նայել։

—Ուժին ես պատում, ասա, տեսնեմ,—չարունակեց հասատափորն, այս անգամ Պետր Սաեփանիչի ձեռից խլելով հեռադիտակն և թագցնելով իւր մէջքում։

—Պատում եմ։

—Ո՞ւմին։

—Կարլ Մարկիչի ընտանիքին։

—Որտեղից։

—Հաշտարխանից։

—Ի՞նչ ասացիր, Կարլ Մարկի՞չ, ախ է Կարլ Մարկիչը։

—Իմ կառավարիչը։

—Նեմեց է։

—Հայ է, հաշտարխանցի։

—Կարլ Մարկիչ,—կրկնեց Սերգէյ Իվանիչը (այսպէս էր հասատափորի անունը), աչքերը չռելով և իւր դէմքի վրայ խաղացնելով զարմացական ժպիտ։

—Գտապարն է, ծերունին, ճանաչում ես խօ նրան։

—Գտապարը...հը՛մ...ես էլ ասում եմ, այդ ինչ Կարլ է,—ասաց Սերգէյ Իվանիչը, հառաչելով, կարծես, մի ծանրութիւնից ազատված։—Ինչո՞ւ է բերել տալիս Գտապարն իւր ընտանիքը։

—Ես եմ ասել, խելքն առանց կնոջ տխրում է, ասացի մի լուսութիւն անեմ։ Տներիցս մէկում նրա համար մի լաւ բնակարան եմ նշանակել, թող ապրեն, քէֆ քաշեն։ Աւժէ Կարլ Մարկիչը. նա շատ լաւ դործակատար է։

—Արժէ, արժէ, շատ ճշմարտասէր մարդ է, պալըտ-
թիւն չըդիտէ։ Ես նրան լաւ եմ ճանաչում։ Առաջ նա
Հաշտարխանի մէջ ամենահասարակներից
մէկն էր, բայց ընկերները խաբեցին, փողերը ձեռքից
խլեցին և չոր տափի վրայ թողնցին։ Նրա ընտանիքն
էլ եմ ճանաչում։ Ռուսաստանից գալիս ես Հաշտար-
խանում նրանց մօտ գնացի, ինձ սուրճով հիւրասիրե-
ցին։ Մի լաւ տղայ ունի և մի լաւ աղջիկ։ Նրանք էլ
գալիս են։

—Գալիս են։ Որդուն ես շատ եմ հաւանել, ու-
զում եմ Բալախանիի նաֆթահանքերից մէկի վրայ
գործակատար նշանակել։

—Շատ լաւ կանես, շատ լաւ կանես, Պետր Սահ-
փանիչ, լաւ տղայ է, հօր նման զոչազ է։ Բայց ու-
րիշ բան է նրա աղջիկը, հրեշտակի գեղեցկութիւն ու-
նի, Պետր Սահփանիչ, ամբողջ Հաշտարխանի մէջ հա-
մբը չըկայ։

Այս ասելով, Սերգէյ Իվանիչն իւր խղալի աչքե-
րի բիբերը ոլորեց և առաջների վերին շարքով ներքին
պռոշի ծայրը թեթեւութեամբ կծեց, նայելով ուղղակի
Պետր Սահփանիչի աչքերին։ Սա նոյնպէս մի վայրկեան
նայեց նրա երեսին, ոչինչ չասաց և, կրկին հեռադի-
տակը մօտեցնելով աչքերին, սկսեց նայել շոգենաւին։

—Առաջին անգամ, երբ ես նրան տեսայ, քիչ մը-
նաց որ խենթը կորցնէի, — շարունակեց շառաչօսել
Սերգէյ Իվանիչը։ Սասցի, այ սրա նման կնիկ ունե-
նայ մարդ, որ պարզերես կարողանայ հասարակու-
թեան մէջ դուրս գալ։ Ինչ փօրտօպիանի վրայ ածել,
ինչ պար գալ, ինչ խօսել թէ հայերէն և թէ ռուսերէն,
մի խօսքով, ասկի է ուղից մինչև գլուխ։ Ա՛յ, նրա նման

կնիկ ունենաս, հեռադիտակը ձեռքդ տանես Ռուսաստան և բոլորին զար-
մացնես։ Բայց ափսոս, որ հայրն աղքատ է, Պետր Սահ-
փանիչ, թէ չէ՝ քեզ համար շատ լաւ հարսնացու կըլինէր։

Պետր Սահփանիչը հեռադիտակի տակից ժպտաց
և ոչինչ չըպատասխանեց։

—Բաւական հասակաւոր աղջիկ է, բայց մինչև
օրս ուղղոյ չըկայ հօր աղքատութեան պատճառով։ Ա-
նիերաւ Հաշտարխանում առանց օժիտի ոչ մի տղայ ա-
ղջիկ չի վերցնում։

Պետր Սահփանիչը հեռադիտակը հեռացրեց և,
սպիտակ ու մաքուր թաշկինակով աչքերը սրբելով,
միայն արտասանեց «հը՞մ», կարծես, հարցնելով իւր
խօսակցի միտքը։

—Ասում եմ, մի մեծ ազգմարթիւն կանես,—շա-
րունակեց Սերգէյ Իվանիչը,—եթէ նրան այստեղ մի
լաւ տղայի տաս։

Պետր Սահփանիչը, հեռադիտակը դնելով դրպա-
նը, պատասխանեց.

—Նրա հայրը հարուստ եղած ժամանակ շատ ան-
գամ է օգնել հօրս. իհարկէ, ես էլ պարտաւոր եմ վո-
խարէնը վճարել լաւութենով։

—Ախրես, Պետր Սահփանիչ, Գասպարն արժէ,
նա խելօք, կրթած ու մոլորված մարդ է։

Լսվեց կայարանին մօտեցող շոգենաւի սուլոցը։
Ամբոխը սկսեց հրելով մօտենալ կայարանի եզրին։ Շո-
գենաւը, չվշվալով, շոգին կողքերից բաց թողնելով
և խարիսխների շղթաները ղնդացնելով, մեղմիկ սա-
հում էր առաջ։

Պետր Իվանիչն իւր որոնող հայեացքը ձգեց տախ-
տակամածի վրայ, բարձրանալով ոտների ծայրերի վը-

ըայ։ Այնտեղ նա նկատեց ճամբորդների մի խմբակ՝ բաղկացած երեք հոգուց։ Մէկը միջահասակ, մօտ քառասուն ու հինգ տարեկան կին էր եւրոպական հագուստով, գլուխը սեւ շալով փաթաթած։ Միւսը 23—24 տարեկան մի երիտասարդ էր բարձր հասակով, սեւ, փոքրիկ միրուքով, համակրելի դէմքով և բաւական մեծ քթով։ Երրորդը մի օրիորդ էր ամպրայինի բաց դոյնի հագուստով և յարդեայ դեղնագոյն լայնեղր գլխարկով։ Սա կըլինէր մօտ 25 տարեկան, բարձրահասակ էր, դէմքի բաւական նուրբ գծերով, ոչ այնքան գեղեցիկ, որքան սիրուն և համակրելի։

Պետր Մաեփանիչը Սերգէյ Իվանիչի ուղեկցութեամբ դիմաւորեց նրանց։ Երկուսն էլ, հերթով նոքեկներին բարեւելուց յետոյ, շտապով վերցրին մի մի կտոր ճանապարհային իրեղէններից և իջան կայարան։

—Բաս ինչտեղ է կալլ Մարկիչը,—հարցրեց պառաւ կինը։

—Գործարանումն է, շուտով կըգայ, ես ցոյց կըտամ բնակարանը, կառքս սպասում է ձեզ,—պատասխանեց Պետր Մաեփանիչը քաղաքավարութեամբ, մի դիտող հայեացք ձգելով օրիորդի վրայ։

Սերգէյ Իվանիչն արժանիկով բռնեց նրան և դուշութեամբ չընչաց նրա ականջին.

—Լուանեակ է. մուշտարու աչքով մտիկ արա։

—Կատերինա Կարլովնա, շատ է նեղացրել ձեզ ծովը,—դիմեց Պետր Մաեփանիչն օրիորդին։

—Օ՛խ, օխ, էլ մի հարցնիր, ցաւդ առնեմ, մեր ոսկորները փշրուել է,—պատասխանեց մայրն ազիկայ փոխարէնն։

—Մամա, ինչ ես ասում, ինձ չի նեղացրել ծովը, նա շատ լաղաղ էր,—հակառակեց Կատերինա Կարլովնան, բռնելով իւր եղբօր թեւից։

—Դուք ինչպէս էք, Արտեմ Կարլիչ,—քաղաքավարութեան համար հարցրեց Պետր Մաեփանիչն երիտասարդին։

—Ինձ համար շատ ուրախ անցաւ ժամանակը,—պատասխանեց Արտեմ Կարլիչը համեստութեամբ, դբլուխը քիչ թեքելով կրծքին։

Այսպէս խօսելով, հասան փողոց, ուր Պետր Մաեփանիչի շքեղ կառքն երկու առոյգ ձիերով լծված սպասում էր նրանց։ Պետր Մաեփանիչն օգնեց օրիորդին և մօրը կառք նստել, իսկ ինքն Արտեմ Կարլիչի հետ սեղմուելով նրանց դէմ։ Մի քանի րոպէում ապագնեցաց ձիերը կառքը սլացրին դէպի ծովեզրեայ ընդարձակ փողոցի ծայրը, ուր նա անհետացաւ։ Սերգէյ Իվանիչը մնաց նրանց հետից նայելով։

—Շատ լաւան, անառակ Դոլմազով, ես քո միաքը հասկացայ,—արտասանեց նա։

Ցետոյ, գլուխը խորհրդաւոր կերպով շարժելով, կրկին վերադարձաւ շոգենաւ։

III

Կառքը կանգնեց քաղաքի լայն փողոցներից մէկի վրայ գտնվող երկյարկանի նորաշէն տան առջև։ Ներքնաշարժ Պետր Մաեփանիչն արագապէս ցած թռաւ կառքից և օգնեց ցած իջնելու Կատերինա Կարլովնային ու նրա մօրը։ Նա, առաջնորդելով, տարաւ նրանց նեբա և ցոյց տուեց բազի նեբաի շինութեան նեբքին յարկում մի բնակարան, որ բաղկացած էր ե-

բեք սենեակներից։

—Այ, այս եմ պատրաստել տուել ձեզ համար։ Բաւական է ձեզ, Մարիա Իվանովնա, երեք սենեակ թէ չէ,—հարցրեց Պետր Ստեփանիչը պառաւից, միևնոյն ժամանակ, նայելով ապշկայ երեսին։

—Ցաւդ առնեմ, ինչ կանենք այդքանը, չորս հոգու համար երկուսն էլ բաւական էր,—պատասխանեց Մարիա Իվանովնան, թէև հոգով շատ ուրախ կլինէր եթէ բնակարանն աւելի ընդարձակ լինէր։

—Կարլ Մարկիչը դիշերները գործարանում է լինում։ Արտեմ Կարլիչին էլ նշանակել եմ կառավարիչ Բալախանի, ուրնից քաղաքում միայնակ գուք և Կատերինա Կարլովնան և ոչ թէ չորս հոգու։ Բայց ինչա չունի, թող ձեր տեղը լայն լինի, ես խոմ վարձով չեմ տալիս։ Տունն իմն է, ինչպէս ուզում եմ, այնպէս էլ անում եմ։

—Ցաւդ առնեմ, շատ ապրես, բայց, Պետր Ստեփանիչ, Արտեմիս համար քաղաքում որ տեղ տաքլաւ կլլինի։ Առանց նրա սիրտս կլնեղանայ։

—Հեշտ բան է, թող մի քիչ այնտեղ գործ հետ ծանօթանայ, յետոյ ես նրան քաղաքում մի լաւ պաշտօն կտամ։

—Չէ, մամա, Բալախանին լաւ է, ասում են այնտեղ զարմանալի բաներ կան,—մէջ մտաւ Արտեմ Կարլիչը։

—Ի հարկէ, ինչ-որ կայ այնտեղ է, օդն էլ աւելի առողջարար է, քան թէ այստեղ, քաղաքում, ուր փոշու և ծխի մէջ խեղդվում ենք։

—Ինչպէս ձեր քեֆն է, այնպէս արէք, մենք էլ ձերն ենք, Պետր Ստեփանիչ,—ասաց Մարիա Իվանովնան և սկսեց դիտել բնակարանը։

Քառորդ ժամ նորեկները Պետր Ստեփանիչի հետ միասին պատելին սենեակները, յետոյ խոհանոցը, ուշադրութեամբ զննելով ամեն մի անկիւն։

—Այ մամա, այս իմ սենեակը կլլինի,—ասաց օրիորդը, կանդնելով սենեակներից մէկում։ Ես այս պատուհանի տակ կլզնեմ իմ գաշնամուրը։ Իսկ գուն պապան միւս սենեակում կապրէք, այն կողմինն էլ Արտեմի համար կլսարքենք։

Բոլոր ժամանակ Պետր Ստեփանիչն իւր հայեացքը չէր հեռացնում Կատերինա Կարլովնայից։ Նա յափշտակված էր օրիորդի իրանի նուրբ կազմուածքով, պարզ և հրապուրիչ դէմքով, փայլուն աչքերով, նազելի շարժուածքով։ Ամեն անգամ օրիորդը խօսելիս, նա աչքերը յառում էր նրա երեսին և ագահութեամբ նայում։ Այդ ժամանակ նրա ամբողջ մարմնով, կարծես, անցնում էր էլեքտրական ցնցում, և նրա փոքրիկ կապկային աչքերի մէջ փայլում էր անասնական կիրքն իւր բոլոր ոյժով։ Նա անդադար, աչքերը կուչ բերել վ, քաղցրութեամբ ժպտում էր օրիորդի երեսին, և ժամանակ նրա դէմքը մի ինչ-որ անախորժ, ինչ-որ դժուելի, վայրագոտ արտայայտութիւն էր ստանում։ Օրիորդը, կարծես, այդ չէր նկատում և անտարբերութեամբ խօսում էր նրա հետ։ Սակայն երբ մի անգամ Պետր Ստեփանիչը չարունակ նայեց նրա երեսին և բոլորովին անտեղի և անժամանակ ժպտացել սը թեքեց դէպի կուրծքը, և նրա դէմքը թեթեւ կարմրեց։

Մարիա Իվանովնան դիմեց իւր որդուն.

—Վաղիր, Արտեմ, շատով ապրանքը հասաքիր չոգենաւից ու բեր։

—Իսկ դուք Կատերինա Կարլովնայի հետ, գնանք ինձ մոտ ճաշելու,—մեջ մտաւ Պետր Սահմանիչը։

Մարիա Իվանովնան համաձայնվեց, և Դօլմազովը, իւր տան հասցէն տալով Արտեմ Կարլիչին և նրանց հետ միասին կառք նստելով, շտապեց տուն։

Իրիկնադէմ էր երբ նորեկները ճաշելուց յետոյ կրկին վերադարձան իրանց բնակարանը։ Արտեմ Կարլիչը բոլոր իրեղէնները արդէն բերել էր։ Նրանք սկսեցին կարգի բերել իրանց բնակարանը։ Մարիա Իվանովնան իւր որդու հետ պատրաստում էր վերջինի սենեակը, իսկ Կատերինա Կարլովնան նոյնպէս պատրաստում էր իւր սենեակը Պետր Սահմանիչի օգնութեամբ։ Զբնայելով օրիորդի թախանձանքին, որ նա նեղութիւն չքաշի աշխատելու ու գնա հանգստանալու, հոգատար Պետր Սահմանիչը քայլ անգամ չէր ուզում հեռանալ օրիորդից և ամբի ձեռքի ընկած մեծ պատրաստականութեամբ օգնում էր նրան։ Հետզհետէ Կատերինա Կարլովնան սկսեց ձանձրանալ նրա օգնութենից։ Պետր Սահմանիչն այնքան չէր օգնում, որքան իւր ծանր ու խոր հայեացքներով և անտեղի քաղցրախօսութեամբ ձանձրացնում էր օրիորդին։

Կատերինան այդ հայեացքներն ընդունում էր իբրև սովորական քաղաքավարութեան արտայայտութիւն և բիտտներդի կողմից դէպի մի օրիորդ, բայց երբ Պետր Սահմանիչը սկսեց անցնել սովորական չափաւորութեան սահմանը, այն րոպէից օրիորդի արտում ծագեց ինչ-որ կասկած։ Պետր Սահմանիչի ներկայութիւնը սկսեց նրան ճնշել, և նա աշխատում էր խոյս տալ նրա հայեացքներից։

Պատահեց մի դէպք։ Կատերինա Կարլովնան իւր

հագուստեղէնները տեղաւորում էր պահարանի մէջ։ Նրա մայրն ու եղբայրը միւս սենեակումն էին։ Պետր Սահմանիչն անշարժ կանգնած, նայում էր օրիորդին։ Երբ Կատերինան, վերջացնելով գործը, կամենում էր կողպել պահարանը, բանալին մի քանի անգամ չուռ տուեց ու չկարողացաւ կողպել։ Պետր Սահմանիչի սուր հայեացքն իսկոյն այդ նկատեց։ Նա շտապով մօտեցաւ օրիորդին։

—Թոյլ տուէք, որ ես կողպեմ, Կատերինա Կարլովնա, դուք այժ չունիք, ափսոս է, ձեր քնքոյշ և դեղեցիկ մատները կըցաւեն։

—Ոչ, խնդրեմ նեղութիւն մի քաշէք, այդ պահարանը բացի ինձանից ոչ ոք չի կարողանում կողպել և բանալ։

—Ես կարող եմ, այ, տեսնում էք, ձեր ձեռները ինչպէս կարմրեցին։

Այս ասելով, Պետր Սահմանիչը ձախ ձեռով սիրաւի հեռացրեց օրիորդի ձեռը բանալիից, իսկ աջով սկսեց պտտեցնել բանալին, միևնոյն ժամանակ, միւս ձեռում սեղմած պահելով օրիորդի աջը։ Օրիորդն աշխատեց զգուշութեամբ ազատել իւր ձեռը, բայց չըվայրագեց։ Պետր Սահմանիչը նրան շատ ամուր էր սեղմել։ Օրիորդը չդիտեր ինչ անել։ Նա մի անգամ ևս փորձեց դուրս բերել ձեռը նրա ձեռից, բայց, չկարողանալով, սկսեց դողալ։ Պետր Սահմանիչի մէջ հոսաց բուռն կիրքը։ Նա, շարունակելով բանալին պտտել կողպէքի մէջ, իւր շրթունքները զգուշութեամբ մօտեցրեց օրիորդի երեսին և կամենում էր...։ Բայց դադարեց յետոյ։

Այդ վայրկեանին ներս մտաւ Մարիա Իվանով-

նան։ Փոքը անցած՝ գնդակի նման նետս գլորվեց մի լղար, կաթճահասակ մարդ ճերմակ մազերով։

—Պապա, պապա,—գոչեց Կատերինա Կարլօվնան և, առաջ վազելով, ընկաւ Ծերունու գիրկը։

IV

Նետս վագոնը Կարլ Մարկիչ Պօպօվը էր, Կատերինայի հայրը։ Մի քանի րոպէ հայր ու աղջիկ իրար գրկած համբուրվում էին։ Վերջապէս, Կարլ Մարկիչն ազատեց աղջկան իր գրկից և նոյն կարօտութեամբ ընկաւ որդու, Արտեմ Կարլիչի գիրկն ու մի քանի համբոյրներ պրոշմեց նրա ճակատին։ Ցետոյ բարևեց մոմանուն, մի անգամ միայն համբուրելով նրա բերանի անկիւնը։ Պետր Սաւելիանիչն ինչ և իցէ օտար էր, համեստութիւնը Կարլ Մարկիչին սոխից չափառորել իր ամուսնական դգացմունքները։

—Ես պատրաստ եմ հազար անգամ շնորհակալութիւն յայտնել ձեզ սեմեյստվոյից խանթրու,—դարձաւ Կարլ Մարկիչը Պետր Սաւելիանիչին, որը մի կոլ քաշված նայում էր այդ ընտանեկան տեսարանին։

Կարլ Մարկիչը քիչ մտեցաւ նրան, ձեռները քարշ ձգեց կոպերին, ոտները կպցրեց իրարու և, մէջքից երկու ծալ թեքվելով, հրիտասարդական աշխուժութեամբ մի քանի անգամ գլուխ տուեց նրան։

—Ձարժէ, չարժէ,—արտասանեց անտարբերութեամբ Պետր Սաւելիանիչն, իր հայեացքը չհեռացնելով Կատերինա Կարլովնայից, որն այդ ժամանակ ինչ-որ բանի մասին խօսում էր իր եղբօր հետ։

—Մարիա, Կատեա, Արտեմ, մտեցէք, շնորհակալութիւն արէք Պետր Սաւելիանիչին, էնպէս որ նա է բասպօրտաժենին արել ձեզ Բագու բերելու։

Կարլ Մարկիչի ընտանիքը սեղմեց Պետր Սաւելիանիչի ձեռը։ Դա առաջին շնորհակալութիւնն էր, որ առացաւ բարեսիրտ խնամատարն երախտագէտ ընտանիքից։

—Ցետոյ ես, Մարիա, ինչ ազավարի քվարթիրա է,—չարունակեց Կարլ Մարկիչը, պտոյտ գալով Պետր Սաւելիանիչի առջև։—Ես Պետր Սաւելիանիչից չատ շնորհակալ եմ, չատ. իմ պարտքս է ատարայտցա իլել նրան չեանս, բլագօրօդնօ ծառայելու, էնպէս որ նրա պէս խօզեային ես գրանիցայումն էլ չեմ կարող գտնել։

Կարլ Մարկիչը խօսելու ժամանակ ձեռներով, գլխով և ուսերով այնպիսի չարժումներ էր անում, որ, կարծես, քան ու հինգ տարեկան երիտասարդ լինէր, այն ինչ—մօտ վաթսուն տարեկան էր։

Պետր Սաւելիանիչն ուշադրութիւն չէր դարձնում իր կառավարչի չատախօսութեան վրայ։ Նա խորասուզված էր ինչ-որ մտածողութեան մէջ։ Սակայն այդ երկար չտևեց. յանկարծ նա դիմեց Մարկիչին լուրջ ձայնով.

—Գործարանն այսօր բանել է։

—Ինչպէս չէ, ինչպէս չէ, ազայան։

—Ո՞վ կայ այնտեղ այժմ։

—Ամենքն այնտեղ են։ Ես, ազայան, զատօրը պօլուչիլա սրի գլաձկի պրիկազչիկին մինչև էդուց առաւօտը։

—Հը՛մ,—արտասանեց միայն Պետր Սաւելիանիչը, կրկին մտածողութեան մէջ ընկնելով և բեղերը կրծոտելով։

Կարլ Մարկիչը քիչ չմոթվեց։

—Բեզպոկոյնացա մի լինէք, ազաչան, ամեն ինչ պօրեադկոյով կըզնայ։

—Առաւօտը շուտով գնացէք, որ գործարանը չըգադարի, եթէ ոչ, գիտէք, որ մի օրուայ գադարին ինձ կըզրկի հազար մանէթ աշխատանքից, — ասաց Պետր Ստեփանիչը քիչ հրամայական եղանակով, աչխատելով իւր դէմքի հպարտութիւնը պահել։

Պէտք է ասած, որ Պետր Ստեփանիչը մի քիչ սուտ ասաց։ Գործարանն առանց Կարլ Մարկիչի էլ կարող էր վաղը գործել և եթէ գադարէր էլ, մի օրուայ ընդմէջ երբէք հազար մանէթ չէր կարող լինել։ Բայց նա այդ ասաց առանձինը նրա համար, որ Կարլ Մարկիչի վրայ ունեցած իւր իշխանութիւնը ցոյց տայ նրա ընտանիքին և երկրորդ, մի օրուայ ընդմէջը քանի անգամ աւելի ցոյց տալով, իւր հարստութենով մի փոքր վախ ազդէ այդ ընտանիքի աչքերին։ Այս պարզ էր, քան որում, իւր հրամանը կրկնելուց յետոյ, նա մի առանձին ինքնավստահութեամբ նայեց բոլորին հերթով, որ տեսնի, ինչ ազդեցութիւն արին իւր խօսքերը լսողների վրայ, իսկ նամանաւանդ Կատերինա Կարլովնայի վրայ։ Եւ յիրաւի նա մասամբ յաջողվեց։

Լսելով նրա խօսքերը, Մարիա Իվանովնան այնպէս զարմացաւ, որ աչքերը ճղեց և բերանը բաց մնաց։ «Օրական հազար մանէթ փող է աշխատում. ես բանի նրան, որ սրա նման փեսայ կունենայ»,—անցաւ իսկոյն նրա մտքով, և նա գլուխը թեքեց կըրծքին, ձեռնները խաչաձև ծալեց ծոցում և սկսեց ամենայն ուշադրութեամբ նայել Պետր Ստեփանիչին։ Պակաս չզարմացաւ և՛ Արտեմ Կարլիչը։ «Օրական հազար մանէթով կարելի է թագաւորի պէս ապրել արտասահմանում, այն էլ Փարիզի մէջ տեղում. ախմախն ինչ է այստեղ քամու ու փոշու մէջ խեղդվում,—այսպէս մտածեց նա և սկսեց նոյնպէս նայել Պետր Ստեփանիչի երեսին։

Միայն Կատերինա Կարլովնան էր, որի վրայ, կարծես, ոչինչ ազդեցութիւն չարին Պետր Ստեփանիչի փքուն խօսքերը։ Նա երեսը շուռ տուեց և անցաւ միւս սենեակ։

—Առաւօտը, խօրօզը կանչելիս, ես զաւօդում կըլինիմ, ազաչան, ես չեմ թողնիլ, որ ձեզ ուբիտկա լինի,—միամտացրեց Կարլ Մարկիչը Պետր Ստեփանիչին։

Կատերինա Կարլովնան միւս սենեակ անցնելուց յետոյ Պետր Ստեփանիչի դէմքն աւելի փոխվեց։ Սովորական ուրախ ու կեղծ ժպիտը նրա դէմքից անհետացաւ։ Նա կնճռեց ճակատն և առանց այն էլ քացախած երեսն աւելի թթուացրեց։

—Նատեցէք, պօժօլստա, Պետր Ստեփանիչ, այսօր շատ էք նեղացել,—առաջարկեց Կարլ Մարկիչը, վերին աստիճանի խոնարհութեամբ և երկիւղով մօտեցնելով աթոռներից մէկն և ոտները սենեակի յատակին քսքսելով։

—Ո՛չ, ես գնում եմ, դուք կարդի դրեցէք բնակարանն, ես վաղը դարձեալ կըգամ։ Թո՛ղ Արտեմն առաւօտն ինձ մօտ գայ, որ ճանապարհեմ Բալախանի. իսկ դուք, Կարլ Մարկիչ, շուտ կըզարթնէք և կըգնաք գործարան։

—Նեպրեմեննօ, նեպրեմեննօ, ինչ ասել կուզի, ազաչան, բաս չայ անուշ չէք անում։ Կատեա, Պետր Ստեփանիչի համար չայ զաւարիյա արա, բեր։

—Շնորհակալ է՛, ես գործ ունիմ, գնում եմ, մնաք բարով։

Պետր Սահիանիչը ձեռ. տուեց միայն Մարիա Իվանովնային, իսկ Կարլ Մարկիչին և նրա որդուն միայն թեթև գլուխ տուեց։

—Յաեսուվիեն, Կատերինա Կարլովնա, — ասաց նա, մօտենալով միւս սենեակի դռներին և այնտեղից ձեռն ուղղելով օրիորդին։

—Գնաք բարով,—սառնութեամբ պատասխանեց վերջինն, իր մատների ծայրերը տալով նրան։

Պետր Սահիանիչը զգաց այդ սառնութիւնը։ Նը կատեց նոյնպէս և՛ Կարլ Մարկիչը, նկատեց և մի խոշոր յանդիմանական հայեացք ձգեց իր ապկայ վրայ։

Վերջապէս, Պետր Սահիանիչը Կարլ Մարկիչի ուղեկցութեամբ դուրս եկաւ փողոց և հեռացաւ, վերոյիշեալ առաջին անակնկալութենից։ Կատերինա Կարլովնան վերաւորել էր նրա սահմանափակ ինքնասիրութիւնը։ Այդ նա զգում էր և չէր կարող անտարբերութեամբ մտնել։ Նրա համար դժուար էր մարսել օրիորդի կոշտ վարմունքը։ «Աղքատ լինիս ու այդքան հպարտ,—մտածում էր նա, անցնելով փողոցով։ Արժան չըհամարեց մինչև անգամ կարդին ձեռ. տալու ինձ, միայն մատների ծայրերը մօտեցրեց։ Այդ գոռոզութիւն։ Հարցնող լինի, ինչումէ ես պարծենում, այն էլ ինձ մօտ, որ, եթէ ուզենամ, կարող եմ քարշ տալ մահանել։ Բայց ապատանք, կարծեմ, երկար չի տևել այդ հպարտութիւնը, ապատանք...»

—Բայց ինչ հատակ, ինչ կազմուածք... ինչ դէմք... Վատ չէր լինիլ, եթէ Կարլ Մարկիչը մի հարուստ վաճառական լինէր և ոչ թէ այսօրուայ նման մի չնչին

գործակատար դատարկ դրպանով և անյայտ ապագայով։ Այն ժամանակ ես մինչև անգամ չէի հրաժարվիլ կատերինայի հետ օրինաւոր կերպով պսակվելուց, թէև բժիշկները... Հ՛րմ, բժիշկները... Ը՛հ, թքել եմ նրանց գիտութեան վրայ...

Պետր Սահիանիչը մէկ փողոց անցաւ ուռով և յետոյ, նստելով առաջին պատահած կառքը, գնաց կլուբ։

V

—Մաշա, դուշա մօեա, ասա տեսնեմ, ինչպէս ես, քանի ժամանակ է առանց քեզ մենակ էի,—սկսեց նոցից Կարլ Մարկիչը, փաթաթվելով իր ամուսնու վրայ, երբ, Պետր Սահիանիչին ճանապարհ դնելով, վերադարձաւ սենեակ։

—Հեռու գնա, հեռու գնա, շորերիդ նաֆթի հոտ է փչում, սիրտս խառնում է,—պատասխանեց Մարիա Իվանովնան, հրելով նրա կրծքին։

—Մտիս չէն, ինչ ես ասում, դա իմ պարտականոթիւն է, նոր եմ կարել տուել։

—Լաւ է, բաւական է, ձեռ. քաշիր, ամաչիր եբեխեքից,—հակառակեց կրկին Մարիա Իվանովնան, երբ Կարլ Մարկիչը կամեցաւ համբուրել նրան։

—Ումից ամաչեմ, Աբտեմից, հէյ, ապատիր, նա էլ ժէնիյացա կըլինի, էն վախտը կիմանայ, թէ ինչ քաղցը բան է տուպրուգան։ Տետր, Մարիա, ինչ լաւ խոզեային ունիմ, պրօստո զօյտոս։ Ինձ շատ է ուվաժայտ անում, ամեն կիրակի կօֆէով ուգատիյա է անում, մի խօսքով, շատ լաւ խոզեային է։ Հէնց այս մօտերս ինձ գուտոյի ուպրավլեաիւշչի չինեց։ Կատեա,

քեզ ինչպէս դիւր եկաւ Պետր Սահիանիչը, շատ լաւ էզնիկ տղայ է, չէ՞,—դարձաւ Կարլ Մարկիչն աղջկան, որն այդ ժամանակ թէյ էր ածում։

Կատերինա Կարլոշեան ոչինչ չըպատասխանեց։

—Շատ լաւ մարդ է երևում,—պատասխանեցին նրա փոխարէն միաբերան մայր ու որդի։

—Շատ օբրազովաննիյ տղայ է,—շարունակեց դաստիարակել Կարլ Մարկիչը։—Քանի տարի է Ռուսիայում պուտեշեստվուլայա է անում, ասերին խօսում է մոսկվիչի պէս, քո քէֆին էլ կըդայ, Կատեա ջան։ Ամէն չուրայի պատկիներ է կարդում, իրան նման պրեֆեքտանա խաղացող չիմանաս կլուբում։ Պրեֆեքտանը օբրազովաննիյ խաղ է, Մարիա, ուրիշ բան չըմտածես, ամէն մարդ չի կարողանում խաղալ։ Բարիշնաների համար այն տեսակ կավալերութիւն է անում, այն տեսակ նէժնի խօսում է, որ հէնց իմանաս ախտեօր իլի Օճճ, չէ, շատ տղավարի, շատ աբրազովաննիյ տղայ է։ Ես զարմանում եմ, որ Կամկապում այդպէս տղայ եմ տեսնում, էնդուր որ Կամկապը դիկիյ է, մեր կողմերի պէս ցիվիլիզովաննիյ չէ։ Ամա դու, Կատեա ջան, նրա հետ դեղիկատնիյ պօստուպկաց չիլար հաա, էտի, իմանում ես, լաւ չի հաա։

—Ինչպէս հարկն էր, այնպէս վարվեցի, խօ քեզ պէս մինչև փողոց ճանապարհ չէի դնելու,—ընդհատեց նրան Կատերինա Կարլոշեան բաւական սառն ու խիստ եղանակով։

—Օհճ, ինչ ես ասում։ Ես պարտաւոր եմ նրա հետ լիբէզնիյ լինել, էնդուր որ ես նրա պօդչինեօնն եմ, նա իմ խօզեայինն է,—տաքացաւ Կարլ Մարկիչը, փողոցան ուղղելով և դէմի կարճլիկ ճերմակ

մազերն երկու ձեռներով հարթելով։

—Դու պարտաւոր ես, բայց ես—ոչ։ Դու կարող ես նրա չորս կողմով պտոյտ գալ, իսկ ինձանից մի պահանջիր նոյնը,—պատասխանեց Կատերինա Կարլովնան աւելի սառնութեամբ։

—Մամայան, ինչքո՞ր ես խօսում, սկուչնա ես, քէֆդ լաւ չէ, լիխօրադկա ունես,—փոխեց իր խօսքը Կարլ Մարկիչը, իսկապէս կատածելով աղջկայ առողջութեան մասին։

—Շկապը կողպելիս ձեռը ցաւեցրել է,—պատասխանեց Մարիա Իվանովնան աղջկայ փոխարէն։

Կարլ Մարկիչի մարմինն, կարծես, էլէքտրական թելի ծայր դիպցրին։ Նա այնպէս վեր թռաւ տեղից, որ սեղանն ընկաւ, սեղանը սաստիկ շարժվեց, թէյի բաժակը շուռ եկաւ, և թէյը սեղանի երեսով սկսեց հոսալ սենեակի յատակը։ Մարիա Իվանովնան և Սոֆէյը, չվոթվելով Կարլի այդ արագ շարժումից, նոյնպէս բարձրացան իրանց տեղերից։

—Դուշա մօեա, սքա, սքա, սքա տեսնում,—գոչեց Կարլ Մարկիչը, յարձակվելով իր աղջկայ վրայ։

Կատերինա Կարլոշեան, բաւական վախեցած իր հօր տարօրինակ շարժումից, անդիտակցաբար մի քայլ յետ գնաց։

—Կարլ, այդ ինչքո՞ր ես անում, գժուել խօ չես, վախեցրիր մեզ,—բացականչեց Մարիա Իվանովնան, ձիճաղելով։

Սակայն Կարլ Մարկիչն ուշադրութիւն չըդարձրեց նրա վրայ։

—Ցոյց տուր, սքա, տեսնում, դուշա։

—Հանգստացիր, պապա, ոչինչ չկայ, ցաւը վա-

ղուց է անցել,—խօսեց, վերջապէս, Կատերինա Կարլովնան շփոթված։

Կարլ Մարկիչը քիչ հանդստացաւ և բաց թողեց աղջկայ թևը։ Նա յետ նայեց և, տեսնելով իւր տասը րօրինակ շարժման հետևանքը, կարծես, ամաչեց իւր արարմունքից։

—Ինչպէս վախեցրիր ինձ, Մարիա, հէնց իմացայ, որ մատը ռազդավիչա է արել Կատեան,—ասաց նա, կրկին իւր տեղը նայելով։

—Ինչ էր միտդ, որ դու մեզ ռազդավիչա անէիր անպատճառ, այնպէս վեր թռար տեղիցդ,—պատասխանեց Մարիա Իվանովնան, ծիծաղելով։

Ընթրիքի ժամանակ նորեկները մանրամասն պատմեցին Կարլ Մարկիչին իրանց կեանքի մասին նրա բացակայութեան ժամանակ ու ասիպեցին նոյնն անել և՛ Կարլ Մարկիչին։ Կարլ Մարկիչը, կարծես, հէնց մի այդպիսի յարմար առիթ էր որոնում։ Նա, մի քանի բաժակ գինով գլուխը տաքացնելով, սկսեց երկար ու բարակ պատմել իւր մի տարուայ կեանքը։ Նա նկարագրեց դործարանը, նաֆթահանքերը, ծանօթացրեց նրանց նաֆթային արդիւնաբերութեան հետ։ Պատմեց, թէ ինչպիսի գանձ է Բադուն, թէ ինչպէս հեշտ են հարստանում այնտեղ մարդիկ և ինչպէս շուտ, թէ ինչպէս է Պետր Սաւելիչը հարստացել, առաջ ուրիշի մօտ գործակատար լինելով։ Կրկին սկսեց գովաբանել վերջինին, աւելացնելով, թէ յետ կայ որ ինքը, Կարլ Մարկիչը, նրա օգնութեամբ, մի օր գործարանատէր դառնայ և օրինակ բերեց չատերին, որոնք մի քանի տարուայ ընթացքում, ոչինչ չունենալով, հարստացել են։ Ասաց նոյնպէս, որ Պետր Սաւելիչին ինքը

մի քանի անգամ այս մասին ակնարկել է։ Պետր Սաւելիչը յոյս է տուել ժամանակով անկախ գործարանատէր դարձնել նրան, եթէ միայն լաւ կըծառայի։ Այժմ Կարլ Մարկիչն ինքն աշխատում է լաւ ծառայել Պետր Սաւելիչին, որպէս զի օրէցօր աւելի դրաւի նրա աչքին ու հովանաւորութիւնը։ Այնուհետև Կարլ Մարկիչն, աւելի ու աւելի տաքացնելով գլուխն և յանշատակվելով իւր պատմութեամբ, սկսեց նկարագրել իւր մօտիկ ապագան խիստ գեղեցիկ գոյներով։ Ասաց, որ շատ ժամանակ չի քաշիլ և ինքը կրկին կըդառնայ առաջուայ «պերվոյ գիլդի կուպեց Պօպովը» և դուցե մի քիչ էլ աւելի։ Այն ժամանակ թող մտիկ անեն «Հաշխանի» թշնամիները ու նախանձից սիրտները տրաքի։ Վերջապէս, Կարլ Մարկիչն ասաց, թէ այսուհետև ինքը նիւթապէս ապահովուած է և ոչինչ հոգս չունի։ Հարկաւոր է միայն մտածել առաջուայ մասին, ուրիշ ոչինչ։ Նա սկսեց խրատել իւր ընտանիքին, որ պահպանեն իրանց առողջութիւնը։ Խօսելով Կատերինա Կարլովնայի վերաբերութեամբ, նա կողմնակի կերպով ակնարկեց, թէ Բադուում կարելի է լաւ վեհացու ճարել նրա համար, որովհետև ապրիլք շատ կան, բոլորն էլ հարուստներ, իսկ գեղեցիկ, լուսաւորված և հնարքով աղջկերք—չատ քիչ։ Սրա պատճառն այն է, ասաց Կարլ Մարկիչը, որ Կովկասը դեռ «դիկիյ ստրանա» է, կանայք մեծ մասամբ չարասովի մէջ փաթաթված են, «օբրազովայտա» չեն եղել և այլն։ Ի վերջոյ Կարլ Մարկիչի երևակայութիւնը այնքան բորբոքվեց Կատերինա Կարլովնայի վերաբերութեամբ, որ նա վատահացաւ մի յանդուգն յոյս ող արտայայտել։ Բայց խելքն չատպեց աւելացնել, որ

այդ յուսոյ իրագործումը կախված է Կատերինա Կարլոմլեայից, թէ ինչպէս սա իրան ցոյց կըտայ և ինչպէս կըվարվի Պետր Սահմանիչի հետ և թէ վերջինն ինչպէս կընայի Կատեայի վրայ... Պատուիրեց Մարիա Իվանովնային, որ Պետր Սահմանիչին միշտ պատուով և յարգանքով ընդունի և ամեն անգամ «կօճիէով ուգատակիա անի»։ Խնդրեց նոյնպէս Կատերինա Կարլոմլեային, որ սա ևս իւր կողմից շատ քաղաքավարութեամբ վերաբերվի Պետր Սահմանիչին, հետը ոսերէն խօսի, «գերիկատնիչ պօսատուպիյատա» անի, «էնդուր որ Պետր Սահմանիչն ինքը ցիվիլիզովաննիչ կավալեր է և սիրում է նէժնի մանիերնէք»։

Մի խօսքով, Կարլ Մարկիչը բան չըմնաց, որ չըպատմի և պատուէրներ ու խրատներ չըմնաց, որ չըտար Մարիա Իվանովնային, նամանաւանդ Կատերինա Կարլոմլեային։

Ընթրիքն աւարտվեց։ Կարլ Մարկիչ Պօպօվը բոլոբոլված երևակայութեամբ հեռացաւ իւր սենեակը։ Արտեմը, Մարիա Իվանովնան և Կատերինան նոյնպէս գնացին իրանց սենեակները քնելու։

Առաւօտը Կարլ Մարկիչը ճիշտ որ, ինչպէս ինքը խօսք էր տուել Պետր Սահմանիչին, «խօրօշը կանչելիա» գործարան գնաց։ Իսկ Արտեմ Կարլիչը տասը ժամին ներկայացաւ Պետր Սահմանիչին և, մի քանի անհրաժեշտ պատուէրներ առանալով նրանից, իսկոյն ճանապարհվեց Բալախանի գործակատարի պաշտօնով։

VI

Հետևեալ օրը, կէսօրուայ դէմ, Պետր Սահմանիչը կրկին ներկայացաւ Կարլ Մարկիչի ընտանիքին, այս անգամ ուրիշ և աւելի չքեղ հագուստով։ Մարիա Իվանովնան խոհանոցում կերակուր էր պատրաստում ճաշի համար։ Կատերինա Կարլոմլեան մեքենայի վրայ մի ինչ-որ բան էր կարում։

Լսելով իւր հետից Պետր Սահմանիչի բարևի ձայնը, նա իսկոյն ընդհատեց գործը, բարձրացաւ տեղից և, սառն քաղաքավարութեամբ պատասխանելով նրա բարևին, ձեռ տուեց և դիմեց խոհանոց, որ մօրը յայտնի։

—Ոչինչ, ոչինչ, նեղութիւն մի քաշէք, Կատերինա Կարլոմլեա,—ասաց Պետր Սահմանիչը, կարելով նա օրիորդի ճանապարհը, որ նա դուրս չըգնայ։

Բայց օրիորդը չըլսեց նրան։ Մի վայրկեանից ներկայացաւ Մարիա Իվանովնան, թևերը մինչև արմունկները ծալած։ Պետր Սահմանիչը թռաւ տեղից և քաղաքավարութեամբ բարևեց նրան։

—Երէկ, երբ Կատերինա Կարլոմլեան իրեղէնները դարսում էր, ես նկատեցի, որ նրա ճերմակեղէնի կամօդը շատ հնացած է և անպէտք։ Ձրնեղանաք, Մարիա Իվանովնա, ես, տանից ձեր թոյլտուութեան, մի լաւ կամօդ եմ առել նրա համար, որն այս րոպէիս գործակատարս կը բերի։

—Ի դուր էք առել, ես չնորհակալ եմ, իմ կամօդը շատ լաւն է,—պատասխանեց Կատերինա Կարլոմլեան, մի նշանաւոր հայեացք ձգելով իւր մօր երեսին, որ սա ևս հրաժարվի նուէրն ընդունելուց։

Մարիա Իվանովնան հասկացաւ ապչկայ միտքը, բայց և այնպէս կամօդը խիստ հետաքրքրեց նրան։

—Յուզ առնեմ, մեզ համար ինչո՞ւ աւելորդ խարչեր էք անում, որ առաջուց ինձ ասէիք—ես չեմ Թողնի,—ասաց նա, սիրալիր նայելով Պետր Սահ-վանիչի երեսին, որ տեսնի ինչպէս հասկացաւ նա իւր անորոշ խօսքերը։

—Մեծ դուժար չեմ տուել, հարիւր մանէթին ինչ բան է, որ նրա համար մտածեմ,—պատասխանեց Պետր Սահվանիչը, ժպտալով Կատերինա Կարլովնայի երեսին։

Վերջինն երեսը դարձրեց դէպի մօրն և սկսեց յանդիմանօրէն նայել նրա երեսին։

—Կատեա, իսկ որ հէնց քեզ հարկաւոր է մի կա-մօդ, ինաս չունի, որ Պետր Սահվանիչն առանց մեզ հարցնելու առել է։ Հօրդ կասեմ, որ իւր ռոճիկից հարիւր մանէթ Թողնի Պետր Սահվանիչի մօտ։

—Մամա, ինչ ես ասում, հարիւր մանէթը պապայի մի ամսուայ ռոճիկն է, ես ինչ եմ անում այդքան Թանգ կամօդը,—կրկին հակառակեց օրիորդը։

—Դուք ինձ վիրաւորում էք, Մարիա Իվանովնա, ես փողի կարօտութիւն չունիմ. ես այդ իզուր մի չընչին նուէրը եմ տալիս և ոչ Թէ ծախում,—պատասխանեց Պետր Սահվանիչը, կեղծօրէն իրան վիրաւորուած ձևացնելով։

Այդ ժամանակ մի մշակ, Պետր Սահվանիչի գործակատարի առաջնորդութեամբ, ներս բերեց մի բաւական մեծ կամօդ ընկոյզի փայտից չինած։

Կամօդը դրեցին պատշգամբի վրայ։ Պետր Սահվանիչը բանալին շուռ տուեց և բաց արաւ, որ պա-

հարանը ցոյց տայ Կատերինա Կարլովնային և Մարիա Իվանովնային։

—Շատ գեղեցիկ բանէ, շատ էլ էժան եմ առել։

Այսպէս Թէ այնպէս, կամօդն այնքան գեղեցիկ էր, որ միանգամից գրաւեց Մարիա Իվանովնային։ Երբ կար ժամանակ նա նայում էր կամօդի ներսին, դուրսն, վերևին և չէր կարողանում կշտանալ նայելուց։ «Ինչ լաւն է, ինչ մեծն է, Կատեա, չորերդ կըտեղաւորվին»,—կրկնում էր նա անդադար, ուրախութենից պոյտ գալով պահարանի չորս կողմը։

Վերջապէս, աւելորդ ժամանակ չկորցնելու համար, Պետր Սահվանիչը կոզակեց պահարանն և բանալին առաջարկեց Կատերինա Կարլովնային, ուղղակի նրա դէմ կանգնելով և մէջքից Թեքվելով։

—Թանգ չէ նուէրը, բայց Թանգ է իմ սերը, ասում են ռուսները,—ասաց Պետր Սահվանիչը ռաերէն լեզուով, բանալին բռնելով ուղիղ օրիորդի քնքի առջև։

Այս խօսքերն օրիորդին աւելի չփոթեցրին։ Նրա երեսը կարմրեց, և նա չկարողացաւ Թէ ինչ պատասխանի, միևնոյն ժամանակ, բանալին չընդունելով Պետր Սահվանիչից։

Պետր Սահվանիչի դէմքով մի վայրկեան սահեց անբաւականութեան ժպիտ, բայց նա, զսպելով իւր վրդովմունքը, կրկին առաջարկեց։

—Ինչ ես մտածած ծնացել, Կատեա, ախար քեզ է առաջարկում Պետր Սահվանիչը։

Կատեան լուռ էր տակաւին։ Պետր Սահվանիչը բանալին յանձնեց Մարիա Իվանովնային, իւր դէմքը քիչ Թթուացնելով։

—Շնորհակալ ենք, շատ շնորհակալ ենք։ Առաուած

Ձեր մինը հազար անի, Պետր Ստեփանիչ, Ձեր լա-
ւութիւնը յաւիտեան չենք մոռանալ։ Կատեա, դու հը-
րաւիրիր Պետր Ստեփանիչին սենեակ, քիչ խօսեցէք,
ես գնամ, կոճէ պատրաստեմ այս րոպէիս։

—Դու ճաշիդիր, մամա, ես կըպատրաստեմ։

—Չէ, չէ, ինչ ես խօսում, դու քրբ ես կոճէ ե-
փել, որ հիմի թողնեմ։ Նատիր այստեղ, ես այս րո-
պէիս...

Կատերինա Կարլովնան ակամայ համաձայնվեց և
Պետր Ստեփանիչին հրաւիրեց ներս։ Նա մօտեցաւ
կարի մեքենային և սկսեց շարունակել իր ընդհատ-
ված գործը, առաջարկելով Պետր Ստեփանիչին նատել։

Պետր Ստեփանիչը նստած լուռ ու մունջ ապա-
հութեամբ նայում էր օրիորդին, որը դլուխը խոնար-
հեցրած, գործում էր նոյնպէս լուռ ու մունջ։ Նա կամե-
նում էր խօսել, բայց չդիտեր ինչի մասին խօսէր և
ինչպէս սկսէր։ Այդ աւելց մի քանի րոպէ։ Վերջապէս,
նա, իւր աթոռը վերցնելով, մօտեցաւ օրիորդի սեղա-
նին և վատահացաւ ընդհատել անտանելի լռութիւնը։

—Կատերինա Կարլովնա, այս դիշեր կլուբում լաւ
կոնցերտ է լինելու, ես եկել եմ ձեզ հրաւիրելու։ Կը-
համաձայնէք ինձ հետ միասին գնալ, տոմսակները էլ
վերցրել եմ։

—Ո՛չ, ներեցէք, չեմ կարող, շատ յոգնած եմ, մի
ուրիշ անդամ կըդամ,—պատասխանեց Կատերինա
Կարլովնան այս անդամ բաւական մեղմութեամբ։

—Այժմ ուշ է հրաժարվելը, տոմսակները գնված
են,—ասաց սիրտ առնելով Պետր Ստեփանիչը, թէև
դարձեալ սուտ, որովհետև նա տոմսակներ դեռ չէր
գնել...

—Առանց ինձ յայտնելու դուք էք առել։

—Հիմա ինչ և իցէ, երկուսը առել եմ, մէկը ինձ,
միւսը ձեզ համար, անպատճառ պիտի գաք։

—Ո՛չ, ես գալ չեմ կարող։

—Բաս տոմսակները,—ասաց Պետր Ստեփանիչը
կատակով։

—Տուէք ձեր ընկերներին։

—Ընկերներ չունիմ, Կատերինա Կարլովնա, ես
մենակ մարդ եմ այս աշխարհում, նոր եմ ուզում ըն-
կեր ձեռք բերել,—ասաց Պետր Ստեփանիչը, կեղծու-
թեամբ փոխելով իւր ձայնն ու դէմքն որպէս պի օրի-
որդի դուրը շարժի դէպի ինքը։

Սակայն Կատերինա Կարլովնայի դէմքի վրայ նա
չընկատեց ոչինչ փոփոխութիւն։ Նա տեսաւ նոյն ան-
տարբերութիւնը, նոյն սառնութիւնը, ինչ-որ առաջ էր։

—Այդպիսի քաղաքում ձեզ նման հարուստ մար-
դը շատ հեշտութեամբ կարող է ընկերներ ունենալ,—
պատասխանեց օրիորդը, չընայելով նրա երեսին։

—Մենակ եմ, մենակ, Կատերինա Կարլովնա, ա՛խ,
եթէ իմանաք իմ ցաւը։ Ես ունիմ շատ ծանօթներ,
բայց ոչ մի հետ բարեկամութիւն անել չեմ կարող։

—Ինչո՞ւ։

—Որովհետև այստեղի մարդիկ անքաղաքավարի
են, նրանց հետ ես չեմ սիրում ընկերանալ։

—Դուք ինչ տեղացի էք, ներեցէք հարցնել։

—Ես կովկասցի եմ, Շուշուհի եմ ծնվել։ Բայց
շատ երկար ժամանակ ապրելով Մոսկվայում, Պետեր-
բուրգում, մոռացել եմ Կովկասի կեանքը։ Ես սովորել
եմ ընկերութիւն անել կրթված, լուսաւորված, թատ-
րոններ, օպերաներ գնացող մարդկանց հետ։ Այստեղ

չըկան այնպիսի մարդիկ, այստեղ ամենքը միայն մի բանի վրայ են մտածում, այն է՝ փող աշխատել, և սրա համար փչացնում են իրանց կեանքը։ Գործարաններում, հորերի վրայ, նաֆթի և կեղտի մէջ կորած, մագաղիններում չիթուկաորի փոշու մէջ խեղդվում են, ոչնում են գիշեր ու ցերեկ, որ ինչ է իրանց դրպանները լեցնեն։ Լեցնում են և չեն իմանում ինչպէս ծախեն փողերն, ինչպէս ապրեն, որովհետև լուսաւորութիւն ասած բանը չեն հասկանում, որովհետև կրթված չեն։ Աշխարհ են շրջել, բայց ոչինչ չեն կարողացել սովորել։ Ամիրաներով, սարեներով մայրաքաղաքներում ապրել են, բայց բացի իրանց ապրած հիւրանոցից և մի քանի փողոցներից, ոչինչ չեն տեսել։ Ռուսաստանում այդ մարդիկ ոչ թատրոն են գնում, ոչ օպերա, ոչ կլուբներ։ Իսկ եթէ գնում էլ են, ոչինչ չեն կարողանում սովորել, թատրոնում կամ օպերայում ամենավերջին աթոռներն են վարձում, որ էժան նստի։ Շատերը գնում են, ներկայացումը չվերջացած, կիսատ են թողնում ու գնում դալիս, որովհետև ճաշակ ասված բանը չունեն։ Նրանց համար դուռնա-բալաբանի ձայնը քաղցր է, քան թէ Պատոի երգելը։ Մոսկվայում ինձ վրայ զարմանում էին, որ ես ամեն անգամ քանի ու հինգ րուբլի էի տալիս Պատոլին կամ Նիլսոնին լսելու կամ Սալվինիի խաղը տեսնելու, բայց ես սրանից ծիծաղում էի նրանց անհասկացողութեան վրայ։ Ինձ համար փողը մի միջոց է չքեղ ապրելու համար, իսկ նրանց համար նպատակ։ Ես ատում եմ նրանց, ատում եմ, որովհետև նրանք բոլորը թէև երիտասարդներ են, բայց հին հոգով և մաշված սրտով։ Ախ ինչու համար, ես, Կատերինա Կարլովնա, չեմ ընկերանում

նրանց հետ։ Ախ, եթէ գիտենայիք, թէ որքան ինձ համար դժուար է նրանց հետ խօսելն անգամ։ Ես մենակ եմ, Կատերինա Կարլովնա, մենակ եմ, և ինձ համար շատ ու շատ դժուար է անցկենում։ այստեղ

Պետր Ստեփանիչն ատենաբանում էր ոգևորված և պանապան թատրոնական շարժուձեւքներ անելով։

—Գնացէք, ուրիշ քաղաքում ապրեցէք,—ասաց Կատերինա Կարլովնան, երբ Պետր Ստեփանիչը դադարեց խօսելուց։

—Չեմ կարող, Կատերինա Կարլովնա, գործերս այստեղ են, թողնել անհնարին է։ Բայց ես, Կատերինա Կարլովնա, բաղդաւոր կլինեմ եթէ.. եթէ.. էհ...

Այստեղ Պետր Ստեփանիչի լեզուն չվոթվեց, և նա, չկարողանալով վերջացնել իր խօսքը, մի խորը հառաչանք արձակեց կրծքից։

Կատերինա Կարլովնան յոնքերի տակից նրա վրայ նայեց և, գլուխը խոնարհացնելով, քիչ կարմրեց։

Այդ ժամանակ դուռը բացվեց, Մարիա Իվանովնայի գլուխն երևեցաւ և նոյն վայրկեանին կրկին անհետացաւ։ Այդ նկատեց միայն Պետր Ստեփանիչը։

—Շատերը կարծում են, որ մարդ փողով է բաղդաւոր,—շարունակեց Պետր Ստեփանիչը Մարիա Իվանովնայի գլուխն անհետանալուց մի քանի րոպէ անցած։ Ես այդ չեմ հասկանում։ Ահա, ես հարուստ, փառք Աստուծոյ, էլ ինչ է պակաս, մի միլիոնի չափ կարողութիւն ունիմ։ (Պետր Ստեփանիչի կարողութիւնը երկու հարիւր հազարից աւելի չէր լինել)։ Տուն, տեղ, ոսկի—արծաթ, ծառաներ, կառքեր, ամեն բան ունիմ, ինքս էլ մենակ, ոչ ծնողներ ունիմ, ոչ եղբայր, ոչ քոյր, ոչ էլ պարտք, մի խօսքով ես իմ գըլ-

խի ու կարողութեան կատարեալ տէրն եմ։ Բայց մի թող դան սրտիցս հարցնեն, թէ նա ինչ է ասում, մանեն դրութիւնս և տեսնեն, թէ այսքան հարստութեան մէջ ինչպէս եմ ես ղժում ինձ...։ Տխուր, սրտխուր, մահու չափ տխուր...

Եւ Պետր Սահիանիչը կրկին կրծքից արձակեց մի սուտ հառաչանք և կրկին նայեց օրիորդի երեսին։

—Պատկվեցէք, դուցէ այն ժամանակ ուրախ կլինէք,—ասաց Կատերինա Կարլովնան, փորձելով աւելի պարզ հասկանալ նրա միտքը։

—Պատկվել, բայց ուր է իմ սիրած ապրիկը,—պատասխանեց Պ. Ս., մէկել հառաչելով։

—Ինչո՞ւ, ասում են, որ Բագումում շատերը կան։

Պետր Սահիանիչն ոգևորվեց, նրա դէմքն այլայլվեց, աչքերը կարմրեցին, և նա յանկարծ արագութեամբ բարձրացաւ աթոռից։

—Ձրկայ, չրկայ, Կատերինա Կարլովնա, չրկայ, բայի ձեզանից, թոյլ տուէք...

Եւ նա, յարձակվելով օրիորդի վրայ, կամեցաւ համբուրել։ Օրիորդը սարսափած վեր թռաւ տեղից, հրելով Պետր Սահիանիչի կրծքին։

—Ի՞նչ էք անում, հեռու կանգնեցէք,—ասաց նա սպրդնելով։

—Ես ձեզ սիրում եմ...

—Սուտ էք ասում։

—Երդվում եմ Աստուծով, Կատերինա Կարլովնա, հաւատացէք և թոյլ տուէք,—ասաց նա, կրկին ժամնալով օրիորդին։

—Հեռու գնացէք, եթէ ոչ—կըղոչեմ...

Պետր Սահիանիչը ձեռց արձանացած տեղն ու

տեղը։ Մի քանի վայրկեան այս դրութեան մէջ ձեռլուց յետոյ, նա մօտեցաւ օրիորդին և ասաց խոնարհութեամբ.

—Ներեցէք, Կատերինա Կարլովնա, ես հանաք էի անում, ներեցէք...

—Այդ տեսակ հանաքներ չեն անում օրիորդի հետ։

—Լաւ է, մոռացէք, մոռացէք, խնդրեմ, միւս անգամ չեմ անիլ։

Ներս մտաւ Մարիա Իվանովնան, մի ձեռում սրբաճամանը, միւսում կաֆեամանը։

Կատերինա Կարլովնան ուղղեց իրան, Թօլմազօվը նոյնպէս, և միամիտ Մարիա Իվանովնան ոչինչ չկարողացաւ նկատել։

Նատելին սուրճ խմելու։ Փոքր առ փոքր Կատերինա Կարլովնան ուշքի եկաւ և սկսեց խօսել, նոյն իսկ զուարճախօսել։ Կարծես, ոչինչ չէր պատահել։ Պետր Սահիանիչը նոյնպէս սկսա առաւ։ Սուրճը խմելուց յետոյ, նա յանդգնեց կրկին առաջարկել Կատերինա Կարլովնային երեկոյին միասին կօնցերտ գնալու։ Օրիորդը վճռաբար մերժեց։ Բայց և այնպէս, վերջումը Պետր Սահիանիչին, երկար թախանձանքներից յետոյ, Մարիա Իվանովնայի միջնորդութեամբ, յաջողվեց Կատերինա Կարլովնայից հաստատ խօսք առնելու, որ սա միւս անգամ կըղնայ իւր հետ կօնցերտ, որը պիտի լինէր մի շաբաթից յետոյ։

Պետր Սահիանիչը հեռացաւ փոքր ինչ թեթևացած սրտով։

VII

Մինչև կոնցերտի օրը Պետր Ստեփանիչն օրական երկու անգամ այցելում էր Մարկիչի ընտանիքը։ Թէ Մարիա Իվանովնան ոչքան դոհ էր այդ այցելութիւնից, թէ ինչ ուրախութիւնով էր ընդունում Պետր Ստեփանիչին ամէն անգամ, թէ ինչ չարժուածներ, ինչ պատյաններ էր անում խեղճ կինը նրան հաճոյանալու համար—անհնարին է նկարագրել։ Եւ ինչպէս կարող էր ուրիշ կերպ վարվել Մարիա Իվանովնան, քանի որ նա տեսնում էր, թէ ոչքան ուշադիր է Դօլմազովինման մի նշանաւոր հարուստ դէպի իւր մի հինին դործակատարի հինին ընտանիքն և ինչպէս նա հոգում է այդ ընտանիքի բարդաւորութեան համար։ Բայց մի առանձին ուրախութիւն էր պատում Մարիա Իվանովնան իւր աղջկայ վերաբերմամբ, նկատելով այն ուշադրութիւնն, որին արժանացել էր Կատերինա Կարլովնան Դօլմազովի կողմից։ Շատ անգամ նա, լուռ մնալով ձեռները ծոցում ծալած, քաշվում էր սենեակի մի անկիւնը, մտիկ անում իւր աղջկան և Պետր Ստեփանիչին, որոնք իրարու դէմ նստած խօսում էին, մտիկ էր անում և խորասուզվում մտածողութեան մէջ։ Այդպիսի րոպէներում նրա ծնողական զգայուն սիրտը սկսում էր բաբախել իւր սիրեցեալ զաւակի բաղդաւորութեամբ։

Մարիա Իվանովնայի առաջ պատկերանում էին վառաւոր կառքեր, բազմաթիւ ծառաներ, զարդարուն սենեակներ մի բարձրաշէն շքեղ տան մէջ։ Տունը Դօլմազովինն է, իսկ նրա մէջ իշխում է իւր աղջիկը։ Կատերինա Կարլովնան ամբողջ օրը պատում է զարդարուն սենեակների մէջ, կարգադրութիւններ է անում, հիւրեր է ընդունում և ճանապարհ դնում։ Իսկ երեկոները Պետր Ստեփանիչի հետ նստում է կառք և դնում ծովափը զբօսանելու։ Զբօսանքից վերադառնում է տուն, թէյ խմում, հագուստը փոխում, աւելի շքեղը հագնում և Պետր Ստեփանիչի հետ թեւ թեւի տուած դնում թատրոն, պարահանդէս և այլն։ Նրանց հետ դնում է նոյնպէս և՛ Արտեմը։ Իսկ ինքը, Մարիա Իվանովնան կարլ Մարկիչի հետ մնում են տանը, խօսում են, զուարճանում են, սպասելով երիտասարդ ամուսինների վերադառնալուն, որ միասին ընթրեն։

Եւ այսպէս, ուրեմն, Մարիա Իվանովնան երևակայում էր ոչ միայն Կատերինա Կարլովնայի, այլև ամբողջ ընտանիքի ժամիկ ապագան բաղդաւորված, եթէ միայն Դօլմազովի սիրան այնքան բարի է, որ նա ուշադրութիւն չի դարձնիլ նրանց աղքատութեան վրայ, եթէ նա աչքի առջև կունենայ Կատեայի անձնաւորութիւնը, նրա գեղեցկութիւնը, չնորքը, բնաւորութիւնն և եթէ Կատեան նոյնպէս, լաւ պատրաստելով իւր ապագան, կաշխատի այդ յատկութիւններն աւելի գեղեցիկ, աւելի հրապուրիչ դոյներով ներկայացնել Դօլմազովին, որպէս զի անդառնալի կերպով գրաւի նրա սիրտը։ Բայց աւաղ, Կատեան այդ չէր հասկանում, որովհետև, Մարիա Իվանովնայի կարծիքով, նա յիմար էր և փոխանակ Դօլմազովին գրաւելու, աշխատում էր, կարծես, զզվեցնել նրան։ Նա առաջուայ պէս սառն և երբեմն կոպիտ էր վարվում Դօլմազովի հետ։ Մարիա Իվանովնան այդ տեսնում էր և մինչև իւր հոգոյ խորքը վրդովվում, բայց չէր կա-

բոզանում Գոլմազովի ներկայությեամբ արտայայտել իւր վրդովմունքը Կատարինեի։ Նա, դպելով իւր բարկուբիւնը, սպասում էր Գոլմազովի հրաժարվելուն։ Երբ խնամատարն ոտը դռներից դուրս էր դնում, մայրը սկսում էր թափել աղջկայ դլխին անթիւ նախատինքներ և երբեմն յիշոցներ։

—Հազար անգամասել եմ, որ դիժ ես, խելք չունես. դու ոչ քեզ և ոչ մեզ համար չես մտածում։ Աչքատու հարստա, աչքերդ բաց արա և լաւ տես, թէ դու ինքդ ով ես, ինչ ես, իսկ Գոլմազովը ով է։ Գիտես, որ մեր ապրուստը նրանից է կախված, ինչպես ուզենայ, այնպէս էլ կարող է անել, կարող է մեզ հարստացնել, կարող էլ է քայլցած թողնել, բայց դու էլի դուռդ ու դռռոզ։ Ինչ ես մտածում, որ քինդդ այդքան բարձր ես պահում։ Խելքի եկ, Կատեա, տես, մեկ էլ եմ ասում, մեր օրը քեզանից է կախված...

Եւ այսպէս, Մարիա Իվանովնան երկար նախատում էր իւր աղջկան։ Սակայն աղջիկը շարունակում էր իւր «յիմարութիւնը»։ Մի օր նրա յանդգնութիւնն այնտեղը հասաւ, որ նա պատասխանեց իւր ծնողի յանդիմանութեանը, թէ ինքը դիտմամբ է սուտն վարվում Գոլմազովի հետ, որպէս զի վերջինը դադարի իրանց այցելելուց։ Մարիա Իվանովնան փրփրեց, կատաղեց իւր աղջկայ այդ յանդգնութեան վրայ, բայց... դարձեալ անօգուտ։

Գալով Գոլմազովին, պէտք է ասած, որ նա սկսել էր մեծ ղգուշութեամբ վարվել Կատերինա Կարլովնայի հետ, նոյն իսկ Մարիա Իվանովնայի բացակայութեան ժամանակ։ Նա պահում էր իրան համեստ, չէր համարձակվում որ և է աւելորդ խօսք թողնել բերա-

նից։ Նա այնպէս էր իրան ձևացնում օրիորդի առջև, որ իբրև թէ սաստիկ փոշմանել է իւր նախկին վարմունքի մասին։ Սակայն Կատերինա Կարլովնան ոչքան ղեղյշ էր, օրքան դիտող, դարձեալ չէր կարողանում հասկանալ այդ խորամանկութիւնն և լիովին թափանցել Գոլմազովի հոգին։

Հաստատ կօնցերտի երեկոն։ Պետր Ստեփանիչը ժամանակից մի ժամ առաջ զուգվեց և, իւր սեպհական կառքը նստելով, եկաւ Կատերինա Կարլովնայի մօտ։ Օրիորդը դեռ հագնված չէր։ Նա մոռացել էր իւր խոստումը, փորձել հրաժարվել։ Մարիա Իվանովնան ուղղակի կատաղեց. ինչպէս կարելի է հրաժարվել Գոլմազովի պէս մարդու հետ մի որ և է հանդէս գնալուց։ Գոլմազովն, օրիորդի կասկածը փարատելու համար, ասաց.

—Մարիա Իվանովնա, դուք էլ հագնվեցէք մեզ հետ գնալու։

Մարիա Իվանովնան հոգով ուրախ էր նրանց ուղեկցելու, քիչ մնաց համաձայնվէր անպատ, բայց յիշեց, որ օրինաւոր հագուստ չունի։

—Ուրիշ անգամ,—ասաց նա,—ուրիշ անգամ։—Կատեա, դնա, պատրաստուիր։

Ամպամած օրիորդը շատ անգամ իրան հարցնում էր, ինչպէս եղաւ, որ նա մոլորվեց և կամքի այժ չունեցաւ ասանը մնալու։ Նա անցաւ մօր հետ իւր սենեակը։

Գոլմազովը մնաց մենակ, կանգնեց հայելու առջև և սկսեց դիտել իրան ոտից մինչև գլուխ։

—Թիւ, իսկ որ շատ եմ տգեղացել... ինչ անճոռնի է լինում մարդ առանց յօնքերի և թերթերունք-

ների,—խօսում էր նա, ուղղելով իւր ապիտակ վոլկասը։ Փարիզից բերել տուած ճարն էլ չի օգնում մազեր բուսնելուն... Աւում են, որ Վիէննայում կան բոլոր են բժշկել. հարկաւոր է անպատճառ գնալ, եթէ ոչ խայտառակութիւն է, կանայք ինձանից վախչում են։

—Էհէ, այ մի ուրիշ ցաւ, այս լինչ է դուրս գալիս քնթիս վրայ,—շարունակեց նա, շօշափելով քնթի ծայրն, ուր դոյացել էր մի կարմիր պչտիկ։—Ցաւում է, այդ լաւ նշան չէ, հարկաւոր է անպատճառ բժշկին ցոյց տալ...

Ներս մտաւ Կատերինա Կարլովնան։ Դօլմազովը շտապեց հեռանալ հայելուց։

Օրն արդէն մթնել էր։ Բաղաքային ժողովարանի դահլիճն, ուր պիտի կայանար կօնցերտը, լուսաւորվում էր առաստաղից քաշ տուած երեք ահագին ջահերով և պատերին խփած բազմաթիւ կանթեղներով։ Օրկոստրը, Դօլմազովի ուղեկցութեամբ, բարձրացաւ ընդարձակ սանդխատով դէպի դահլիճը։ Ներկայացումը դեռ չէր սկսվել։ Հանդիսականներն, այս ու այն կողմ ցրված, պտօսնում էին։ Երիտասարդ վաճառականների մի խումբ նախատեղեակի մի անկիւնում պատրաստած բուֆէթի առջև, մի սեղանի շուրջը հաւաքված, կոնծում էր... Խմբի մէջ երևում էր և՛ Սերգէյ Իվանիչն, որի հետ մենք ծանօթացանք կայարանի վրայ։

Պետր Սաւելիանիչն աշխատեց դահլիճ մտնել Կատերինա Կարլովնայի հետ այնպէս, որ խումբը չնկատէ։ Բայց այս չյաջողվեց նրան։

—Օհօ, Պետո, լոյսը քեզ տեսնողին,—գոչեց բարձր ձայնով խմբի միջից երեսը սափրած մի երիտասարդ կարմրած աչքերով։

Նա, խլոյն բաժանվելով խմբից, մօտեցաւ Դօլմազովին։

—Բարև, Սիմոն Լազարիչ, քէֆդ,—հարցրեց Պետր Սաւելիանիչը, մի քիչ շփոթվելով և արագութեամբ սեղմելով երիտասարդի ձեռը։

—Կաց, ուր ես փախչում, կաց... տեսնեմ այդ ով է քեզ հետ,—ասաց երիտասարդը, բռնելով Դօլմազովին թևից։

—Օհօ, Պետո, չնորհաւորում եմ, լինչ տեղից ես ճանկել այդ լուսնեակին։

Բայց Պետոն աշխատում էր խոյս տալ։ Նա, մի կերպ իւր թևն ազատելով երիտասարդի ձեռից, շտապեց դէպի Կատերինա Կարլովնան, որն այդ ժամանակ այնչափ հեռու էր, որ չէր լսում նրանց խօսակցութիւնը։

—Տղերք, նոր խաբար, Դօլմազովը, ղսչտը նոր որս է արել,—ասաց երիտասարդը, վերադառնալով և կրկին խառնվելով խմբին։

—Ո՞վ է, ո՛վ է,—հարցրին միաբերան մի քանիսը խմբի միջից։

—Հայի էր նմանում, բայց չըճանաչեցի, լուսնեակ է, ապասեցէք, մի բաժակ էլ կոնծեմ և գնամ ես էլ ծանօթանամ։

Սիմոն Լազարիչը դատարկեց մի բաժակ ևս։

—Ի դուր նեղութիւն մի քաշիր, Սիմոն Լազարիչ, Դօլմազովը քո տասած մարդը չէ, ռեխդ թիքա չի գըցիլ։ Ես աղջկան էլ ճանաչում եմ և գիտեմ լինչ բան է։

—Ո՞վ է, ո՛վ է, Սերգէյ Իվանիչ,—կրկնեց դարձեալ միաբերան հետաքրքիր խումբը, չլսելով Սերգէյ Իվանիչին։

—Իւր դործակատարի աղջիկն է։

—Հաշտարարանցին, հա, ես էլ եմ տեսել, ես էլ եմ տեսել, շատ դեղեցիկն է,—ասացին մեմեանց և տեսից մի քանիսը։

—Դեղեցիկ լինելը դեղեցիկ է, բայց ինչ անես, որ... Եւ Սերդէյ Իվանիչը, խօսքը չաւարտելով, կրծքից մի հոդոց հանեց և դլուխը խորհրդաւոր կերպով շարժեց։

—Ինչպէս։

—Այնպէս,—պատասխանեց Սերդէյ Իվանիչն, աչքի մէկը խփելով և շրթունքները կրծելով։ Տուն, տեղ, ամեն օր նուէրներ, հօրն և եղբօրը պաշտօն լաւ ռոճիկներով։

—Փա՜հ քո վիզը կոտրվի Դօլմազօվ, օտարներից կշտացար, հիմայ էլ հային ես ձեռ դցել,—բացականչեց Սիմօն Լազարիչը, ձեռների ափերը իրարու խփելով։

—Չեմ հաւատում, ես Պօպօվի աղջկան ճանաչում եմ, նա շատ հպարտ և խելօք աղջիկ է։ Դօլմազօվը չի կարող նրա հետ խաղ խաղալ,—մէջ մտաւ ուրիշն, որը մինչև այդ ժամանակ լուռ էր։

—Ի՜հէ, երևի, դու լաւ չես ճանաչում Դօլմազօվին,—պատասխանեց թերահաւատին Սերդէյ Իվանիչը, դլուխը շարժելով։—Նա այնպիսի մարդ չէ, որ մէկի համար անօգուտ մի կոպէկ ծախսի, ուր մնաց այնքան բաներ բաշխի, ինչ-որ բաշխում է Պատապարի աղջկան։ Տունը լցրել է հազար տեսակ բաներով, էլի օր չի անցնում, որ մի նուէր չբտանի հիւր գնալիս։

—Չէ, եղբայր, ես լաւ եմ ճանաչում Դօլմազօվին, դիտեմ ինչ հոդի ունի...

Զանգակը հնչեցրին, ներկայացումը սկսվեց, առջևը մտան դահլիճ։

Պետր Սահակիչն և Կատերինա Կարլովնան նըստած էին երկրորդ կարգում։ Օրիորդը հագնված էր թէև ոչ շքեղ, բայց բաւական նուրբ ճաշակով։ Բազմաթիւ լապտերների լուսաւորութեան ներքոյ նրա կրծքի վրայ պսպղում էր ոսկեայ մեդալիոնի ադամանդը։

Դահլիճը լիքն էր հանդիսականներով։ Այս ու այն կողմերից մի քանի երիտասարդներ և կանայք, ներկայացումը մոռացած, իրանց հետագիտակներն ուղղել էին անծանօթ օրիորդի վրայ։ Պետր Սահակիչն այս տեսնում էր և ինքնաբաւականութեամբ ժպտում։ Նա պարծենում էր, որ ինքն այդ երեկոյ շատ երիտասարդների նախանձի առարկայ է։ Նա տակ տակ թեքվում էր Կատերինայի ականջին և չընչալով խօսում։ Օրիորդը չէր խօսում. նա ուշադրութեամբ լսում էր երաժշտութիւնը. միայն երբեմն Պետր Սահակիչի հարցերին պատասխանում էր գլխի շարժումով «այո» կամ «ոչ» և ուրիշ ոչինչ։

Վերջապէս, կոնցերտն աւարտվեց, հանդիսականները ցրվեցին, և օրիորդը դուրս եկաւ։ Դօլմազօվը հետևում էր նրան, իւր գլխարկը ձեռում շուռ տալով և չորս կողմ անդադար յարմական հայեացքներ ձգելով։ Նրա ժպժպված դէմքն ուրախ էր ու փոքրիկ աչքերի սևագոյն բիբերն արագութեամբ խաղում էին, փայլելով։ Կատը փողոցի դռանը սպասում էր։ Նա, օրիորդի հետ նստելով, չընչաց կառապանի ականջին, և կառքը մի րոպէում սլացաւ։

—Տար, տար, բայց տեսնենք երբ ես փախելու կերածդ,—ասաց կառքի ետևից մի մարդ, որն ամբողջ ժամանակ, կլուբի դռների ետևում թաղնված,

սուր աչքերով հետեւում էր մեր հերոսին։

Դա Սերգեյ Իվանիչն էր։

VIII

Գիշերից բաւական անցել էր։ Երկինքը պարզ էր։ Լուսին չկար։ Նաֆթային լապտերները թոյլ կերպով լուսաւորում էին փողոցները։

—Ո՞ւր ենք գնում, կարծեմ, մեր տունը մնաց այն կողմ,—հարցրեց յանկարծ օրիորդն, երբ տեսաւ, որ կառքը մտաւ մի բոլորովին իրան անծանօթ փողոց։

—Մեր տուն,—պատասխանեց Դօլմազովը համառօտ։

—Ինձ մեր տուն հասցրէք, յետոյ դուք գնացէք։

—Ձեզ էլ հետս տանում եմ։

—Ես ինչ գործ ունիմ ձեր տանը։

—Պէտք է միասին ընթրենք։

—Շնորհակալ եմ, Պետր Ստեփանիչ, ախորժակ չունիմ, խնդրեմ, ինձ մեր տուն ճանապարհ դրէք։

—Անկարելի է։

—Ո՛չ, ո՛չ, ուշ է, մայրս անքուն սպասում է ինձ...

—Շուտ կվերջացնենք ընթրիքը, իսկոյն կուղեկցեմ ձեզ ձեր տուն։

—Ցաղնած եմ, Պետր Ստեփանիչ, թոյլ տուէք, մի ուրիշ անգամ ձեզ մօտ հիւր կըգամ այսօրուայ վնասարէն,—չարունակեց օրիորդն այս անգամ աղերսալի ձայնով։

—Աչքիս վրայ տեղ ունէք ամեն օր, բայց այժմ զուր էք հակառակում, անպատճառ տանելու եմ,—պատասխանեց Դօլմազովը վճռաբար։

Մինչ Կատերինա Կարլովնան այսպէս հակառակում էր, կառքը հասաւ և կանգնեց Դօլմազովի տան դրան առջև։ Մի քանի րոպէ օրիորդը չէր համաձայնում իջնել կառքից։ Պետր Ստեփանիչը հանգստում էր նրան, ապացնելով, խնդրելով, սակայն ի զուր. օրիորդը յամառութեամբ կպել էր կառքին և պատրաստ չէր դալիս։ Դօլմազովի համբերութիւնը հասաւ իր վերջնակէտին. նա, բեղերը կրծոտելով, զսպեց իրան և սկսեց կրկին յորդորել օրիորդին։ Օրիորդը նոյնպէս դուրս եկաւ համբերութենից և բարկացած հրամայեց կառապանին կառքը քշել, բայց կառապանը մի շարժում անդամ չարաւ օրիորդի հրամանը կատարելու։ Դօլմազովին վիրաւորեց Կատերինայի վարմունքը, նրա ինքնասիրութեան նեղ զգացմունքները բորբոքվեցին։ Փողոցում սիրում էր լուսնթիւնը։ Դօլմազովը նայեց իր չորս կողմն և բացի կառապանից չըտեսաւ ոչ մի մարդ, որ վկայ լինէր այդ անասարանին։ Կառապանն, առյդ ձիերի սանձը ձեռքում սեղմած, լուռ ու մունջ մեխված էր իր տեղում. միայն երբեմն, սանձը շարժելով, նա հարուածում էր այս կամ այն ձիուն և իր քնաթաթախ ձայնով կրկնում. «առաբրր, առօ.օ...օ՛յ, պռօկլեսաաե»... Դօլմազովը մեկ ոտը դրեց կառքի վրայ և, երկու ձեռներով բռնելով օրիորդի մէջքից, դրկից ու մի վայրկեանում ցած բերեց ուժով։

Երկու եղբ կար Կատերինա Կարլովնայի առջև. նա կամ պիտի հնազանդվեր կամ պիտի փախչէր...

Նրանք մտան ներս և մի ընդարձակ սանդղասով բարձրացան վերև։ Պետր Ստեփանիչը պատշգամբից օրիորդին ուղղակի առաջնորդեց մի ոչ այնքան ընդարձակ սենեակ։ Իսկ ինքը, մի րոպէ բաժանվելով

նրանից, իւր ապաստարին տուեց ինչ-որ պատուէրներ և կրկին վերադարձաւ։

Առաստաղից քաշ արած փոքրիկ կոլորակ կանթեղը լուսաւորում էր սենեակի մոխրագոյն պաստառով ծածկված պատերը, ուր քաշ արած էին մի քանի մեծ ու փոքր պատկերներ կասկածելի բովանդակութեամբ։ Մի անկիւնում դրած էր մի բարձր մահճակալ փափուկ անկողնով, միւսում դանովում էր մի ահագին հայելի, երրորդում մի կոլորակ սեղան, իսկ չորրորդում մարմարոնեայ լուացարանն իւր բոլոր պատկանելիքներով։ Պետր Սահակիչը շտապեց նախազգուշացնելու, որ դահլիճի և միւս սենեակների դռները ու պատուհանները նոր են ներկված, այնպէս որ ներկի հոտից անկարելի է այնտեղ մնալ և հրաւիրեց օրիորդին ներս։ Մի ակռաւոր անցաւ Կատերինա Կարլովնայի մարմնով, երբ նա հայեացք ձգեց սենեակի կահ-կարասիքի վրայ։ Նա ակամայ սկսեց դողալ, գրեթէ անզգայաբար մօտեցաւ մէջ տեղ դրած քառանկիւնի սեղանին և նստեց նրա շուրջը, աթոռներից մէկի վրայ։

Մի քանի րոպէում պատաւորը սեղանի երեսը ծածկեց սպիտակ մաքուր սփռոցով, և մէջ տեղ եկան մի քանի տեսակ ուտելիքներ և ըմպելիքներ։ Պետրոգովը անմիջապէս իւր համար մի բաժակ օղի ածեց, իսկ օրիորդի համար մի ուրիշ ինչ-որ արտասահմանեան ըմպելիք։

—Խմեցէք, շատ քաղցր խմիչք է, վնաս չի տալ ձեր արտին,—ասաց նա, բաժակը դնելով Կատերինա Կարլովնայի առջև։

Օրիորդը բաժակի ծայրը դրեթէ անզիտակցաբար կպցրեց շրթունքներին և իսկոյն վայր դրեց։

—Ձեր կենացը, Կատերինա Կարլովնա,—շարունակեց Պետրոգովը և, օղու բաժակը դարկելով նրա բաժակին, խմեց մինչև կէսը։

Օրիորդն, աշխատելով ուշքը ժողովել, դլուխը շարժեց, առանց մի խօսք ասելու։ Պետրոգովը սկսեց ընթրել։ Օրիորդը չէր ուտում, բայց երբ Պետրոգովը նրան սպիտակ, նա մի երկու կտոր բան դրեց բերանը և, դարձեալ յետ քաշվելով, սկսեց երկիւղածութեամբ նայել իւր չորս կողմը։ Ինչպէս որսորդներից հալածված եղջերու, նա զգում էր, որ անտառի խորքում ընկել է մի այնպիսի նեղ տեղ, որտեղից ազատվելն անհնարին է։ Անհանգիստ դէմքով և դողդողալով նա իւր հայեացքը մերթ ձգում էր սենեակի պատերին մերթ Պետրոգովի վրայ։

—Ինչո՞ւ չէք ուտում, Կատերինա Կարլովնա,—կրկնում էր Պետրոգովը անդադար։

—Ախորժակ չունիմ, խնդրեմ, Պետր Սահակիչ, ինձ շուտ ճանապարհ դրէք։

—Մի շտապէք, դեռ շատ վաղ է, տաներկու ժամը չի լրացել։ Դանէ, Կատերինա Կարլովնա, մի երկու բաժակ այս քաղցր ըմպելիքից խմեցէք, շատ հաճելի բան է, փորձեցէք։

Պետրոգովը կրկին լեցրեց մի բաժակ և դրեց Կատերինայի առջև։ Օրիորդը դլուխը չուռ տուեց և բաժակը հեռացրեց իրանից։

—Ինչո՞ւ էք այդպէս անում, Կատերինա Կարլովնա, դուք ինձ վիրաւորում էք։

—Մայրս, խեղճը հիմայ սպասում է,—պատասխանեց օրիորդը, փորձելով տեղից բարձրանալ։

—Ո՞ւր էք դնում, սպասեցէք,—ասաց Պետրոգո-

վը, բռնելով նրա թևից մեղմիկ և նրանից նահանջելով իր առաջը։ Օրիորդն ակամայ հնազանդվեց նրա կամքին։ Պետր Սահմանիչը լիք բաժակը կրկին մոտեցրեց նրան, ասելով.

—Եթէ այս անգամ ևս մերժէք իմ խնամարհ խընդիրն և մինչև յաւտակը չի դարտկէք այս բաժակը, խմացէք, որ դուք ինձ մինչև արտխ խորքը վիրաւորած կըլինէք։ Վերցրէք, Կատերինա Կարլովնա, և սրտով խմեցէք. դա ձեր եղբօր, Արտեմ Կարլիչի կենացն է։

Այս ասելով, Դոլմազովն իր հաւտար մի բաժակ դինի ածեց և առաւ ձեռքը, սպասելով օրիորդին։ Կատերինա Կարլովնան ճարահատեալ առաւ բաժակն և, դարձեալ մի քիչ կում անելով, տեղը դրեց։

—Ես զարմանում եմ, դուք ինչ քարտասիրան էք, որ ձեր միակ եղբօր կենացն էլ չէք խմում,—ասաց Դոլմազովն և նոյնպէս լիք բաժակը դրեց սեղանի վրայ։

Օրիորդն ոչինչ չըպատասխանեց։ Պետր Սահմանիչը չարունակեց խօսել, փոքր առ փոքր ոգևորվելով։ Նա ասաց, թէ բաղդաւոր է այն մարդն, որ եղբայր ունի և, հետզհետէ խօսքը դարձնելով իր վրայ (դա նրա սովորական ցանկութիւնն էր), աւելացրեց, որ ինքը նախանձում է եղբայր ունեցողներին։ Նա սկսեց դատվել իր՝ իբր թէ տխուր՝ ճակատագրի դէմ։ Նկարագրեց իր վիճակն ամենատխուր գոյներով, աշխատելով համոզել օրիորդին, թէ որքան ինքն անբաղդ մարդ է և ինչպէս ճակատագիրն անդթութեամբ հալածում է իրան։ Կրկնեց նոյնպէս, թէ համոզված է, որ կարող է բաղդաւորվել միայն այն ժամանակ, երբ իր կեանքը կըկապի մի սիրեցեալ էակի հետ, որը կարող լինէր ամենայն լինել նրա դատնութիւններին և ուրախութիւններին։ Նա աւելացրեց, թէ հէնց իր դէմ բաղդութիւնը կայանում է նրանում, որ մինչև օրս դեռ չի գտնում մի այդպիսի էակ, իսկ նա, որի վրայ յոյս ունի, շատ անգութ է վերաբերվում դէպի իրան...

Եւ այս միտքը յայտնելու ժամանակ Դոլմազովն իր վաղաշոտ աչքերը յառեց օրիորդի երեսին, որ տեսնի, գոնէ այս անգամ նրա վրայ գոհացուցիչ ազդեցութիւն արին իր խօսքերը թէ ոչ։

Կատերինան թէև ուշադրութեամբ չէր լսում, բայց հասկացաւ, թէ Դոլմազովն ում մասին է ակնարկում, հասկացաւ և ոչինչ չասաց։

—Երբ դուխս խառն է գործերով, էլի մի կերպ օրերս անցնում են, իսկ երբ գործերից ազատվելով դատ եմ տուն, դարձեալ մի ինչ-որ ծանրութիւն նրտսում է սրտիս վրայ։ Մտիկ եմ անում չորս կողմ—ոչինչ մխիթարութիւն, ոչինչ թեթևութիւն չեմ գտնում։ Տանս պատերը, կարծես, ինձ թշնամի լինին։ Այո, Կատերինա Կարլովնա, չըկայ մէկն, որ թեթևացնի իմ հոգին, չըկայ մէկն, որ կարողանայ իր քաղցր հայհոյանքով, իր դիւրեկան խօսակցութեամբ մխիթարել իմ վշտացած սիրտը։ Ճարահատեալ պատկում եմ անվրդին և անեռանկի առաստաղին նայում։ Կըհատատաք, որ շատ անգամ փոքրիկ երեխայի պէս լաց եմ լինում իմ սենեակում։ Լաց եմ լինում և յետոյ հագցնում եմ ու դուրս վազում տնից, ինչպէս բանդից։ Գնում եմ դուրս—այնտեղ միևնոյն տխրութիւնը, միևնոյն դատնութիւնը։ Թէ մինչև երբ պիտի չարունակվի իմ այս անտանելի դրութիւնը, ինքս էլ չըգիտեմ։ Բայց,

Կատերինա Կարլովնա, ես այժմ պիտի եմ, թէ կայ մէկը, որ կարող է վերջ դնել իմ ցաւերին. այդ մէկը...էհ...

Եւ Դոլմազովի կրծքից կրկին դուրս թռաւ մի կեղծ հառաչանք։

Արդէն անցել էր բաւական ժամանակ։ Կատերինա Կարլովնան, օգտվելով Դոլմազովի բոպէական լռութենից, բարձրացաւ իւր տեղից։

—Սպասեցէք,—ասաց Դոլմազովը։

—Ո՛չ, բաւական է, ինչքան պահեցիք, թոյլ տուէք։

—Մի քիչ էլ նստեցէք, խնդրեմ։

Սակայն օրիորդն այս անգամ չլսեմաձայնվեց նրա առաջարկութեան։ Նա երեսը չուռ տուեց և վճռողական քայլերով դիմեց դէպի դռները։

—Ո՞ւր էք փախչում,—բացականչեց Դոլմազովն և, վազելով օրիորդի ետևից, բռնեց նրա ձեռքը։

—Հերիք է, Պետր Սաւելիչ, դադարեցէք։

—Հերիք է, հերիք չէ, այ թէ հերիք է։

Եւ այս անորոշ խօսքերն արտասանելով, Դոլմազովը դռները փակեց, բանալին չուռ տուեց և կողպեց։

—Ցանկում էք, հա, հա, հա,—գոչեց նա, չարաճճիութեամբ ծիծաղելով։

Նա, բանալին ցոյց տալով օրիորդին, ձգեց դրպանը։ Նրա ծիծաղն օրիորդի վրայ վերին աստիճանի զզվելի տպաւորութիւն արաւ։ Մի քանի վայրկեան սա ապշած նայում էր։ Պետր Սաւելիչը նայում էր օրիորդին։ Եւ այդ հայեացքն արտայայտում էր նրա զազրելի ձգտումը։ Նրա բարակ և սեղմված շրթունքների վրայ խաղաց մի յանդուգն ու լկտի ժպիտ, և այդ վայրկեանին նրա քրքրված ու մաշված դէմքն ընդունեց գարշելի արտայայտութիւն։

Կատերինա Կարլովնան սարսափեց այդ արտայայտութենից։ Մի աննդային սաստիկ դողդոջ սկսեց ցնցել նրա ամբողջ մարմինն ոտից մինչև գլխի մազերի արմատները։

—Ի սէր Աստուծոյ, Պետր Սաւելիչ, բաց արէք,—արտասանեց, վերջապէս, յուսահատ ձայնով։

Դոլմազովը նայեց նրան և ասաց.

—Չըլի չեմ բաց անիլ...

—Ի՞նչ էք կամենում,—հարցրեց օրիորդը, բոլոր ուժերն գումարելով։

—Ի՞նչ եմ ուզում, հը՛մ, ոչինչ...

Դոլմազովը չկարողացաւ աւարտել իւր խօսքերը։ Մի ինչ-որ ներքին այժ այդ վայրկեանին կաշկանդեց նրա լեզուն։ Նա մի քանի վայրկեան գլուխը թեքեց կրծքին։ Բայց յանկարծ կրկին բարձրացրեց գլուխն և, ձեռները տարածելով առաջ, մի ոստումով թռաւ դէպի օրիորդը։ Վերջինն արագութեամբ յետ մղվեց և մէջքը տուեց պատին, կարծես, պաշտպանողական դիրք բռնելով։ Դոլմազովը մի ոստում ևս արաւ, և այս անգամ նրա տարածված թևերն ունելիքի պէս ձգտեցին ճանկելու պատի տակ սեղմված օրիորդին։

—Հեռու, եթէ ոչ...

Դոլմազովի կուրծքը ստացաւ երկու ձեռների մի սաստիկ հարուած, և նրա մարմինը մի քանի քայլ յետ մղվեց։ Մի վայրկեանում նրա փոքրիկ աստանային աչքերն արիւնով լեցվեցին, ճակատի կնճիռները բացվեցին, տափակ կուրծքը դուրս ցցվեց, և նա կատաղի առիւծի նման կրկին առաջ թռաւ, բացականչելով. «բաւական է, ինչքան համբերեցի»։

Բարձրացաւ մի զարհուրելի ճիչ. մի ճիչ, որ միայն յուսահատված կրծքից կարող էր դուրս թռչել: Այնուհետև սենեակում տիրեց անթափանցելի խաւար...

IX

Անցել էր երկու ամիս: Պետր Սահիանիչ Դօլմազովը մի առաւօտ խալաթը հագին նստած էր իր առանձնասենեակում, դէպի փողոց նայող լուսամուտներից մէկի մօտ: Նա ախուր էր: Նրա կնճռված ճակատն և սեղմված շրթունքները արտայայտում էին հոգեկան անհանգստութիւն: Երբեմն նա աջ ձեռի ափով սեղմում էր ճակատը, գլուխը թեքում դէպի կուրծքը և ընկնում մտածողութեան մէջ: Այդ տեւում էր մի քանի րոպէ: Այնուհետև, յանկարծ հառաչանք արձակելով և շրթունքները կռճտոցելով, կրկին գլուխը բարձրացնում էր և իւր մտքի հայեացքը լուսամտի պակիներից մէկով ձգում հեռաւոր տեղերը:

Պարզ էր, որ Պետր Սահիանիչին մի միտք չարաչար տանջում էր: Ժամանակ ժամանակ սենեակի դռները զգուշութեամբ բացվում էին և մի երիտասարդական մաքուր սանրած գլուխ ներս էր ցցվում ու նոյն վայրկեանին կրկին անհետանում: Դա Պետր Սահիանիչի սպասաւորն էր, որ անդադար նայում էր՝ տեսնելու, արդեօք, աղան դատարկել է թէյի բաժակը, որ վաղուց տաքել էր սեղանի վրայ: Բայց աղան ուշադրութիւն չէր դարձնում ո՛չ թէյի և ո՛չ էլ ծառայի վրայ: Նա խորասուզված էր իւր մտածմունքի մէջ: Վերջապէս, ծառան համարձակվեց ասելու.

—Աղա, չայը սառել է:

—Գնա, կմրիր:

Ծառան անհետացաւ:

Պետր Սահիանիչը ձեռը զարկեց ճակատին, բարձրացաւ տեղից և սկսեց անհաստատ քայլերով շրջել սենեակի երկայնութեամբ:

Այո, դժուար խնդիր է: Շատ որոգայթներից է նա պրծել, շատ անգամ է այդպիսի դրութեան մէջ ընկել և ազատվել, բայց այս անգամ բաղդը խռովել է նրանից: Իսկ գանել մի ելք, հնարել մի միջոց այդ դրութենից դուրս գալու, այդ ցաւից ազատվելու համար—անչուշտ հարկաւոր է: Հարկաւոր է և այն էլ շատ շուտ, այս քանի օրերս, եթէ ոչ...

Պետր Սահիանիչը ձեռները տարածեց աչ ու ձախ և մի քանի վայրկեան նայեց իւր հոլաթափերի ծայրերին:

Կատարեալ, կատարեալ խայտառակութիւն: Երէկ նա դարձեալ այնտեղ էր. ճշմարիտ որ «ներս» դրութիւնը խղճալի է: Ողորմելին այն դիշերուանից դէսը ինչպէս փոխվել է, ծերքան մաշվել ու դեղնել հոգսից: Ինչո՞ւ. հը՛մ, ինչո՞ւ, այ յիմար հարց... ինչո՞ւ: Այսօր թէ վաղը կըպարզվին բաներն, և այն ժամանակ նա փըչացաւ, կենդանի թաղվեց: Իսկ Մարիա Իվանովնան... հը՛մ... միամիտ կին: Նա դեռ ոչինչ տեղեկութիւն չունի, կարծում է, որ իւր աղջիկը մրսել է, հիւանդ է և ուրիշ ոչինչ: Ճանցատ պատուը դեռ ուրախ է, դեռ հաւատացած է, թէ պիտի գայ մի երջանիկ օր, երբ Դօլմազովը նրա աղջկայ հետ թև թևի տուած կըկանգնի եկեղեցու սեղանի առջև: Հը՛մ, այդ էր պակասում Դօլմազովին—լինել մի չնչին, անյայտ գործակատար

տաբի փեսայ։ Ի՞նչ կասեն տեսնողները։ Չէ, այդ ցնորք է, Մարիա Իվանովնա։ Դեռ փառք Աստուծոյ, Դոլմազովը մինչև այն աստիճան չի յիմարացել, թեթևամիտ հաշտարարիանցի ժամա։

Երէկ ինքն օրիորդն ևս առաջին անգամ ակնարկութիւն արաւ, արտասուքն աչքերին։ Ողորմելի, միամիտ արարած, ասում է, որ թէև նրան չի սիրում, բայց սոխակած է կեղտը ծածկելու համար։ Մի ծաղկի խօսք, չի սիրում, Պետր Ստեփանիչ Դոլմազովին, և ախ, ախ... կարլ Մարկիչ Պօպօվի ազգիկը...

Այսպէս թէ անպէս, Դոլմազովի անունը կարող է քաղաքի բերանում մի մատ մեղր դառնալ, արդէն բամբասանքները սկսվել են։ Սերգէյ Իվանիչն, այդ անպիտանը, որ նրան հազար տեսակ կեղծ աւորութիւններ է անում, բարեկամ է ձևացնում իրան, հէնց նա ինքն է առաջ սկսել լուրեր տարածել նախանձելուց։ Աստը թէ այդ ոչինչ. Պետր Ստեփանիչը բամբասանքներից շատ էլ վախեցողը չէ, բայց կայ մի ուրիշ բան, որ աւելի նշանաւոր է։ Եթէ այժմեանից այդ գործի առաջը չառնի, վաղը կամ միւս օրն ամեն ինչ կըպարզվի, և բանը կըհասնի մինչև դատաստան։ Այն ժամանակ կամայ ակամայ սոխակած կըլինի կապել իւր կեանքը Կարլ Մարկիչի ազգիկայ հետ։ Կարլ Մարկիչը, օ՜ո՜, Կարլ Մարկիչը պրաչէնի է ծոցում պատրաստ Հաշտարարիանցի է, կարող է նրան նեղը դնել... Ի՞նչպէս ազատվել, տէր Աստուած, ինչպէս։

Եւ Պետր Ստեփանիչը, կրկին նստելով աթոռի վրայ, սկսեց անդադար հառաչանքներ արձակել կրծքից։ Վերջապէս, նա մատները թէչն և, ժեռնալով սեղանին, վերցրեց բաժակն ու միանգամից դատարկեց ինչպէս սառը ջուր և, մի ծխախոտ վառելով, կրկին նստեց լուսամուտի առջև ու սկսեց նայել դէպի դուրս։

Լուսամուտը նայում էր դէպի արևելեան կողմ, ուր գտնվում էր Սև քաղաքը։ Հեռաւոր հորիզոնը մթնել էր նաֆթային գործարաններից բարձրացող թանձր ծխից։ Յանկարծ, ով բաղդ, Դոլմազովի դէլխում ծագեց մի միտք։ Նրա դէմքը փոխվեց, աչքերը փայլեցին, ճակատի կնճիռները մի վայրկեանում բացվեցին։ Նա արագութեամբ մոտեցաւ սեղանին, վերցրեց գրիչը, մի կոր թղթի վրայ մի քանի տող բան գրեց և շտապով դրեց ծրարի մէջ։

—Այս նամակը, առանց րոպէ ուշացնելու, ուղարկիր գործարան,—ասաց նա զանգակի հնչիւնին ներս մտնող սպասաւորին։

Սպասաւորն անհետացաւ։ Պետր Ստեփանիչը խալաթը հանեց, շորերը հագաւ և դուրս եկաւ փողոց։

Երկու ժամ չանցած նա կրկին վերադարձաւ, յոգնած և շունչը հազիւ հազ քաշելով։

—Չի եկել,—հարցրեց նա սպասաւորին նախասենեակում։

—Ո՛չ։

Պետր Ստեփանիչի դէմքն արտայայտեց անհամբերութիւն։ Նա մոտաւ իւր առանձնասենեակը, կրկին հանեց շորերը, խալաթը հագաւ և ընկղմուեց բազկաթոռի մէջ։ Քառորդ ժամից յետոյ էլի ներս մտաւ սպասաւորը։

—Եկել է, կըհրամայէք ներս թողնել։

—Հէնց այս վայրկեանին։

Պետր Ստեփանիչը բեղերը և միրուքը չփեց, ա-

ւելի խորը թաղվելով բազկաթոռի մէջ։ Նա իւր դէմքին խաղաղ և հանգիստ արտայայտութիւն տուեց։

Դռները զգուշութեամբ բացվեցին, ներս մտաւ մի միջահասակ թխահեր երիտասարդ, որից իսկոյն սենեակի մէջ տարածվեց նաֆթի սուր հոտ։ Նա հագած էր մոխրագոյն, բայց նաֆթային թանձր մուրից իւր բնական գոյնը կորցրած, կարճ պիդժակ և նոյն գոյնի նեղ վարտիկ, որը մինչև ծնկերը ծածկված էր կեղտոտ կօշիկների երկայն անկարուրկի մէջ։ Երիտասարդը կրլինեը մօտ քառասունդ տարեկան։ Ըընայելով, որ նրա դէմքը կեղտոտված էր մուրով, բայց և այնպէս նրա երեսի նուրբ գծագրութիւնն արտայայտում էր իւր բնական նուրբ գնդեցկութիւնը։ Երիտասարդը դլուխ տուեց Պետր Սահիանիչին և, ձեռները կոպքերին քաշ դցելով, արձանացաւ դռների մօտ։

—Առաջ եկ, նաստիր,—ասաց Թօլմազովը։

Երիտասարդը չըհամարձակվեց նստելու։ Նա մի այն գլուխ տուեց։ Թօլմազովը կրկնեց իւր առաջարկութիւնն այս անգամ աւելի քաղաքավարի ձևով։ Երիտասարդն, ամաչելով ու քաշվելով, մօտեցաւ և գլդակը ձեռին մի կոպքով նստեց աթոռի վրայ։

—Հը՛մ, Սմբատ, ասիր, տեսնենք ինչ նոր բան կայ,—հարցրեց Պետր Սահիանիչը, մի նոր ծխախոտ վառելով։

—Ձեր առողջութիւնը,—պատասխանեց Սմբատը գլուխը հազիւ բարձրացնելով։

Նրա ձայնը խիստ դիւրնկան էր։

—Այսօր նաֆթ ստացել էք Բալախանուց։

—Այո։

—Ո՞վ է ընդունել։

—Կարլ Մարկիչը։

—Հմ. ինչ է անում Կարլը, լաւ է, ուրախ է։

—Լաւ է, ուրախ է։

—Հը՛մ... այդպէս, ուրիշ ինչ կայ, գործարանն այսօր բանո՞ւմ է։

—Այո, հէնց առաջին կաթսաները նոր էինք ըսկսել դատարկելու, երբ ձեր հրամանոց նամակը ստացայ, իսկոյն, ձի նստելով, ճանապարհ ընկայ։

—Շատ լաւ ես արել, շատ լաւ ես արել։ Դիտես ինչ, Սմբատ. ես քեզ մի գործի համար եմ կանչել, որը միայն քեզ է վերաբերում։

—Հրամայեցէք,—ասաց երիտասարդը, զարմանալով։

Պետր Սահիանիչի խօսքերը նրան մի փոքր վախեցրին։ «Ըլլնի թէ ուզում է ինձ դուրս անել», մտածեց նա իսկոյն։

—Դիտես ինչ, Սմբատ, դու վաղուց ինձ խնդրել ես, որ ռոճիկդ աւելացնեմ, այնպէս չէ։

—Այո։

—Եւ ես խօսք եմ տուել, բայց մինչև օրս չեմ կատարել խօսքս։

—Այո։

—Դու ընտանիք ունե՞ս։

—Հայր, մայր և երկու քոյր։

—Ինչաճե՞ն։

—Շուշում։

—Հը՛մ, ինքդ խոժ պատկած չե՞ս։

—Ո՛չ։

—Նշանված ես։

—Ո՛չ։

—Հը՛մ... ուրեմն էլի մի ահագին բեռը կայ մէջքիդ վրայ,—ասաց Պետր Սահեփանիչը կարեկցաբար։

—Այո՛, ես էլ հէնց այդ պատճառով էի ձեր հրաժանոց խնդրել առճիկս աւելացնել։

—Այո՛, դիտեմ որ ամսական քառասուն մանէթով դժուար է ընտանիք կառավարել։ Բայց դիտէս, Սմբատ, ինչու չեմ մինչև այժմ խնդիրդ կատարել։

—Ո՛չ, չգիտեմ։

—Որովհետև քեզ համար ես ուրիշ բան եմ մտածում։

Սմբատն ոտից գլուխ լողոքթիւն դառաւ։

—Ես ուզում եմ այնպէս անել, որ դու ժամանակով օրինաւոր մարդ դառնաս և ոչ թէ ամսական հինգ կամ տասը մանէթով առճիկդ աւելացնել։

—Շատ շնորհակալ եմ, Պետր Սահեփանիչ, շատ շնորհակալ եմ...

Երիտասարդը բարձրացաւ տեղից, գլուխ տուեց Դօլմազօվին և կրկին նստեց։

—Թէև, Սմբատ, երբեմն դու էլ ինձ բարկացնում ես, բայց վատ տղայ չես։ Զորս տարի է, որ ինձ մօտ ծառայում ես, ես մի վատութիւն չեմ տեսել քեզանից։ Ես էլ, ի հարկէ, մարդ եմ, աչքեր ունեմ, տեսնում եմ, որ հիմայ հասել է ժամանակը, որ ծառայութեանդ փոխարէն մի լաւութիւն անեմ քեզ։

Երիտասարդը կրկին բարձրացաւ տեղից և կըրկին անգամ գլուխ տուեց։ Նրա սիրտը սկսեց ուրախութենից տաքուկ բաբախել։

—Ինչպէս կայ Մարկիչին եմ տուել, քեզ համար էլ ուզում եմ մի բնակարան պատրաստել ծով-

ղումդ դանվող տանս մէջ։ Դու, եթէ ուզում ես, կարող ես գրել Շուշի հօրդ, որ ընտանիքը բերի այստեղ քեզ հետ միասին ապրելու։ Մէկել գրիր, որ ես, Դօլմազօվս, ուզում եմ քեզ իմ ձեռքով պահել։

Երիտասարդի ականջներն ամաչելուց կարմրեցին։ Նա գլուխը քաշ գցեց։

—Հը՛մ, ուզում ես պահվել, թէ չէ։

—Ո՛չ, Պետր Սահեփանիչ,—պատասխանեց Սմբատը, ճակատի տակից ամօթխածութեամբ նայելով Պետր Սահեփանիչին և գդակը ձեռքում պտտեցնելով։

—Հասկանում եմ. դէն գցիր, ծոցս գցիր, այնպէս չէ։

—Որտեղից է այնքան կարօղութիւն, որ համ գլուխս պահեմ, համ ծնողներիս ու քոյրերիս, համ էլ պահվեմ։

—Այդ լաւ ես ասում, խելօք ես, Սմբատ։ Բայց Աստուած ողորմած է, դու միայն լաւ ծառայիր ինձ, ես չտասով, շատ շտասով քեզ կօգնեմ։

Սմբատը մի անգամ էս գլուխ տուեց։

—Բաս ինչու՞ չես հարցնում, թէ ով է հարստանում։ Հը՛մ, մի աղջիկ է, Սմբատ, մի աղջիկ, որ տեսնես—աչքերդ չորս կըզառնան։ Բագուի մէջ հասը չկայ։

Սմբատը մի հարցական հայեացք ձգեց իր պատրոնի վրայ։

—Աբա, եթէ խելօք ես, իմացիր, թէ ով է, հապա, դուիր, հը՛մ...

Սմբատը գլուխը շարժեց բացասաբար։

—Գիտեմ, որ չես կարող դանել, որովհետև մտածել անգամ չես կարող, թէ մի այնպիսի աղջիկ պիտի ձեռք բերես։

Սմբատը կարծեց, թէ Պետր Սահմանիչը հանգիստ է անում և ժպտալով նայեց նրա երեսին։

—Ճանաչում ես իմ դործարանի կառավարիչ հաշտարարանցի Կարլ Մարկիչ պարոն Պօպօվին,—հարցրեց Դօլմազօվը, ամեն մի բառն արտասանելով ծանր և չեշտելով մանաւանդ վերջին բառերը։

Սմբատը պատասխանեց, թէ ճանաչում է Կարլ Մարկիչին։

—Նրա աղջկան, Կատերինա Կարլօվնային էլ ես ճանաչում։

—Ճանաչում եմ։

—Այ, նրան եմ նշանում քեզ հետ։

Որովհետև Սմբատը հաւատացած էր, որ Պետր Սահմանիչը հանգիստ է անում, այս պատճառով մի առանձին նշանակութիւն չըտուեց նրա խօսքերին և ոչինչ չասաց։

—Տեսել ես ինքդ Կարլ Մարկիչի աղջկան։

—Տեսել եմ։

—Ի՞նչպէսն է, հաւանո՞ւմ ես։

Սմբատը չըպատասխանեց։

—Լաւն է, չէ։

—Շատ լաւն է։

—Օհօ, ինչ դոչալ ես, իսկ ես կարծեցի, որ չես հաւանիլ,—ասաց Պետր Սահմանիչը, ծաղրածութեամբ ժպտալով։

Սմբատն ամօթից կրկին կարմրեց և դլուխը բոլորովին թեքեց կրծքին։

—Դէհ, ուրեմն, պատրաստուիր, — շարունակեց Պետր Սահմանիչն, այս անդամ իւր դէմքին լրջութիւն տալով։

—Ի՞նչ էք հրամայում։

—Խօսք եմ ասում, իսկ դու դեռ ասում ես՝ ինչ էք հրամայում,—ասաց Պետր Սահմանիչը, տատանալով։ Հեռագրիր, որ ձեր ընտանիքը չուտով ճանապարհվի այստեղ։ Ես երկու շաբաթից յետոյ դնալու եմ Նիժնիյ Նօվգօրօդ, եարմարկա և ուզում եմ իմ ձեռքով բանը վերջացնել։ Այնտեղից քեզ համար երկու խաղարկու ոտմաներ եմ բերելու ընծայ, մէկը քո բաղդին, միւսն էլ հարսնացուիդ բաղդին։

Սմբատը բոլորովին զարմացաւ։ Նա դեռ չէր հասատում, թէ Պետր Սահմանիչը խօսում է լրջօրէն։

—Դէհ, լսեցիր խօսքս, դնա, հոդիս, դնա, պատրաստուիր,—կրկնեց Պետր Սահմանիչը վճռողական եղանակով։

Սմբատը տեղից չըշարժուեց։

—Ա՛ռ, այս էլ ծախսիր, յետոյ, եթէ բաւականութիւն չի անիլ, էլի կըտամ։

Այս ասելով, Պետր Սահմանիչը բաց արաւ սեղանի պահարանն, երեք հատ հարիւրանոց հանեց և դրեց սեղանի վրայ։ Սմբատը, փողերը տեսնելով, կարծես, քնից սթափուեց։ Նա փոքր առ փոքր սկսեց ուշքի դալ։ Այն բանն, որ մինչև այդ վայրկեան ցնորք էր թուում, հետզհետէ սկսում էր իրականանալ։ Սակայն նա չըվստահացաւ շարժուել տեղից և, մի հայեացք ձգելով փողերի վրայ, կրկին զարմացած նայեց Պետր Սահմանիչի երեսին։

—Ի՞նչ ես տեսարի պէս նայում, վեր առ, քեզ տամ եմ, ու վեր կաց։

Սմբատը բարձրացաւ տեղից։

—Հէնց այժմ դնա, քեզ համար շորեր պատուի-

բիր,—կրկնեց Պետր Սահմանիչը։

Սմբատը փողերը վերցրեց։

—Դիր դրպանդ և մի ուշանար։ Կէսօրին ինձ մօտ կըգաս ճաշելու, ես քեզ մանրամասնօրէն կը-բացատրեմ, թէ ինչ կարգադրութիւններ եմ անելու քեզ համար։

Սմբատը, մէջքից երկու ծալ թևքվելով, գլուխ առաց, առանց մի խօսք արտասանելու։ Յետոյ յետ ու յետ մօտեցաւ դռներին և, այնտեղ կանգնելով, մի քանի անգամ ևս գլուխ առաց ու դուրս եկաւ։ Միա-ժամանակ Պետր Սահմանիչի կրծքից դուրս թռաւ մի խոր հառաչանք։

—Ա՛ւֆ, փառք քեզ Աստուած, չէի կարծում, որ այդպէս հեշտ կըպրծնեմ։ Ինչ ուրախ է հիմայ Սմբատը, թևևր չունի, որ երկինք թռչի։ Բայց տեսնենք, հարկաւոր է դեռ օրիորդի ծնողներին էլ համոզել։ Է՛հ, դա այնքան էլ դժուար չէ, ինչ և իցէ, պէտք է զգոյշ լինել, զգուշութիւն, զգուշութիւն ամենից առաջ։

—Կլխոսանամ, կլխոսանամ, Կարլին էլ, Մարիա Իվանովնային էլ, Սմբատին էլ, յետոյ... տեսնենք... այդ հեշտ է...

Եւ Դօլմազօվն, այս ասելով, ձեռները ուրախութենից չփեց միմեանց և վեր թռաւ բազկաթոռից։ Նա կանչեց սպասաւորին և հրամայեց սուրճ բերել։

X

—Մամա ջան, ինչո՞ւ ես ասում, շառլատան չէ, Սմբատը աղավաղի տղայ է։

—Աղավաղի է թէ ապաւաղի չէ, Կատեայիս մի մարդին չարժի։ Ո՛վ կսպասէր էր մտածել, թէ Կատեան պիտի գնայ մի կեղտոտ ու մուրտա գործակատարի։

—Բեզի ասում են կեղտոտ չի ծնել, չէ, չէ ու չէ, փիչէ... Պետր Սահմանիչը մտադիտ է բաց անելու, հասկանում ես թէ չէ, Սմբատին, ինձ և Արտեմին կոմպանիա է շինելու։ Համեցէք, գնա տես ինչ քարթիրա է ուտուալիյա արել նրան, ինչ մեբլիներ։ Մի գնա է, յետոյ կիմանաս, թէ Սմբատն ինչպիսի ժեննիացու է Կատեայիս համար։ Մարիա ջան, այսօր ես նրան տեսայ, էհ, էհ, էհ, ինչպէս փռանտա է հագնվել ու սիրաննացել, էտօ պռօստօ կավկազկիյ կըրաասվից։

—Է՛հ, փառք քեզ Աստուած, ես ինչ էի մտածում, ինչ է դուրս գալիս...

—Չիլաւ, գէհ ինչ անենք։ Իմանում ես, Մարիա, ասում են գօկտօրները նրան սավէտօվայա են արել ժենիտյոցա չըլինի, էնպէս որ սկար է։

—Տկար է, սկար, այս քանի օրերս նշանվելու է փիրզադօվի աղջկայ հետ, սկար է...

—Նո՛ ու ու, ինչ ես ասում, դաա՛... վօտ, վօտ, վօտ, տեսնում ես, Մարիա, բաս Պետր Սահմանիչը փիրզադօվի նման բազաչին թող կանի ու ինձ նման կակօյ նիբուդ պռիկաշչիկի աղջկան կուզի ինչ է...

—Ինչո՞վ է պակաս Կատեան փիրզադօվի աղջկանից, խելքով, դեղեցկութենով, թէ շնորհով։

—Սուս, սուս, վօտ, վօտ, վօտ, վօտ ինչով է պակաս, դրամ, դրամ, պրիդանօյես, պրիդանօյես։

Դօլմազօվի համար, ինչպէս և կանխապէս հասաստացած էր, մի մեծ դժուարութիւն չէր կարլ Մարկիչին համոզելը։ Բաւական էր նրա կողմից մի քանի

խոսուածները, և միամիտ մարդն իսկոյն, չլացած այդ խոսուածներից, առանց երկար մտածելու, վճռեց իր աղջկան տալ Սմբատին։

Բայց այդքան հեշտ չէր համոզել Մարիա Իվանովնային։ Մարիա Իվանովնան ուրիշ տեսակ էր մտածում իր աղջկայ մասին։ Երբ Դօլմազօվը մի գեղեցիկ առաւօտ, գալով նրա մօտ, յայտնեց, թէ Կատեայի համար մի լաւ փեսացու է գտել—Մարիա Իվանովնան նախ կարծեց, թէ Պետր Սահակիչը մի պարզ անհարկութիւն է անում սեպհական անձնաւորութեան մասին։ Մի քանի վայրկեան նրա սիրտը ըսկսեց բաբախել ուրախութենից։ Բայց, ւսւոյց, անցան այդ երջանիկ վայրկեանները, Դօլմազօվը աւելի պարզօրէն հասկացրեց նրան իր միտքն, և խեղճ ծնողի ուրախութիւնն իսկոյն փոխվեց տրտմութեան։ Մարիա Իվանովնան աչքունքը քաշ գցեց, դէմքը թթվեցրեց և ոչինչ չկարողացաւ պատասխանել, միայն, մի խօսքը հառաչանք առ հառաչանք իր կրծքից, ձգեց Դօլմազօվի երեսին նշանաւոր հայհոյանք։

Պետր Սահակիչը հասկացաւ Մարիա Իվանովնայի միտքը, բայց ոչինչ նշանակութիւն չըտուեց նրան։ Մարիա Իվանովնայի այդ նշանաւոր հայհոյանքն ու այդ խորհրդաւոր լռութիւնն աւելի զօրեղ և գուցէ կծու ազդեցութիւն անէին Դօլմազօվի վրայ, եթէ սա հասատացած լինէր, որ միամիտ մօրը յայտնի է իր թշուառ աղջկայ գլխին եկած ծանր փորձանքն և այդ փորձանքից առաջացած վշտալի և անարդ հետևանքը։

Դօլմազօվը գովեց ու գովաբանեց Սմբատին։ Նկարագրեց նրա խելքը, կրթութիւնն, եռանդը, գեղեցկութիւնն ամենագեղեցիկ գոյներով։ Նա կրկնեց, թէ

պատկվելուց յետոյ Սմբատի համար կըբացի մի լաւ մագազին և Կարլ Մարկիչին ու Ագաեմին կընկերացնի նրա հետ։ Սակայն Մարիա Իվանովնան միևոյն ատրքեր։ Նրա վրայ այդ խոսուածները չունեցան այնպիսի ազդեցութիւն, ինչպէս Կարլ Մարկիչի վրայ։ Նա չըյամչատակվեց, չըտուեց իր համաձայնութիւնը, բայց և այնպէս խնդրեց Դօլմազօվին՝ մի քիչ միջոց տալ այդ մասին մտածելու և իր ամուսնու հետ խորհրդակցելու։ Դօլմազօվը հետացաւ, յուսալով, որ Կարլ Մարկիչն անշուշտ կըհամոզի Մարիա Իվանովնային, և այդ դժուար խնդիրը, որն իրան այդքան անհանգստացնում էր, շուտով կըլուծվի։

Բայց ինչ էր մտածում ինքը, Կատերինա Կարլովնան. համաձայն էր նա, արդեօք, Սմբատին գնալու։ Դօլմազօվը, պէտք է ասած, այդ մասին սկզբում շատ էր անհանգստանում։ Սակայն, երբ նա մի անգամ ներկայացաւ օրիորդին և, մի մամու չափ առանձնանալով վերջինի հետ, խօսեց այդ մասին և իմացաւ օրիորդի միտքն, այնուհետև հանգստացաւ և բանական ուրախ դէմքով վերադարձաւ տուն։ Այո, Կատերինա Կարլովնայի պատասխանը շատ մխիթարական էր Պետր Սահակիչի համար և ուրիշ կերպ չէր կարող լինել։ Օրիորդի առջև, իր անմխիթար դէրութենից դուրս գալու համար, երկու ելք կար։ Նա կամ պիտի համաձայնվեր Պետր Սահակիչի առաջարկութեան հետ՝ պատկվելու Սմբատի հետ, կամ թէ ոչ՝ պիտի մնար իր ծնողների մօտ և, յայտնելով իր գաղտնիքը վերջիններին, ապաստէր այն նշանակութեան, որը սպառնում էր նրան մօտիկ ապագայում։

Վերջին միտքը սարսափեցնում էր Կատերինա

Կարլոֆեանին. համեստութեան, ամօթի և վերջապէս ինքնասիրութեան դգացմունքները չէին թոյլատրում նրան յայտնել իւր անչափելի արտասը ծնողներին։ Բացի այն նախապատճառից, որը պիտի կրէր ինքն օրիորդը, դա կլինէր և մի անազատելի զօրեղ հարուած, որին չէին կարող դիմանալ ոչ Կարլ Մարկիչը և ոչ Մարիա Իվանովնան։ Իսկ դիմել այն անբնական և յանցաւոր միջոցին, որին դիմում են շատերն այդ տեսակ դրութեան մէջ, վատնգաւոր էր և երկիւղալի։ Կատերինան խորշում էր այդ միջոցից ու վախենում։

Նա ցանկանում էր ապրել, բայց ապրել առանց դպրանիքը ծնողներին յայտնելու, առանց հասարակութեան բամբասանքի և տեղութեան առարկայ դառնալու։ Եւ այս նպատակին հասնելու համար, նա չէր խորշում այնպիսի միջոցից, որ տանջալի և զզուելի էր նրա համար, ինչպէս նոյն ինքն տանջութիւնն և զզուանքը։ Նա համբերում էր Թօմասովի ներկայութիւնը, նրա հետ ժամերով առանձնանում էր և խորհրդակցում իւր ապագայի մասին, լսում էր նրա խոհուրդները։ Նա մինչև անգամ համաձայն էր պսակվել վերջինի հետ, միայն թէ կարողանար ծածկել իւր ամօթը։ Եւ Թօմասովն օգտվում էր օրիորդի անտանելի դրութենից և կամաց կամաց հաշտեցնում նրան իւր կեղտոտ պայմանների հետ...

Այդպէս թէ այնպէս, օրիորդը համաձայն էր պսակվելու Սմբատի հետ։ Համաձայն էր նոյնպէս և՛ միամիտ Կարլ Մարկիչը։ Համաձայն չէր միայն Մարիա Իվանովնան։ Եւ ահա երկու ամուսինները տաք տաք վիճաբանում էին ննջարանում առանձնացած։ Կատերինա Կարլօֆեան և Արտեմ Կարլիչն իրանց սենեակներումն էին։

Վերջինը զբաղված էր ինչ-որ հաշիւներով, որոնց պիտի ներկայացնէր Պետր Ստեփանիչին։

—Ինչի ասում եմ, բանը մի երկարացնի, ետը լաւ չի դայ հմա,—շարունակում էր համոզել իւր ամուսնուն Կարլ Մարկիչը։—Կատեան ինքը սօգլանիկ է, էլ ինչ ես ուզում։ Նէ, բանը պրծած է, էգուց պիտի օբրուչկայոցա անենք, հինգ օրից յետոյ էլ պըսակենք, էնդուր որ Պետր Ստեփանիչը վռազում է. եկող շաբաթ օտպրավկայոցա է լինելու Հաշեան, էնդից էլ եարմուկա։

—Դու ինչ գիտես, որ Կատեան յօժար է. ես հարցնում եմ—ոչինչ չի պատասխանում, լաց է լինում։ Ձեմ իմանում, խեղճ երեխա ցաւն ինչ է. ամօից աւելի է, որ արիւն արտասուքի մէջ է, օրից օր հալվում, մաշվում է։

—Տկար է, տկար է. ինձի Պետր Ստեփանիչն ասաւ, որ այն երեկոյ կօնցերտում պրօստուդիլայոցա իլել է։ Ես էլ պուլյոը տեսայ երէկ, լիխօրադկա ունի։ Այդ ինքն ինչտեղ է։

—Նստած է իւր սենեակում տխուր ու տրտում, խօսեցնում եմ—չի խօսում։

—Կատեա, Կատիուշկա, գուշեչկա, մին եկ այստեղ,—գոչեց Կարլ Մարկիչը։

Ներս մտաւ Կատերինա Կարլօֆեան։ Ողքան փոխվել էր խեղճ օրիորդն այն չարագուշակ երեկոյից, ինչպէ՞ս դեղնել ու մաշվել էր երկու ամսուայ ընթացքում։ Նրա դէմքի նախկին թարմութեան և կայտառութեան հետքը նշմարվում էր միայն երկու փոքրիկ կարմիր բիծերով, որոնք հազիւ հազ պահպանվել էին սպրծնած այտերի վրայ։ Նրա երեսի ոսկորները ցցը-

վել էին, աչքերը թաղվել խորը փոսերի մէջ, շրթունքները արիւնաքամվել։ Փոխվել էին նոյնպէս նրա նախկին խրոխտ և հպարտ դնացքն ու շարժվածքը։

Ներս մտնելով, նա թոյլ և անլսելի քայլերով մոտեցաւ պատի տակ դրած աթոռներից մէկին, վերհատած և ուժաթափ ոչ թէ նստեց, այլ միանգամից ընկաւ նրա վրայ։

—Ա՛յ, այդպէս, Կատեա, ախար մի քանի օրից յետոյ պատվելու ես, մեզ մոռնատիր, որ քեզանից կշատնանք։ Ի՞նչ էիր անում այնտեղ։

—Կարդում էի,—պատասխանեց օրիորդը նուաղած ձայնով, որի մէջ դգացվում էր նրան ներքին վիշտը։

—Էլի ռօմանն, քեզի քանի անգամ ասել եմ, որ ռօմաններ կարդալը վնաս է, տես, ախար ինչպէս բըլեղնիացել ես։

—Ռօման չէ, պապա, Կատեան աերատէր է դառել, աւետարան է կարդում,—մէջ մտաւ Արտեմ Կարլիչն, որ նոյնպէս եկել էր ներս քրոջ հետ, իւր հօր ձայնին։

—Աւետարան, հա, լաւ ես անում, բայց ինչ կարդալու վախտ է, կիրակի օրը պահք է, տուալետդ պատրաստիր։ Հա, Կատեա, դուշա մօտս, ժենիխիդ աճեցել ես, հատանում ես։

Օրիորդն ոչինչ չըպատասխանեց, միայն, գլուխը թևքերով կրծքին, մի խորը հառաչանք արձակեց։

—Լաւ է, մի ամաչիր, մի կարմրիր, իմացայ, հատանում ես. ով չի հատանի Մոբատին։

—Ես էլ եմ հատանում, պապա,—դարձեալ մէջ մտաւ Արտեմը։ Երեկ ծովի վրայ նաւակով նրա հետ ման եկանք։ Շատ լաւ տղայ է։

—Լսում ես, նռւ, լսում ես, Մարիա, Արտեմն էլ ես հատանում, դու ինչ ես ֆօրսիյա անում։

—Ինչու չի հատանիլ, չէ որ Արտեմն ինքն էլ Սըմբատի նման մէկն է։

—Ինձ չես հատանում, մամա, ես ինչ վատ ըղայ եմ։

—Վատ չես, բայց մի մեծ բան էլ չես։

—Նու, նու, նու, հերիք է, քիչ երկարացրէք, ինքը Կատեան հատանում է իւր ժենիխին, պրծաւ ու գնաց, այնպէս չէ, Կատեա։

—Ինչպէս կամենում էք, այնպէս արէք,—պատասխանեց Կատերինա Կարլովնան։

—Այդպէս, շատ ապրես, շատ ապրես, Կատեա։ Նու, Մարիա, ինչ-որ հարկաւոր է, էգուց ասիր, որ առնեմ, էնդուր որ Պետր Ստեփանիչը վռազում է։ Երէկ ինձ երկու հարիւր մանէթ փող տուեց պօկուպկաններ անելու։

Մարիա Իվանովնան կրկին սկսեց հակառակել։ Նա ասաց, թէ այդքան շտապել հարկաւոր չէ, թէ աւելի լաւն է սպասել, գուցէ Կատեայի համար մի ուրիշ, աւելի լաւ փեսացու է ճարվելու, թէ Կատեայի անուանն արդէն տպագրվել է և ամենքը գոված են, թէ շատ հարուստ տղերք կըցանկանան առաջարկութիւն անել և այլն և այլն։

Գիշերից բաւական անցել էր։ Կատերինա Կարլովնան հեռացաւ իւր սենեակը։ Արտեմ Կարլիչն արդէն քնած էր։ Երկու աժուսինները շարունակում էին վիճաբանել։ Վերջապէս, Կարլ Մարկիչը, տեսնելով, որ Մարիան յամառութիւն է անում, դուրս եկաւ համբերութենից և ասաց.

—Թէ խեղդուիս, Մարիա, ես Կաթեային տալիս եմ Սմբատին, էնդուր որ Պետր Ստեփանիչի քէֆին դիպչել չեմ կարող։

Մարիա Իվանովնան կատաղեց, վրխրեց, բայց, վերջը կարլից մի փափուկ ապտակ առանալով, հեռացաւ, գնաց քնելու վիրաւորված սրտով և վշտացած հոգով։

Հետևեալ առաւօտ Դօլմազովը կրկին այցելեց Պօպովի ընտանիքին և, մի ժամ մնալուց յետոյ, հեռացաւ բոլորովին միամտացած։ Նա կատրել էր Մարիա Իվանովնայի յամառութիւնը։

—

Հինգ օր անցած, մի գեղեցիկ երեկոյ քաղաքի կենտրոնում գտնվող փոքրաշէն եկեղեցում կատարվեց Կաթերինա Կարլովնայի և Սմբատի պսակը։ Դօլմազովը իւր խնամատարութիւնն այնտեղը հասցրեց, որ մինչև անգամ Սմբատի խաչեղբօր պաշտօնն ինքը կատարեց։

XI

Սմբատը շուչեցի աղքատ ծնողների զաւակ էր։ Տաներկու տարեկան հասակում նրան տուեցին քաղաքային ուսումնարան։ Երեք տարի մնաց այնտեղ Սմբատն և հազիւ ուսերէն ու հայերէն գրել ու կարդալը սովորել էր, երբ հայրը դուրս բերեց նրան և յանձնեց մի վաճառականի խանութ։ Բաւական ընդունակ և աշխատասէր տղայ էր, ընտրութենով համեստ, խաղաղ և իրանից մեծերի խօսքը լսող ու

կատարող։ Նա չափազանց յարգում ու պատւում էր իւր ծնողներին, սիրում էր իւր երկու քոյրերին, որոնք տարիքով իրանից փոքր էին։ Յարգում ու պատւում էր նա նոյնպէս և՛ այն վաճառականին, որի մօտ դրած կատարած էր, խոնարհութեամբ կատարում էր նրա պատուէրները։ Բայց երբէք նրա խոնարհութիւնը ստրկութեան չէր հասնում. նա իւր գործերը կատարում էր ինչպէս մի պարտաճանաչ գործակատար, ուրիշ ոչինչ։ Նա ինքնասէր տղայ էր և տեղն եկած ժամանակ կարող էր պաշտպանել իւր պատիւը։ Որովհետև նրա հայրը, ծերացած լինելով, ոչնչով չէր պարապում, այս պատճառով ընտանիքի հոգան ընկել էր որդու վրայ։ Հինգ տարի ծառայեց Սմբատը վաճառականի խանութում. նրա ընչին ռոճիկն անբաւական էր հինգ հոգուց բաղկացած ընտանիքի դոյութիւնը պահպանելու համար։ Տեսնելով, որ աղքատութիւնը չատ է ճնշում, նա, իւր հօր համաձայնութեամբ, թողեց Շուշին և եկաւ Բագու՝ այտեղ բաղդ որոնելու։ Նա մտաւ Դօլմազովի մօտ գործակատար ամսական քառասուն մանէթով։ Իւր հասնող ռոճկի մի չնչին մասով կէս կուշտ կէս քաղցած ապրում էր ինքն, իսկ միւս դեպքերում ուղարկում ընտանիքին, որի ապահովութեան խնդիրը նրա միակ հոգան էր։ Հայրն անդադար գանգատում էր աղքատութեան վրայ, և, Սմբատն ամեն անգամ նրանից նամակ առնելիս, քաշվում էր դրա պատճառի մի անկիւնն և գաղտնի արտասուք թափում։ Հարս տարի էր, որ նա Դօլմազովի մօտ ծառայում էր միևնոյն ռոճիկով։ Վերջին ժամանակ մի քանի անգամ նա խնդրեց Դօլմազովին փոքր ինչ աւելացնել ռոճիկը, բայց վերջինն ուշադրութիւն չէր դարձնում։

Իսկ երբ Սմբատը մի անգամ ևս այդ մասին ակնարկեց, Գօլմազօվը բարկացաւ։

—Եթէ մէկ էլ դլուխս ցաւեցնես, չորերդ հատաքիր ու կորիր։

Սմբատը լռեց։ Բայց հազիւ անցել էր երկու ամիս այդ օրից, և ահա նոյն Գօլմազօվը հրաւիրում է Սմբատին իւր մօտ և յանկարծ յայտնում, թէ այսուհետև նրան ընդունում է իւր առանձին հովանաւորութեան տակ։ Նա առաջարկում է Սմբատին պահվել Կատերինա Կարլովնայի նման գեղեցկուհու հետ, խոստանում է անկախ ապրուստի միջոց, մագաղին և, իբրև ապացոյց, տալիս է երեք հատ հարիւրանոց։

Որպիսի բաղդատութիւն, որպիսի անապատելի երջանկութիւն մանուկ հասակից աղքատութեան դատն լծի տակ ճնշված մի երիտասարդի համար։ Երբ Սմբատն երեք հատ հարիւրանոցները դրպանում դուրս եկաւ Գօլմազօվի մօտից, յանկարծակի ուրախութեան բուռն ղգացմունքների ներքոյ միանգամայն շուարված էր։ Նա չէր հաւատում, թէ այդ բոլորը կատարվում է իրականութեան մէջ, նրան երազ էր թւում Գօլմազօվի առաջարկութիւնը։ Բայց ինչ երազ, ինչ հրաշք, ահա երեք հատ կանաչ—կարմիրանոցները։ Սմբատը փողոցում անդադար հանում էր հարիւրանոցները, նայում նրանց այս երեսին, այն երեսին, չօշափում, յետոյ ծալում այս կողմ, այն կողմ և կրկին դնում դրպանը, կրկին հանում ու կրկին նայում և կրկին դնում դրպանը։ Վերջապէս, նա հետզհետէ ուշքի է գալիս և նրա սիրտը նորից սկսում է բաբախել ուրախութենից։

—Վերջապէս, վերջապէս, աղքատութեան քարը

վիճակից դէն կըդցեմ,—կրկնում էր նա ինքն իրան անդադար։—Վերջապէս, խեղճ ծնողներս ու քոյրերս մի լաւ օր կըտեսնեն։ Կատերինա Կարլովնան... Տէ՛մ... կարծէլ էի, արդեօք, երբ և իցէ երևակայել, որ այդ գեղեցկուհին իմ ամուսինը պիտի դառնայ...

Ճարտնակ մի շաբաթ Սմբատն ուրախութենից չուարված պտտում է այս կողմ, այն կողմ, զանազան բաներ է պատրաստում և այլն։

Վերջապէս, հասնում է հարսանիքի երեկոն։ Սմբատը զուգված, զարդարված կանգնած է եկեղեցու սեղանի առջև, Կատերինա Կարլովնայի հետ ձեռք ձեռքի տուած։ Նա ուրախութենից ոտից գլուխ դողում է, նրա սևագոյն խոշոր աչքերը փայլում են երջանկութեան փայլով, նրա սիրտը թռթռում է։ Պատկին աւարտում է, և Սմբատն թև թևի տուած Կատերինա Կարլովնայի հետ, մտնում է իւր սենեկան։ Նրա ուրախութիւնը սահման չունի, նա ուրախ ձեռքի ընկած թռչում է այս կողմ, այն կողմ, ինքն անձամբ ծառայութիւններ է անում հանդիսականներին։ Նրան թւում է, թէ ոչ միայն ինքն է երջանիկ, այլև բոլորն և ամենքն ուրախ են իւր բաղդաւորութեամբ։ Նա տան անգամ, հարիւր անգամ գլուխ է տալիս Գօլմազօվին, անդադար չնորհակալութիւններ է յայտնում իւր բարեսիրտ խնամատարին նրա այդչափ լաւութիւնների փոխարէն։

Բայց, աւաղ, Սմբատի երջանկութիւնն երկար չի տևում։ Անգութ ճակատագիրը չատպում է ողորմելի երիտասարդի կարծեցեալ բաղդաւորութիւնը վերափոխել դժբաղդութեան։

Հարսանիքի չորրորդ օրն է։ Առաւօտ է։ Արեգա-

կը, նոր նոր դուրս գալով, շառագունում է երկնա-
կամարը, և ահա Սմբատը դիշերային շորերով նստած
է իւր սենեակում։ Նրա դէմքը ախուր է և դունա-
թափ, շրթունքները սեղմված, ճակատը կնճռված։
Նա անդադար կրծքից խորը հառաչանքներ է արձա-
կում և երբեմն գլուխն երկու ձեռներով սեղմում է
կամ մազերը փետռում։

Ուղիղ երկու ժամ Սմբատը միայնակ մնում է
այդ դրութեան մէջ՝ փակված իւր սենեակում։ Յետոյ
նա յանկարծ բարձրանում է տեղից, շորերը հագնում
և խելագարի պէս դղդղված մազերով, անուսյ երե-
սով, վազում փողոց։ Նա ամբողջ օրը չի վերադառ-
նում տուն, միւս օրը նոյնպէս։ Սկսում են փնտրել
այստեղ ու այնտեղ, չկայ ու չկայ...

Ո՞ւր է Սմբատը։

XII

Մի հիանալի, մի դիւթական տեսարան է ներ-
կայացնում Ծովեղբեայ քաղաքը լուսնեակ գիշեր, երբ
եղանակը բոլորովին խաղաղ է։ Կանգնելով Ծովափում
և բազմաթիւ նաւերի անտառախիտ կայմերի միջով
նայելով ջրի անհուն տարածութեանը, որի հարթ մա-
կերեսոյթին արձաթափայլում է պայծառ երկնքի երե-
սին սահող լուսնի կաթնագոյն լուսով, մարդ
ակամայ յափշտակվում է։ Կայ մի անհասանելի զո-
րութիւն, մի անբացատրելի ոյժ, որն այստեղ բոպէա-
բար մոռացնել է տալիս մարդուն այն ամենն, ինչ-
որ պատկանում է նիւթական աշխարհին, և նա, կար-
ծես, կախարդվում է։ Մարդ հոգով ու մտքով այդ

անհասանելի զօրութեան ուժից մղվում է հեռու, հե-
ռու, դէպի երկնքի անհուն խորութիւնը, ուր չկան
այն դառնութիւնները, առօրեայ մանր հոգսերն ու
վշաերը, որոնց ներքոյ դիշեր ու ցերեկ ճնշված է
մահկանացուն։ Այդպիսի րոպէներում մարդ ոչինչ չի
կարողանում մտածել, ոչ մի միտք կանգ չի առնում
նրա գլխում։ Այդպիսի րոպէներում միտքը կաշկանդ-
վում է, երևակայութիւնը բորբոքվում է, և մարդ, կար-
ծես, լսում է ինչ-որ վերացական աշխարհի մէջ, ուր
նա հեռագնաց հալվում է, ինչպես մի կաթ սառույց
եռացող ջրի կաթսայում։

Ահա մի այդպիսի հրաշալի երեկոյ էր, երբ, Կա-
թերինա Կալոյեանի հարսանիքից հինգ օր անցած, Ծո-
վային կայարաններից մեկի ծայրում, որը մոլոր քայ-
լերով անց ու դարձ էր անում մի երիտասարդ։ Ե-
րեկոնակը, ամարային լինելով, բաւական տաք էր։ Երի-
տասարդը հագած էր սևագոյն մահդեայ հագուստ ա-
ռանց վերարկուի։ Նա գլխաբաց էր, ձեռները ծո-
ցում խաչաձև ծալած և սպիտակ ամարային գդակը
կենտրոնին պահած։ Ժամանակ ժամանակ նա կանգ
էր առնում և, գլուխը բարձրացնելով, նայում լուսնին,
որը կամ մտնում էր բամբակագոյն ճօճ ամպերի տակ
և քօղարկվում, ինչպես մի գեղատեսիլ, նազելի օրիորդ,
կամ կրկին դուրս գալիս։

Մի ամբողջ ժամ էր, որ Սմբատն այդպէս անց-
ուդարձ էր անում այստեղ։ Կայարանի մի անկիւնում,
ծովի երեսում կանգնած էր մի փոքրիկ բեռնակիր
շոգենաւ, որ պատրաստվում էր ճանապարհ ընկնելու։
Նաւաստիները տախտակամածի վրայ ապրանքներ էին
դասում։ Շոգենաւի վրայ կային միայն մի քանի պար-

սիկ ճանապարհորդները։ Կարճլիկ, կլամրերնս և հասա չվեգացի նաւապետը, ձեռները դրպանում դրած, տախտակամածի ծայրից իր սուր հայեացքը ձգել էր ծովի հեռաւոր հորիզոնին։ Սմբատը բարձրացաւ չոգենաւի վրայ և մօտեցաւ նաւապետին։

—Ե՞րբ կըճանապարհվինք։

—Մի ժամից յետոյ,—պատասխանեց նաւապետը, իր հայեացքը չըհեռացնելով ծովից։

—Կընշանակէ տասնուվեց ժամին։

—Ուղիղ։

Սմբատը ցած եկաւ և նստեց կայարանի սինեւրից մէկի վրայ։ Փախչել ու հեռանալ—ահա այն միակ միջոցն, որ կարող է նրան ազատել խայտառակութենից։ Իսկ միւսը... ծօօ... նա չի կարող դիմել այդ միջոցին, սարսափելի է։ Սարսափելի է ոչ միայն նրա, այլև չորս հոգուց բաղկացած մի ընտանիքի համար, որի գոյութեան միակ պաշտպանն ինքն է։ Դա կըլինէր մի անպատմելի ահաւոր վէրք նրա ծերունի ծնողների համար։ Այո, որդիական սէրը նրան իրաւունք չի տալիս դիմել ինքնասպանութեան։ Միակ ելքն այս անիծեալ քաղաքից հեռանալն է։ Ինչ խայտառակութիւն, տէր Աստուած, և ով կարող էր ասպատել, թէ Դօլմազօվը մի այդպիսի դև է։ Ինչպէս խելագարվեց և գլխապտոյտ ընկաւ այդ մարդու որոգայթը։ Դօլմազօվ, ծծծ Դօլմազօվ, հիմայ հասկանալի է, թէ ինչ միտք ունէր դո բարերարութիւնը։ Զղվելի, կեղտոտ մարդ, մինչ բոլորն էլ գիտէին, որ անբազդացրել էիր մի ամբողջ ընտանիք, որ դու երկրորդին ևս թշնամացրիր։ Օ՜օօ... եթէ մի օր քեզ կըհանդիպի Սմբատը... Բայց այժմ ուշ է, այժմ միայն մի բան է

մնում անել. շուտով այստեղից հեռանալ։ Արդէն ամբողջ քաղաքը խօսում է, ամենքի բամբասանքի առարկան է նա, էլ ինչ երեսով կարող է մնալ այստեղ։

Այս մտածողութեան մէջ խորասուզված, Սմբատը բարձրացաւ և սկսեց նայել ծովի հեռաւոր հորիզոնին։ Կէս ժամու չափ նա այդ դրութեան մէջ անշարժ կանգնած էր։ Յանկարծ նրա ականջներին հասաւ բարակ սուլոցի ձայն։ Սմբատն արագ քայլերով դիմեց դէպի շոգենաւն և բարձրացաւ տախտակամածի վրայ։

Շոգենաւը բաժանվեց կայարանից և հանդարտութեամբ սկսեց լողալ դէպի ծովի խորքը։ Սմբատն, երեսը դարձրած, քաղաքին էր նայում։ Անցաւ քառորդ ժամ, և քաղաքը սկսեց հետզհետէ անհետանալ նրա աչքերից։ Վերջին անգամ նայելով դէպի յետ, նա մի խոր հառաչանք արձակեց կրծքից։

—Մնաս բարեաւ կարծեցեալ բազդաւորութիւն—ասաց, և արտասուքի երկու խոշոր կաթիլներ, գլորվելով նրա աչքերից, ընկան տախտակամածի վրայ։

XIII

Մօտ երեք տարի անցած Սմբատի Պարսկաստան հեռանալու երեկոյից՝ Հաշտարխանի նեղ փողոցներից մէկում, մի փոքրիկ անեհակում ապրում էր երեք հոգուց բաղկացած մի ընտանիք։ Սրանցից մէկը մի պառաւ կին էր մէջքից ծռված, միւսը մի դեղնած, մաշված մէջից դեղեցկութիւնը տակաւին չըկորցրած երիտասարդ կին, իսկ երրորդն երկու տարեկան մանուկ տղայ։

Պառաւ կինը Մարիա Իվանովնան էր, երիտասարդ կինը նրա

աղջիկը—Կատերինա Կարլովիչան, իսկ հիւանդոտ մանուկը—վերջինի երեխան։ Կարլ Մարկիչը չկար։ Երբ Սբմբաթի Պարասատան վախչելու գաղանիքը պարզվեց, Կարլ Մարկիչն խակոյն, վշտացած սրտով, դուրս եկաւ Գոլմազովի մօտից իւր որդու հետ։ Նա երկար ժամանակ գործ չգտաւ։ Մի կողմից, աղջկայ խայտառակութիւնը, միւս կողմից, անտանելի ապքաստութիւնը հետզհետէ բոլորովին ճնշեցին խեղճ ծերունուն, և նա երկու տարի չանցած մեռաւ։ Արեւմ Կարլիչը դեռ Բագուում էր։ Նա մի գործարանում գործակատար էր և իւր աշացած աննշան ռոճիկով պահում էր մօրը, քրոջն ու սրա զաւակին։

1884 թ. Թիֆլիս։

Ա Ր Ա Մ Բ Ի Ն

վէպ

I

Առաւօտեան տասն ու մէկ ժամին էր։ Այրի Նատալիան դղուշութեամբ բաց արաւ իւր երիտասարդ կենոզի սենեակի դռներն և հարցրեց.

—Պարոն Ռոստամեան, սուրճ կըկամենաք անուշ անել։

—Ուղարկեցէք մի բաժակ,—ասաց Ռոստամեանը, որ, անդանի մօտ նստած, զբաղված էր դրութեամբ։

Այրին դռները ծածկեց և մի րոպէից յետոյ կըրկին երևեցաւ, երկու ձեռներով բռնած մի մատուցարան, որի վրայ դրած էին մի բաժակ սուրճ և մի բուռն քաղցր պաքրիմատ։

—Այսօր ես եմ եփել. Պետրէն միշտ վչացնում է,—ասաց նա և, բաժակը վերցնելով, հանդիսաւոր կերպով դրեց Ռոստամեանի առջև։

Մինչև բաժակը դատարկելը, այրին, նստած իւր կենոզի դէմ ու դէմ, նայում էր նրա երեսին։ Տղան

—Հաւանեցէք,—հարցրեց նա, երբ Ռ-ում էր նը չտապով խմեց սուրճն ու վերջացրե՞ մեկ գա-

—Շնորհակալ եմ, շատ լաւն է,—պատասխանեց վերջինն և դրիչը վերցրեց։

Մի քանի րոպէ, դատարկ բաժակը ձեռին, այրի Նատալիան անշարժ կանգնած էր և մտիկ էր անում իւր երիտասարդ կենդանին։ Վերջինը, կարծես, մոռացած նրա ներկայութիւնը, դլուխը քաշ, մերթ դրում էր, մերթ մատածում։

—Ստեփան Գրիգորիչ,—արտասանեց այրին, բաժակը դնելով սեղանի ծայրին և ինքը նորից տեղաւորվելով աթոռներից մէկի վրայ։

Ռոստամեանը դլուխը բարձրացրեց և նայեց այրուի երեսին։

—Ստեփան Գրիգորիչ, բաւական է, ասում եմ ձեզ, բաւական է, մեղք էք, Աստուած վկայ մեղք էք։ Ես չեմ ասում, թէ մի դրեք ու կարդաք, իհ, ինչքան ուզում էք պարապեցէք, բայց մի քիչ էլ ձեր առողջութեան մասին հոգացէք։ Չէ, որդի, այդպիսով դուք վերջը ձեր սիրտը կըմաշէք. ես ձեզ սիրելուց եմ ասում։ Ա՛յ, այդպես էր, իսկ և իսկ այդպէս էր իմ Գիպօլն էլ, բայց վերջն ինչ եղաւ . . . Ախ, Գիպօ՛լ, Գիպօ՛լ . . .

Այրուի դէմքն արտայայտեց խորին դառնութիւն, աչքերի մէջ փայլեցին արտասուքի կաթիլներ։ Ռոստամեանը լուռ տխաճութեամբ լսում էր նրա խօսքերը։

Երկարատև նատակեցութիւնը, ծանր մտաւոր աշխատութիւնը, ձմեռային անքուն գիշերները մի և նոյն սեղանի քով, մի և նոյն գործով—երեսնամեայ
արդի դէմքի վրայ դրոշմել էին ծերութեան
նքը։ Նրա երեսի թուխ կաշին տեղ տեղ—
միչտ սեղմված բերանի անկիւններ-

ում—նշմարելի կերպով կնճռվել էին։ Իսկ ուղղագիծ, սակաւ ինչ սրածայր քթի կողմերից սկսած դէպի վայր գծաւորվել էին երկու խորշեր, երբեմն աշխատութեան և մտքերի յարատև լարման պատճառ։ Այս էր, որ մելամաղձային արտայայտութիւն էր տալիս նրա դէմքին։ Բայց արտաքուստ վաղաժամ թառամած երիտասարդի խոշոր մուգ-շագանակագոյն աչքերի մէջ փայլում էր մի տեսակ մանկական անմեղութիւն, որ մանաւանդ դրաւիչ էր, երբ նա ժպտում էր կամ ծիծաղում։ Մասնաւորապէս տակաւին նա առողջ էր զգում իրան։ Աշխատում էր որպէս մի լարված մեքենայ։ Օրուայ մէջ տասն ու չորս ժամ պարապելը նրա համար սովորական էր, իսկ ձմեռը—երբեմն աւելի։

Այրի Նատալիան ակնյայտ փաստերով հաստատում էր, թէ երիտասարդը չըպիտի այդ տեսակ կեանք վարի, թէ «մարդ մի անգամ է ծնվում, ոչ թէ երկու անգամ», թէ հարկաւոր է, որ նա աշխարհի զբաղմունքներին էլ մասին մտածի։ Եւ բարեսիրտ կինն ուղիղ չորս տարի էր, որ այսպէս խրատում էր նրան, մայրական անկեղծ ցաւակցութենից դրդված։ Ցաւանի էր նրան, որ Ռոստամեանը մի պանդուխտ երիտասարդ է, զուրկ ծնողներից, հեռու ազգականներից, միայնակ, ինչպէս լերկ ժայռի ճակատին բուսած մի վայրենի ծառ։ Այրին ինքը, բացի մի ամուսնացած աղջկանից, ունէր մի որդի, որ ուսանում էր Պետերբուրգի համալսարանում։—Միայն մի արուդի, իսկ միւսը, որ անդրանիկն էր, մեռել էր ուսանող ժամանակ։ Այրին իւր Գիպօլի վաղահաս մահը վերապրում էր ուսանողն և դրքերին։ Մորմոքվում էր նրա սիրտն, երբ մտածում էր, թէ նրա միակ Գա-

բոն ևս այժմ նոյն կեանքն է վարում, ինչպէս մեր եղբայրն և ինչպէս ամէն այս երիտասարդը։ Ուստի, խրատելով Ռոստամեանին, նրան թուում էր, թէ խրատում է և՛ իւր հարազատ որդուն, թէ այն, ինչ-որ ասում է առաջինին, հասնում է և՛ վերջնի լսելիքին։ Ո՛րպիսի քնքշութեամբ նա աշխատում էր մեղմացնել այն պաղութիւնը, որով շրջապատել էր իրան այդ մեծահասակը։ Բայց ապարդիւն։ յամառ մենակեացը, բոլոր իւր դրքերից, ձեռագրներից և անհեռակէս չորս պատերից ելել սիրում էր մի ընկերութիւն, այդ իւր ներքին աշխարհն էր։

Ապարդիւն ճնաց և այսօր այրի Նատալիայի մայրական յանդիմանութիւնը։ Նա մատուցարանը վերցրեց և լուռ դուրս գնաց, գլուխը խորհրդաւոր կերպով շարժելով, որ արտայայտում էր և՛ սաստիկ տարակուսանք, և՛ անկեղծ սէր, և՛ երկիւղ։ Մի փոքր անցած՝ նա դարձեալ ներս մտաւ, այս անգամ հազնուած-պատրաստ ուր որ է գնալու համար։

—Սահեան Գրիգորիչ, այս բանալին էլի թողնում եմ ձեզ մօտ,—ասաց նա, մի մեծ բանալի դնելով Ռոստամեանի սեղանի դարայրին,—նա գնում եմ Կատոյի մօտ. Պետրէին էլ հետս տանում եմ։ Եթէ բնակարան ուզող լինի, գինը, խոմ գիտէք, մի կոպէկ էլ չպակասեցնէք յիսուն մանէթից։ Լսո՞ւմ էք, մի կոպէկ էլ։

—Շատ լաւ։

Այրին գնաց։ Ռոստամեանը, իւր ընդհատված մտքերն ամփոփելու համար, մի քանի վայրկեան դէմ-դէմ հայեացքը ձգեց լուսամուտից դէպի դուրս։

Գեղեցիկ էր այն օրուայ եղանակը։ Այդ—ձմեռա-

վերջի այն օրերից մէկն էր, երբ մարդու սիրտը լցվում է անորոշ անձկութեամբ, և նա հոգով ձգտում է օրով առաջ դէպի գարուն։ Պարզ, անխառն էր երկինքը. մի շաբաթ էր, որ նա չէր աչօղվում ամպերով։ Միայն հիւսիսից երբեմն բարձրանում էին մոխրադոյն թուղթեր և տարածվում հորիզոնի սահմին կոմկերում, բայց կէսօրուայ դէմ, հանդիպելով օդի չերմ հոսանքին, ինքն ըստ ինքեան արագ չքանում էին երկնային տարածութեան մէջ։

Նոյն վայրկեանին, երբ Ռոստամեանը նայում էր դէպի դուրս, նրա լուսամուտի առջևով, զօրեղ ձեռքից արձակված քարերի պէս, սլանում էին սրաթռիչ ճնճղուկները, խաղաղ օդը շարժելով իրանց թևերի ապարդ հարուածներով։ Ախտաբորբոք աղաւնիների մի երամ, դիմացի ցածրաշէն տան կտուրի վրայ նստած, կոցահարում էր մէմնանց։ Ամեն ինչ հրճվում էր գարնան մերձաւորութեամբ, անգամ մենակեցի անհնակի փոքրաթիւ ճանճերը, որոնք, սև բիծերի նման, կպել էին լուսամտի ապակիներին և ախորժելի թմբութեան մէջ չէին շարժվում իրանց տեղերից։

Հեռու տարածութեան մէջ երևում էր Թիֆլիսի հիւսիսային շրջակայքը—Պօլծնիան, Մուշտայիդի անտառև ծառերի սև խառնիճնը, օձապտոյտ Քուրի գետակիկ հովիտը—և ապա հեռու ու աւելի հեռու։ Լուսաւորվում էին կովկասեան լեռները, որոնց մէջ թագաւորում է կաղբէկին, ինչպէս մի պատկառելի նահապետ, շրջապատված իւր զաւակներով։ Նորեկ ձիւնի թարմ ծալքերով ծանրաբեռնված բարձրագագաթ լեռան վրայ, բացի մի քանի ուղղահայեաց ժայռերից, որոնց վրայ ձիւն չի նստում, չէին երևում այն

սև գծերն և մեծ խորշերն, որ փորվում են նրա կող-
քի վրայ միջնադարյան հրաժապ շղթերից։ Իր սպիտակ
զգեստաւորութեան մէջ նա նայում էր ուրախ, սա-
ռույցք զարձած ձիւնի բիւրաւոր ասպիկներով ժըպ-
տալով արևի երեսին—ձմեռային արևի, որի ջերմու-
թիւնը տակաւին անզօր էր թափանցել նրա ատրա-
տային կեղևի մէջ անգամ։ Կարծես, օդի մաքրութիւ-
նը սեղմել, կարճացրել էր հարիւր վերսթ տարածու-
թիւնն, այնքան հսկայական լեռնը Ռոստամեանի լու-
սամից երևում էր պարզ ու որոշ, նկարված յակին-
թագոյն երկնակամարի վրայ։

Անցել էր կէս ժամ այրի Նաուալիայի դուրս գը-
նալուց։ Ռոստամեանը նոր խորասուզվել էր իւր գոր-
ծի մէջ։ Յանկարծ լսվեց փողոցային դռների զանգակի
ձայնը։ Սկզբում Ռոստամեանն ուշադրութիւն չդարձ-
րեց, բայց երբ ձայնը մի քանի անգամ կրկնվեց, տըր-
տընջալով դուրս եկաւ և մուշ-կարմրագոյն վայտա-
շէն մաքուր սանդխատով ցած իջաւ։ Նա բաց արաւ
դռներն և պատրաստ էր բարկացած արտասանել. «ինչ
էք կամենում», երբ նրա առջև բացվեց մի պատկա-
ռելի պատկեր։ Նա, փոխանակ կոշտ հարցը տալու,
յարգանքով յետ քաշվեց։

Դա մի բարեդէմ ծերունի էր, ալեխառն մազե-
րով ու միրուքով, հագնված խիստ մաքուր և հա-
րուստ։ Մի ձեռով յենված ձեռնափայտի վրայ, միւս
թևի տակ նա սեղմած ունէր բազուկը մի երիտասարդ
կնոջ, որի դէմքը կիսով չափ ծածկված էր նուրբ կի-
նամանագոյն շղարշով։

—Ասացէք, խնդրեմ, ձեզտեղ են բնակարան վար-
ձով տալիս,—հարցրեց ծերունին դիւրեկան ձայնով և

քաղաքավարի կերպով գլխարկի ծայրը քիչ չարժեց։

—Այո,—պատասխանեց Ռոստամեանը, նոյնպէս
գլուխ տալով։

—Կարելի է տեսնել։

—Բարեհաճեցէք։

Նա մի կողմ քաշվեց, որ ճանապարհ տայ ծերու-
նի ոտամարդին և երիտասարդ կնոջը։

Բնակարանը գտնվում էր պատշգամբի միւս կող-
մում, ուղիղ Ռոստամեանի բնակարանի դէմ ու դէմ։
Երեք ամիս էր, որ նա դատարկ էր, և այս երեք ամ-
սուայ ընթացքում, գրեթէ ամեն օր, այրի Նաուալիան
Ռոստամեանին խնդրում էր վարձողներ գտնել։ Տու-
նը սեպհական էր և ծնացել էր այրուի հանգուցեալ
ամուսնուց, իբրև միակ ժառանգութիւն։ Մայր ու որ-
դի ապրում էին այդ տան եկամուտով։ Ներքին յար-
կը վարձած էր մի ռուս պաշտօնեայի ընտանիք, վե-
րին յարկի կէս մասի երկու սենեակներում բնակվում
էր ինքն այրին, իսկ միւս երկուսում Ռոստամեանը։
Դատարկ բնակարանը կազմում էր վերին յարկի երկ-
րորդ կէսը։ Ուստի նրա պարապութիւնը բաւական
դժուարացնում էր այրուի ապրուստը։

Ռոստամեանն անծանօթներին առանձնորդեց դէ-
պի վարձվելի բնակարանը։

—Խոնաւ չէ,—հարցրեց ծերունին, առաջին ա-
նեակը մանելով և, ինչպէս սովորաբար լինում է, ա-
ջին հայեացքն առաստաղին ձգելով։

—Ամենևին ոչ։

Երիտասարդ կինը չտապով մօտեցաւ այս ու այն
լուսամուին, նայեց դէպի փողոց։ Դա մօտ քսան ուհինգ
տարեկ, աւելի բարձր, քան միջահասակ, դէմքի կա-

նոնաւոր դծագրութեամբ, առողջ կազմուածքով մի էակ էր։ Տիկին էր նա, թէ օրիորդ—Ռոստամեանը չկարողացաւ որոշել։ Նոյն վայրկեանին, երբ երիտասարդ կինն երեսը դարձրեց դէպի Ծերունին, Ռոստամեանի հայեացքը հանդիպեց նրա աչքերին, և նա, որ ամօթխած էր, անվստահ, մինչև անգամ երկչոտ կանանց վերաբերմամբ, չփոթված, աչքերը դարձրեց միւս կողմ։

Ծերունին անցաւ միւս սենեակները։ Երիտասարդ կինը հետևեց նրան։

Առաջինն ուշադրութեամբ զննում էր բնակարանի ամեն մի սենեակն և երբեմն ֆրանսերէն լեզուով իւր նկատողութիւնները հաղորդում էր երիտասարդ կնոջը։

—Յոհաննոց ունի՞,—հարցրեց նա։

—Ունի։

—Մաքո՞ւր է։

—Ցեսէք։

Երբ Յոհաննոցը, պատշգամբը, գաւիթն, ամեն ինչ Ծերունին տեսաւ և չորս սենեկները մի անգամ ևս զննեց, դարձաւ երիտասարդ կնոջն և ասաց.

—Յարմար է։

Խօսեցին գնի մասին։ Ծերունին նորից սկսեց խորհրդակցել երիտասարդ կնոջ հետ։

Այդ միջոցին Ռոստամեանն ուշադրութեամբ քննեց դիտել նրանց։ Ոչ մէկն և ոչ միւսն իւր արտաքին տեսքով Թիֆլիսեցու նման չէր։ Պարզ էր, որ երկուսներն էլ էին։ Նրանց դէմքերի գծագրութիւնն և դոյնը հայկական էին, թէև խօսում էին Ռոստամեանի հետ մաքուր ռուսերէնով, մանաւանդ երիտասարդ

կինը։ Ցեղ տեղ ծերունու արտասանութիւնը չեղումի էր բուն ռուսականից, յիշեցնելով հիւսիսային Կովկասի հայերին յատուկ արտասանութիւնը։ Բայց հետաքրքրելին այս չէր Ռոստամեանի համար։ Էլնից առաջին հայեացքից նա երիտասարդ կնոջ խոշոր, պարզագոյն աչքերի մէջ նկատել էր մի խորին թախիծ։ Այդ ոչ խնդութեան նշան էր, ոչ և անցողիկ մի դառնութիւն. ինչ-որ ծանր մտախոհութեան կամ հոգեկան մի անբաժան վշտի արտայայտութիւն էր այն, որ նշմարվում էր երիտասարդ կնոջ դէմքի բոլոր գծերի մէջ։

Ծերունին, խորհրդակցելու միջոցին, ակնածութեամբ մոտիկ էր անում նրան և թուում էր երբեմն, որ նա չի համարձակվում ուղիղ նրա տխուր աչքերի մէջ նայել։

Երիտասարդ կինը խօսում էր յոգնածի դէմքով, իսկ Ծերունին—եղակի։

«Երևի հայր ու դուստր են»,—մտածեց Ռոստամեանը, մի և նոյն ժամանակ, նկատելով այդ կանացի և այդ այրական դէմքերի մէջ արիւնակիցների նմանութիւն, որ տարիների և սեռերի տարբերութիւնը չէր քօղարկում փոքր ի շատէ դիտող աչքերից։

—Ահա ձեզ կանխամտածը,—ասաց Ծերունին, մի հատ տասն ռուբլանոց թղթադրամ տալով Ռոստամեանին,—մենք կըտեղափոխվենք վաղը։

—Բայց, ասացէք, խնդրեմ,—խօսեց այս անգամ երիտասարդ կինը, մի ուշադիր հայեացք ձգելով Ռոստամեանի վրայ,—այս գաւթում կամ հարևանութեան մէջ աղմուկ լինում է։

—Այդ կողմից կարող եմ երաշխաւոր լինել, որ ոչըք ձեզ չի անհանգստացնիլ։

—Գիտէք, իմ աղջիկն ապմուկ չի սիրում,—մէջ մտաւ Ծերունին,—այս պատճառով էլ մենք քաղաքի կենտրոնում չենք վարձում բնակարան։

—Երևի, նորեկներ էք դուք,—ասաց Ռոստամեանը։

—Այո, այո, մի ամիս չկայ, որ եկել ենք Ռոսիայից։ Հիւրանոցում երկար բնակվել անհնարին է, մանաւանդ այտեղի հիւրանոցներում։ Իսկ դուք այստան աէրն էք։

—Ոչ, կենող եմ։

—Ձեր ազգանունը։

—Ռոստամեան։

—Մեզ հարկաւոր է ծանօթանալ միմեանց հետ,—ասաց Ծերունին, Ռոստամեանի ձեռը սեղմելով.—Մինաս Սիրիսլիչ Փիրիչիեվ . . . սա էլ իմ աղջիկն է, Վարվարա Մինաեվնա։

Դուրս գալու ժամանակ երիտասարդ կինը մի անգամ ևս լուսամուից հայեացք ձգեց դէպի քաղաքի հեռաւոր շրջակայքն և արտասանեց.

—Ինչ հրաշալի տեսարան է։

Ռոստամեանը լսեց նրա ծանր և երկար հոգոցը։ Երբէք նա մի կնոջ երեսին երկու անգամ միմեանց հակից նայած չէր, ոչ դրսում, ոչ մի տան մէջ, եթէ երբ և իցէ նա դանվել էր մի տան մէջ կանանց շրջանում։ Բայց այդ աւելի նիհար, քան թէ դէր, սակաւ ինչ դունատ, թախծալի դէմքն, այդ խոշոր, սրբատիալ աչքերը մի քառորդ ժամ կաշկանդեցին նրա ուշադրութիւնը։ Դուցէ պատճառն այն հեռաւորների հայեացքներն էին, որոնց արժանացաւ նա երիտասարդ կնոջ կողմից—չըգիտէր։ Չըգիտէր նոյնպէս, թէ

ինչու, Ծերունին և դուստրը դուրս դնալուց յետոյ, ինքը մի քանի րոպէ անշարժ կանգնած էր փողոցի կողմի լուսամուտ առջև և նայում էր մօտակայ եկեղեցու արծաթափայլ գմբէթին, որ պսպղում էր արևի ճառագայթների ներքոյ։

Վերադարձաւ այրի Նատալիան։

—Էհ, Նատալիա Պետրովնա, ինչ կըտաք, որ մի ուրախալի լուր յայտնեմ ձեզ,—դարձաւ Ռոստամեանը ուրախ դէմքով իր տանտիրուհուն։

—Ով գիտէ, վարձել են բնակարանը...

—Հէնց այդ է. ահա կանխավճարը։

—Օհ, վառք Աստուծոյ... ապրիս, ապրիս, որդի,—պոչից Նատալիա Պետրովնան, կարմիր թղթադրամը ծալելով և գրպանը դնելով.—Ո՞վ վարձեց։

—Մի ծեր մարդ իր աղջկայ հետ։

—Երկու հոգի միայն։

—Երկու էլ ծառայ — մի աղախին և մի խոհարար։

—Իսկ և իսկ իմ ուզածն է։ Լաւ մարդիկ են։

—Աստուած գիտէ, գոնէ դէմքով լաւ երեսային ինձ։ Ահա անունները գրված են այս թղթի վրայ։

Նատալիա Պետրովնան ուրախութիւնից պատրաստ էր գրկել և համբուրել Ռոստամեանին։ Բայց Ռոստամեանն, ինչ և իցէ, օտար էր, իսկ ինքը, չընայելով իր պատկառելի տարիքին, տակաւին երիտասարդ էր համարում իրան։

Ճաշից յետոյ այրին անմիջապէս հրամայեց ծառային վարձված բնակարանի լուսամուտներն ու յատակը լուանալ, պատերն և առաստաղը մաքրել սարդի ոտոյնից։ Նա չսպասեց իր աղջկայ մօտ, որ նրան

հաղորդի ուրախալի լուրը, վերադարձաւ և կրկին չը-
նորհակալութիւն յայտնեց Ռոստամեանին։ Ամբողջ օ-
րըն այրին ուրախութենից տաքի վրայ էր։

Իսկ Ռոստամեանի առջև մերթ ընդ մերթ պատ-
կերանում էին Ծերունու պատկառելի և նրա դստեր
տխուր դէմքերը։ Այդ անծանօթ անձինք ինչ-որ տա-
րօրինակ և տխուր տպաւորութիւն էին գործել նրա
վրայ։ Երբէք մենակեացն իւր կեանքում տեսած չէր
Ծնողի ու զաւակի այնքան նեղդաշնակ և դրաւիչ զոյգ,
որպէս այդ նորեկները—հայր ու դուստր...

II

Առաւօտը Ծերունին եկաւ և նախազգուշացրեց,
թէ պիտի տեղափոխվէն ճաշից յետոյ։ Նատալիա Պետ-
րովնան ընդունեց նրան խիստ վայելուչ կերպով, քա-
ղաքավարութեամբ հրաւիրեց ներս, ծանօթացաւ և
յուսադրեց, թէ բնակարանն ամեն կողմից հաւանելի
կըլինի նրան։

—Առաջին անգամն է ձեր Թիֆլիս գալը,—հարց-
րեց տանտիրուհին։

—Ո՛չ, մի քանի անգամ եղել եմ, բայց շատ վա-
ղուց,—պատասխանեց Ծերունին,—հազար ութ հա-
րիւր ևօթանասուն ու վեց թուականին, պատերազմից
առաջ, ես այստեղ ցորեն էի գնում ռուսաց զօրքերի
համար։ Այն ժամանակ Թիֆլիսում աւելի կենդանու-
թիւն կար, ասկին, իսկ այժմ նա փոխվել է...

—Մեծ իշխանը որ գնաց, Թիֆլիսն էլ դատարկ-
վեց,—ասաց այրին, հառաչելով։—Այն ժամանակ ձեր
վարձած բնակարանում կենում էր... դէներալ... ապա-

սեցէք, սպասեցէք... դէներալ Զուդինովը։ Գիտէք որ-
քան էր վճարում. տարեկան լինը հարիւր մանէթ։
Այժմ շատ է պակասել տների վարձը, շա՛տ...

Կէսօրից յետոյ նորեկները տեղափոխվեցին։ Նը-
րանց բոլոր կահ-կարասիքն էին՝ մի քանի աթոռներ ու
բազկաթոռներ, երկու պահարան, երկու գրասեղան,
մի դահլիճակ, մի քանի պարսկական գեղեցիկ գոր-
գեր, մի դաշնամուր և մի քանի այլ և այլ մանր պա-
րագաներ։ Բոլորը նոր էր և, ըստ երևոյթին, բաղա-
դում գնված։

Ռոստամեանը, գոնեը վախած, հանգստանում
էր իւր սենեակում, երբ նորեկները, տանտիրուհու օգ-
նութեամբ, դասաւորում էին իրանց կահ-կարասիքը։
Ամբողջ օրը նա տնից դուրս չեկաւ։ Ո՛չ մշակների աղ-
մուկը, ո՛չ Ծերունու և Նատալիա Պետրովնայի բարձ-
րաձայն պատուէրները ծառաներին և ո՛չ երիտասարդ
կնոջ մեղմ ու դիւրեկան ձայնն, որ մերթ ընդ մերթ
լսվում էր դիմացի պատշգամբից, կարծես, չէին հան-
գստում նրա ականջներին։

Միւս օրը վաղ առաւօտ Նատալիա Պետրովնան
մտաւ նրա սենեակը դուարթ դէմքով, հագստի թևե-
րը յետ ծալած, և սկսեց քանի մի տեղեկութիւններ
հաղորդել իւր նոր կենակիցների մասին։

—Իսկապէս լաւ մարդիկ են,—ասում էր նա ոգևոր-
ված,—հէնց երէկ և նրա վարձը տուեցինք։ Հայրն աղ-
ջկանից է լաւ, աղջիկը հօրից, երկուսն էլ դիւրեկան
են։ Աղջիկը շատ գեղեցիկ է... ասենք, գեղեցիկ չէ,
սիրուն է, սիրուն։ Ես նրանից աւելի գեղեցիկները
շատ եմ տեսել, բայց ուրիշ բան է նա։ Եթէ ես տղ-
մայ լինեի, տէրն ու տերը կըսիրահարվէի։ Հապա, Աստ-

վան Գրիգորիչ, մի լաւ մարդ արէք նրան... էհ, ուժեղ եմ ասում, դուք, խօմ, ազամարդ չէք, հա հա հա։

Ճաշի ժամանակ Նատալիա Պետրովնայի խօսակցութեան առարկան դարձեալ նորեկները էին։ Շէր անցել նրանց տեղափոխվելուց քանի ժամ, և այլեւս արդէն յայտնակած էր, նա ոգեւորված պատմում էր, թէ ինչպէս Թերունեին այն օրը դիմաւորել էր իրան, թէ ինչպէս Վարվարա Միհաեիլովան պատուել էր, ոգի կանդնելով։ Երևում է, որ հասարակ մարդիկ չեն. կամ շատ հարուստ են, կամ մեծ ցեղից են։ Աղջկայ պահարանը լիքն է տեսակ տեսակ նորաձև հագուստներով. հայրը չորս ու հինգ մուշտակներ և վերարկուներ ունի։ Թերունեին պարզ մարդ է. նա խընդրում է ու աղաչում Նատալիա Պետրովնային շուտ շուտ այցելութիւն անել, որ «օտար երկրում տխուր չանցնի մեր օրը», ասում է։

—Ես էլ իրանց համիցէք արի, Ստեփան Գրիգորիչ, էհ, թող գան ու գնան. աղջիկը խիստ տխուր է, չեմ իմանում ինչ հոգս ունի, շատ քիչ է խօսում, չի ծիծաղում։

Հետևեալ և երրորդ օրն այլեւս մի և նոյնն էր կրկնում նորեկների մասին։ Այս անգամ նա իմացել էր, որ նրանք եկել են Մոսկվայից, որ եղել են Պետերբուրգում, շատ և շատ քաղաքներ են տեսել, որ արտասահմանում ևս ապրել են մի առ ժամանակ։

—Մի խօսքով, շատ օրինաւոր մարդիկ են... ասում էր այլեւս, պարծենալով, որ այնպիսի կենակիցներ ունի։

Կենդանութիւն տուած բնակարանի լուսամուտների փեղկերը ամեն օր առաւօտը բացվում էին, երեկոյին փակվում։ Ռոստոմեանը շարունակում էր իր դործը։ Արդէն անցել էր մի ամբողջ շաբաթ, և նա միայն երկու անդամ էր տեսել Թերունեին ու նրա աղջկան, առաջինին—փողոցում, վերջինին—պատշգամբի վրայ։ Տակաւին նա չէր հետաքրքրվում իր դրացիների դոյութեամբ։ Միայն երբեմն նրա առջև պատկերանում էր երիտասարդ կինն իր թախծալի աչքերով, որ առաջին օրը բարակ շղարշի տակից այնպէս տխուր նայում էին դէպի հեռաւոր տարածութիւն։ Ցիշեց Ռոստոմեանը մի քանի անդամ երիտասարդ կնոջ և՛ ծանր հոգսը։ Բայց այս բոլորը միայն վայրկենաբար։ Այնուհետև գործը գարձեալ խլում էր նրա բոլոր ուշքն ու միտքը, և նա խորասուզվում էր յարատև մտաւոր աշխատութեան մէջ։

Մի անգամ իրիկնադէմին, երբ դեռ արևը մայր չէր մտել, նա, իր սեղանի մօտ կանգնած, մտիկ էր անում դէպի փողոց։ Հեռուից նրա ականջին հասաւ մի ձայն—նախ ցածր, ապա աստիճանաբար բարձր ու բարձր։ Դէպի դաւիթ նայող լուսամուտներից մէկը նա վաղը առաջ բացել էր, որ ներսում կուտակած ծխախոտի ծուխը դուրս գայ։ Թարմ և բուսական սառն իրիկնային օդի հետ սենեակի մշտական մռայլ ու լուռ մթնոլորտի մէջ տարածվեցին երգի հնչիւններ, որոնց նմանը նա չէր լսել մինչև այն օրն և, այո, չլսեիր լսէր յաւիտեան։ Երբ նա մանուկ էր, ամառային երեկոներին, իր հայրենի նահապետական քաղաքի շրջակայ այգիներում զբօսնելիս, արևի վերջին ճառագայթների տակ սիրում էր նստել թփերի տուերում և լսել քաղցրաձայն թռչունների երգը։ Այդ բաների հետ նրա սրտի խորքում մի անչնջելի տպաւորութիւն էր թողել և՛ այդ երգն, որ մերթ ընդ մերթ, անցեալը

յիշելիս, զարհնում էր և իւր հետ զարհեցնում մանկութեան ուրախ ու տխուր յիշատակները։ Բայց այդ—անցեալին էր պատկանում։ Իսկ ա՛յժմ...

Նա զգուշութեամբ, կարծես վախենալով, որ մի դուրս ձայնն ընդհատվի, ուշիկ քայլերով մօտեցաւ լուսամուտին։ Երգը շարունակվում էր, մերթ բարձրանալով, մերթ իջնելով։ Երբեմն նա բոլորովին անլսելի էր դառնում, և այդ վայրկեաններին նրան վերադարձնում էր նոյն եղանակով, բայց ոչ նոյն զգացմունքով դաշնամուրի ձայները։

Գաւթում ամեն ինչ խաղաղ էր, կարծես, երգը չըվանդարելու համար։ Միայն մի քանի ճնճղուկներ տերևաթափ ակացիաների ճիւղերի վրայ աղմկում էին։ Թւում էր Ռոստամեանին, որ նոյն իսկ նրանց ճլվլոցները նուրդաշնակութիւն են պահում դիմացի պատշգամբից լսվող անոյշ երգի հետ։

Դադարեց երգը, լռեց դաշնամուրը, բայց նա, դեռ կանգնած լուսամուտի առջև, անթարթ աչքերով նայում էր դէմ ու դէմ։ Եւ սթափվեց նա այն վայրկեանին, երբ հայեացքն ընկաւ դիմացի լուսամուտին։ Նրա կասկածը փարատվեց։ Երգեցողը նա էր, այն ձերսնու երիտասարդ աղջիկը։ Ծխարադեմ էակն երգում էր մի ախուր երգ։ Երկու խոշոր ու թախծալի աչքերը մեկ էին անում ուղիղ Ռոստամեանի երեսին, համարձակ, խելացի, բայց քնքոյշ հայեացքով։ Այդ—կէտ առ կէտ այն հայեացքն էր, որով մի շաբաթ առաջ նոյն այդ էակը նայում էր դէպի քաղաքի հեռաւոր տարածութիւնը։ Այժմ այդ տարածութեան վերջնակէտը Ռոստամեանն էր...

Աշխուժութիւնը տեղի տուեց հիացման։ Խառն, անորոշ մի զգացմունք սկսեց պղտորել նրա անդորրը սիրտը։ Վայրկենաբար նրա մէջ ձայն տուեց բնական ամօթխածութիւնը։ Նա լուսամուտից հեռացաւ։ Սակայն միայն մի քանի րոպէաչափ։ Մի անսպասելի և անյաղթելի այժ կրկին մղեց նրան դէպի լուսամուտ։ Իսկ նա... նոյնպէս նայում էր։ Երբէք Ռոստամեանը մի այդպիսի թափանցող հայեացք չէր զգացել իւր վրայ։ Նա խօսում էր ուղիղ մենակեցի խաղաղ սրտի հետ։

Անցաւ մի քանի րոպէ։ Երիտասարդ կինը հեռացաւ լուսամուտից։

Օրն արդէն մթնել էր։ Ծառան ներս բերեց Ռոստամեանի կանթեղն և զարմացմամբ տեսաւ, որ երիտասարդ պարոնը չընկատեց նրա ներս մտնելն ու դուրս գնալը։

Փոքր ինչ անցած ներս մտաւ Նատալիա Պետրովնան։ Ռոստամեանն ուրախացաւ նրա այցելութեանը։

—Սահման Գրիգորիչ, ես ձեզ ինչքա՞ն եմ պարտ,—հարցրեց այրին խոհուն դէմքով։

—Ի՞նչ պարտք,—գոչեց Ռոստամեանն, որ դեռ ախորժելի տպաւորութեան ներքոյ էր գտնվում։

—Ո՞նց թէ ինչ պարտք, մոռացո՞ղ էք։ Աեմ. տասը մանէթ վերցրել եմ Գաբօյին վող ուղարկելիս, տասն ու հինգ մանէթ առել եմ ու տուել Պետրէին. մէկել օրն էլ տասցայ քառասուն։ Հաշուեցէք... Քառասունը դուրս բերէք տան ու ճաշի վարձ մարտ ամսի համար։ Ահա, այս ձեզ տասն ու հինգ մանէթ. Ձնացեալը յետոյ կըտամ։ Զընեղանաք, որդի...

—Է՛հ, Նատալիա Պետրովնա, խօմ ես հարկադրանս չեմ, որ վռազում էք պարտքս տալու։ Ինձ փողը հարկաւոր չէ, պահեցէք։

—Չէ, Սահփան Գրիգորիչ, ես պարտք չեմ մնում. պարտք որ ունենում եմ, դիշերները քունս չի տանում։ Շնորհակալ եմ, շատ ու շատ շնորհակալ եմ ձեզանից, երանի թէ ամեն մարդ ձեր սիրտն ունենար։ Ես ամենքին էլ ասում եմ, թէ իմ կենդանի ոսկի է։ Ալրիք, որդի, ես ձեր լաւութիւնը մինչև մահս չեմ մոռանալ, դուք ինձ շատ անգամ էք նեղ դրութենից ազատել։ Աստծուն է յայտնի, թէ ես ինչքան եմ ա-ղօթք անում ձեզ համար, Սահփան Գրիգորիչ։ Երէկ էլ երկար գովում էի ձեզ Մինաս Կիրիլիչի ու Վարվարա Մինաեվնայի մօտ։

Այրին նստեց և փոխադարձաբար սկսեց Ռոստոմեանի մօտ ես վերջիններին գովել։ Երէկ նա Մինաս Կիրիլիչին առաջարկում է մի թուղթ գրել, որ ինքը ձեռք քաշի, թէ բնակարանի մի ամսուայ վարձը ստացել է։ Մինաս Կիրիլիչը շատ զարմանում է այս առաջարկութեան վրայ։

—Դէհ, դուք ասացէք, Սահփան Գրիգորիչ, ինչպէս չըգովեմ այդպիսի մարդկանց,—դարձեց Նաստալիա Պետրոսեանն ոգևորված։ «Թէ որ, ասում է, ինձանից էք վախենում, ահա ձեզ երկու հարիւր մանէթ այս դէմքից»։ Այս որ լսեցի, ինքս ինձանից ամաչեցի։ Մեր ժամանակում քիչ մարդ կըլինի, որ այսպէս վարվի տանտէրերի հետ։ Սահփան Գրիգորիչ, եկէք, այս անգամ ինձ լսեցէք,—աւելացրեց յանկարծ այրին, մի քանի վայրկեան լռելուց յետոյ։

—Ի՞նչ էք կամենում։

Այրին խորհրդաւոր ժպտաց և աչքերով ու յոնքերով նշան արաւ դէպի նորեկների բնակարանը։

—Հըմ, ինչ կասէք, Սահփան Գրիգորիչ,—ասաց

նա, ձեռները յենելով սեղանի ծայրին և գլուխը մօտեցնելով իւր խօսակցին։—Թէ որ ամբողջ Թիֆլիսը փնտրէք, ով գիտէ, Վարվարա Մինաեվնայի պէս ուրիշը չէք գտնիլ։ Եթէ խօսք տալիս էք, ես հիմիկուանից կարող եմ մի կերպ հասկացնել նրանց։ Ծոյս ունիմ, որ կըհամաձայնվեն թէ Վարվարա Մինաեվնան, թէ հայրը։ Նրանք էլ ձեզ են հասանել. ամեն օր հարցնում են։ Երէկ ես մէկ-մէկ ասացի. խօմ գիտէք, թէ ինչ կասէի. ես ձեզ վրայ երբ եմ վատ խօսել, որ նրանց մօտ վատ խօսէի։ Այնքան գովեցի, որ զարմացան։ Ասացի—հասը չըկայ Թիֆլիսում։

—Շնորհակալ եմ, Նաստալիա Պետրոսեան։ Բայց եթէ նրանց էլ ինձ մօտ այնպէս աւելորդ էք գովում, ինչպէս ինձ չափից դուրս գովել էք նրանց մօտ—ես ձեզ չեմ հասասում։

—Ո՛չ նրանք են իմ ազգականներն, ոչ էլ դուք, պարոն Ռոստոմեան, ինչու համար պիտի աւելորդ գովեմ. հը՞մ։ Խօմ դուք լեզուիս վարձ չէք տալիս։ Իմ ուզածն էլ այն է, որ դուք, վերջապէս, ձեզ համար մի սիրուն աղջիկ գտնէք ու մարդավարի ապրէք այս աշխարհում, պրծաւ գնաց։ Վարվարա Մինաեվնային ես շատ եմ հասանում... Փոշ էլ պիտի որ ունենայ, հայրը կապալառու է եղել, մեծ-մեծ գործեր է ունեցել։ Գտակվեցէք, Սահփան Գրիգորիչ. ես կըդառնամ ձեզ համար մայր, դուք էլ որդի։ Խիստ լաւ կըլինի, Աստուած վկայ. այ, իմ երկու սենեակները կըվճացնեմ նրանց բնակարանի հետ, մէջտեղից դուռը բաց անել կըտամ, ես կըտեղափոխվեմ ձեր սենեակները, իսկ դուք այնտեղ կըբնակվիք։ Լաւ չեմ ասում, Սահփան Գրիգորիչ. հըմ, ինչ էք հասանում ասածս։

Ռոստամեանը լուռ ժպտաց, իբր թէ Նատալիայի առաջարկութիւնը կատակ համարելով։

Այլեւս դնալուց յետոյ, Ռոստամեանը նատեց, որ պարապի։ Բայց, հակառակ սովորութեանը, այս անգամ չկարողացաւ ընտելանալ գործին։ Գրում էր ու ջնջում շարունակ, և երկար ժամանակ չէր յաջողվում նրան գանել իր մտքերի թելը։ Նրա ականջները դեռ հնչում էր երիտասարդ կնոջ ախուր մեղեդին, իսկ աչքերի առջևից չէր հեռանում նրա պատկերն, որ այնպիսի հետաքրքրութեամբ լուսամտից մըտիկ էր անում։

Ո՞վ է նա, ինչ տեսակ կին։ Ինչու՞ հայր ու աղջիկ, իրանց հայրենիքը թողած, եկել են, Թիֆլիսումն են բնակվում և, վերջապէս, ո՞րն է նրանց հայրենի քաղաքը։ Արդեօք, Մինաս Կիրիլիչը բազդախնդիր թափառականներից մեկը չէ, արդեօք, այդ երիտասարդ կինը նրա աղջիկն է իսկապէս։

Նոյն գիշեր պէս-պէս քաղցր, սակայն հոգետանջ երազներ, իրարու յաջորդելով, ընդհատում էին նրա սովորական անդորը քունը։ Ցայտնի չէր որ ժամին, մի անգամ նա յանկարծ զարթնեց. այնպէս թուաց նրան, որ մեկը զարկում է դռներին։ Նա մօտեցաւ լուսամտին, նայեց դէպի դուրս։ Ոչինչ չկար. միրում էր մի այնպիսի խաւար, որ գիմացի բնակարանի ուրուագիծը հազիւ հազ նշմարվում էր։ Սաստիկ անձրև էր գալիս։

Առաւօտը նա զարթնեց աւելի վաղ, քան երբ և իցէ զարթնել էր վերջին տարիները։ Նրա սիրտը լեցված էր անորոշ թախծութեամբ։ Ցաւում էր նա, որ ամբողջ երեկոն անցուցել էր անօգուտ։ Տրտմութեամբ

նա թերթեց իր գրած ու ջնջած էջերը. հազիւ հազ մնացել էին մի քանի չջնջված տողեր։

Այն օրը Ռոստամեանը պիտի դնար իր պաշտօնակիցներից մեկի մօտ մի քանի կարևոր տեղեկութիւններ վերցնելու իր աշխատութեան համար։ Օրն ամպամած էր, թեթև անձրև էր շաղում, իսկ գիշերային յորդառատ հեղեղից փողոցներում դոյացել էր անանցնելի ցեխ։ Այն փողոցն, ուր գտնվում էր այրի Նատալիայի տունը, բաւական նեղ էր, բարձրադէր, մայթերը գառիվայր, իսկ սալայատակը տեղ-տեղ քանդված։ Անձրևային եղանակին այդ փողոցով առանց անցնելն ունէր իր անյարմարութիւնը. սկուտն ցեխի մէջ մարդ առէպ սայթաքում էր և երբեմն ընկնում։ Իսկ Նատալիա Պետրովնայի տունը գտնվում էր փողոցի վերին անկիւնում։

Ռոստամեանը փողոցներում սովորաբար քայլում էր շտապ շտապ, գլուխը քաշ դցած, ձեռները վերարկուի գրպաններում դրած, և շատ անգամ չէր նկատում իր մօտով անցնողներին։ Արդէն ճաշի ժամանակն էր, երբ նա, մի մեծ մատեան ձեռին, վերադառնում էր տուն։ Փողոցի անկիւնից դէպի վեր բարձրանալիս, յանկարծ նա դիպաւ մեկին։ Նա գլուխը բարձրացրեց, որ ներում խնդրի, և երես առ երես հանդիպեց իր նոր հարևանին։

—Ոչինչ,—ասաց Ծերունին,—մեղաւորը ձեր քաղաքային վարչութիւնն է, որ փողոցները լաւ չի պահում։ Ես միշտ ասել եմ, որ Թիֆլիսը դեռ Ասիա է։

Ռոստամեանն եաւից, Ծերունին առջևից—մի քանի րոպէ ընթանում էին միասին։ Մինաս Կիրիլիչը հագած էր մեծ և խորը կրկնակօշիկներ, լայն մուշտակ

մշկեայ բէշկի օձիքով։ Մի ձեռով նա դլխին բռնած էր մի մեծ հովանի, մանր անձրևից պաշտպանվելու համար, միւսով—մի կոլորակ թղթեայ կապոց։ Իսկ ձախ դրպանից ցցված էին ռուս լրագրների մի քանի համարների ծայրերը։ Նա, տրտնջալով փողոցի անմաքրութեան վրայ, քայլում էր զգուշութեամբ, որ չըցեխոտվի։

Պատահեց մի փոքրիկ միջնադէպ, որն և պատճառ եղաւ ծերունու և Ռոստոմեանի առաջին բարեկամութեան։

Դատարկ տաշտը կռնատակին բռնած, նօսր ցեխի մէջ սրնթաց վազեց ծերունու մօտով մի չըվաճառ և, կարծես դիտմամբ, մի քանի անգամ տաշտերը գետնին սաստիկ խփեց։ Մինաս Կիրիլիչի մուշտակը շաղախվեց ցեխի բծերով։

—Անպիտան,—դոչեց մաքրատէր ծերունին բարկացած։

Կինոն կանգնեց և, լծուն հանելով, ծերունուն մի ծաղրական նշան արաւ։

—Ծանդո՞ւդն,—ձայնը բարձրացրեց ծերունին,—բաւական չէ վարմունքդ, դեռ կապկութիւն էլ ես անում... Ոսոիկան։

Բայց ոստիկան չըկար փողոցում։ Դէմ ու դէմ մի դինեվանութի առջև երկու կիսահարբ կինոներ կանգնած, զուարճութեամբ մոնիկ էին անում հեռուից։ Ռոստոմեանը նշան արաւ չըվաճառ կինոյին, որ հեռանայ։ Բայց կինոն զանազան միմոսութիւններով չարունակեց ծաղրել Մինաս Կիրիլիչին։

—Կորէ՛ք,—դոռաց ծերունին վրդովված ձայնով։ Կիսահարբ կինոները հրճռացին, խրախուսելով միմոսող չըվաճառի յանդգնութիւնը։

—Էդ լօղին որ հադիլ ես, միթամ ինձմէն մինձ մարթ իս էլի,—ասաց վերջինը, մի ոտն առաջ դնելով,—էն օրն էլ ինձ փախցրիր, «տվօյ չամայկա դնիլօյ», ասացիր... մնօգօ ֆարսիչ ա՛յ...

Ռոստոմեանն աշխատեց ծերունուն հանդստացնել, որ ուշադրութիւն չըդարձնի կինոյի վրայ։ Բայց Մինաս Կիրիլիչը դեռ չըդիտէր, թէ որքան կոպիտ է չըվաճառ կինոն, երբ մանաւանդ ծախել, վերջացրել է իւր վաճառքը։ Նա, բայ հովանին բարձրացնելով, մօտեցաւ իւր հակառակորդին։ Կինոն տաշտը դրեց գետնին և մի աւելի անամօթ ծաղրական շարժուձև դործեց։ Ռոստոմեանի արիւնը դլխովը տուեց։ Նա, կատաղած, բռունցքները սեղմած, շրթունքները կըծոտելով, արիւնալի աչքերով յարձակվեց անամօթ չըվաճառի վրայ։ Վերջինը, հէնց առաջին հարուածից գլխովը նրա կռնների ուժը, շտապեց տաշտը վերցնել և հեռանալ, բարձրաձայն հայհոյելով։

—Ախա, կատարեալ Ախա է այս երկիրը,—դոչեց ծերունին, որ բարկութենից դունաթափվել ու դողում էր։

Հասնելով դռներին, Մինաս Կիրիլիչը բարեկամաբար սեղմեց Ռոստոմեանի ձեռն և որովհետև շատ էր վրդովված, ուստի չափազանցութիւն չըհամարեց ասել, թէ իբր յաւիտեան չի մոռանալ նրա պաշտպանութիւնը։

Ահա այսպէս արժանացաւ Ռոստոմեանն առաջին դէպքում այն մարդու համակրութեանը, որ ապադայում այնքան չարագուշակ դեր պիտի կատարէր նրա ճակատագրի վերաբերմամբ։

Միւս օրը Նաստասիա Պետրոսեան պատմեց, թէ որքան ծերունին չնորհակալ է Ռոստամեանից նախընթաց օրուայ պաշտպանութեան համար։

—Ինչ որ տեսնում եմ,—աւելացրեց այրին,—հայր ու աղջիկ խիստ են սիրում ձեզ, Մաեփան Գրիգորիչ, մի գլուխ ձեզ վրայ են խօսում։

—Շատ ուրախ եմ,

—Այդ ինչու չէք ուրախ լինել, նրա նման աղջիկն, որ ինձ վրայ խօսի, ես էլ ուրախութենից կըպայթեմ։ Է՛հ, յոյս ունեմ, որ բանը դլուխ կըգայ, դուք միամիտ կացէք...

Ռոստամեանը, վախենալով, թէ մի դուցէ այրին իսկապէս մոռացել է որ և է ակնարկութիւն անել հարևանների մօտ, կամ կարելի է արդէն արել է, շտապեց խնդրել, որ նա թողնի իւր անտեղի միջամտութիւնն այն բանում, որի մասին ինքը չի մտածել և չի մտածում։

—Կատակ եմ անում, որդի,—արդարացաւ այրին,—ես խօսք երբեսյն չեմ, որ իմ դլխու բաներ սարքեմ։ Է՛հ, դուք դիտէք։ Բայց մի բան խնդրեմ, կըկատարէք։

—Հրամայեցէք։

—Այս երեկոյ նրանք հայր ու աղջիկ պիտի գան իմ մօտ. ես եմ համեցէք արել. դուք էլ եկէք, Մաեփան Գրիգորիչ, էհ կըխօսէք դէսից-դէնից։ Պետրէին կուղարկեմ, որ Կատոյին էլ հրաւիրի։ Կըգաք։

—Կըգամ,—համաձայնվեց Ռոստամեանը։

Այրի Նաստասիան մի ժամանակ շատ սիրում էր հիւրեր ընդունել և հիւր դնալ։ Ամուսնութեան առաջին տարիներում հազիւ անցնում էր մի օր, որ նա միայնակ մնար։ Քանի երիտասարդ էր, նա իւր ուրախ բնաւորութեամբ դդում էր ծանօթներին և բարեկամներին կատարութիւն։ Բայց երբ դարձաւ հարսնացու դառեր մայր, աշխատեց իւր ծանօթների շրջանն աւելի ընդարձակել, յանուն իւր միակ Կատոյի բաղդատրութեան։ Նրա ամուսինը միջակ ատիճանի պաշտօնեայ էր, ուստի նրա շրջանը բաղկացած էր պաշտօնեաների և մեծ մասամբ օտարազգի պաշտօնեաների ընտանիքներից։ Ինքն այրին աշխատում էր յարաբերութիւն ունենալ քաղաքի և՛ փողատէր դասակարդի հետ, դարձեալ յանուն իւր միակ Կատոյի բաղդատրութեան։ Եւ, պէտք է ասել, նա մասամբ կարողանում էր գրաւել իւր տան վրայ շատերի ուշադրութիւնը։ Պատճառը նրա բարեհամբոյր բնաւորութիւնն էր և մի փոքր էր արտաքին արժանաւորութիւններըը։ Կար ժամանակ, որ Նաստասիա Պետրոսեան կարելի էր դեղեցկուհի համարել։ Նոյն իսկ վերջին ժամանակ, չընայելով, որ մի կողմից ամուսնու և անդրանիկ որդու մահը, միւս կողմից ժամանակը—միանդամայն թառամեցրել էին նրա դեղեցկութիւնը—նրա բարձր հասակը, առողջ կազմուածքը, վառվռուն աչքերը, քաղաքավարի շարժուածքն և խօսելու բարեկիրթ ձևերը բաւական բարձր էին պահում նրան իւր հասակակիցների շրջանում։

Աղջկայ բաղդը մի կերպ կարդաւորելուց յետոյ, նա այլ ևս «պիկնիկներ» չէր սարքում, բայց սիրում էր երբեմն այցելել իւր ազդականներին և բարեկամներին։ Տարիութենից նա վերջին տարիները սկսեց խառնվել ուրիշների ամուսնական հարցերում—պատկել, նշանել։ Եւ երբեմն այսպիսի դէպքերում նա կա-

տարում էր դրական դեր, դրդված անկեղծ և անշահ փառասիրութենից—մի փառասիրութիւն, որ յատուկ է այրենների և ամուսնացեալ կանանց մեծամասնութեան։ Միացնել իւր երիտասարդ կենդոլի վիճակին որ և է մի օրիորդի հետ—նա վաղուց էր մտադիր։ Շատ մայրեր այս մասին նրան բացորոշ ակնարկութիւններ էին անում։ Բայց Ռոստամեանի յամառ մենասիրութիւնը բոլորովին զինաթափ էր անում այրի Նատալիա Պետրոզիևային։ Այս պատճառով, ճարահատված, նա հետաքրքրվող և անհամբեր մայրերին պատասխանում էր,

—Իմ կենդոլն ուզում է, որ վարդապետ օծվի. ձեռք վերցրէք նրանից, քա։

III

Նատալիա Պետրոզիևայի հիւրասենեակը լուսաւորված էր մի բարձր և գեղեցիկ կանթեղով։ Այդ կանթեղն այրին վառում էր միմիայն այն երեկոները, երբ հիւրեր պիտի ընդունէր։

Ռոստամեանը նստած էր սենեակի անկիւնում դրած գահաւորակի մի ծայրում և ձեռներով խաղում էր սեղանի դոյնզդոյն ասեղնագործ սփռոցի ծայրերի հետ։ Գահաւորակի միւս ծայրում նստած էր այրին և հիւսում էր իւր անբաժան գուլպան։ Դէմ ու դէմ, փափուկ բազկաթոռի մէջ խրված էր մի փոքրահասակ, սև աչքունքով, բաւական գեղեցիկ երիտասարդ կին։ Դա այրեի դուստրն էր—Կատոն։ Տիկինը հագած էր նուրբ հիւսված, ալիքաւոր ժապաւէններով զարդարված մետաքսեայ հագուստ։ Կարելի էր կարծել, որ

նա պճնվել է մի փառաւոր հանդիսի համար, եթէ նրա մինչև արմունկները հասնող երկայնավիզ կինամոնագոյն ձեռնոցներն աւելի թարմ լինէին։ Նա պատմում էր իւր մօրը կանացի հագուստի ինչ-որ նոր ձևերի մասին, որ Թիֆլիսում սոացվել էին գարնան համար։

Նախասենեակից լսվեց Մինաս Կլիմկիչի ձայնը։ Այրին շտապեց հիւրերին դիմաւորելու։

Ներս մտաւ նախ աղջիկն և ապա, ծանր քայլերով, հայրը։ Վաւաշաէն առանց գլխարկի էր։ Պարզ դոյնի փայլուն, խիտ, ծայրերը փոքր ինչ խոպոպ մազերը, մի հասարակ մետաղեայ հերակալով ժողովված, հանգչում էին կանոնակաղմ գլխի վրայ։ Հեռակից ազատ մնացած մազերի կարճ մասերը, իբրև գեղեցիկ ժապաւէն, զարդարում էին նրա ճակատի վերին կողմը։ Նրա մէջքը բարակ էր և սեղմված կօրսէի մէջ, թիկունքն ու կուրծքը բաւական զարգացած։ Արդարև, ինչպէս ասաց Նատալիա Պետրովնան, նա աւելի համակրելի էր, քան գեղեցիկ։ Ամբողջ նրա կազմվածքից բուրում էր մի տեսակ հանգիստ հպարտութիւն։

Նատալիան հիւրերին ընդունեց անչափ քաղաքավարութեամբ, ինչպէս բաւական փորձված և աշխարհ տեսած կին։ Նա բոլոր իւր շարժուձևերով և դէմքի արտայայտութեամբ, կարծես, ասում էր.

«Ուրախ եմ ընդունելու ձեզ իմ տանը, բայց իմացէք, որ աւելի եմ ձեզանից աւելի նշանաւոր հիւրեր ընդունել»։

Ռոստամեանն, տեսնելով կանգնելիս, չխոթվեց, դիպաւ սեղանին և քիչ էր մնում, որ կանթեղն ընկնէր սեղանից։ Կատոն տեղից չշարժվեց, մինչև որ տատիկը դուրս։

հիւրերը իրանք կը ծառեներին։

—Սա իմ աղջիկն է, մադամ Բեզիրգանովա,— ասաց այրին, Կաոյին ներկայացնելով իւր հիւրերին։

Երբ ամենքը նստեցին, Ռոստամեանը տեղատուվեց Մինաս Կիրիլիչի ձախ կողմում, իսկ աջ կողմում— Վառվառէն։ Այրին սկսեց զբաղեցնել իւր հիւրերին ամենահասարակ խօսակցութեամբ։ Սովորական սառնութիւնը չուտով անցաւ, և հիւրերը փոքր առ փոքր ընտելացան իրարու։ Խօսում էին մեծ մասամբ Նաստիա Պետրովնան և Մինաս Կիրիլիչը։ Առաջինը, հիացած Վառվառէի չնորհալի կերպարանքով, աշխատում էր խօսակցութեամբ զբաղեցնել նրան էլ, որ, կարծես, խօսելու որամադրութիւն չունէր։

—Ինչ դեղեցիկ ձայն ունիք, Վարվարա Մինաեվնա,—ասաց նա, յոնքերը վեր քաշելով և «Թատակրաւի» տակից դուրս ցցված մազերը յետ ժողովելով։

—Մի քիչ դուք լաւ էք Վարիայի երգեցողութիւնը,—հարցրեց Մինաս Կիրիլիչը։

—Ինչպէս չէ, ինչպէս չէ։ Երէկ Վարվարա Մինաեվնան ասաննե երգում էր, ես այստեղից ականջ էի դնում։ Շատ սիրուն ձայն ունիք, շատ, դարձաւ այրին Վառվառէին։

—Մի քիչ դուք երգել դիտէք,—մէջ մտաւ Կաոն, որ մինչև այդ ժամանակ լուռ էր և միայն նայում էր Վառվառէին։

—Երբեմն ասանն ինձ համար զբաղում եմ,—պատասխանեց Վառվառէն համեստութեամբ։

—Ոչ միայն երգում է, Կաոիչա, դու պիտի լսես, թէ ինչպէս խաղում է դաշնամուրի վրայ,—խօսեց դարձեալ այրին ոգևորված.—ես հիացած եմ...

—Այժմ ամենքն էլ երգում են ու խաղում,—պատասխանեց Կաոն, հեգնօրէն ժպտալով.—Թիֆլիսն է բժշկական քաղաք է...

—Դիտէք, Վարվարա Մինաեվնա,—ընդհատեց այրին իւր աղջկայ նախանձոտ նկատողութիւնը,—իմ Կաոն էլ խիստ լաւ երգում է ու խաղում. մի օր կը խնդրենք ձեր երկուսին, որ մեզ համար միասին երգէք։ Լաւ չէ՞մ ասում, Մինաս Կիրիլիչ։

—Կեցցէք, Նաստասիա Պետրովնա,—գոչեց ծերուկն ուրախութեամբ,—շատ լաւ էք ասում։ Մի օր ամենքդ եկէք մեր տուն հիւր, մենք Կատերինա Սիմոնովնային և Վարիային կը տաիսենք, որ երգեն։

—Ես խաղում եմ ու երգում ինքս ինձ համար, ուրիշներին իմ ձայնով զարմացնելու չնորհք չունիմ,—ասաց Կաոն կծու ձայնով։

Այրին գաղտնի յանդիմանութեամբ նայեց աղջկայ երեսին և դլուխը շարժեց։

Կաոն բնաւորութեամբ, ինչպէս և կազմուածքով, իւր մօր հակապատակերն էր։ Նախանձամիտ, կրքոտ, բծախնդիր տիկինը չէր կարողանում երիտասարդ կանանց հետ բարեկամանալ, մանաւանդ դեղեցիկ կանանց հետ։ Վառվառէն հէնց առաջին վայրկեանից դրգռեց նրա նախանձը, մանաւանդ իւր հասակով, որովհետև այս այն առաւելութիւնն էր, որ սիրում էր Կաոն և որից զուրկ էր։ Այդքանը միայն բաւական էր Կաոյի սիրտը թունաւորելու համար։ Եւ ահա այդ նորեկ սիրուն կինը, ասում են, դեռ ևս «հիանալի» երդելու և խաղալու ձիրք էլ ունի։ Խայթված ինքնասիրութեամբ նա աշխատում էր Վառվառէի մէջ գտնել որևէ մի արատաբին թերութիւն, և երբ մի խաչոր բան չը-

գոտւ, սկսեց ինքն իրան հաւատացնել, թէ Վառվառէն, անկասկած, արհեստական մէջոցներ է գործադրում թէ իրան այդպէս կանոնաւորելու և թէ հասակը բարձրացնելու համար։ Երեսի դոյնը շատ էլ պարզ չէ և եթէ թարմ է, ոմ կարող է հաստատել, որ երիտասարդ լինելուցն է։ Կանանց գեղեցկացնելու համար արտասահմանում, ասում են, հազար տեսակ արհեստական մէջոցներ կան. դա էլ այնտեղ սովորած կըլինի։ Կատօն լսել է, որ վերջին ժամանակ Փարիզում մի բժիշկ չորս հարիւր ֆրանկով կանանց ծնօտի կողմից մի քիչ ծակում է և կաշուի տակը ինչ-որ դեղ է սրսկում։ Այդ դեղը յաւիտեան պահպանում է երեսի թարմութիւնը։ Շատ հաւանական է, որ Վառվառէի մազերն էլ կեղծ են. պէտք է մօտիկից մի լաւ զննել։ Գալով երգելուն և նուագելուն, ոմ գիտէ, շատ կասկածելի է, որ նա լաւ ձայն ունենայ. ինչ է հասկանում Նատալիա Պետրովնան, որ կարողանայ ճիշտ գնահատել «դեղարուեստը»։

Կատօն այս խորհրդածութիւնով չըբաւականացաւ։ Նրա դեղեցկութիւնը նեժացել էր փոքրիկ չըջանում, երեկոն թունաւորված էր, ուստի պէտք ղգայ մի փոքր վրէժխնդիր լինելու։ Նրա փոքրիկ ու սուր աչքերից խոյս չըտուեց, որ Ռոստամեանն երբեմն մոիկ է անում այդ, «իբր թէ» սիրուն, նորելի վրայ, իսկ դեպի իր կողմը բոլորովին ուշադրութիւն չի դարձնում։ Ո՞վ է այդ կինը, այդ պատուաւ մարդու աղջիկն է իսկապէս, թէ... Վերջապէս, շատ էլ երբեմն մաքուր մարդիկ չեն լինում «Թիֆլիս եկողները»։

Նատալիա Պետրովնան գնաց մեծ սենեակ և, մի քանի վայրկեան անցած, մատուցարանի վրայ ներբերեց չոր մրգեղէններ, մի քանի փոքրիկ և մեծ բաժակներ, մի շիշ գինի և մի շիշ կոսխա, որով, ամուսնու կենդանութեան ժամանակից, նա սովոր էր հիւրասիրել ընտիր հիւրերին։ Առաջին բաժակը քաղցր խմիչքից այրին առաջարկեց Վառվառէին։ Վերջինը դրա կանապէս հրաժարվեց խմելուց։

—Վարիան երբէք ոչ մի խմիչք չի խմել մինչև այսօր,—պաշտպանեց Ծերտնին իր աղջկան այրիի թանձանքի դէմ։

«Խիստ է կոտրատվում»,—ասաց իր մտքում Կատօն և կարմիր հեղուկը համարձակ մօտեցրեց շըրթունքներին։

—Իսկ դո՞ւք,—դիմեց այրին Ռոստամեանին, որ նոյնպէս հրաժարվում էր խմելուց,—լաւ, երիտասարդ մարդ էք, վերցրէք, ամօթ է...

—Մի բաժակը մեզ խեղդից չի հանիլ,—ասաց Ծերտնին և, իր բաժակը զարկելով Ռոստամեանի բաժակին, աւելացրեց.—խմենք աղնիւ և բարի մարդկանց կենացն որ երկրացի որ են նրանք։

Շնորհով Նատալիա Պետրովնայի յաջող և պարզ վարվողութեան, հիւրերը սկսեցին զուարճանալ—նոյն իսկ Կատօն, որ, դէթ ակամայ ուրախութեամբ և ծիծաղով, ուզում էր նսեմացնել Վառվառէին։

Ամենից աւելի խօսում էր Մինաս Կիրիլիչը։ Խօսում էր նա ոգևորված, անցնելով մի առարկայից դէպի միւսը, քաղաքային հարցից—դէպի քաղաքականը, մանաւորից—հասարակականը։ Նա միջոց չէր տալիս Ռոստամեանին իր մի հարցին պատասխանելու, առաջարկում էր միւսն և բոլորին պատասխանում էր ինքը։ Նրա խօսակցութենից երևում էր, որ, բացի օտար

երկրներից, նա ճանապարհորդել է և՛ Գովկասում, տեսել է շատ քաղաքներ։ Խօսում էր Անդրկովկասեան ազգերի մասին։ Վայրենիները են բոլորը, Մինաս Կիրեկչի կարծիքով, նոզայներից և Թունգուզներից հեռու չեն գնացել իրանց քաղաքակրթութեամբ։ Առանձնապէս նա պախարակում էր իւր համազգիներին. թշնամի էր մանաւանդ հոգևորականութեան։

—Բացի երկուսից,—դարձաւ նա Ռոստամեանին, որը թէև նայում էր Ներսունու երեսին, բայց լսողութիւնը լարած էր դէպի Վառվառէի, այրիի և Կաոյի առանձին խոսակցութիւնը,—բացի երկուսից։

Մինաս Կիրեկչիը մի քանի օրինակներ ևս բերեց Հաշտարխանի, Մոզդոկի, Մոսկվայի, Պետերբուրգի քահանաների կեանքից. տգէտ են, սատրների առջև իրանց չեն կարողանում լաւ ցոյց տալ։ Յետոյ նա անցաւ վաճառականներին, վատաբերով ապացուցեց նրանց խարդախութիւնները։ Յետոյ անցաւ այլ և այլ դասակարգերին...

Ի վերջոյ, նա իւր դատողութիւնները կնքեց հետևեալ եղրակացութեամբ.

—Ես շատ երկրներ եմ տեսել, շատ ազգերի հետ եմ գործ ունեցել, բայց հայերի պէս վատ ժողովուրդ ոչ մի տեղ չեմ տեսել։ Հնչը, հնչն էք ասում, օհ, օհ, լսեցէք ասեմ. նա չարախօս է—այս մէկ, նախանձոտ է—այս երկու, բամբասող է... ооо ... բամբասելու մասին էլ մի խօսէք։ Ոչ ոչ, պարոն Ռոստամեան, դուք էք հակառակում, ես շատ եմ փորձել, շատ։

Այդ միջոցին Վառվառէն նստած էր իւր հօր դէմ ու դէմ։ Ռոստամեանը մի կողմից լսում էր Ներսունեան, միւս կողմից, մոխիկ էր անում դէպի աղջիկը։

Նա նկատեց, որ Ներսունին վերջին թունաւոր խօսքերն արտասանելիս, Վառվառէն դողդողանքով նայեց հօր երեսին։ Կարծես, նա լուռ նշանով խնդրում էր Ներսունուն, որ չշարունակի։ Երբ երիտասարդ կինը ժպտում էր, նրա ժպիտը թուում էր ակամայ, բռնադատեալ։ Երբ լռում էր, նրա պայծառ ճակատը մրթնում էր մի մռայլ գծով և բերանի անկիւններում երևում էին բարակ խորշեր։

—Սուտ եմ ասում, Նատալիա Պետրովնա,—դարձաւ Մինաս Կիրեկչիը այրուին, տեսնելով, որ Ռոստամեանն իւր յայտնած մտքերին բացարձակ հաւանութիւն չի տալիս։

—Ճշմարիտ էք ասում, Մինաս Կիրեկչի, իմ աչքը, շատ ճշմարիտ էք ասում,—վաւերացրեց Նատալիա Պետրովնան, որ աշխատում էր ոչ մի կերպ չդիմակառակել ոգևորված Ներսունուն։

Վերջինն աւելի խրախուսվեց և սկսեց խստութեամբ մտրակել իւր ազգակիցների վատ յատկութիւնները։ Այս անգամ նա օրինակ բերեց արտասահմանը։ Այնտեղ մարդուն սիրում են, յարգում են, իսկ մեզանում միմեանց պատիւը ոտքի տակ են ձգում, հանգստութիւնը խլում են, աշխատում են անունը ցեխի հետ հաւասարել։ Թող Ռոստամեանը Մինաս Կիրեկչի մօտ չըպարծենայ իւր փորձառութեամբ։ Նա շատ և շատ երիտասարդ է, դեռ չի ճաշակել կեանքի դառնութիւնները։

—Իսկ ես շատ բաներ եմ տեսել, շատ եմ չարչարվել և այժմ էս չարչարվում եմ հայերի բամբասանքից,—կրկնեց մի քանի անգամ վրդովված Ներսունեան, կարծես, մոռանալով իւր շրջապատողներին։

Աղջիկը, հոր ոգևորութենից յուզված, աշխատում էր որսալ նրա հայեացքը։ Այն ինչ՝ հայրն ակնյայտ խոյս էր տալիս նրա աչքերից, գլխաւորապէս իւր խօսքը դարձնելով Նաստալիա Պետրովնային կամ Ռոստամ Ռանինին։

Ցանկարծ Մինաս Կիրիլիչը լռեց։ Հայր ու աղջիկ մի քանի վայրկեան նայեցին միմեանց երեսին— աղջիկը յանդիմանութեամբ, հայրը մեղանչած մարդու դէմքով։ Ոչ ոք չըհասկացաւ այս լուռ նշանախօսութեան իմաստը։ Բոպէն խորհրդաւոր էր, ամենքը լուռ էին. միայն Նաստալիա Պետրովնան անդադար կրկնում էր.

—Ճշմարիտ էք խօսում, Մինաս Կիրիլիչ։

Բայց Մինաս Կիրիլիչն այլ ևս չէր համարձակվում շարունակել։ Նա լուռ ու տխուր ծխում էր, իւր ալեխառն ընչացքի միջով բաց թողնելով դէպի վեր թանձր ծխի մոխրագոյն սիւնակները, աչքերը յառած սեղանի մի կէտին։

Այրին չուառով ընդհատեց լռութիւնը, պարզաժուռթեամբ խօսակցութիւնը դարձնելով այլ առարկաների վրայ։ Նա սկսեց պատմել իւր նախկին կենդանիների մասին զանազան հետաքրքրական եղելութիւններ։ Խօսելով առաջուն լեզուով վայր ի վերոյ, բայց խիստ բնական եղանակով, նա պատմեց մի քանի զուարճալի դէպքեր, որ և ամենքին ախորժում էին ծիծաղել։ Ի միջի այլոց, նա չըխնայեց և՛ Ռոստամեանին, ծաղրելով նրա մենակեցութիւնը և տարօրինակ սովորութիւնները։ Վառվառէն լսում էր հետաքրքրութեամբ, առիթ առիթ ժպտալով Ռոստամեանի երեսին։ Մի անգամ նա ծիծաղեց, երբ այրին անեկդո-

տի բովանդակութեամբ պատմում էր, թէ ինչպէս «ճղնաւորը» մի երեկոյ հրաւիրված է լինում իւր խնամեաւորի մօտ։

—Երիկունը լուացվեց, հագնվեց, ևս էլ ասացի, էհ, վառք Աստուծոյ, մի անգամ գոնէ վճռեց մի տեղ գնալ։ Դուրս եկաւ, գնաց. տասը րոպէ չանցած, մէկ էլ տեսնում եմ նա եկաւ։ «Ի՞նչ կայ, Սահակ Գրիգորիչ»,—հարցնում եմ։ «Ոչինչ, ասում է, թաշկինակը դրեց գրպանը, դուրս եկաւ. պատշգամբ, էլի ներս մտաւ։ «Չը՞մ,—հարցնում եմ։ «Վաղ է, ասում է, Նաստալիա Պետրովնա, ամօթ է, որ այսպէս վաղ գնամ»։ Շորերը հագին այնքան նստեց, հետս խօսեց, խօսեց, ուշացաւ ու յետոյ ասաց. «Հիմա էլ ուշացայ, ամօթ է, որ այսպէս ուշ գնամ»։ Զըզնաց, ինչ էք ասում, չըզնաց։ Այս տեսակ մարդ տեսել էք աշխարհում, Մինաս Կիրիլիչ։ Հիմայ պատմեմ, թէ ուրիշ տեղեր տարեկան քանի անգամ է գնում... մի կամ երկու անգամ թատրոն, մի երկու անգամ էլ կլուբ, յետոյ մեծ պասը էլի սկսվում է... Այ, ինչ տեսակ մարդ է մեր պարոն Ռոստամեանը,—աւելացրեց այրին, բարեհամբաւ ծիծաղելով իւր երիտասարդ կենդողի երեսին։

Ռոստամեանը նեղսրտամտաբար ժպտում էր նրա կատակների դէմ, թոյլ տալով ասել ինչ-որ ուզում է։

Արդէն բաւական ուշ էր։ Վառվառէն հօրը դէմով նշան արաւ, թէ ժամանակ է գնալու։ Մերսունին, որի թախծութիւնն արդէն անցել էր, դեռ տրամադրված էր երկար վայելելու Նաստալիա Պետրովնայի զուարթ հիւրասիրութիւնը։ Բան երևոյթին, նա զուարճութիւն

էր զղում այս վոքրիկ չրջանում։ Այն ինչ՝ վառվառէն պնդեց, թէ ժամանակ է գնալու և ինքը վերկացաւ տեղից։ Այրին, ցաւ յայտնելով, որ թանդագին հիւրերն այդպէս շտապում են, ճանապարհ դրեց մինչև պատշգամբ և հրաւիրեց, որ ամեն երեկոյ շնորհ բերին։

—Հըմ, ճոց էք,—գարձաւ նա Յոստամեանին, հիւրերը դնալուց յետոյ։—Հաւանեցիք վարվարա Միհաեվնային։

—Ոչ միայն հաւանել է, երդվում եմ, որ մինչև անգամ սիրահարվել է,—խօսեց Կատոն ծաղրական երանակով։—Ախ երիտասարդներ, երիտասարդներ,—աւելացրեց նա, գլուխն ալ ու ձախ շարժելով,—միթէ կարելի է այդպէս շուտ յափշտակվել։

—Ո՞վ ասաց ձեզ, թէ յափշտակվեցի,—դոչեց Յոստամեանը արտաուքեամբ։

—Լա՛ւ, լաւ, իզուր մի թագցնէք։ Ամբողջ ժամանակ ես աչք չէի հեռացնում ձեզանից։ Ճշմարիտն ասած, ժամա, ես չըհաւանեցի քո այդ գոված աղջկան։ Ինչ է, կարծես, թմրած լինի, կենդանութեան նշան չկայ մէջը, մէկ էլ որ շատ գոռոզն է երեւում։ Ես առելով ատում եմ ինքնահաւան գոռոզներին։

—Ի՞նչ, վարվարա Միհաեվնան է գոռոզ,—դոչեց այրին զայրացած,—երեսիդ խաչակնքիր, Կատիշա, նրա պէս հասարակ, խոնարհ և սիրուն աղջիկ մեր Թիֆլիսում շատ քիչ կայ, չկայ էլ իսկի...

—Թիֆլիսում չկա՞յ, հա հա հա,—ծիծաղեց Կատոն ակամայ,—Թիֆլիսում չկա՞յ։ Այ հազարապիսա թոռչուն։ Այդ դու և Սահակ Գրիգորիչն էք հիացել, տեսնենք մի ուրիշ տզամարդ էլ կըհիանայ նրանով։ Ախ՛ սա որ չեմ լսել, թէ ինչպէս է երգում։ Այնքան գո-

վեցիք, ժամա, որ հնդուհաւի պէս փքվեց։

—Աստուծով, կըլսես և ինձանից աւելի կըհաւանես, Կատիշկա։

—Չեմ ուզում. իմ ականջներն երկաթից չեն, որ ամեն մի կռոյի ձայնը լսեմ։

—Կռո՞ց,—կրկնեց Յոստամեանն անդիտակցաբար։

—Այո, հէնց կռո. ովքեր են, ժամա, ինչ մարդիկ են, իմանում ես, որ այդ գատառականներին այդքան գովում ու երկինք ես բարձրացնում։

Յոստամեանը, տեսնելով, որ գոռոզ Կատոն տրամադրված է աւելի հեռու գնալ իր վատաբանութեան մէջ, շտապեց ազատվել նրանից։ Վիրաւորական էր նրա համար լսել այդ նախանձամիտ կնոջ անարդար պախարակին այն էակին, որը նրա վրայ թողել էր շատ խոր տպաւորութիւն։

—Մամա, ինձ դո՛ւ պիտի ուղեկցես մինչև տուն,—ասաց Կատոն, մի կոմշաւիկ հայեացք ձգելով Յոստամեանի վրայ, երբ վերջինը մօտեցաւ, որ ձեռ տայ նրան։

—Մնացիր այստեղ, խօմ լաւ էր Մարկիչն այս երեկոյ չի գալու Բաթումից։ Թէ չէ, ուզում եմ որ անպատճառ գնաս, ես ու Պետրէն կըգանք քեզ հետ կառքով։

Յոստամեանն, իբր չըհասկանալով Կատոյի ակնարկութիւնը, դուրս գնաց։

—Իսկ և իսկ կինտո է կենդանի, մամա,—գոչեց Կատոն, տատիկ վիրաւորված։—Ինչ անքաղաքավարութիւն, ինժիներ է... fi donc!... Ես երբէք չէի համաձայնվիլ նրա հետ գնալու, բայց նա տղամարդ է, պարտաւոր էր առաջարկել ինձ իւր ուղեկցութիւնը։

Երկար ժամանակ Ռոստամեանն այդ գիշեր չը-կարողացաւ քնել։ Սեղանի վրայ դրած կանթեղի լոյ-սը տարածւում էր միմիայն ցիր ու ցան թափված ձեռագրների վրայ. լուսամուտը խանդարում էր լու-սաւորելու սենեակի միւս անկիւնները, բարձր ա-ռաստաղն և մեխակագոյն պաստառով ծածկված պա-տերը։ Ռոստամեանը հաւաքեց թղթերը, մի կողմ դար-սեց. պարապելու ցանկութիւն չէր զգում, և բաւա-կան ուշ էր գործ սկսելու համար։ Սակայ սակայ նա մօտենում էր պատուհաններին և նայում դէպի դուրս, թէ դէպի փողոց և թէ դէպի գաւիթ։ Շողու գոլոր-չիներով ծածկված ապակիների միջով նրա աչքերը դրսում նշմարում էին միայն մի թանձր խաւար։ Եւ այդ անընդմէջ խաւարի մէջ անգամ նրա աչքերի առ-ջևից չէր հեռանում մի լուսաւոր աստղ—վառվռուն թանձրալի պատկերը։

Ինչու՞ նա տխուր է, ինչ մի դառն վիշտ է դրոշ-մել նրա ճակատի վրայ այդ մռայլ սուտերը։ Ո՛չ, ինչ ուզում է լինի, այդ օրիորդը մի հասարակ կին չէ. նա մի տարօրինակ էակ է, որ բնաւ չի նմանվում միւս կանանց։ Կայ նրա մէջ ինչ-որ մի անհասկանալի բան, որ հասարակ մահկանացուի տեսողութեամբ ըմբռնել անկարելի է։ Որքան վեհութիւն, ազնուութիւն և, միև-նոյն ժամանակ, դրաւիչ մի հրապոյր են արտայայ-տում նրա ձայնը, շարժուածքը, նրա ամբողջ էութիւ-նը, անգամ նրա խորհրդաւոր լռութիւնը։ Եւ որքան բարի և մեղմ ապաստարանութիւն է թողնում նա մար-դու վրայ, չընայելով իր արտաքին սառնութեանը. եր-բեք մի կնոջ ներկայութեամբ Ռոստամեանն այնքան հոգեկան թեթևութիւն չի զգացել։

—Բայց այս ինչ է, ինչու՞ չեմ կարողանում քնել, —ասաց նա, ընդհատելով իւր մտքերը,—կարծես, թէ սիրահարված պատանի եմ,—աւելացրեց նա, աշխա-տելով մտքում ծիծաղել իւր համեստութեան վրայ։

Իրաւ, ինչու՞ նա այսքան հետաքրքրվում է այդ երիտասարդ կնոջով. միթէ, արդարև, նա, որի սիրտը մինչև այժմ չի բաբախել կնոջ համար, կարող է դուռ-տալ այսպէս շուտ, դրեթէ յանկարծակի, դրեթէ հե-տը չխօսած։ «Հապա, ինչու չէ. ինչ զարմանալի բան կըլինէր, եթէ ես սիրահարվէի անգամ»։—«Սիրահար-վե՞լ... կրկնեց Ռոստամեանը, հեգնութեամբ ժպտա-լով... ո՛չ, ուշ է... անցել է ժամանակը։ Անցել է. մի-թէ երեսուն տարին տղամարդի համար կատարեալ մեռելութիւն է նշանակում»։

Եւ այս հարցերը Ռոստամեանի մտքում դարձ-նելիս՝ բնականաբար մի հայեացք ձգեց դէպի իւր անցեալը։

Ուշ գիշերը և հոգեկան տարօրինակ յուզումը մե-նակեցի առջև այդ—մինչև այժմ չի քննված—անցեա-լը պատկերացրին տխուր, դառարկ և մռայլ։ Նրա մանկութիւնն անցել է չքաւորութեան լծի ներքոյ, պատանեկութիւնը ծնողների վաղահաս մահուան խո-րին դառնութեան մէջ։ Իսկ յետոյ... Ուսանողութեան սովատանջ օրեր, գիշեր ու ցերեկ հոգս մի փոր հացի համար, մտաւոր աշխատանքի ներքոյ ճնշված, հեռու ուսանողների ապրելի չրջաններից, հեռու հասարա-կութենից, հեռու մանաւանդ կանանց սեռից, կապ-ված միմիայն դրքերի և դասախօսութիւնների հետ։ Ձեռո՛յ... Մի թեթև, կարճատև յեղաշրջումն, երբ նա ուսանողութենից անցնում էր բուն կեանքի ասպարէզը։

Այնուհետև մի տարի ու կէս անխոնջ ուսուցչի չորս ցամաք պարապմունք, ուղեղները մանկավարժական կոնոններով ցանցոտված վարժապետների տհմանափակ չրջան։ Այնուհետև պաշտօնական մի զբաղմունք... Եւ ընդոլը միատեսակ, ձանձրալի տարիների մի շարք, երբ այս օրը նման է երէկուան, վաղն այսօրուան։

Ինչո՞ւ մինչև այժմ այս հասարակ խորհրդակցութիւնները չէին պաշարում նրա միտքը։ Ինչո՞ւ այս յամր ինքնատպանութեան մէջ մի օր, մի ժամ նա չըզգաց, թէ, արդարև, Նատալիա Պետրովնայի փիլիսոփայութիւնը ճիշտ է. «մարդ մի անգամ է ծնվում, ոչ թէ երկու անգամ»։ Ինչո՞ւ նա գոհ էր իւր աշխատասէր կեանքի խաբուսիկ օգտաւէտութեամբ։

Օգտաւէտութի՜ւն... Ո՞ւմի համար է, արդեօք, օգտաւէտ նրա կեանքը, ինչո՞ւ համար է նա տքնում գիշեր ու ցերեկ, ո՞ւմ ինչ օգուտ նրա պաշտօնական չոր ու ցամաք չարաչարութիւններից։ Այն ինչ՝ նա որքան արիւն է փչացրել և տակաւին փչացնում է այդ բոլորի վրայ։

Անկասկած, նա ուրիշ ոչինչ է, եթէ ոչ ճակատագրի մի խաղալիք, բնութեան կատակներից մէկն, ուրիշներին զուարճացնելու համար ստեղծված մի մեքենայ։ Դարձեալ ոչինչ, եթէ այդ մեքենան գործէր մի յարատև փառքի համար, մի փառք, որ նրա անունը լսելի դարձնէր գէթ կենդանութեան միջոցին... Բայց նա մի հասարակ մշակ է և ուրիշ ոչինչ...

—Այո՛, այլևս ուշ է այս մասին մտածել,—ասաց նա լսելի ձայնով, կանթեղի առջև կանգնած։

Սակայն ինչո՞ւ յուսահատվել։ Եթէ, իրաւ, անցել է նրա կեանքի պահը, ապա ինչո՞ւ այս դգացմունքները

խաւար դիշերուայ մէջ խորտակում են նրա քունը։ Ոչ, տակաւին վաղ է յուսահատվել։ Տակաւին ժամանակ կայ անձնատուր լինելու կեանքի երջանիկ հոսանքին։ Թող նա սկսի իւր հասակի այն չրջանում, երբ ուրիշները աւարտում են, փոյթ չէ, միայն թէ կարողանայ սկսել։ Թող նա հանրութեան մէջ դառնայ մի աննշան հիւլէ, թող կեանքի փոթորկի մէջ մի փոքրիկ կոհակի դեր կատարի, միայն թէ իմանայ, որ ապրում է, շնչում է, զգում է և ոչ թէրում, որպէս մի սառնարիւն որդ ծառի խոնաւ արմատի մէջ...

IV

Հետևեալ օրը Ռոստամեանը, թէև խմելուց յետոյ, իւր սովորութեամբ, անմիջապէս նստեց սեղանի մօտ, որ պարապի։ Առաջին ժամը նա աշխատեց սովորական եռանդով։ Նա թերթում էր աչքն ու այն ձեռագիրը, ժողովում էր իւր առջև դրած փոքրիկ թերթիկներն, ուր մանր տառերով գրված էին ինչ-ինչ հաշիւներ, դումարում էր համարակալի վրայ և դրում ձեռքի տակ դրած հաստ ձեռագրի մէջ։ Մի խօսքով, նա շտապում էր առաջ տանել իրան յանձնված աշխատութիւնը, որ պիտի աւարտէր մինչև յաջորդ ամսի վերջը։ Բայց անցաւ առաջին ժամը. նա զգաց մի անսովոր յոգնածութիւն, գլուխը շպրտեց մի կողմ, ծխախոտ վառեց և սկսեց յետ ու առաջ շրջել։ Նա կրկին կորցրեց իւր մտքերի թելը. նրա գլխում դարձեալ սկսին նախընթաց դիշերուայ յիշողութիւնները և, փոխանակ գործի, անձնատուր եղաւ այդ յիշողութիւններին։

Դարձեալ Վառվառէի ախուր և լուրջ կերպարանքը կենդանացաւ նրա առջև և դարձեալ նոյն թախծալի աչքերը սկսեցին նայել նրա վրայ։

—Ոչ, այս աննկարելի է,—ասաց նա ինքն իրան,—ամբողջ դիշեր մտածել մի օրիորդի մասին, մինչ սրանից աւելի թեթեւամիտ բան կարող է լինել։

Այո, մի օրիորդի մասին, որն այժմ գտնվում է նոյն տան մէջ, ուր բնակվում է Ռոստամեանը, մի քանի քայլ հեռու, ահա, այն դիմացի սենեակներում։ Հետաքրքրելի է իմանալ, զարմանո՞ք է նա, թէ ոչ։ Եւ Ռոստամեանը մինչ արաւ իր լուսամուտից դէպի դէմ ու դէմ։ Ոչ ոք չէր երևում. լուսամուտների փեղկերը դեռ փակ էին, այն ինչ՝ արդէն տասը ժամին էր։

Բայց ահա փեղկերը բացվեցին, արևի թոյլ ճառագայթները թափանցեցին նրանց սենեակները։ Ահա ծերունին, իր տնային երկայն, մոխրագոյն «խալաթով» և կարմրագոյն տաճկական «ֆէսը» գլխին։ Նա հազալով դուրս եկաւ, պատշգամբից նայեց դէպի վայր, յետոյ աջ ու ձախ և անյայտացաւ։

Վերջապէս, երևեցաւ և՛ նա, որին ուզում էր տեսնել Ռոստամեանը։ Արդէն հագնված նստած, Վառվառէն թէյ էր պատրաստում, դարձեալ ախուր, դարձեալ մռայլ։ Իսկ հայրը ժպտում է, ծիծաղում է։ Անշուշտ նա աշխատում է զուարճացնել աղջկան—անշուշտ, որովհետև հեռուից անգամ այս է արտայայտում ծերունու դէմքը։

Ռոստամեանը զղում էր, որ քաղաքավարութեան սահմանից դուրս է ուրիշների ընտանեկան տեսարանին ականատես լինել։ Բայց այս—խելքի թելադրութիւնն էր, իսկ սիրտը սոխակում էր ամօթխած երի-

տասարդին անչարժ մնալ իր լուսամուտի առջև։

Մինաս Կիրիլիչը թէյ խմեց, հագուստը փոխեց և, մի քառորդ ժամ անցած, դուրս եկաւ փողոց, իր հետ տանելով ծառային։ Աղախինը սկսեց սրբել սենեակները։

Վառվառէն դուրս եկաւ պատշգամբ, մոկ աբրեւ տերևաթափ ակացիայի ճիւղերին, դիմացի տանիքին, ներքև, վերև, յետ ու առաջ, բայց տակաւին ոչ դէմ ու դէմ—դէպի Ռոստամեանի բնակարանը։

Մինչդեռ երիտասարդը ցանկանում էր որսալ նրա հայեացքը. արդեօք, այն մի և նոյնն է, ինչ-որ նախընթաց երեկոյ, ինչ-որ երէկ ու անցեալ օրերը։ Աղախինը սենեակները սրբեց, վերջացրեց։ Վառվառէն դարձաց ներս։

Ռոստամեանը դարձեալ նստեց սեղանի մօտ։ Սակայն ահա դրիչը նրա ձեռում առաջ չի շարժվում. նրա աչքերը նայում են թղթին, իսկ միտքը թափառում է սենեակից դուրս։ Մի անգամ ևս մօտենալով լուսամտին, նա երես առ երես հանդիպեց խորհրդաւոր էակի որոնող հայեացքին։ Ո՞ւմ է որոնում, ինչ է ուզում, ծաղրո՞ւմ է, արդեօք, խելք մտնակեցին, կամենում է, արդեօք, իր կանացի քմահաճութեան զոհաբերե՞լ դարձնել, ծիծաղել նրա թուլութեան վրա։ Ո՛չ, անկարելի է, որ այդ խոհուն աչքերի և ախուր դէմքի տէր էակը կամենայ մեկին ծաղրել կամ խաղալիք դարձնել։ Նա բարձր է մարդկային այդ անվայել ղգացումներից։

Ճաշի ժամանակը մօտեցաւ. Ռոստամեանը գրեթէ ոչինչ չէր աւելացրել իր աշխատութեանը, սկսած տասը ժամից։ Պետրէն երկու անգամ նեղս մտաւ,

հրաւիրեց, բայց նա տակաւին ախորժակ չունէր։

Վաղուց Վառվառէն չէր երեւում, իսկ նա դեռ արձանացած էր իր լուսամուտ առջեւ։

—Մտեփան Գրիգորիչ, ծոմ խոմ չէք պահում այսօր,—լսեց Ռոստամեանը յանկարծ, երեսը յետ դարձրեց և կարմրեց։

—Կերակուրը պաղում է, դնանք,—հրաւիրեց Նաստալիա Պետրոսեանն։

Հակառակ սովորականին, ճաշի ժամանակ Ռոստամեանն երեք բաժակ գինի խմեց, և այս անսովոր քանակութիւնն իր ազդեցութիւնն ունեցաւ։ Նա ըսկսեց զուարճախօսել իր տանտիրուհու հետ, որով և մեծ զարմանք պատճառեց վերջինին։ Մի անգամ նա յանկարծ սկսեց բարձրաձայն ծիծաղել, նայելով կերակուրները մատուցանող ծառայի եակից։

—Հըմ, ինչ կայ,—հարցրեց Նաստալիա Պետրովնան, աւելի ու աւելի զարմանալով։

—Պետրէն այսօր աչքիս ծիծաղելի է երեւում,—պատասխանեց Ռոստամեանն, աշխատելով զսպել իր բուռն ծիծաղը։—Գիտէք, Նաստալիա Պետրովնա, նա ոտով-գլխով ինչ բանի է նմանում...—Ծածկած հովանու։ Գլուխը բարակ, սրածայր, ուսերը նեղ, արխալուղն երկայն, փեշերը լայն, իսկ և իսկ ծածկած հովանի... Լաւ նայեցէք, եկաւ... հա հա հա։

Նաստալիա Պետրովնան, վարակվելով իր երիտասարդ կենդանի ծիծաղով, անձեռոցիկը բռնեց բերանին և սկսեց նոյնպէս բարձրաձայն քրքնջալ։ Յետոյ նա աչքերը սրբեց, մի քիչ գինի խմեց և ասաց.

—Երանի, որդի, որ միշտ այդպէս ուրախ տեսնէի ձեզ։ Ինչ սաղում է ձեզ ծիծաղը, ախ, ինչ սաղում է...

Ճաշը դեռ չվերջացած, փոստային նամակաբերը այրեի անունով մի նամակ բերեց։ Նաստալիա Պետրոսեանն անմիջապէս բաց արաւ նամակը։ Գրողը Գաբօն էր և գրում էր վրացերէն։ Այրեն շտապով կարդաց։ Գաբօն յայտնում էր, թէ այս տարի արդէն ուսման ընթացքն աւարտում է, հետևաբար երկու երեք ամսից յետոյ կըգայ բժշկի վկայականով։

—Աչքդ լոյս, Նաստալիա Պետրոսեան,—գոչեց բարձրաձայն Ռոստամեանը,—այս էլ Գաբօյի կենացը,—աւելացրեց նա, կէս բաժակ ևս մուգ-դեղնագոյն հեղուկից խմելով։

Երկուսն ևս—այրեն աւետաբեր նամակի, իսկ Ռոստամեանը գինու ազդեցութեամբ—շատ ուրախ տրամադրութեան ներքոյ, երկար ժամանակ ոգևորված խօսում էին։ Ի վերջոյ, Ռոստամեանը խօսակցութիւնը դարձրեց Վառվառէի վրայ։ Սակայն պատկառելի այրեն, յայտնի չէր ինչու, այդ օրն առաջին անգամ խոյս տուեց այս մասին խօսելուց։ Լսելով Վառվառէի անունը, նա յանկարծ ընկաւ մտախոհութեան մէջ, և վայրկենաբար նրա դէմքը փոխվեց։ Ապա նա լռիկ, ինքնուրոյնաբար գլուխը շարժեց և ցուցամատի ծայրը շտապով կծեց։ Ռոստամեանը զարմացած նայեց նրա երեսին և այլ ևս համարձակութիւն չունեցաւ խօսքը շարունակել ցանկալի առարկայի վերաբերմամբ։ Առանց այլ ևս մի բառ արտասանելու, նա բարձրացաւ տեղից, գլուխ տուեց և հեռացաւ իր սենեակը։

Երեկոյեան Ռոստամեանը դուրս գնաց փոքր ինչ զբօսանելու։ Շատ չանցած նա վերադարձաւ տխուր մըտածութեան մէջ։

Այսպէս անցաւ երեք-չորս օր։ Այլ ևս Ռոստա-

մեանը նախկին եռանդով և համբերութեամբ աշխատել չէր կարողանում։ Մի անյաղթելի ցանկութիւն էր զգում նա մէկի հետ մտերմաբար խօսելու, մէկին իւր զգացմունքներն արտայայտելու։ Գուցէ թեթեւացնէր սրտի անորոշ ծանրութիւնը։ Այլ ևս մենակեցութիւնը նրան թեւում էր ախտը, անտանելի, նոյն իսկ ամօթալի։ Սակայն ո՛ւր գնար, ո՛րտեղ գտնէր մի մտերիմ ընկեր, քանի որ, ամենքից հեռացած, չունէր ոչ ոքի հետ արտակից յարաբերութիւն, բառիս ընդարձակ նշանակութեամբ։ Կային Թիֆլիսում նրա նախկին ուսումնակիցներից ոմանք, բայց, բացի ուսանողական «դու»-ից, նրանց հետ այլ սերտութիւն չունէր նա։ Կը կամենար նա դէթ Նատալիա Գեորգիևնայի հետ խօսակցութեամբ անցկացնել իւր ձանձրալի երեկոների մի մասը։ Բայց, անհասկանալի բան, Նատալիա Գեորգիևնան ևս առաջուանը չէր։ Այրին փոխվել էր, ծածկամիտ և սակաւախօս էր դարձել, մանաւանդ իւր նոր կենցաղների վերաբերմամբ։

Առաւօտ ու երեկոյ դիմացի լուսամուտներում երևում էր Վառվառէն մի և նոյն սխուր դէմքով։ Երբեմն նա խաղում էր դաշնամուրի վրայ, երբեմն դուրս էր գալիս պատշգամբ, երբեմն դբքեր էր կարդում, իսկ անից ա՛լ ուրիշ էր գալիս շատ սակաւ, այն ևս հօր ուղեկցութեամբ և միայն երեկոները։

Մի բաւական տաք երեկոյ Ծերունին, իւր աղջկայ հետ թև թևի տուած, դուրս եկաւ անից։ Ռոստամեանին մի ներքին այժ դրդեց հետևել նրանց։ Նա շտապով հագնվեց և դուրս եկաւ։ Հայր ու աղջիկ դիմեցին դէպի Գալավինսկիյ պրոսպեկտ։ Մի քանի քայլ հեռուից Ռոստամեանը հետևում էր նրանց։ Անցորդները ուշադրութեամբ մոիկ էին անում նրանց վրայ։ Ծերունու պատկառելի դէմքը, Վառվառէի հպարտ և ինքնավստահ քայլուածքն ամենքի աչքում մի խորհրդաւորութիւն էին տալիս անծանօթ զոյգին։ Երեսատարդ պրօֆեսորներից ոմանք, միմեանց բոթելով, ցոյց էին տալիս այդ զոյգի վրայ։

Երբ հայր ու աղջիկ յետ դարձան, Ռոստամեանն էլ առ էլս հանդիպեց նրանց, դադարը վերցրեց, մօտեցաւ, բարևեց, միացաւ և սկսեց պրօմնել նրանց հետ։ Ծերունին ուրախ տրամադրութեան ներքոյ էր, աղջիկը նոյնպէս։ Նրանք գովեցին Թիֆլիսի կլիման, կապոյտ երկինքը, պարզ օդը։ Մօտ կէս ժամ միասին պրօմնելուց յետոյ, նրանք վերադարձան տուն։ Օրն արդէն մթնում էր։ Ծերունին հրաւիրեց Ռոստամեանին իւր մօտ թէյի, Վառվառէն կրկնեց հրաւէրը, և Ռոստամեանն առաջին անգամ վստահացաւ գնալ նրանց մօտ։

Կանթեղները վառած, պատրաստ էին, սեղանի վրայ եռում էր մաքուր, սկեփսյալ հեշտաեռը։ Վառվառէն սովորաբար լինքն էր թէյ ածում, ուստի, վերարկուն և ձեռնոցները հանելով, նա անմիջապէս սկսեց մաքուր բաժակները մի անգամ ևս լուանալ ու մաքրել։ Մինաս կիրիլլիչն, ըստ երևոյթին, մոռացել էր Ռոստամեանի ընդդիմադրութիւնն իւր հնչակաբներին։ Նա դարձեալ սկսեց քննադատել Թիֆլիսի բնակչութիւնն, որին անարժան էր համարում երկրի բնութեանն և դեղեցիկ դիրքին։ Սակայն Ռոստամեանն այս անգամ, անպայման համաձայնվելով Ծերունու հետ, վիճաբանութեան առիթ չտուեց։ Այս լուսաւոր սենեակում, պատկառելի Ծերունու և երիտասարդ կնոջ այս փոքրիկ շրջանում նա զգում էր մի ծայրագոյն ե-

ջանկութիւն, որ երբէք, երբէք չէր պղացել։ Ծերունին սկսեց, վերջապէս, հարց ու փորձ անել Ռոստոմեանի գործերի մասին։

—Զարմանում եմ,—ասաց Մինաս Կիրիլիչը,—որ դուք ինժեներ էք և բաւականանում էք այդ հասարակաց պաշտօնով։ Այժմ ինժեներները երկաթուղիների վրայ տասնեակ հազարներ են վաստակում։

—Ես ինժեներ չեմ, Մինաս Կիրիլիչ,—պատասխանեց Ռոստոմեանը, ժպտալով,—Նահապետ Պետրոսեանն է իմ անունն այդպէս կնքել։

—Հապա ինչ է ձեր մասնագիտութիւնը։

—Իմ մասնագիտութիւնը—երկրագործութիւն է։

—Աա՜,—արտասանեց Մինաս Կիրիլիչը մի փոքր հիասթափված մարդու եղանակով,—ուրեմն դուք ձի ուսումնարանում էք աւարտել։

—Մոսկվայի Պետրոսեան երկրագործական ճեմարանում։

—Հասկացայ. երկրագործ էք։ Բայց ինչ գործ ունէք սենեակի պատերի մէջ։

—Ո՞ւր գնամ։

—Գիւղը,—պատասխանեց Ծերունին վճռողաբար։

—Կըցանկանայի գնալ, բայց դրա համար հարկաւոր է երեք բաներից մէկը։

—Օրինակ։

—Կամ դրամագլուխ, կամ սեպհական կալուածք, կամ մեր հարուստ կալուածատէրերի հաւատարմութիւնը։

—Եւ ոչ մէկը դրանցից չունիք։

—Չունիմ, ինչպէս և ինձ նման շատերը չունին։ Մինաս Կիրիլիչը խորհրդաւոր կերպով գլուխը

շարժեց և ծանր եղանակով ասաց.

—Չէի ասում ձեզ, պարոն Ռոստոմեան, որ մենք դեռ ազէտ ենք։ Աասցէք խնդրեմ, ինչ կըլինէր, որ մեր հարուստ կալուածատէրերից մէկը ձեզ ընկերացնէր իրան հետ և իւր կալուածքը տար, որ դուք եւրոպական ձևով մշակէիք։ Ո՛չ, եղբայր, մեզ համար վաշխառութիւնն աւելի հեշտ է, քան թէ երկրագործութիւնը։ Ջհուդ ենք մենք...

Յետոյ Ծերունին հարցրեց, թէ, արդեօք, Ռոստոմեանի ներկայ աշխատութիւնը փոքր իշատէ համապատասխանում է իւր մասնագիտութեանը։ Ռոստոմեանը պատասխանեց, թէ նրա գրաւոր աշխատութիւնը, ճշմարիտ է, վերաբերվում է իւր մասնագիտութեանը, բայց միայն տեսականի կողմից, թէ նրան կառավարութենից յանձնված է կազմել և ընդարձակել երկրի մասին գանազան տնտեսական տեղեկութիւններ և այլն և այլն։

Խօսակցութիւնն անցաւ այլ առարկաների վրայ, և Ռոստոմեանը ճնաց իւր հարևանների մօտ մինչև երեկոյեան տասը ժամը։ Դուրս գնալիս, Մինաս Կիրիլիչը բարեկամաբար յայտնեց նրան, թէ իւր դռները միշտ բաց են նրա համար և խնդրեց, որ շուտ շուտ հնարէ բերի։

Այդ օրից սկսած Ռոստոմեանն այլ ևս չէր վարանում առիթ առիթ այցելել Ծերունուն և նրա աղջկան, և միշտ այն ժամանակ, երբ գիտէր, որ Մինաս Կիրիլիչը տանն է։ Վերջինը հետզհետէ աւելի բարեկամանում էր նրա հետ։ Թէև շատ բաներում նրանք չէին համաձայնվում միմեանց մտքերին և շատ անգամ Ռոստոմեանը տաք տաք հակառակում էր Ծերունուն, բայց Մինաս Կիրիլիչին դիւր էին

գալիս երիտասարդի առողջ, համարձակ և երբեմն մոլեռանդ դատողութիւններն այն մասնաւոր, հասարակական և մերթ ընդ մերթ ազդային խնդիրների վերաբերմամբ, որ միշտ հետաքրքրում էին անգործ ծերունուն բացառականի կողմից։

Նրանց խօսակցութեանն և վիճաբանութեանը մասնակցում էր և՛ Վառվառէն իր մեղմ ձայնով, խօսելու համեստ եղանակով և պարզ, ժամանակակից կեղծութենից զերծ, ձևերով։ Ցաճախ ծերունին լռում էր, վիճաբանութեան ասպարէզը թողնելով իր ազգական և Ռոստամեանին։ Հարկաւ, նրա ներկայութեամբ երկու երիտասարդ անձանց խօսակցութիւնն երկար չէր կարող տևել այն առարկաների վրայ, որ մտաչելի չէին ծերունու ուղեղին և զգացմանց։ Բայց, այսու ամենայնիւ, երբեմն նրանք, կարծես, մոռանալով Մինաս Կիրիլլիչի ներկայութիւնը, չօշափում էին միմեանց սրտին մօտիկ խնդիրները։ Այսպէս, մի երեկոյ Ռոստամեանը սեղանի վրայ տեսաւ Դևօթէի «Վերթեր» անունով գրքոյկը, որ Թիֆլիսի գրադարանների մէկից վերցրել էր ծերունին աղջկայ խնդրանօք։ Ռոստամեանը հարցրեց Վառվառէին, թէ կարդացել է այդ գրքոյկը, արդեօք։ Վառվառէն նոյն օրը միայն աւարտել էր գրքոյկի ընթերցանութիւնը և, երևում էր, տակաւին նրա ազդեցութեան ներքոյ էր։ Նա նախ չփութվեց, ապա մօտ կերպով սկսեց խօսել վէպի բովանդակութեան մասին։ Խօսակցութիւնը չէր կարող շարունակվել այն բարդ դադափարի մասին, որ արծարծում է բանաստեղծը, քանի որում Մինաս Կիրիլլիչը ներկայ էր, թէև, հարկաւ, տեղեակ չէր գրքի բովանդակութեանը։

Ահա հէնց այդ երեկոյ էր, երբ Ռոստամեանի իւր սենեակը վերադառնալուց մի քանի րոպէ անցած, ներս մտաւ Պետրէն և ասաց, թէ Նատալիա Պետրոսեան խնդրում է նրան չնորհ բերել իւր մօտ։

Այրին, մի համրիչ ձեռին, թախտի ծայրին նըստած, խորին մտածութեան մէջ էր։ Նա լուռ ընդունեց իւր երիտասարդ կենդոլին և, տխուր հառաչելով, հրաւիրեց նստել։

—Խմմ վատ դործ չունի՛ք,—հարցրեց նա։

—Ոչ,—պատասխանեց Ռոստամեանը, զարմանալով այրիի անսովոր մտախոհութեան վրայ։

—Որտե՞ղ էիք,—հարցրեց այրին։

Ռոստամեանն ասաց, թէ որտեղ էր։

—Նոր բան չիմացա՞ք։

Այս հարցն առաջարկելիս այրին աչքի տակով խորհրդաւոր նայեց Ռոստամեանի երեսին։ Վերջինը զգաց, որ այրին ինչն անչուշտ մի նշանաւոր նորութիւն ունի հաղորդելու։ Համրիչի հատիկներն իւր փափուկ մատների մէջ չընչրխկացնելով, Նատալիա Պետրոսեան քանի մի վայրկեան լռեց։ Յետոյ նա, իւր առողջ ձրանը ուղղելով, հառաչեց, մազերն ուղղեց և ասաց։

—Աշխարհս, Սահակ Գրիգորիչ, վատացել է. խե՜ղճ մարդ, խե՜ղճ կնիկ…

—Ի՞նչ է պատահել, Նատալիա Պետրոսեան,—հարցրեց Ռոստամեանն, այս անգամ համբերութիւնը հատած։

—Այն է պատահել, որդի, որ մեր Վարվառա Մինասեանն—աղջիկ չէ։

Ռոստամեանը, տակաւին չըհասկանալով այրիի

ասածը, զարմացմամբ լի աչքերը յառեց նրա երեսին։

—Հապա՛,—չարունակեց այրին, գլուխը չարժե-լով,—Վառվառէն մարդ ունի, պսակված է և մար-դուց բաժանված։

Ռոստոմեանը գունաթափվեց։ Այրին, ոտը ոտի վրայ դնելով, չարունակեց.

—Բայց ես ու դուք կարծում էինք, որ նա ան-մեղ աղջիկ է։ Միանգրդ է, Սահփան Գրիգորիչ, թէ ինչքան ես խնդրում էի ձեզ, որ նշանվէք նրա հետ։ Ձեռոյ տեսայ, որ դուք չէք ուզում, ասացի, թող իմ Գաբոյի համար պահեմ։ Է՛հ, ինչ մեղքս թաղցնեմ, ես սուտ ասել չեմ կարողանում. եթէ դուք խնդրէիք ու պաշէիք էլ, ես չէի թողնիլ, որ Վառվառէն ձեզ հանէր։ Ես շատ սիրեցի նրան և ուզում էի, որ նա ան-պատճառ իմ Գաբոյի հարսնացուն դառնայ։ Հիմայ, դուք Աստծու բանին մոխիր արէք, որ ոչ ձերը կարող է լի-նել և ոչ իմ Գաբոյինը... փառք քեզ, Տէր Աստուած...

—Բայց ձեզ ո՛վ ասաց, որ Վարվարա Մինաեվ-նան մարդ ունի,—հարցրեց Ռոստոմեանը, հազիւ կա-րողանալով զսպել իւր բուռն յուզմունքը։

—Համբերեցէք ու ես մէկ-մէկ կըպատմեմ։ Մի օր որդի, սիրտս տխրեց, ասացի գնամ նրանց մօտ։ Գնա-ցի. Մինաս Կիրիլիչը տանը չէր. Վարվարա Մինաեվ-նան տխուր նստած էր միայնակ։ Սկսեցինք խօսել դէ-սից-դէնից։ Մէկ էլ տեսնեմ, դու ես իմ պարոն Սահ-փան Գրիգորիչ, այդ մեր Վարվարա Մինաեվնան դար-ձաւ ինձ ու ասաց.—«Նաստալիա Պետրովնա, ես մի խնդիր ունիմ ձեզ»։ Ասացի. «Հրամայիր, որդի»։— «Թուք ինձ, ասաց, այսուհետև բարի չնա չանուա-նէք, այսինքն ազգով աղջիկ չկարծէք»։—Ինչու՞, որդի»

հարցնում եմ ես։—«Նրա համար, որ ես պսակված կնիկ եմ», ասում է։ Ես տեղն ու տեղը զարմացայ, լեզուս կապվեց։—«Կենդանի՞ է ձեր մարդը», հարց-նում եմ։ «Ուրիշների համար կենդանի է, ինձ համար մեռած», ասում է Ձեռոյ, Սահփան Գրիգորիչ, նա սկսեց մէկ-մէկ պատմել իւր մարդու մասին։ Զար-մանում էք, որդի. հապա՛, ո՛վ կըմտածէր, որ այդ չա-հիլ, անմեղ աղջիկը պսակված է ու անբաղդացած։

«Ահա, ուրեմն, ինչումն է թագնված նրա տըրտ-մութեան պատճառը», կայծակի արագութեամբ անցաւ Ռոստոմեանի մտքով։ Այլ ևս նա չէր հոգում, թէ իւր հետաքրքրութեամբ և դէմքի արտայայտութեամբ ա-կամայ յայտնում է այրին այն, ինչ-որ դեռ միմիայն իւր հոգով ու սրտի դատաստանն էր։

—Բայց ո՛վ է Վառվառէի մարդը, ո՞րտեղ է, ին-չո՞ւ են բաժանվել նրանք,—հարցրեց Ռոստոմեանը անհամբերութեամբ միմեանց եռանից։

—Ա՛կանջ դիր, մէկ-մէկ կըպատմեմ,—պատաս-խանեց Նաստալիա Պետրովնան։

Եւ սկսեց մանրամասն պատմել բոլորն, ինչ-որ լսել էր Վառվառէից։

Նաստալիա Պետրովնան խօսում էր մերթ հայե-րէն, մերթ ռուսերէն և երբեմն, նեղ տեղն ընկած ժա-մանակ, դիմում էր վրացերէնին։ Իսկ այնտեղ, ուր խօսք չէր գտնում, միտքը հասկացնում էր իւր հսկա-յատիպ մարմնի պէս պէս շարժուձևերով։ Ինչ և է, նրա պատմութեան էական իմաստն այսպէս հասկա-ցաւ Ռոստոմեանը։—

Մինաս Կիրիլիչն և Վարվարա Մինաեվնան բաւն մոդդոկցիներ են, թէև բնակվել են մեծ մասամբ

Մոսկվայում։ Վարվառա Մինաևիչնան իւր հօր միակ աղջիկն էր։ Նա ունեցել է երկու եղբայր և երեք քոյր, որոնք մեռել են մանկութեան հասակում։ Իսկ մայրը մեռել է Վառվառէի ծննդեան վրայ։ Զրկվելով իւր հինգ զաւակներից և ամուսնուց, Մինաս Կիրիլիչն իւր սէրը տուել է Վառվառէին։ Աստուած խնայել է Վառվառէին։ Օ՜օ, խեղճ մարդն ինչեր է արել իւր միակ աղջկայ համար, ինչ նեղութիւններ է քաշել, ինչ փոշեր է ծախսել, մինչև նրա մեծանալը։ «Բայց վերջն ինչպէս դժբաղդացրել է նրան էլ, իրան էլ»...

Այստեղ բարեմիտ այրին, յուզվելով, մի քանի վայրկեան ընդհատեց իւր պատմութիւնը։ Ռոստամեանը, գրեթէ չունչը զսպած, անհամբերութեամբ լսում էր, սպասելով այրուի պատմութեան շարունակութեան։ Խեղճ երիտասարդ. նոյն ժամին նա մոռացել էր ամեն ինչ, հոգով ու մտքով կենտրոնացել էր մի կէտի վրայ—ով է արժանացել Վառվառէի կենակցութեանը և ինչ է պատճառը, որ թունաւորվել է նրա կեանքը։ Բայց բարեմիտ այրին, չընայելով ունկնդրի անհամբերութեանը և իւր ոգևորութեանն, չէր շտապում պատմութիւնը համառօտելու։

Վառվառէն մեծանում է, հայրը նրան իւր հետ տանում է Մոսկվա, տանային ուսուցիչներ է վարձում—ֆրանսերէնի, հայերէնի, ռուերէնի, երաժշտութեան, երգեցողութեան, ամեն մի բանի համար ջոկ-ջոկ։ Վերջապէս, Վառվառէն քան տարեկան է դառնում, բայց սիրտը դեռ անմեղ, ուրիշ բանի մասին չի մըտածում։

—Այնքան հօրս սիրում էի, տասում է, որ կարծում էի, թէ առանց նրան մէկ օր էլ չեմ կարող ապրել։

Բայց Մինաս Կիրիլիչը վճռում է նրան ամուսնացնել։ Նա մի քանի հարուստ երիտասարդների առնուններ է յիշում։ Վառվառէն ոչ մէկին չի հաւանում։ Վերջը Մինաս Կիրիլիչը կանդնում է, թէ Մոսկվայում ապրող հաշտարարանցի ծեր Միքանդրոնցօվի իւր եղբօր որդու համար առաջարկութիւն է անում, թէ Վառվառէն չըպիտի մերժի, թէ Միքանդրոնցօվը ինքը ընտանեասէր չէ, թէ եղբօր որդին նրա հարստութեան միակ ժառանգն է և այլն և այլն։ Մի օր մի ընտանիքում Վառվառէին ծանօթացնում են երիտասարդ Միքանդրոնցօվի հետ։ Այն օրից սկսած այդ երիտասարդն ընկնում է Վառվառէի հետից։ Որտեղ գնում է խեղճ աղջիկը, նրան է հանդիպում—թատրոններում, հանդէսներում, այգիներում։ Մի խօսքով, այդ մարդը չուպի նման հետևում է նրան։ Մի օր նա իւր սէրը յայտնում է Վառվառէին։ Վառվառէն մերժում է, պատասխանելով, թէ առ այժմ ամուսնանալու ցանկութիւն չունի։ Միքանդրոնցօվը չի յուսահատվում, իսկ Մինաս Կիրիլիչը նրան ընդունում է գրկաբաց, ինչպէս արդէն մի նշանված փեսացու։ Վերջը Վառվառէն ուշադրութիւն է դարձնում Միքանդրոնցօվի վրայ։

—Յօժ, խեղճ աղջիկը չէր կարող աչքերը կապել, որ իւր շուպը չըտեսնի,—շարունակեց այրին։—Կնիկը, Սաեփան Գրիգորիչ, շուտ է խաբվում, ևս առաւել չտհիլ աղջիկը։ Հօր գովասանքն, աղաչանքն ու պաղատանքը—այ պէտք է անպատճառ նրան գնաս, այ հարուստ ժառանգութիւն է ստանալու, այ չտհիլ է, ուսում առած է, դրանիցումն է եղել, այ, եթէ չես գնալ, սիրտս կըկոտրես, մինչև դերեզման հետդ

չեմ խօսիլ, ձեռք կըվերցնեմ, խեղճ եմ, համ հայրդ եմ, համ մայրդ, ինձ լսիր, դէս-դէն—վերջը Վառվառէին խելքից հանում է մարդը։ Գիտէք, Ստեփան Գրիգորիչ, որ անձրևն, եթէ շարունակ միևնոյն տեղը կաթի ու կաթի—վերջը քարին էլ կըծակի։ Մի տարի ու կէս հայրն ապաչում է ու պաղատում—գնա, գնա, վերջը խեղճ աղջիկը, գլուխն ազատելու համար, գնում է Միքանդրօնցօվին, որին «ոչ սիրում էի, ոչ էլ ատում», ասում է Վառվառէն։

—Ճեռմ՛ոյ,—ասիպէց Ռոստամեանն, աւելի ու աւելի համբերութիւնը կորցնելով։

—Ճեռոյ, Ստեփան Գրիգորիչ, չընեղանաք, որ ասեմ, թէ տղամարդը վատ, շատ վատ արարած է։ Գուք ուզում էք իմանալ, թէ Վառվառէն որ ամուսնանում է, յետոյ ինչո՞ւ է բաժանվում։ Գնացէք, այդ բանը հարցրէք մեր ժամանակուայ փուչ տղամարդիկից, որ պահակած են... Ակիմ Աբրոսիմիչ Միքանդրօնցօվը դուրս է գալիս մի ագուէս։ Այդ մարդը, ով կարող էր իմանալ, մաքում դրած է լինում խոնարհ, անմեղ մարդ ձևանալ, քանի որ հօրեղբայրը կենդանի է, որ նրա ժառանգութիւնը սատնայ և յետոյ ինչ-որ ուզում է, այն անի։ Այսպէս էլ լինում է. ծերացած Միքանդրօնցօվն, իւր եղբօր որդուն պահակելուց վեց ամիս անցած, մեռնում է ու կարողութիւնը թողնում ագուէսին։

Այնուհետև Վառվառէի մարդը դուրս է գալիս իւր կեղծ մորթուց։ Առաջ նա ցերեկներն է սկսում ուշանալ, յետոյ գիշերները։ Մի գիշեր մինչև լոյս տուն չի գալիս։ «Ո՞րտեղ էիր», հարցնում է Վառվառէն։ «Ընկերիս մօտն էի, ասում է, առևտրական հաշիւներ էինք անում»։ Լաւ։ Մի ուրիշ անգամ էլ ուշանում է, ուրիշ պատճառ է բերում։ Վառվառէն բանի էութիւնը հասկանում է, տեսնելով, որ մարդն ամեն գիշեր ուշանում է։ Վերջը մի օր Միքանդրօնցօվը յանկարծ կնոջը թողնում է ու գնում Պետերբուրգ, երկու շաբաթ ժամանակով, իբրև թէ գործերով։ Երկու շաբաթը դառնում է չորս ամիս։ Գալիս է յետ, դարձեալ նոյն կեանքն է շարունակում. այս անգամ առաւօտներն է տուն վերադառնում, աչքերն անքնութիւնից ուռած, կարմրած, երեսը դեղնած։

—Հէնց որ ինձ տեսնում էր,—շարունակեց այրին Վառվառէի խօսքերով,—գլուխը կրծքին քաշ էր գցում, համեստ, խոնարհ, սկսում էր ձեռք ու ոտքս համբուրել, երդվում էր իւր հօր ու մօր գերեզմանով, թէ ինձ օրից օր աւելի է սիրում։

Մի օր Վառվառէի ընկերուհիներից մէկը կատակով նրան մի բան է ասում Ակիմ Աբրոսիմիչի մասին։ Վառվառէն ծիծաղում է, բայց սիրտը սկսում է ցաւել։ Միւս օրը մի ուրիշից նա էլի մի բան է լսում։ Վառվառէն, ամօթից, սկսում է պաշտպանել իւր կեղտոտ ամուսնուն ուրիշների մօտ։ Ճեռոյ նա չի ուզում իւր ծանօթների աչքում երևալ, կարծում է, որ ամենքը ծաղրում են նրան իրանց մտքում։ Միւս կողմից էլ նկատում է, որ Մինաս Պերիլլիչն օրից օր պաղում է դէպի փեսան, տեսնելով—առաջուայ պէս սիրով չի ընդունում նրան։ Բանը բոլորովին պարզվում է։ Միքանդրօնցօվի փողերը գնում են ջրի պէս։ Վառվառէն իւր ցաւը յայտնում է հօրը։ Հայրն այնպէս է ցոյց տալիս, թէ չի հաւատում, բայց ո՛ւր... ամբողջ քաղաքին է յայտնի լինում Միքանդրօնցօվի արարքը։

Իսկ Միքանդրօնցօվը շարունակում է Վառվառէի մօտ երդվել, որ սիրում է, պաշտում է և այլն...

—Ա՛խ, Սաեվան Գրիգորիչ,—դոչեց Նատալիա Պետրօվնան, դլուխը դառնութեամբ շարժելով,—քա՜նի քանի մարդիկ կան հէնց մեր Թիֆլիսումն էլ, որ տանը համբուրում են լրանց կանանց ձեռը, իսկ դըրսում անառակաների ոտը։

Վառվառէն մի օր կանդնում է և իր մարդու երեսին ասում. «Ակիմ, կամ արտրժունքդ թող, կամ ինձ»։ Մարդը մեղայ է դալիս, բայց շարունակում է իր անառակութիւնները։ Վառվառէն էլի լանդրում է, չի լինում։ Մի անգամ նա կառքով դնալիս է լինում իր ազգականներից մէկի մօտ, յանկարծ տեսնում է, որ Ակիմը մէկ ուրիշ դերասանուհու հետ կառքով անցնում է...

—Կնիկը համբերող է, Սաեվան Գրիգորիչ,—դոչեց այրին, ձայնը բարձրացնելով,—բայց էլի մարդ է, Աստուած չէ։ Վառվառէն կառքը քշել է տալիս ուղիղ իր հօր տունը։ «Կամ սպանիր ինձ, կամ թող, որ քեզ հետ ապրեմ», ասում է։ «Վառվառէ, խելքի եկ»։ Չի լինում. ոչ հօր աղաչանքն, ոչ մարդու նոր մեղայ դալը—չեն օգնում։

Մի ամիս անցած, Միքանդրօնցօվը Մոսկվայից անհետանում է։ Բոլոր ծանօթները սկսում են խօսել, որ նա «մի դերասանուհու հետ փախել է Օդեսսա»։ Մի փոքր ժամանակից յետոյ, Վառվառէն նամակ է ստանում նրանից հաղար ու մի սատանայութիւններով լի։ Նա դրում է, թէ մեղաւորը Վառվառէն է, որ խայտառակեց նրա անունը, թէ այլ ևս նա չի կարող Մոսկվայում երևալ, թէ Վառվառէն, եթէ ուզում է,

թող ինքը դնայ նրա մօտ և այլն և այլն։ Քաղաքում երկար բամբասում են. հարցնում են Մինաս Կիրիլլիչին, նա հարցնողներից դլուխ է փախցնում։ Վառվառէն դիշեր ու ցերեկ անից չի դուրս դալիս. օրից օր բաները վատանում են։

—Հիմայ գանք Մինաս Կիրիլլիչի խղճմտանքին,—շարունակեց Նատալիա Պետրօվնան, մի անգամ ևս հառաչելով։—Բայց ինչ պատահեց ձեզ, Սաեվան Գրիգորիչ, դուք ինձ չէք լսում։

Արդարև, Ռոստամեանն այլ ևս չէր լսում այրեի խօսքերը։ Դուռնաթափ, դողդոջուն շրթունքներով, ատամները սեղմած, նա իր հայեացքը յառել էր սեղանակի դէպի մուխ անկիւնը։

—Ես... ո՛չինչ... լսում եմ... արտասանեց նա, սթափվելով։

—Ո՛չ, դուք ականջ չէք դնում, ներողութիւն, ես ձեր դլուխը ցաւացրի։

—Ծխախոտի ծուխը դլուխս պատճառեց, ինչ էիք ասում, շարունակեցէք, խնդրեմ։ Բայց ոչ, ուշ է, Նատալիա Պետրօվնա, ներեցէք։ Բարի դիշեր...

Թողնելով այրեին զարմացած և խօսքը կիսատ, Ռոստամեանն արագութեամբ դուրս վազեց։ Նա անցաւ անցաւ իր ննջարանն և, դռները չբռնած, հագուստը հագին, երեսնիվայր պառկեց անկողնի վրայ։

Այսպէս, ուրեմն, Վառվառէն օրիորդ չէ։ Նրա բազկն արդէն խորտակված է ճակատագրի անողոք հարուածով։ Ահա ինչ է պատճառը նրա անբաժան տխրութեան, այն մռայլ ատելի, որ պղծել է նրա վաղուց դէմքը։ Այդ—անպատիւ կեանքի դառն արտայայտութիւնն է, այդ—վշտալի վիճակի սև դրոշմն է։

Արդեօք կարելի է այստեղ մեղադրել ճակատագիրը կամ նախախնամութիւնը, արդեօք, անիմաստ բառեր չէն արդեօք։ Վառվառէն զոհ է դարձել նաժոյշ հօր քմահաճութեան, ուրիշ ոչինչ։ Անտիրա Ծնողն իւր հայրական սէրն աղջկան վաճառել է նրա բաղդի արժէքով։ Նա ի չարն է դործ դրել որդիական սէրը, յարգանքն և անձնուրացութիւնը։ Դուստրն իւր անմեղ սիրտը զոհել է բռնակալ հօր ինքնասիրութեանը, և սա ընդունել է մի այդպիսի ծանր զոհաբերութիւն։ Մի ծերունու քիմքը զոհացնելու համար, ջարդ ու վշտի է եղել մի ծաղիկ կեանք։ Համեստութիւնն և դեղեցկութիւնը յանձնվել են ժամանակակից անարդանքի իշխանութեան։ Աղաւնին ընկել է ագռաւի դիրկը, որ նեխված դէշով է յագեցնում իւր անխտրական կոկորդը։ Առաքինութիւնն ապականվել է դարչելի մեղապարծութեամբ...

«Եւ ո՞վ է մեղաւորը»։

—Մեկ զաւակի սիրող հայրը։

«Անարդվածն ո՞ւմից պիտի պահանջի իւր վրէժը»։

—Հօրից և միմիայն իւր հարազատ Ծնողից։

Բայց նա դեռ սիրում է այդ բռնակալին, դեռ կարողանում է նրբել նրա ծանր յանցանքը։ Առաքինութիւն է այդ, արդեօք, թէ կնոջ դարաւոր սարկութեան արդասիք։—Սարկութիւն, որ կրաւորական աբարածի մէջ ոչնչացրել է ամեն մի ինքնակամութիւն։

Զարհուրելի է մարդկային հակասութիւնը։—Այդ բռնակալը դեռ համարձակվում է ուրիշներին դատապարտել, դեռ յաւակնութիւն ունի առաքինի և բարոյական մարդ ձևանալ։ Նա դեռ բողոքում է մարդկութեան դէմ, մրոտում է մի ամբողջ ժողովրդի առնանը, թէ սա խլում է նրա հանգստութիւնը, թունաւորում է նրա գոյութիւնը։ Կե՛ղծ ազատամտութիւն։ Ա՛ւա նն նրա հայրական զգացմունքները, ծնողի սէրը մի մաքուր դիմակ է այլանդակ բարբարոսութիւնը ագօղելու համար։

Իսկ ա՛յժմ... ա՛յժմ ինչ է ուզում նա իւր հայրական կամքով անբաղդացրած արարածից։ Մի՞թէ մի ձեռով ատած վէրքը կամենում է միւս ձեռով բուժել։ Եւ ինչ դեղերով։—Աշխարհի ունայն չուքը օտար երկրներում նրան ցոյց տալո՞վ։ Մի՞թէ նա այնքան միամիտ է, որ կարծում է, թէ մի երիտասարդ կնոջ մայի սիրտը կարող է լիանալ կեանքի լոկ արտաքին շքեղութիւններով տեսնելով։ Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ։ Կենդանի, մաստղ սիրտը մի երաժշտական դործ չէ, որ հնչի այն եղանակին, ինչ-որ կամենում է մի ուրիշի կամքը, լինի այդ ուրիշը հարազատ հայր և տասն անգամ աւելի սիրող հայր։ Այդ—հակառակ է բնութեանը։

Ծերունին բռնակալ է։

—Բռնակալ է, բայց ինձ ինչ... դոչեց յանկարծ Ռոստամեանը, ծանրացած գլուխը բարձի վրայից բարձրացնելով և աչ ձեռը ճակատին դնելով։

Եւ ճշմարիտ, նա ո՛վ է, ինչ երաւունքով է դատապարտում այդ ծերունուն, և ո՛ւմ պատճառով։ Մի հասարակ ծանօթի, մի դրացի կնոջ պատճառով, որի հետ ընդամենն երկու ամիս չէրկայ, որ ծանօթացել է։ «Մի դրացի կին, մի հասարակ ծանօթ»։ Այսպէս է, արդեօք, ճի՞շտ է, որ վառվառէն նրա համար սրանից աւելի մեծ և խորհրդաւոր նշանակութիւն չունի։ Իսկ այն երկար խօսակցութիւնները, ախորժելի վիճաբա-

նաւթիւններըը, իսկ նրա իմաստալի հայեացքներըը, ժըպիտներըը, հառաչանքներըը։ Իսկ այն երեկոյեան լուսակցութեան նիւթը, նրա գաղտնի ոգևորութիւնը մի վիպական չարաբաղդ հերոսի մասին, որի դրութիւնն այնքան կարող էր ժամիկ լինել Ռոստամեանի դրութեանը։ Սպասեցէք։ Ոչ ոչ, այստեղ թագնված է աւելի խորին գաղափար, քան թէ կարող է դանել լոկ սառն դատողութիւնը։ Սակայն այլ ևս ուշ և աւելորդ է այս մասին մտածել։

—Եւ ոչ միայն ուշ է, այլ և անկարելի,—չարաչարնակեց Ռոստամեանը վճռական եղանակով, մի քանի րոպէ ևս լուռ մտածելուց յետոյ։—Ինձ ծնում է մոռացութեան տալ նրա կերպարանքն և շարունակել իմ ամուր մենաւորութիւնը։ Եթէ կայ մի կայծ, պիտի շուտով հանգցնել այդ կայծը։ Իմ և նրա մէջ բացվեց մի խոր անդունդ—հասարակական նախապաշարմունքն և քրիստոնէական կրօնի խստութիւնը։ Անցնել, արդեօք, այս վիհը։—Ո՛չ, «նա» չի կարող, իսկ ես չեմ համաձայնվիլ։

Նա հագուստը հագին դարձնալ պառկեց։ Սակայն ուղեղի րոպէական խարուսիկ սառնութիւնը չազդեց բորբոքված արտի վրայ։ Նրա գլխում պատում էր այրի պատմութիւնը, աչքերի առջև—Վառվառէի ամուր կերպարանքը։ Իսկ քունը, հոգևոր տանջանքների այս ժամանակաւոր դարմանը, խոյս էր տալիս նրանից։

Երկար միջոց նա հայեացքն ուղղած էր սենեակի առաստաղին, մինչև որ մի տեսակ նիրհ սիրեց նրան։ Այդ—քնի և արթնութեան միջին ահմանն էր, ուր պատում էր նրա հոգին։ Նա մերթ ընդ մերթ բաց էր անում աչքերն և տեսնում էր առաստաղի վրայ

կանթեղի աղօտ լուսոյ կոլորաձև ցոլացումը, իսկ երբ փակում էր աչքերը—տեսնում էր այլ բաներ։ Ահա Վառվառէն։ Նա կանգնած է մի ճահճի եզրում, համառօտ, մաքուր, անմեղ։ Ձահիճը լիքն է կռնչող գորտերով։ Վառվառէն փակում է ականջները, որ նրանց անախորժ ձայնը չլսի։ Գորտերը դուրս են գալիս ճահճի միջից, փաթաթվում են նրա ոտներին, մաքուր հագուստի փէշերին։ Ռոստամեանը նայում է հեռուից զարհուրանքով։ Նա դիտէ, որ երազ է, ուզում է զարթնել... և զարթնում է։ Ո՞րտեղ է նա։—Իւր սենեակում, իւր անկողնակալի վրայ պառկած։ Իսկ այն կորած դեղնագոյն շրջանը կանթեղի լուսոյ ցոլացումն է։

Նա դարձեալ աչքերը փակում է, և դարձեալ նա կանգնած է ճահճի մօտ։ Նա տեսնում է Վառվառէին, դէմքիզոր մօտենում է նրան, գրկում է, որ ճահճից հեռացնի։ Այս անգամ նա իւր ետևից լսում է Մինաս Կիրիլլիչի ձայնը։ Նա կրկին սթափվում է երազից, աչքերը բաց է անում...

Յերեկուայ լոյն արդէն թափանցել էր ներս։

—Սամօվարը բերել եմ,—լսեց նա մի ծանօթ ձայն,—թողէք, ձեր կօշիկները հանեմ, որ սրբեմ։

Դա Պետրէն էր, որ թեքվում էր Ռոստամեանի կօշիկները հանելու։ Ռոստամեանը նայեց իրան վրայ և նոր միայն նկատեց, որ հագուստով էր քնել։ Նրան թւաց, որ Պետրէն ծիծաղում է իւր մտքում իրան։ Եւ, արդարև, Ռոստամեանը չէր սխալվում...

V

—Բաւական է ինչքան քաղաքից քաղաք, երկրից երկիր թափառելինք, սիրելի Վարիա, բաւական է: Պէտք է, որ մոռանաս անցած դնացած բաները: Դու դիտես, որ աշխարհիս երեսին, բացի քեզանից, ուրիշ մխիթարութիւն չունիմ: Ծեռնում եմ իմ դլխի մազերը. ես, փառք Աստուծոյ, այնքան էլ ծեր չեմ, բայց ահա, նայիր և տես, թէ վերջին երկու տարուայ մէջ ինչպէս ճերմակել են: Ցիսունուհինգ տարիս պիտի լրանայ յունիսի քսանուէկին, բայց տեսողը կարծում է, որ հօթանասունուհնգից աւելի եմ: Ինչ է պատճառը:—Ցաւերս, և բոլոր ցաւերիս մէջ—դու, քո հոգսը: Սկսած տասնուվեց տարեկանից, մինչև երեսունուհինգ տարեկան հասակս ապրատութիւն եմ քաշել, բայց ոչինչ, ես էլի ժամանակից առաջ չեմ ծերացել: Ես ապրել եմ ինքնագլուխ, կրթվել եմ ինքնագլուխ, փող եմ աշխատել իմ արիւն ու քրտինքով, էլի ապրատացել եմ, էլի հարստացել եմ, անուն եմ ձեռք բերել. էհ, ինչ ասեմ, հազար տեսակ նեղութիւններ եմ քաշել, բայց այսքան չեմ տանջվել: Հինգ երեխայ, հինգ միմեանցից դեղեցիկ երեխաներ և քսանուեօթ տարեկան երիտասարդ կնիկ եմ թաղել և, ճշմարիտ է, տանջվել եմ, բայց այսքան. ոչ. ոևէ պատճառով եմ այժմ այս օրին հասել:—Ինչ պատճառով: Դու անբաղդ ես, ես էլ եմ անբաղդ: Այժմ, Վարիա, ինչդ քեզ չես խնայում, ինչ անեմ, մի խնայիր, բայց գոնե ինձ խղճացիր: Ախ, Վարիա, Վարիա, դու սիրտ չունիս, թէ չէ, կըհոդնէիր, որ ես այսքան աղաչեմ քեզ:

Արտասանելով վերջին խօսքերը, Մինաս Կիրիլիչը սկսեց յուզված անցուդարձ անել սենեակի մէջ: Յետոյ նա դարձեալ կանգնեց Վառվառէի առջև և, մէջքից փոքր ինչ թեքվելով, շարունակեց աւելի ցածր ձայնով.

—Մխիթ ես չեմ իմանում, որ մեղաւորը նա է, որ նա կեղտոտ է, անպիտան է, փչացած է: Բայց, ինչ պիտի արած. լաւ է, վատ է, քոնն է, դու պէտք է թագցնես քո ցաւերը: Թոզութիւն է խնդրում, աղաչում է, երդվում է, որ այսուհետև գլուխը քո կօշիկներից վեր չի բարձրացնիլ: Վարիա, հոգիս, մարդասպանի յանցանքը ներում են, մխիթ Միքանդրոնցօվը մարդասպանից էլ սոսկ է. դու չես հաւատում, ահա կարդա և կըհաւատաս:

Մինաս Կիրիլիչը բաց արաւ սիգարետկի վերին կոճակը, ծոցից հանեց մէկ պատռած ծրար, դուրս բերեց մի նամակ և դրեց Վառվառէի առջև:

—Կարդա, կարդա, սիրելի Վարիա: Այս առաջին նամակը չէ, ոչ էլ վերջինը կըլինի: Այժմ ինքը Մոսկվայումն է:

Վառվառէն չըկարդաց նամակը, չըվերցրեց սեղանի վրայից և անգամ չընայեց նրա վրայ: Այլ ձեռի արմունկը յենած սեղանի ծայրին, ծնօտը դրած ափի մէջ, նա մտիկ էր անում լուսամուտից դէպի գաւիթ: Մինաս Կիրիլիչն ակնածութեամբ նայում էր նրա թախծալի կեսադէմքին, սպասելով, թէ նա երբ ուշադրութիւն կըդարձնի նամակի վրայ: Սակայն Վառվառէն անշարժ էր և լուռ:

—Ես չար լեզուների բամբասանքից եմ վախենում,—շարունակեց Մինաս Կիրիլիչը, դարձեալ ցած-

բացնելով ձայնը։—Կարծում էի, որ Թիֆլիսում մեզ խաղաղ կը թողնեն։ Բայց ինչ... այստեղ էլ լսել են, այստեղ էլ խօսում են։ Երեկ իմ ծանօթներից մէկին հանդիպեցի. մարդը հարցնում է, թէ ինչ եմ անում քեզ հետ այստեղ. ես չկարողացայ մի բան պատասխանել։ Բայց երևում էր, որ նա, առանց իմ ասելու էլ, լսել է ամեն բան։ Հաւատացիր, սիրելի Վարիա, ես քեզանից տանեպատիկ աւելի եմ տանջվում։ Ինչո՞ւ։—Որովհետև... էհ, թողնենք։ Աստուծոյ կամքն էր, անցեալը վերադարձնել չի կարելի։ Հիմայ միում է, որ, վերջապէս, թշնամիների, բարեկամների, ազգականների և ծանօթների բերանը կապես. պէտք է հաշտվես, Վարիա, պէտք է հաշտվես և այստեղեւ նրա կապը քո ձեռքում պահես...

—Կապը ձեռքումս պահեմ,—պատասխանեց Վառվառէն, դառնութեամբ ժպտալով։

—Այո, կարող ես, ես երաշխաւորում եմ, որ կարող ես։

—Ախ, պապա, պապա։

—Ինչ, միթէ ինձ չես հաւատում, Վարիա։

—Ես շատ հաւատալուց յոգնեցի, պապա, և ինձ համար շատ ցաւալի է, որ դուք էք այժմ հաւատում նրա խօսքերին։ Ինչ հարկաւոր է, որ ես նրա նամակը կարդամ. առանց այն էլ, ես գիտեմ, թէ ինչ է գրում։ Բայց, ինքներդ ասացէք, պապա, քանիերրորդ անգամն է, որ նա այդպէս ղղում է և քանի՛ անգամ եմ ես ներել նրան։ Եւ ինչ, պահեց նա իւր երդումները մինչև այժմ։

—Մի անգամ էլ ներիր, Վարիա, մի անգամ, ինձ համար, հասկանում ես, ինձ համար։

—Վառվառէն, որ մինչև այժմ դեռ նայում էր դէպի դուրս, երեսը դարձրեց հօր կողմ։

—Ներիմ, պապա, ներիմ, ինչը ներեմ... դուէց նա վրդովված։—Միթէ նա կարող է ազատվել մի հիանդութենից, որ նրա մարմնի և արիւնի մէջ արմատացած է մշանջենապէս։ Դուք նրան չէք ճանաչում, պապա, և ես ցաւում եմ, որ դարձեալ խաբվում էք նրա խօսքերից։ Ես նրա առնձը կրկարողանամ պահել, ես... Ո՛չ, պապա, այդ իմ կարողութենից բարձր է։ Ինչ օգուտ, եթէ կարողանայի էլ մինչև անգամ նրան հպատակեցնել իմ կամքին. ինչ օգուտ, քանի որ իմ կեանքը դարձեալ ինձ համար տանջանք պիտի լինի։ Միթէ նա երեխայ է, իսկ ես—մայր, որ գիշեր-ցերեկ արթուն հսկեմ նրա վրայ, ամեն օր, ամեն ժամ աչքս նրանից չկհեռացնեմ, որ նա մի ծուռ քայլ չանի։ Եւ ո՞ւմ համար պիտի այդպէս տանջվեմ։ Միպանդրօնցօվի համար, որին առում եմ, որից ղղվում եմ, որին տեսնելն անգամ ինձ համար սարսափելի տանջանք է։ Ո՛չ, մի տպիպէք ինձ, պապա, ես նրան լաւ ճանաչում եմ։ Ես ուզում էի, որ նա իւր կամքով ապրէր, անէր այն, ինչ-որ իւր սիրտն ու խելքն էր ուզում։ Ուզում էի, որ նա ինքը կառավարէր իւր զգացմունքները, դրսպէր իւր թուլութիւնները։ Չեզաւ. նա արաւ այն, ինչ-որ կարող էր։ Ուրեմն, թող ես էլ անեմ այն, ինչ-որ կարող եմ։

—Խելօք ես խօսում, Վարիա, շատ խելօք ես խօսում։ Բայց այդ առածները դիտեմ ինչ տեղից ես սովորել։ Շատ կարելի է, որ քո կարդացած գրքերը ճշմարիտ են առում, բայց այդպէս չէ, Վարիա, գրքերի առածն ուրիշ է, կեանքի առածն—ուրիշ։ Միթէ

չէս հասկանում, որ հասարակութիւն կայ, խօսողներ կան, թշնամիներ ու բարեկամներ կան։

—Պապա, համաձայն եմ ձեզ հետ, դիտեմ, որ հասարակութիւնն ինձ բամբասում է։ Բայց մի՞թէ նա իրաւունք ունի պահանջելու, որ ես կրկին մանեմ այն դժոխքը, որտեղից դուրս եմ եկել...

—Գոնէ լինէ խնայկեր, սիրելի Վարիա, տեսնում ես,—յուզված ձայնով պատասխանեց Մինաս Կիրիլլիչը, ձեռով դարձեալ ցոյց տալով ալեզարդ գլուխը։

Վառվառէն երեսը շուռ տուեց, որ թագցնի իւր արտասուքը։ Հայրը խրախուսվելով, առաջ տարաւ իւր յորդորանքը։

—Եթէ ուրիշներն իսկական պատճառներն իմանային և յետոյ խօսէին, ես այսքան չէի տանջվիլ, հասկացիր, Վարիա։ Բայց ո՛ր մէկին հաւատացնեմ, որ մէկին, թէ Միքանդրոնցօվը վատ մարդ է, թէ մեղաւորը միմիայն նա է, թէ նա քո մի եղունգին չարժէ։ Ո՞վ է ուշադրութիւն դարձնողը, ո՛չ։ Դու ասում ես, թէ հասարակութիւնն իրաւունք չունի քեզ տիսկելու, որ կրկին այն դժոխքը մտնես։ Հասկանում եմ, Վարիա, քո ասածը, շատ լաւ եմ հասկանում։ Բայց ո՛ւմ կարող ես համոզել, թէ ոչ ոք իրաւունք չունի ուրիշի վրայ, թէ ոչ ոքի իրաւունքը չէ ուրիշների ընտանեկան գործերի մէջ խառնվիլը։ Հասարակութիւնն ասում է. ահա Աստծու հրամանը, քրիստոնէական պատուէրը և մարդկային օրէնքները, հպատակվիր նրանց, իրաւունք չունես չընդդատակվելու. կին ես, ասում է, պիտի ապրես եկեղեցական օրէնքով պսակված մարդուդ հետ։ Ահա, Վարիա, մարդիկ ինչ են պահանջում, և ուրիշ ոչինչ, ոչինչ չեն ուզում լսել. դու ես

մեղաւորը, թէ Միքանդրոնցօվը—այդ միևնոյնն է...

—Բաւական է, պապա, ես շատ ցաւում եմ միայն նրա համար, որ դուք իմ պատճառով ամեն օր ինքներդ ձեզ այդպէս տանջում էք։ Երանի թէ ես էլ իմ միւս քոյրերի և եղբայրների հետ մանուկ հասակումս մեռնէի, կամ ծնված չըլինէի։ Գոնէ այժմ թող Աստուած ձեզ ինձանից ազատի։

—Լռիր, Վարիա, այդ խօսքերով դու ինձ աւելի վշտացնում ես...

Մինաս Կիրիլլիչը սկսեց յուզված անցուդարձ անել սենեակի մէջ։ Մի քանի րոպէ հայր ու աղջիկ լուռ էին։ Ձեռով հայրը նորից սկսեց յորդորել աղջկան և, երբ տեսաւ, որ այլևս Վառվառէն ոչինչ չի խօսում, յայտնեց, թէ ինքը մտադիր է այսօր անպատճառ պատսպարանել Միքանդրոնցօվին։ Թող Վառվառէն շտապով մի պատասխան տայ. եթէ ինքը չի ուզում դրել, թող ասի, Մինաս Կիրիլլիչն ինքը կըգրի Միքանդրոնցօվին։

—Ես երբէք՛ դրիչ չեմ վերցնիլ նրա անունով,—պատասխանեց Վառվառէն հակիրճ։

—Ուրեմն, ես կըգրեմ,—ասաց Մինաս Կիրիլլիչը։

—Ի՞նչ։

—Ի՞նչ գրեմ, ասա,—գոչեց ծերունին, վերջապէս, համբերութիւնը կորցրած։

—Ոչինչ։

—Անկարելի է։ Ես կըգրեմ, որ դու համաձայն ես հաշտվել Ակիմ Աբրոսիմիչ Միքանդրոնցօվի, այսինքն քո օրինական ամուսնու հետ։

—Պապա, — արտասանեց Վառվառէն ազերբալի ձայնով։

Մինաս Կիրիլլիչը մի աթոռ վերցրեց, նստեց

Վաւվաւէի մօտ և նայեց նրա երեսին լուռ։

—Վարիա, ներիր,—ասաց նա, ձայնը ցածրացնելով,—դու մայր չունիս, ես քեզ համար և՛ հայր եմ, և՛ մայր, ուրեմն թող պարզ խօսեմ հետդ։ Առանց ամուսնու, Վարիա, մարդու կեանքը... կեանք չէ, հասկանո՞ւմ ես։ Ծղամարդի և կնոջ համար Աստուած օրէնքներ է դրել... հասկանո՞ւմ ես։ Վարիա, դու երիտասարդ ես, քսանուվեց տարիդ նոր է լրացել։

Վաւվաւէն երեսը ձեռներով ծածկեց և հազիւ լսելի ձայնով շշնջաց.

—Բաւական է, պապա, մի խօսէք այդ մասին... ես... թոյլ արարած չեմ...

Մինաս կիրիլիչը դարձեալ ոտքի կանգնեց։

—Վարիա, խնդրում եմ, տեսնո՞ւմ ես, նրա առնուով եմ խնդրում։

Այս ասելով, նա ձեռը մեկնեց դէպի սենեակի պատն, ուր քաշ արած էր նրա հանգուցեալ ամուսնի մեծադիր լուսանկարը։

Վաւվաւէն կրկին երեսը ծածկեց, որ թաղցնի աչքերի մէջ փայլող արտասուքն, և ոչինչ չասաց։ Այն ինչ՝ Մինաս կիրիլիչը, տեսնելով, որ Թանգադին մօր յիշատակին անգամ չի ազդում դառը վրայ, յուսահատվեց։

—Վարվարա Մինաեվնա,—գոչեց նա սրտմտութեամբ,—վերջապէս, ես հայր եմ, դուք որդի, պարտաւո՞ր էք յարգել իմ աղաչանքը, թէ չէ։

Այսպէս յոգնակի դէմքով սովորաբար Ծերունին իւր դառը հետ խօսում էր այն ժամանակ, երբ արդէն բարկացած էր լինում։

—Պապա, ազատեցէք ինձ, բայց մի ստիպէք նրա

երեսը տեսնել,—ասաց Վաւվաւէն, յուսահատութեամբ ձեռներն ուժգին սեղմելով իրարու։

—Ախերմախա աղջիկ, դուք ինձ անպատում էք,—գոռաց Ծերունին բարձրաձայն, ոտներն ուժգին զարկելով յատակին։

—Հայր...

—Լռիր, յանդուգն։

Այլ ևս յամառ դուստրը չկարողացաւ զսպել իրան։

Նա վեր թռաւ աթոռի վրայից, մոլոր քայլերով մօտեցաւ և երեսնիվայր ընկաւ դահաւորակի վրայ։ Նա սկսեց սաստիկ արտասվել։ Նրա դեղակաղմ թիկունքն ուժգին հեկեկանքից բարձրանում ու ցածանում էին։ Եւ այդ րոպէին նրա ճնշված կրծքից հատ հատ դուրս էին բղխում հեառեալ խօսքերը.

—Ես ձեզ ձանձրացրել եմ, գիտեմ։ Բայց ժամանակ տուէք... ես մի պաշտօն կըգտանեմ... Վարժուհի կըդառնամ... կար անել կըսովորեմ... իմ ձեռքի աշխատանքով կապրեմ։ Միայն, ի սէր Աստուծոյ, մի ստիպէք ինձ նրա հետ ապրել... ես սարսափում եմ... ես չեմ կարողանում սառնարիւն մտաբերել նրա հետ անցկացրած օրերս... Ոչ... անկարելի է... իմ դիմից վեր է... ես չեմ կարող հաշտվել...

Մինաս կիրիլիչը, մի տեղ արձանացած, լսում էր վշտացած սրտից հնչող այս դառն խօսքերը։ Նա գիտէր, որ այդ լոկ խօսքեր չեն, որ իւր դուստրն ընդունակ է գործելու այն, ինչ-որ ասում է։

Երբ Վաւվաւէի ձայնը խեղդվեց հեառզհեառ զօրանոց հեկեկանքից, յանկարծ Ծերունին ձեռով օդի մէջ մի յուսահատական շարժում գործեց։ Մի վայրկեանում բարկութեան արտայայտութիւնը ջնջվեց

նրա դէմքից։ Ծնողական խորին սէրը պատերազմում էր հասարակական պատուասիրութեան հետ։ Եւ առաջինը յաղթեց։ Հայրն արագ քայլերով մօտեցաւ հեռակեցող աղջկան և դրկեց։

—Վարիա, Վարինկա, այդպէս մի անիլ, դու երեխայ չես, որ լալիս ես... Բաւական է, գիտես, որ ես քո արտասուքը տեսնելու սիրտ չունիմ... քո լացն արտասվել է տալիս և՛ խեղճ մօրդ իւր գերեզմանի մէջ։ Վերկաց, Վարինկա, ներիր. լաւ, տեսնում ես, որ ես այլ ևս չեմ խօսում։ Ե՞ս, ես քեզանից ձանձրանամ... —Յաւիտեան։ Ո՛վ է յիշացել ինձ համար այս աշխարհի երեսին, որ քեզանից էլ զրկվիմ...

Նա երկու ձեռներով զգուշութեամբ բարձրացրեց դատեր գլուխը, դրկեց ու մի քանի ջերմ համբոյրներ դրոշմեց նրա ճակատին և արտասուաթաղ աչքերին։

—Հանգստացիր, որդի, տեսնում ես, որ հայրդ աղաչում է քեզ։ Լաւ, ինչ անեմ, յետոյ ինքդ կըմտածես և ինչ-որ խելքդ կասի, այն կանես։ Դէհ, այժմ գնա, երեսդ սառը ջրով լուացիր... գլուխդ կըցաւի, դու ջղային ես, կըհիւանդանաս։

Վառվառէն, աչքերը սրբելով, հանգստութեամբ աղաւեց հօր դրկից, վերկացաւ տեղից և տխուր նստեց աթոռի վրայ։

—Այդպէս, սիրելիս, հանգստացիր. մի՛թէ ես քո թշնամին եմ, որ վատ ցանկանամ։ Ո՛չ, Վառվառէ, ինձ դու դեռ չես ճանաչում...

Այս արտաշարժ տեսարանից յետոյ, Մինաս Կիրիլլիչն, արդարև, մի առ ժամանակ հանգիստ թողեց աղջկան և ոչինչ չէր խօսում Միանդրօնցօվի վերա-

բերութեամբ։ Սակայն Վառվառէն նկատում էր, որ հայրն, այդ օրից սկսած, աւելի մտախոհ է դարձել, թէև նրա յարաբերութիւնը տակաւին չէր փոխվում։ Ծերունին միայն առաջուանից աւելի յաճախ էր անից դուրս գալիս և առէպ առէպ Վառվառէին էս թանձում էր՝ իւր հետ միասին գնալ զբօսանելու։ Նա տանը միայնակ մնալ չէր կարողանում, լրագրներն անգամ առաջուայ նման չէին զբաղեցնում նրան։ Սիրում էր նա Վառվառէի հետ խօսել իւր անցեալի մասին, երիտասարդութենից զանազան անցքեր էր պատմում, թէ ինչպէս իւր հասարակ կրթութեամբ նա սկսել է օրըստօրէ առաջ գնալ կեանքի մէջ, թէ ինչպէս ինքն իրան համար ուժով ճանապարհ է հարթել։ Նա եղել է առաջ մի հասարակ գրագիր, յետոյ մի փոքրիկ գումարով տերունական մի փոքրիկ կապալ է վերցրել, հետզհետէ հարստացել է, յետոյ դարձեալ ազքատացել է և դարձեալ, Աստուծոյ կարողութեամբ, ոտքի է կանգնել։ Թէ հարիւր մանէթի փող է ունեցել, կէսը ծախսել է հարսանիքի համար, միւս կիսով գործերն է շարունակել։ Թէ յետոյ ինչպէս ամենքը սիրելիս են եղել նրան, օգնել են, բարձրացրել են նրա առևտրական վարկը նախ Մոզդոկում, ապա Մոսկվայում։ Ընտանեկան դժբաղդութիւնները—կնոջ և զաւակների վաղաժամ մահը—նրան յուսահատեցրել են. նա սկսել է զղվել իւր գործերից և թողել է փող վաստակելու պարապմունքը։ Այժմ, թէև նա հարուստ չէ, բայց ինչ է անում հարստութիւնը. Մոզդոկում երկու տուն ունի, և նրանց եկամուտը բաւական է, որ նա անդորձապրի իւր աղջկայ հետ, միայն թէ... աղջիկը...

Բայց այստեղ Մինաս Կիրիլլիչը կանգ էր առնում

և չէր չարունակում։ Երբեմն նա միայնակ գնում էր այրիի մօտ, երկար ժամանակ մնում էր այնտեղ։ Եւ Վառվառէն զղում էր, որ նա իւր ցաւերը պատմում է Նատալիա Պետրոշևային, քան որում Մինաս Կիրիկիչը միշտ այրիի մօտից վերադառնում էր աւելի թեթևացած սրտով, զուարթ դէմքով, աչքունքը բաց։

VI

Նոյն օրերը Ռոստամեանը, սեղանի մօտ նստած, զուր ճգնում էր իւր մտատանջութիւնը մոռանալ աշխատութեան մէջ։ Զարագուշակ պիշերից յետոյ, նա հանգստութիւն չունէր։ Զուր նա վճռեց, Նատալիա Պետրոշևայի պատմութիւնը լսելուց յետոյ, վերջ տալ իւր հոգևոյ պատերազմին, զուր երդվեց յաւիտեան մոռացութեան տալ Վառվառէին։ Ընդհակառակը, վերջինի կերպարանքն, անբաժան առուերի պէս, հետևում էր նրան ամեն տեղ և ամեն վայրկեան։ Նա ոչ միայն գործելու ոյժ և ցանկութիւն չէր զգում իւր մէջ, այլև մի տեղ խաղաղ նստել չէր կարողանում։ Սենեակների առաստաղը, կարծես, ճնշում էր նրա հոգին. առէպ առէպ նա դուրս էր գալիս պատշգամբ կամ փողոց և չուտով վերադառնում։ Մի ցանկութիւն նրա մէջ օրըստօրէ զօրանում էր—ինչպես և իցէ, ուր և իցէ, առանձին տեսնվել Վառվառէի հետ։ Եւ նա յուսով էր, որ քայլութիւն կունենայ երես առ երես խօսակցել անբաղդ կնոջ հետ նրա արդի վիճակի մասին և իւր «անկեղծ, եղբայրական» ցաւակցութեամբ մխիթարել նրան։ Դարձեալ երիտասարդական կոյր ինքնախաբէութիւն։

Բայց ծրտեղ Ռոստամեանը կարող էր առանձին տեսնել Վառվառէին։ Անմիջապէս այցելել նրան, երբ հայրը տանը չէ—կըլինէր յանդգնութիւն, գոնէ այսպէս էր կարծում Ռոստամեանը։ Օրական մի քանի անգամ նա պատշգամբի վրայ տեսնում էր Վառվառէի տխուր և խոհուն կերպարանքը։ Արդեօք, կամենում է նա վերջ տալ իւր երկդիմի կացութեանը, արդեօք, չի մտածում, որ մի չափազանց համարձակ քայլ է գործել հասարակական նախապաշարմունքների դէմ կամ մի գուցէ արդէն, զղջալով իւր արածի մասին, մտադիր է կրկին ընդունել առեալի լուծը։

Այս խորհրդածութիւնների մէջ Ռոստամեանը մի օր, տուն վերադառնալու ժամանակ, պատահեց Մինաս Կիրիկիչին։ Վերջինն կանգնած էր Դվարցօվայեա փողոցի մագազիններից մէկի առջև և, կարծես, նայում էր դէպի ներս։

—Դրացի, բարև,—ասաց Մինաս Կիրիկիչը, ձեռը մեկնելով Ռոստամեանին։—Այս յայտարարութիւնն էի կարդում,—աւելացրեց նա, մատով ցոյց տալով մի տպագիր մեծ թերթ, որ դրած էր մագազինի պատուհանում։—Վաղը բարեգործական նպատակով նուագահանդէս է, ուզում եմ Վառվառէի համար տոմսակ վերցնել. մեծ պաս է, թատրոն չկայ, իսկ նա երաժշտութիւն շատ է սիրում։ Դուք գնալու էք։

—Այո,—արտասանեց անգիտակցաբար Ռոստամեանը, որ մտադիր չէր որևէ նուագահանդէս գնալու։

Նրանք միասին մտան մագազին, ուր տովորաբար վաճառվում էին բարեգործական ներկայացումների համար տոմսակներ։ Մերունին վերցրեց առաջին կարգից երկու բազկաթոռ, իսկ Ռոստամեանն իւր

համար վերցրեց յեոին աթոռներից մեկը։ Դուրս գալու ժամանակ, տոմսավաճառ պարոնը, որի հետ Ռոստամեանը հեռատար ծանօթութիւն ունէր, մի քանի վայրկեան պահեց նրան։

—Ո՞վ է այդ ծեր մարդը,—հարցրեց պարոնը, հետաքրքրվելով։

Ռոստամեանն ասաց ծերունու ազգանունը։

—Մոզդոկցի չէ՞։

—Մոզդոկցի է։

—Աահ,—ձգձգելով արտասանեց տոմսավաճառը, ապա, դառնալով խանութում կանգնած երկու կարմրադէմ պարոններին, աւելացրեց.—չասացի՞ ձեզ, որ դա այն Փիրիչկինն է։

Աւելորդ հարցերից ազատվելու համար, Ռոստամեանը չտապեց դուրս գալ խանութից։ «Անշուշտ հայր ու աղջիկ խօսակցութեան առարկայ են դարձել բամբասաբեր Թիֆլիսում», ասաց նա իւր մտքում, համոզվով Մինաս Կիրիլիչին, որ հանդարտ քայլերով դիմում էր առաջ։

Հետևեալ օրն երեկոյեան Ռոստամեանը, մի թեթև ըրօսանք կատարելուց յետոյ, մտաւ հասարակական ժողովարան, ուր պիտի կայանար նուագահանդէսը։ Հասարակութիւնն արդէն հաւաքվել էր, իսկ Մինաս Կիրիլիչն և Վառվառէն բազմաթիւ հանդիսականների մէջ դեռ չէին երևում։ Նուագահանդէսը սկսվեց. դուրս եկաւ մի դեր օրիորդ, ինչ-որ սկսեց նուագել երկար ժամանակ։ Դահլիճը լիքն էր, շատերը կանգնած էին ոտքի վրայ և, որը թմրած դէմքով, որը կեղծ ուշադրութեամբ, որը ձանձրութեամբ—լսում էին նուագածութիւնը։ Իսկ Ռոստամեանն ոչ նայում

էր դէպի բեմ և ոչ լսում էր։ Նա անդադար մտիկ էր անում աջ ու ձախ, դռների կողմը։

Վերջապէս, առաջին ձախակողմեան դռներից ներս մտաւ Վառվառէն, ապա հայրը։ Անգքերի մօտ հաւաքված հանդիսականների միջից նրանք աշխատում էին դուրս գալ և հասնել բազկաթոռների առաջին կարգին։ Շատերն իրանց հայեացքը դարձրին դէպի Վառվառէի կողմ, և, երբ նա անցաւ առաջ, առաջին կարգերի կանայք ու օրիորդներ աջ ու ձախ կողմից դիտակներն ուղղեցին նրա վրայ։

Ի՜նչ խաղացին և ո՛վ խաղաց—Ռոստամեանը չիմացաւ։ Նա անհամբեր սպասում էր խաղամիջոցին, աչքերը դարձրած դէպի առաջին կարգն, ուր նստած էին հայր ու աղջիկ։ Դժբաղդաբար, գլուխների բազմութեան միջից, նա չէր տեսնում ոչ աղջկան և ոչ հօրը։

Նուագահանդիսի առաջին բաժինն աւարտվեց. հանդիսականներն անցան միւս դահլիճները։ Նախադաւթի մէջ Ռոստամեանը պատահեց Փիրիչկինեներին։

Մինաս Կիրիլիչը հետաքրքիր աչքերով դիտում էր հասարակութիւնը։ Վառվառէն կանգնած էր նրա մօտ։ Ռոստամեանը մօտեցաւ, բարևեց և սկսեց խօսքն բազմութեան մէջ շրջել նրանց հետ։ Նրանք անցան սեղանատունն, և այստեղ ծերունին անյայտացաւ։

Առանձնանալով Վառվառէի հետ, Ռոստամեանին պիտեց սովորական ամօթխածութիւնը։ Քանի մի տարակ հարցերից յետոյ նուագողների և երգողների մասին, նա վճռեց և լռեց։ Արդեօք, անծանօթ լինելն էր պատճառ, ընտանեկան գաղտնիքը, թէ մի այլ բան, յայտնի չէր, բայց ամենքի ուշադրութիւնը դրաւել էր Վառվառէն։ Եւ այս աւելի պղտորում էր

Ռոստամեանին։ Այ ու ձախ նայելով, նա ամաչում էր այն հետաքրքիր աչքերից, որ, չար ոսոխի պէս, դիտում էին չորս կողմից։

—Վին արիս։

—Կաճ տակայեա։

—Ո՞վ է։

—Վատ չէ։

—Ընդհակառակը, համակրելի է։

—Ես հասանում եմ։

—Դատարկ բան է։

Ահա թէ անդադար ինչ էր լսում Ռոստամեանը։ Հասարակութեան մէջ երևեցաւ Նատալիա Պետրովնայի ալջիկը—Կատօն։ Ռոստամեանը բարևեց նրան հեռուից և, մոռանալով դէմքաբաց լինելը, ձեռը տարաւ դէպի վեր՝ իբր գդակը վերցնելու և աւելի չը-փոթվեց։ Կատօն հազիւ հաղ իւր փոքրիկ և դոռոզ դլուխը շարժեց ի պատասխան Ռոստամեանի խոնարհ և վառվռէի քաղաքավարի ու հպարտ բարևին։

Քանի մի հետաւոր ծանօթ երիտասարդներ, որոնց ուրիշ ժամանակ Ռոստամեանն հանդիպելիս կամ բարևում էր կամ—ոչ, աչխատում էին նրա ուշադրութիւնն իրանց վրայ դարձնել։ Նրանք կանգ էին առնում, դլուխ էին տալիս և, կարծես, ուզում էին անամօթաբար մօտենալ։ Այն ինչ՝ վառվռէն միանգամայն անտարբեր էր թէ դէպի շրջապատող հասարակութիւնն և թէ դէպի հետաքրքրվող աչքերը։ Յառն, անվրդով, հպարտ դլուխը բարձր պահած, նա անց ու դարձ էր անում, զանազան անկապ հարցեր տալով Ռոստամեանին Թիֆլիսի մասին։ Յանկարծ նա կանդնեց սեղանատան մի անկիւնում, ուր ոչ ոք չկար, և անսպա-

սելի կերպով հարցրեց.

—Ինչո՞ւ դուք այսօր տխուր էք, պարոն Ռոստամեան։

—Նոյնն ես էլ կամենում հարցնել ձեզ ձեր մասին,—պատասխանեց Ռոստամեանը։

—Ի՞մ մասին։

—Այո։ Ես ոչ միայն այսօր էք տխուր, այլև, նեկնեցէք, դուք միշտ այդպէս էք։ Մինաս Կիրիլիչն ես-կ ասում էր, թէ դուք սիրում էք երաժշտութիւնն և հասարակութիւն, այն ինչ՝ ես հակառակն եմ տեսնում։

—Հասարակութիւն... այո, սիրում էի մի ժամանակ... պատասխանեց Վառվռէն թախծալի ձայնով և ապա, հայեացքը մի կողմ դարձնելով, հազիւ լսելի ձայնով աւելացրեց.—բայց այդ վաղուց էր...

Այդ րոպէին մի նորաձև հագնված երիտասարդ և մի ճաղատ դլխով ու տգեղ դէմքով տղամարդ անցան նրանց առջևից, խիստ ուշադրութեամբ մտիկ արին մի քանի վայրկեան և հեռացան, ծիծաղելով և իրար բոթելով։ Ռոստամեանը ճանաչեց ճաղատ դլխով տղամարդին։ Դա Նատալիա Պետրովնայի փեսան—Կատոյի ամուսինն էր։

—Բաւական հետաքրքիր են ձեր Թիֆլիսցիները,—ասաց Վառվռէն։

—Նոյն իսկ չափից դուրս, այդ պատճառով էլ նրանք չատերին տեսնելի են,—պատասխանեց Ռոստամեանը։

—Գուցէ հէնց այդ պատճառով դուք հետս էք պահում ձեզ նրանցից, այսպէս է,—յարեց Վառվռէն, ժպտալով։—Չէ որ դուք կամաւոր բանդարկեալի կեանք

էք վարում։ Ես Մոսկվայում ծանօթ էի մի հայ ուսանողի հետ, որն իսկ և իսկ ձեզ պէս առում էր հասարակութիւնը։

—Ինձպէս, Վարվարա Մինաեվնա... միթէ ես երբ և իցէ ասել եմ, թէ առում եմ հասարակութիւնը։

—Գոնէ շատ էլ չէք սիրում։ Բայց ինչ փոյթ, քանի որ առանց հասարակութեան ևս կարողանում էք աւելի օգտաւէտ կեանք վարել։

Ռուսաամէանը ժպտաց և, գլուխը փոքր ինչ ցած թեքելով, արտասանեց։

—Ես չեմ յանդգնիլ այդ ասել, Վարվարա Մինաեվնա։ Միայն ուղիղն այն է, որ հասարակութիւնն ինձ ճնշում է. ես անտովոր եմ նրան, ես ինքս ինձ կորցնում եմ ամբոխի մէջ։ Հաւատացնում են, որ այս—եսական և կիսավայրենի մարդկանց յատկութիւնն է։ Գուցէ ճիշտ է...

Ձանգակը հնչեց, հանդիսականները ծանր քայլերով դնացին դահլիճ, սեղանատունը փոքր առ փոքր դատարկվեց։ Վառվառէն և Ռուսաամէանը յապաղում էին դնալ։ Երկուսն էլ ցանկանում էին միասին մնալ և շարունակել խօսակցութիւնը։ Ռուսաամէանը միայն նոր էր համարձակութիւն ստացել մտերմաբար խօսելու. նա միայն նոր էր մտադիր ակնարկութիւն անելու Վառվառէի դրութեան մասին։ Եւ նա անպատճառ կամենում էր, որ Վառվառէն այսօր լսեր նաև, թէ իւր գաղտնիքը յայտնի է նրան։ Ո՛րպիսի սիրով նա մտածում էր խրախուսել նրան, այժ նեղչընչել, պաշտպանել հասարակական նախապաշարմունքների դէմ, արդարացնել նրա համարձակ քայլը։

Բայց ահա ծերունին, ահա նրա բարի և պատկառելի դէմքը։ Զարմանալի փոփոխութիւն. երբ Ռուսաամէանն երես առ երես հանդիպում էր Մինաս Կիրիլիչին, մոռանում էր վերջինի հայրական բռնակալութիւնն, որ այն դիշեր այնչափ վրդովեցնում էր իրան։ Միթէ այս պատկառելի, բարեդէմ մարդը կարող է բռնակալ հայր լինել։ Կարող է, արդեօք, քանի որ նրա յարաբերութեան մէջ դէպի իւր դուստրը դգացվում է այնքան խորին սէր ու գգուանք։ Ո՛չ, չը պիտի շտապել մեղադրելու այդ ծերունուն, առանց տեղեակ լինելու եղելութեան մանրամասն հանգամանքներին։

Ռուսաամէանն, որ բոլորից ուշ մտաւ դահլիճ, հասարակութեան ուշադրութիւնը չդիմանդարելու համար, իւր տեղը չդնաց, այլ ամբողջ ժամանակ կանգնած մնաց դռների առջև։

Այս անգամ Ջութակի վրայ նուագում էր մի երիտասարդ։ Ցետոյ դուրս եկաւ մի ուրիշը, կուրծքը դուրս ցցեց, գլուխը բարձրացրեց և սկսեց անգիր կարդալ մի ինչ-որ ոտանաւոր տխուր բովանդակութեամբ։ Նա ոգևորվեց, ձեռը դարկեց կրծքին և աղերսալի դէմքով դարձաւ հասարակութեանը, ցածր ձայնով մի քանի խօսք արտասանեց, գլուխ տուեց և հեռացաւ։

Բեմը դատարկվեց, դահլիճում դղրդոցը հանդարտվեց, սիրեց մի խուլ չչնչիւն։ Երևեցաւ մի մարդակազմ, բարձրահասակ կին, սպիտակ հագուստով և Գլուխը զարդարած երկու մեծ սպիտակ արուեստական գեղեցիկ ծաղիկներով։ Բարձրացան միահամուռ ծափահարութիւններ, լսվեցին «bravo»-ներ։ Դա մի բաւական նշանաւոր օտար երգչուհի էր, ժամանակա-

ժորապէս եկել էր Թիֆլիս և այդ օրը բարեհաճել էր մասնակցել բարեգործական երեկոյթին։

Երեկոյթի կարգադրիչներից մէկն երգչուհուն նուիրեց թարմ ծաղիկների մի ահագին փունջ։ Տիրոջ խորին լռութիւն։ Ռոստամեանը նայեց գլուխների այդ խիտ բազմութեան վրայ—ճաղատ գագաթներ, սևամազ, սափրակ ծոծրակով հայկական գլուխներ, կանացի զարդեր, անընդհատ շարժվող հովհարներ և այլն—այս բոլորը, հարիւրաւոր մոմերի լուսաւորութեան ներքոյ, նրա աչքում ներկայացնում էր մի ահնդմէջ խառնուրդ։

Դաշնամուրի մի թեթև նախերգանքից յետոյ, երգչուհին գլուխը յետ թեքեց և աչքերը յառեց առաստաղին։

Նրա ձայնը հնչեց նախ, կարծես, կոշտ եղանակով, ապա մեղմ, ներդաշնակ, յետոյ բարձր ու բարձր։ Եւ նրա առողջակազմ ու լայն կրծքից սկսեցին բղխել մեռաղաձայն խառն հնչիւններ, որ անլսելի էին դարձնում դաշնամուրի ձայնը։

Այս անգամ միայն Ռոստամեանի ուշադրութիւնը դրաւուեց դէպի բեմ։ Սկզբում երգչուհու ձայնը նրա վրայ ոչինչ ազդեցութիւն չէր անում։ Յետոյ նա աշխատեց այդ անկանոն հնչիւնների մէջ գտնել այն դիպուածական զօրութիւնն, որ նոյն րոպէին գրեթէ կաշկանդել էր հարիւրաւոր ամբոխի լսելիքը։ Յանկարծ երգչուհին մի ձեռը դրեց կրծքին, գլուխը մեղմիկ ծռեց դէպի աջ ուսն և, աչքերը գարձնելով դահլիճի ծայրը, աղերսալի դէմքով արտասանեց մի տուր մեղեդի.

«Ո՛հ, անքուն գիշերներ, դառն արցունքներ»...

Այստեղ Ռոստամեանն իւր կրծքի տակ զգաց մի քաքախուժ։ Կարծես, երգչուհին այս խօսքերն արտասանում էր Ռոստամեանի համար, կարծես, այդ աղդու ձայնի իւրաքանչիւր ելևէջը ըղխում էր նրա սրտից։

«Անքուն գիշերներ... դառն արցունքներ...» կրկնեց երգչուհին։

Եւ այս անգամ Ռոստամեանին թուաց, թէ երգչուհին ինքն էլ անբաղդ է և թէ նա ողբում է իւր կորցրած երջանկութիւնն, և խղճաց նրան։

Երգն աւարտվեց, դահլիճը կրկին գղրդաց ծափահարութիւններով և բարձրաձայն bravo և bis—գոչիւններով։ Երգչուհին դուրս եկաւ, գլուխ տուեց, ամբոխն աւելի բարձր գոռաց և ստիպեց նրան մի կարճ կտոր էլ երգել։ Այնուհետև, ոլքան հրաւիրեցին, այլ էլ ոչինչ չերգեց, միայն ուրախ և հպարտ ժպտալով, աջ ու ձախ գլուխ էր տալիս ու գնում։ Նրա ուրախ ժպիտը Ռոստամեանին խիստ անախորժ թուաց։ Ի՛նչպես... նա, որ մի քանի վայրկեան առաջ այնպիսի զգայմունքով ողբում էր իւր «անքուն գիշերների և դառն արցունքների», յանկարծ ծիծաղում է... Կո՛րած ոգևորութիւն, մեքենայ դարձած սիրտ...

Նուագահանդէսը վերջացաւ, բայց երեկոյթը—դեռ ոչ։ Հասարակութեան մեծագոյն մասը մնաց, ոմանք դաշնամուրի նուագածութեամբ պարելու, ոմանք պարողներին նայելու, ոմանք ընթրելու, իսկ չատերը... հէնց այնպէս։

—Կրկամենա՞ս ընթրել,—հարցրեց Մինաս Կիրիլչին իւր աղջկան։

—Տանը կարող ենք ընթրել,—պատասխանեց Վառվառէն։

Ռոստամեանը խուռն բազմութեան մէջ, նեղ նահապետական կանգնած, աչքերով որոնում էր Վառվառէին։

—Սահեան Գրիգորիչ,—լսեց նա մի կանացի ձայն և յետ նայեց։

Դա Կաոն էր, որ մի երիտասարդի հետ կանգնած էր պատի մօտ։

—Բարև,—ասաց Կաոն, մի խորամանկ ժպիտ խաղացնելով իւր բարակ և հրոյ չրթունքների վրայ,—այս որ քամին է ձեզ այսօր այստեղ բերել։

—Իմ սեպհական ցանկութիւնը,—ասաց Ռոստամեանը բաւական սառն եղանակով։

—Բայց որտեղ էր մինչև այժմ այդ ձեր սեպհական ցանկութիւնը, պարոն Ռոստամեան,—շարունակեց Կաոն հեգնօրէն,—որտեղ էր, որ դուք ամբողջ բարեկենդանին մնից դուրս չէիք գալիս։ Հիմայ, խօմ, մեծ պաս է, ճգնաւորների համար ապաշխարելու օրեր են։

—Ես կարծում եմ, տիկին, իմ բացակայութիւնն այնքան աննշան մի հանգամանք է, որ ոչ ոքի համար նկատելի չէ, ուրեմն և՝ իմ ներկայութիւնն էլ չի կարող հետաքրքրելի լինել,—պատասխանեց Ռոստամեանը, ներքուստ վիրաւորված խորամանկ Կաոյի արհամարհական ակնարկութենից։

—Բայց, անմեղս էք, ինձ համար խիստ հետաքրքրելի է ձեր ներկայութիւնն այստեղ։ Որտեղ է ձեր «դամա»-ն։

—Ո՞ւմ մասին էք հարցնում, տիկին։

—Իբր թէ չէք հասկանում... ձեր հարևանի մասին եմ հարցնում... ախ, ինչպէս է նրա ազգանունը...

Սպասեցէք, սպասեցէք, ես շատերի անուններըը չեմ կարողանում յիշել, և հարկաւոր էլ չէ, բայց ազգանունը, ախ, մադամ... մադամ, ինչպէս է, Տէր Աստուած, նրա մարդու ազգանունը, հա, մադամ Միզանդրօնցօվ... Ա՛հա, նա ինքն իւր հօր հետ։ Գնանք նրանց մօտ. ինչպէս երևում է, նրանք, առանց Սահեան Գրիգորիչի, ախորում են։

Բայց Ռոստամեանը չըմօտեցաւ Վառվառէին։ Կաոն, թողնելով նրան, գնաց վերջինի մօտ, հեռից քարշելով և իւր կավալերին։ Դա այն նորաձև հագնուած երիտասարդն էր, որ Կաոյի ամուսնու հետ առաջին խաղամիջոցում անցաւ և Վառվառէի վրայ խեթ-խեթ նայեց։

Կաոն, բարևելով Մինաս Կիրիլիչին ու «մադամ Միզանդրօնցօվին», հարցրեց, արդեօք, չեն ախորում «մեծ պատեան» երեկոյթում։ Նորաձև հագնված պարոնը սկսեց միջամտել խօսակցութեան, աշխատելով Վառվառէի ուշադրութիւնն իւր վրայ դարձնել, զանազան հրապուրիչ ձևեր տալով իւր կրծքին, դէմքին, նոյնպէս և անդադար ոլորելով իւր բարակ ընչացքը։ Նա ձգտում էր ծանօթանալ նորեկների հետ։ Սակայն «անգութ» Կաոն նրա լուռ խնդիրն անուշադիր թողեց, այնպէս որ նորաձև երիտասարդը չըհասաւ իւր նպատակին։ Նրա բարկութիւնն աւելի դրդուեց, երբ Կաոյի մարդը մօտեցաւ, և կինը ծանօթացրեց նրան Ներոնեան ու սրա աղջկայ հետ։ Վառվառէն ակամայ իւր մտանների ծայրերը միայն տուեց Կաոյի ամուսնուն։ Իսկ Մինաս Կիրիլիչը, թէև սեղմեց նրա ձեռն պատաքին քաղաքավարութեամբ, բայց ներքուստ—նոյնպէս ակամայ, թէ հօր և թէ աղջկայ վրայ Կաոյի կո-

ղակիցը հէնց առաջին անգամից անախորժ տպաւորութիւն գործեց։

Կառոն հարցնում էր Վառվառէի կարծիքը յայտնի երգչուհու մասին, կանխապէս ինքը պարսաւելով նրան, որպէս դի ցոյց տայ իր «գեղարուեստական» ճաշակի նրբութիւնը։ Նորաձև երիտասարդը, տեսնելով, որ Վառվառէն միանգամայն իրան անուշադիր է թողնում, հեռացաւ խմբից։ Նա մօտեցաւ մի երիտասարդ տիկնոջ—թէ օրիորդի—և սկսեց քաղցրախօսել, ժպտալով ու ծիծաղելով։ Կառոն նայեց նրա վրայ, հովհարի ծայրն առաձնելով թեթև կրծեց և յետոյ, թողնելով Վառվառէին, մօտեցաւ իր կավալերին։ Իսկ ամուսինը վազեց Կառոյի եռևից...

—Իսմ չես ձանձրանում, Վարիա,—հարցրեց Մինա Կիրիլիչը։

—Աւ այժմ ոչ,—պատասխանեց Վառվառէն։

—Շատ ուրախ եմ։

Մօտեցաւ Ռոստամեանն, և նրանք, երեքը միասին, անցան ժողովարանի հիւրասենեակին, որ զարդարված էր արևելեան ճաշակով։ Մերօնին, հեռաքրքրութիւնից դրդված, մտաւ հիւրասենեակին կից քնարերգարանը, Վառվառէին թողնելով Ռոստամեանի հետ։

Վառվառէն նստեց առաձկական բազմոցներից մէկի վրայ, Ռոստամեանը—նոյնպէս, մի քայլ տարածութիւնով նրանից հեռու։ Դահլիճում պարում էին. լսվում էր դաշնամուրի ձայնն և պարողների ոտների տրոփիւնը։ Հիւրասենեակում, բացի ժողովարանի մշտական յաճախորդ մի քանի ծերերից, կային և՛ մի քանի երիտասարդ կանայք ու աղամարդիկ։

Երևեցաւ դարձեալ Կառոյի ամուսինն, այս անգամ միայնակ, և կրկին անցաւ Վառվառէի ու Ռոստամեանի առջևից։ Ռոստամեանն երեսը դարձրեց մեա կողմ, կարծելով, թէ նա կամենում է մօտենալ իրան։ Իսկ նա մի քանի քայլ հեռու կանգնեց և սկսեց, իբրև թէ, մոխիկ անել կանթեղի մօտ, պատի վրայ քաշ արած իւղանկարին։

Վառվառէն բաւական ուրախ էր երևում։ Նա սկսեց հաղորդել Ռոստամեանին իր տպաւորութիւնը, որ առացել էր երեկոյթից։ Ռոստամեանը լսում էր արտաքուստ ուշադրութեամբ, բայց ներքուստ նրա միտքը զբաղված էր միմիայն իր խօսակցի դրութեամբ։ Երբեմն նա իր վրդովված հայեացքը դարձնում էր Կառոյի ամուսնու վրայ, որ աննչմարելի կերպով փոքր առ փոքր մօտենում էր նրանց։

—Այդ մարդն ինչ երկար ժամանակ նայում է նկարին,—նկատեց Վառվառէն, ակամայ ուշադրութիւն դարձնելով Կառոյի ամուսնու վրայ։

—Ախ, նա նկարին չի նայում, Վարվարա Մինաեվնա,—պատասխանեց Ռոստամեանը։

—Բայց ինչո՞ւ է կանգնել այդտեղ. նայեցէք, մօտենում է մեզ։

—Մօտենում է, և գիտէք ինչու։

—Ինչո՞ւ։

—Որ ականջ դնի մեր խօսակցութեանը։

—Մի՞թէ հետաքրքրելի է նրա համար ուրիշների խօսակցութիւնը։

—Իր համար—չեմ կարծում, բայց նա ուղարկված է իր կնոջ կողմից։

—Կնոջ կողմից։

—Այո՛։

—Ուրեմն նա մեզ լրտեսում է իր կնոջ հրամանով:

—Ինչպես տեսնում էք, այո,—պատասխանեց Ռոսամմանը,—նա ինքը հաւատարիմ ամուսին է,—աւելացրեց նա իսկոյն, օգտվելով առիթից, որ մի քայլ մօտենայ խօսակցութեան ցանկալի առարկային:

—Տէրը նրա հետ, թող լրտեսի, բայց ինչ պէտք է լրտեսի...

Այստեղ մի քանի վայրկեան խօսակցութիւնն ընդհատուեց:

—Իրաւունք ունի... արտասանեց յանկարծ Վառվառէն խուլ ձայնով,—ես արժանի եմ բամբասանքի:

—Ի՞նչու, — հարցրեց Ռոսամմանը, տակաւին այնպէս ձևանալով, որ իրը չը հասկացաւ Վառվառէի ասածը:

—Նրա համար, որ ամեն տեղ բամբասում են ինձ,—պատասխանեց Վառվառէն,—չէ՞ որ, պարոն Ռոսամման, ես թողել եմ իմ օրինաւոր ամուսնուն...

Այդ րոպէին կառոյի ամուսինը մի քայլ ևս մօտեցաւ: Բայց Ռոսամմանն և Վառվառէն խօսում էին ոչ այնքան բարձր ձայնով, որ նա կարողանար պարզ մի բան լսել: Տիրեց այն րոպէն, երբ ամենայարմարն էր Ռոսամմանի համար՝ պատայայտելու իր ցաւակցութիւնը Վառվառէին: Բայց յանկարծ նա ակամայ կորցրեց իր սառնութիւնը, հետևաբար և՛ չկարողացաւ ասել այն, ինչ-որ հոգեկան համեմատաբար խաղաղ դրութեան ժամանակ խորհել էր: Եւ նա միայն կարողացաւ արտասանել.

—Թող բամբասեն, Վարվարա Միխաեվնա, այո,

առաջ նա կարծում էր, թէ այդ մի անցողական զգացմունք է: Իսկ այժմ... Այժմ այլ ևս ուշ էր թւում նրան, այլ ևս նրա ուժերը տակաւ էին զսպելու այն, ինչ-որ այնպէս օրըստօրէ զարգանում էր նրա մէջ զարմանալի արագութեամբ:

Ճիշտ, միթէ նա նոր է ճանաչում Սաֆիանոսին, միթէ նրա երևակայութիւնը վաղուց չէր ստեղծել վերջինին: Միթէ Վառվառէն չէր, որ տարիների ընթացքում հոգով որոնում էր մի այդպիսի հեզ պատկեր, առողջ հոգի և աշխարհի գեղեցկութիւններից և անառակութիւններից զերծ, անապական սիրտ: «Ահա նա», անդիտակցաբար ասաց Վառվառէն ինքն իրան այն օրն, երբ «նա» բնակարանը ցոյց էր տալիս: Եւ, արդարև, դա «նա» էր: Բայց ուր էր նա մինչև այժմ, ինչու՞ ճակատագիրն երևան հանեց նրան այն ժամանակ, երբ արդէն ուշ է, երբ Վառվառէն արդէն կապված—կաշկանդված է ստրով ու ձեռքով: Արդեօք, նախախնամութիւնը կամենում է նրան փորձել: Ինչու՞, միթէ նրա դժբաղդութեան չափը դեռ չի լրացել: Միթէ բաւական չէ և՛ ծերունի հօր տառապանքը Վառվառէի պատճառով, որ նրա միակ մխիթարութիւնն է:

—Հայր, պրծում ես, արդեօք, թէ ինչ յանցաւոր մի զգացմունք է տանջում քո աղջկան այս րոպէ,—դառնագին չընչում էր բորբոքված երիտասարդ կինը:

Այո, հէնց նոյն րոպէին, երբ միամիտ ծերունին իր սենեակում գուցէ երազում է, որ դուստրը կընկնի ոտքի հաշտվի իր նախկին դրութեան հետ:

—Ի՞նչ... Ես հաշտվիմ Միքանդրոնցօվի հետ,—դարձեալ չընչաց Վառվառէն,—երբէք, երբէք...

Չէ որ Վառվառէն ամենայն կերպ աշխատում էր ուղղել նրան, որ անուղղելի է, որ ապականված է մինչև ոսկորների ծուծը։ Սակայն ինչով վերջացաւ նրա համբերութիւնը, ինչ հետևանք ունեցաւ նրա ամուսնական մոլի հաւատարմութիւնը։ — Ունեցաւ աւելի վատթար հետևանք, քան դուք եք—եթէ Վառվառէն հետևէր այն բազմաթիւ կանանց օրինակին, որոնք իրանց մարդկանց համաօրինակ ամուսնական անարդութիւնն անարդութեամբ են պատժում։ Բայց չէ որ նրանք ճարպիկ են, գիտեն իրանց խղճի առջև պայմաններ դնել, իսկ Վառվառէն... Կարող էր մտածել անդամ այս տեսակ վրիժառութեան մասին, քանի որ նրա ամուսնական դժբախտութիւնները բնաւ չէին կարող նոյնը թելադրել, ինչ-որ թելադրում է շատերի խիղճը։ Նա աւելի դիւրին և աւելի բարւոք համարեց ազատութիւն տալ ամուսնուն, թողնել նրան իւր սեռական կամքին։ Այժմ Տէրը նրա հետ, Վառվառէն այլ ևս ոչինչ չունի նրա դէմ, թող ապրի, ինչպես կամենում է։ Այժմ Միքանդրօնցօվը կարող է ազատ համարել իրան մինչև անդամ Վառվառէի ատելութենից։ Արդէն ամեն մի կապ խախտված է «յաւիտեան» նրանց մէջ։

Վառվառէն նստեց անկողնակալի վրայ, կրկին վերկացաւ և կրկին սկսեց անցուդարձ անել, ձեռները երբեմն չփելով և երբեմն կրծքին դարսելով։

Նա գիտէր, որ Ռոստամեանն իրան օրիորդ էր համարում, ուստի դիտմամբ էր, որ նա իւր դրութիւնը պատմեց Նատալիա Պետրովնային, համոզված լինելով, որ վերջինը իսկոյն իւր լսածը կըպատմի Ռոստամեանին։ Այսպիսով նա մտածում էր նախապատրաստել մոլորված երիտասարդին, որ սա այլ ևս դադրի իրան հետամուտ լինելուց։

Այժմ Ռոստամեանին յայտնի է նրա դրութիւնը. Վառվառէն մինչև անդամ ինքն այս երեկոյ առաջին անգամ պարտաւորութիւնն արաւ նրան, թէ ինքն ամուսնացած է և ամուսնուց բաժանված։

—Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ նա չի ղղում ինձանից, իմ այս դրութիւնից... Բայց... ո՛չ, այս երեկոյ նրա աչքերի մէջ աւելի ջերմ սէր էի կարդում, քան մինչև այսօր։

Սակայն, սպասիր երևակայութիւն, ճի՞շտ է, որ Ռոստամեանը սիրում է Վառվառէին, մի գուցէ նրա սիրտը խաբում է, կամ մի գուցէ Ռոստամեանը միայն խղճում է նրան։ «Խղճալ, ինձ, ինչո՞ւ,—գոչեց Վառվառէն բառական բարձրաձայն։—Ո՛չ, ամենևին, ես խղճալի չեմ. չեմ ուզում ես նրա կարեկցութիւնը, չեմ ուզում և ոչ ոքի կարեկցութիւնն, և ոչ քոնը, պապա»,—աւելացրեց նա...

Այս ծանր խորհրդածութիւնների ներքոյ նա երկար ժամանակ չէր կարողանում հանգստանալ։ Գիշերն անցնում էր. արդէն հինգերորդ ժամն էր։ Վերջապէս, նա յոգնած նեարդերով, խառն մտքերով պառկեց։ Բայց ինչ... վերմակը, կարծես, այրում էր նրա մարմինը. նա քնել չէր կարողանում։ Եւ ինչպես քունը մօտենար մի կնոջ, որի բաղդն այնքան մօտիկ էր իրան և այնքան հեռու...

VII

Առաւօտեան ժօա տան ու մէկ ժամին Կաոօն նկաւ իւր ժօր ժօա։ Նրա եաւից, կռնատակին մի թղթէ կապոց դրած, ներս մաա ամուսինը, մանաւոր կապալառու Լազար Մակարիչ Բեզիրգանովը։

Այս մարդու ագէզ դէմքն և աւելի ագէզ բնաւորութիւնը, առողջ կլորիկ մարմինն և կարմիր թշերն արտայայտում էին խորին գոհունակութիւն կեանքից։ Կարելի էր հաւատալ ասել, թէ այդ գոհունակութեան գլխաւոր պատճառն այն էր, որ նրա ագէզութիւնը բաղդ ունէր ուղեկցել մի բաւական դեղեցիկ կողակցի, այսինքն փոքրահասակ Կաոօին։

Իրաւ, Կաոն Լազար Մակարիչի կեանքի բարձրադոյն գուարճութիւնն էր։ Երեակ նրա հետ կից առկից թէ փողոցներում, թէ մագազիններում և թէ հասարակական ու մանաւոր հանդէսներում—ահա, բոլի փողից, ինչումն էր կայանում Մակարիչի գոյութեան քաղցրութիւնը։ Նա պարծենում էր իւր կնոջով, նրա դեղեցկութեամբ, թէև այդ դեղեցկութիւնը շատերի համակրութիւնը չէր դրաւում. պարծենում էր և՛ նրա ծանօթներով, որոնց թիւը բաղում էր։ Շատ անգամ, երբ որ և է հասարակութեան մէջ խօսվում էր այս կամ այն փոքր իշատէ յայտնի անձնաւորութեան մասին, Լազար Մակարիչն ակնյայտ պարծանքով ասում էր.

—Կինս նրա հետ ծանօթ է։

Կամ.

—Երբէկ կինս նրան հրաւիրել էր ճաշի։

Լինելով աննշան և մութ անցեալի տէր, իսկ ներ-

կայում, ասենք թէ, բաւական հարուստ, սակայն մի հասարակ վաճառական, Լազար Մակարիչը, հարկաւ, պիտի դնահատէր Կաոօին, որի մայրն իշխանական ցեղից էր, որի հայրը պաշտօնեայ էր և որն երդում էր, նուագում էր և հասարակական հանդէսներում պարում էր ընտիր «կավալերների» հետ։

Այս բոլորն երկնից պարգևած մի անփոխարինելի բաղդաւորութիւն էր նախկին հալաբարցու համար, որ մի ժամանակ մարդկանց մէջ որոշվում էր լոկ «քաչալ Լազարէ» մականունով։ Հէնց վերջին ժամանակներում և շատերն այս մականունով էին կոչում նրան, բայց հեռուից-հեռու, ոչ երես առ երես։ Հակառակ դէպքում, յանդգնողը կրպատժվէր Կաոյի զօրաւոր լեզուից։ Անախորժ մականունը Մակարիչի ճակատին տիշելու արտօնութիւնը տակաւին պահում էր ինքը Կաոն։ Եւ պիտի ասել, որ հէնց միայն այս արտօնութիւնը բաւական էր, որպէսզի Կաոն տոկպէր Մակարիչին՝ մոռանալ իւր բնական «զգուելի ժլատութիւնը», ինչպէս ասում էր Կաոն, մոռանալ—միմիայն կնոջ զմահաճութիւններին յագուրդ տալու համար։ Արդարև, Լազար Մակարիչն իւր հարստութիւնը չէր խնայում Կաոյի զարդ ու պչրանքի համար։ Եւ նոյն իսկ պլրի Նատալիան այս պատճառով բաւական յարգում էր իւր փեսային, թէև մտքում նրան շատ էլ արժանաւոր ամուսին չէր համարում, քանի որ, նրա կարծիքով, Մակարիչը բոլորովին «անկիրթ» էր, Կաոյի պէս «կրթված» կնոջ համեմատութեամբ։

Ինչ վերաբերվում է այն բանին, թէ Թիֆլիսում պղծաա ու պլրի զբաղնչները յաճախ ապրում են իրանց հարուստ փեսաների հաշուով, այս կողմից Լա-

զար Մակարիչն ապահով էր։ Նախ, Նատալիա Պետրոշնան չքաւոր չէր. նա, դիտենք արդէն, իւր ամուսնուց ժառանգած ունէր սեպհական տուն և ինքն ու որդին ապրում էին այդ տան եկամուտով։ Երկրորդ, նա հպարտ էր իւր փեսայի վերաբերմամբ։ Բանական էր, նրա կարծիքով, որ Կատոյին պահել էր առանց որ և է օժիտի. այդ մի դժուար բան էր Թիֆլիսի նման քաղաքում, ուր փեսացուները ձեռք են բերվում փողով, բաւի բուն նշանակութեամբ։ Ուսոի շատ անգամ, փողի կարօտութիւն ունեցած ժամանակ, այրին բարւոք էր համարում «ձեռապարա» վերցնել Յոսոտամեանից, որ միշտ տալիս էր ուրախութեամբ, քան թէ Լազար Մակարիչից, որ մինչև ձեռը դէպի դրպանը տանելը, յօնքերը կիտած, մի րոպէ մտածում էր։

—Բարով էք եկել Լազար Մակարիչ,—այս խօսքերով դիմաւորեց այրին իւր փեսային պատշգամբի ծայրում։

—Եկայ, վերջապէս, Տէ՛ր, ախրճում էիք առանց ինձ, Նատալիա Պետրոշնա,—դոչեց Լազար Մակարիչը, թեքվելով, որ համբուրէ զոքանչի փափուկ ձեռը։

—Ինչ չէ։ Ե՞րբ էք եկել։

—Մէկել օրը։

—Լա՛ւ փեսայ էք,—յանդիմանեց այրին,—մէկել օրն եկել էք, այսօր էք միայ բերել ինձ։

—Մէկել օրը գաղրած էի, չըկարողացայ գալ. երէկ էլ Կատոն կանդնեց, թէ գնանք կօնցերտ։ Խօմ գիտէք, Նատալիա Պետրոշնա, որ ես Կատոյիս խօսքից չէի կարող դուրս գալ։ Երէկ ցերեկով էլ խիստ շատ գործեր ունէի։ Ուղիղն եմ ասում, Կատո։

—Ձշմարիտ է։ Բայց, տես, մամա, քեզ համար

ինչ նոր-նոր համբաւներ ենք բերել երէկուայ կօնցերտից։ Դեռ սպասիր, կըպատմեմ։ Լաւրօ, կապոցը բաց արա ու գնած կտորը ցոյց տուր մամային, տեսնենք, հաւանո՞ւմ է։

Լազար Մակարիչը, սպիտակ թաշկինակով լերկ ճակատը սրբելուց յետոյ, բաց արաւ կապոցը, հանդիսաւոր կերպով դուրս բերեց մի ասուեայ կտոր և տուեց Նատալիային։

—Ի՞նչ լաւն է, ի՞ճ, ի՞ճ, ի՞ճ,—դոչեց այրին, պարզ-մեխանագոյն ծաղկանկար նուրբ կտորը բանեցնելով դէպի լուսի դէմ։

—Լազար Մակարիչ Բեղիրգանօվին իւր Կատոյի համար երբէք վատ կտոր չի առնիլ,—ասաց Կատոյի ամուսինը պարծանքով և ձեռը մեկնեց, որ մամի ծայրով չօշափէ իւր կողակցի այտը, բայց զգաստից ամաչեց և յետ քաշեց։

—Ո՞վ պիտի կարի,—հարցրեց այրին,—խօմ, հիմայ պատկամօտ է, չվեյկանները խիստ շատ գործ ունին։

—Շատ հոգս եմ անում նրանց գործի մասին,—դոչեց Կատոն արհամարհանքով։—Ապրի Լազրօն, մեկի տեղ—երկու, երեք կըվճարի, և, ով ասես, մի քանի օրում կըպատրաստի։

—Մէկ էլ, երկու էլ ու տատն էլ աւելի կըտամ, Կատո ջան,—ասաց Լազար Մակարիչը, ներքուստ դըժգոհ, արտաքուստ ուրախ ժպտալով։—Փոդն ձեմ համար եմ աշխատում, որ քեզ համար էլ խնայեմ։ Դու մի՛ն ասա, Կատո ջան, որ ես մոռացել եմ քեզ համար Բաթումից լաւ-լաւ բաներ բերել։

—Դու միշտ մոռանում ես,—հեգնօրէն նկատեց Կատոն։

—Էհ, ինչ նորութիւն էք բերել կօնցերթից,— հարցրեց այրին հետաքրքրութեամբ։

—Հա, մոռացայ. նորութիւն և ինչ նորութիւն, մամա,—դոչեց Կատօն, գլուխը խորհրդաւոր կերպով շարժելով։—Նասիր, պատմեմ։

Այրին և Լազար Մակարիչն, որ մինչև այժմ կանգնած էին, տեղաւորվեցին բազկաթոռների վրայ—Մակարիչն իւր կողակցի մօտ, այրին դէմ ու դէմ։

—Առաջ-առաջ դու ինձ ասա, մամա, քո այդ կենդանիդ, այդ քո գոված կինոօյիդ անունն ինչ է։

—Սաենան Գրիգորիչ... խօմ հարիւր անգամ հարցրել ես, Կատօ։

—Ես քեզ ասել եմ, մամա, որ այդ տեսակ կռնների անուննները մոքումս չեմ պահում։ Շատ հարկաւոր է էլ, ինչպես է այդ քո խելօք Սաենան Գրիգորիչը, լաւ է, ուրախ է։

—Ի՞նչպէս։

—Հը՛մ... արտասանեց Կատօն, խորհրդաւոր հայեացքով նայելով մօր երեսին,—բաս քէֆը լաւ է էլի։

—Էհ, ասա, ինչ-որ ասելու ես, ինչ ես պատէպատ գցում ինձ,—դոչեց այրին անհամբերութեամբ։

—Աաեմ. քո այդ գոված կռօն սիրահարվել է։

—Ո՞վ, Սաենան Գրիգորիչն, ում վրայ,—դոչեց այրին զարմացած։

—Ո՞ւմ վրայ... այ, այն մարդուց փախածի, ինչ է նրա անունը, տէր Աատուած... հա, մադամ Միքաէլօվի վրայ։

Այրին մի խոշոր հարցական հայեացք ձգեց աղջկայ երեսին։

—Զարմանում ես, մամա, աչքովս եմ տեսել ու ականջովս լսել։ Այսուհետև էլ չասես, թէ Կատօյի լեզուն չար է։ Լսիր։ Երէկ նրանք հայր ու աղջիկ կօնցերտումն էին։ Ո՛ւ այդ ճգնաւորդ էլ այնտեղ էր։ Ես ու Լազրօն նստած էինք երկրորդ կարգում, պատի տակ. մարդուց փախածն, իւր հօր հետ, նստած էր առաջին կարգում. դա էլ, քո այդ գովածն էլ, նրաստած էր մեզանից մի քանի կարգ հեռու։ Դա մեկ էր անում նրան, նա էլ դրան, երկուսն էլ ոչինչ չէին լսում կօնցերթից, իսկ ես ու Լազրօն ծիծաղում էինք։ Ձշմարիտ եմ ասում, Լազրօ։

—Ճշմարիտ է, ճշմարիտ է,—վաւերացրեց Լազրօն։

—Ցաւդ, ինչ անէնք մտիկ էին անում, այդտեղ ինչ սիրահարվելու նշան կայ, ախ Կատօ, Կատօ,—ասաց այրին, գլուխը յանդիմանօրէն շարժելով։

—Մամա, լսիր ու յետոյ ինձ յանդիմանիր։ Սիրահարվելն էլ այնպէս կըլինի, խօմ այնքան մարդկանց մէջ չէին ընկնելու իրար վզովը ու պաչպչվելու։ Ցաւդ... երկար ժամանակ միասին մաս էին գալիս, աղջիկը փախչում էր հօրից, խօսում էին, Տէր Աաուածի, խօսում էին, տաքացած, աչքերը վառված, կարմրած։ Սուտ եմ ասում, Լազրօ, չէին խօսում։

—Շատա,—պատասխանեց Լազրօն։

—Ես Լազրօին ասացի. «Լազրօ, մի գնա, Թագուն կանգնիր նրանց մօտ ու ականջ դիր»։ Դէ, հիմայ Թող Լազրօն ինքն ասի, թէ ինչ է լսել...

—Էհ, Թող նրանց, ի տէր Աաուածոյ, Կատօ, ինչ մեր գործն է այդ,—ասաց Լազար Մակարիչը, կնոջ Թախանձանքից ազատվելու համար։

—Քեզ բան եմ հարցնում, պատասխանիր,—դոչեց Կատօն բարկացած։—Ի՞նչ լսեցիր։

—Ո՛չինչ,—պատասխանեց Լազար Մակարիչը կատակի ձևով։

—Ինչպես թե ոչինչ, դժվա՛ր ես, ինչ է,—բացականչեց Կատոն, ծուռ-ծուռ նայելով ամուսնու երեսին։

—Այսինքն, Կատիւշա, ուզում էի ասել, որ մի խելօք բան չեմ լսել, դիվի ծրախ-պրախ բաների վրայ էին խօսում։

—Ինչ ո՞վ է հարցնում, յիմար էին խօսում, թէ խելօք, դու ասա այն, ինչ-որ լսել ես։

—Աաֆմ. լա՛ւ, ասեմ, ապասի՛ր... էհ՛... մոռացել եմ, Կատո, Աստուած վկայ, մոռացել եմ։

—Ա՛խ, դո՛ւ չէիր, որ այս դիշեր ասում էիր, թէ լսեցի, որ մէկն ասաց. «Կեանքս տանջանք է», միւսն էլ. «Ես ձեռք եմ վերցրել իմ մարդուց... գնանք այս տեղից, հեռանանք» և այլն և այլն։ Դու չէի՞ր, Լազրո, որ ասում էիր, թէ մէկմէկու ձեռը թագուն սեղմում էին։ Հ՞րմ, հիմայ ինչ պատահեց քեզ, որ մոռացար։

—Մի թէ ես այդպէս եմ ասել, Կատո,—հարցրեց Լազար Մակարիչը զարմացած։

—Ուրեմն, ես սո՛ւտ եմ ասում։

—Արևդ վկայ, Կատո, չեմ յիշում։ Է՛հ, մի և նոյնն է, ասա սերտահարված են, պրծա՛ւ գնաց...

—Դու յիմար ես, Լազրո, շատ յիմար ես, միշտ հարկաւոր բաները մոռանում ես։ Բայց, մի և նոյնն է, դու մոռացել ես, ես չեմ մոռացել, ես էլ իմ ականջովս լսել եմ ու աչքովս տեսել նրանց ասածն ու արածը։ Ինչ օգուտ ունեմ ես, որ մատային խաբեմ։ Հա՛, ինչ էի ասում,—շարունակեց Կատոն, կատարեալ ազատութիւն տալով իւր բորբոքված երևակայութեանը,—հա՛, ես, մամա, քո պատմածը պատմեցի մադամ Սա-

զանդարօվին, նա էլ պատմեց իւր եղբօր կնոջը, յետոյ մէկը՝ միւսին, մէկը՝ միւսին, ամենքը սկսեցին մտիկ անել նրանց վրայ։ Ով ասես, ծիծաղում էր քո այդ խելօք կենդոլիդ վրայ, թէկուզ չատերն էլ չէին ճանաչում։ Խեղճն այնքան անկիրթ է, որ հասարակութեան մէջ մանգալու ձևն էլ չի իմանում. շուտ շուտ դիպչում է անցնողներին։ Սա ու նա, ծիծաղելով, ինձ ասում է. «Ձեր մօր մօտ կենդոլը, բացի իւր հետ ման եկողից, այստեղ ոչ օրի չի տեսնում, սիրահարված է»։ Դէհ, այժմ, մամա, ինքդ ասա, ինչ պատահեց այդ տղին, որ մինչև հիմայ տարէնը մի քանի անգամ հանդէսներ չէր գնում, հիմայ տանը չի կարողանում նստել։ Սիրահարված է, հաւատա՛, Աստուած վկայ, սիրահարված է, թէ դա և թէ նա, երկուսն էլ։ Բայց դա մեզ վրայ է սիրահարվել, մեզ վրայ, Ծէր Աստուած, Դու հեռու պահես մեզանից... Ձի դո՛ն...

—Եթէ իմ ձեռքում իրաւունք լինէր, իսկոյն կախ կըտայի այդպիսիներին,—աւելացրեց Կատոն։

—Ես կախ չէի տալ, մատներովս կըխեղդէի,—յարեց Լազար Մակարիչը։

—Կինը մարդուն թողել է, բաւական չէ, օտար քաղաքներ է փախել, բաւական չէ, հիմայ էլ ուզում է մի ուրիշին ձեռք դցի, որ յետոյ նրան էլ թողնի ու փախչի։ Մամա, ինչ ուզում ես ասա, ես կեանքումս կարող չէի երևակայել, որ կնիկարմատը կարող է այդպէս վիշանալ։

—Ես առաւել ազամարդը,—աւելացրեց հաւատարիմ ամուսին Լազար Մակարիչը։

—Տղամարդն էլի, ասենք, այնքան մեղադրելի չէ, բայց կնիկարմատը... թո՛ւ... գոչեց Կատոն։

—Ճշմարիտ է,—ասաց Լազար Մակարիչը։

—Անպիտաններ։

—Անպիտաններ,—կրկնեց Լազար Մակարիչը։

—Ես այսուհետև նրանց ոչ մեկին ձեռ չեմ տա՛լու, մամա, թեկուզ դու ինձանից նեղանաս։

—Ես էլ,—միացավ իր կնոջ վճռին Հաւասարիմ ամուսինը։

—Երեսներն էլ չեմ ուզում տեսնել,—ավելացրեց Կատոն։

—Ես էլ,—շշնջաց «քաչալ Լազարեն», քայլ առ քայլ հետևելով իր սիրելի կողակցին։

—Սպասեցեք, սպասեցեք,—ընդմիջեց, վերջապես, զարմացած, Նատալիա Պետրոսյանն։—Կատո, ինչ ես վռազում. ոմն է իմանում, շատ կարելի է, դու անմեղ տեղը կասկածում ես, շատ կարելի է նրանք հենց այնպես, ծանոթներ են։ Ինչ կուզե—լինի, ես էլի չեմ հաւատում, որ թե Ստեփան Գրիգորիչն ու թե Վարվարա Մինաեվնան մի անխելքութիւն անեն։

—Ինչո՞ւ չես հաւատում, դու որտեղից ես նրանց ճանաչում։

—Ստեփան Գրիգորիչին, ես չեմ ճանաչում, Կատո. չորս տարի է ինձ մօտ բնակվում է։ Ըհ, Կատո, ես նրան լաւ եմ ճանաչում. նա շատ խելօք մարդ է, ուսում առած է։ Վարվարա Մինաեվնան էլ խելօք է. նա էլ ուսում առած է։ Երկուսն էլ լաւն ու վատը հասկանում են։ Նրանք այնպիսի բան չեն անիլ, Կատո, դու սխալվում ես։

—Հա հա հա՛,—սրտի խորքից բարձրաձայն ծիծաղեց Լազար Մակարիչը,—ուսում առած են, հա հա հա՛։ Ա՛խ, Նատալիա Պետրոսյա, դուք չէք իմա-

նում, որ հիմիկուայ ժամանակում ինչ-որ վատ-վատ բաներ ասէք ուսում առածներն են անում։ Այ ձեզ օրինակ, Դուրդինեանը, ճանաչում էք, խօմ, լաւ էք. Թիֆլիսում նրա պէս կրթված, ուսում առած մարդ չկայ։ Խոպրեմ, ասէք, ինչո՞ւ աշկարայ այն բանն արաւ... ինչո՞ւ մարդկանցից չամաչեց։ Է՛հ, մամա, էլի ամօթ ու պատկառանք ինձ նման հասարակ, տգէտ մարդկանց մէջ է ծնացել, թէ չէ՝ ուսում առածների երեսում մեռած չկայ։

Այրին, յայտնի փաստի մասին լսելով, չդիմակառակեց։ Բայց նա այնքան յարգում էր իր կենդանեկին, որ տակաւին կամենում էր պաշտպանել նրանց իր աղջկայ և փեսայի յարձակումների դէմ։

—Դուք զուր էք Վառվառէին մեղաւոր համարում, որ նա իր մարդուց բաժանվել է,—ասաց նա, բաւական ժամանակ լռելուց յետոյ։—Ես քեզ պատմել եմ պատճառը, Կատո. ինչ անէր խեղճը, քանի որ Միքանդրօնցօվը գաղանից էլ վատ է եղել։

—Սո՛ւտ է ասում,—տաքացաւ Կատոն,—սո՛ւտ է ասում։ Հենց ասենք, թէ վատ մարդ էր Միքանդրօնցօվը, ինչ անենք, նա խօմ չէր սպանում կնոջը։ Շատ կանայք կան, որ իրանց մարդկանց չեն հաւանում, ուրեմն, քո ասելով, ամենքն էլ պիտի թքեն ու փախչեն իրանց ծնողների մօտ։ Ցեռո՛յ... վերջն ինչ կլինի...

—Ճշմարիտ է, Կատուշա,—դարձեալ մէջ մտաւ Լազար Մակարիչը,—շատ ճշմարիտ է, մարդ պէտք է աշխատի, որ մարդկանց մէջ չբխայտառակվի, հենց որ խայտառակվեց, բանը պրծաւ, հոգոյն հանգուցելոց... Ի՞նչու պիտի իմ տան, իմ ընտանիքի գաղտնիքներն ուրիշների խօսակցութեան առարկայ դառնան... Հը՛մ,

լաւ չեմ ասում։ Եթէ ցաւ ունիս, դլուխդ քաշ ամէն ցաւն, էլ ինչ ես հոչակում ամբողջ աշխարհում։ Լաւ չեմ ասում, Կաոօ, հը՞մ։

—Օրինակ, մէկն ես, մամա,—աւելացրեց Կաոօն,—շատ ժամանակ հէնց ինքս Լազրոյից նեղանում եմ,—հարցրու իրանից, ինքն էլ կասի։—Նեղանում եմ, որ ինձ հետ մարդավարի չի վարվում, կարող եմ ասել որ շատ ու շատ դաղանաբար է վարվում։ Խօսք է եկել, ասում եմ, մի նեղանար, Լազրօ,—դարձաւ նա Լազար Մակարիչին, որ, դլուխն ալ ուսի կողմը ծռած, աչքի տակով կէս հեդնաբար և կէս յանդիմանօրէն մոխիկ էր անում կնոջ երեսին։

—Ախ, Կաոօ, Կաոօ, ինչ ասեմ,—արտասանեց Լազար Մակարիչը, հառաչելով,—դու ու քո Աստուածը, ասա, պատահել է, որ ես եղունգիս չափ նեղացրած լինիմ քեզ։

—Սուս, Լազրօ, էլ մի խօսիր, մեր ցաւը թող մենք իմանանք,—ընդհատեց Կաոօն, դլուխը շարժելով, և շարունակեց.—Հիմա, դու ասա, մամա, ես այսպիսի մարդուն պիտի թողնեմ ու վազեմ քո մօտ։ Լաւ, այս որ անեմ, ինչ կասեն, ինչ կըխօսեն ամբողջ քաղաքում, չէ որ կըխայտառակեն ինձ էլ, նրան էլ, քեզ էլ, եղբօրս էլ, ով դիտէ, մեր բոլոր աղդականներին էլ...

—Բայց, ի հարկէ, ոչ ես մազու չափ վատ կըվարվիմ Կաուչային հետ, ոչ էլ նա ինձ կըթողնի ու կըփախչի,—լսացրեց Լազար Մակարիչը։—Այնպէս չէ, Կաուչա,—դարձաւ նա իր ամուսնուն և դարձեալ կամեցաւ իր հասակի ցուցամատի ծայրը չփել նրա ծնօտին, դարձեալ ամաչեց Նատալիա Պետրովնայից

և դարձեալ խոհդն ձեռը յետ քաշեց երկիւղով։

Այս եղանակով խօսակցութիւնը մի փոքր ևս շարունակվեց։ Մարդ ու կին քննեցին, քննադատեցին և, վերջ ի վերջոյ, համոզեցին Նատալիա Պետրովնային, որ նա զդոյշ լինի և թոյլ չըտայ, որ իւր տան մէջ հասարակութեան աչքին ընկնող մի այնպիսի նշանաւոր երևոյթ տեղի ունենայ, որի մասին այնպէս համոզված խօսում էր Կաոօն։ Ինչի դէտ վազ է, թող Նատալիա Պետրովնան դուրս ըերի իւր անից Ռոստոաժեանին էլ ու Քիրիչչիեվներին էլ։

Այրին, թէև յայտնեց, որ ինքը չի հաւատում Կաոյի ասածին, բայց առաջուց իսկ մուխի կերպով զդում էր, որ իրաւ իսկ կենդանների մէջ կայ ինչ-որ փոխադարձ համակրութիւն։ Այժմ հանդամանքները փոքր առ փոքր սկսեցին պարզվել նրա աչքում, մանաւանդ մտաբերելով Ռոստոաժեանի այլայլվին այն երեկոյ, երբ այրին պատմում էր նրան Վառվառէի դրութիւնը։ Սակայն այրին այդ այլայլման մասին ոչինչ չասաց Կաոյին և չըյայտնեց, թէ ինքը բոլորովին հաւատում է Ռոստոաժեանի և Վառվառէի սիրային յարաբերութեանը։

Կաոօն իւր կապոցը առեց Լազար Մակարիչին։ Հաւատարիմ ամուսինները դուրս եկան փողոց։

—Լազրօ,—դարձաւ Կաոօն իւր ամուսնուն,—դու ինձ խայտառակում ես։

—Ինչո՞ւ, հոգիս։

—Միթէ ինքդ չես հաւատում, որ նրանք սիրահարված են։

—Էէ, նրանց հէրն էլ...

—Չէ, դու շատ անբարոյական ես,—պնդեց Կաոօն,—եթէ մարդ լինէիր, ինձ չըպիտի հակառակէիր։

—Բայց, Կաասիչա, ախար ես քեզ ուրիշ կերպ սասցի երեկ։

—Մի և նոյնն է, իմ սխալը դու կարող էիր յեւոյ սանն ինձ ասել և ոչ թէ մօրս մօտ։

—Ներողութիւն, Կաասօ,—ասաց Լազար Մակարիչը, վիզը ծռելով սարկօրէն, ինչպէս մի ժամանակ սովոր էր ծռել «մուշտարու» առջև, երբ գովում էր իւր փոքրիկ խանութի վրաց ապրանքը։

—Դու մի համարձակվիր ինձ հակառակել, լսե՞ւմ ես, Լազրօ։ Աւում եմ այօ—դու էլ ասա այօ, ոչ—ոչ, թէ չէ՝ ճանաչե՞մ ես ինձ։

—Էհէ, լաւ, քո հօրն ողորմի, շատ էլ մի բարկանար, արի, գնանք, բուլվարում մի քիչ մանք դանք, Եղանակը խիստ լաւն է։

—Այդ կապոցը ձեռի՞դ պիտի մանդ դաս հետս,—ասաց Կաասն կեղծ զարմանքով։

—Ի՞նչ կըլինի։

—Ամօթ է, սո՛ւս։ Տար տուն, յետոյ եկ։ Բայց ոչ, ոչ, մի գար, ես պիտի գնամ Սօփիոյի մօտ՝ մի քանի նօտաներ վերցնելու։

—Ես էլ կըգամ հետդ։

—Ի՞նչ, ուզում ես ինձ խայտառակ անել, այդ կապոցը տուն հետս մանացնելով։ Աստուած սիրես, թող բաղաղիանի հին սովորութիւններդ։ Գնա տուն, ծառաներին մոխիկ արա։

—Ա՛յ խորամանկ Կաասօ, դու ինձ խաբում ես,—ասաց Լազար Մակարիչը կատակով։

Կաասն մի կատաղի հայեացք ձգեց նրա վրայ։

—Ախտս որ փողոցումն ենք, թէ չէ—ես քեզ ցոյց կըտայի... Անամօթ...

Մարդը արանջալով գնաց տուն, որ գտնում էր Սօլօլակի փողոցներից մէկում։ Կինը դիմաց դէպի մի այլ կողմ։ Փողոցի ծայրում նա յանկարծ հանդիպեց այն նորաձև հագնված, երեսը սափրած, բարակ ընչացքով և համարձակ դէմքով տղային, որից նա չէր բաժանվում Նաւագահանդիսի երեկոյ։ Նրանք քաղցրութեամբ բարևեցին միմեանց...

Եւ ամուսնական առաքինութեան նախանձախընդիր կնոջ դէմքը մի վայրկեանում փոխվեց։ Կաասն դարձաւ ուրախ, զուարճախօս, և նրա սևորակ աչքերի մէջ սկսեց փայլել մի կայծ, հրապուրիչ—ոմանց համար, հրիչ—այլոց համար։ Նա երիտասարդի հետ միասաւ գբօսնող ամբոխին։ Փողոցային ընդհանուր աղմուկի մէջ նա լսում էր ուղեկցի երկիմաստ դուրճախօսութիւնը, ներքին հաճութեամբ—իւր համար և արտաքին սառն լրջութեամբ—ուրիշների համար։

Չէ՞ որ նա բացառութիւն չէ, ոչ առաջինն է և ոչ վերջինն առաքինութիւն կոչված քօղի տակ պատպատված «քաղաքակիրթ» հասարակութեան մէջ։ Ապա ուրեմն, թող «քաչալ Լազարէն» առ ժամանակ կռվի խոհարարի հետ, թէ ինչու նա կերակուրների վրայ չափից դուրս շատ իւղ է գործածում և ապատաւորին յանդիմանի, թէ ինչու շաքարը գողանում է։ Իսկ յետոյ իւր ճաշատ գլխով և ոտեղ բերանով, փոյթ չէ, թող ճաշի սեղանի մօտ մի ժամ ևս աւելորդ ապտսէ իւր գեղեցիկ կողակցին...

Այն ինչ՝ Նաասալիա Պետրովնան, ծնալով միայնակ, սկսեց լրջօրէն խորհրդածել Ռոստամեանի ու Վառվառէի յարաբերութեան մասին։ Նա, հարկաւ, Ռոստամեանի սիրոյ դէմ չէր լինիլ, եթէ միայն Վառվառէն օրի-

որդ լինելը։ Ի՞նչ անենք, մի տղայ մի աղջկայ կարող է սիրել, իսկ ամուսնացած կնոջ—ոչ. այդ աննելելի է, մեղք է, յանցանք է։ Բայց շատ կարելի է Ռոստոմ-մեանը սիրած է եղել Վառվառէին հէնց առաջին օրից, երբ դեռ չէր իմանում, թէ նա պսակված է։ Իսկ այժմ նրան յայտնի է, որ Վառվառէն մարդունի, ուրեմն, հաւատալի չէ, որ Ռոստամեանը դարձեալ շարունակի սիրել նրան։

Այսուհետ յանկարծ այրվի խելքը սկսեց այլ ուղղութեամբ գաղել։ Լա՛ւ, ասենք, թէ Ռոստամեանի և Վառվառէի սրտերն այժմ իսկապէս այնպէս կպել են միմեանց, որ բաժանել դժուար է. ինչ կըլինի նրանց վերջը, պէտք է տանջվին յաւիտեան, թէ կարող են մոռանալ իրար։

Այս կէտի վրայ այրվին երկար մտածեց, մտածեց և վերջը, ձեռով օդի մէջ մի յուսահատական շարժում գործելով, լսելի ձայնով արտասանեց.

—Խիստ դժուար օրէնքներ են մեր օրէնքները։

Ինչ անի խեղճ Վառվառէն. վերցրել են, ուժով պահել են մի անպիտան, մի փչացած մարդու հետ ու ասում են. «տանջվիր նրա ձեռքում, ուզում ես, չես ուզում—տանջվիր»։ Քանի քանի խեղճ կանայք է ճաշնաչում Նատալիա Պետրովնան, որ այնպէս տանջվում են իրանց մարդկանց ձեռքում, ինչպէս Վառվառէն է տանջվել։ Բայց արի ու նրանց ցաւը հասկացրու ուրիշներին։ Հիմայ Վառվառէն թողել է մարդուն ու հեռացել, ինչ պիտի անի... էլի եթէ պառաւ լիներ, էհ, ոչինչ, սև օրերը մի կերպ կըտաներ իւր հօր տանը։ Բայց նա քանի ու վեց տարեկան ջահել կնիկ է... պիտի յաւիտեան զրկված մնայ աշխարհի երջանկութենից։

—Խիստ դժուար են մեր օրէնքները,—կրկնեց Նատալիա Պետրովնան և, հառաչելով, վերկացաւ տեղից ու գնաց Վառվառէի մօտ։

VIII

Զարչարանքի շաբաթն էր։ Քաղաքի ամբողջ բնակչութիւնը զբաղված էր քրիստոնէական նշանաւոր տօների նախապատրաստութեամբ։

Մինաս Կիրիլլիչն, երկուշաբթի օրից սկսած, ամեն առաւօտ, թէյ խմելու ժամանակ, հարցնում էր.

—Վառվառէ, ամենքը պատրաստվում են՝ ուրախ Զատիկ վայելելու, մենք չըպիտի ուրախանանք։

Բայց տօների մերձաւորութիւնը, կարծես, բնաւ չէր շարժում Վառվառէի սիրտը։ Նա միշտ իւր հօր հարցին տալիս էր մի և նոյն պատասխանը.

—Պապա, ինձ համար ոչինչ պատրաստութիւն հարկաւոր չէ, ինչ կամենում էք, արէք։

—Իսկ ես ուզում եմ, որ դու էլ, ամենքի պէս, ուրախանաս այդ օրերը։

Դուստրը, պարզ հասկանալով հօր խօսքերի ներքին իմաստը, մի խորին հառաչանք էր արձակում կրծքից ու լռում։

Այն ինչ՝ Մինաս Կիրիլլիչը, ընդհանուր հոսանքից մղվելով, ցանկանում էր Զատիկը դիմաւորել ուրախ սրտով։ Նա ամեն օր դուրս էր գալիս և տեսնում էր, որ ամենքը շարժման մէջ են։ Փողոցներում տիրում էր անսովոր կենդանութիւն, շուկաներում խռնվում էր գնողների և վաճառողների ահագին բազմութիւն։ Եւ ինչպէս նա ջերմ սրտով չըցանկանար

խառնվել ամբոխին, մանակցել ընդհանուրի ուրախութեանը, քրիստոնէական ոգին հանդիսել իբրև քրիստոնեայ, այնպէս, որպէս մի ժամանակ նա հանդիսացել էր Մոզդոկում և Մոսկվայում։

Բայց ինչպէս ոգևել և ճամ հետ, քանի որ նրա ամբ միակ կենդանութիւնը, նրա կեանքի միակ մխիթարութիւնն անտարբեր է դէպի ընդհանուրի ուրախութիւնն ու տրամութիւնը։

Ամեն կողմից Մինաս Կիրեևիչը դժբաղդ էր զգում իրան այն օրից, երբ վառվառէն բաժանվել էր ամուսնուց, բայց երբէք այդ դժբաղդութեան լուծն այնքան ծանրացած չէր նրա վրայ։ Մարդկանց ուրախութիւնն աւելի դառնացնում էր նրա սիրտը։ Բոլոր քրիստոնեաների մէջ նա զգում էր, որ միայն ինքն և վառվառէն կազմում են բացառիկ ու անջատված մի մարմին և ոչինչ կապ չունին հասարակական ամբողջութեան հետ։

Հոգեկան այս տրամադրութեան մէջ նա մի տարօրինակ մխիթարութիւն էր զգում, երբ դրսում տեսնում էր զանազան թշուառ և մուրացիկ արարածներ։ Իսկ այդպիսիների թիւը, ոտների պատճառով, փողոցներում օրէցօր աւելանում էր, մանաւանդ Գալավինսկիյ պրոսպեկտի վրայ, ուր ամեն օր զբօսնում էր ծերունին։

Եւ ինչ տեսակ խեղճեր, խեղանդամներ էին սփռված այդտեղ։ Ահա մէկը, զուրկ երկու թևերից, փայտի պէս ցցվում է սրա ու նրա առջև։ Ահա միսը, առանց ոտների։—Խեղճութեան զարմանալի հնարագիտութիւն։ Անդամալոյծ արարածը, երկուսի վրա խարէն, ուղի հատ երկաթեայ ոտներ է շինել—չորս

չորս իւրաքանչիւր կունտ ծնկան տակ—և, երկու ձեռներում մի-մի փայտ բռնած, շրջում է տան տանտրով։ Նա, կարծես, բաւական է համարում իւր ծանր դժբաղդութիւնն, որպէս զի չարժի անցորդների դութը. նա ոչ ոքի առջև չի աղերսում, լուռ անցնում է ընդարձակ մայթով, և ոտրմած մարդիկ իրանց սև լուման ձգում են նրա ափի մէջ։

Բայց ահա մի աւելի դժբաղդը։ Մի փոքրիկ սայլակի վրայ, ցնցոտիների մէջ, դանվում է մի ինչ-որ սև, կեղտոտ բան։ Դա մարդ է. երևում են միայն ծերունական նիհար, կաշին կուչ-կուչված մի դէմք և երկու կիսամաշ աչքեր։ Առջևից սայլակը քաշում է մի առողջ պատանի, իսկ ետևից մղում է մի աւելի առողջ երիտասարդ։—Երկու մարդ տանում են երրորդին, որ չորրորդից ողորմութիւն մուրան։ Մէկն անդամալոյծ ծերունի է, և նրա անօգուտ գոյութիւնը դիմակաւորում է երկու զոյդ առողջ ձեռների ծուլութիւնը։ Մօտենում է նրանց մի երիտասարդ մուրացկան, կարմիր երեսով, մի ոտն առողջ, միսը գօսացած, մերկ, վարդագոյն։ Նա յանդիմանում է սայլակը քշողներին, հայհոյում է նրանց «ծուլութիւնը», փախչում է ճանապարհից և ինքը, ոտոստալով, ցցվում է ոտրմած անցորդի առջև։

Մինաս Կիրեևիչն ոչ ոքի չի մերժում. նա ինքը մօտենում է և իւրաքանչիւրի ափի մէջ մի-մի սպիտակ դրամ դնում։ Թշուառների գոհունակ դէմքը մի րոպէական մխիթարութիւն է շնորհում նրա վշտացած սրտին։ Բայց անցնում է րոպէն, և նրան դարձեալ տիրում է սովորական տխրութիւնը։

Ա՛խ, որքան նա բաղդաւոր կըլինէր, եթէ Վառ-

վառէն լիներ երջանիկ ամուսին։ Սակայն ոմ է մեղաւորը, որ նա այժմ դժբաղդ է։

Այս հարցն ինքն իրան տալիս, Մինաս Կիրիլիչը միշտ զղում էր խղճի մի սարսափելի խայթոց։ Որքան Միքանդրօնցօվի արարքը գարշելի էր նրա աչքում ամուսնական անկողնի մաքրութեան վերաբերութեամբ և որքան Վառվառէն ատում էր այդ թշուառ մարդուն, նոյնքան Մինաս Կիրիլիչի խիղճն աւելի էր տանջվում։

—Մեղաւորն ես եմ,—ասում էր նա ինքն իրան։ Եթէ ես չըսխալէի, Վառվառէն բնաւ չէր գնալ նրան։ Նա չէր սիրում Միքանդրօնցօվին, այս յայտնի էր ինձ։

Բայց Մինաս Կիրիլիչը, յուսալով, որ ամուսնական կեանքը վերջ ի վերջոյ նրանց յարաբերութիւնների մէջ կըմոցնի եթէ ոչ սէր, գոնէ յարգանք և, յափշտակված Միքանդրօնցօվի ապագայ հարստութենով ու հասարակական դիրքով, սիրտ արաւ իւր անմեղ և միակ գաւեր բաղդը յանձնել նրա ձեռքը։

Գիշեր ու ցերեկ այս միտքը հետևում էր Մինաս Կիրիլիչին։ Վառվառէի ախուր կերպարանքը մի կենդանի յանդիմանութիւն էր նրա ծնողային սխալ ինքնասիրութեանը։

—Ես չսպանցի, չսո չսպանցի,—կրկնում էր նա յաճախ իւր մտքում, խորին վշտակցութեամբ նայելով Վառվառէի երեսին։

Բայց անցեալը վերադարձնել անհնարին էր, ինում էր—մոռանալ ներկայի մասին։ Ինչ պիտի անել ներկայում։ Նա գիտեր, որ Վառվառէն, մի տարուայ բացակայութենից յետոյ, դարձեալ ատում է Միքանդրօնցօվին։ Սակայն, այնու ամենայնիւ, յոյս ունէր հաշտեցնել այս երկու ծայրայեղութիւնները և թէ Վառվառէի, թէ իւր անունն ազատել չար լեզուների բամբասանքից—մի հանգամանք, որ նրան տանջում էր աւելի, քան աղջկայ դժբաղդութիւնը։

Այս պատճառով, Մոսկվայից հեռանալուց յետոյ, նա Մոզդոկից նամակ գրեց Միքանդրօնցօվին, խնդրելով, որ սա թողնի իւր թշուառ սովորութիւնները և հաշտվի օրինական կնոջ հետ։ Երկու ամիս անցած միայն սացաւ իւր նամակի պատասխանն, ուր անարդ ամուսինն երդվում էր, թէ միշտ սիրել է Վառվառէին, իսկ այժմ կրկնապատիկ է սիրում, թէ պատրաստ է դարձեալ հաշտվել, եթէ միայն Վառվառէն արժանի կըհամարի հաշտվել։ Երկրորդ նամակով Մինաս Կիրիլիչը յուսադրեց նրան, թէ Վառվառէն փոքր առ փոքր մեղմանում է, թէև վերջնի կողմից այդ չէր նշմարվում։

Եւ ահա այս վերջին նամակի պատասխանն էր, որ Մինաս Կիրիլիչն այն օրն առաջարկում էր Վառվառէին կարդալ։ Այդ անգթից յետոյ Մինաս Կիրիլիչն երկար մտածում էր, թէ ինչ պատասխանի Միքանդրօնցօվին։ Նա իւր փեսայի զղմանն այս անգամ անպատճառ հաւատում էր։ Այս էր պատճառը, որ նա այն քանի օրերը մտախոհ էր և չէր խօսում աղջկայ հետ։ Վերջապէս, վճռեց դիմել վերջին միջոցին։ Գրեց Միքանդրօնցօվին, թէ Վառվառէն համաձայն է հաշտվել և խնդրեց, որ անպատճառ ինքը գայ։ Նա յոյս ունէր, որ ամուսնու ներկայութիւնն և անձամբ նեռում խնդրելը կարող է մեղմացնել Վառվառէին աւելի շուտ, քան թէ հեռուից-հեռու։ Եւ ժամ առ ժամ սպասում էր իւր փեսայի գալստեանը...

Զաւակի առաջին երկու օրերն անցան։ Վառվառէն անից դուրս չեկաւ այդ օրերը։ Իսկ Մինաս Կիրիլիչն աւելի յաճախ էր զբօսնում դրսում։ Առաջին օրը նա գնաց Նաստալիա Պետրովնայի մօտ՝ Զաւակը շնորհաւորելու և վերադարձաւ, հեռը բերելով այրեին և Ռոստամեանին։ Վերջինը շատ երկար չըմնաց, շնորհաւորեց Վառվառէին, փոքր ինչ նստեց և դուրս գնաց։ Նա երևում էր մի սեռակ սենդային չփոթութեան մէջ և աւելի գունատ, քան երբ և իցէ եղել էր։ Իսկ այրեին բաւական երկար նստեց և սկսեց խօսել ոսնելի առթիւ, թէ ինչպէս են թիֆլիսցիները Զաւակին անցկացնում, ինչ են ուտում, ուր են գնում և այլն և այլն։ Ի միջի այլոց, նա խօսեց և «մեռելոցի» մասին։ Մինաս Կիրիլիչը դարձեալ յիշեց իւր անցեալն, իւր հանգուցեալ ամուսնուն, վարժութեամբ զաւակներին։ Չէ որ ամեն տարի, Զաւակի երկրորդ կամ երրորդ օրը, նա ճշդութեամբ օրհնել էր տալիս նրանց դերեզմանները։ Իսկ այժմ նա դատւում է պանդխտութեան մէջ, հեռու այդ թանգագին դերեզմաններից։

—Ո՞ր դերեզմանատանն է շատ ժողովուրդ լինում,—հարցրեց նա Նաստալիա Պետրովնայից։

—Խօջիվանքի դերեզմանատանը,—պատասխանեց այրեին։

Ծերունու մէջ յանկութիւն յղացաւ՝ գնալ դերեզմանատուն։ Երեքշաբթի առաւօտը նա առաջարկեց Վառվառէին՝ եթէ կամենում է, միասին գնան։

Վառվառէն մերժեց։ Մինաս Կիրիլիչը, հակառակ իւր սովորութեան, չըթախանձեց նրան։ Մի թեթև նախաճաշիկից յետոյ, նա ուղևորվեց դէպի Խօջիվանք։

Վառվառէն մնաց միայնակ։

Օրը պարզ էր և բաւական շոգ։ Ապրիլի սկիզբն էր. ծառերը, դաշտերն արդէն կանաչել էին։ Քաղաքի այդիները մի գեղեցիկ, խայտապղպեա տեսարան էին ներկայացնում։ Սօսիներն ու կաղամախները փոքրիկ դեղնա-կանաչագոյն տերևներ էին արձակել, իսկ պողատաւ ծառերից շատերը զարդարվել էին սպիտակ և վարդագոյն ծաղիկներով։

Վառվառէն իւր լուսամուտից մի հայեացք ձգեց հրապուրիչ գարնանային տեսարանի վրայ և հառաչեց։ Մի այլ ժամանակ այդ օրն, այդ եղանակն և հոր դերեզմանատուն գնալը նրա մէջ կըզարթեցնէին անցեալի յիշատակներ։ Նա կըմտաբերէր իւր մանկութիւնն, երբ հայրն ամեն տարուայ Զաւակին իւր հետ տանում էր նրան դերեզմանատուն, ցոյց էր տալիս մօր, քոյրերի և եղբայրների դերեզմանները։

—Ահա, այստեղ թաղված է, սիրելի Վարիա, քո եղբայր Սրաֆիոնը...—կըլսէր նա իւր հօր խօսքերը...—վեց տարին չէր լրացել, բայց տեսողը կարծում էր, թէ տասը տարեկան է... խելօք, գեղեցիկ։ Այս փոքրիկը Յօզայի դերեզմանն է. ախ, մայրդ ի՜նչքան սիրում էր նրան։ Ահա, այստեղ թաղված է Լիպան։ Լիպայի աչքունքը սև էին, մազերը խիստ երկայն, բոլոր դէպքինները սիրում էին նրան։ Այդ մեկը Սաչայի քոյրն է. համբուրիր, Վարիա, համբուրիր, քո եղբօր դերեզմանն է... Այն էլ Սիրուհիկն է... Տէր Գրիգորը տուեց նրան այս անունը, օրհնեց և ասաց. «Թող Աստուած սրան երկար կեանք տայ»։ Բայց Աստուած նրան էլ չըպահեց։ Այս կողմ ևս, այս կողմ ևս, դա Սօնիան է, դեռ քար չեմ դնել տուել. փոքրիկ էր,

շատ վոգբրիկ... Վարինկա, քաղիր այն սպիտակ ծաղիկը... Այստեղ եկ, այս մեծը, տեսնում ես... ճանաչում ես, Վարինկա... Դա նա է, քո...

Հօր ձայնն այստեղ ընդհատվում էր, խուլ հեկեկանքը չէր թոյլ տալիս նրան շարունակել։ Իսկ մանկահասակ Վառվառէն վազվզում էր շրթիմների շուրջը, հավաքում էր, ծաղիկներ էր քաղում, չընկատելով հօր արցունքն իւր թանգագին զաւակների և անբաղդ ամուսնու մասին։

Ո՛չ, այդ չէր յիշում Վառվառէն այս անգամ. նրա միտքն ուղղված էր դէպի մյուս կողմ, նրա սիրտն ուժգին ալեկոծվում էր մյուս զգացմունքներով։

—Ի՞նչ անեմ, Տէր Աստուած, ինչ անեմ,—չքնում էին նրա շրթունքներն անդադար, և նա երկու ձեռներով մերթ սեղմում էր ճակատը, մերթ ծածկում էր երեսը։

Արդէն, Նուագահանդիսի երեկոյից յետոյ, անթիւ անգամ նա այս հարցը կրկնել էր ինքն իրան։ Մթնում էին նրա մտքերը, շփոթվում էին զգացմունքները, պղտորվում էր սովորական առողջ և խելացի դատողութիւնն, երբ նրա առջև պատկերանում էր Ռոստամեանը։ Իսկ Ռոստամեանը պատկերանում էր նրա աչքերի առջև առաւօտ երեկոյ, ամեն ժամ, ամեն րոպէ, աւելի—քայլ առ քայլ հետևում էր նրան, ցերեկը խլում էր նրա հանգստութիւնը, գիշերը բորբոքում էր արիւնը։ Վերից առաջ Վառվառէն ամբողջ ժամերով շրջում էր իւր սենեակում մի հատարակ նեղբնազդեստով։ Սահպ սահպ նա մօտենում էր, բաց էր առնում դէպի գաւիթ նայող լուսամուտի փեղկերը։ Դիմացի լուսամուտի ապակինների վրայ րոպէ առ րոպէ նկատ-

վում էր Ռոստամեանի առուերը, մերթ երևում էր նա ինքը չեմքի վրայ, մերթ դրսում, արմունդները յենած պատշգամբի ճաղերին։

Այժմ Վառվառէի համար պարզ էր, թէ ինչու նա այդպէս յաճախ դուրս է գալիս պատշգամբ։ Նատալիա Պետրովնան գրեթէ ամեն օր այցելում էր իւր կնոջնեղբին։ Վառվառէն տակաւին զգուշութեամբ էր վարվում տանտիրուհու հետ. նա չէր խօսում Ռոստամեանի մասին։ Տանտիրուհին ինքը պատմում էր այն ամենն, ինչ-որ անում էր Ռոստամեանը։ Նա բոլորովին փոխվել է, չի պարապում, չի նստում տանը, կարդին չի ճաշում, դուրս է գալիս ու նորս է մտնում, դեղնած, ապշած, ոչ ոքի հետ չի ուզում խօսել։

—Վախենում եմ, որ գժվի,—կրկնում էր Նատալիա Պետրովնան իւր հին երգը։—Ջահիկ երեկոյ մի իրան նման չհիվանդ ապայ եկաւ. հետը գնաց նրանց տուն։ Մինչև լոյս տուն չեկաւ։

Այս բոլորից Վառվառէն զգում էր, որ Ռոստամեանն, արդարև, տանջվում է։ Բանի՛ անգամ Վառվառէն տեսել էր նրան ցերեկով, լուսամուտից գաղտնի իրան դիտելիս, յուզված դէմքով, վառ աչքերով։ Տանջվում է, այո, բայց ո՞վ է մեղաւորը։ Չէ՞ որ նա հանգիստ և խաղաղ կեանք էր վարում մինչև Վառվառէին հանդիպելը։

—Բայց ես ինչով եմ մեղաւոր, Տէր Աստուած,—ասում էր Վառվառէն։

Մի-մի նա կարծր էր դուշակել, որ այդ տան մէջ նա պիտի դանէ նրան, որին անդիտակցաբար որոնում էր երկար տարիների ընթացքում։

—Ո՛չ, անկարելի է այսպէս շարունակել,—ընդ-

վառվռուն բորբոքված, անվճռակ ջարդելով մտածումները։—Այս երկու կրակի մէջ ապրելու ոյժ չունիմ։ Բռնական է, որքան տանջվեցի. կամ այսպէս, կամ այնպէս...

Բայց ինչպէս։ Ա՛չ է նայում—կանգնած է ջրի պէսով պղտոր հայրն, որին ինքն էլ պաշտում է իւր բոլոր ծնողասիրական զգացմունքներով և որի հանգստութիւնը կազմում է նրա գոյութեան տարրերից մէկը։ Չալ է նայում—հանդիպում է հասարակական անողոք դատաստանին, կրօնի խստագոյն պատնէշներին։ Իսկ այնտեղ, դիւթական զօրութեամբ մղում է նրա սիրտը Թոռատաճանը։ Մի կողմում, հօր պատիւը, հանգստութիւնը, մարդկանց նախապաշարմունքները, կրօնը, միւս կողմում, անբեկանելի երջանկութիւնը։ Ո՞րն ընտրել, ո՞ւր դիմել—ահա բարդ հարցը, ահա երկատրի սուրը, ահա դիլեմման, որ կարճ միջոցում պատռում է մաշել, ոչնչացնել նրա հոգին։

Եթէ նա այնքան չսիրէր հօրն, եթէ հայրն այնքան չերկնչէր հասարակութիւնից, այն ժամանակ դուցէ դիւրին լինէր մի վճիռ կայացնել։ Իսկ այժմ...

—Ո՛չ, ես չեմ կարող այս անդունդն անցնել...

Ինչո՞ւ, մի՞թէ, արդարև, անկարելի է։ Եթէ մէկին նա չի սիրում, մի՞թէ միւսին սիրելու իրաւունքից էլ զրկված է։ Սարսափելի՛ խաւարութիւն... անգո՛ւթ հասարակութիւն։ Մէկը պնդում են, առանց միւսը նախատեսելու, և տակաւին բնական օրէնքներն արհամարհում են սառն, անսիրտ կանոններով, անհատաութեամբ։ Մարդկանց աչքում հերետիկոս դառնալ—ոչ, վառվռուն այդ չի կամենում. նա ձեռք չի բարձրացնում ոչ պի սկզբունքների դէմ։ Բայց միթէ մի ոք այնքան անողոք պիտի դառնի, որ իւր հեղինակու-

թեամբ խլէ նրա անհատական ազատութիւնն, արհամարհէ այն, ինչ-որ նրա համար աւելի սուրբ է և աւելի պաշտելի։ Ինչո՞վ վարձատրեցին նրան այն վշտերի փոխարէն, որ երկու տարի շարունակ մաշում էին նրան Միքանդրօնցօվի յարկի տակ։ Ինչո՞ւ և՛ այժմ ատիպում են նրան ընդունել այն, ինչ-որ դարչ է, և խլում են նրանից այն, ինչ-որ երջանկութիւն է։ Այդ բնութեան օրէնքներն են։ Ինչո՞ւ հակառում են բնութեանն, որ ինքն Աստուածն է։ Ո՛չ, այդ անկարելի է, այդ բռնութիւն է... քրիստոնէական ազատամիտ սկզբունքները չեն կարող այդքան խստադատ լինել...

—Տէր Աստուած, Տէր Աստուած, ոչինչ չեմ հասկանում, ոչի՛նչ,—գոչեց Վառվռուն, այս խոհուծների ծանրութեան ներքոյ ճնշված,—աչքերս մթնում են, դլուխս պատում է այս բոլորից։

Մի՞թէ նրան էր միայն վիճակված լուծել այս դժուար խնդիրը։

Ինչո՞ւ, ինչ մեղքերի պատճառով, ես է ձգտում, երբ է մեկին նախանձել կամ մեկին չար կամեցել։ Նա բազդաւորութեան մասին այլ գաղափար ունէր, նրա երևակայութիւնը առեղծել էր բոլորովին այլ կենդանական իդէալ։ Բայց ճակատագիրը թշնամացաւ նրան։ Վաղօրօք խլեցին նրան բնութեան ձեռքից և յանձնեցին դժբազդութեան ձեռքը։

—Պա՛պա, պա՛պա, ես քեզ չեմ մեղադրում։ Դու ինձ անկեղծ ցանկանում էիր բազդաւորութիւն։ Դու համոզված էիր, որ այդ բազդաւորութիւնն ես կըվայելեմ Միքանդրօնցօվի հետ։ Գիտեմ, որ դու էլ դըժբազդ ես իմ պատճառով... ինչպէս մեղադրեմ քեզ։ Բայց իմանում ես, արդեօք, թէ ինչ դրութեան մէջ

եմ ես։ Ո՛չ, եթէ իմանայիր, դու չէիր կարող այդպէս անտարբեր մնալ։ Այժմ կիմանաս... այժմ այժ չունիմ այլ ես թագցնելու իմ սրտի զգացածը։ Ախ, Տէր Աստուած, ինչ կըպատահի, արդեօք, նրան, եթէ իմանայ...

Նա թուլացած, յաղթահարված նստեց աթոռի վրայ և գլուխը յենեց կռնակին։ Նստ մնաց այդ դրութեան մէջ, թէ քիչ—չըգիտէր. յանկարծ գլուխը բարձրացրեց և վճռական եղանակով արտասանեց.

—Այդ կըլինի սպանութիւն... ես չեմ կարող այդ քայլն անել, հարկաւոր է յետ կանգնել, քանի որ միայն անզունդի ծայրումն եմ։ Ես չեմ թողնիլ, որ իմ երջանկութեան համար հայրս սոսկայ մահացու հարուած... Քանի որ նրան յայտնի չէ, ես կըվերջացնեմ ամեն ինչ...

Նա չտապով դրասեղանի վրայից վերցրեց դրիչ ու թուղթ և նստեց։ Տասը րոպէի չափ նա, դրիչը ձեռին, գլուխը կրծքին թեքած, ձախ ձեռով ճակատը սեղմած, մտածում էր։ Մի քանի անգամ նա դրեց, ջնջեց, թերթը պատռատեց, նորը վերցրեց, դարձեալ դրեց, ջնջեց և դարձեալ թերթը պատռատեց։

Վերջապէս, աւելի յուզված, դրիչը մի կողմ շպրտեց և վերկացաւ տեղից։ Նա կամենում էր նամակով խնդրել Ռոստամեանին՝ դադարել իրան հետամուտ լինելուց։ Բայց ինչ իրաւունքով նա պիտի մի այդպիսի համարձակ պահանջ ներկայացնէր այն մարդուն, որը դեռ ևս խօսքով մի ակնարկութիւն չի արել իր սիրոյ մասին, որի սիրտը դեռ կիսով չափ մուրճն է նրա համար։ Մի գուցե երևակայութիւնը խաբում է նրան։

Երբ այդ երիտասարդը կըյայտնի իւր սէրը, եթէ

պիտի, նա կաշխատի յաղթել ինքն իրան և կըբացատրի, թէ անկարելի է, որ միմեանց սիրեն։ Թող լինին եղբայր ու քոյր։ Քոյր ու եղբայր... որքան մեծ բաղդաւորութիւն է այնպիսի եղբայր ունենալ։ Իսկ Վահանէն չունի եղբայր. նա էլ քոյր չունի։ Բայց կարելի բան է այս։—Անշնորհին. այդ կըլինէր ինքնախաբէութիւն։ Նրանք պիտի հեռու լինին իրարուց, չըպիտի տեսնվին։ Եւ, ի հարկէ, պիտի հեռանայ Վահանէն։ Այո, նա կըխնդրի հօրը, որ տեղափոխվին այս բնակարանից... Այն ժամանակ թող նա մնայ միայնակ իւր զգացմունքների հետ, նա կըյաղթի ինքն իրան, կաշխատի յաղթել։ Ուրիշ կերպ անկարելի է... նա պարտաւոր է մոռանալ նրան...

Սակայն այս մի րոպէական վճիռ էր, որ իսկոյն փոխվեց, և Վահանէի մտքերն ու զգացմունքներն աւելի շփոթվեցին։ Անորոշ մտատանջութեան մէջ նա երկար ժամանակ անցուդարձ էր անում սենեակի մէջ։ Մի րոպէ կանգնեց պահարանի առջև, նայեց հայելու մէջ։ Նրան թուաց, թէ վերջին երկու երեք շաբաթուայ ընթացքում աւելի նիհարել է և աւելի գունաթափվել, չընայելով, որ գարնանային եղանակը նրա այտերի վրայ ևս սփռել էր այն թեթև պարզ կարմրութիւնը, որով տարուայ այդ միջոցին օժտվում է ամեն մի գունատադէտ կնոջ երեսը։ Բայց նրա աչքերի մէջ վայելում էր աւելի կենդանութիւն, քան առաջ։

Դռները բացվեցին, ներս մտաւ ազախին Մատրենան։

—Տիրուհի, դուք զբաղված էք,—հարցրեց ռուս աղջիկը։

Վահանէն շփոթված յետ նայեց։

—Ի՞նչ ես կամենում,—հարցրեց նա բարկացած։

—Ձեզ ուզում են տեսնել։

—Ո՞վ։

—Մ՛յ, այն երիտասարդ պարոնը։

Մատրենան ձեռով ցույց տուեց պատշգամբի միւս ծայրը։

—Այստեղ է։

—Դրսում սպասում է, տիրուհի։ Այսօր երկու անգամ եկել է ու հարցրել։ Մէկ ուզում էի ասել, որ տանը չէք, բայց յետոյ մտածեցի, թէ աւելի լաւն է ձեզանից հարցնեմ։ Հրաւիրե՞մ։

Վառվառէն մի քանի վայրկեան լռեց և յետոյ, կարծես, մտքում մի բան վճռելով, հրամայեց.

—Հրաւիրիր միւս սենեակ։

Մատրենան դուրս գնաց։ Վառվառէն ուղղեց հագուստը, գլխի մազերն ու հանդարտ քայլերով անցաւ հիւրասենեակ։

Բակլաթոռի վրայ նստած սպասում էր Ռոստոմեանը, և հպարտով, դունատ, սխուր աչքերը յառած այն դռներին, ուսկից դուրս եկաւ Վառվառէն...

IX

Մինչդեռ Վառվառէն ոչինչ չէր նկատում, Ռոստոմեանը Մինաս Կիրիլիչի յարաբերութիւնների մէջ զգում էր փոփոխութիւն։ Թւում էր նրան, որ ծերունին այլ եւս առաջուայ պէս բարեկամաբար չի վերաբերւում նրան։

Այս բանն աւելի զգալի էր Աւագ Զատիկի երեկոյ, երբ Մինաս Կիրիլիչն և Ռոստոմեանն այրիի

տանն էին։ Հակառակ իւր սովորութեան, այդ երեկոյ ծերունին Ռոստոմեանի հետ խօսում էր, կարծես, ամաչում։ Նա չէր վիճաբանում ոչ և է խնդրի մասին, չէր հակառակում և, առ հասարակ, երկար խօսակցութենից խոյս էր տալիս։ Ծերունու այս յանկարծակի փոփոխութիւնը Ռոստոմեանին և՛ զարմացրեց և՛ վրդովեց։

Հետեւեալ և երրորդ օրը նա փոզսում ու դառնում երկու անգամ բարեւեց։ Ծերունին նրա ողջոյնն ընդունեց գլխի մի թեթեւ շարժումով։ Նրա կասկածն աւելի զօրացաւ։ Բացի այն, որ Մինաս Կիրիլիչը կարող էր իւր աղջկայ և երիտասարդ հարեւանի յարաբերութիւնների ներքին դրդիչ պատճառն զգալ, ինքն էլ նոր ինքնան ծերունու սառնութիւնը վիրաւորական էր Ռոստոմեանի համար։ Մենակեցութիւնը, բնականաբար, նրա մէջ զարգացրել էր զգայուն ինքնասիրութիւն։ Նա, որ ինքն իւր բարեկամութեամբ կամ ծանօթութեամբ մէկին ձանձրացրած չէր, այժմ զգում էր, որ տաղտկացնում է մի ծերունու։ Ահա ինչու Զատիկ օրուայ այցին նա երկար չմնաց։

Բայց ինքնասիրութեան այդ վիրաւորանքը չմոռացաւ։ Մնաց միայն մի կասկած. արդեօք, Մինաս Կիրիլիչն իսկապէս զգո՞ւմ է Ռոստոմեանի այցելութիւնների դրդիչ պատճառը։ Եթէ զգում է—հնարաւոր իրաւունք ունի ոչ միայն սառն վարվել, այլ և տռել նրան, այլ և չընդունել իւր տան մէջ։ Այդ շատ բնական կլինէր։ Վառվառէն ամուսնացած կին է, իսկ Մինաս Կիրիլիչը—նրա և իւր սեռական պատուի նահանջանդիր հայր։ Ի՞նչ փոյթ նրան, թէ Ռոստոմեանին ինչ զգացմունք է մղում դէպի նրա աղջիկը.

ինչ վոյթ, եթէ աղջիկը մինչև անգամ... սիրում է այդ երիտասարդին։ Նրանց մէջ կայ մի զօրեղ պատնէշ, և ով կըհամարձակվի այդ պատնէշը խորտակել—կըխորտակէ և՛ Մինաս Կիրիլլիչի պատիւը, անունը։ Նա դէպի անդունդը կըգլորի և՛ իւր և՛ Վառվառէի պատիւը։

Այսպէս է Մինաս Կիրիլլիչի դաղափարը, նոյնն է և շատերի համոզմունքը։ Ուրեմն, Ռոստամեանն եթէ չի յարգում այդ նախապաշարմունքը, գոնէ չունի իրաւունք և՛ դատապարտելու Մինաս Կիրիլլիչին։ Երկու զօրեղ պատնէշներ, Դամոկլէսի սրի պէս, կանգնած են նրա դլխին—հասարակութիւն և կրօն։

Առաջին օրից նա դէպի այդ պատկառելի ծերունին զգաց որդիական յարգանք։ Երբ լսեց Վառվառէի պատմութիւնը, յարգանքը վերափոխվեց սուրբ երկիւղածութեան. պատկառելի մարդը դարձաւ բռնակալ հայր։ Անցաւ և՛ սուրբ երկիւղածութիւնը. Ռոստամեանը սկսեց կարեկցել ծերունու դժբաղդութեանը։ Այժմ այս փոփոխական զգացմունքների տեղը բռնեց ամօթի զգացմունքը։ Նա ամաչում էր Մինաս Կիրիլլիչից և վերջին օրերն աշխատում էր խոյս տալ նրանից, չըտեսնել նրան։

Բայց խոյս էր տալիս հօրից, իսկ աղջկանից... Պիտի տեսնվել Վառվառէի հետ առանձին։

Այս նպատակով Ռոստամեանն աշխատում էր օրսայ մի յարմար ժամ։ Եւ ահա, հասաւ ցանկալի պահը։ Երբ Մինաս Կիրիլլիչը դուրս գնաց, Ռոստամեանն եռանդից նայեց, մինչև որ նա անհետացաւ փողոցի ծայրում։ Դէպքը յաջող էր. այրին ևս տանը չէր։ Դուրգում ազդակինը Ռոստամեանին հաղորդեց, թէ «պարոնը» ուշ կըվերադառնայ։ Առաջին պահ պատշգամբի վրայ նրան տիրեց մի անսպասելի վհատութիւն։ Նա յետ դարձաւ և, մի քառորդ ժամ տատանվելուց յետոյ, վճռեց, վերջապէս, յարմար ժամը բաց չըթողնել։

Եւ ահա Ռոստամեանը Վառվառէի մօտ էր, միայնակ, դէմ յանդիման։

Առաջին հայեացք Վառվառէի անսովոր սառնութիւնը նրան սպզնցրեց։

—Բարև ձեզ,—ասաց նա, մի քանի քայլ առաջ դիմելով։

Վառվառէն հանդարտ դրեց իւր ձեռը նրա ափի մէջ և լուռ ցոյց տուեց բազկաթոռներից մէկը։

—Ցուսով եմ, որ իմ այցելութիւնն անժամանակ չէք համարիլ,—շարունակեց Ռոստամեանը, նստելով նրա դէմ։

—Ընդհակառակը... պատասխանեց Վառվառէն, կարծես, ակամայ։

Երկուսն էլ սովորականից դուրս դունաթափ էին, երկուսի սիրտն ևս ալեկոծվում էր և երկուսն էլ աշխատում էին արտաքին սառնութեամբ քօղարկել իրանց յուզմունքը։ Այս նրանք նկատեցին միմեանց դէմքից։ Ահա մինչև մի քանի րոպէ նրանք չըդիտէին ինչ խօսել։ Վերջապէս, ծանր լռութիւնն ընդհատելու համար, Վառվառէն հարցրեց Ռոստամեանի գործերի մասին։

Ոչինչ գործ այժմ չի հետաքրքրում նրան։

—Ինչո՞ւ,—հարցրեց Վառվառէն։

Ռոստամեանն ոչինչ չը պատասխանեց։ Նրանք դարձեալ լռեցին։ Ռոստամեանը, կարծես, վախենում էր նայել Վառվառէի երեսին։ Թուում էր նրան, որ իւր ամեն մի հայեացքը պարզ պատկերացնում է այն, ինչ-որ զգում էր նոյն րոպէներին։ Այն ինչ՝ նրա

դրութիւնը հետզհետէ աւելի դժուարանում էր։

—Ո՞րտեղ է Մխեռա Կիրիլլիչը,—հարցրեց նա։

—Գնացել է գերեզմանատուն, — պատասխանեց Վասիլառէն, ժպտալով։

—Ձշմարիտ, երէկ և այսօր մեռելոց է, Տէր Աստուած, ինչպէս մարդ հետզհետէ մոռանում է քրիստոնէութիւնը — ասաց Յոասաաֆեանն անկեղծ համոզմունքով։

—Այո, մոռանում է,—կրկնէ անդիտակցաբար պատասխանեց Վասիլառէն։

Մի և նոյն ժամանակ, Վասիլառէն աշխատանց ծիծաղել, բայց նրա ձայնի մէջ, փոխանակ ծիծաղի, ղժացվեց մի անդադարի գոլոց։ Նա շարունակեց մտայլ եղանակով.

—Հայրս առաջարկեց ինձ իւր հետ գնալ, ես մերժեցի։ Իսկ դուք ամօթութիւն ունէք, պարո՛ն Յոասաաֆեան, այս օրերում գերեզմանատուն այցելելու։

—Այս օրերում—ա՛խ, բայց սիրում եմ այցելել, երբ ախտը եմ լինում։

—Երբ ախտը էք լինում։

—Դուք ձեզ համար ծիծաղելի լինի, Վասիլառա Մխեռեվնա, ես ախտութիւնս փարատում եմ ախտութեամբ։ Գերեզմանատունը զգում եմ անբացատրելի հոգեկան թեթեւութիւն...

—Այդ մտածմունքը հասկանալի է,—ընդհատեց Վասիլառէն թախծալի ձայնով։

—Հասկանալի է,—կրկնեց Յոասաաֆեանը, ներքուստ ուրախանալով և, մի և նոյն ժամանակ, մի առանձին ոգևորութեամբ ներշնչված։—Հասկանալի է, այո, երբ զառնացած սրտով նայում ես այնտեղ աշուձախ,

լուռ ու մռայլ գերեզմանները, կարծես, քեզ պարգևում են մի տեսակ մխիթարութիւն։ Ես միշտ այնտեղից վերադառնում եմ աւելի ուրախ, թեթեւացած սրտով, քան դուցէ ուրիշները մի զուարճալի հանդիսից։ Ինչիցն է այս... Դուցէ նրանից, որ ճակատագիրն ինձ մանկութեան հասակից ստիպել է սիրել մեռելների հանգստարանը, սիրել, երբ այնտեղ հանգչում են իմ սիրելի էակների մարմինները...

—Ինչ ախտաբ խօսակցութիւն սկսեցինք,—ասաց Վասիլառէն, երբ Յոասաաֆեանը յանկարծ լուեց, ասաց և ինքը հազիւ զսպեց իւր հառաչանքը։

Այն ինչ՝ Յոասաաֆեանի թախծալի խօսքերը թափանցեցին նրա սրտի խորքը, ըստ որում մտայլ խօսակցութիւնը համապատասխանում էր նրա հոգեկան տրամադրութեանը։ Նա անկեղծ ցաւակցութեամբ նայեց Յոասաաֆեանի երեսին, նայեց և իսկոյն աչքերը խոնարհեցրեց, դլուխը թեքեց դէպի կուրծքը։ Եւ նրա այտերը շառագունեցին։ Յոասաաֆեանի չքմեղները դողդողում էին. նա հազիւ կարողանում էր խեղդել իւր ներքին ալեկոծութիւնը։

«Նա ամօթխած է, ես ինչպէս յայտնեմ նրան իմ միտքը»,—մտածում էր Վասիլառէն, չքնաղագեղ նայել Յոասաաֆեանի երեսին։

Չէ որ նա դեռ մի տասը րոպէ առաջ վճռել էր յայտնել, թէ այսուհետև անկարելի է, որ նրանք միմեանց տեսնեն։ Չէ որ հէնց այս դիտաւորութեամբ նա հրամայեց ապասինին ներս հրաւիրել նրան։ Իսկ այժմ... ինչպէս կատարել այդ վճիռը—ահա հարց, որի մասին առաջ խորհելու այժմ չունէր Վասիլառէն, քանի որ մի այլ, աւելի զօրեղ, զգացմունք հետզհետէ

խաւարեցնում էր նրա միտքն ու հոգին...

Գաւթում ամեն ինչ խաղաղ էր, նոյն իսկ ազատխինն, որ սովորաբար անցուդարձ էր անում պատշգամբի վրայ, չէր երևում։ Լսվում էին միայն պատշգամբի առաստաղի տակ թռչկոտող ծիծեռնակների ձայներն և երբեմն հեռաւոր փողոցներից անցնող կառքերի խուլ դղրդիւնը։ Լուսամուտների ապակեայ վեղկերը փակ էին։ Վառվառէն վերկացաւ, բայց առաւ վեղկերից մէկը։ Արևի ջերմ ճառագայթներով տոգորված մաքուր օդը թարմ հոսանքով մղվեց սենեակի անշարժ մթնոլորտի մէջ, մեղմիկ չոշափելով Վառվառէի դունատ դէմքը։

Նա կրկին վերադարձաւ իր տեղը։ Ռոստամեանը, անշարժ նստած, անթարթ աչքերով հետևում էր նրա իւրաքանչիւր շարժմանը։ Նրանք սկսեցին նորից խօսել։ Սեղանի ծայրում դրած էր ինչ-որ գիրք։ Ռոստամեանը, մի բան ասած լինելու համար, հարցրեց, այժմ ինչ է կարդում Վառվառէն։

—Ո՛չինչ,—պատասխանեց վերջինն և գլուխը թեքեց կրծքին։

Այնուհետև խօսակցութիւնն առաջ չընթաց, բայլ հատ և անկապ խօսքերից։

Լռութիւնն աւելի սաստկացնում էր երիտասարդական սրտերի բաբախումը...

—Ոչ, այլ ևս չեմ կարող երկար դադել ինձ,—ասաց մաքում Ռոստամեանը։

Նոյն վայրկեանին նրա աչքերը հանդիպեցին Վառվառէի աչքերին։ Այս եղաւ մի զօրեղ հարուած նրա բանի անձնակատութեան։ Հայեացքները պարզ արտայայտում էին այն, ինչ-որ լեզուն վարանում էր խօսել։

Ռոստամեանը մի անզօր ճնշում և զործեց բուռն զգացմունքների վրայ։ Բայց այլ ևս ուշ էր։ Նա տեսաւ, որ Վառվառէն յանկարծ վերկացաւ տեղից, մօտեցաւ փողոցի կողմի լուսամուտին և նայեց դէպի դուրս, աջ ու ձախ։

Ռոստամեանը նոյնպէս բարձրացաւ տեղից, բոլորովին դեղնած, չնչասպառ, աչքերը մթնած, գրեթէ խելակորոյս։ Նա մօտենում էր Վառվառէին։ Սենեակի մէջտեղում նա կանգ առաւ։ Վառվառէն լուսամուտ կողմից յետ դարձաւ, և այդ րոպէին նրանք երես առ երես հանդիպեցին իրարու, միմիայն մի քայլ հեռաւորութեան վրայ։ Քանի մի վայրկեան նրանք չտարված նայում էին միմեանց երեսին։

—Ի՞նչ պատահեց ձեզ,—դոչեց Վառվառէն եր-կիւղալի ձայնով։

Ռոստամեանը լուռ էր։

—Ի՞նչ պատահեց ձեզ... կրկնեց Վառվառէն չընչին ով։

Ռոստամեանը դարձեալ լուռ էր։

Վառվառէն անդիտակցաբար մի քայլ յետ կանգնեց։ Նոյն վայրկեանին նա իւր երկու ձեռների վրայ զգաց մի ջերմ շիւմ։ Մի ակնթարթում նրա աչքերը մթնեցին, սենեակը խաւարվեց, գլուխը պտտեց։ Արեան տաք, ախորժելի հոսանքը խփեց գլխին, և նա յաղթված, թուլացած ընկաւ, բայց ոչ...

Նոյն րոպէին լուսամուտի առջևով, պատշգամբի վրայ, կատուն քայլերով, անցաւ մի փոքրահասակ աբրատած։ Նրանք ոչինչ չընկատեցին, և չէին կարող նկատել...

Վառվառէն սթափվեց։ Երկու ուժեղ թևեր մեղ-

մեկ դրված էին նրա բարձր իրանը։ Նա դուրս ապաստվեց այդ հրապուրիչ շղթայից, ոտքից ցըդլուսև ուժգին դողալով, մի քանի քայլ յետ դրեց և խուլ, ալեկոծված ձայնով գոչեց.

—Խելագա՞ր, ինչ էք անում...

—Վառվառէ, Վարիա... հնչեց նրա ականջին Ոսոտամեանի ձայնը տարօրինակ եղանակով։

—Հեռացէք այտեղից, դուք ինձ անդունդն էք գլորում... արտասանեց Վառվառէն, երեսը դողդոջուն ձեռներով ծածկելով։

—Անգո՜ւնդ... կրկնեց Ոսոտամեանն... ես ուզում եմ անդունդից դուրս բերել ձեզ։

Նա բռնեց Վառվառէի ձեռն և, իւր երկու ձեռների մէջ սեղմելով, աչքերը յառեց նրա աչքերին ու յուզված ձայնով շարունակեց.

—Դուք պիտէք, որ ես չէի կարող ուրիշ կերպ վարվել։ Բոպէական խելագարութիւն չէ այս։—Մ՛չ ամենևին։ Ձեզ ամէն ինչ յայտնի է։ Վարիա, Վարվարա Մինաեվնա, ես... շատ եմ մտածել... շատ եմ ղողացել, օ՜օ, չա՜տ եմ ղողացել։ Կարո՞ղ է մարդ յաղթել բնութեանը։ Ե՞ս... քեզ... ոչ... ձեզ անդո՜ւնդն եմ գլորում... Ես։ Նայեցէք, բացի այս շնչառութենից, մի այժ մնացել է իմ մէջ։ Միթէ ես չէմ մտածել արդեքների մասին. միթէ երկու ամիս շարունակ դիշեր ցերեկ չէմ պատերազմել ինքս ինձ հետ։ Բայց այժմ ախար եմ, անկարող, այո, թուլացած, ոչնչացած այս անյաղթելի ղողացմունքից։ Դուցե կարողանայի զսպել ինքս ինձ, եթէ հաւատացած չըլինէի, որ դուք կարհամարհէք նախապաշարմունքները։ Այո, հաւատում եմ, դուք կարող էք մոռանալ մանր մարդկանց կեղծ

հասկացողութիւնն առաքինութեան մասին։ Դուք բարձր էք այդ թղուկներից... նայեցէք ուրիշն նրանց վրայ անվնտե... Մի պահանջէք նրանցից ճիշտ գաղափար իսկական հերոսութեան մասին...

Նրա ձայնը հևոտհևոտ խեղդվում էր։ Նա հազիւ հազ շունչ էր առնում։ Մի քանի վայրկեան դարձեալ լռեց, որ շունչ քաշի, և ապա շարունակեց.

—Ուժ հոգին մեծ է, ընդարձակ է և՛ նրա մըտքերի հորիզոնը... դուք հասկանում էք իմ ասածը, Վարվարա Մինաեվնա։ Երբ կապանքն անտանելի է դառնում, նրան... պիտէք... պիտի առել, աւհամարհել, պիտի խորտակել։ Ասացէք, ղողում էք դեպի ինձ դեպի տանեվորդ չաին այն սիրոյ, որ ահա ինձ հասցրել է այս օրին։ Եթէ ղողում էք, անկարելի է, որ երկար մտածէք։ Բայց, Տէր Աստուած, դուք դեռ ապրատփում էք նախապաշարմունքներից։ Ա՛խ, եթէ իմանայիք, թէ ինչ է թաղնված առօրեայ առաքինութեան դիմակի տակ, թէ որն է յանցանքն և որն է սոդոմներից յանցանք համարված անարատութիւնը։ Խօսցէք, Վառվառէ, մի լռէք։ Ահա, ձեր առջև կանգնած է մի աղնւութիւն, որ առաջ մարդ էր, ապրում էր, դուք միայն կարող էք նրան կրկին կենդանութիւն տալ... Կարդացէք, ուրեմն, իմ ճակատագրի վճիռը... Տեսնում էք ինչ օրի եմ հասել...

Արդարև, նա ներկայացնում էր մի խղճալի պատկեր, այնքան ծայրայեղ ղողացմունքներն ընկճել էին նրան և այնքան նա մոռացել էր ինքն իրան։ Իսկ Վառվառէն, մի ձեռը յենած կոլորակ սեղանի ծայրին, միւս ձեռով աչքերը ծածկած, լուռ, անշարժ, լսում էր բորբոքված սրտից բղխող խօսքերը, որ երբեմն

կրկնում էին և երբեմն արտասանում թերի, անկապ։

—Լռում էք... շարունակեց Ռոստոմեանը, դարձեալ մօտենալով Վառվառէին և հանդարտ ձեռն աչքերից հեռացնելով։—Դուք չէք ուզում խօսել, միթէ այդ է ձեր պատասխանը. մի սառն լռութիւն իմ կրած տանջանքների համար։ Ուրեմն ես գնում իմ կեանքը յանձնեցի արտս ու հոգոյս հաճոյքին... ուրեմն իմ ներքին ձայնն անգթութեամբ խաբեց ինձ և դարձրեց ծիծաղելի ձեր աչքում...

—Ես հայր ունիմ... ցածր ձայնով արտասանեց Վառվառէն, բուռն ջանք դործ դնելով, որ զսպի իրան։

—Գիտեմ...

—Ես սիրում եմ նրան...

—Իսկ ինձ... ոչ։

—Մի սակէք ինձ խօսել իմ սիրոյ մասին։ Նա պարտ է ձեզ համար, Սահեան, ոչ այսօր, ոչ երէկ... Յիշում էք այն օրն, երբ մեզ ցոյց էիք տալիս այս բնակարանը։ Ես չըպիտի տեսնէի ձեզ, տեսայ, և հէնց առաջին րոպէից իմ մէջ յղացաւ այն, ինչ-որ մինչև այն օրը չէի զգացել։ Ապացոյցներ էք պահանջում... Անբուն, վշտալի արտասուքով ողողված գիշերները լեզու չունեն... Ինչու՞ չէք հարցնում ձեր սրտից։ Թէ ինչը ձեր մէջ գրաւեց ինձ—մի սակէք բացատրել... ես անկարող եմ... ես ինքս չեմ հասկանում... Ոչինչ չեմ հասկանում։

Նա հապճեպ կարողացաւ զսպել իւր հեկեկանքը։ Մշտական թախծալի աչքերի մէջ փայլող հուրը, ցցուցողաբար դողացող շրթունքները, ձայնի կաթոգին հնչիւնը—այս բոլորը ոչնչացրին և՛ այն վերջին թոյլ կասկածը, որ տակաւին ծուռ էր Ռոստոմեանի սրտում։ Վառվառէն մի քանի վայրկեան լուռ նայեց յատակին,

յետոյ գլուխը բարձրացրեց և, երբ նրանց հայեացքները կրկին հանդիպեցին միմեանց, Ռոստոմեանը դրկաբաց դիմեց դէպի նա։

—Ո՛չ, հեռու կացէք... Լսեցէք, հայրս, հայրս, հասկանում էք, անբաղդ մարդ, ես նրան սիրում եմ։ Բաւական է այսքանը... Ո՛չ, մեր մէջ ոչ մի կապ չի կարող լինել։

—Վառվառէ...

—Ջուր էք տանջում ձեզ և ինձ։ Աւաց էք,—ինչ կապ կարող է լինել մեր մէջ։

—Սիրոյ ամուր շղթան... Նա սուրբ է, հաստատ է, քան որ և է օրինական կապ։

—Բայց... արդելված է։

—Աւելորդ... մենք կարող ենք... ամուսնանալ։

Վառվառէն դառն ժպտաց։

—Դուք կարող էք ապաստութիւն պահանջել, օրէնքը ձեզ իրաւունք է տալիս,—շարունակեց Ռոստոմեանը վստահ ձայնով։

—Ապաստութիւն... կրկնեց Վառվառէն կսկծալի հեգնութեամբ... ումից պիտի պահանջեմ նրան։

—Միքանդրօնցօվից։

—Միքանդրօնցօվից... Նա դեռ յոյս ունի կրկին ինձ հետ միանալու։

—Բայց ինչ օրէնքով... որ իրաւունքով։

—Ըըը, չըպիտեմ... ես ոչինչ չեմ հասկանում... դոչեց յուսահատ ձայնով Վառվառէն։

—Օրէնքն իրաւունք է տալիս ապահարզան պահանջելու, լսում էք, Վառվառէ, մեղանչող ամուսինը պարտաւոր է տալ ապահարզան։ Ես այս հաստատ գիտեմ...

—Իսկ ԵԹԷ նա չի համաձայնվի։

—Պարտաւոր է համաձայնվել, մեզանչողը նա է... դուք կարող էք ապացուցանել...

—Ոչ. նա երբէք յանձն չի առնիլ իւր յանցանքն, երբէք, ես ճանաչում եմ նրան։ Կամենում էք, որ ես յանձն առնեմ մի չքնաղ յանցանք... Տէր Աստուած, ես... ես... պարտաւոր եմ։ Բայց ոչ, դուք կը լինիք։ Ես գնալ կընձեամ կապված, ազատութիւնը կըստանայ նա միայն։ Իսկ հայրս...

Նա գնաց թուլացած նստեց աթոռի վրայ և երեսը ձեռներով ծածկեց։

—Վառվառէ, մի յուսահատվիր, մենք ուրիշ ելք կըգտանենք, — դոչեց Ռոստամեանը, խելագարի պէս ճանկելով Վառվառէի ձեռն և հպելով իւր բոցավառ շրթունքներին։ Թող մեզ հալածեն, թող զրվեն մեզանից, վոյթ չէ, ես չեմ վախենում ոչ ոքից...

—Հայրս, հայրս, մոռացեցէք նրա մասին,—ասաց Վառվառէն, թողնելով իւր ձեռը Ռոստամեանի ձեռների մէջ,—դուք գիտէք, որ նա չի կարող մի այդպիսի գոհաբերութիւն անել...

—Նա բարի է, ազատամիտ է, նախապաշարված չէ... Նա քեզ սիրում է։

Վառվառէն լուռ բացատրեր չարժեց գլուխը։

Ռոստամեանը շարունակեց.

—Ինչ, մինէ իւր միակ ազգկայ բաղդը չի հաժոդիլ նրան, չի կակղեցնիլ նրա սիրտը։ Վառվառէ, աղջիկը, նա ձեզ սիրում է։

—Ես իրաւունք չունիմ պահանջել նրանից անկաբելին, հասկացէք... պատասխանեց Վառվառէն... Նա սիրում է ինձ, բայց իրաւունք չունիմ այդ սիրոյ փո-

խարէն նրանից անկարելի զոհաբերութիւն պահանջել— պահանջել, որ նա իւր անունը, պատիւը հասարակութեան խօսակցութեան առարկայ դարձնի։

Ռոստամեանը, դառն հեգնութեամբ գլուխը շարժելով, յուսահատված ու թուլացած, նստեց բազկաթոռի վրայ։

—Ուրեմն, ես սխալված էի ձեր վերաբերմամբ... արտասանեց նա տաքացած, ճակատը ձեռներով սեղմելով և երեսը ծածկելով։—Ես այդպէս չէի կարծում, —շարունակեց նա նոյն դրութեան մէջ,—ես ուրիշ համոզմունք ունէի ձեր մասին։ Բայց... փոյթ չէ... այո, դիտեմ այսուհետև, թէ ինչ պիտի անել,—աւելացրեց նա, տեղից բարձրանալով և կէս ապառնոզական, կէս աղերսալի մի հայեացք ձգելով Վառվառէի վրայ։

—Դուք չէք հաւատում ինձ, Ստեփան, այդ աւելի վշտալի է ինձ համար, քան իմ դրութիւնը,—ասաց Վառվառէն և ապա, երեսը դարձնելով միւս կողմ, աւելացրեց.—ո՞րքան դառն է սիրել և իրաւունք չունենալ սիրելու...

Հեկեկանքը խեղդեց նրա ձայնը. նա սկսեց լալ։ Խղճի մի տաւօրինակ խայթոց զգաց Ռոստամեանը։ Նա շտապով վերկացաւ տեղից, մօտեցաւ, գրկեց Վառվառէին և տարաւ դէպի դահլիճը։ Վառվառէն, անդիտակցաբար հպատակվելով նրան, նստեց դահլիճի վրայ, իսկ Ռոստամեանը չոքեց նրա առջև և իւր բորբոքված շրթունքներով սկսեց համբուրել նրա ձեռները...

Պատշգամբի վրայ դարձեալ մի շարժման ձայն լսվեց։ Այս անգամ Վառվառէն, որ նստած էր երեսը դէպի դուրս, նշմարեց մի մութ պատկեր, որ շտա-

պով անցաւ լուսամուտի առջևով, ինչպէս գող կատու։

—Հեռացիր, բաւական է, հեռացիր... գոչեց Վառվառէն, դուրս սպրդելով Ռոստամեանի դրկից և ոտքի կանգնելով... Նա, կարծեմ, գալիս է... Դուրս եկ... ես չեմ ուզում, որ նա մեզ միասին տեսնի, նա կը հասկանայ, հարուածը յանկարծակի կըլինի...

Այս ասելով, նա վազեց դէպի դռները, կարծելով, թէ պատշգամբի վրայ երևացողը հայրն է։ Բայց ոչ ոքի չըտեսաւ։ Այն ինչ՝ Ռոստամեանը, տակաւին կաշկանդված դիւթական մերձաւորութեամբ, չէր շարժուում իւր տեղից։

Փողոցի լուսամուտից լսվեց կառքի դղրդիւն, որ յանկարծ ընդհատվեց։

—Լսո՛ւմ էք։ Նա եկաւ... հեռացէք, եթէ սիրում էք ինձ...

Արդէն սանդէխի վրայ լսվեց մէկի ոտնաձայնը։ Այլ ևս ուշ էր թագնվելը Ռոստամեանը, յուսահատ դրութեան մէջ, դուրս եկաւ դռներից ոլոր-մոլոր քայլերով։

Մի ձեռում մի փունջ մանիշակ, միւս ձեռում՝ ձեռափայտը, սենեակի դռները մօտենում էր Միհաս Կիրիլիչը։

Եթէ Ռոստամեանը նոյն րոպէին կարողանար հասարակ նայել ծերունու կողմ, կըտեսնէր, թէ ինչպէս վերջինն ապշած, անշարժ մնաց պատշգամբի վրայ, տեսնելով նրան դռների մօտ։ Բայց նա, հաղիւ հաղ քայլերը փոխելով, շտապում էր խոյս տալ ծերունուց։

Այդ միջոցին նրա ականջին հասաւ մի բարձրաձայն ծիծաղ։ Նա դուխը բարձրացրեց և իւր մթնած աչքերով նատալիա Պետրովնայի բնակարանի լուսամուտներից մէկի մէջ տեսաւ մի փոքրիկ դլուխ երկու սևորակ խորամանկ աչքերով...

X

Օրը բաւական շոգ էր, ամենքը, ղբօսանքից յոգնած, վերադառնում էին իրանց տները. ճաշելու ժամանակ էր։ Յուզված սրտով, ամօթահար, շփոթված մտքերով, սակայն երջանիկ զգացմունքով Ռոստամեանը դիմեց դէպի քաղաքի կենտրոնը։

Ո՛ւր էր գնում—ինքն էլ չըգիտէր։ Նա կամենում էր առանձնանալ մի տեղ և անձնատուր լինել իւր զգացմունքներին։ Բայց նա տակաւին չէր զգում և ոչ էլ գիտէր, թէ արդէն երրորդ ժամն է։ Քաղաքի առաջնակարգ փողոցներից մէկում, մի բարձր շինութեան ներքին յարկի ապակեայ դռների վրայ, նրա աչքին ընկաւ խոշոր ֆրանսերէն տառերով գրած «Կօֆէ-Ռեստորան» խօսքը։ Այդ մի ծանօթ հիւրանոց էր, ուր նա մի քանի անգամ ճաշել էր։ Նա մտաւ ներս։

Մի մեծ սենեակում դրած էին մի քանի սեղաններ, ձիւնի պէս ճերմակ և մաքուր սփռոցներով ծածկված։ Մօտ մի տասնեակ հիւրեր, այս ու այնտեղ առանձին-առանձին նստած, լուռ ճաշում էին, աչքի տակով նայելով միմեանց վրայ։

Ռոստամեանն անցաւ մի ուրիշ փոքրիկ սենեակ, ուր ոչ ոք չկար։ Նրա առջև իսկոյն ցցվեց սև հագնված մի իմբերէլ ապասաւոր, կերակուրների ցուցակը ձեռին և մի երկայն անձեռոցիկ ուսովը գցած։ Ռոստամեանն, առանց ընտրելու, պատուիրեց առաջին աչքին ընկած կերակուրն և մի շիշ գինի։

Մինչ ծառան պատուէրը կըկատարէր, նա, ար-
ժանգնները սեղանին չինած, ծանրացած դլուխը ձեռ-
ներով բռնած, մտածում էր իւր արարմունքի մասին:

Անապատելի անցք... ա՛խ, բաղդատը եղելութիւն:
Ի՞նչպէս յանկարծ տեղի ունեցաւ այն: Միթէ Ռոս-
տամեանն այդ մտադրութիւնն ունէր, երբ դնում էր
Վառվառէի մօտ: Ո՛չ. նրան ձգտում էր Վառվառէին
տեսնելու ցանկութիւնը: Բայց ինչո՞ւ համար, ինչո՞ւ
դարձեալ ինքնախաբէութեամբ պարապել. չէ՞ որ վերջ
ի վերջոյ ամէն ինչ պիտի պարզվէր. չէ՞ որ նրա հա-
մար այլ ևս անտանելի էր դարձել անորոշ դրութիւ-
նը: Ուրեմն, կատարվեց այն, ինչ-որ վաղ թէ ուշ պի-
տի կատարվէր...

Այժմ գէթ փարատվեցին նրա կասկածները—Վառ-
վառէն սիրում է նրան: Բայց չէ՞ որ նոյն Վառվառէն
նրա առջև բաց արաւ և՛ այն խոչնդոտները—հօր ինք-
նասիրութիւնը, մարդկային օրէնքները և կրօնի կա-
նոնները: Ո՞րն ընտրել—արհամարհանքն, անէծքն, ա-
տելութիւնը, թէ մշանջենական հոգեկան ծանր, մա-
շող վիշտը, կենդանի մահը, բարոյական ոչնչութիւնը:

Այստեղ Ռոստամեանի մտքերը չփոթվեցին: Նա
մոռացաւ լրան և սկսեց մտածել միմիայն Վառվա-
ռէի մասին: Միթէ կարելի՞ է մի կնոջից պահանջել
այնչափ քաջութիւն... միթէ սէրը կարող է Վառվա-
ռէին ստիպել, որ նա մի այնպիսի ծանր զոհաբերու-
թիւն անի—պրկվի հօր սիրուց, հեռանկարվի նրա յա-
ւիտենական անէծքին, հասարակութեան նախատին-
քին, ծաղրին և ատելութեանը: «Հայրս չի կարող տա-
նել այդ ծանր հարուածը, նա շատ է սիրում ինձ»,
ասաց Վառվառէն:

Սիրում է. ինչ մի բռնակալական սէր է այդ.
ինչ սէր է, որ յանուն մի ամբողջ և թշուառ կապի,
դրդում է հարազատ հօրն իսպառ ոչնչացնել իւր միակ
դստեր կեանքը: Ո՛չ, այդ—մոլեռանդ հօր եսամոլու-
թիւն է, մի եսամոլութիւն, որ, սակայն, ծնողական սիրոյ
անունով թունաւորում է զաւակի դոյութիւնը: Մի-
նաս կիրիլլիչը սիրում է ինքն իրան, իւր հանգստու-
թիւնն, և ոչ երբէք Վառվառէին:

Սպասաւորն արդէն բերել էր նրա պահանջածը:
Նա մի քանի պատառ կերակրից դրեց բերանը, մի
բաժակ դինի խմեց և լիք շիշը զգուանքով հեռացրեց
մի կողմ:

Ի՞նչ է անում այժմ այդ սիրող հայրը.—արդեօք
նախաճաշում է աղջկան, իակ աղջիկը, նրա առջև չոքած,
արտասուալի աչքերով նայում է խնդրում...

Նա մտաբերեց և՛ Կատոյի խորամանկ աչքերը,
չարախնդիր ծիծաղը: Ուրեմն այդ կինը լրտեսել է
նրանց: Վերջապէս, թագցնել այսուհետև այլ ևս ան-
կարելի է: Վաղը, միւս օրն անպատճառ կինն ամբողջ
քաղաքի մէջ հռչակելու է կատարված անցքը, հարկաւ,
մէկին հինգ աւելացնելով:

Անարդ: Ի՞նչն է այդ կնոջը ստիպում թշնամանալ
ուրիշների բաղդին: Նախանձը:—Ո՛չ, կայ մի այլ պատ-
ճառ... Չէ՞ որ մի բանով պիտի արդարացնի իւր յան-
ցաւոր խիղճը: Ցեր Աստուած, և այդպիսինները պիտի
դատաւոր լինեն Վառվառէի դլխին...

Հիւրանոցը տակաւ առ տակաւ դատարկվեց, միւս
սենեակից ձայն չէր լսվում: Սպասաւորն անդադար
ներս էր մտնում ու դուրս դալիս: Ռոստամեանը վե-
ճարեց և դուրս գնաց:

Փողոցում նրա տխրութիւնը կրկնապատկվեց. ուր գնալ այժմ։ Տունն վերադառնալ։ Ոչ,—անկարելի է առ այժմ։ Ամօթի զգացմունքը դարձեալ գրգռվեց նրա մէջ. ինչ երեսով նա պիտի հանդիպէ Մինաս Կիրիլլիչին։ Անշուշտ Ծերունին գիտէ արդէն, թէ ինչու իւր հարևանն այնպէս յայտնի եկաւ։

Թող իմանայ, թող յայտնի լինի և՛ ամենքին։ «Ո՛չ ոք, ո՛չ ոք այլ ևս չի կարող մեզ բաժանել, ո՛չ հասարակութեան բամբասանքը, ո՛չ օրէնքի խոչնդոտները և ո՛չ Մինաս Կիրիլլիչի պատուասիրութիւնը, միայն թէ վաւաշաւէն սիրէ ինձ այնպէս, ինչպէս ես եմ սիրում...»

—Ռոստամեան,—լսեց նա յանկարծ մի ծանօթ ձայն, յետ նայեց և կանգ առաւ։

Փողոցի միւս կողմից շտապ քայլերով մօտենում էր մի երիտասարդ պարոն։

Դա Ռոստամեանի ուսանող ընկերը Սարգսեանն էր։ Այս երիտասարդի հետ Ռոստամեանը Մոսկվայում հաճախաբար աւելի մօտիկ բարեկամութիւն ունէր, քան մի որ և է ուրիշի հետ, թէև Յարգսեանն ուսանում էր համալսարանում, իսկ ինքն երկրագործական ճեմարանում։ Սարգսեանն իրնէ բարեսիրտ, անկեղծ և մտածող, խօսել սիրող տղայ էր։ Նրա բուն թիֆլիսեցի ծնողները բաւական ունևոր մարդիկ էին, ուստի շատ անգամ նա իւր ստացած թոշակի աւելուածով կարողանում էր օգնել աղքատ ընկերներին։ Ի միջի այլոց, նա մի անգամ նեղութենից ազատել էր և՛ Ռոստամեանին, հակառակ վերջինի յամառութեանը, տալով նրան փոխադարձաբար մի գումար ուսման և բնակարանի վարձն իւր ժամանակին վճարելու համար։ Ռոստամեանն, այս օգնութենից յետոյ, ի սրտէ յարգում էր Սարգսեանին և թէև նրանց բարեկամութիւնը մտերմութեան աստիճանից տակաւին հեռու էր, բայց դէպք եղած ժամանակ Սարգսեանն իւր անկեղծութեամբ կարողանում էր մերձենալ նրա սրտին...

—Ո՞ւր ես գնում այդպէս մտամոլոր,—հարցրեց Սարգսեանը, բարեկամաբար ժպտալով և երկու ձեռներով սեղմելով Ռոստամեանի ձեռը։

—Հէնց այնպէս, պրօմնում եմ,—պատասխանեց Ռոստամեանը։

—Ուրեմն, թոյլ տուր քեզ ընկերանալ։ Զարմանալի է, ոնևէրին ես սաստիկ ախորժում եմ անգործութենից։ Գնանք միասին։

Նրանք, խօսակցելով, անցան դէպի Միքայէլեան կամուրջի կողմը։ Սարգսեանը հարցրեց Ռոստամեանի առողջութեան և գործերի մասին, պատմեց իւր դրութիւնը, հաղորդեց մի քանի նորութիւններ։ Ճեռոյ խօսակցութիւնն անցաւ նրանց նախկին ուսումնակիցների վրայ։ Սարգսեանը սկսեց մէկին պախարակել, միւսին քննադատել, մի երրորդի մասին խօսել արհամարհանքով։

—Գիտես ինչ,—ասում էր նա կէսանքից հիասթափված մարդու եղանակով,—այս անպիտան կէսանքը մարդու շատ է փչացնում։ Նա մի սարսափելի փորձութիւն է։ Այն, ինչ-որ ատում էինք ուսանողութեան ժամանակ, այժմ մեզ շատ հրապուրիչ է երևում. մենք նրանով յափշտակվում ենք։ Օրինակ, ես... պարզ զգում եմ, որ օրից օր ընկնում եմ, անկեղծ եմ ասում, ընկնում եմ, Ռոստամեան։ Երբեմն նայում եմ ինձ նախկին Սարգսեանի աչքերով և ինչ եմ տեսնում, գիտե՞ս, տեսնում եմ, որ արդէն մինչև ծնկները, խոպի

պէս, խաւել եմ կեղտոտ, հոտած ճահճի մէջ և մի փոքր ևս անցնի, պիտի բոլորովին նստեմ: Այդ դեռ ևս եմ... կան ինձանից վատերը: Սաթունեանը, այն ծայրայեղ նիհիլիստը, այժմ ծայրայեղ չինօվնիկ է դարձել: Մեսրոպեանը, յիշում ես այն մոլեռանդ քահոգշին, որ միշտ ժողովրդի շահերի համար վրդովուլը բերանում կրխոսէր, երևակայիր, այժմ չի ամաչում ասել. «Ջոհում եմ իմ բոլոր այն ժամանակուայ գաղափարները մի կնոջ քաղցր ժպտին»: Ծաղրում է, ծիծաղում է, բամբասում է, էհ, ինչ ասես, անում է. մանչում է իւր կօշիկներով պարահանդէսներում դահլիճների յատակը, խանդում է, նախանձում է, աշխատում է վայր ձգել իւր հակառակորդի անունը: Եւ այս բոլորն ինչո՞ւ համար:—Երբեմն մի կնոջ աչքին լաւ երևալու համար: Ախ, Սահիան, չես կարող երևակայել, թէ կին ասած արարածը որքան ազատագրում է մեր բնութիւնը: Նա ինձ էլ է վշացրել...

—Կինն ազատագրում է մեր բնութիւնը,—կրկնեց Ռոստամեանը: Եւ այդ ասում ես դո՛ւ, որ մի ժամանակ պաշտպանում էիր կանանց:

—Այո՛, պաշտպանում էի, ինչու թագցնեմ մեղքս, պաշտպանում էի և հիանում այն փիլիսոփաներով, որոնք գոռում ու գոչում են, թէ կինը ազատուին է, թէ նա հարատահարվում է և այլն և այլն: Ռոստեամ մեր բոլորի աչքերն հանեցին ու գաղափարները փոխվել են, ես էլ եմ փոխել իմ համոզմունքը: Բայց ես գիտեմ ճշմարտութիւնը: Ես այնքում եմ այժմ, որ մենք ազատագրիկս ենք կանանց ստրուկները և ոչ թէ նրանք—մերը: Ուսումնասիրիր կեանքի մանրամասնութիւնները և դու շատ ապացոյցներ կը-

գտնես: Ասա, խնդրեմ, որոնք են ստրուկի յատկութիւնները: Չէ որ կեղծաւորութիւնը, հաճոյախօսութիւնը, բութ սրախօսութիւնը, ստախօսութիւնը, երկիւղը, հնազանդութիւնը: Այժմ ասա, ով որի առջև աւելի է կեղծում, հաճոյախօսում, ստում ով որի քին աւելի է հպատակվում կեանքի մէջ—կինը, թէ տղամարդը:—Տղամարդը: Ես չատերին եմ ճանաչում, որ յաջողութիւն ունեն կանանց շրջանում լոկ այն պատճառով, որ գիշեր ու ցերեկ կեղծաւորում են նրանց, ստղակի կամ ակնարկութիւններով գովում են նրանց քիթը, բերանը, աչքերը, հասակը, հոտ հնազանդութեամբ կատարում են նրանց կամքը: Այլ ևս չեմ խօսում այն անթիւ չիմարների մասին, որ կնոջ մի ժպտի համար կրկէսային ծաղրածուի դեր են կատարում: Ահա, մտիկ արա այն տուտուցին,—աւելացրեց Սարգսեանը, Ռոստամեանի ուշադրութիւնը դարձնելով մի բաւական երիտասարդ տղամարդի վրայ, որ անցնում էր երկու կանանց հետ:—Ինչո՞ւ նա է մէջքից այնպէս թեքվում խօսելու ժամանակ և ոչ թէ կանայք: Բայց նայիր, ինչպէս կանայք հպարտ, գլուխները բարձր պահած, լսում են, առանց անգամ նրան երեսին նայելու: Իսկ նա չիմարներից չէ. մարդը թիֆլիսի մէջ յայտնի է ինչպէս ամենախելօք դատաստ: Եւ այսպէս, կանայք տղամարդկանց ստիպում են նախ մէջքը թեքել, յետոյ լեզուն, յետոյ ամբողջ բնաւորութիւնն և հետզհետէ ստորացնում են նրանց ու դարձնում...

Մինչ Սարգսեանը խօսում էր, Ռոստամեանը լուռ խորհում էր նրա ասածների մասին: «Շատ կարելի է, որ քո ասածն ուղիղ է», մտածում էր նա, մերթ ժըպ-

տալով և մերթ հաւանական կամ բացասական բառեր արտասանելով։

Ներանք արդէն Միքայէլեան փողոցումն էինք։ Օրը սկսել էր մթնել։

Ցանկարծ Սարգսեանը կիսահեգնական եղանակով ասաց.

—Դու էլ բաւական փոխվել ես, Ռոստամեան։ Առաջ ես քեզ վրայ ծիծաղում էի, որ դու, պառաւած կոյսի պէս, աշխարհից հեռացած, փակվել ես տանը։ Բայց յետոյ, երբ մի փոքր կեանքի համն առայ, քեզ աւելի հասկացայ և նախանձում էի։ Այժմ, եղբայր, տեսնում եմ—չէ, քեզ էլ կեանքի հոտանքը փոքր առ փոքր քշում է։ Ախ, կանա՛յք, կանա՛յք։

Այս անսպասելի նկատողութիւնն և խորհրդաւոր եղանակը, որով Սարգսեանը կրկնեց «կանա՛յք» խօսքը, Ռոստամեանին չփոթութեան մէջ ձգեցին։

—Ես չեմ հասկանում քո ասածը, պարզ խօսիր, Սարգսեան,—ասաց նա հետաքրքրված։

—Լաւ, հրեշտակ մի ձևանար։ Ո՞վ է այն կինը, որի հետից այնպէս ընկել էիր Նուագահանդիսի երեկոյ։ Յիշում ես... Այնքան յափշտակված էիր, որ ինձ էլ չընկատեցիր։

—Նա իմ հարևանն է։

—Պսակված է և մարդուց բաժանված, չէ։

—Այո,—պատասխանեց Ռոստամեանը լուրջ եզրակացով։

—Հը՛մ, ուրեմն դուր չեն խօսում։

—Ո՞վ է խօսում, ինչ են խօսում։

—Ես, ճշմարիտն ասած, ուրիշների ասածներին շատ էլ չեմ հաւատում, բայց խօսում են, ինչ արած։

Ճանաչում ես տիկին Բեզիրդանովին, քո տանտիրուհու աղջկան։ Ուրիշն ասած, ես այդ կնոջ երկրպագուներից չեմ, դիտեմ ինչ պատուղ է։ Բայց նա ընդունված է մի լաւ ընտանիքում։ Այդ ընտանիքի հետ, անունը մի հարցնիր, ես շատ լաւ ծանօթ եմ, այցելում եմ։ Ահա, այնտեղ եմ լսել։

—Բայց ինչ ես լսել։

—Որ դու սիրահարված ես այն կնոջ վրայ։ Ես չեմ հաւատում, միայն ղժոյշ կաց, թակարդի մէջ չընկնես, Սաւփան. քեզ նմանները ոտքով ու ձեռքով են ընկնում։ Բայց, կրկնում եմ, չեմ հաւատում, որ դու սիրահարվես ամուսնացած կնոջ վրայ, այդ դու չես անիլ։

—Իսկ եթէ անե՞մ,—հարցրեց Ռոստամեանը, տակաւին կարողանալով պահել իր սառնութիւնը։

—Այն ժամանակ, էհ, ինչ ասեմ, պիտի ղժոյշ լինել։ Այդպիսի դէպքերում ճարպիկները միշտ յետ դառնալու ճանապարհ են թողնում, եթէ ոչ—հետևանքը կարող է վատ լինել...

Այս խօսքերը վիրաւորեցին Ռոստամեանի ղժացմունքը։ Նա հակացաւ Սարգսեանի միտքը։ «Ահա, ուրեմն, ինչպէս է մտածում և խորհում նոյն իսկ կրթված մարդը»,—ասաց նա իր մտքում։ Նա լռեց, Սարգսեանը—նոյնպէս, ղժալով, թէ ինչ ազդեցութիւն արին իր խօսքերը նրա վրայ։ Փողոցի ծայրում նրանք ձիաքարշ նստեցին և վերադարձան։ Այլ ևս խօսակցութիւնը չշարունակվեց. Ռոստամեանն առիթ չէր տալիս, թէև Սարգսեանն աշխատում էր մեղմացնել իր խօսքերի ծանր տպաւորութիւնը։

Արդէն խուլ դիշեր էր, երբ Ռոստամեանն եկաւ իր բնակարանը...

Ճաշի ժամանակ, ճաշից յետոյ Մինաս Կիրիլլիչը լուռ, անդադար տալտօրինակ հայհոյանքներով մոխիկ էր անում Վառվառէի չփոթված դէմքին։ Երեկոյեան սովորական պահին դուրս եկաւ փողոց, բայց դռներից հեռու չդնաց. կէս ժամ անցուդարձ արաւ տան առջև, յետոյ նորա մոտ և փակվեց իւր առանձնասենեակում։

Յաջորդ առաւօտը Ժերունին կանչեց խոհարարին, օրուայ ուտելիքի համար պատուէրները տուեց և, հակառակ մշտական սովորութեան, այդ մասին չըհարցրեց աղջկայ ցանկութիւնը։ Իւր սենեակից նա դուրս եկաւ միայն ճաշի ժամանակ, իսկ երեկոյեան թէյը խմեց այնտեղ և գնաց պլրիի մօտ։ Երկու ժամ անցած, նա յետ եկաւ, աւելի յուզված և դարձեալ փակվեց իւր սենեակում։

Վառվառէն յուսահատ, սիրտը դառնութեամբ լի, լուռ, չէր համարձակվում ուղիղ մոխիկ անել հօր երեսին։ Պարզ էր նրա համար, որ հայրը մի բան հասկացել է, ուստի առաջին պահ ամօթն աւելի էր տանջում նրան, քան սիրոյ յայտարդ չըստացած պատմունքը։ Նա աւելի կըցանկանար, որ հայրը պարզեր իւր կասկածը, նախատէր նրան բացարձակ, քան լռէր։ Հօր անիօսութիւնն, իմաստալի հայհոյանքները, մերթ ընդ մերթ հառաչէն և, վերջապէս, անտանելի խուսափումը, միանգամայն կեղեքում էին դստեր սիրտը։

Մի և նոյն ժամանակ, Վառվառէն գիտէր, որ այդ լարված դրութիւնն երկար տևել չի կարող. վաղ թէ ուշ հայրը բացատրութիւն պահանջելու է, ուրեմն բարւոք է վաղ, քան թէ ուշ։

Ի՞նչ պատասխան պիտի տար հօրը. սիրում է, թէ

չէ Ռոստամեանին, եթէ հայրը հարցն այսպէս պարզ կերպով առաջարկէր։—Այո, սիրում է։ Բայց կարո՞ղ է նա այնքան քաջութիւն ունենալ կամ խստասիրտ լինել, որ չըխաբի հօրն, այն հօրը, որի առջև երբեք նա չէր սուտ։ Ոչ, թագցնել իւր երջանկութիւնը—նա չի կարող։ Իսկ յայտնել... աւելի դժուար է։

—Նա այժ չի ունենալ հարուածին դիմանալու... կրկնում էր Վառվառէն անդադար...

Երեկոյեան նրա դառնութիւնն աւելի զօրացաւ, երբ, իւր սենեակի դռներից նայելով, Ռոստամեանի պատուհանում լուսոյ նշոյլ չըտեսաւ։ Ո՞րտեղ է նա, արդեօք, ինչ պատահեց նրան. մի դուցէ յուսահատութենից իւր դէմքին մի փորձանք բերեց։

Ամբողջ երեկոյ, սենեակի մէջ անցուդարձ անելով, նա չարաչար տանջվում էր այն մտքից, թէ ինչու Ռոստամեանին հեռացրեց իրանից յուսահատութեան մէջ, ինչու այդ տագնապալի րոպէներին չեցրեց նրան խոչնդոտների մասին։ Խղդվուն քայլերով, դառնաթափ դէմքով երբեմն նա մօտենում էր դաւթի կողմի լուսամուտին և երբեմն փողոցի կողմի լուսամուտին։ Նայում էր դէպի դաւիթ, նայում էր դէպի փողոց, և դիշերային մթութիւնն ահով լեցնում էր նրա սիրտը։ Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել, ո՞րտեղ գտնել Ռոստամեանին։ Յանկարծ նրա երեւակայութիւնը ակռաց սոսկալի պատկերներ տեսնել։ Մերթ Ռոստամեանն երեւում էր նրան Քուրի ափում, կամրջի վրայ, պատրաստ գետը ձգելու իրան, մերթ արդէն խեղդված, կամ գնդակահար և արիւնաներկ կրծքով թաւալված խուլ փողոցներից մէկում կամ մի հիւրանոցում։ Վառվառէն խելագարված յարձակվում է նրա

սառն դիակի վրայ, բայց արդէն ուշ է, նրա ականջին հնչում են երեք սարսափելի բառեր։

«Պատճառը դու էիր»։

Վայրկենաբար նրա մէջ բուռն ցանկութիւն յղացաւ դուրս վազել, որոնել Ռոստամեանին, գտնել, յետ դարձնել։ Թող նա չըլսուհասովի, Վառվառէն նրան է պատկանում յաւիտեան, այո, յաւիտեան, ոչ ոք չի կարող բաժանել նրանց։ Նա գոհում է իւր կեանքը... վճռ չև անդամ... հօր սէրը, պատիւը։

Նա յարձակվեց դէպի դռները, նայեց մի անդամ ևս դէպի դաւիթ և արդէն պատրաստ էր դուրս գալ, երբ նրա ականջին պատշգամբի միւս կողմից հասաւ խօսակցութեան թոյլ ձայն։ Երկու մարդկային ուրուագծեր երևեցան հեռուից—մէկն անցաւ տանիքով բնակարանի միւս կողմը, բայց արաւ Ռոստամեանի սենեակն և մտաւ ներս։ Վառվառէն հառաչելով յետ դարձաւ։ Նա կենդանի է, այո, ահա նրա սուրը աղօտ լուսաւորված պատուհանի ապակիների վրայ։ Ուրախութեան արցունքը թրջեց Վառվառէի այտերը։ Նա թեթևացած սրտով մտաւ անկողին։ Բայց բորբոքված նեարդերն երկար միջոց հանգստութիւն չէին գտնում...

Նոյն դրութիւնը շարունակվեց երկրորդ օրն և երկրորդ գիշեր։ Առաւօտը Ռոստամեանը կանուխ դուրս գնաց և չերևաց մինչև կէս գիշեր։

Երրորդ օրը ծերունին առաւօտը թէյ խմեց, խոհարարին ուղարկեց շուկայ, պաղպեղին ուղարկեց մի ուրիշ տեղ, դռները փակեց և Վառվառէին կանչեց իւր առանձնասենեակը։

—Նստիր,—ասաց նա սառն և հանգիստաւոր ձայնով, ձեռով ցոյց տալով իւր դէմուդէմի աթոռը, և ինքը, անալին խալաթը հագին, նստեց սեղանի միւս կողմում։

Նրա այտերը դեղնած էին, ձեռները դողում էին։ Վերջին երկու օրուայ ընթացքում նա, կարծես, ուժ ի նիհարել էր ու ուժի ծերացել։

Վառվառէն զգաց, որ հասել է վճռական րոպէին և աշխատեց, որքան կարելի է, զսպել իւր ներքին ալեկոծութիւնը։

—Վարվարա Մինաևվնա,—խօսեց ծերունին հանդիսաւոր եղանակով,—ես ձեզ հրաւիրել եմ, որ հարցնեմ այն, ինչ-որ հարցրի երկու շաբաթ սրանից առաջ, և դուք վճռական պատասխան չըտուեցիք։ Ասացէք, վերջապես, համաձայն էք ապրել ձեր ամուսնու հետ, թէ ոչ։

Վառվառէն ոչինչ չըպատասխանեց։

—Համաձայն էք, թէ ոչ,—կրկնեց Մինաս կիրիլլիչն, այս անգամ ամենախիստ դատաւորի քննող ձայնով ու շարժուձևով։

—Պապա... ասաց Վառվառէն և ամբ ձեռով ծածկեց աչքերը։

—Համաձայն էք, թէ ոչ,—երկնեց հայրը։

—Ես այն օրը ձեզ պատասխանեցի...

—Թողէք, Աստուած սիրէք, այդ փափուկ ձևերը, ձեր քնքշութիւնն ինձ արդէն ձանձրացրել է։ Պատասխանեցէք հարցիս. կամենում էք հաշտվել ձեր օրինական ամուսին Ակիմ Աբրոսիմիչ Միքանդրովնայի հետ։

—Ո՛չ։

Մինաս Կիրիլլիչի աչքերը փայլեցին։ Սակայն զսպեց իւր բարկութիւնը։

—Ա՞յդ է ձեր վերջին պատասխանը։

—Այո,—արտասանեց Վառվառէն դարմանալի հաստատակամութեամբ, որ ներշնչում էին նրան հօր խստահնչիւն ձայնն և վճռական հարցը։

Ծերունին մի վայրկեան լուռ մտածեց։

—Շնորհակալ եմ ձեր վերջնական պատասխանի համար,—շարունակեց նա, հառաչելով,—չատ շնորհակալ եմ։ Այժմ թոյլ տուէք, յարգելի տիկին, մի ուրիշ հարց ևս առաջարկել ձեզ։—Ես վճռել եմ այս օրերս ուղևորվել Մոդոկ, կըկամենաք, արդեօք, ինձ հետ գալ...

Աւելի շարունակել հարկաւոր չէր. Վառվառէն հասկացաւ հարցի բուն բովանդակութիւնը։ Նա դլուխը խոնարհեցրեց կրծքին և ոչինչ չըպատասխանեց։

—Մենք չենք կարող Թիֆլիսում մնալ այսուհետև,—ասաց Ծերունին, իր պննող հայեացքն ուղղելով աղջկայ երեսին,—այո, չենք կարող, պէտք է այստեղից գնանք, հասկանում էք, պէտք է գնանք շուտով, մինչ օրը, վաղը, հէնց այսօր...

Այլ ևս նա կորցրեց իր առնութիւնը։ Նրա ներքին շուրթն ու ծնօտը սկսեցին դողալ և ձայնը դադարեց։ Նրա խրտաքանչիւր մի խօսքն ասեղի պէս ցցվում էր Վառվառէի սրտի մէջ։ Դուստրը հազիւ հազ կարողացաւ զսպել իրան, որ աթոռի վրայից չընկնի հօր ոտների առաջ։ Այսպէս, ուրեմն, հայրը հասկացել է ամէն ինչ և ուզում է բաժանել նրանց։

—Դուք չէք խօսում, տիկին,—գոչեց Ծերունին,—հասկանում եմ պատճառը։ Եւ ինչպէս չըհասկանամ, պարդ է, պարդ... Անամ...

Նա, ատամները կրճատելով, ձեռն ուժգին զար-

կեց սեղանի ծայրին և ոտքի կանգնեց։

—Հայր... արտասանեց Վառվառէն թոյլ ձայնով։

—Աա, ուրեմն, յարգելի տիկին, չէք հերքում... ուրեմն այն գարշելին, որին ես յիմարութիւն ունեցայ իմ տունն ընդունել, խելքից հանել է ձեզ։ Նա, այն լիրբը... Ախ, եթէ ես կիմանայի... Անամօթ աղջիկ, ասա, ուշ չէ...

Վառվառէի աչքերի առջև խաւարվեց ամէն ինչ. նա ցնցողաբար վեր թռաւ տեղից և չոքեց հօր ոտների առջև։

—Հայր, սիրելի, բարեսիրտ հայր, մի անիծէք ինձ, խնայեցէք, ո՛չ, ուշ չէ, հայր, մեղաւորն ես եմ...

Դառն հեկեկանքը կոկորդում խեղդում էր նրա խօսքերը։ Դողդոջուն ձեռներով նա բռնեց հօր խալաթի փէշերը և մօտեցրեց իր շրթունքներին։

—Հեռու կաց, անիծված, հեռու, ասում եմ... բացականչեց բարկութիւնից խելագարված Ծերունին։

Բայց Վառվառէն, հօր փէշերը գրկած, աղերսալի հայեացքով նայում էր դէպի վեր, նրա կատաղի դէմքին։

—Հեռացիր... կրկնեց հայրը, հոգաթափի ծայրով խփելով աղջկայ կրծքին... Դնա, սիրիր նրան, սիրեցէք միմեանց, վայելեցէք... Թող Բիրիչչիեվի պատիւը ցեխի հետ հաւասարվի... Թող ատեն նրան... Թող անունդ երես տան նրա վրայ և ղղուանքով երես դարձնեն... Դնա, ես ապրիկ չունիմ... Նա մեղաւոր ինձ համար, ախ, եթէ դուք միայնակ հասկանում... Ի՞նչ էր անում նա այստեղ, ասա, ինչ էր անում այստեղ այն անամօթը...

—Նա մեղաւոր չէ... դուք էք անիծում նրան...

—Մեղաւոր չէ, դեռ համարձակվում ես պաշտպանել նրան: Նա մեղաւոր չէ և այստեղից դուրս է վազում խելագարի պէս. ինձ տեսնելով, չի խմանում որտեղ թագցնի գլուխը, և մեղաւոր չէ: Հարցրու հարևաններին, նրանք կըպատմեն քեզ: Դու ինչ գիտես, խեղճ ոզորմելի, դու անմեղ ես... Կիլքն այնքան կուրացրել էր ձեզ, որ չէք նկատել պատուհանից ձեզ նայող ու ծաղրողներին: Զորանոր քո ծնունդը:

Նա ազատեց իւր փէշերն աղջկայ ձեռներից և հեռացաւ: Ձեռները փշրտելով, Վառվառէն կանգնած էր պատի տակ: Ոժդևն շնչառութենից նրա կուրծքը սաստկութեամբ բարձրանում էր և ցածանում: Բայց տակաւին ուշքը վրան էր, թէև դունաթափվել էր, որպէս մի անշնչացած դիակ: Ինչ ասել, ինչպէս արդարանալ. հերքել, որ չի սիրում Ռոստամեանին, խաբել ծերունի հօրը:—Ո՛չ, այդ անկարելի է և զուր կըլինի խաբել: Նրան ամեն ինչ յայտնի է... կամ ինքն է անձամբ պատուհանից լսել նրանց խօսակցութիւնը կամ մի ուրիշը լսել է և պատմել: Վառվառէն մտաբերեց այն սև պատկերն, որ այն օրը արընթաց անցաւ պատուհանի առջևով: Ո՞վ էր նա:

—Ինձ նման հօրն ես անպատուում, ապերախտ աղջիկ,—չարունակեց ծերունին:—Լա՛ւ. ասենք, թէ ես եմ պատճառն, որ քո ամուսնութիւնը դժբաղդ եղաւ, բայց, անիծված, միթէ ուրիշ միջոց չունէիր, որ վրէժդ հանէիր ինձանից, միթէ միայն այդ խայտառակութիւնն էր մնում ինձ պատժելու համար: Հազար անգամ բաղդաւոր կըլինէի, եթէ դու թոյն տայիր ինձ, ապանէիր: Իսկ այժմ... ինչ անեմ, ասա, ինչ անեմ... գնամ, ապանեմ այն սատանայի ծնունդին...

—Հայր,—գոչեց Վառվառէն, ձեռները պարզելով դէպի կատաղած ծերունին... ապանեցէք ինձ. ես ուրախութեամբ պատրաստ եմ մեռնել ձեր ձեռքից: Ես յանցաւոր եմ, խոստովանում եմ: Բայց յանցաւոր եմ նրանով միայն, որ սիրում եմ... ուրիշ ոչինչ: Ես չեմ ուզում ձեզ սուտ ասել, խաբել. ինչու՞ երկրորդ անգամ յանցանք գործեմ: Եթէ իմ կամքից լիներ կախված, ես նրան չէի թողնիլ, որ ոտք դնի այստեղ: Բայց... չկարողացայ: Ինչու՞ բերիք դուք ինձ այստեղ, ինչու՞ ինձ և նրան կրակի մէջ դցեցիք: Ի՞նչ եմ ասում: Ոչ, դուք մեղաւոր չէք, այսպէս պիտի լինէր և եղաւ: Բայց ուշ չէ, երդվում եմ մօրս գերեզմանով, որ ուշ չէ, հաւատում էք, պապա: Մինչև այս րոպէ ինձ միայն նրա սէրն է յայտնի... ուրիշ ոչինչ: Այժմ միում է, որ ես մոռացութեան տամ այդ սէրն էլ: Գնանք, պապա, հեռանանք Թիֆլիսից... ես պատրաստ եմ... ես... կըմոռա...

Վառվառէն չկարողացաւ աւարտել վերջին խօսքը, գլուխը թուլացած ծռվեց դէպի ալ ուսը: Նա անշնչացած ընկաւ յատակի վրայ:

Մի քանի վայրկեան սառն, ապշած ծերունին նայում էր դատեր անշունչ դիակի վրայ: Յանկարծ նրա դէմքը փոխվեց. նա մի խուլ հնչիւն բաց թողնց կրծքից, յարձակվեց Վառվառէի դիակի վրայ և ձեռը դրեց նրա ճակատին: Նոյն վայրկեանին նա սթափված վեր թռաւ տեղից, վերցրեց սեղանի վրայից լուքը շինն և սկսեց ջուր շիթել Վառվառէի դլխին, երեսին, կիսաբաց կրծքին:

Սակաւ առ սակաւ Վառվառէն ուշքի եկաւ, ծանրացած կոպերը բարձրացրեց և անորոշ հայեացքով

նայեց չուրջը։ Նրան թւաց, որ հայրը սենեակից դուրս է գնացել։

Այն ինչ՝ ծերունին այդ վայրկեանին, աթոռի վրայ նստած, ալեզարդ գլուխը կռնակի վրայ դրած, դառն արտասուք էր թափում աչքերից...

XI

Օրը կիւրակի էր։ Այրի Նաստալիան նստած էր իր սենեակում, թախտի վրայ։ Նրա առջև անցուդարձ էր անում Կաոն, զուգված, ամարային բարակ մետաքսեայ ուռնոցն ուսերին, դեղեցիկ փեռուրով զարդարված բարձր գլխարկը գլխին և ձեռին խաղացնելով չքեղ պարզ-վարդագոյն հովանին։

—Ինչ ուզում ես, ասա, Կաոս,—խօսեց այրին, գլուխը արամութեամբ շարժելով,—դու չըպիտի այդ բանն անէիր. ինչ քո գործն էր։

—Ա՛խ, մամա, դու էլ մի մեծ պատմութիւն շինեցիր իմ խօսքը։ Ես խօմ իմ բերանով չեմ ասել. նա ինքը մարիկ տուեց երեսիս զարմացած, ես ծիծաղեցի, հասկացաւ։ Առանց ինձ էլ նա պիտի հասկանար-դէմ ու դէմ ինքը պատահեց Ռոստամեանին, որ կոյր էլ լինելը, պիտի իմանար, թէ ինչ է պատահել իր տանը։ Էհ, ինչ եմ ասում, հիմայ ամբողջ Թիֆլիսին է յայտնի։

—Անիծվի Թիֆլիսը—գոչեց այրին արտասուքեամբ։—Ո՞վ այդպէս շուտ հռչակեց։

—Այ բան, ախր ինչ ասել է. Թիֆլիսն ինչ մեղք ունէ։ Օտար քաղաքներից կառնները գալիս են, Թիֆլիսեցիների անունը խայտառակում ու էլի Թիֆլիսն

է մեղաւոր։ Շատ լաւ են անում, որ խօսում են, ես էլ եմ խօսում։

Այս ասելով, Կաոն մանրիկ քայլերով յետ ու առաջ էր գնում։ Երբեմն նա կանգ էր առնում պատին քաշ արած բարձր հայելու առջև և, կատարեալ վերով, նայում էր իւր բարձրադիր «տուրնիւրին», որ նրա կազմուածքին տալիս էր փքված սիրամարգի տեսք։

—Դու էլի լինում ես նրանց մօտ, մամա,—հարցրեց նա յանկարծ։

—Լինում եմ, բայց շատ քիչ։

—Հըմ, ուրեմն է, թէ լաց է լինում այդ քո հրաշալի Վարվարա Մինաեվնան։

—Դու ծիծաղում ես, Կաոս, բայց ծիծաղելի չէ. թէ տեսնես—չես ճանաչիլ, ամբի վրայ մեռածի է նմանւում։ Մի քանի օր հիւանդ պառկած էր, երէկ է վերկացել։ Ինքն ասում է—«ոչինչ», բայց չէ, շատ վատ է դրութիւնը։ Գիտես, շուտով գնալու են Թիֆլիսից,—աւելացրեց բարեսիրտ այրին և հառաչեց։

—Էէ, ի՞նչ ես ասում։ Ռոստամեանն իմանում է, որ սիրականին փախցնում են։

—Ո՛վ գիտէ, ինձ հետ նա չի խօսում, ամաչում է, ես ինքս էլ քաշվում եմ խօսք բանալու։ Էհ, Կաոս, ճշմարիտ է, չեմ հաւանում նրա արածը, բայց մեղքս գալիս է խեղճ տղին։ Այն օրից յետոյ քանի գնում, մաշվում է, ցերեկները տանը չի նստում, չորս օր իմ մօտ չըճաշեց, յետոյ էլի սկսեց։ Խեղճ տղայ...

—Թող կորչի քո խեղճ տղան էլ,—գոչեց Կաոն արհամարհանքով։

Պատշգամբի վրայ երևաց Լազար Մակարիչը, մա-

քուր հագնված, զուգված, զարդարված, փայլուն «ցիլինդրը» գլխին, բայց կղակը նոր սափրած և սև հասած։

—Ահա, ես էլ ևկայ, բարով Նատալիա Պետրովնա,—գոչեց նա, ուրախ և զուարթ դէմքով ներս մըտնելով։—Կատո, քեզ պրա, ամարանոցը վարձեցի Բօրժոմում, կամքդ կատարվեց, այս ամառ այնտեղ ենք անցկացնում։ Նատալիա Պետրովնա, դուք էլ պէտք է գաք մեզ հետ։

—Վարձեցիր,—գոչեց Կատօն զայրացած,—քեզ ո՞վ ասաց, որ այդպէս չատպես, կարելի է, ես Բօրժոմ չեմ ուզում գնալ, մի ուրիշ տեղ էլ գնալու։

—Հէր օրհնած, խօսք ինքդ ասացիր, որ Բօրժոմում պիտի ապրենք այս ամառ։

—Ասացի, բայց չասացի, որ խակոյն վաղես ու վարձես ապրիլ ամսին։ Այս տարի Բօրժոմ գնացողների չատերն ուրիշ տեղեր են գնալու։ Եթէ նրանք չըգնան, ինչ՞ս է պէտք Բօրժոմը։

—Դէ լաւ, մնկը կըգնայ, մի ուրիշը կըգայ, մեր ինչ գործն է, մենք ամարանոց ենք գնում, խօսք մարդ տեսնելու չենք գնում։

Նատալիա Պետրովնան, որ այս խօսակցութեան ժամանակ լուռ նայում էր մերթ աղջկայ, մերթ փեսայի երեսին, գլխով հաւանական նշան արաւ վերջինին։

—Դու ինձ այն ասա, վարձել ու վերջացրել ես, վոչ տուել ես այս գլխից,—հարցրեց Կատօն։

—Ամարանոցը Մախաուդովինն է, Մախաուդովը էլ իմ բարեկամն է, մեր խօսքը խօսք է, յետ չենք կանգնիլ։

—Նու, ուրեմն, եթէ չուզեցի—չենք գնալ, պըր-

ծաւ, գնաց։ Հիմայ դու ինձ ասա, հէնց դրա համար ես եաևիցս վազել, ևկել, թէ ուրիշ գործ ունես։

—Ուրիշ էլ ինչ գործ, առաջին անգամ քեզ Բօրժոմ եմ տանում, քիչ բան է։

—Ո՞վ է ասում, որ մեծ բան չէ,—ասաց Կատօն հեգնօրէն,—բայց, ներսիս, այժմ ես Բօրժոմիդ համար մտածելու գլուխ չունիմ։ Դու նատիր մամայի մօտ, ես խակոյն կըգամ։

—Ո՞ւր ես գնում,—հարցրեց Լազար Մակարիչը զարմացած։

—Վազը երգչուհի Սալավէևան գնում է, այսօր նա գալու է ռիկին Սաթօյեանի մօտ, ես ուզում եմ նրա հետ ծանօթանալ։

—Պրծաւ, գնաց,—արտասանեց Լազար Մակարիչը, հեգնաբար ժպտալով։

—Ի՞նչ ես ուզում, ինչ,—գոչեց Կատօն բարկացած, աչքերի բիբերը սատիկ խաղացնելով։

—Ուզում եմ, որ որտեղ գնում ես, ինձ հետ գնաս,—պատասխանեց Լազար Մակարիչը դարձեալ կատակի ձևով։—Ես խանդոտ եմ, հասկանում ես,—աւելացրեց նա նոյն եղանակով։

—Ախացի,—գոչեց Կատօն, ծաղրելով,—այդ էր պակաս, որ եաևիցս ընկած, տանես ինձ այստեղ ու այնտեղ։ Բան ասաց, խելառ եմ. վաղն էլ կասես, հաւատարիցու պէս, թէ տանը նատիր ու մի դուրս գնար։ Ամաչիր, ամաչիր, Լազո, լսողներն ինչ կասեն։ Այն հին ժամանակներն էր, որ մարդը կնոջ գլխի տէրն էր, հիմայ ուրիշ ժամանակ է, հասկանում ես։

—Պրատան ասում, ինձ համար հին ժամանակնե-

ըը հիմիկուանից շատ ու շատ լաւ էին։

Կատոն աչքերի բիբերն աւելի կատաղի պտրեց դէպի ամուսնու կողմը։

—Ի՞նչ... ես կալատօղի, դարապի, թէ՛ կօշկակարի աղջիկ եմ քեզ համար,—գոչեց նա վրդովված։ Ախ-տա... դու էլ, այ, այնպիսի կնիկ պիտի ունենայիր, քեզ խրատեր,—աւելացրեց նա, գլուխը խորհրդաւոր կերպով շարժելով դէպի հարևան բնակարանի կողմը,—իսմ խեղճ մարդն ալկհանից չէր հեռանում, տեսար ինչ արաւ։

—Թէ լաւ, հերիք է, Կատօ,—մէջ մտաւ այրի Նատալիան, խրատելով իւր աղջկան,—նա քեզ իսմ մի բան չասաց, հանգիստ արաւ։

—Թող միւս անգամ քաղաքավարի հանգիստ անի,—ասաց տիկինը յանդիմանական եղանակով,—թէ չէ, դու էլ կըկարծես, թէ ես երկար թրև եմ գալիս դրսից։ Գնանք,—դարձաւ նա ամուսնուն,—գնանք, մի քիչ կառքով մանդանք, յետոյ տատներիս ժամին ինձ կըտանես տիկին Սաթօյանի տունը։

Աղջիկն ու փեսան դուրս գնալուց յետոյ, այրին մի երկար հառաչանք արձակեց կրծքից և ինքն իրան արտասանեց.

—Երանի թէ դուք մինչև մահ հաշտ մնաք։

Մի քանի ժամ անցած, Պետրէն, այրիի ծառան, սկսեց ճաշի սեղանը պատրաստել։ Առաւօտեան Ռոստամեանն այրիի հարցին պատասխանել էր, թէ տանն է ճաշելու, բայց արդէն երրորդ ժամն էր, նա դեռ չէր վերադարձել տունը։ Վերջապէս, նա եկաւ, և այրին անմիջապէս հրաւիրեց նրան ճաշի։

Ռոստամեանը յոգնած էր, քրտնած, կօշիկները և

վարդիկի եղերքը փոշոտ։

—Շատ էք ման եկել,—հարցրեց այրին։

—Գնացել էի հեռու, քաղաքից դուրս,—պատասխանեց Ռոստամեանը յոգնած ձայնով։

Նա սկսեց շտապով ճաշել։ Այրին ապահովութեամբ դիտում էր նրա դէմքը դաղտնի կերպով։ Թւում էր նրան, որ իւր երիտասարդ բնակիչը վերջին օրերը ոչ միայն նիհարել է, այլ և ծերացել։ Արդարև, նրա լայն ճակատի կողմերում, քունքերի մազերի մէջ ճերմակների թիւը, կարծես, աւելացել էր։ Բերանի անկիւնների խորշերը մի փոքր էլ խորն էին ընկել, իսկ կարճ խուզած նօսր միրուքն աւելի նկատելի էր կացուցանում նրա նիհարութիւնը։

Ճաշից յետոյ, Ռոստամեանը, հակառակ սովորականին, միայ այրի Նատալիայի մօտ։ Նա նստեց թախտի վրայ, ծխախոտը ձեռին։ Այրին զբաղում էր, որ նրան ունի ասելու։ Իրաւ, Ռոստամեանը մտադիր էր իւր բարեկիրթ տանտիկնոջ հետ խօսակցութիւն բանալու... Վառվառէի մասին։ Այն նշանաւոր օրից յետոյ անցել էր ամբողջ տասներեք օր, իսկ Ռոստամեանը տակաւին չէր տեսել Վառվառէին։ Հինգ-վեց օր շարունակ նա ցերեկները թափառում էր դրսերում։ Վերջը նրա համբերութիւնը սպառվեց, և նա վճռեց անպատճառ տեսակցել Վառվառէի հետ։ Իսկ Վառվառէն չէր երևում ոչ պատշգամբի վրայ և ոչ լուսամուտների առջև։ Ի՞նչ պատահեց, արդեօք, մի դէպք հիւանդ է։ Երևի, հիւանդ է, եթէ ոչ գոնէ կերևար դրսում։ Միայն մի անգամ Ռոստամեանը կանխեց լուսով նշմարեց Վառվառէին լուսամուտ առջև, բայց նրա կատարը չբիտարատվեց հիւանդութեան մասին։

Մի թեթեւ կոշմանի խօսակցութենից յետոյ, Ռոսամանը յաջողութիւն ունեցաւ այրուի հետ խօսք բանալու իր ցանկալի առարկայի մասին։ Նա շատ լաւ գիտէր, որ այրուին ամէն ինչ յայտնի է, բայց դեռ ևս չէր համարձակվում նրա հետ պարզ խօսել։ Իսկ այրուին քաղաքավարութեամբ լռութիւն էր պահում խորհրդաւոր հարցի մասին։

—Մինաս Կիրիլլիչն էլ չի երևում,—ասաց Ռոսամանն կեղծ անտարբերութեամբ։

—Ինչու՞,—պատասխանեց այրուին,—մեկ-մեկ դուրս է գալիս տնից։

—Դուք գնո՞ւմ էք այնտեղ,—առաջ տարաւ Ռոսամանն իր խօսքը նոյն անտարբերութեամբ։

—Երբեկ այնտեղ եմ։

—Հիւանդ խօմ չէ՞ն։

Այս հարցը բաց արաւ այրուի Նատալիայի լեզուն։ Նա, հառաչելով, անքանքալով, սկսեց նկարագրել իր կենդանիների դրութիւնը։ Հայրը խիստ տխուր է, իսկ աղջիկը ոչ հիւանդ է հիւանդի պէս, ոչ էլ առոյգ։ Բայց այս վերջին օրերը Վառվառէն մի դուրս մաշվում է։

—Պառկած է,—հարցրեց Ռոսամանը, դեռ ևս զսպելով իրան։

—Մի քանի օր պառկած էր, բայց հիմայ ոտքի է։ Ռոսամանը նեղբին յուզմունքից շրթունքը կծեց։

—Երեկ Մինաս Կիրիլլիչն ինձ յայտնեց, որ շուտով դուրս են գալու իմ տնից,—շարունակեց այրուին։

—Նոր բնակարան են տեղափոխվում,—հարցրեց Ռոսամանը։

—Ոչ, գնում են, Աստիան Գրիգորիչ։

—Ո՞ւր։

—Չեմ իմանում։ Չեն ուզում, որ Թիֆլիսում մնան։

—Ե՞րբ են գնալու,—հարցրեց Ռոսամանը, հազիւ հազ կարողանալով ընդունել այդ անսպասելի հարուածը։

—Դեռ յայտնի չէ. Մինաս Կիրիլլիչը որտեղից որ է փող պիտի առանայ. հէնց որ առացաւ, կըգնան։ Բայց,—աւելացրեց այրուին, գլուխը խորհրդաւոր կերպով չարժելով,—դժուար թէ շուտով կարողանան գնալ։ Բժիշկն ասել է, որ Վառվառէն այժմ չի կարող երկար ճանապարհորդութիւն անել... վնաս է...

Ռոսամանը գունաթափվեց։ Այդպէս, ուրեմն, նա բժշկվում է, կընշանակէ—իսկապէս հիւանդ է և դուցէ—վտանգաւոր։ Այլ ևս Ռոսամանը չըշարունակեց իր հարց ու փորձը. նա խօսակցութեան նիւթը փոխեց, մի քանի րոպէ ևս մնաց և յետոյ գնաց իր սենեակը։

Շատապով նատելով սեղանի մօտ, նա սկսեց գրել մի նամակ Վառվառէի անունով։ Նա աղերսում էր Վառվառէին—թոյլ տալ մի կերպ, դէթ մի կէս ժամով տեսնվել նրա հետ։ Նամակը վերջացրեց, ծրարեց. պէտք էր ուղարկելու միջոցը գտնել։ Ռոսամանը նախ մտածեց փոստով ուղարկել, բայց այդ կասկածելի մի միջոց էր. նամակը կարող էր անցնել Մինաս Կիրիլլիչի ձեռքը. այնուհետև հետևանքը պարզ էր։ Երկու ամբողջ օր, նամակը գրպանում, Ռոսամանը դուրս էր գնում և ներս գալիս։ Երրորդ օրն, առաւօտը նա տեսաւ, որ Ծերունին դուրս գնաց։ Նա լուսամուտից նայեց Ծերունու հետևից և երբ վեր-

ջինն անյայտացաւ, նա դուրս եկաւ պատշգամբ։ Մատրենան առէպ-առէպ անց ու դարձ էր անում խոհանոցից դէպի սենեակները և յետ Ռոստամեանն որսաց յորմար վայրկեան և մատով կանչից պառաւին իւր մօտ։

—Մատրենա, քեզ մի խնդիր ունիմ, պիտի կատարես,—ասաց նա, ազատելով պատշգամբի անկիւնը։

—Հրամայեցէք,—ասաց ռուս պառաւը, ուրախանալով, որ մի այնպիսի երիտասարդ դեսպիկ պարոն խնդիր ունէ դէպի նա։

—Ահա, այս թուղթը էնց այս րոպէիս հասցրու Վարվառա Մինաևիվանին։ Բայց ոչ ոք չիմանայ։ Բանիր։

Այս ասելով, Ռոստամեանը պառաւի մի ափսոմ սեղմեց ծրարը, միւսում մի թղթադրամ։ Պառաւն երիտասարդեամբ նայեց նրա երեսին և անչարժ մնաց։

—Դէհ, դնա, ոչ ոք չիմանայ, հասկանում ես, ոչ ոք։

Պառաւը խորհրդաւոր դէմքով այս ու այն կողմ նայեց և քայլերն ուղղեց դէպի իւր սիրուհու սենեակը։

Ռոստամեանը մաս ներս, երեսնիվայր պառկեց անկողնակալի վրայ և խորասուզվեց մտածողութեան մէջ։ Ի՞նչ կըպատահանէ, արդեօք, վաղվաղն, կընդունէ իրան, թէ ոչ, և ինչպես կընդունէ, որտեղ։ Իւր տան մէջ—չի կարող. Մինաս Կիրիլևիչն արհամարհանքի պես հակում է այժմ իւր աղջկայ իրաքանչիւր քայլը։ Եւ միւսն հակում է, թէ տանջում է նրան իւր հարց ու փորձով, թէ նախատում է առաւօտ ու երեկոյ կամ դուցէ աւելի խիստ է վարվում կամ դուցէ, իւր աղջկայ համարձակութիւնը պատժելու համար, բարբարոսական միջոցներ է գործադրում։ Այդ

դէօք, մի մարդ, որի մէջ պատուասիրութիւնը հիանդրմիւն է դարձել, կարող է ջնջել իւր կատաղութիւնը հարատաս դառեր դէմ, երբ այդ դառեր վարմունքը նա այնչափ դառապարտելի, այնչափ յանցաւոր է համարում։—Ո՛չ, ամենևին։ Նա չարաչար կըպատժի յանցաւորին։ Եւ նա ուրիշ կերպ չի կարող վարվել, քանի որ այս է պահանջում նրա աշխարհայեացքը, նրան շրջապատող ամբոխը։ Ամբոխը, որի կարծիքի առջև Մինաս Կիրիլևիչը դողում է, սարսափում է, սարկանում է մինչև գետին։ Ինչո՞ւ. որովհետև նա է նրա միակ անսխալ դատաւորը, նա է նրա մտքի և արտի զեկավարը։ Սեռական խնդիրը, խելքի ինքնուրոյնութիւնը մի կրաւորական տարր է նրա մէջ, որ ենթարկված է ուրիշների հայեացքներին։ Այո, զարհուրելի է հանրութեան բարոյական լուծը մեզի վրայ. նա մի բռնակալ է, որ անհատի մէջ անդադարաբար ջնջում, ոչնչացնում է ամենայն մի ինքնուրոյնութիւն։ Ահա ինչու, երբ մի անհատ յանդգնում է ընդդիմանալ այդ հանրային բռնակալութեան, ամբոխը մատնացոյց է անում նրա վրայ, դոռալով.

—Ահա յանցաւորը, որին պիտի պատժել. ահա խելագարը, որի ոտները և ձեռները պիտի շղթայել. պատժեցէք, խեղդեցէք, դուրս դեցեք ձեր շրջանից, որովհետև նա համարձակվում է բաղդել մեր նախապաշարմունքների և անհատաստութեան դէմ...

Կոյր, մոլեռանդ դատաւոր, որ միշտ ուղեղի մի կողմնակի է խորհում և դատում։ Իրաւունք ունի՝ թող դատի և դատապարտի, բայց ոչ ապաքէն օրէնքներն ևս անհատներն են ստեղծում, ոչ ապաքէն եղել է ժամանակ, որ նեղկայ ատանդութիւններից շատերը, շատ

շաաերը բացառութիւն և դատապարտելի բացառութիւն էին համարվում և նոյնպէս պատժվում էին ամբոխի կողմից։ Եւ միթէ մի ևնոյն այս դէպքում այն, ինչ-որ համարվում է այժմ յանցանք, ապագայում չըպիտք է դառնայ օրէնք։ Միթէ մի ոք կարող է դադարեցնել բնութեան անընդհատ շարժվող մեքենայի անիւը...

Այս մարքերի ծանրութեան ներքոյ Ռոստամեանը ոտքի կանգնեց, նայեց դէպի գաւիթ։ Արդէն անցել էր մի ամբողջ ժամ, բայց Վառվառէից պատասխան չկար։ Իւրաքանչիւր րոպէ նա ապատում էր աղախնին։ Անցաւ երկու, երեք ժամ եւս. պատասխան չըկար։ Տիրեց սխուր երեկոն։ Գաւիթում արդէն մութն էր, իսկ Վառվառէի պատուհանում լոյս չէր երևում։ Ի՞նչ անել, ո՞ւր դիմել։ Միթէ Վառվառէն այնքան հիւանդ է, որ չի կարող դէթ մի քանի տող պատասխան գրել։ Մի գուցէ նա չի ուզում պատասխանել... մի գուցէ վճռել է... մոռացութեան տալ։ Շատ հաւանական է. չէ որ նա «սիրում է հօրը»։

Դիշերուայ կիսին մօտ էր, այն ինչ Ռոստամեանը, դռները բաց թողած, անցուդարձ էր անում պատշգամբի կողմի սենեակում։ Նա դեռ յոյս ունէր մի լուր առնելու... մերթ ընդ մերթ դուրս էր գալիս պատշգամբը, յուսալով մի կերպ հանդիպել ուսուցչին։ Բայց խոհանոցի ճրագն եւս վաղուց հանգցրած էր։ Պատշգամբի վրայ սիրում էր մի յուսահատիչ խաղաղութիւն։ Մռայլ խաւարն ահ էր ազդում նրա վրայ. նրա սիրտը, կարծես, դուշակում էր մի նոր դժբաղդութիւն։ Թւում էր նրան, որ չար օրհասը արդէն յափշտակել է նրան Վառվառէի տեսու-

թենից։ Եւ այլ եւս յոյս չունէր մի լուր առնելու։ Ուստի դռները ծածկեց, հագուստը հանեց և պառկեց անկողնին։

Դաժանելի էր այդ դիշերը նրա համար։ Ներկան և ապագան մի անթափանցելի քաօս էին նրկայացնում նրա առջև։ Ի՞նչպէս պատահեց այդ բոլորն, ինչպէս յղացաւ նրա մէջ և զարգացաւ այդ զգացմունքը։ Չէ որ կար ժամանակ, երբ նրան ծիծաղելի կըթւար, եթէ մէկը դուշակէր նրա այն դրութիւնը, որի մէջ գտնվում է այժմ։ Այո, կեանքը մի նրբիմաստ, անվերծանելի երևոյթ է. որքան խորն եւս թափանցում նրա մէջ, այնքան նա գաղտնախորհուրդ է գառնում։ Կարող էր նա երեք ամիս առաջ երևակայել, թէ իւր խաղաղ, անդորը, միատեսակ և ձանձրալի դրութիւնն այսպէս արմատապէս պիտի փոխվի։ Եւ ինչ է այս զգացմունքը, ինչ մի աներևոյթ զօրութիւն է, որ այնքան բռնակալ է և անյաղթելի։ Սիրել և չըյուսալ, որ երբ և իցէ կարող ես վայելել—ոչ, սրանից աւելի ծանր տանջանք երևակայել անհնարին է։

Զարչարված նեարդերին գէթ մի երկու ժամ հանդիստ տալու համար, Ռոստամեանն աշխատում էր մոռանալ իւր ծանր մարքերը—չըմտածել բոլորովին կամ մտածել այլ բաների վրայ։ Եւ բորբոքված երևակայութիւնը քանի մի րոպէ նրան, ներկայից անջատելով, տարաւ դէպի հեռու, դէպի իւր խորին անցեալը։ Յիշեց նա իւր մայրենի քաղաքն, իւր ծնողներին, իւր մանկութիւնը։ Անհատական նրանց աղքատիկ տունն, ահա այն ընդարձակ գաւիթն, ուր նա ծառերի տուներում խաղում էր իւր միակ քրոջ հետ, որ այժմ ամուսնացած է և ապրում է մի գաւառական

քաղաքում, և իր կրասեր եղբօր հետ, որ մեռաւ մա-նուկ հասակում։ Ահա նրա նիհար, աղքատութեան լու-ծի նեղքոյ տանջված, գեղեցկադէմ մայրը, ահա նրա, արդէն ալեխառն մազերով, միջահասակ, բուն ա-սիական հազուստով հայրը, որ իր ամուսնուց ամբողջ քսան տարով մեծ էր։ Ո՛րքան մոլեռանդ քրիստոնեայ էր այդ մարդը—առաւօտ և երեկոյ եկեղեցի յաճա-խող, Աստծ Գրքերի ընթերցանութեամբ յափշտակ-ված։ Ռոստամեանը մտաբերեց և՛ այն ձմեռային երե-կոները, երբ մի կողմում մայրը դլուխը քաշ կար էր անում, միւս կողմում հայրը, պատի տակ ծալապատակ նստած, մէջքը բարձին թեքած, Աւետարան կամ Աս-տուածաշունչ էր կարդում բարձրաձայն։ Իսկ ինքն ու քոյրը սենեակի մի անկիւնում դաս էին սովորում կամ խաղում էին։ Երբեմն նա թողնում էր դասը, նստում էր հօր մօտ և լսում էր նրան։ Նա այժմ էլ պարզ լսում է հանգուցեալի անյողդողդ, միահնչիւն ձայնը, որ մերթ ցածրանում էր և մերթ բարձրանում, այն ժամանակ, երբ նա կարդում էր Աստուածաշնչի ոգե-որիչ հատուածները։

Յիշեց Ռոստամեանն այդ հատուածներից շատե-րը, յիշեց և՛ այն դարձուածները, որոնք նրա ականջին հնչում էին աւելի յաճախ և որոնց հայրը կարդում էր խորհրդաւոր ձայնով և առանձին շեշտելով։

Յանկարծ նա ապաստած վեր թռաւ անկողնից և նստեց։

«Ինչ առնական ամենևին մի նստիր»,—արտասա-նեց ինքն իրան։

Ապա նա, ձեռը դնելով ճակատի վրայ, յիշեց և մի այլ դարձուած.

Կին ապաժրի ի կենդանի այր իւր կապեալ է օրինաւք»։

Ահա պրատեղ է սկիզբն և աղբիւրը, ահա ինչով պիտի արդարացի համարել Մինաս Կիրիլլիչի և միւս բոլորի նախապաշարմունքները։ Ինչու՞ մեղադրել նրան, ինչու՞ անուանել նրան բռնակալ մարդ, անխիղճ հայր։

—Ինչու՞,—կրկնեց Ռոստամեանը,—քանի որ ես եմ, որ յանդգնում եմ ջնջել այս դարաւոր պատգամը։

Այո, հակառակորդը զօրաւոր է, անյաղթելի. դա դարաւոր աւանդութեան և օրէնքի անքակտելի կա-պանքն է... Այս վայրկեան էր Ռոստամեանին։ Բայց Ս. Գրքից հանգուցեալ հօր բերանով արտասանե-ված այդ պատգամը, որը նա այնպէս պարզ յիշեց, մի առանձին երկիւղ էր ազդում նրա վրայ։ Երկար ժամանակ նա տանջվում էր անկողնի մէջ, իսկ ա-ռաւօտեան լոյսն արդէն սկսել էր թափանցել պա-տուհանից...

XII

Ուշաթափվելուց յետոյ, Վաւվաւէն նոյն օրն ու գիշերը զղում էր տասնիկ գլխացաւ։ Գլխացաւն ան-ցաւ, և նրա ամբողջ մարմինն սկսեց մի անտանո թու-լութիւն։ Բայց նա ուշադրութիւն չէր դարձնում իւր առողջութեան վրայ, թէև երբեմն երկար չէր կարո-ղանում ոտքի վրայ մնալ։ Կեանքն, որ մի քանի օր ա-ռաջ այնքան հրապուրելի էր դարձել, այժմ երեում էր նրան մեայլ մտահոգութով լիքը։ Ապա-գան ոչինչ ուրախութիւն չէր նախընձում, սկսած այն րոպէից, երբ նա յայտնեց իւր հօրը, թէ համաձայն

է հետևել նրան—դուրս գալ Թիֆլիսից։ Նա գիտեր, որ հօր վճիռն անդառնալի է. եթէ ինքը չըհամաձայնվի, ծերունին կըթողնի նրան և կըգնայ միայնակ։ Թէ ուր կըգնայ, Աստուած գիտէ, բայց Վառվառէին զգում էր միայն, որ այնուհետև այլ ևս չըպիտի տեսնի հօրը։ Հօրծին մի այլ ընթացք տալ—այլ ևս անկարելի էր. միում էր երկու ելք—կամ հետևել հօրը յաղուրդ չըտացած սիրոյ յաւիտենական տանջանքը սրտում, կամ հետևել Ռոստամեանին և դառնալ հայրապատան։ Երկար խորհելու ժամանակ չկար. պէտք էր ընտրել այս երկու ճանապարհից մէկը, և նա վճռեց ընդունել առաջինը—իւր տանջանքը։

—Ո՛չ, երբէք սէրն ինձ չի տիպել ձեռք բարձրացնել ծերունի հօրս վրայ,—կրկնում էր Վառվառէն անդադար։

Եւ կրկնում էր ոչ թէ յուսահատված մարդու այն անվեհերութեամբ, որ արտայայտում է խրոխտ, անդառնալի հաստատակամութիւն, այլ որպէսզի կարողանայ իւր վճռին հաւատարիմ մնալ մինչև վերջին տարտափելի րոպէն։ Դա մի տեսակ խրախոյս էր, որ նա տալիս էր ինքն իրան, աշխատելով, յանուն որդիական սիրոյ և պարտաճանաչութեան, զսպել մի ուժեղ զօրաւոր սէր։ Բայց եթէ նա կարող էր վերջինի վրայ մի վճռական յաղթութիւն գործել, զոհելով իւր երջանկութիւնը հօր պատուասիրութեանն, ապա ինչ անել մի զարհուրելի յանդիմանութեան դէմ։ Դա Ռոստամեանի վշտահար պատկերն էր, որ, կանգնած նրա աչքերի առջև, վերջին յուսահատութեամբ դոչում էր. «Իսկ ես, մեծ դու, որ այդքան ցաւում ես մի ծերունու հանգստութեան համար, պիտի զոհես մի ևրիտասարդ կեանք»։

Ահա ինչու Վառվառէն, վճռած լինելով հետևել հօրը, մի և նոյն ժամանակ, տակաւին տատանման մէջ էր։—Ի՞նչ կանի Ռոստամեանը, կարող է կրել այդ հարուածը, կարող է մոռանալ։

Այս մաքերից տանջվելով, Վառվառէն մի երեկոյ անցուդարձ էր անում իւր սենեակում, բարակ անալին չգիտեյ հագուստով։ Պատուհաններն ու դռները փակ էին, դրսում եղանակը հով էր, իսկ սենեակի մթնոլորտը ծանր և տաք։ Նա բաց արաւ փողոցի կողմի պատուհանի փեղկերից մինը, կանգնեց երեսը դէպի դուրս՝ մի փոքր մաքուր օդ ներշնչելու։ Փողոցային օդի հով հոսանքը թեթև շոշափեց նրա տաքացած դէմքն ու կիսաբաց կուրծքը. նա զգաց արթնեցուցիչ զովութիւն։

Երեկոն դեռ այնքան ուշ չէր, լսում էին ձիաքարշի գանգակների հնչիւնները, հեռում անցուդարձ անող կառքերի դղրդիւնը և մարդկային խուլ ձայները։ Իսկ աւելի հեռուից թոյլ կերպով լսում էր դարնանային հեղեղներից և լեռնային ձիւների հալոցից յորդացած Քուր գետի սուր հոսանքը։ Մի ինչ-որ դրաւիչ և, մի և նոյն ժամանակ, ահաւոր ազդեցութիւն էր անում Վառվառէի վրայ ընթացող ջրի ձայնը, որ լսում էր խաւար մթնոլորտի մէջ։ Բաւական միջոց նա, անշարժ կանգնած, ականջ էր դնում այդ ձայնին։ «Մարդան դժբաղդների կեանք է կլանել այդ Քուրը»,—անցաւ յանկարծ նրա մտքով։ Նա դլուխը դուրս հանեց պատուհանից, որ այլ ազմուկների միջից աւելի որոշ լսի Քուրի հոսանքը։ «Ի՜նչ սարսափելի ձայն ունէ, շարունակեց նա իւր մտքում, ջրերը շատացել են, ա-

լիքը են պղտոր և կաոտոզած... Մի րոպէում կարող են խեղդել... Ահա որտեղ կարելի է հանգստութիւն գըտնել: Մի րոպէ, և ամէն ինչ կըվերջանայ»...

Նա դէռ ականջ էր դնում: Մի վայրկեան նա մոխիկ արաւ դէպի վայր, փողոցի սալայատակին, որ հաղիւ հաղ երեում էր: «Ինչո՞ւ Փարլի մէջ. մահը այս տեղ էլ կնոտ չէ ինձանից. մի թեթեւ շարժում անեմ, և սալայատակի վրայ կընկնի իմ անշնչացած դիակը»: Այդ վայրկեանին նրա դլուխը պտտեց. նա տարտափած յետ քաշվեց: Մի և նոյն վայրկեանին նա իւր մէջքի վրայ զդաց մի տառնութիւն, և նրա մարմնով անցաւ թեթեւ դողոց: Ջով օդի աղդեցութիւնն էր այդ, որ մինչև այն րոպէ ախորժելի էր նրա համար: Նա պատուհանի փեղկը ծածկեց և հեռացաւ դէպի սենեակի նեղքը:

Մի ժամ անցած, Վառվառէն մտաւ անկողին: Տաք վերմակի նեղքոյ մէջքի տառնութիւնն աւելի զդալի դարձաւ. նա սկսեց դողալ: Երկու ամբողջ ժամ տենդից նրա ատամները ատամիկ զարկվում էին իրար: Յետոյ նա զդաց ախորժելի ջերմութիւն և թմրեց:

Առաւօտը Վառվառէն, զարթնելով, կամեցաւ հագուստը հագնել: Բայց դէռ անկողնից չըբարձրացած, նրա դլուխը սաստիկ պտտեց, և նա անզօրացած կրկին պառկեց: Ոտից ցըգլուխ նա զդում էր անյաղթելի թուլութիւն, իսկ ոսկորների մէջ մի ծանր ցաւ: Մի ժամ անցած, ներս մտաւ աղախինն՝ իմանալու, թէ տիրուհին կըկամենա՞յ, արդեօք, երեսը լուանալ: Պառաւը զարմացաւ, երբ տեսաւ, որ տիրուհին դէռ պառկած է, այն ինչ՝ նա սովորաբար զարթնում էր ամենից վաղ:

—Պարոնն արդէն թէյ է խմել և իւր սենեակումն է,—յայտնեց պառաւը:

—Շնո՞ւմ լաւ... Հաւաքիր սեղանը, Մարիննա, ես թէյ չեմ խմելու,—ասաց Վառվառէն, աչքերը դժուարութեամբ դարձնելով դէպի աղախինը:

—Ինչո՞ւ... Տէր Աստուած... դուք, կարծես, հիւանդ էք, տիրուհի,—գոչեց պառաւը, մօտենալով նրան և համարձակ իւր ալ ձեռը դնելով նրա ճակատին:—Իսկ և իսկ հիւանդ էք, տիրուհի, աչքերդ կարմրած է, ճակատդ կրակի պէս այրվում է: Գնամ, այս րոպէիս Մինաս Կիրիլլիչին ասեմ:

—Կաց, Մարիննա, ո՛չ, մի ասիր, ես... ոչինչ... մի քիչ թոյլ եմ, շուտով կը վերկենամ... Դու գնա, ջուր բեր, որ երեսս լուանամ...

Աղախինն իսկոյն կատարեց նրա հրամանը:

Վառվառէն նստեց անկողնի մէջ, աշխատելով պըտպել իւր թուլութիւնը: Բանի մի անգամ այտերն և ճակատը սառն ջրով չվելով, նա ւնդօրացած դարձեալ պառկեց, երեսը դարձրեց պատին և աղախնին ձեռով նշան արաւ, որ հեռանայ:

Մինաս Կիրիլլիչն իւր օրերն անց էր կացնում դարձեալ իւր սենեակում առանձնացած: Երբեմն նա մինչև անգամ թէյ խմելու կամ ճաշելու ժամանակ ևս չէր դուրս դալիս: Աղախինն ամեն ինչ տանում էր նրա սենեակն և միշտ ծերունուն տեսնում էր երկայն «չիբուխը» ձեռին ծխելիս և խորասուզված մըտքերի մէջ: Մխամիտ պառաւը վաղուց տեղեակ էր Վառվառէի ամուսնական դժբաղդութեանը և ծերունու տիրութիւնը վերագրում էր այս հանգամանքին, սակայն վերջին անցքերի մասին նա դէռ ոչինչ չը-

դիակը։ Զբիաթոզանալով զսպել իւր լեզուն, նա մոտ ծերունու սենեակն և յայտնեց, թէ ախուէին հիւանդ պառկած է։

Մինաս Կիրիլլիչը սառն կերպարանքով ընդունեց այս լուրն և, լուռ, դուխը չարժեց։

Կէսօրուայ դէմ Վառվառէի տաքութիւնը սաստկացաւ։ Երբ Մաարենան մոտ ներս, որ հարցնի նրա հիւանդութեան մասին, նա անզգայ պառկած, ծանր հառաչում էր։ Այս անգամ ուս պառաւը վախեցաւ, կրկին վազեց Մինաս Կիրիլլիչի սենեակը։

Վառվառէն պառկած էր երեսնիվայր, սպիտակ հոլանի բազուկները վերմակի վրայ տարածած և վարվուն աչքերը սենեակի առաստաղին յառած, երբ հայրը հանդարտ քայլերով ներս մոտ։ Նա չըզգաց հօր գալուստը։ Երկու շաբաթ էր, որ հայրը սա չէր դնում այդ սենեակը, ուր առաջ մանում էր ժամանակ անժամանակ աղջկայ հետ խօսակցելու կամ որև է լրագրական կամ քաղաքային լուր հաղորդելու։

—Դուք հիւանդ էք,—հարցրեց ծերունին ցածր ձայնով, կանգնելով աղջկայ մահճակալից երկու քայլ հեռու։

Վառվառէն չլսեց նրա հարցը, բայց հայեացքը դարձրեց դէպի նրա կողմը։ Մի քանի վայրկեան հայր ու աղջիկ նայեցին միմեանց։ Վերջին երկու շաբաթուայ ընթացքում այս առաջին անգամն էր, որ նրանք ուղիղ նայում էին միմեանց երեսին։

—Դուք հիւանդ էք,—կրկնեց Մինաս Կիրիլլիչն աւելի բարձր ձայնով։

—Ո՛չ,—պատասխանեց Վառվառէն, որի միայն շառագունած այտերն և կապտած աչքերը վկայում էին, թէ նա ատում է և ինչ-որ թաղցնում։

—Մաարենան ասաց, որ դուք տկար էք։

—Ո՛չ, ես տկար չեմ...

Վառվառէն, վերջին խօսքը չաւարտած, վերմակը քաշեց երեսին։

—Եթէ հիւանդ էք, թողէք ուղարկեմ բժշկի ետեւից,—ասաց հայրը, մի քայլ ևս մօտենալով։

—Բժիշկ։ Հարկաւոր չէ, չեմ ուզում, խնդրեմ կանգնեք, ես վեր կկենամ, շնորհակալ եմ...

—Թաղցնելն զուր է, հիւանդին բժիշկ է հարկաւոր,—ասաց Մինաս Կիրիլլիչն և դուրս գնաց։

Կէս ժամ չանցած, նա վերադարձաւ, իրանից առաջ ներս թողնելով մի միջահասակ, տարիքած և չքնաղ երեսով առոյգ, աւելի քան յիսուն տարեկան մարդու, ալեխառն մազերով։

Դա քաղաքի յայտնի հայ բժիշկներից մէկն էր։

Բժիշկը խրոխտ քայլերով մօտեցաւ հիւանդի մահճակալին և, ուրախ ուրախ հետը խօսելով, զննեց երակը, նայեց երեսին և սկսեց հարց ու փորձ անել։ Ցետոյ նա խորհրդաւոր դէմքով, լուռ մօտեցաւ դրասեղանին, դրեց հարկաւոր դեղերը, մի քանի խիստ պատուէրներ տուեց և գնաց, խոստանալով կրկին այցելել։

Դեղերն ընդունելուց յետոյ, իրիկնադէմին Վառվառէի տաքութիւնը քառասուն տասիճանից անցաւ։ Բժիշկն եկաւ և այս անգամ ուրիշ դեղեր նշանակեց։

Մինչև ուշ գիշեր հիւանդը տաստիկ տաքութիւնից զառանցում էր։ Մահճակալի մօտ ծառայում էր Մաարենան, իսկ Մինաս Կիրիլլիչը, սենեակի մի անկիւնում լուռ նստած, լսում էր դստեր զառանցանքը։ Եւ նա հիւանդի անկապ արտասանած խօսքերի ու դարձուած-

ների մէջ լսում էր մերթ Ռոստամեանի անունը, մերթ ազգանունը։

—Արդեօք, իսկապէս հիւանդ է, թէ կեղծում է,— անցաւ մի վայրկեան ծերունու մտքով։ Բայց երբ յիշեց բժշկի լուրջ դէմքը և խորհրդաւոր ժպիտը, նրա կասկածը փարատուեց։

Տաքութիւնը տևեց հինգ օր։ Բժիշկը չորրորդ օրն երկու անգամ այցելում էր և միշտ դուրս էր գալիս տխուր դէմքով։ Վեցերորդ օրը տաքութիւնը սկսեց նուազել։ Հետևեալ օրն առաւօտը Վառվառէն ասաց բժշկին, թէ առողջ է զգում իրան և խնդրեց, որ վերջինը թոյլ տայ իրան վերկենալու։ Բայց բժիշկը պատուիրեց պառկած մնալ մի քանի օր ևս։ Սակայն Վառվառէն հետևեալ օրն արդէն ոտքի վրայ էր։ Բժիշկը, տեսնելով, որ իւր պատուէրն արհամարհում է հիւանդը, բարկացաւ, յանդիմանեց և յայտնեց, թէ այլ ևս իւր այցելութիւնն աւելորդ է, քանի որ հիւանդն իրան բոլորովին առողջ է զգում։ Մինաս Կիրիլիչը նրա վարձը տուեց և ճանապարհ դրեց։

Այսպէս թէ այնպէս, Վառվառէն ոտքի վրայ էր։ Իսկ Մինաս Կիրիլիչը ճանապարհի պատրաստութիւն էր տեսնում։ Սպասած փողը նա արդէն ստացել էր։ Մի առաւօտ նա առաջարկեց Վառվառէին՝ իրերը կապկապել, որպէսզի երկու օրից յետոյ պատրաստ լինին առաւօտը կանուխ ճանապարհ ընկնելու։ Ծերունին արդէն պատուիրել էր կահ կարասիքի սիրտը, որ այդ օրը գայ և տանէ իւր ապրանքը։ Իսկ դաշնամուրը պիտի տանէին ուղևորութեան նախընթաց օրը։

Եւ Վառվառէն զբաղված էր իւր իրեղէնները տեղաւորելով, երբ Մատրենան ներս մտաւ և լուռ,

դողդոջալով յանձնեց նրան Ռոստամեանի նամակը։

—Ո՞վ տուեց,—հարցրեց Վառվառէն, որ մինչ այդ լոպէ դեռ ծանօթ չէր Ռոստամեանի ձեռագրին։

—Այն երիտասարդ պարոնը,—պատասխանեց աղախինը, ձեռով ցոյց տալով դիմացի բնակարանը։

Վառվառէն թուլացած նստեց աթոռի վրայ և ձեռով աղախնին նշան արաւ, որ դուրս գնայ։ Նա ծրարը դողդոջուն մատներով բաց արաւ և նամակը կարդաց։ Նամակը համառօտ էր և խիստ ազդու։ Մի քանի րոպէ, յոգնած գլուխը դէպի ուսը թեքած, թոյլ ձեռները ծնկների վրայ դրած, Վառվառէն տատանվում էր—ընդունել Ռոստամեանին, թէ մերժել։

Նամակի տողերը յուսահատութիւն էին ներշնչում. նա գրված էր հոգեկան ամենավշտալի դրութեան մէջ։ Մի անգամ և միայն մի անգամ Ռոստամեանը տեսակցութիւն էր խնդրում։

—Նա լսել է իմ գնալն և յոյս չունի ինձ տեսնելու,—ասաց Վառվառէն,—ոչ, ես չեմ կարող այսպէս սառն անջատվել նրանից. յուսահատութիւնը նրան կըսպանի։ Ես նրան սիրտ կըտամ... Պիտի կատարել նրա վերջին և միակ ազաչանքը։

Բայց ինչպէս, որտեղ նշանակել տեսակցութիւնը։ Հայրը տնից դուրս չի գալիս, ուրեմն Ռոստամեանն ինքը գալ չի կարող. մինչ Վառվառէն ինքը պիտի գնայ նրա մօտ։—Ոչ այս, ոչ այն։

Նոյն օրը, նոյն դիշերն և հետևեալ օրը մինչև երեկոյ Վառվառէի միտքը միմիայն այս կէտի վրայ էր կենտրոնացած. մի և նոյն ժամանակ, նա շարունակում էր կապկապել իւր հագուստեղէնները։ Իրիկնադէմին եկան, դաշնամուրը տարան։ Մնում էր եր-

կու դիշեր և մի ցերեկ. այնուհետև Ռոստամեանին տեսնել այլևս անկարելի էր։ Մենաս Կիրիլիչը ճեպաոգաքի տոմսակներն արդէն վերցրել էր երրորդ օրուայ առաւօտեան գնացքի համար։ Հետևաբար— կամ այս դիշեր կամ վաղը։ Բայց ինչո՞ւ համար է ուզում տեսակցել Ռոստամեանը, չէ որ այլ ևս ուշ է։

Վառվառէն մերթ պահարանից իւր ճերմակեղէնները դասաւորում էր ճանապարհորդական անդուկի մէջ մերթ անց ու դարձ էր անում։ Երբեմն նա կանգնում էր լուսամուտ առջև և նայում էր դէպի պատշգամբ։ Դաւթի բնակիչները, ըստ երևոյթին, քնած էին. այրերի լուսամուտներում լուսոյ նշոյլ չէր երևում, նոյնպէս և խոհանոցում։ Դիշերուայ կէսն էր։ Քնած էր Մենաս Կիրիլիչը, թէ արթուն—յայտնի չէր, միայն նրա սենեակից ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսւում։

Ցանկացած, դէպի դուրս նայելու միջոցին, Վառվառէն պատշգամբի վրայ նշմարեց մի սև պատկեր։ Նա, որի դէպի ներքոյ, ուղիղ անցքերի ապրեցութեան ներքոյ, ուղիղ նրբացել էր, երկիւղած փակեց դռները, յետ դարձաւ և սկսեց ականջ դնել դէպի դուրս։

Մէկը դրսից ապակուն երկու անգամ խփեց։ Վառվառէն սիրտ արաւ լուսամուտին մօտենալ և լսեց մի թեթև ձայն, որ արտասանեց նրա անունը։ Նա, դողդողալով, փեղկերից մէկը բաց արաւ և երես առ երես հանդիպեց Ռոստամեանին։

—Ես եմ, մի վախեցար,—չչնչաց Ռոստամեանի ձայնը։

Վառվառէն վայրկենապէս ենթադրեց, որ ուղիղ

վտանգաւոր է դրսից խօսելը։ Նա բաց արաւ դռները, ներս թողեց Ռոստամեանին։

—Ի՞նչ ես կամենում,—հարցրեց նա չփոթված,—ինչո՞ւ ես եկել այսպէս անժամանակ։

Ռոստամեանը, պատասխանելու փոխարէն, բռնեց նրա նիհար ձեռներն և երեսը դարձրեց դէպի լամպարը։

—Դու հիւանդ ես, ասա, վտանգաւո՞ր է հիւանդութիւնդ, Վառվառէ՛—գոչեց նա բաւական բարձր ձայնով, մոռանալով, թէ որտեղ է գտնվում։

—Ե՞ս. ոչ... տեսնում ես, որ պառկած չեմ։

—Նստիր, ես յուզված եմ, այս դրութեան մէջ խօսել չեմ կարող, նստիր՛ք, յետոյ... Նա քնած է, ես գիտեմ, մի բարկանար, մի վախենար, Վառվառէ՛։

Այս ասելով, Ռոստամեանը նստեց մի աթոռի վրայ, միևն առաջարկելով Վառվառէին։ Բայց Վառվառէն չընդունեց. նա երկիւղալի դէմքով նայում էր աջ ու ձախ, ականջ էր դնում դէպի հօր սենեակի կողմը։

—Ես վախենում եմ, Սահակիան, մեզ լրտեսում են, նա կարող է ամեն րոպէ դուրս գալ, ասա, ինչ որ ասելու ես, և հեռացիր շուտով։

—Վառվառէ, ես ոչինչ չունեմ ասելու, ես ուզում էի միայն քեզ տեսնել։ Իմ հիւանդութիւնը վտանգաւոր է, ես զգում եմ այդ, ահա, աչքերիդ տակը կապտել է, երեսդ դեղնել է։ Ահա, դու այժմ ևս տաքութիւն ունես,— աւելացրեց նա, բռնելով Վառվառէի բազուկը,—ինչ պատահեց քեզ, Տէր Աստուած. միթէ այս դրութեան մէջ պիտի ճանապարհորդես։ Թողայիր քեզ, Վառվառէ, խնդրիր այն մար-

դուն, որ յետաձգի իւր վճիռը, մինչև քո առողջութեան վերականգնելը...

—Ուշ է։ Ցանձուկ ես, որ շորերս արդէն կապկապած են... ամէն ինչ վերջացած է։ Ներիր ինձ, Յոհէփան, որ քեզ այդքան վշտացրի... մոռացիր ինձ... Գնա... գնա...

Բայց Յոստամեանը, նրա ձեռներն իւր ձեռների մէջ բռնած, շարունակում էր մերթ աջը մերթ ձախը համբուրել։ Նա երկիւղած դէմքով մոխիկ էր ուշում Վառվառէի նիհարած, խորն ընկած այտերին, որոնց վրայ դրոշմվել էր մի անբնական թեթև կարմրութիւն։ Նա չէր կարծում, թէ հիւանդութիւնն այսչափ փոխել է Վառվառէին։ Ինչ-որ մի չարագուշակ կասկած ծագեց նրա սրտում, և նա զգաց, որ, արդարև, հիւանդութիւնը խիստ վտանգաւոր է։ Նա լռին վշտակցութեամբ մի քանի րոպէ նայում էր Վառվառէի երեսին։ Վերջինն երեսը շուռ տուեց մեւս կողմը, հանդարտութեամբ ազատեց իւր աջ ձեռը և թեւացած դրեց նրա ուսի վրայ։ Իսկ Յոստամեանը, դառն կսկիծը սրտում, խղճահարված, ընկճված իւր նախազգացման ծանրութեան ներքոյ, քնքշութեամբ սեղմում էր նրա նիհար ճակատն իւր շրթունքներին։

Անցաւ տասն րոպէ, լուռ, երկանիկ րոպէներ։ Նրանց սրտերը բաբախում էին ահասիկ։ Վառվառէն րոպէ առ րոպէ ցնցողաբար գոլորւում էր, իսկ Յոստամեանն, աւելի ու աւելի ամուր սեղմելով նրա ձեռը, մեւս ձեռով մերթ շոյում էր նրա ճակատն ու մազերը և մերթ գլուխը սեղմում էր իւր ուսին։

Բայց դռներից փչեց մի թեթև զով քամի և, մի և նոյն ժամանակ, լսվեց ինչ-որ շշուկ։ Վառվառէն

արագութեամբ գլուխը բարձրացրեց Յոստամեանի ուսի վրայից, ձախ ձեռը խլեց նրա ձեռից և երկիւղալի ձայնով գոչեց.

—Գնա, Յոհէփան, մի փորձիր ինձ, գնա։

Այս ասելով, նա մօտեցաւ դռներին, նայեց դէպի դուրս։ Ոչ ոք չկար, ոչ մի ձայն չէր լսվում. միայն հանդարտ սոսափում էին կանաչազարդ ակացիայի տերևները։

Յոստամեանը, որ Վառվառէի հրապարակ մերձաւորութեամբ քանի մի րոպէ մոռացել էր իրականութիւնը, մոռացել էր իւր և Վառվառէի վտանգաւոր դրութիւնը, դարձեալ սթափվեց, նայեց սթոռի վրայ և թոյլ ձայնով արտասանեց.

—Մթթէ նրա մէջ բոլորովին մեռել է խիղճը, մթթէ նա վճռել է սպանել իւր միակ ապրկան։ Ոչ, Վառվառէ,—շարունակեց նա, ձայնը բարձրացնելով և ոտքի կանգնելով,—նա խղճալի չէ, խղճալին դու ես և ես... Ես։ Թող նրան և հեռացիր... դնանք միասին... փախչենք այս հասարակութենից։ Թող մեղադրեն մեզ, փոյթ չէ... Թող հայրդ անէծք կարդայ մեր եռանից։ Նրա անէծքը չի կարող ազդել. նա է մեղաւորը... Աստուած չի լսիլ այն մարդու անէծքը, որ իւր միակ աղջկայ կեանքը զոհում է իւր պատուասիրութեանը...

Նա դարձեալ մօտեցաւ Վառվառէին, կրկնելով անդադար.

—Գնանք, գնանք, Վառվառէ։

Այն ինչ Վառվառէն, անշարժ կանգնած պատի տակ, երեսը ձեռներով ծածկած, հանդարտ հեկեկում էր։ Երբ Յոստամեանը մօտեցաւ, նա ձեռները հեռացրեց երեսից և վճռական եղանակով արտասանեց.

—Բաւական է, մի ժամանակ, գնա, գնա և մոռացիր ամեն ինչ...

—Մոռանամ, ես, ես,—գոչեց Ռոստամեանը,—մոռանամ ամեն ինչ և թողնեմ, որ դու այդ դժոխքեանց մէջ անջատուիս ինձանից։ Լսիր, Վառվառէ, ես այժմ պատրաստ եմ ամեն մի միջոցի դիմել իմ և քո երջանկութեան համար։ Ես քեզ առաջարկում եմ թողնել ծերունուն և գնալ ինձ հետ այնտեղ, ուր ես կըգնամ։ Չէս ուզում։

Վառվառէն մի ձեռով երեսը ծածկեց, միւսով բացասական նշան արաւ։

—Ուրեմն միամիտ է մի ուրիշ միջոց, թողնել տալ ինձ այս վերջին միջոցին դիմելու։ Թողնել, որ ինձ վաղն անձամբ ներկայանալ հօրդ, բացատրել ամեն ինչ, ներումն խնդրել։ Ես նրան կաղաչեմ, կպղերսեմ, որ... Ո՛չ, միթէ այս էլ անկարելի է։ Ուրեմն, խնդրիր ինքդ, ես դեռ յոյս ունիմ, որ նա այդքան անխիղճ չէ. գիտէ նա քեզ չի սիրում իբրև հայր, բայց նա մարդ է, ինչ և իցէ, սիրտ ունէ։ Ձգիր նրա առջև, աղաչիր...

Մինչ Ռոստամեանը յուսահատ դրութեան մէջ առաջարկում էր իւր վերջին միջոցները, Վառվառէն, կարծես, լսել անգամ չէր ուզում նրա գառնահնչիւն խօսքերը։ Գողդոջուն ձեռների ափերն իրար սեղմած, նա միայն աղերսում էր Ռոստամեանին՝ թողնել և հեռանալ միայնակ։ Ծնային սպիտակագոյն թեթև հագուստով, շագանակագոյն չքնդ մազերը՝ մի օրուայ ընթացքում նշմարելի կերպով նիհարած՝ ուսերի վրայով դէպի սպիտակ կուրծքը սփռված, մէջքից սակաւ ինչ թեքված—այս դրութեան մէջ նրա կերպա-

րանքը, կանթեղի թոյլ լուսոյ ներքոյ, ներկայացնում էր մի մարմնացած յուսահատութիւն։ Եւ ահա այս վիճակում նա աղերսում էր Ռոստամեանին, որ գնայ, հեռանայ, զրկվի յաւիտեան նրա տեսութենից։ Ո՞ւր գնայ, ինչպէս մոռանայ—այս մասին նոյն րոպէներին նա դարձեալ չէր մտածում։ Մտածում էր միայն ծերունի հօր մասին, որ րոպէ առ րոպէ կարող էր ներս մտնել և տեղն ու տեղը հանդիպել իւր մահը։

Վերջապէս, Ռոստամեանը բոլորովին իւր յոյսը կորցրեց։ Նա ապառնալի դէմքով և աղեկտուր ձայնով, հազիւ հազ շունչ քաշելով, արտասանեց.

—Անդրէա, դու ինձ չես սիրում...

Մի վայրկեան վախ աղաւաղեց Վառվառէի հիւանդոտ դէմքը, և նա, լուռ, ձեռը մեկնեց դէպի հօր առանձնասենեակի կողմը։

—Ուրեմն, գոհիր ինձ նրան,—գոչեց Ռոստամեանը և, առանց վերջին մի համբոյր տալու, առանց անգամ վերջին բարևն ասելու, շտապեց դուրս։

Վառվառէն անշարժ արձանացած կանգնած, լսում էր նրա արագ-արագ հեռացող քայլերի ձայնը, որ հետզհետէ նուազում էր։

Յանկարծ նա մի խուլ, յուսակտուր հնչիւն արձակեց կրծքից, վազեց դէպի դռնները, նայեց դէպի պատշգամբի միւս ծայրը։

Ռոստամեանն անհետացել էր...

—Վերջացաւ,—արտասանեց Վառվառէն և ուժասպառ երեսնիվայր ընկաւ անկողնակալի վրայ...

XIII

Լուսացաւ այն առաւօտն, երբ հայր ու աղջիկ պիտի Թիֆլիսից ճանապարհ ընկնէին։

Արդէն ամէն ինչ պատրաստ էր. իրեղէնները կապկապած, տան կահ-կարասիքը մի կողմ հաւաքած։ Դեռ երեկոյեան Մինաս Կիրիլիչը խոհարարի վարձը տուել էր և արձակել, որ առաւօտեան գայ՝ օգնելու։ Մաորենան իր աղբատիկ իրեղէնները փաթաթել էր մի մեծ սփռոցի մէջ, կապոյը խոհանոցի մի անկիւնում էր դրել ու չոտապով հեշտաեռը կրակ էր դցում, որ առանց թէյի չուղևորվին թէ պարոնն ու տիրուհին և թէ, մանաւանդ, ինքը։

Մինաս Կիրիլիչը զարթնեց շատ կանուխ։ Նա շտապով հագնվեց, երկայն ճանապարհորդական կօշիկները ոտներին քաշեց և դուրս եկաւ սենեակից։ Նրա դէմքն ուրախ է, աչքերը փայլում են. կարծես, Թիֆլիսից հեռանալով, նա յաւիտեան իրանից թօթափում է տխուր անցքերի ծանր տպաւորութիւնը։ Երեկոյեան նա մի քանի անգամ խօսել էր Վառվառէի հետ ուղևորութեան մասին։ Նա հարցրել էր աղջկան, թէ, արդեօք, ոչինչ տակաբութիւն չի պատմ, կարող է դիւրութեամբ ճանապարհորդել։ Վառվառէն նրան հաւատացրել էր, թէ ինքը բոլորովին առողջ է և թէ պատրաստ է ուղևորվել, ուր որ կրկամենայ հայրը։ Եւ իսկապէս նա, բուռ երեսքին, առողջ էր և գուարթ, այտերը փոքր ինչ կարմրած, քայլուածքը առոյգ և ձայնն անյողդողդ, վճռական։

Դեռ վեց ժամն էր. ճեպակառքի գնացքին մնում

էր երկու ամբողջ ժամ։ Բայց, իրեղէնների շտապութեան պատճառով, պէտք էր ժամանակից մի կէս ժամ առաջ գնալ և ամեն ինչ տեղաւորել։

Մինաս Կիրիլիչը մի անգամ ևս աչքի անցկացրեց սենեակները, զննեց անդուկները և կապոցները, թէ, արդեօք, բան չի մոռացել։ Յետոյ նա նայեց ժամացոյցին, դուրս եկաւ պատշգամբ, ուր խոհարարն սպասում էր տիրոջ վերջին պատուէրներին։

Նա խոհարարին ուղարկեց շուկայ՝ ճանապարհի համար պատրաստի ծխախոտ գնելու, իսկ ինքն անցաւ խոհանոց։

Կռնները կրծքին ծալած, իր կապոցի վրայ նըստած, պառաւ Մաորենան նայում էր խշխշող հեշտաեռին, խորասուզված մտքերի մէջ։ Ինչո՞ւ եկան, ինչո՞ւ են գնում—հարցնում էր նա ինքն իրան։ Երեսուն տարի էր, որ նա ծառայում էր Քիրիչխիեվի տանը, տեսել էր նրա կնոջ ու զաւակների մահը, իսկ Վառվառէին մեծացրել էր իր գրկում։ Եւ այդ երկար տարիների ընթացքում նա ընտելացել էր հօրն ու աղջկան, իբրև մի ընտանեկից։ Նա շատ անգամ խոստովանվում էր, թէ նրանց սիրում է աւելի, քան իր երկու որդիներին, որոնցից մեկը յայտնի չէր թէ որտեղ է, իսկ միւսը—Վոլգայի վրայ բանտարկութիւն էր անում և վաստակածը թողնում օդեհաներում։ Ուր որ տանում էին, Մաորենան գնում էր անտրտունջ։ Մինաս Կիրիլիչը, մասամբ յարգելով, մասամբ խնայելով ծերութիւնը, նրան չէր արձակում պաշտօնից, մանաւանդ, որ Վառվառէն սիրում էր պախնին։

Վառվառէի ամուսնական տխուր վիճակը ուսուպատուին խիստ վշտացնում էր։ Ինչո՞ւ այդ երիտա-

սարդ ամուսնացած կինը պիտի զուրկ մնայ իւր մարդուց,—մտածում էր նա և, մի և նոյն ժամանակ, ճանաչելով Միքանդրոնցօվի վարքուբարքը, բարւոք էր համարում, որ Վառվառէն առանց ամուսնի ապրի, քան թէ այնպիսի մարդու հետ։ Յաճախ նա իւր ցաւակցութիւնը յայտնում էր Վառվառէին, մխիթարում էր նրան, անիծում էր նախ Միքանդրոնցօվին, ապա ամբողջ տղամարդկանց և յետոյ ողբում կանանց վիճակը։

—Շտապիր, Մատրենա, ժամանակն անցնում է,—հրամայեց Մինաս Կիրիլլիչը, մոնելով խոհանոց։

—Այս րոպէիս,—պատասխանեց պառաւը, սրբելով իւր մաքերից։

—Տիրուհիդ զարթնել է։

—Երևի, զարթնել է. ապա մի գնամ, տեսնեմ։

Մատրենան չտապով անցաւ տիրուհու սենեակը։ Վառվառէն արդէն արթուն էր, բայց դեռ պառկած էր անկողնի մէջ, երեսը դէպի պատը դարձրած, ձեռները վերմակի վրայ տարածած։ Մատրենան ներս մտաւ թէ չէ լսեց նրա բարձրահնչիւն և յորդոր շընչառութիւնը։ Նա, կարծելով, որ Վառվառէն քնած է, անկողնակալին մօտեցաւ զգոյշ, ոտների մատների վրայ։

—Դու ես, Մատրենա,—պատասխանեց Վառվառէն, դժուարութեամբ շուռ գալով միւս կողմի վրայ։

—Այո, տիրուհի, զարթնել էք, վեր կացէք, մենք պատրաստ ենք. այս րոպէիս սամօվարը կբերեմ, պարոնը կօշիկները հագել է։

—Սպասիր, իսկոյն կվերկենամ։

Այս ասելով, Վառվառէն թոյլ ձեռով վերմակը ձգեց մի կողմ և ոտքի կանգնեց։ Ագախինն սրբոսի վրայից վերցրեց նրա հագուստն ու մօտեցրեց նրան։

Վառվառէի ծնկները դողում էին. նա տաքութեան մէջ էր, բայց չէր յայտնում։ Դողդողալով, զլուխը պատելով, նա մի կերպ հագնվեց, տեղ տեղ բռնելով անկողնակալի ծայրից, որ չընկնի։

—Տիրուհի, դուք առոյղ էք,—հարցրեց Մատրենան, մի կասկածելի հայեացք ձգելով Վառվառէի երեսին։

—Լաւ եմ, Մատրենա, փառք Աստուծոյ.

—Ոչ, տիրուհի, դուք ինձ խաբում էք, դուք հիւանդ էք։

—Գնա բանիդ, ես իսկոյն կըգամ,—ընդհատեց ագախնի խօսքը Վառվառէն։

—Ջուր չէք կամենում լուացվելու համար։

—Ո՛չ, յետոյ, այժմ չեմ ուզում։

Մատրենան դուրս գնաց։

—Տէր Աստուած, մի թէ ինձ չի յաջողվիլ զսպել թուլութիւնս,—ասաց Վառվառէն ինքն իրան,—նախ և առաջ հարկաւոր է թագցնել այս թաշկինակները... Կարծէս... կարծէս,—աւելացրեց նա, բարձի տակից երկու արիւնաշաղախ սպիտակ թաշկինակներ հանելով և դրպանը դնելով։

Զարտուղակ հագն ընդհատեց նրա խօսքը. նրա այտերը կապտեցին, պարանոցի մուգ-մոխրագոյն բանկները դուրս ցցվեցին։ Նա թաշկինակներից մէկը բռնեց բերանին, թքեց, բայց այս անգամ արիւն չերևեցաւ։

Հեշտաեռն արդէն սեղանատան պատուհանի վրայ դրած էր։ Մինաս Կիրիլլիչը թէյ էր խմում։

—Մատրենա, թէյ ածիր տիրուհուդ համար, ժամանակն անցնում է,—շտապով հրամայեց նա, մի կողմ-

նակի հայեացք ձգելով աղջկայ կարմրած այտերի վրայ, երբ նա ներս մտաւ։

Նա տակաւին չէր կարծում, թէ աղջկայ հիւանդութիւնն այնչափ վտանգաւոր է։ Վառվառէն բաց արաւ մեղուկը, գնաց իւր սենեակը. այնտեղ ձիւմ էին մի քանի իրեղէններ, որոնց պիտի տեղաւորէր։

Մինչ նա զբաղված էր իւր գործով, Ծերունին խոհարարին հրամայեց դնալ և երկու կառք բերել, որ իրեղէնները ժամ առաջ ուղարկի։ Իսկ Մատրենան, Վառվառէի համար մի բաժակ թէյ ածած, սպասում էր։ Մինաս Կիրիլիչը ծխելով անցուդարձ էր անում։ Շուտ շուտ նա նայում էր ժամացոյցին և շտապեցնում էր աղջկան, որ գործն աւարտի։ Արդէն եօթը ժամը լրանում էր։ Վառվառէն իրերը տեղաւորեց, վերջացրեց և նստեց անդուկի վրայ, որ հանգստանայ։ Շնչառութիւնը բոլորովին թուլացել էր, այտերի կարմրութիւնն անհետացել։

—Դու շատ յոգնեցիր,—ասաց Մինաս Կիրիլիչը,—ձգիր, ճանապարհին կրհանգստանանք։ Ես վարձել եմ մի ամրողջ ճեպակառք։ Բացի մեզանից, ոչ ոք չի լինիլ։ Խմիր թէյդ։

Վառվառէն, անշարժ նստած, նայում էր յատակի մի կէտին։ Նրա շունչն աւելի ու աւելի սպառվում էր. գերբնական այժ էր հարկաւոր նրան, որպէսզի կարողանայ զսպել իւր հիւանդութիւնը։

—Ի՞նչ է, Վառվառէ, ինչո՞ւ ծանր ես շնչում...

—Ոչինչ... ասաց Վառվառէն և, ձեռը յենելով պատին, աշխատեց բարձրանալ։

—Դու տակաւ ես, Վառվառէ... Սպասիր, գունաթափվում ես։ Մատրենա, օգնիր նրան, հիւանդ է...

Եթէ աղախինն և հայրը նոյն վայրկեանին չըշտապէին ժստենալ, Վառվառէն կընկներ յատակի վրայ։ Նա յենվեց աղախնի ուսին։ Միւս կողմից բռնեց Մինաս Կիրիլիչը, դուրս գալով.

—Ի՞նչ պատահեց, ինչ պատահեց։

Բայց, պատասխանի փոխարէն, նա իւր ձեռի ափի մէջ զգաց դատեր սառոյցի պէս պաղած բազուկը, որի երակը հազիւ հազ զարկում էր։ Նա երկիւղով դրկեց աղջկան, նայեց երեսին։ Դոյն չկար, շունչ չէր լսում։

—Օգնիր, Մատրենա, նա հիւանդ է,—բացականչեց շատրված հայրն և, աղախնի օգնութեամբ, դըպաւ անշնչացած դիակը տարաւ նրա սենեակը։

Մատրենան չուտով բաց արաւ կապոցներից մէկը, մի բռպէում անկողինը պատրաստեց։ Վառվառէին պառկեցրին։

—Կառքերը պատրաստ են,—լսվեց ծառայի ձայնը։

—Նստիր նրանցից մէկին և շտապիր Միխայլեանցի մօտ, ճանաչում ես, խնդրիր իմ անունով, որ այս րոպէիս գայ։ Մատրենա, վաղիր և տանտիրուհուն հրաւիրիր այստեղ, շուտ։

Մինչ Մատրենայի վերադառնալն և այրի Նաստասիայի գալը, Ծերունին, Վառվառէի թուլացած ձեռըն իւր ափի մէջ բռնած, աշխատում էր խրախուսական խօսքերով ուշքի բերել նրան։ Վառվառէն սթափվեց և մատյլ հայեացքով նայեց հօր երեսին։

—Իսկոյն կանցնի,—ասաց նա դողդոջուն ձայնով,—բժիշկ հարկաւոր չէ... իսկոյն կուշտրվինք...

—Ոչ, Վառվառէ, այսօր չէ, վաղը կըգնանք, դու տկար ես... մի վախենար, բժիշկը կըգայ և կօգնի...

Ներս մաաւ այրի Նաաալիան և, ճակատի մազե-
րը յետ քաշելով, կէս զարմացած և կէս վախեցած
մօտեցաւ Վառվառէի անկողնակալին։

—Չէի ասում ձեզ, որ հիւանդ է, տեսաք,—դար-
ձաւ նա ծերունուն յանդիմանօրէն։—Ոչինչ, Վառվա-
ռէ, աղջիկս, ուշքի եկ, սիրտ առ...

Նա չտատով վազեց, մի բաժակ քացախ բերեց և
սկսեց նրանով տրորել հիւանդի ճակատը, պարանոցը,
ձեռներն ու ոտների մատները։

Տառան վերադարձաւ և յայտնեց, թէ բժիշկ
Միսակաբեանցը չի ուզում գալ։

—Ինչո՞ւ,—հարցրեց Մինաս Կիրիլլիչը զարմացած
և բարկացած։

—Ասում է, զբաղված եմ։

—Անպիտան, նա իրաւունք չունի մերժելու... ես
կըգնամ և կըբերեմ։

—Ջուր կըլինի, ախա, նա բարկանում է, ասում
է, ես բժշկում էի նրան, չըթողին, որ առողջացնեմ...
Այժմ, ասում է, թող ուրիշ բժիշկ կանչեն...

—Դօխտոր Միսակաբեանցը շատ կոպիտ մարդ է,
նա չի գալ, ես գիտեմ, ուղարկեցէք Միրզախանեան-
ցի եռեից. նա իսկոյն կըգայ,—մէջ մտաւ այրի Նա-
տալիան։

Տառան գնաց և, արդարև, իսկոյն բերեց Միր-
զախանեանցին։

Դա մի երիտասարդ մարդ էր, միջահասակ, ջը-
րանտ հագնված, սաթի պէս սև միրուքով, ծնօտը
սափրած ու բերանը գրեթէ բոլորովին ծածկված
հատո և երկայն ընչացքով, որ ծիծեռնակի թևերի էին
նմանվում։

Նա, իր դէմքին փորձառու գիտնականի արտա-
յայտութիւն տալով, որ բոլորովին սազ չէր գալիս նրա
կանացի այտերին և ճակատին, զննեց հիւանդին, խրա-
խուսեց և անմիջապէս գրիչ ու թուղթ պահանջեց։
Ամեն ինչ կապկապած էր. այրի Նաատալիան վազեց և
Ռոստամեանից բերեց գրիչ, թուղթ ու թանաք։ Մին-
չև այրիի վերադառնալը բժիշկը հարց ու փորձ էր ա-
նում հիւանդի մասին, ինքնուրոյն հայեացքներ ձգե-
լով իր շուրջը։ Երբ նա կողմնակի հարցերով իմացաւ
սենեակների դասաւորութեան պատճառը, նրա դէմքի
արտայայտութիւնը փոխվեց։ Նա սկսեց աւելի մեղմ
խօսել։ Մինաս Կիրիլլիչը չքաւոր մարդ չէր...

Վառվառէն դեղերը ընդունեց այրի Նաատալիայի
օգնութեամբ, որ մօր պէս փայփայում էր նրան։

Մինաս Կիրիլլիչը, հարուստ, ուղևորութիւնը յե-
տաձգեց անորոշ ժամանակով։ Կապոցներն և անդուկ-
նները նորից բաց արին, սենեակները ընդունեցին ի-
րանց առաջուայ տեսքը, խոհարարը ճնշաց, կեանքը ըս-
կսեց ընթանալ, ինչպէս առաջ։

Բժիշկը գալիս էր առաւօտ ու երեկոյ և միշտ
խրախուսում էր, թէ ոչինչ, շուտով հիւանդը կառող-
ջանայ...

Այրի Նաատալիան օրական մի քանի անգամ այցե-
լում էր Վառվառէին և ժամերով նստում էր նրա մահ-
ճակալի մօտ։ Բարեսիրտ կինն ուղղակի տանջվում էր,
ակնյայտ տեսնելով, թէ ինչ արագութեամբ կեանքը
ապաւում է գեղեցիկ և ծաղիկ մարմնի մէջ։ Տաքու-
թիւնը մերթ սաստկանում էր մերթ նուազում։ Իսկ
բժիշկը չարունակում էր յուսադրել թէ հօրն և թէ
աղջկան։

Եւ ինքը հիւանդը միայն ժպտում էր, երբ լսում էր բժշկի խրախոյսը։ Նրա համար այլ ևս այսուհետև մի և նոյնն էր—կառողջանայ, թէ չէ. նա մոռացում էր հօր մասին. ինչ կըպատահի, արդեօք, ծերուհուն, ո՞վ կըմխիթարի նրան և ինչո՞վ։ Սակայն երբեմն նա ինքն իրան սիրտ էր տալիս, թէ վերջին անգամ քերը նուազեցրել են հօր սէրը, ուրեմն հարուածն այնքան ղժալի չի լինել ծերուհու համար, որչափ եթէ նա սիրեր Պառավաւէին նախկին սիրով։ Աւելի վշտացնում էր հիւանդին Ռոստամեանի վիճակը.—այրին անմխիթար լուրեր էր հաղորդում իւր կենդոլի մասին։

Պառավաւէի հիւանդութիւնն առիթ տուեց Ռոստամեանին, վերջապէս, յայտնել այրին իւր սէրը, յայտնել այն, ինչ-որ վաղուց յայտնի էր վերջինիս։ Ինչու և ինչպէս թագցնէր այլ ևս, քանի որ ամէն օր նա անհամբեր, դառն տանջանքով, սպասում էր, մինչև որ տանտիրուհին լուր կըբերէր հիւանդի մասին։

Վերջին օրերը նա գարձեալ անից դուրս չէր գալիս, բացի այն դէպքերից, երբ իշխանաւորի կողմից կանչվում էր։ Իշխանաւորն առաջին անգամ նրան մի թեթև ակնարկ արաւ, թէ չատ է ուշացնում իւր աշխատութիւնն, երկրորդ անգամ ուղղակի նկատողութիւն արաւ, իսկ երրորդ անգամ սաստիկ յանդիմանեց։

Այս անսակցութիւնների ժամանակ Ռոստամեանն իւր իշխանաւորի և պաշտօնակիցների մօտ տարօրինակ էր պահում իրան։ Մինչ գործերի մասին նրանից տեղեկութիւններ էին պահանջում, նա, կարծես, չէր լսում իրան առաջարկված հարցերն և մի անգամ տուած հարցը կրկնել էր տալիս կամ սպշած նայում էր իշխանաւորի երեսին։ Պային այնպիսի համարձակ-

ները, որ ուղղակի իրարու մէջ սկսեցին խօսել, թէ նրա ուղեղը ջնասվել է։ Այս կարծիքն, ինչպէս աշխարհի բոլոր չար լուրերը, կայծակի արագութեամբ տարածվեց Ռոստամեանի մասին նրա բոլոր պաշտօնակիցների շրջանում և յետոյ, իբրև մի սոսկ իրողութիւն, սկսեց անցնել փողոց։

Վերջապէս, մի անգամ ևս Ռոստամեանին կանչին և, մի քանի օր ժամանակ տալով, պարտաւորեցրին այս անգամ գործն անպատճառ աւարտել և ներկայացնել։ Հակառակ դէպքում սպառնում էին զրկել նրան իւր պաշտօնից։ Բայց ո՛ւր... Ռոստամեանն ոչ մի՛այն աշխատելու, այլ և գործի մասին մտածելու կարողութիւն ու ցանկութիւն չունէր։

Նրան զրկեցին պաշտօնից, գործերն առան և յանձնեցին մի ուրիշ պաշտօնեայի։ Ռոստամեանն հաւատացը ընդունեց ամենայն անտարբերութեամբ։

Ի՞նչ օգուտ այսուհետև պաշտօնից ու գործից և ո՛ւմ համար, քանի որ նրա գոյութեան նեցուկը օրըստօրէ խախտվում ու քայքայվում է։

—Նատալիա Պետրովնա, մինչ դուք չըկա՛ք, որ նա առողջանայ։

—Սատծուն է յայտնի, որդի...

Եւ Ռոստամեանը դլուխը քաշ էր գցում յուսահատ ու լռում։ Ինչ փոյթ բժշկի յոյս տալուց, քանի որ և՛ այրվի անորոշ պատասխանը, իմաստասի հայեացքները և՛ պատշգամբի վրայ մերթ ընդ մերթ երևացող Մինաա Կիրիլլիչի վշտահար դէմքը, և՛ ամեն ինչ, և՛, կարծես, նոյն իսկ օդը ներշնչում են Ռոստամեանին, թէ այլ ևս անկարելի է յուսալ...

Այսպէս, ուրեմն, մարդիկ հասան իրանց նպատա-

կին—սպասեցին նրան, որ յանդգնում էր ձեռք բարձրացնել նրանց կուռքերի վրայ... Պատասխանն ապրդայի ձեռքումն է...

Այրի Նաամալիան, տեսնելով, որ իր երիտասարդ կենդանի չատ է տանջվում, աշխատում էր մխիթարել նրան։ Բայց զուր... խեղճ կինը կեղծելու ընդունակութենից զուրկ էր, վասնորոյ նրա սուտ յոյսերը աջողութիւն չէին անում։ Պատահում էր, որ նա, վառվռտէի մօտից վերադառնալուց յետոյ, միայնակ երկար ժամանակ մտածում էր գտնել երիտասարդ կնոջ դժբաղդութեան իսկական պատճառը։ Նա մերթ մերթ զրուցում էր Մինաս Կիրիլչին, մերթ Միքայէլ Բոստանճեանին, երբեմն և՛ Ռոստամեանին, բայց նրա մեղադրանքն և ոչ մեկի վրայ կանգ չէր առնում։ Ի վերջոյ նա գլուխը տարակուսանքով շարժում էր և լուռ մտից նայում հեռու ու հեռու...

Կատոն առաջուայ պէս չուտ չուտ այցելում էր մօրն և երկար հարց ու փորձ էր անում նրան թէ Վառվառէի և թէ Ռոստամեանի մասին։ Ռոստամեանը նրան, ինչպէս միշտ, տակաւին և այժմ խոյս էր տալիս նրանից։ Բայց նախանձամիտ կինը նախկին խստութեամբ չէր դատապարտում Վառվառէին։ Ընդհակառակը Նաամալիան այնպիսի ախորդ դոյներով էր նկարագրում հիւանդի դրութիւնը, որ աղջիկը լուռ էր։

Մի օր, երբ այրին իւր սենեակներից մեկը կահաւորում էր իւր որդու համար, որ չուտով պիտի գար, Կատոն նեղս մտաւ—սառուկ յուզված և բարկացած։

—Ի՞նչ է պատահել,—հարցրեց մայրը զարմացած և երկիւղով։

Կատոն ձեռի հոլանին և դվխարիկը չպրտեց սեղանի վրայ և գոչեց.

—Գնա ու Վարվարա Մինասեձայինին ասա, որ ես չատ-չատ հատանում եմ նրա արածը։ Անպիտան, կինաօ, հալալաբարդի, բաղաղ...

—Ո՞ւմ վրայ ես բարկացած, Կատօ, ինչ կայ,—հարցրեց մայրը։

—Այն կայ, որ դու ինձ դժբաղդացրել ես։

—Ե՞ս եմ դժբաղդացրել քեզ, ինչպէս։

—Այնպէս որ ինձ տուել ես այն հալալաբարդի կինաօյին... Գոպիտ, անկիրթ... համարձակվում է կասկածել իմ մասին...

—Կասկածե՛լ,—կրկնեց մայրն ապշած,—ինչ ես ասում, Կատօ։

—Լսիր ու կիմանաս, թէ ինչ եմ ասում. ես այսօր հասայ... էլ... չեմեմ կա... բոզ... Լաղրօյի... հետ... ապրեցել։ Նա խելագարվել է, գիտես, խելագարվել է։ Նա իմ հիւրերին իմ տնից դուրս է փախցնում. նա ինձ քաղաքի մէջ խայտառակ է անում, ամենուն կեղտոտում է...

—Ո՞ւմ է դուրս արել, երբ,—ընդհատեց այրին կատաղած աղջկայ խօսքը։

—Սպասիր, պատմեմ։

Եւ Կատոն պատմեց Առաւօտեան Լազար Մակարիչը գնում է իւր գործին։ Կատոն ճնում է տանը միայնակ և սկսում է տնային գործերով զբաղվել։ Տան ու մեկ ժամին տիկին Մէյբաթովի եղբայրը—իշխան Սերգիփոն Բէգխանովը—գալիս է իւր քրոջ կողմից հարցնելու, թէ երբ են ամարանոց գնալու։ Առաջինը չի ու վերջինն էլ չի լինիլ աչխարհում—ծա-

ծօթը ծանօթի մօտ կըգայ ու կըգնայ։ Նստում է, խօսում է դէսից ու դէնից։ Էհ, Կաոօն, քաղաքավարութեան համար, իշխանին սուրճի է պահում. մնում է «խեղճ» երիտասարդը։ Այդ ժամանակ վերադառնում է Լազար Մակարիչը, տեսնում է իշխանին և քիթը քաշ է անում։ Կաոօն աշխատում է իշխանի հետ աւելի քաղաքավարի վարվել. էհ, հիւր է, ինչու վիրաւորվի։ Մի ժամ, մի ամբողջ ժամ այդ կոպիտ, անկիրթ, բազում Լազրօն աչքունքը թմրուելցած կամ լուռ է մնում կամ եթէ խօսում է, կարծես, ակամայ։ Վերջն իշխանը դնում է, և Լազրօն սկսում է դոռալ. այ դէս, այ դէն, ինչ գործ ունի իմ տանն այդ երիտասարդ իշխանը, ես ով, նա ով։

—Ասում եմ,—չարունակեց Կաոօն վրդովված,—չէ որ երկու տարի է ծանօթ ենք դու էլ, ես էլ։ «Ծանօթս ոյն է, ասում է, դու ես իմ վրէն կապել, ես այդ տեսակ դասարկ մարդկանց հետ գործ չունեմ։ Քաղցած է, ասում է, նրանից օգուտ չըկայ, մի օր էլ կամ պարտք կուզի կամ մի ուրիշ վատ բան կանի»։ Ի՞նչ վատ բան կանի,—հարցնում եմ ես։ «Նրա աչքունքից, ասում է, երեւում է, որ խոտակ մարդ չէ»։ Հիմայ, տեսնում ես, մանո՛մ ես, մամա, հաւլաբարցի քաչալ Լազարէն այնքան մեծ մարդ է դառել, որ իշխաններին էլ չի հաւանում։ Ես սկսում եմ խաղաղացնել... Չի լինում. տեսնում եմ, որ, աչքերը կարմրած, գայլի պէս կատաղած, մարդը փոքր է մնում, որ ինձ տեղն ու տեղը խեղդի։ Վերջը, էլ համբերութիւնս կտրվեց, սկսեցի յանդիմանել։ Նա աւելի կատաղեց և մի այնպիսի յիշոց տուեց... Ամօթից, դուրս եկայ ու փախայ այստեղ, որ չըլսեմ։ Չէ, չէ, մամա, ես այն

տեսակ մարդու կնիկ լինել չեմ կարող, նա գժվել է։

Այրին սկսեց խաղաղացնել աղջկան, հրաւիրեց ճաշին մնալ, խոստացաւ նախատել Լազար Մակարիչին և հաշտեցնել։

—Ես չեմ հաշտվիլ նրա հետ,—գոչեց Կաոօն,—թող գնա, ուր որ ուզում է, թող ինձանից լաւ կնիկ ճարի իրան համար...

Հետևեալ օրը Կաոօյի բարկութիւնն անցաւ, և նա խոստացաւ մօրը հաշտվել, եթէ միայն վերջինը կըգնայ, Լազար Մակարիչին մի լաւ կընախատի և այնպէս կանի, որ նա ինքը գայ, ներողութիւն խնդրի...

—Թէ չէ, ես նրա մօտ չեմ գնալ,—աւելացրեց Կաոօն։

Լազար Մակարիչն առաջին օրը շատ կատաղած էր, բայց երբ Կաոօն հակառակեց և գիշերեց իւր մօր տանը, առաւօտը սկսեց ափսոսալ, որ այնպէս կսկածել էր նրա հաւատարմութեան մասին և այնքան կոպիտ էր վարվել հետը։ Սակայն ինքնասիրութիւնը նրան թոյլ չէր տալիս հաշտութեան ձեռք կատկտել Կաոօյին։ Նա սպասում էր և յոյս ունէր, որ կինն ինքը կըվերադառնայ և ներումն կըխնդրի։ Վերջապէս, երկու օր անցած զոքանչը ներս մտաւ. նա մտքումն ուրախացաւ, բայց արտաքուստ այրի Նատալիային ընդունեց սառնութեամբ։ Այրին սկսեց համոզել նրան, որ հաշտվի, աղջկայ կողմից ներողութիւն խնդրեց, մեղադրեց Կաոօյին և, վերջ ի վերջոյ, վեսայի յամառութիւնը կատրեց, հետը տարաւ իւր տունը, ուր Կաոօն անհամբեր սպասում էր։ Նրանք միասին ճաշեցին։ Հաշտութիւնն աւելի ամրացնելու համար, Նատալիան նրանց տակից երեք անգամ համ-

բուրել մեկզմեկու։ Սակայն այրին դարձեալ ասրեց։ Ով գիտէ, թէ ինչ անցաւ նրա մտքով, տեսնելով իւր ապրկայ դիւրափոխութիւնը...

Մինչ մարդ ու կին, ճաշից յետոյ, կէս լուրջ և կէս կատակի ձևով յանդիմանում էին միմեանց, Նատալիան չտապեց Վառվառէի մօտ։ Նէս ժամ անցած վերադարձաւ այնտեղից, այս անգամ աւելի տխուր։

—Ինչպէս է,—հարցրեց Կատոն։

Այրին, լուռ, գլուխը խոհրդաւոր կերպով շարժեց։

Հաշտված ամուսինները վերադարձան իրանց տունը։ Այրին անմիջապէս գնաց Ռոստամեանի մօտ։ Սա, սենեակի մի անկիւնում նստած, գլուխը կրծքին քաշ արած, մռայլ հայեացքը բևեռել էր յատակի մի կէտին։ Տեսնելով տանտիրուհուն, սթափվեց, բայց տեղից չշարժվեց։ Արդէն նա պատրաստված էր վերջին սարսափելի հարուածն ընդունելու։ Այրին հանդարտ քայլերով մօտեցաւ և նստեց սեղանի մօտ, հառաչելով և «ախ ու վախ» քաշելով։

—Այնտեղից էք գալիս, Նատալիա Պետրոսեան,—հարցրեց Ռոստամեանը։

—Կէս ժամ առաջ այնտեղ էի,—պատասխանեց այրին և, շրթունքները սեղմելով, քթի ծակերով ներս հնչեց օդը։

Ռոստամեանը մի հարցական հայեացք ձգեց տանտիրուհու վրայ։

—Աստուած ողորմած է, որդի,—ասաց այրին,—բժիշկն այնտեղ էր, էլի յոյս է տալիս։

—Խօսո՞ւմ է։

—Ինչու չէ, մեկ-մեկ խօսում է։ Ինձ տեսնելիս խիստ ուրախանում է, ձեռս, միշտ բռնած, բայց չի

թողնում, քանի որ մօտը նստած եմ լինում։ Է՛հ, ինչ ասեմ, տայ Աստուած, որ առողջանայ խեղճ կնիկը, ես խօմ նրան իմ որդուս չափ սիրում եմ։ Ո՞վ ունի նրա հոգին ու սիրտը։ Նա բարի է, հրեշտակի պէս։ Ծէը Աստուած, աշխարհիս երեսին քիչ կան վատ, չարահոգի մարդիկ, ինչո՞ւ հիւանդութիւնը նրանց չի մօտենում։

Ռոստամեանը լսում էր թէ չէր լսում, բայց անթարթ աչքերով նայում էր նրա երեսին։ Յանկարծ նա հարցրեց.

—Նատալիա Պետրոսեան, դուք էլ, ուրիշների նըման, մեղադրում էք Վառվառէին։

Նատալիա Պետրոսեան հասկացաւ Ռոստամեանի հարցի միտքը, բայց իսկոյն չըպատասխանեց։ Նա մի քանի վայրկեան, հառաչելով, նայեց դէպի դաւթի և նոյն դրութեան մէջ ասաց.

—Աստծու գործն է, ես ինչ գիտեմ։ Մարդս չի կարող Աստծու արած բանին հակառակել...

Այդ-եօք, որն էր «Աստծու արած բանը», որին մարդ չի կարող հակառակել—Վառվառէի ամուսնութիւնը, թէ սէրը։ Այն ինչ, այրին, մի փոքր անցած, կրկին ախ քաշեց և աւելացրեց.

—Երանի թէ ամենքն էլ Վառվառէի պէս արդար լինէին... Աստծուն է յայտնի, ինչպէս սիրեցի նրան։

Աւելի նա ոչինչ չասաց։ Բայց վերջին անորոշ խօսքերը Վառվառէի մասին, որ այրին արտասանեց մի առանձին հպանակով, պարզ արտայայտում էին խղճի բողոքը մանկութենից նրա մէջ արմատացած գաղափարների դէմ։

Ռոստամեանն այլ ևս ոչինչ չըհարցրեց։ Դարձեալ գլուխը թևքից կրծքին և դարձեալ աչքերը յառեց յատակի մի կէտին...

XIV

Անցել էր մօտ ամիս ու կէս։ Յունիսի սկիզբն էր, տարուայ այն ժամանակն, երբ Թիֆլիսի բնակիչները ցրվում են ամարանոցները, քաղաքը դատարկվում է, փողոցները զրկվում են կենդանութիւնից, շոքն անտանելի է դառնում։

Վառվառէի հիւանդութիւնն օրից օր զարգանում էր։ Բժիշկը շարունակ այցելում էր և տակաւին ըստ փոփում էր Մինաս Կիրիլլիչին։ Բայց Ծերունին նրա ձայնին, դէմքի արտայայտութեանն և հիւանդին վերաբերվելու եղանակին աւելի էր հաւատում, քան թէ խօսքերին, որոնց մէջ չէր զգացվում անկեղծ համոզմունք հիւանդի առողջանալու մասին։

Օր ըստ օրէ հիւանդի դլխատտակն աւելի ու աւելի բարձրացնում էին. արիւնն այնքան ջրակասել էր, որ նրա չնչառութիւնը հետզհետէ նուազում էր։ Վերջին ժամանակ բժիշկը միանգամայն նրան արդելել էր երկար խօսել, իսկ հօրը խստիւ պատուիրել էր երբեք ոչուր դէմքով չերևալ նրա առջև և երբեք որ և է բանով չըյուզել նրան։

Այն ինչ, Վառվառէն ոչ բժշկի խորհրդների վրայ էր ուշադրութիւն դարձնում և ոչ իւր հօր լինդիրն էր լսում։ Նա անդադար խօսում էր, լսում էր, ծիծաղում էր, ուտում և խմում էր այն, ինչ-որ արդելված էր, և եթէ չէին տալիս, երեխայի պէս լալիս էր։ Նա դարձել էր աւելի յուզվող, դիւրագրգիռ, դժայրն և մանրակրկիտ։

Այրի Նատալիան, ժամանակ-անժամանակ, այցե-

լում էր հիւանդին և ժամերով նստում նրա մահճակալի մօտ։ Վառվառէն, նրան տեսնելիս, ուրախանում էր։ Շատ անգամ, իւր ոսկրոտ ձեռը դնելով այրիի փափուկ ափի մէջ, թոյլ և փոքր ինչ խռիւոտ ու երերուն ձայնով այնքան խօսում էր, որ այրին երբեմն, վախենալով վատ հետևանքից, ստիպված էր լինում ընդհատել նրա խօսքը։ Խօսում էր նա անկապ, այլ և այլ բաների վրայ, ստէպ ստէպ փոխելով խօսակցութեան առարկան։ Ամեն օր նա խնդրում էր այրիին, որ սա մխիթարի Ծերունուն, թոյլ չըտայ, որ նա շատ ախորժ իւր աղջկայ հիւանդութեան մասին։

—Ես յոյս ունիմ, որ շուտով կառողջանամ,— կրկնում էր նա վերջին օրերը։

Բանի հիւանդութիւնն, ըստ երևոյթին, վտանգաւոր չէր, բնաւ չէր երկնչում մահից։ Բայց վերջին օրերն, երբ միայն թոյլ շնչառութիւնն էր մնացել, երբ նրա կանաչ-հոդագոյն դէմքը մահ և միայն մահ էր արտայայտում, նրա մէջ ծագեց զարմանալի յոյս, թէ շուտով առողջանալու է։ Որքան կեանքը սպառվում էր, նոյնքան այն քաղցրանում էր հիւանդի համար և նոյնքան առողջանալու յոյսը զօրանում էր նրանում։ Մի և նոյն ժամանակ, որքան նա մարմնապէս տկարանում էր, նոյնքան նրա խելքն ու միտքը պարզվում էին, նոյնքան առողջ դատողութիւն էր անում այս կամ այն խօսակցութեան ժամանակ։ Կարծես, մարմնից պակասող ոյժն աւելանում էր հոգու և մտքի կողմից։

—Ախ, ինչ լաւ օր է,—ասում էր նա այրիին, խոսքը խօշկերի մէջ ընկած աչքերի լայնացած բիբերը դարձնելով դէպի փողոցի կողմի լուսամուտը։—Դիտէք, Նատալիա Պետրովնա, ես ձեր Թիֆլիսը շատ հաւա-

նեցի, շա՜ո՜ չի տեղ երկինքն այսպէս պարզ և կա-պոյտ չէ։ Հէնց որ առոջնատ, մի օր միասին գնանք քաղաքից դուրս, հեռու, մի ամարանոց...

—Աստուծով, Աստուծով, դուք միայն լաւացէք, գնալը հեշտ է,—սիրտում էր բարեսիրտ այրին, մայրական քնքշութեամբ չոյելով նրա նիհար ձեռը, որ գծաւորվել էր կապտագոյն երակներով։

—Ի՞նչ է ասում բժիշկը, շո՛ւտ կազատվի անկողնից... Գիտէք, երկար պառկելուց մէջքիս վրայ խոցեր են գոյացել։

—Շուտով վեր կկենաս, որդի, շուտով,—պատասխում էր այրին, հազիւ կարողանալով զսպել իւր բուռն վիշտը։

—Ես առոջ եմ, Նատալիա Պետրովնա, միայն այս հաղն է մնում. ձանձրացրել է ինձ։ Կարծես, մէկը ներսից ձեռով կոկորդս քորում է... ահա... հը հը հը...

Նրա այտերն ու ականջները սաստիկ կարմրում էին, ճակատի երակները դուրս էին ցցվում, շրմունքները կապտում էին, աչքերի բիբերն աւելի լայնանում, տալով նրա դէմքին մի սարսափելի արտայայտութիւն, և նա մի ամբողջ րոպէ չէր կարողանում ապա չնչել։

Մի օր երեկոյեան Մինաա Կիրիլլիչը միայնակ, վշտահար նստած էր ալիկայ մահճակալի մօտ և մերթ մտիկ էր անում նրա դէմքին, մերթ հանգարտ չոյում էր նրա երեսը, ճակատն ու երկայն մազերն, որ անկանոն և շքեղ ալիքով սփռված էին սպիտակ բարձի վրայ։ Հիւանդի աչքերը փակ էին. սակայն նա քնած չէր, այլ տանջում էր մի տեսակ անդորրութեան մէջ—անդորրութիւն, որ առաջանում էր սաստիկ տաքութենից։

Օրը բաւական մթնել էր, լուսամուտները բաց էին և իրիկնային թեթև զեփիւռը զովացնում էր տապացուցիչ օդը։

Աղախինը զգոյշ քայլերով ներս մտաւ, վառարանի սեղանի վրայի լամպարը վառեց և դուրս գնաց։ Լոյսն ընկաւ հիւանդի փակ կոպերի վրայ. նա բաց արաւ աչքերն ու նայեց դէպի հօր կողմը։

—Ի՞նչ ես ուզում, Վարիա,—հարցրեց վերջինը, ամուռն առաջ քաշելով և աւելի մօտենալով մահճակալին։

—Ո՛չինչ, մտածում էի։

—Ինչի՞ վրայ էիր մտածում, Վարիա...

—Մտածում էի... միթե մասին։ Ես ուզում եմ նրա պատկերը տեսնել, կարելի՞ է, պապա։

Մինաա Կիրիլլիչը, լուռ, գլուխը թեքեց կրծքին և տեղից չշարժվեց։ Հիւանդի տաքութիւնը սաստիկ էր. նա, առանց այն էլ, յուզված էր, իսկ ծերունին դիտէր, որ մօր պատկերն աւելի կըյուզի նրան։

—Չի կարելի, չէք տալիս, որ նայեմ։ Լաւ, մի տուէք, ես արժանի չեմ նրա երեսին ուղիղ աչքով նայելու։ Հասկանում եմ...

—Հանգստացիր, Վարիա, յետոյ կըտեսնես... Գիտես, որ բժիշկն արգելել է քեզ երկար խօսել...

—Արգելո՞ւ է, ինչո՞ւ, միթե իմ մօր պատկերն էլ չեմ կարող տեսնել... Ոչ. բժիշկը սուտ է ասում, ես թոյլ չեմ, ես կարող եմ երկար ու երկար խօսել...

Հայրը դարձեալ ընդհատեց նրա խօսքն, դարձեալ նրա երեսի գոյնը փոխվեց։ Նա դողդողուն ձեռով նշան արաւ։ Հայրն մօտեցրեց նրա բերանին թաշկինակը, որ ընկած էր վերմակի վրայ, և յետ դարձ-

ըեց պարզ-աղիւսագոյն թաց բիծերով չաղախված։

Անտանելի կակիծը, սուր ասեղի պես, խայթեց հօր տանջվող սիրտը։ Նա երեսը յետ դարձրեց, որ հիւանդից թագցնի իւր դէմքի արտայայտութիւնը։

Իսկ բժիշկը դեռ մխիթարում է ծերունուն։ Ոչ, յոյս չկայ։ Մի՛թէ, մի՛թէ յոյս չկա՞յ այլ եւս. մի՛թէ նա յաւիտեան զրկվելու է իւր վերջին մխիթարութիւնից։ Ինչո՞ւ, ո՛ւմ պատճառով։

—Հա՛յր,—լսեց ծերունին հիւանդի խռպոտ ձայնը։

—Հա՛յր,—կրկնեց հիւանդն, երեսը շուռ տալով դէպի պատի կողմ։

—Վարիա, Վարինկա, բաւական է, ինչքան խօսեցիր, ահա, բժիշկը գալիս է։

Բայց բժիշկը չկար, իսկ հիւանդը շարունակեց.

—Գիտեմ, թէ ինչու համար էք այդքան վատ աչքով նայում ինձ վրայ... Բայց մի՛թէ դուք չըպիտի ներէք ինձ, ասացէք, չըպիտի՞ ներէք։

—Վարիա, այդպէս յուզվել չի կարելի... Ւ՞նչ, դու լա՞յ ես լինում... ի սէր Աստուծոյ, հանդստացիր։

Թոյլ, ընդմիջվող հեկեկանքին հետեւեց չարաղուշակ հաղը։ Հիւանդն ալ ձեռի արագ շարժումով վերծակի ծայրը դէն ձգեց կրծքի վրայից։

—Ոչ, դուք ինձ այն ասացէք, չըպիտի՞ ներէք ինձ,—շարունակեց նա, հեկեկանքը մի կերպ զսպելով։

Հայրը մի ձեռով բռնեց նրա բազուկը, միւս ձեռով ծածկեց իւր աչքերն ու, մի քանի վայրկեան լռելուց յետոյ, թոյլ և դողդոջուն ձայնով ասաց.

—Ես արդէն ներել եմ քեզ...

Հիւանդն երեսը դարձրեց նրա կողմը։ Խօրին դատնակութեան ժպիտը շրթունքների վրայ և ուրախու-

թեան փայլն աչքերում նա հօր ձեռը մօտեցրեց բերանին և երեք անգամ համբուրեց։ Ցետոյ նա, աչքերը յառելով առաստաղին, կարծես, ինքն իրան սկսեց խօսել այսպէս.

—Շնորհակալ եմ, ես արժանի չէի։ Ես նրա համար էի ուզում մօրս պատկերը, որ տեսնեմ, նա այժմ էլ այնպէս է նայում ինձ վրայ, ինչպէս առաջ, ախտը, յանդիմանելով ինձ։ Դուք բարի էք, նա էլ բարի է եղել։ Իսկ ես... Գնանք այստեղից։ Ես չեմ ուզում մնալ... Հեռացրէք ինձ այստեղից, շուտով, շուտ տո՛ղ հեռացրէք։ Դուք կարծում էք, որ ես չեմ կարող ճանապարհորդել... Բժիշկները սխալվում է։ Բժիշկները միշտ սխալում են... ես այս գիշեր մի երազ տեսայ, լաւ երազ էր. ես առողջ էի, զուարթ էի, ուրախ էի, մենք—ես, դուք, մայրս—միասին գանվում էինք մի կայարանում։ Հեռու, շատ հեռու տեղ պիտի գնայինք...

—Ա՛խ, այս ինչ սարսափելի շոգ է, ծանր է,—շարունակեց հիւանդը, վերմակը բոլորովին մի կողմ ձգելով,—ես ճշմարիտ եմ ասում, որ պէտք է գնամ։ Ո՞վ կարող է ինձ արգելել... Ոչ ոք։ Պատկերը, պատկերն էք ասում։ Ջէ, հարկաւոր չէ... ես մօրս գերեզմանը տեսել եմ, էլի ուզում եմ տեսնել։ Ուզում եմ ընկնել նրա քարի վրայ, լաց լինել... Ա՛խ, լաց լինել, ես լաց լինել եմ ուզում, թողէք, որ ես լաց լինեմ։ Մատ է. աչքերիս երեսին աղջիկ չկայ, որ իւր ծնողներին չսիրի։ Երանի նրան, որ կենդանի մայր ունի։ Ես չունեմ, Նատալիա Պետրովնա, ես չունեմ։ Նա ինձ կըսիրեր, եթէ տեսած լիներ։ Նա հիմայ էլ է սիրում... Սիրո՞ւմ է, սիրո՞ւմ է, ասացէք։ Նա ո՞վ է... Գնա՛ր, չեմ ուզում։ Նա կըպայ, լա՛ չէ, Սաւիանն,

Մահվան, Մահվան: Նա ինձ չի թողնում, հայրս է, արգելում է... Ախ, այս ինչ չոր է...

Հիւանդն արդէն զառանցանքի մէջ էր խօսում: Շուարված, երկիւղած Ներսունին մերթ ականից բարձրանում էր, ուղղում էր վերմակը, մերթ նստում էր, բռնում զառանցող դատեր ձեռը, նայում երեսին և արտասուքն աչքերին անդադար կրկնում.

—Վարիա, հանգստացիր, Վարիա, հանգստացիր...

Հիւանդը չէր հանգստանում: Խելագարի պէս ապուշ-արագ շուռ էր գալիս այս և այն կողմի վրայ, արտասանելով ինչ-որ անորոշ և անկապ դարձուածներ:

Ներս մտաւ բժիշկը, շտապով ձեռնոցը հանեց, մօտեցաւ և հիւանդի բազուկը բռնեց: Երբէք տաքուն Թիւնն այն աստիճանին չէր հասած մինչև այն օրը:

Խորին ակնածութեամբ լի հայեացքը բժշկի երեսին յառած, Մինաս Կիրիլիչը մահճակալի միւս կողմում կանգնած էր անշարժ, գունաթափ, նիհարած, մէջքից թեքված:

Բժիշկը փորձեց խօսել հիւանդի հետ: Կարմրած, լայնաբերբ աչքերը բաց, անխօս հիւանդը նայում էր նրա երեսին: Նա ճանաչեց բժշկին, ձեռով մի բացասական շարժում արաւ, երեսը շուռ տուեց պատի կողմն և վերմակը քաշեց գլխին...

—Այսօր շատ է յուզվել,—հարցրեց բժիշկը Ներսունին գլխով դրական նշան արաւ:

Բժիշկն անցաւ սենեակի միւս անկիւնն և, ձեռները դրպանը դնելով, ասաց.

—Երբ բժշկի պատուէրները չեն կատարվում, ինչպէս հարկը պահանջում է, բժշկի պատասխանատուութիւնը պակասում է: Ես անպարտ եմ:

Յետոյ նա մի հանգստացուցիչ դեղ դրեց տաքուն դէմ և, ծառային կանչելով, անձամբ պատուիրեց, որ չուտով դեղը բերի այն յայտնի դեղատնից, որ առաջ ինքը նշանակել էր:

Ներսունին կանչեց նրան մի կողմ:

—Պարոն բժիշկ, այնտեղ Աստուած, այստեղ դուք,—ասաց նա, նախ ձեռը բարձրացնելով դէպի վեր և ապա ցոյց տալով սենեակի յատակը,—ասացէք, յոյս կայ, թէ ոչ:

Այս վճռական հարցը բժիշկ Միրզախանեանցին դժուար եղաւ, չվոխեցրեց: Նա ալ ձեռով բռնեց երկնեղը դրեց, չվոխեցրեց: Նա ալ ձեռով բռնեց երկճիւղ մորուքի ծայրն և, ձախ ձեռը կողքին յենելով, քանի մի վայրկեան լուռ նայեց սենեակի յատակին:

Դա մի կատակածաւոր և խորհրդաւոր լռութիւն էր: Ներսունին իակոյն նախազգաց, թէ բժիշկն ետէ խօսէր ինչ պիտի ասէր:

—Բժիշկ, խնդրում եմ, առանց ուշացնելու, հրաւիրեցէք մի քանի այլ բժիշկներ խորհրդակցելու համար:

—Ախ, դուք կօնսիլիում էք ուզում. լաւ, եթէ կամենում էք, հրաւիրեցէք,—պատասխանեց բժիշկ Միրզախանեանցն և, գլուխը ծռելով դէպի ալ ուան, աւելացրեց.—իմ կողմից ոչինչ արգելք չկայ:

—Անուանեցէք, խնդրեմ, այն բժիշկներին, որոնց կարելի է հրաւիրել:

Միրզախանեանցը յիշեց իւր արհեստակիցներից երեքի անունները և, անմիջապես դրելով նրանց հասցէները, տուեց Մինաս Կիրիլիչին:

—Իսկ Միխայէլեանցին չհրաւիրե՞մ,—ասաց Ներսունին, անհանգիստ, որ ցուցակի մէջ չկայ այն բժշկի

անունն, որի մասին նա շատ դովասանք էր լսել։

—Նա կոպիտ է։

—Բայց հասկացող է, ասում են։

—Նրա հասկացողութեան չափը մեզ բժիշկներիս է յայտնի։ Ամբոխը կոյր է...

Այսուամենայնիւ, Մինաս Կիրիլլիչը սկսեց, որ անպատճառ Միխայլեանցը հրաւիրվի, դէթ այն հիւանդի վրայ, որ պէտք է դարմանել Վառվառէին։

—Ձեր կամքն է, պարոն Իլիչեվ, հրաւիրեցէք, ում կամենում էք,—պատասխանեց բժիշկ Միրզախանեանցն և շտապով, բարկացած, դուրս եկաւ ու գնաց հիւանդի մօտ։

Հետեւեալ օրն առաւօտեան տասը ժամին, հիւանդին հերթով քննելուց յետոյ, կայացաւ հինգ բժիշկների համախորհուրդը։ Ներկայ էր և՛ բժիշկ Միխայլեանցը, հակառակ Միրզախանեանցի ցանկութեան։

Այդ ժամանակ Մինաս Կիրիլլիչը նստած էր Վառվառէի մահճակալի մօտ։ Լուսադէմին հիւանդը մի քանի ժամ նոյնել էր. տաքութիւնն այժմ թեթեւ էր և հիւանդի ուշքն էլ վրան։ Նա, հօր օգնութեամբ, կարճ էր խոսում։

Համախորհուրդը բաւական երկար տեւեց։ Ներքինին անհամբեր սպասում էր դիտութեան վերջին դատաստանին։ Նա, որի յոյսը դուռեր առողջանալու վերաբերմամբ բոլորովին սպառվել էր, բժիշկներին տեսնելով, կրկին լեցվեց խաբուսիկ յոյսերով։ Այո, ղուր չեն վիճաբանում գիտնականները այդքան երկար մի ջոց. եթէ հիւանդի դրութիւնն անյուսալի լիներ, նրանք սպարդիւն ժամանակ չէին կորցնիլ... Անպատճառ, անպատճառ նրանք կբժիշկեն Վառվառէի կեանքը։

Եւ նա սոսկ սոսկ ականջ էր դնում դէպի առանձնասենեակ, ուսկից թոյլ կերպով լսվում էին վիճաբանողների ձայները։

Վերջապէս, համախորհուրդն աւարտվեց։ Ամենից առաջ դուրս եկաւ Միխայլեանցը։ Նրա հետից դուրս եկան նաև միւսները, ապա, Միրզախանեանցը, յուզված, այլայլված դէմքով, ականջների ծայրերը կարմրած։

Ներսունին ընդառաջ վազեց և, սեղանատանը հանդիպելով բժիշկներին, ձեռները առաջ պարզած, դողդողուն ձայնով հարցրեց, արդեօք փրկութեան միջոց գտնում էք։ Բոլորը տատանվելով նայեցին միմեանց երեսին, բացի Միխայլեանցից, որ այսպիսի դէպքերում ճշմարտութիւնը թաղցնելու խոհեմութենից զուրկ էր։

—Բժշկականութիւնը տկար է Աստուծոյ կամքի առաջ,—ասաց նա դրական եղանակով,—դեղերն այստեղ աւելորդ են, միայն, որ հիւանդին հանգիստ թողնէք։

Ապտատանից այս սարսափելի խօսքերն անդութ բժիշկն և իսկոյն դուրս գնաց սենեակից, գլուխը թեթեւ շարժելով դէպի ծերունու կողմը, իսկ իւր արհեստակիցների վրայ ձգելով արհամարհական հայեացք։

Մինչ նա արագ-արագ հեռանում էր, ծերունին սենեակի մէջտեղում անշարժ, ապուշ դարձած, ողորմելի, այո, ողորմելի, հայեացքով նայում էր իւր շրջապատողներին։ Անխիղճ մարդիկ. ոչ ոք, ոչ ոք չկար ղրկից բժիշկ Միխայլեանցի անողոք դատավճռի դէմ։ Եւ որքան ատելի և անգութ էին նոյն րոպէին բժիշկներն իւր անտարբեր դէմքերը թշուառ ծերունու աչքում...

Կէսօրուայ չորս ժամն է. հիւանդի մահճակալի մօտ, դլխի կողմում նստած է այրի Նատալիան, իսկ ոտքի կողմում ազախինը։

Կէս ժամ առաջ Վառվառէն անընդհատ խօսակցում էր այրիի հետ։ Այժմ, աչքերը փակ, հանգիստ պառկած է։ Այրին, ծնօտը ձախ ձեռի ափին դրած և արմունդը յենած սեղանի մէջքին, մերթ նայում է հիւանդի, մերթ ազախնի երեսին, մերթ ոչ ոքի ու ոչ մի բանի վրայ չի նայում, և նրա անորոշ հայեացքը թափառում է այս ու այն կողմ։

Դռները բացվում են, ներս է մտնում Ծերունին, նայում է այրիի երեսին, նայում է ազախնի երեսին և յուշիկ քայլերով ուզում է մօտենալ հիւանդին։

—Արթուն է,—հարցնում է նա չընչինով։

Այրին, ձեռը դնելով բերանին, զգուշացնում է, որ նա չլռնայ։ Հիւանդը քնած է։

Ծերունին մանկական խանդարհութեամբ հեռանում է մահճակալի մօտից, նստում է աթոռակի մօտ, ձեռները դնում է ծնկներէ վրայ և գլուխը թեքում կրծքին։ Ուրեմն, մահն անխուսափելի է. այսօր թէ վաղը, ուշ թէ կանուխ, նա գրկվելու է իր միակ և վերջին մխիթարութենից։ Վառվառէն մեռնելու է։

—Մեռնելու է,—կրկնում է Ծերունին, մի զօրեղ ցնցում զգալով, և նայում է մահճակալի կողմը։

Այրին ու ազախինը մի և նոյն դրութեան մէջ լուռ նստած են, ինչպես երկու անշարժ իստուկներ։ Հիւանդի յորդոր շնչառութեան ձայնը որոշ հասնում է Ծերունու ականջին, և նա լսում է միմիայն այդ շնչառութիւնը։ Նրան թւում է, որ հետզհետէ այն թուլանում է, երբեմն բոլորովին անլսելի է դառնում։ Այդ վայրկեաններին նա, տեղից քիչ բարձրանալով, նայում է աղջկայ մեռելագոյն դէմքին, ցանկալի հիւանդն երկարատև հառաչում է. դլուխը շարժում է դէպի այրիի կողմն և զարհուրում...

Ամենքը սթափվում են իրանց անշարժութենից։ Ծերունին մօտենում է, ձեռը մեղմիկ դնում է աղջկայ ձեռի վրայ և սկսում է խօսել նրա հետ։ Հիւանդը մոխիկ է տալիս նրա երեսին անթարթ աչքերով։ Սարսափելի և գերբնական հայեացք։ Վառվառէի աչքերն, այն խոշոր, կենսալի, մեղամաղձոտ աչքերը, մի տարօրինակ ազդեցութիւն են տալիս. բիբերն ապակու պէս փայլում են, իսկ սպիտակուցն աւելի սպիտակել է և, կարծես, ոսկորի պէս կարծրացել։

Ծերունին երկիւղածութեամբ նայում է այրիի երեսին։ Սա չոշափում է Վառվառէի ոտները, ձեռով խորհրդաւոր նշան է անում և չոտտալով վազում դուրս։

—Մի բաժակ կաթն,—լսում է Ծերունին Վառվառէի ձայնը—մի ձայն, որ, կարծես, անդունդի խորքից է գալիս։

Ծերունին կաթով լի բաժակը մօտեցնում է աղջկայ բերանին։ Նա մի քանի կաթիլ խմում է ու բաժակը զզուանքով հեռացնում է իրանից, արտասանելով.

—Դա ջուր է։

Մահուան առաջին յաղթութիւնը. նա արդէն սպանել է հիւանդի հինգ զգայարաններից մէկը—ճաշակը։

—Վ՚երթա,—գոչում է Ծերունին բոլորովին յուսահատված և թեքվում է, որ համբուրի դռան պարզհոդագոյն ճակատը։

Վառվառէն, լուռ, ձեռները տարածում է ալ ու ձախ։ Հայր և դուստր համբուրվում են։

Երկար և երկար ժամանակ Ծերունին չի բաժանվում աղկանից, մինչև որ մեկը բռնում է նրա թևից։

Ծերունին յուր է նայում և տեսնում է մի սևազգեստ, բարձրահասակ, ապիտակ միրուքով անձնատուրթիւն, որ, ինչ-որ չընչալով նրա ականջին, աշխատում է հեռացնել նրան մահճակալի մօտից։

Քահանայի եռևից ներս է մտնում այրին, իսկ այրիի եռևից Կատօն։

Խորհրդաւոր լռութիւնը տիրում է։ Լսվում է միայն քահանայի միահնչիւն, մռայլ և անտարբեր ձայնը։

Նոյն միջոցին աննկատելի կերպով ներս է մըտնում մեկն, անցնում է և կանգ առնում սենեակի դարպասի մօտ անկիւնում, Մինոս Կիրիլլիչի եռևում։ Օրն անցել է. սենեակում մութն է, այնպէս որ նորեկը կարող է աննկատելի մնալ։ Բայց ներկայ են Կատօյի սրբատես աչքերը։ Կատօն, որին Վառվառէի մահուան անկողնի մօտ բերողն աւելի բուռն հետաքրքրութիւնն է, քան վշտակցութիւնը, մի վոքր առաջ է գալիս. արդեօք, ներս մտնողը նո՞ւ է։—Այո, նա է։

Քահանան վերջացնում է հաղորդութիւնը, մատնատուփը դնում է դրպանն և մօտենում է Ծերունուն, որ նրան մխիթարի։ Բայց մինչ նրա մի խօսք արտասանելը, Ծերունին յուր է նայում, և մի վայրկեանում նրա խորին վշտերից բուռն արտայայտութիւնն առացած դէմքն այլայլվում է։ Նրա աչքերը փայլում են կատաղի հրով, բռունցքներն ակամայ սեղմվում են, շրթունքներն սկսում են դողալ։ Նա անդադար մի քանի քայլ առաջ է դնում և, ատամները կրճտելով, արտասանում է.

—Անզգամ...

Բայց Ռոստամեանն արդէն կանգնած է մահճակալի մօտ։ Աւելի խղճալի պատկեր դժուար է երևակայել, քան այդ դունատագառ, նիհար, քրքրված և ճաւատի վրայ անկանան կերպով սխուված կեղտոտ մազերով, դէմքի ապուշ արտայայտութեամբ, աչքերի անմատ փայլով երիտասարդը։ Որպէս իւր երկարատև կապանքը նոր խորտակած կատաղի գազան, որ ազատութեան առաջին վայրկեանին չի կարողանում սթափվել, կանգնած է նա անշարժ, իմաստազուրկ աչքերը յառած Վառվառէի փակ աչքերին։ Քահանան սարսափելով յուր է քաշվում, Կատօն երկիւղից մի թոյլ ճիչ է արձակում, այրին տեղից բարձրանում է, հիւանդն աչքերը բաց է անում, մռիկ անում։ Ծերունին բռնում է այցելուի թևից։ Վերջինը մի քանի վայրկեան տատանվում է ալ ու ձախ, երկու անգամ քացականչում է Վառվառէ, Վառվառէ և չոքում է մահճակալի առջև։

Պարզ էս, մոռանալով, որ կանգնած է մահամերձ դատեր մահճակալի մօտ, Ծերունին ուժգին բռնում է երիտասարդի օձիքից։ Նոյն վայրկեանին Վառվառէն իւր կիսամաշ աչքերը յառում է հօր երեսին։ Բոլոր ներկայ եղողները շուարված հետևում են լուռ, տատրոլնակ տեսարանին, նկատում են աղկայ հայեացքը, բայց ոչ ոք չի հասկանում, արդեօք, նա յանդիմանում էր հօրը, թէ խնդրում է ձեռ չքաշել ծնկաչոք ողբողին։ Մեկն Ծերունու ձեռները թափահարում էն. նա բաց է թողնում Ռոստամեանին։

Մահամերձ դատեր վերջին հայեացքը թափանցում է նրա սրտի խորքը, որ այնտեղ ծնայ առ միշտ, որպէս մեղապարտ հոգոյ յաւիտենական ընկերը...

Պարզ է, որ Վառվառէն ճանաչում է Ռոստամեանին։ Եւ քանի մի վայրկեան նրա արիւնաքամ, սպիտակ մեղրամոմի գոյն ընդունած շրթունքները չարժուում են, անմիտ հայեացքը բևեռւում է վերջինի դէմքին։ Այնուհետև երեսը կրկին դարձնում է դէպի պատը, աչքերը փակում է, և այս անգամ... յաւիտեան... Այրին իւր ձեռի սպիտակ թաշկինակը սեղմում է նրա աչքերին, ապա նոյն թաշկինակով կապում է ծնօտը...

Հետևեալ օրը շաբաթ էր։ Վառվառէի թաղումը յետաձգեցին կիրակի օրուան։ Մինաս Կիրիլիչն, իբրև պանդուխտ, Թիֆլիսում բարեկամներ և ազգականներ չունէր։ Նրա դասեր Թադման Հանդիսին, բացի ընդամենը չորս հոգուց, ուրիշ ոչ ոք պիտի ժամանակեր մի հասար. լ օր։ Այն ինչ, կիրակին ասն օր է. բարեպաշտ մարդիկ, թէև շատ քիչ թուով, բայց և այնպէս, այդ օրն են միայն եկեղեցի գալիս։ Եթէ չեն լինել այնպիսի մարդասէրներ, որ պանդխտի դագաղն ուղեկցեն մինչև Խոջիվանքի գերեզմանատուն, գոնէ եկեղեցին շատ էլ դատարկ չի լինել պատարագի ժամանակ։

Այսպէս էր մտածում այրի Նատալիան, սրին ձեռնունն խնդրել էր կարգադրել այնպէս, ինչպէս կամենում է և ինչպէս պահանջում են տեղային աւանդութիւնները։

Առաւօտեան տասը ժամին դիակը տարան եկեղեցի։ Այդտեղ բաւական թուով հանդիսականներ կային, որոնցից շատ քչերն էին լսել Բիբիշեվի ազգանունը։ Կանանց դասի առջև կանգնած էին այրի Նատալիան և ապջիկը։ Պատարագից յետոյ, երբ սկսեցին հոգեհանգիստը, այրին արտասուեց։ Շատ կանայք հետաքրքրուեցին, թէ ինչու է նա արտասուում և ով է հանգուցեալը։ Կատոն մէջ մտաւ և սկսեց ամենքին պատմել հանգուցեալի մասին, հարկաւ, չմոռանալով յիշել և՛ Ռոստամեանի անունը։ Պատարները ցաւակցութիւն արտայայտեցին և կամեցան տեսնել հանգուցեալի դժբաղդ հօրը։ Կատոն ցոյց տուեց։ Ծերունին, ձեռները կրծքին դրած, գլուխը ալ ուսին թեքած, կանգնած էր քահանաների շարքում, աչքերը յառած դագաղի վրայ։ Նա չէր լալիս և ոչ էլ անգամ հառաչում։ Արտասուքը վաղուց չորացել էր նրա աչքերում...

Երբ Կատոն յիշում էր հանգուցեալի կեանքի վերջին անցքերը, երիտասարդ կանայք, գլուխները վշտակցութեամբ ալ ու ձախ շարժելով, հառաչում էին։ Մէկը մինչև անգամ արտասուեց և խնդրեց Կատոյին, որ ցոյց տայ Ռոստամեանին։ Կատոն աչքերով որոնեց երիտասարդին։ Ռոստամեանը չէր երևում։

Պատարագը վերջացաւ, դագաղը դուրս տարան։ Այրին պատուերով, Բնկերպանովը հրաւիրել էր համքարների երկու խումբ, բերել էր տուել քաղաքի ամենաընտիր դիակառքը, դագաղը լցնել էր տուել վարդերով, խումբը զարդարել էր տուել թարմ ծաղիկներով։ Մի խօսքով, այրին աշխատել էր, որ թաղումը շատ էլ անշուք չլինի։

Կանայք ցրուեցին իրանց անները։ Այրին անթիւ անգամ համբուրեց հանգուցեալին, հեկեկաց և, կարծես, չէր ուզում բաժանուել նրանից, որպէս թէ իւր հարազատ զաւակը լինէր։ ~~Կատոն նոյնպէս համբուրեց Վառվառէի դիակը։~~ արտասուեց նա, թէ չէ, բայց,

նայելով ալ ու ձախ, աչքերը ծածկեց իւր ձեռի գե-
ղեցիկ բաթիստեայ թաշկինակով...

Բարեպաշտ մարդիկ դագաղը մի փոքր տեղ ու-
ղեկցեցին և, շուտով յոգնելով, երեսները խաչակնքե-
ցին ու յետ դարձան։

Օրը պարզ էր, եղանակը բաւական զով, դիշերը
յորդառատ անձրև էր եկել, և օդն այնպէս մաքուր
էր, որպէս միայն լինում է աշնանը։

Ծերունին ինքն էր ընտրել Խօլի-վանքի գերեզ-
մանատունը և անձամբ նշանակել էր իւր գաւեր գե-
րեզմանի տեղը, մի փոքր հեռու միւս գերեզմաննե-
րից, պարապի մօտ։

Դագաղը դրեցին նորափոր գերեզմանի խոնա-
հողի վրայ, վերջին հոգեհանգիստը կատարվեց։ Իսկ
Ծերունին դարձեալ չէր լալիս. նա նոյն դրութեան
մէջ, ինչպէս եկեղեցում, կանգնած էր անշարժ, դար-
ձեալ աչքերը յառած հանգուցեալի երեսին։ Կարծես,
նա ոչինչ չէր զգում, ոչինչ չէր նկատում և չըգիտէր,
թէ ինչ է կատարվում իւր շուրջը։

Քահանաները լռեցին. նրանցից մէկը, խաչի ծայ-
րը դնելով Ծերունու ձեռի վրայ, ինչ-որ ասաց և ցոյց
տուեց դագաղը։ Հայրը վերջին անգամ պիտի հա-
բուրէր իւր միակ զաւակի սառը դիակը։ Եւ նա հա-
բուրեց։ Յետոյ դագաղը ցած իջեցրին, քահանաները
դարձեալ սկսեցին երգել։ Յետոյ Ծերունուն առա-
ջարկեցին մի բուռն հող վերցնել, քահանան ինչ-որ
կարգաց, խաչակնքեց, և Ծերունին հողը սփռեց դա-
գաղի մէջ... ապրկայ երեսին։ Այնուհետև նա վերցրեց
երկրորդ բուռն, յետոյ երրորդն, և այդ րոպէին հա-
զարների մէջ մի թեթև իրարանցում ընկաւ։

—Ես ասում էի, ես ասում էի, որ աւազակները
նրան յափշտակել են, որ ուզում են սպանել։ Իսկ նը-
րանք ինձ չէին թողնում, որ գամ և ազատեմ նրան...

Այսպէս գոչելով, աւազ վազեց մէկին և թուլա-
ցած ոչ թէ չոքեց, այլ միանգամայն ընկաւ գագաղի
մօտ։ Ամենքն ապշած նայեցին միմեանց։ Բեղիրգա-
նովը, ձեռով ցոյց տալով իւր ճակատը, աչքունքով մի
նշան արաւ քահանաներին, յետոյ մօտեցաւ և ու-
ժով նորեկին մի կերպ բաժանեց դագաղից։

Հագուստը մի քանի տեղ պատռտված, վարդի-
կի ծնկները փոշոտ, գլուխը բաց, երեսը դունա-
թափ, մազերը քրքրված, մէջտեղ կանգնած էր...Ռոս-
տամեանը, անշարժ հայեացքը յառած դէպի գերեզ-
մանի խորքը, ուր հեռվեհեռ նրա աչքերից անհետա-
նում էր վառվռուն դագաղը...

Այլ ևս Ծերունին կարողութիւն չունէր կատարե-
լու։ Բայց երբ յանկարծակի նայեց Ռոստամեանի ե-
րեսին և երբ տեսաւ նրա աչքերի անմիտ, սարսափե-
լի և, մի և նոյն ժամանակ, խղճալի փայլը—երեսը յետ
դարձրեց։

Այո, այդ արդէն խելագարի հայեացք էր և Ծե-
րունու համար նոյնքան ազդու, նոյնքան նրա սրտի
խորքը թափանցող, որքան դաւեր վերջին հայեացքը...

ՎԵՐՋ

Z.U.P.Z. L.U.P.C. C.C.P.A. 7

1887 թ. Թիֆլիս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

Երես

Ներկայ հրատարակութեան առիթով . . . 1
Հրդեհ Նաւթագործարանում պատկեր . . . 5
Գործակատարի Ճիշատակարանից, պատմուածք 22
Խնամատար, վեպիկ 169
Արամբին, վեպ 189

ՀՀ Ազգային գրադարան
NL0351686

47986